ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՋՈԶԵՖ Ֆ. ՍՄԻԹ



ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈԶԵՖ Ֆ. ՍՄԻԹ

Հրատարակվել է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Մենք կգնահատենք այս գրքի վերաբերյալ ձեր դիտողություններն ու առաջարկությունները: Խնդրում ենք ուղարկեք դրանք հետևյալ հասցեով՝ Curriculum Planning, 50 East North Temple Street, Floor 24, Salt Lake City, UT 84150-3200, USA. E-mail: cur-development@ldschurch.org

Նշեք խնդրում ենք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք նշել գրքի վերնագիրը: Այնուհետև շարադրեք ձեր դիտողությունները և առաջարկությունները այս գրքի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, և նշեք բարելավման ուղիները:

Էջ 10՝ Զոզեֆ Սմիթ
Տրամադրել է RLDS Church, Independence, Missouri

Էջ 30՝ *Մերի Ֆիլդինգ Սմիթ,* Սուքքլիֆ Մաուդսլի
Տրամադրել է Դոն Չ. Քորբեթ ընտանիքը

Էջ 51՝ *Նա հարություն առավ,* Դել Փարսոն
© Del Parson

Էջ 146՝ *Քրիստոսը և Սամարացի կինը,* Կառլ Հենրիխ Բլոխ
Ֆրեդերիխսբորգի Ազգային Պատմական Թանգարան, Հիլերուդե

Էջ 233՝ 20-րդ ցցի երգչախումբը
Օգտագործվել է Յուտայի Նահանգային Պատմական Ընկերության թույլտվությամբ: Բոլոր իրավունքները վերապահված են:

Էջ 274՝ *Բնձ փորձեցեք սորանով,* Գլեն Ս. Հոփկինսոն
© Glen S. Hopkinson

© 2005 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:
Printed in the United States of America

Անգլերենի հաստատումը՝ 10/96
Թարգմանության հաստատումը՝ 10/96
Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith-ի թարգմանությունը
Armenian

Բովանդակություն

Վերնագիր Էջ

Ներածություն v

Պատմական ակնարկ viii

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ծառայությունը xi

1 Գիտեմ ապրում է Քավիչն իմ 1

2 Անձնական վկայություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին 11

3 Ճշմարիտ, հավատքով լի, լրջամիտ աղոթք 22

4 Մայրերի ազդեցությունը 31

5 Սուրբ Գրքերի ոգեշնչումն ու աստվածայնությունը 40

6 Հավատք՝ ամեն արդարության հիմքը 50

7 Ապաշխարության և մկրտության փառահեղ աշխատանքը 61

8 Սուրբ Հոգին 69

9 Մեր միսիոներական պարտականությունը 78

10 Հիսուս Քրիստոսը փրկագնում է ողջ մարդկությանը ֆիզիկական մահից 89

11 Հիսուս Քրիստոսը ապաշխարողներին փրկագնում է հոգևոր մահից 99

12 Քաջարիները Քրիստոսի գործում 108

13 Կառչեք ճշմարտությունից, որպեսզի չխաբվեք 117

14 Լինել օրինապահ քաղաքացիներ 127

15 Փոքր երեխաների փրկությունը 134

16 Քահանայություն՝ Աստվածային կառավարում 143

17 Կյանքի և փրկության մեծ ծրագիրը 153

18 Մաքրաբարոյություն և մաքրություն 163

19 Խնայողությունը բարգավաճման հիմքն է 172

20 Ամուսնու և կնոջ հավերժական միությունը 183

21 Սփոփող Միություն. Աստծո կողմից ստեղծված՝ հոգուտ սրբերի 194

22 Գթությունը մեր հոգիներում 204
23 Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ստանալը 214
24 Աջակցել նրանց, ովքեր կանչված են նախագահելու 223
25 Եկեղեցու Բարձրագույն Քահանայության Նախագահը . . 234
26 Կիրակին պահելը. որ քո ուրախությունը
լիակատար լինի 244
27 Մեր աշխատանքն է՝ հոգիներ փրկել 255
28 Դաժանության անօրեն ճանապարհը 264
29 Ոխ մի պահեք ոչ մեկի հանդեպ 271
30 Ենթարկվեք Հոգու հուշումներին 280
31 Հնազանդվել տասանորդի օրենքին. 289
32 Ազատություն՝ հնազանդության միջոցով 298
33 Երեխաները երկրային ամենամեծ ուրախությունն են . . . 311
34 Տիրոջ սուրբ տաճարները 321
35 Ձգտեք կրթվել ճշմարտությամբ 330
36 Իմաստության Խոսք՝ օրենք Սրբերի ֆիզիկական
և հոգևոր առողջության համար 341
37 Հավերժական Հոր որդիներն ու դուստրերը. 349
38 Եկեղեցում ծառայելը 357
39 Ամրացնել ընտանիքները ընտանեկան
երեկոների ժամանակ 364
40 Հայրը և Որդին 373
41 Շարունակական հայտնություն՝ հօգուտ Եկեղեցու 382
42 Եկեք հաղթենք ինքներս մեզ 391
43 Հայրերն ընտանիքում 403
44 Պատրաստվել Քրիստոսի Երկրորդ Գալուստին 411
45 Անհանգիստ ժամանակներում Ավետարանը
խաղաղություն է բերում աշխարհ 421
46 Փրկագնել մեր մահացածներին տաճարային
ծառայության միջոցով. 429
47 Անարատություն՝ ամբողջ սրտով հետևել մեր կրոնին . . . 439
48 Հանգիստ գտնել Քրիստոսում 449
Ցուցիչ 458

Ներածություն

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը 52 տարի ծառայել է որպես Եկեղեցու Բարձրագույն Իշխանավոր՝ Տասներկուսի Քվորումի անդամ, Եկեղեցու չորս Նախագահների Խորհրդական, և 17 տարի որպես Եկեղեցու Նախագահ: Նա Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանել է պերճախոսությամբ, մեղմորեն և համոզվածությամբ, կոչ անելով մարդկանց «ներդաշնակ ապրել մեր Երկնային Հոր ծրագրերին»:[1] Նրա ծառայությունը բնորոշվել է Հիսուս Քրիստոսի մասին իր զորավոր վկայությամբ. «Ես ստացել եմ Հոգու վկայությունը իմ սրտում, և ես վկայում եմ Աստծո, հրեշտակների և մարդկանց առաջ . . . ես գիտեմ, որ իմ Քավիչն ապրում է»:[2]

Այսօր նրա ուղերձներն ու քարոզները շարունակում են աստվածային ուղղություն ցույց տալ դեպի հավերժական առաջընթաց տանող մեր ճանապարհին: Այս աշխարհում մեր աշխատանքն է, ասում է Նախագահ Սմիթը, «բարիք գործել, անօրինությունը զցել մեր ոտքերի տակ, բարձրացնել արդարակեցությունը, մաքրությունը և սրբությունը՝ մարդկանց հոգիներում, և մյուս բոլոր բաներից առավել մեր երեխաների մտքում սերմանել սերն Աստծո և նրա խոսքի հանդեպ»:[3] Նա հայտարարել է, որ «Վերջին Օրերի Սուրբ լինելու համար անհրաժեշտ է զոհաբերել աշխարհիկ նպատակներն ու հաճույքները. անհրաժեշտ է ունենալ նվիրված, կայուն բնավորություն, սեր ճշմարտության հանդեպ, ազնվություն սկզբունքի համար, և եռանդուն ցանկություն տեսնելու հաղթական առաջ ընթացող ճշմարտությունը»:[4]

Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը հիմնել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը, որպեսզի այս ժամանակաշրջանի մարգարեների ուսմունքների միջոցով օգնեն Եկեղեցու անդամներին խորացնել ավետարանի վարդապետությունների մասին ունեցած իրենց հասկացողությունը և ավելի մոտենալ Հիսուս Քրիստոսին: Այս գիրքը ներկայացնում է Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները, որն ասել է. «Վերջին Օրերի Սրբեր լինելու համար տղամարդիկ և կանայք պետք է լինեն մտածողներ և աշխատողներ. նրանք պետք է լինեն տղամարդիկ և կանայք, ովքեր խնդիրները կշռադատում են իրենց մտքում, ովքեր լրջորեն խորհում են իրենց

կյանքի ընթացքի և իրենց ընդունած սկզբունքների շուրջ. . . Երբ մարդիկ հասկանում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, դուք կարող եք տեսնել, որ նրանք քայլում են շիտակ՝ Տիրոջ Խոսքի և Աստծո օրենքի համաձայն, ճշգրիտ այն բանի համաձայն, ինչը հաստատուն է, արդար, արդարակյաց և ամեն իմաստով ընդունելի Տիրոջ համար»:[5]

Այս գրքի ամեն մի գլուխը պարունակում է չորս բաժիններ. (1) սահմանում, որը համառոտ ներկայացնում է տվյալ գլխի հիմնական դրույթը; (2) «Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից», որը լուսաբանում է տվյալ գլխում տրված ուսմունքները Նախագահ Սմիթի կյանքի օրինակով կամ նրա իմաստությամբ; (3) «Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները», որը ներկայացնում է կարևոր վարդապետություններ նրա ուղերձներից և քարոզներից; և (4) «Ուսումնական Առաջարկություններ», որոնք խրախուսում են անհատական խորհում և քննում, հետագա քննարկումների և հարցերի միջոցով տվյալ առաջարկները ինչպես կիրառել մեր այսօրվա կյանքում:

Ինչպես օգտագործել այս գիրքը

Անձնական ուսումնասիրության համար: Այս գիրքը նպատակ ունի ընդլայնել յուրաքանչյուր անդամի հասկացողությունը ավետարանի սկզբունքների վերաբերյալ, որոնք զորավոր կերպով ուսուցանվում են Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի կողմից: Եթե յուրաքանչյուր անդամ աղոթքով կարդա և ուշադիր ուսումնասիրի այս ձեռնարկը, կարող է այս ճշմարտությունների մասին իր անձնական վկայությունը ստանալ: Այս հատորյակը նաև կհամալրի յուրաքանչյուր անդամի ավետարանային գրադարանը և կարևոր աղբյուր կծառայի ընտանեկան ուսուցման և տանը ուսումնասիրության համար:

Կիրակնօրյա ժողովների ժամանակ քննարկման համար: Այս գիրքը նյութ է հանդիսանում Մելքիսեդեկյան Քահանայության քվորումի և Սփոփող Միության Կիրակնօրյա ժողովների համար: Ուսուցիչները պետք է կենտրոնանան տվյալ թեմայի բովանդակության և դրա հետ առնչվող սուրբ գրությունների վրա, դասարանում քննարկում խրախուսեն՝ օգտագործելով գլխի վերջում տրված հարցերը: Եթե Նախագահ Սմիթի խոսքերն ուսումնասիրելուց առաջ վերանայվեն հարցերը, դա կօգնի ավելի լավ ըմբռնել նրա ուսմունքները:

Կիրակնօրյա ժողովները պետք է կենտրոնանան ավետարանի սկզբունքների, անձնական օրինակների վրա, որոնք ուսուցանում

են այս սկզբունքներն ու ճշմարտության մասին վկայությունները: Եթե ուսուցիչները խոնարհ փնտրում են Հոգին դասը պատրաստելիս և վարելիս, ապա ներկաների ճշմարտության մասին գիտելիքը կավելանա: Ուսուցիչները պետք է հիշեցնեն դասարանի անդամներին, որպեսզի նրանք ժողովներին բերեն իրենց գրքերը և խրախուսանքի արժանացնեն անդամների պատրաստվածությունը Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի խոսքերը ուսուցանելիս: Տվյալ գլուխը նախօրոք կարդալով, դասարանի անդամները պատրաստ կլինեն ուսուցանել և շենացնել միմյանց:

Անհրաժեշտ չէ կամ չի հանձնարարվում, որ անդամները գնեն լրացուցիչ մեկնաբանություններ կամ տեղեկատու նյութեր, որոնք կհաստատեն տեքստի նյութը: Անդամներին խրախուսվում է ուշադրությունը սևեռել այն սուրբ գրությունների վրա, որոնք տրվել են, որպեսզի վարդապետությունը ավելի խորը ուսումնասիրվի:

Քանի որ այս գիրքը նախատեսված է անձնական ուսումնասիրության և ավետարանային վկայակոչման համար, շատ գլուխներ բավականին երկար են, որպեսզի ամբողջովին հասցեագրվեն դասարանին: Այդ իսկ պատճառով, տանը ուսումնասիրելը դառնում է անհրաժեշտություն, որպեսզի ստանաք Նախագահ Սմիթի ուսմունքների ամբողջությունը:

Ձեր ուսումնառության ժամանակ, ճանաչեք Աստծո այս խոնարհ, հավատարիմ և քաջարի մարգարեին՝ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին: Ընդունեք նրա խորհուրդը «ընտրելու ճիշտը, քանի որ այն ճիշտ է, և քանի որ ձեր սիրտը սիրում է ճիշտը, և քանի որ ամեն ինչից առավել այն լավագույն ընտրությունն է»:[6] Միացեք Նախագահ Սմիթին, երբ նա վկայում է Հիսուս Քրիստոսի ավետարանի զորության մասին. «Վերականգնված վարդապետությունների հանդեպ մեր հավատքը . . . հաստատուն է դարձնում և զորացնում է մեզ և անկասկած հավատք և համոզմունք է արմատավորում Աստծո Որդու աստվածային առաքելության հանդեպ»:[7]

Հղումներ

1. *Deseret News: Semi-Weekly,* 6 Feb. 1893, 2.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 447.
3. *Gospel Doctrine,* 141.
4. "Editor's Table: Principle, Not Popularity," *Improvement Era,* July 1906, 733.
5. In Conference Report, Oct. 1910, 3–4.
6. *Deseret News: Semi-Weekly,* 6 Feb. 1893, 2.
7. *Gospel Doctrine,* 478.

Պատմական ակնարկ

Այս գիրքը պատմություն չէ, այլ ավելի շուտ Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի կողմից ուսուցանված ավետարանային սկզբունքների մի հավաքածու: Ինչևէ, ուսմունքները հերթականությամբ պատմական շրջանակներում ներկայացնելու համար, տրվում է հետևյալ ցուցակը, որով համառոտ ամփոփվում է նրա կյանքի նշանակալից իրադարձությունները, որոնք ուղղակի կապ ունեն նրա ուսմունքների հետ: Այս ամփոփումից բացակայում են նրա անձնական կյանքի որոշ կարևոր իրադարձություններ, ինչպիսիք են՝ նրա ամուսնությունները (այն ժամանակ Եկեղեցում բազմակնություն գոյություն ուներ) և նրա զավակների ծնունդները ու մահերը, որոնց հետ նա շատ կապված էր:

1800թ., փետրվարի 9	Ծնվել է Հայրում Սմիթը, Զոզեֆ Ֆ. Սմիթի հայրը, Թանբրիջում, Վերմոնտ:
1801թ., հուլիսի 21	Ծնվել է Սերի Ֆիլդինգը, նրա մայրը, Հանիդոնում, Անգլիա:
1837թ., դեկտեմբերի 24	Ամուսնացել են Հայրում Սմիթն ու Սերի Ֆիլդինգը, Կիրթլենդում, Օհայո:
1838թ., նոյեմբեր 13	Ծնվել է Զոզեֆ Ֆ. Սմիթը Ֆար Վեստում, Միսսուրի:
1844թ., հունիսի 27	Սպանվեցին Զոզեֆ և Հայրում Սմիթները, Քարթեջի բանտում (5; փակագծերում տրվում է Զոզեֆ Ֆ. Սմիթի տարիքը):
1846թ., սեպտեմբեր	Սերի Ֆիլդինգ Սմիթի ընտանիքը գաղթում է Նավուից, 1848թ., սեպտեմբեր Իլինոյս, դեպի Սոլթ Լեյքի Հովիտ (7–9):
1852թ., մայիսի 21	Զոզեֆ Ֆ. Սմիթը մկրտվեց Նախագահ Հեբեր Չ. Քիմբալի կողմից (13):
1852թ., սեպտեմբերի 21	Սերի Ֆիլդինգ Սմիթը մահացավ Սոլթ Լեյք Սիթիում (13):
1854–1857թթ.	Ծառայել է միսիայում Սենդվիչ Կղզիներում (Հավայան Կղզիներ) (15–19):
1860–1863թթ.	Ծառայել է միսիայում Մեծ Բրիտանիայում (21–24):

1864թ.	Հատուկ միսիա Հավայան Կղզիներում Էզրա Թ. Բենսոնի և Լորենզո Սնոուի հետ (25–26)։
1865–1866թթ.	Տեղական օրենսդիր խմբի անդամ, նաև 1867–1870, 1872, 1874, 1880, 1882 թվականներին։
1866թ., հուլիսի 1	Կարգվեց որպես Առաքյալ և Առաջին Նախագահության Խորհրդական (27)։
1867թ., հոկտեմբերի 8	Ձեռնադրվեց որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ (28)։
1874–1875թթ., 1877թ.	Երկու ժամկետ ծառայել է որպես Եվրոպական Միսիայի նախագահ (35–36, 38)։
1877թ., օգոստոսի 29	Մահացավ Նախագահ Բրիգամ Յանգը, Սոլթ Լեյք Սիթիում (38)։
1880թ., հոկտեմբերի 10	Հաստատվեց որպես Նախագահ Ջոն Թեյլորի Երկրորդ Խորհրդական (41)։
1887թ., հուլիսի 25	Մահացավ Նախագահ Ջոն Թեյլորը, Քեյսվիլում, Յուտա (48)։
1889թ., ապրիլի 7	Հաստատվեց որպես Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի Երկրորդ Խորհրդական (50)։
1890թ., սեպտեմբերի 24	Մանիֆեստ ընդունվեց. Պաշտոնական
հոկտեմբերի 6	Հայտարարություն 1–ը ընդունվեց Եկեղեցու կողմից (51)։
1893թ., ապրիլի 6	Նվիրագործվեց Սոլթ Լեյքի Տաճարը Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի կողմից (54)։
1898թ., սեպտեմբերի 2	Մահացավ Վիլֆորդ Վուդրուֆը, Սան Ֆրանցիսկոյում, Կալիֆորնիա (59)։
1898թ., սեպտեմբերի 13	Հաստատվեց որպես Նախագահ Լորենզո Սնոուի Երկրորդ Խորհրդական (59)։
1901թ., հոկտեմբերի 10	Մահացավ Նախագահ Լորենզո Սնոուն, Սոլթ Լեյք Սիթիում (62)։
1901թ., հոկտեմբերի 17	Կարգվեց և Ձեռնադրվեց որպես Եկեղեցու Նախագահ (62)։
1901թ., նոյեմբերի 10	Հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ հատուկ համաժողովի ժամանակ (62)։

1906թ., հուլիս–սեպտեմբեր	Առաջին Նախագահն էր, որ շրջագայեց Եվրոպայում իր ծառայության ընթացքում (67)։
1909թ., նոյեմբեր	Առաջին Նախագահությունը հրատարակում է վարդապետական մեկնաբանություն “The Origin of Man” (Մարդու Ծագումը) (70)։
1911թ.	YMMIA (ԵՏՁԸ-Երիտասարդ Տղամարդկանց Զարգացման Ընկերակցություն) ընդունեց Տղաների Սկաուտական ծրագիրը, որի անունն էր MIA (Համատեղ Զարգացման Ընկերություն) Սկաուտներ (72)։
1912թ.	Գրենիտ սեմինարիան Սոլթ Լեյք Սիթիում անցկացնում է ազատ ժամերի դասերը։
1913թ.	YWMIA (Երիտասարդ Կանանց Համատեղ Զարգացման Ծրագիրը) ընդունում է ճամբարի Աղջիկներ ամառային ծրագիրը. 1914թ. այն փոխարինվեց Փոքրիկ Աղջիկներ ամբողջ տարվա ծրագրով (74)։
1913թ., հուլիս 27	Նվիրագործեց Ալբերտա Տաճարի համար նախատեսված հողակտորը (74)։
1915թ., ապրիլի 27	Առաջին Նախագահությունը հորդորեց անդամներին կանոնավոր կերպով ընտանեկան երեկոներ անցկացնել (76)։
1915թ. հուլիսի 1	Նվիրագործեց Հավայիի Տաճարի համար նախատեսված հողակտորը (76)։
1916թ., հունիսի 30	Առաջին Նախագահությունը և Տասներկուսը հրատարակեցին “The Father and the Son” («Հայրը և Որդին») վարդապետական մեկնաբանությունը (77)։
1918թ., հոկտեմբերի 3	Ստանում է մահացածների փրկագնման մասին տեսիլքը, որը դարձավ Վարդապետություն և Ուխտերի 138–րդ բաժինը (79)։
1918թ., նոյեմբերի 19	Մահացավ Բիհիվ Հաուսում, Սոլթ Լեյք Սիթի (80)։
1918թ.	Տարեվերջյան վիճակագրություն՝ 495, 962 անդամներ; 75 ցցեր; 839 ծխեր; 22 միսիաներ։

Զոզեֆ Ֆ. Սմիթի ծառայությունը

Զոզեֆ Ֆ. Սմիթը Եկեղեցու վեցերորդ Նախագահն էր և Սարգարե Զոզեֆ Սմիթ անունը կրող վերջին Նախագահը: «Իմ մանկությունն անցել է Աստծո ժողովրդի հետ դեզերումների մեջ, տառապելով և նրանց հետ ցնծալով: Իմ ողջ կյանքը անցել է այս մարդկանց հետ»,- ասել է նա:[1] Նա լրջորեն ձգտում էր ճանաչել Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և ամբողջ հոգով նվիրված ծառայել նրանց: Օրհնված լինելով ավետարանը հիմնովին հասկանալու մեջ, նա կարողացավ առաջնորդել իր ժողովրդին հավերժական ճշմարտությունների սկզբունքներով և 20–րդ դարի սկզբներին կայուն դարձնել Եկեղեցին հակառակորդների հարվածների դեմ: Նա ցանկանում էր լինել «խաղաղարար, արդարակեցություն քարոզող»,[2] և նա եռանդուն կերպով ուսուցանում էր հնազանդություն, իր փորձառությամբ վկայելով, որ «բոլոր նրանք, ովքեր կհնազանդվեն Հոգու հուշումներին . . . կստանան ավելի պարզ, ավելի ծավալուն և ավելի ուղղակի և ամփոփ գիտելիք Աստծո ճշմարտությունների մասին, քան որևէ այլ մեկը»:[3]

Հավատքով դաստիարակված մանկություն

Սերի Ֆիլդինգի և Հայրում Սմիթի առաջնեկը՝ Զոզեֆ Ֆ. Սմիթը ծնվել է 1838թ. նոյեմբերի 13–ին Ֆար Վեստում, Քալդվել Գավառում, Միսսուրի, հալածանքների և աղքատության ժամանակաշրջանում: Ծնունդից երկու շաբաթ առաջ նրա հայրը բռնվեց ամբոխի կողմից և անարդար ձևով բանտ գցվեց: Երկարուձիգ չորս ամիսների ընթացքում Հայրում Սմիթը, նրա եղբայր Սարգարե Զոզեֆ Սմիթը և այլոք զրկանքներ կրեցին Լիբերթի բանտում: Սերին զգում էր, որ իր ամուսնուն դաժանորեն հեռացրել էին իրենից «այն ժամանակ, երբ ես . . . նման ընկերոջ բարի հոգածության և ուշադրության կարիքն ունեի, որի փոխարեն հանկարծակի և անսպասելիորեն իմ ուսերին էր ընկել մեծ ընտանիքի հոգսը»: Լինելով Եկեղեցու նորադարձ Կանադայից, նա ամուսնացել էր Հայրում Սմիթի հետ՝ նրա առաջին կնոջ Զերշուի մահից հետո, և նա հոգ էր տանում Սմիթի հինգ զավակների համար, երբ «իմ թանկագին փոքրիկ Զոզեֆն էր ավելացել նրանց»:[4]

Երբ Սրբերին քշեցին Միսսուրիից 1838–1839թթ. ձմռանը, Հոզեֆը գրկի երեխա էր: Նրա հայրը դեռևս բանտում էր, իսկ մայրը ծանր հիվանդ էր, և «ստիպված էր տեղափոխվել ավելի քան 320 կմ, հիմնականում անկողնում պառկած»:[5] Մերիի քույրը, Մերսի Ֆիլդինգ Թոմսոնը, խնամում էր նրան և իր նորածին դստեր հետ հոգ էր տանում Հոզեֆի համար: Սրբերը ապաստան գտան Իլինոյզում, և փոքրիկ Հոզեֆն իր առաջին ութ տարիների մեծ մասն անցկացրեց Նավուում, այն քաղաքում, որտեղ էլ Միսիսիպի գետի ափին Սրբերը հիմնավորվեցին: Այնտեղ էր, որ Սմիթ ընտանիքի շրջանակներում, Սրբերի համայնքում, նա մեծացավ Հիսուս Քրիստոսի ավետարանի գիտելիքով: «Ինձ սովորեցրել էին հավատալ Հիսուս Քրիստոսի առաքելության աստվածայնությանը»,- հետագայում հիշում է նա: «Ես սովորել էի այդ մասին իմ հորից, Մարգարե Հոզեֆ Սմիթից՝ իմ մոր միջոցով . . . և իմ մանկության տարիներին և այս աշխարհում իմ կյանքի բոլոր տարիների ընթացքում ես կառչել եմ այդ համոզմունքից»:[6]

Հոզեֆի հայրը՝ Հայրումը օգնել էր Մարգարե Հոզեֆին Եկեղեցու կազմավորումից հետո առաջ տանել Վերականգնման գործը, և անգամ ավելի շուտ, երբ Հոզեֆը թարգմանում էր Մորմոնի Գիրքը: Մարգարեն ամբողջությամբ ապավինել էր իր ավագ եղբորը Հայրումին, հատկապես Նավուում, որտեղ Հայրումը հայտնությամբ կանչվեց որպես Եկեղեցու Հայրապետ և Նախագահի Օգնական: Մարգարեն ասել է, որ Հայրումն ուներ «գառի հեզությունը և հոբի ազնվությունը, այսինքն՝ Քրիստոսի հեզությունն ու համեստությունը»:[7]

Իր հոր նման, Հոզեֆը մեծ սեր էր տածում Մարգարե Հոզեֆ Սմիթի հանդեպ և հավատարիմ էր նրան: Ավելի ուշ նա հաճախ էր կիսվում իր թանկարժեք մանկական հուշերով իր հորեղբոր մասին և անընդհատ վկայում էր նրա՝ որպես Վերականգնման Մարգարեի կոչման մասին. «Օ՜, նա լի էր ուրախությամբ. նա լի էր խնդությամբ. նա լի էր սիրով. . . Եվ նա խաղում էր երեխաների հետ և պարզապես զվարճանում, անմեղ խաղեր էր խաղում մեծահասակների հետ, միևնույն ժամանակ նա հաղորդակցվում էր Հոր և Որդու հետ, խոսում էր հրեշտակների հետ, և նրանք այցելում էին նրան, օրհնություններ, պարգևներ ու զորության բանալիներ էին շնորհվում նրան»:[8]

Հոզեֆ Ֆ. Սմիթը դեռ վեց տարեկան չկար, երբ նրա հորեղբայր Հոզեֆը և իր հայրը, Հայրումը, տվեցին իրենց կյանքը Աստծո թագավորության համար: Նրանք սպանվեցին 1844թ. հունիսի 27–ին խաժամուժի կողմից: Նավուն միշտ նրա մեջ արթնացնում



Հոզեֆ. Ֆ. Սմիթ, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի
Եկեղեցու վեցերորդ Նախագահը։ Յուղանկարը՝ Ա. Սալզբրենների։

էր «անցյալի սուրբ հիշողությունները, ավելի սրբացած, և միևնույն ժամանակ Թանկագին ու զարհուրելի, այն Սրբազան վայրով, որտեղ հանգչում է իմ Հոր աճյունը և Սոսկալի Տեսարաններով, որոնք այն ժամանակ (և իմ հիշողությամբ օրվա պես Մաքուր) բերեցին խավար և Ահաբեկում ազնիվ աշխարհի վրա և 10 հազար Սրտեր լցվեցին վշտով և ցավով»:[9]

Հայրումի մահից հետո, Մերին և նրա քույրը, Մերսին, որը նույնպես այրի էր, աշխատում էին միասին, որպեսզի հոգ տանեին մեծ ընտանիքի համար և պատրաստվում էին միանալ Արևմուտք գնացող Սրբերին: Ջոզեֆ Ֆ. Սմիթը հիշում է, որ իրենց պատրաստությունները հանկարծակի դադարեցվեցին 1846թ. վերջին, երբ սպառնացող ամբոխը ստիպեց նրանց անցնել «բաց լաստանավով Միսիսիպի գետով դեպի Այովա, որտեղ վրաններ էինք խփել ծառերի տակ և լսում էինք քաղաքի ռմբակոծումը: Մենք թողել էինք մեր հարմարավետ տունը իր ողջ կահկարասիով, մեր բոլոր ունեցվածքով, հույս չունենալով, որ երբևէ կրկին կտեսնենք այն»:[10] Նրա մայրը անընդհատ հավաստիացնում էր իր զավակներին. «Տերը մի դուռ կբացի»,[11] և նրա համոզվածությունը սնուցում էր իրենց հավատը: «Մենք հեռու չէինք, երբ լսեցինք գետի մյուս ափին հրաձգություններ», հիշում է Նախագահ Սմիթը, «սակայն ես պարզապես իմ մտքում որոշակիորեն զգում էի, որքան որոշակի կարող է զգալ երեխան, որ ամեն ինչ լավ է, որ Տիրոջ ձեռքը մեզ վրա է, ինչպես այսօր եմ զգում»:[12]

Երբ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ճամփորդեց դեպի արևմուտք իր ընտանիքի հետ, նա տեսավ, թե ինչպես էր իր մայրը հավատքով հաղթահարում դժվարությունը դժվարության ետևից: Երբ նրա ղեկավարն անբարյացակամորեն պնդում էր, որ այրին բեռ կլինի ողջ խմբի համար, նա ասաց, որ կկատարի իր բաժինը, հոգ կտանի իր համար և անգամ ավելի շուտ կհասնի հովիտ, քան նա: Եվ ի վերջո, նա կատարեց իր ասածը: Որպես ընտանիքի անասնապահ, Ջոզեֆը լավ գիտակցում էր ընտանիքի թանկարժեք անասունների կարևորությունը, այնպես որ նա երբեք չէր մոռանում, թե ինչպես էր իր մայրը ջերմեռանդ աղոթում մեկ լուծ եզների համար: Ավելի ուշ նա հիշում է, որ մայրը աղոթեց լծված եզների համար, որոնք «պառկել էին ասես թունավորված լինեին», որպեսզի ոտքի ելնեին և շարժվեին առաջ, և «ի զարմանս ականատեսների», եզները ոտքի ելան և առաջ շարժվեցին»:[13]

1848թ. սեպտեմբերի 23-ին Ջոզեֆը ընտանիքի մի զույգ լծված եզներին քշելով հասցրեց Սոլթ Լեյքի Հովիտ: Նա ինը տարեկան

էր։ Սմիթները բնակվեցին Սոլթ Լեյք Սիթիի հարավում ընկած հողերում՝ Միլքրիքում, և այնտեղ պատանի Ջոզեֆը տքնաջան աշխատեց, որպես «սայլապան, անասնապահ, հողագործ, ոռոգող, գերանդիով կամ մանգաղով հնձվոր, փայտ տեղափոխող, կալսող, քամհարող . . . [և] ավագ բանվոր»։[14] Ընտանիքը ապրում էր մի փոքրիկ հյուղակում, սակայն Նախագահ Սմիթը հետագայում այսպես է մեկնաբանում. «Մենք հազարավոր ուրիշներից ավելի վատ չէինք ապրում, և ոչ այնքան վատ, ինչպես շատերը»։[15] Նա սովորեց տքնաջան աշխատել և կատարել իր պարտականությունները, ապրել առանց ճոխությունների, գովաբանել Աստծուն և վճարել տասանորդը այն ամենից, ինչ ընտանիքն ստանում էր։

Ջեզեֆ Ֆ. Սմիթը միշտ գնահատում էր իր մոր աշխատանքը և զոհաբերությունը, նրա անզուգական սերը և հավատքը։ Նա իրեն ամայացած էր զգում, երբ իր մայրը երկու ամիս տևած հիվանդությունից հետո 51 տարեկան հասակում մահացավ։ «Իմ մոր մահից 18 ամիս անց, 1852թ. սեպտեմբերի 21-ից մինչև 1854թ. ապրիլը դժվարին ժամանակներ էին ինձ համար», հետագայում գրում է նա իր մանկության ընկերոջը։ «Ես ասես գիսաստղ կամ հրեղեն ասուպ լինեի, առանց ձգողական կամ գրավիտացիոն ուժի, որ հավասարակշռության մեջ պահեր ինձ կամ չափավոր սահմանների մեջ դներ ինձ»։ 13 տարեկանում լինելով «հայրազուրկ և մայրազուրկ» նա հիշում էր, որ «ամենևին էլ առանց ընկերների չէր մնացել»։[16] Նրա կողմից «միշտ սիրելի և հիշվող մորաքույր Մերսի Ռ. Թոմսոնը»,[17] շարունակում էր հոգ տանել նրա մասին, նա երբեք չմոռացավ իր հանդեպ դրսևորած Բրիգամ Յանգի, Հեբեր Չ. Քիմբալի և իր հոր հորեղբոր որդի Ջորջ Ա. Սմիթի հոգատարությունը։ «Այդ մարդկանց,- ասում էր Ջոզեֆ Ֆ. Սմիթը,- «ես սովորեցի սիրել, ինչպես սիրում էի իմ հորը, քանի որ նրանք ազնիվ և ճշմարտությունը սիրող մարդիկ էին»։[18]

Հավայիում ծառայելու կանչը

Երբ 1854թ. ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Ջոզեֆը կանչվում է միանալու մեկնող միսիոներների խմբին, նա գործադրեց մանկությունից ի վեր կուտակած իր հավատքը և «ուրախ արձագանքեց» այդ կանչին։ Նա ավելի ուշ երախտագիտությամբ մտորում էր. «Սենդվիչ Այլենդում անցկացրած միսիայի իմ չորս տարիները վերականգնեցին իմ հավասարակշռությունը, և արմատավորեցին

այն օրենքներն ու սահմանները, որոնք ուղղորդեցին իմ հետագա կյանքը»:[19]

Երեց Չոզեֆ Ֆ. Սմիթը Սենդվիչ Այլանդի (Հավայի) հոնոլուլու ժամանեց 1854թ. սեպտեմբերի 27–ին, իր 16–ամյակից մոտ վեց շաբաթ առաջ: Նշանակվելով Մաուի կղզի, նա շուտով միայնակ գնաց Կուլա, որպեսզի ապրի մարդկանց մեջ և սովորի նրանց լեզուն և կուլտուրան: Պատանի երեցը «լրջորեն փնտրում էր լեզուների պարգևը», հիշում է նա, «և այս պարգևի շնորհիվ ու այդ կղզիներ ոտք դնելուց հետո հարյուր օրվա ընթացքում սովորելու արդյունքում, ես կարողանում էի խոսել մարդկանց հետ իրենց լեզվով այնպես, ինչպես ես այժմ խոսում եմ ձեզ հետ իմ մայրենի լեզվով»:[20] Այդ լեզվով արտասովոր սահունությամբ խոսելու շնորհիվ նա անձնապես ծառայեց Հավայան ժողովրդին:

Չնայած երիտասարդ տարիքին, Երեց Սմիթը նշանակվեց նախագահելու Մաուի կղզում, ապա Հավայան կղզիների Հիլոում, իսկ ավելի ուշ՝ Մոլոկայ կղզում: Մոլոկայում, երբ նա վարակվեց սոսկալի ջերմով և ծանր հիվանդ էր երեք ամիս, մի թանկագին քույր՝ Սա Սահուհին, իր որդու պես հոգատար խնամեց նրան: Նրանք երբեք չմոռացան միմյանց, և նրանք ողջագուրվում էին խորապես հուզվելով, երբ էլ որ հանդիպում էին հետագա տարիներին: «Իմ հանդեպ Հավայիի շատ բնիկների կողմից ցուցաբերված բարությունը»[21] մի օրհնյալ հիշողություն էր նրա համար:

Երեց Չոզեֆ Ֆ. Սմիթը Հավային թողեց 1857թ. հոկտեմբերին և շատ պարտականություններ ստանձնեց, որոնք Նախագահ Բրիգամ Յանգը տալիս էր իրեն: Նա միսիայի գնաց Անգլիա (1860–1863) և երկրորդ միսիան ծառայեց Հավայիում (1864): Սոլթ Լեյք Սիթի վերադառնալուց հետո 1864թ. նա աշխատանքի անցավ Եկեղեցու Պատմական Գրասենյակում, աշխատելով Տասներկուսի Քվորումից Երեց Չորջ Ա. Սմիթի ղեկավարության ներքո:

Ծառայությունը Տասներկուսի Քվորումում և Առաջին Նախագահությունում

Այնուհետև 1866թ. Նախագահ Յանգի գլխավորությամբ 28–ամյա Չոզեֆ Ֆ. Սմիթը կարգվեց Առաքյալ և կանչվեց որպես Առաջին Նախագահության Խորհրդական: Նա հարգանքով է վերաբերվել Նախագահ Յանգին՝ որպես մի մարդու, որը «բարձրացվել է և աջակցվել Ամենազոր Աստծո զորությամբ, շարունակելու Մարգարե Չոզեֆի առաքելությունը և կատարելու այն գործը, որի հիմքերը նա դրել էր իր կյանքի ընթացքում»:[22] Չոզեֆ

Ֆ. Սմիթը իր ողջ հոգով փափագում էր օգնել առաջ տանելու այդ «մեծ և փառահեղ աշխատանքը»:[23] Նա ուսուցանել է. «Ավետարանն ընդունելուց հետո գնացեք և կատարեք ձեր ողջ պարտականությունը, ոչ թե կես–կես, կամ մասնակի, այլ ձեր ամբողջ պարտականությունը»:[24] Սա է միակ ճանապարհը առաջ տանելու «Սիոնի շահերն ու երկրի վրա նրա գործի հաստատումը»:[25] Այլ պատասխանատվություններից բացի, որպես Տասներկուսի Քվորումի անդամ, նա երկու ժամկետ ծառայել է որպես Եվրոպական Սիսիայի նախագահ (1874–1875; 1877):

Թեև Զոզեֆ Ֆ. Սմիթը մի քանի տարի ընդամենը դպրոց հաճախեց, նա մեծ բառապաշար ձեռք բերեց և սովորեց խոսել զորությամբ ու համոզումով: 1866թ. հունիսի 24–ին նա խոսեց Սոլթ Լեյքի Թաբերնաքլում և ինչպես Տասներկուսի Քվորումից Երեց Վիլֆորդ Վուդրուֆն է գրել, «խոսեց կեսօրին 1 ժամ ու 15 րոպե, և Աստծո զորությունը նրա վրա էր, և նա արտացոլում էր նույն Հոգին, որն իր Հորեղբոր Զոզեֆ Սմիթի և իր Հոր՝ Հայրում Սմիթի վրա էր»:[26] Երեց Զոզեֆ Ֆ. Սմիթը հանրաճանաչ դարձավ իր քարոզների առատությամբ ու զորությամբ: Նա ցանկանում էր ուսուցանել Սուրբ Հոգով, «որպեսզի հասկանային ինձ լսողները»:[27] «Այնքան կարևոր չէ անսխալ լեզուն, որքան խոսողին ուղեկցող հոգին, որը կյանք ու լույս է արթնացնում հոգու մեջ»,- սովորեցնում էր նա:[28] «Ես միշտ ձգտել եմ, որ իմ ունկնդիրները զգան, որ ես և իմ գործընկերները խաղաղարարներ ենք և սիրում ենք խաղաղությունն ու բարի կամքը, որ մեր առաքելությունը փրկելն է և ոչ թե կործանելը, կառուցելը և ոչ թե՝ տապալելը»,- մի անգամ նա գրել է իր միսիոներ որդուն:[29]

Նախագահ Բրիգամ Յանգի մահից հետո, 1877թ.–ից մինչև 1901թ., երբ Զոզեֆ Ֆ. Սմիթը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ, նա շարունակ ձգտել է կյանք և լույս պարգևել, և խաղաղություն ու բարի կամք հաստատել Սրբերի հոգիներում: Այդ 24 տարիների ընթացքում, Զոն Թեյլորը, Վիլֆորդ Վուդրուֆը և Լորենզո Սնոուն ծառայեցին որպես Եկեղեցու Նախագահներ, իսկ Զոզեֆ Ֆ. Սմիթը կանչվեց որպես Խորհրդական յուրաքանչյուր հաջորդող Առաջին Նախագահությունում: Դա մի ժամանակ էր, երբ Վերջին Օրերի Սրբերի համոզմունքներն ու գործերն ամենուրեք ճիշտ չէին ընկալվում, և 1880–ականներին ընդդիմադիրները օրինական դաժան պատերազմներ էին մղում Եկեղեցու և նրա անդամների դեմ: «Նրանք չեն ուզում, որ մենք առանձնանաք և տարբերվենք աշխարհից, լինի դա կրոնական, թե այլ տեսակետից: Նրանք ցանկանում են, որ նույնանանք և խառնվենք մնա-

ցած աշխարհին, նմանվենք նրանց, դրանով իսկ խափանելով Աստծո նպատակները», -բացատրում էր Նախագահ Սմիթը:[30]

Այնուամենայնիվ, Նախագահ Սմիթը աղերսում էր Եկեղեցու անդամներին՝ սիրել և ներել իրենց թշնամիներին: «Երբ մենք մոռանում ենք մեր կոչման նպատակը և շեղվում մեր պարտականության ճանապարհից, վիրավորելով նրան, ով վիրավորել է մեզ, չարին չարով պատասխանելով, հալածելով նրան, որովհետև մենք կարող էինք հալածվել, մենք մոռանում ենք Տիրոջ հրամանները և Նրա պատվիրանները պահելու համար Աստծո հետ կապած ուխտերը»,– ուսուցանում էր նա:[31] Նա հիշեցնում էր հուսահատված Սրբերին, որ Աստված հավաստել է. «Եկեղեցու ճակատագիրը առաջ կգնա և վեր ուղղված կլինի, մինչև որ վերջին օրերի այս մեծ գործին նվիրված Աստծո նպատակները կիրականանան»:[32]

Ջոզեֆ Ֆ. Սմիթը շատ մոտ էր նրանց, ում հետ ծառայում էր: «Երբ իմ եղբայրները և քույրերը, որոնց ես սիրում եմ, վստահության և սիրո խոսքեր են ասում ինձ, դրանք անցնում են ուղիղ իմ սրտով»,- ասել է նա:[33] Իր մտերիմներից նա ամենաշատը գնահատում էր իր սիրելի ընտանիքի հետ ունեցած իր կապերը: Նրա համար ամուսին և հայր լինելն ամենամեծ կոչումն էր: Նա սիրում էր լինել տանը, ուսուցանել իր զավակներին, պատմել պատմություններ, երգել, աղոթել և ծիծաղել նրանց հետ: Երբ հանձնարարությունների բերումով բացակայում էր տնից, նա շատ էր կարոտում իր սիրելիներին: Գտնվելով Հավայիում, 1885թ. ապրիլի 1–ին նա գրել է իր օրագրում. «Ուժեղ արևելյան քամի է փչում, որն ավելի ցուրտ կլիմայում խստաշունչ է և ծակող: Արդյոք այն մե՞ղմ, թե՞ անգթորեն է փչում իմ սիրելիների վրա: Նրանք տա՞ք են, թե՞ մրսում են . . . Սովա՞ծ են, թե՞ կուշտ: Գտնվում են ընկերների, թե՞ թշնամիների շրջապատում, անհանգիստ են, թե՞ խաղաղ են: Խաղաղություն լինի միշտ»:[34] Նրա որդին՝ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը հիշում էր այն հիշարժան ժամանակները, երբ անցկացնում էր իր հոր կողքին՝ «քննարկելով ավետարանի սկզբունքները և ստանալով ուղղություն, որը միայն նա կարող էր տալ: Այս ձևով իմ գիտելիքի հիմքը դրվեց ճշմարտության վրա, այնպես որ ես ևս կարող եմ ասել. գիտեմ, որ իմ Քավիչն ապրում է և, որ Ջոզեֆ Սմիթը կա, եղել է և միշտ կլինի կենդանի Աստծո մարգարեն»:[35]

Նա մշտապես հոգում էր իր ընտանիքի նյութական և հոգևոր կարիքները, և միշտ զգացնել էր տալիս իր ներկայությունը՝ լիներ տանը, թե դրսում: Իր գրառումներում, նամակներում և բանաստեղծություններում, նա արտահայտում էր իր սիրելիների հան-

դեպ ունեցած իր մշտական կապվածությունը: «Իմ Թանկագին Ընկեր»,- գրել է նա իր կնոջը՝ նրա 39–ամյակի առթիվ, «ես ավելի շատ եմ մտածում քո մասին, ավելի բարձր եմ քեզ գնահատում, դու ավելի մոտ ես ինձ, և ես ավելի շատ եմ սիրում քեզ այսօր, քան . . . քսան տարի առաջ: Ամեն մի ժամը, շաբաթը, ամիսը և տարին ամրացնում է մեր միության կապը և յուրաքանչյուր զավակը ցեմենտում է այն հավերժական կնիքով»:[36]

Նախագահ Սմիթը մեծ սեր էր տածում տաճարի և դրա արարողությունների հանդեպ, արարողություններ, որոնք միավորում էին ընտանիքները: «Ովքեր, բացի Վերջին Օրերի Սրբերից կմտածեն այն մասին, թե գերեզմանի այն կողմում մենք կշարունակենք ընտանեկան կազմակերպությունը»:[37] 1853թ. ապրիլի 6–ին 14 տարեկան հասակում, նա վկա էր Սոլթ Լեյքի Տաճարի անկյունաքարը դնելու արարողությանը, իսկ 1892թ. ապրիլի 6–ին 53 տարեկան հասակում նա ասաց տաճարի վերջին քարը դնելու աղոթքը:[38] Հաջորդ տարին, 1893թ. ապրիլի 6–ին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը նվիրագործեց այդ հրաշակերտ կառույցը, Յուտայում թվով չորրորդ տաճարը: Ելույթ ունենալով նվիրագործման ծառայությունների ժամանակ Նախագահ Սմիթը հայտարարեց. «Սա վեցերորդ տաճարն է [ներառյալ Կիրթլենդի և Նավուի Տաճարները], սակայն սա վերջը չէ»:[39] Որպես Եկեղեցու Նախագահ, նա պետք է նվիրագործեր Կարդսթոնում, Կանադա, տաճարի հողատարածքը (27 հուլիսի 1913թ.) և Լայե տաճարի հողատարածքը, Հավայի (1 հունիսի 1915թ.):

Ծառայությունը Որպես Եկեղեցու Նախագահ

1901թ. հոկտեմբերի 17–ին Նախագահ Լորենզո Սնոուի մահից մեկ շաբաթ անց Տասներկու Առաքյալների Քվորումը կարգեց և ձեռնադրեց Հոզեֆ Ֆ. Սմիթին որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վեցերորդ Նախագահ: Նա 17 տարի պետք է ծառայեր որպես Նախագահ՝1901–1918թթ.: Առաջին անգամ նա որպես Եկեղեցու Նախագահ դիմեց Սրբերին՝ հայտարարելով. «Մեր առանձնաշնորհն է՝ ավելի մոտ ապրել Տիրոջը, քան երբևէ, եթե կամենում ենք, որպեսզի կարողանանք վայելել Նրա Հոգու զեղումները ավելի շատ, քան երբևէ վայելել ենք, և որպեսզի մենք կարողանանք առաջ գնալ ավելի սրընթաց, ճշմարտության մասին մեր գիտելիքն ավելացնենք ավելի արագ, և ավելի հիմնավոր կերպով հաստատվենք հավատքի մեջ: Թեև, այս ամենը կախված կլինի մարդկանց հավատքի աճից»:[40] Ինքն

անձամբ այցելելով Սրբերին, գործադրելով իր ջանքերը՝ ամրապնդելու ընկերակցումը և ուսուցանելու տեղական ծխերում, նրա անձնական անխոնջ քարոզները «հավերժական ճշմարտության սկզբունքների» վերաբերյալ, այդ ամենը նպատակ էր հետապնդում բարձրացնելու «արդարակեցությունը, ազնվությունը և սրբությունը մարդկանց սրտերում»:[41] Նա գիտեր, որ միայն արդարակյաց, ազնիվ և սուրբ մարդը կարող է օգնել Փրկչին՝ առաջ տանելու «երկրի սրբագործումը և մարդկային ընտանիքի փրկությունը»:[42]

Նախագահ Սմիթի ղեկավարության ընթացքում Եկեղեցու անդամության թիվը գրեթե կրկնապատկվեց, 1901թ. 278,645–ից հասնելով մինչև 495, 962՝ 1918թ.: Թեև անդամների մեծ մասը դեռևս ապրում էր Միացյալ Նահանգների արևմուտքում, Նախագահ Սմիթը մեծ կապվածություն էր զգում շատ ազգերի անդամների հետ: Նա շրջագայեց Եվրոպայում 1906թ., և կրկին վերադարձավ այնտեղ 1910թ., ինչպես նաև այցելեց Կանադայի և Հավայան կղզիների Սրբերին: Նա և Առաջին Նախագահության իր Խորհրդականները խորհուրդ տվեցին անդամներին լինել «հավատարիմ և նվիրված իրենց կառավարություններին, և լինել լավ քաղաքացիներ»,[43] և «մնան իրենց հայրենի երկրում և կազմակերպեն մշտական բնույթ կրող հավաքներ»:[44] Եկեղեցու անդամներն այլևս չէին խրախուսվում տեղափոխվել Յուտա՝ միանալու Սրբերին:

Սրբերի առաջին սերունդը հավաքվեց Սիոնում, աշխարհագրական ձևով առանձնանալով մնացած աշխարհից, որ հնարավոր լիներ կռել մի միասնություն և հոգևոր ուժ: Նախագահ Սմիթը հաջորդ սերունդների համար հատկապես նշել է աշխարհում խաղաղ ապրելու կարևորությունը՝ պահպանելով միասնության և հոգևոր ուժի ժառանգությունը, որը հնարավոր է դառնում քահանայության կարգի և արարողությունների միջոցով:

Նախագահ Սմիթը շատ է խոսել և գրել քահանայության անզուգական զորության մասին և ջանացել է օգնել բոլոր անդամներին հասկանալ դրա նշանակությունը: Երբ Հոզեֆ Ֆ. Սմիթը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ, այդ ժամանակ ժողովներ անցկացնելու ժամանակները, դասերը և քահանայության քվորումների արդյունավետությունը տարբեր էր ծխերում: Սակայն Նախագահ Սմիթը կանխազգացել էր այն օրը, «երբ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում Քահանայության ամեն մի խորհուրդ կհասկանա իր պարտականությունը, կստանձնի իր պատասխանատվությունը, կփառավորի իր

կոչումը և կունենա իր տեղը Եկեղեցում»:[45] 1908թ. ապրիլին տեղի ունեցած ընդհանուր համաժողովի ժամանակ Նախագահ Սմիթը հայտարարեց, որ նոր ջանքեր են գործադրվում՝ «ի օգուտ և ի առաջխաղացում նրանց, ովքեր համագործակցում են Քահանայության տարբեր քվորումների հետ»:[46]

Ահարոնյան Քահանայության քվորումները հատկապես մտահոգում էին նրան: «Մենք պետք է հետևենք մեր տղաներին, ովքեր կարգվել են սարկավագներ, ուսուցիչներ և Քահանաներ Եկեղեցում», խորհուրդ էր տվել նա:[47] Հաջորդ տարիներին եպիսկոպոսները կարևոր հանձնարարություններ էին տվել երիտասարդ քահանայություն կրողներին, որոնցից շատերը այժմ գործում են օրինակելի ձևով: Թե՛ Ահարոնյան Քահանայության, և թե՛ Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները կանոնավոր ձևով ամրապնդվեցին շաբաթ առ շաբաթ, ամբողջ տարին քահանայության ժողովները կայուն կերպով հաստատվեցին և Եկեղեցու կենտրոնական հանձնաժողովը միանման ուսումնական ծրագրեր թողարկեց քվորումների համար:

Նախագահ Սմիթը մեծ տեղ է հատկացրել տնային ուսուցմանը: «Ես չգիտեմ ավելի մեծ պարտականություն, որն ավելի սուրբ է, կամ ավելի անհրաժեշտ, եթե այն պատշաճ կերպով է կատարվում, քան ուսուցիչների պարտականությունները, ովքեր այցելում են մարդկանց տները, աղոթում են նրանց հետ, հորդորում են նրանց՝ լինել առաքինի և հարգալից, սիրել, հավատալ և նվիրվել Սիոնի գործին»,– ասել է նա:[48] Որպեսզի հետագայում է՛լ ավելի ամրապնդվեն Եկեղեցու ընտանիքները, 1915թ. նա և Առաջին Նախագահության իր Խորհրդականները ընտանեկան երեկոների ամենշաբաթյա ծրագիր ներկայացրեցին Եկեղեցուն, համոզելով ծնողներին՝ օգտագործել իրենց ժամանակը ուսուցանելու իրենց զավակներին Աստծո խոսքը:

Սա ևս նշանակալից առաջընթացի ժամանակշրջան էր օժանդակ կազմակերպությունների համար: Կիրակնօրյա Դպրոցի, Երիտասարդ Տղամարդկանց, Երիտասարդ Կանանց և Երեխաների Միության գլխավոր խորհուրդները սկսեցին հրատարակել միասնական ուսումնական ծրագրեր: Այդ դասերը, նշել է Նախագահ Սմիթը, ուղեցույց էին հանդիսանում երիտասարդ անդամների համար, որպեսզի նրանք դիմանան «ավելի մեծ փորձություններին և ավելի լավ հասկանան Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները»:[49] Որպեսզի երիտասարդների ժամանցն էլ ավելի բովանդակալից դառնա, Պատանի Սկաուտների ծրագիրն ընդունվեց երիտասարդ տղամարդկանց համար և մշակվեց

նոր Փենթակ ծրագիրը՝ երիտասարդ կանանց համար: Սփոփող Միությունը, որը 1902թ.-ից ի վեր խրախուսում էր ցցերին՝ դասեր գրել քույրերի համար, սկսեց հրատարակել ընդհանուր դասեր 1914թ., իսկ 1916թ. սկսեց հատուկ ուղերձներ տպագրել այցելող ուսուցիչների համար: Այս նորարարությունները տպվեցին *Relief Society Magazine* –ում և ավելի լավ գիտելիքներ տվեցին Սփոփող Միության կանանց, որպեսզի «հոգ տարվի Սիոնի մայրերի և դուստրերի հոգևոր, մտավոր և բարոյական բարօրության համար»:[50] Նախագահ Սմիթի համար կենսական նշանակություն ուներ այն, որ օժանդակ կազմակերպությունները ներդաշնակորեն գործեին քահանայության իշխանությունների հետ՝ ուսուցանելու ավետարանը և անդամների մեջ ընկերական կապերն ամրապնդելու համար: «Այսպիսով, մենք բոլորս աշխատում ենք քրտնաջան և տոկալով՝ Եկեղեցին հաստատելու համար»:[51]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի դեմ ծառացած մեծագույն խնդիրներից մեկը անհասկացողության և Եկեղեցու դեմ ուղղված հալածանքների դեմ պայքարն էր: Ինչևէ, նա հայտարարել է, որ զրպարտիչների ջանքերը, «անուղղակիորեն միջոց են ծառայել աշխարհում այս գործն առաջ տանելու համար: Նրանք աշխարհի ուշադրությունն են հրավիրել մեզ վրա, իսկ մենք հենց դա ենք ցանկանում: . . . Մենք ցանկանում ենք, որպեսզի աշխարհը ճանաչի մեզ: Մենք ցանկանում ենք, որպեսզի նրանք ծանոթանան մեր վարդապետությանը, հասկանան մեր հավատքը, իմանան, թե որոնք են մեր նպատակները, և ինչ է իրենից ներկայացնում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմակերպությունը»:[52]

Աստիճանաբար, Նախագահ Սմիթի հույսերն սկսեցին իրականանալ և Եկեղեցին սկսեց հարգանք ձեռք բերել Միացյալ Նահանգներում և արտասահմանյան երկրներում: Որպեսզի Սոլթ Լեյք Սիթի այցելած զբոսաշրջիկներին ճշգրիտ տեղեկություն տրվի Եկեղեցու հավատքի և պատմության վերաբերյալ, Եկեղեցին 1902թ. Տաճարային Հրապարակում հիմնեց առաջին այցելուների կենտրոնը: Իր գործելու առաջին տարիներին Bureau of Information and Church Literature–ի (Տեղեկատվության և Եկեղեցու Գրականության Բյուրո) 25 կամավոր աշխատակիցներին շրջապատեցին ավելի քան 150,000 այցելուներ: Մինչև 1904թ. բյուրոյին անհրաժեշտ էին ավելի շատ աշխատողներ և ավելի մեծ շենք: 1911թ. Թաբերնաքլի երգչախումբը ներկայացրեց բարձր գովասանքի արժանի համերգներ Միացյալ Նահանգների արևելյան և միջին արևմտյան 25 քաղաքներում, ներառյալ Սպիտակ Տանը՝

Միացյալ Նահանգների նախագահի և հյուրերի համար տրված հատուկ համերգը:

«Տերն ավելի շատ կբարձրացնի և կփառավորի մեզ աշխարհի առաջ և մեզ կդնի մեր իսկական տեղում և դիրքում երկրի վրա», խոստացել է Նախագահ Սմիթը, որը կլինի անդամների «ավելացած հավատարմության» և «հավատքում ավելի հիմնավոր հաստատվելու» ցանկության համեմատ»:[53] Այդ պատճառով նա շարունակ հորդորում էր Վերջին Օրերի Սրբերին ավելի խոր արմատներ գցել իրենց պատմության և վարդապետության մեջ: Նախագահ Սմիթը ձեռնամուխ եղավ վերատպելու Ջոզեֆ Սմիթի *Եկեղեցու Պատմություն*–ը և հիմնեց պիոներների օրագրերի և ձեռագրերի հավաքածուն Եկեղեցու Արխիվների համար: Նա նաև լիազորեց Եկեղեցու պաշտոնյաներին՝ գնել Վերջին Օրերի Սրբերի համար սրբազան դարձած պատմական հողակտորները, ներառյալ Քարթեջի Բանտը Իլինոյզում, որտեղ Մարգարե Ջոզեֆ Սմիթը և նրա եղբայր Հայրումը սպանվեցին 1844թ. (1903թ.); տաճարի հողակտորի մի մասը Ինդիփենդենսում, Միսուրի (1904թ.); Վերմոնտ ագարակը, որտեղ ծնվել է Ջոզեֆ Սմիթը 1805թ. (1905թ.); և Ջոզեֆ Սմիթ ավագի ագարակը Մանչեստրում, Նյու Յորք, այն անտառի մի մասը, որտեղ Մարգարեն առաջին անգամ տեսավ Հորը և Որդուն (1907թ.): Նա վկայել է. «Ինչ–որ ձևով սրբացած են այս վայրերը ինձ համար և կարծում եմ նրանց համար, ովքեր ընդունել են Ջոզեֆ Սմիթ Մարգարեի աստվածային առաքելությունը»:[54]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ուսուցանել է Վերջին Օրերի Սրբերին՝ հարգել Մարգարեին, «ետ տանել իրենց աչքերի առաջից հավերժության վարագույրը»:[55] Նմանապես, Նախագահ Սմիթն ինքն էր ձգտում հասկանալ և ուսուցանել Հիսուս Քրիստոսի ավետարանի լայնածավալ ճշմարտությունները: Նրա նամակները ուղղված իր ընտանիքին և ընկերներին, նրա խմբագրականներն ու պատասխանները Եկեղեցու ամսագրերում տրված հարցերին, և նրա քարոզները, բոլորն էլ կարևոր առիթներ էին վարդապետություն մեկնաբանելու համար: Երբ նա և Առաջին Նախագահության իր Խորհրդականները զգացին, որ հիմնական վարդապետությունները կարող են չհասկացվել Եկեղեցու անդամների կամ այլոց կողմից, նրանք կազմեցին և հրատարակեցին պարզաբանող բացատրություններ: “The Origin of Man” (Մարդու Ծագումը) (նոյեմբեր, 1909թ.)[56] և “The Father and the Son: A Doctrinal Exposition by the First Presidency and the Twelve” (Հայրը և Որդին. Վարդապետական Մեկնաբանություն Առաջին

Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից, հունիս, 1916թ.)[57] դարձան կարևոր գործիքներ Վերջին Օրերի Սրբերի համար՝ ուսուցանելու Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ մեր կապի ճշմարիտ բնույթի մասին:

«Ես ձգտել եմ իմ պատանեկության տարիներից ի վեր . . . լինել խաղաղարար, արդարության քարոզիչ, ոչ միայն քարոզել խոսքով, այլ նաև օրինակով»,[58] - ասել է Նախագահ Սմիթը: 15 տարեկանից մինչև 80 տարեկան հասակը, նա ունեցել է ավետարանին նվիրված հարյուրավոր ելույթներ և զրույցներ, նպատակ ունենալով օգնել Սրբերին հասկանալ Հիսուս Քրիստոսի ուսմունքները և ապրել ըստ դրանց: Խոսելով նրա ուսուցանման ունակության մասին, Չարլզ Վ. Նիբլին հայտարարել է. «Որպես արդարակեցության քարոզիչ ո՞վ կարող է հասնել նրան: Նա ամենամեծն է նրանցից, ում ես երբևէ լսել եմ՝ ուժեղ, զորավոր, պարզ, ձգող: Հրաշք էր այն, թե ինչպես էին կենդանի լույսի և կրակի բառերը հորդում նրանից»:[59]

Չոզեֆ Ֆ. Սմիթը ցնծում էր, երբ Եկեղեցու անդամները ուշադրություն էին դարձնում իր՝ որպես Աստծո մարգարեի նախազգուշացնող խոսքերին և հորդորներին: Սրբերի «արդարակեցությամբ, պարզությամբ և սրբությամբ» առաջ գնալու պատրաստակամությունը առավելագույն կարևորություն ուներ նրա համար:[60] Նա իր ետևից տանում էր իր իսկ համեստությամբ և սովորելով: «Ես միայն մանուկ եմ, ես միայն սովորում եմ»,– ասել է նա 1916թ.: «Ես անկեղծորեն հուսացել եմ, որ եթե սովորեմ քիչ–քիչ, տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ, օրեցօր, ամսե ամիս, տարեց–տարի, ապա կգա մի ժամանակ, երբ ես սովորած կլինեմ իսկական ճշմարտությունը և կիմանամ, ինչպես Աստված գիտի, և կփրկվեմ ու կբարձրանամ Նրա ներկայության մեջ»:[61] Միշտ հարգված լինելով իր համարձակության և համոզվածության համար, նրան հատկապես խորը ակնածանքով են վերաբերվել իր կարեկցանքի համար: Տիկին Կոլեկան՝ նրա շատ սիրելի հավայան գործակիցներից մեկը, գովաբանել է նրան, անվանելով «Բարձրյալ Աստծո ծառա, սիրով լցված բացսիրտ մարդ»:[62] Նա սովորել էր «արդարակեցություն քարոզել ոչ միայն խոսքով, այլ օրինակով»,[63] լրջորեն փնտրելով «նմանվել Հիսուս Քրիստոսին և արտացոլել նրա կերպարը»:[64]

Իր կյանքի վերջին մի քանի ամիսների ընթացքում, Նախագահ Սմիթը հատկապես զգում էր հոգին: «Ես հնարավոր է ֆիզիկապես տկար լինեմ, սակայն պարզվում է, որ իմ հոգևոր իրավիճակը ոչ միայն մնում է հաստատուն, ինչպես անցյալում էր, այլև զարգա-

նում է և աճում»,–[65] ասել է նա 1918թ. ապրիլին: Վեց ամիս անց, 1918թ. հոկտեմբերի երեքին, երբ նա նստած իր սենյակում խորհում էր սուրբ գրությունների շուրջ և «մտորում էր աշխարհը փրկագնելու համար Աստծո Որդու կատարած մեծ քավության զոհաբերության շուրջ»,[66] նա ստացավ մի զարմանահրաշ հայտնություն այն մասին, թե ինչպես Փրկիչը այցելեց մահացածներին, մինչ Նրա մարմինը գերեզմանում էր: Հայտնությունը, որն ավելի ուշ կոչվեց Տեսիլք Մահացածների Փրկագնման մասին և հայտարարվեց որպես Վարդապետություն և Ուխտեր 138, վերջին դրված քարն է մարգարեի կյանքի, որը անդադար քարոզեց դեպի կյանքի և փրկության ծրագիրը Աստծո բոլոր զավակներին բերելու կարևորության մասին:

Աստծո փառքը, մարդու աստվածային ծագումը և իր կախվածությունը Աստծուց, հնազանդության կարևորությունը և սուրբ արարողությունները, սիրով լի երախտագիտությունը և հավատարիմ նվիրվածությունը,- այս երեք գծերը Նախագահ Սմիթը հյուսում էր միմյանց կրկին ու կրկին: Հազվադեպ էր նա հղում ավետարանի մի սկզբունք, առանց շաղկապելու այն կյանքի և փրկության ծրագրի հետ: Նա կարողանում էր քարոզել ավետարանը իր լրիվությամբ մի քարոզի ընթացքում, երբեմն մի նախադասությամբ, միշտ կենտրոնանալով Հայր Աստծուն և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին ճանաչելու կարևորության վրա: «Նրանց հանդեպ տածած սիրո շնորհիվ է և նաև, Նրանց պահանջների հետ ներդաշնակության մեջ ապրելու և Նրանց նմանվելու մեր ցանկության շնորհիվ, որ մենք կարողանում ենք սիրել միմյանց, և կարողանում ենք ավելի հաճույք ստանալ բարիք գործելիս, քան որ մենք կարող էինք ունենալ երբևէ չարություն գործելիս»:[67]

Հղումներ

1. *Deseret News: Semi-Weekly,* 25 Apr. 1882, 1.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 406.
3. In Conference Report, Apr. 1902, 85–86.
4. *Millennial Star,* June 1840, 40.
5. *Millennial Star,* June 1840, 40–41.
6. *Gospel Doctrine,* 494.
7. *History of the Church,* 2:338.
8. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 5:29.
9. Joseph F. Smith's Journal, Leeds, 13 Apr. 1861, holograph, 5; Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints.
10. In *Deseret News: Semi-Weekly,* 25 Apr. 1882, 1; spelling modernized.
11. In *Collected Discourses,* 2:348.
12. In *Deseret News: Semi-Weekly,* 10 July 1883, 1.
13. Jos. F. Smith's Journal, 18; spelling modernized; Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints.
14. "Editor's Table—In Memoriam, Joseph Fielding Smith (1838–1918)," *Improvement Era,* Jan. 1919, 266.
15. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 159.

16. Joseph F. Smith to Samuel L. Adams, 11 May 1888, *Truth and Courage: Joseph F. Smith Letters,* ed. Joseph Fielding McConkie, 2.
17. "Editor's Table—In Memoriam," 266.
18. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:92.
19. Joseph F. Smith to Samuel L. Adams, 2.
20. In Conference Report, Apr. 1900, 41.
21. In *Messages of the First Presidency,* 4:18.
22. *Gospel Doctrine,* 171.
23. *Gospel Doctrine,* 82.
24. In *Collected Discourses,* 2:280.
25. *Gospel Doctrine,* 90.
26. Journal of Wilford Woodruff, 24 June 1866, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints; spelling modernized.
27. *Gospel Doctrine,* 201.
28. *Gospel Doctrine,* 359.
29. Joseph F. Smith to Hyrum M. Smith, 18 May 1896, *Truth and Courage,* 37.
30. *Deseret News: Semi-Weekly,* 2 Oct. 1883, 1.
31. *Deseret News: Semi-Weekly,* 7 Nov. 1882, 1.
32. *Deseret News: Semi-Weekly,* 25 Apr. 1882, 1.
33. *Life of Joseph F. Smith,* 365.
34. *Life of Joseph F. Smith,* 283.
35. Quoted in Bryant S. Hinckley, "Greatness in Men: Joseph Fielding Smith," *Improvement Era,* June 1932, 459.
36. *Life of Joseph F. Smith,* 453.
37. "General Conference of the Relief Society," *Relief Society Magazine,* June 1917, 316.
38. H. W. Naisbitt, "Temple Building," *Contributor,* Apr. 1892, 257.
39. In *Collected Discourses,* 3:279.
40. In Conference Report, Oct. 1901, 69–70.
41. In Conference Report, Oct. 1901, 70.
42. In *Messages of the First Presidency,* 4:155.
43. In *Messages of the First Presidency,* 4:165.
44. In *Messages of the First Presidency,* 4:222.
45. *Gospel Doctrine,* 159.
46. In Conference Report, Apr. 1908, 5.
47. In Conference Report, Apr. 1908, 6.
48. *Gospel Doctrine,* 189.
49. *Gospel Doctrine,* 393.
50. *Gospel Doctrine,* 386.
51. *Deseret Weekly,* 9 Jan. 1892, 70.
52. In Conference Report, Oct. 1908, 3.
53. In Conference Report, Oct. 1901, 70.
54. In Conference Report, Oct. 1906, 5.
55. *Deseret News: Semi-Weekly,* 27 Feb. 1883, 1.
56. "The Origin of Man, by the First Presidency of the Church," *Improvement Era,* Nov. 1909, 75–81.
57. "The Father and the Son: A Doctrinal Exposition by the First Presidency and the Twelve," *Improvement Era,* Aug. 1916, 934–42.
58. *Gospel Doctrine,* 406.
59. *Gospel Doctrine,* 522.
60. In Conference Report, Oct. 1901, 70.
61. In Conference Report, Apr. 1916, 4.
62. *Life of Joseph F. Smith,* 306.
63. *Gospel Doctrine,* 406.
64. *Gospel Doctrine,* 6.
65. In Conference Report, Apr. 1918, 2.
66. Doctrine and Covenants 138:2.
67. In *Collected Discourses,* 3:218.



Տեր Հիսուս Քրիստոսը։ *Քրիստոսը և հարուստ երիտասարդը* նկարից մի հատված, Հենրիխ Հայնե։

Գիտեմ ապրում է Քավիչն իմ

Սուրբ Հոգու վկայությամբ, մեզանից յուրաքանչյուրը կարող է իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է, Կենդանի Աստծո Որդին:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Կես դարից ավելի Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ծառայել է որպես Փրկչի հատուկ վկա՝ որպես Առաքյալ, որպես Առաջին Նախագահության Խորհրդական և որպես Եկեղեցու Նախագահ: Նրա վկայությունը, հայտարարված ամբիոններից հայրենի երկրում և օտար երկրներում, Եկեղեցու խորհուրդներում, և իր ընտանիքի շրջանակներում, սրտից և հոգուց էր բխում և նվիրված էր Հիսուս Քրիստոսին և Նրա փառահեղ ավետարանին: Նա պերճախոս էր, նրա ուղերձը պարզ էր. «Որպես Աստծո ծառա ես ցանկանում եմ ասել, որ անկախ բոլոր մարդկանց վկայություններից և գրված գրքերից, ես ստացել եմ Հոգու հայտնությունն իմ սրտում, և ես վկայում եմ Աստծո, հրեշտակների և մարդկանց առաջ, առանց հետևանքներից վախենալու՝ ես գիտեմ, որ ապրում է Քավիչն իմ և, ես պիտի տեսնեմ նրան դեմ առ դեմ և պիտի կանգնեմ նրա հետ իմ հարություն առած մարմնի մեջ այս երկրի վրա, եթե հավատարիմ մնամ, քանզի Աստված հայտնել է այդ մասին ինձ: Ես վկայություն եմ ստացել, և ես բերում եմ իմ վկայությունը, և իմ վկայությունը ճշմարիտ է»:[1]

Կյանքին հրաժեշտ տալուց հետո, Սոլթ Լեյք Սիթիի Գերեզմանատանը հուղարկավորության հատուկ արարողություն կատարվեց, որտեղ Թաբերնակլի երգչախումբը որպես հարգանքի տուրք կատարեց «Գիտեմ, Ապրում է Փրկիչն Իմ» օրհներգը: Այս արտահայտությունը նրա հավատքի հիմքն էր և նրա մարգարեական ուղերձի կենտրոնը. «Ես գիտեմ ապրում է Քավիչն իմ: Ես զգում եմ իմ ամեն մի բջիջով: Ես ուղղակի համոզված եմ դրանում, ինչպես իմ իսկ գոյության մեջ: Ես ավելի վստահ եմ ոչ թե իմ գոյության մեջ, այլ այն բանում, որ ապրում է Քավիչն իմ»:[2]

Այս վկայությունը տրվել է, երբ Նախագահ Սմիթը ելույթ է ունեցել Վեբեր Ցցի համաժողովի ժամանակ 1896թ. հոկտեմբերի 18–ին:[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Փրկչի կյանքը և ուսմունքները Նրա աստվածային լինելու ապացույցն են:

Մենք ծանոթ ենք մեր Փրկչի պատմությանը, ինչպես որ այն տրված է Նոր Կտակարանում. այն, որ Նա ծնվել է կույսից. որ Նա մնծացել է իր եղբայրների շրջապատում, որ տղամարդ դառնա, և ինչպիսի՜ զարմանահրաշ բաներ Նա կատարեց անգամ իր մանկության տարիներին Իր օծությամբ և առաքելության զորությամբ: Այն, որ Նա սովորեցնում էր օրինագետներին և դպիրներին ժողովարանում և տաճարում, և այն, թե ինչպես էր Նա կարկամեցնում նրանց, ովքեր ջանում էին հանցավոր դարձնել Նրան մի բառի համար: Մենք քաջատեղյակ ենք այն զորությանը, որը Նա ցույց տվեց բուժելով հիվանդներին, վերականգնելով կույրերի տեսողությունը և խուլերի լսողությունը և մաքրելով բորոտներին, և այնպես էր անում, որ կաղը ուրախությունից թռչկոտի:

Մենք քաջատեղյակ ենք այն վարդապետություններին, որոնք նա ուսուցանում էր. և միշտ ինձ թվում էր, որ Հիսուս Քրիստոսի աստվածայնության համար այլ ապացույց պետք չէ, քան այն վարդապետությունը, որը Նա ուսուցանում էր, որ մարդիկ պետք է սիրեն իրենց չարչարողներին և իրենց հալածողներին, և, որ նրանք չարությանը պետք է բարությամբ պատասխանեն: Մինչև Նա, աշխարհում քարոզվում էր հետևյալ վարդապետությունը. «աչքի տեղ աչք, և ատամի տեղ ատամ» [Մատթեոս Ե.38]: Սա էր այդ դարաշրջանի փիլիսոփայությունը: Սակայն Հիսուսը սովորեցրեց ճիշտ հակառակը: Նա հորդորում էր Իր աշակերտներին, որ նրանք չպետք է չարին չարով պատասխանեն, այլ պետք է չարին բարով պատասխանեն: «Ով որ ապտակ տա քո աջ երեսին, մյուսն էլ նորան դարձրու» [Մատթեոս Ե.39:] Սա նոր վարդապետություն էր աշխարհի համար: Սա մի վարդապետություն էր, որը չէր համապատասխանում մարդու ընկած վիճակին . . . Հետևաբար, դա մարդուց չէր տրված: Մարդիկ չեն կարող սովորեցնել նման վարդապետություն և հետևել դրան իրենց ողջ կյանքում, առանց վերևից ոգեշնչման և զորության:

«Երանի հոգով աղքատներին, որ նորանցն է երկնքի թագավորությունը:

Երանի սգավորներին, որ նորանք կմխիթարուին։

Երանի հեզերին, որ նորանք կժառանգեն երկիրը։

Երանի նորանց, որ սոված և ծարավ են արդարութեան, որ նորանք կկշտանան»։ [Մատթեոս Ե.3–6։]

Կարդացեք Լեռան Քարոզը [տե՛ս Մատթեոս Ե–Է], և այնուհետև հարցրեք ինքներդ ձեզ, թե արդյո՞ք այն վեր և առավել չէ այն ամենից, ինչ ուսուցանվել է մարդու կողմից։ Դա հաստատում է իմ համոզումը, որ Հիսուսը լոկ մարդ չէր, այլ, որ Նա Աստված էր՝ մարմնում հայտնված։ Դա հավերժական կյանքի վարդապետությունն է՝ ըստ որի, եթե մարդը ապրի, նա երբեք չպիտի մեռնի. ըստ որի, եթե նա քայլի, նա պետք է քայլի Աստվածահաճո արահետներով. և ըստ որի, եթե նա ապրի, նա պիտի ճանաչի ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի իրեն։

Ապա մենք հասնում ենք Նրա փորձության օրվան, երբ նրան, ում նա ընտրել էր լինելու Իր Առաքյալը և վկան, դավաճանեց Իրեն և Տիրոջը մատնեց Իր թշնամիների ձեռքը։ Նրանք եկան սրերով և բիրերով, որպեսզի բռնեն խաղաղության մարդուն, մարդուն, որը չէր ընդունում բռնությունը, որը երբեք չէր բարձրացրել Իր ձայնը, ոչ էլ Իր ձեռքը՝ ոչ անմեղ և լավ մարդու վրա, ոչ էլ որևէ մեկի վրա, եթե նրանք չար բան չէին կատարել։ Նրանք եկան բանտարկելու Նրան և ենթարկելու ծաղրական փորձության, որպեսզի կարողանային պատճառ գտնել Նրան մահվան դատապարտելու համար։

Մի անգամ, երբ Նա ուսուցանում էր ժողովրդին այս արդար սկզբունքները և վկայում, որ Ինքը Աստծո Որդին է, նրանք վերցրեցին քարերը, որ քարկոծեն Նրան։ Հիսուսը պատասխանեց. «Շատ բարի գործեր ցույց տուի ձեզ իմ Հորիցը. նորանցից ո՞ր գործի համար եք ինձ քարկոծում»։ [Հովհաննես Ժ.32։] Նա ոչ մի չար գործ չկատարեց նրանց մեջ. Նրա կատարած բոլոր գործերը բարի էին. սակայն նրանք ուզում էին սպանել Նրան։ Երբ Պետրոսը զայրացած հանեց իր սուրը և քահանայապետի ծառային զարկելով ականջը կտրեց, Հիսուսը կշտամբեց նրան և ասաց. «Սուրդ տեղը դիր. որովհետև բոլոր սուր վեր առնողները սրով պիտի կորչեն»։ [Մատթեոս ԻՁ.52։] Իր փորձության մեջ, երբ ծաղրի էին ենթարկում Իրեն ու զարկում էին, երբ փշերից մի պսակ դրեցին Նրա գլխին ու հայհոյեցին Նրան, Նա չհայհոյեց նրանց, այլ հեզ ենթարկվեց Իր ճակատագրին և կրեց այն ամենը, ինչ Աստված թույլ տվեց, որ ամբարիշտները բերեն Նրա գլխին։

Նա եղավ այնպիսի հանգամանքներում, երբ Իր ուսուցանած վարդապետությունները կարող էին ստուգվել և ամեն բանում

Նա ապացուցեց Իր ուսմունքների իսկությունը: Անգամ խաչի վրա Իր տանջանքի մեջ Նա աղաղակեց. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն, թե ի՛նչ են անում»: [Ղուկաս ԻԳ.34:] Ես հարցնում եմ՝ ճշմարի՞տ է սա: Եթե ճշմարիտ է, ապա ես ասում եմ, որ ոչ ոք չի արտասանի նման խոսքեր այդպիսի ժամանակ: Դրա համար պահանջվում է զորություն և հոգի, սեր, ողորմածություն, գթասրտություն և ներողամտություն տրված իրենից՝ Աստծուց: Ես բերում եմ իմ վկայությունը ձեզ, որ նա, ով կարող է խնդրել Աստծուն ներել մարդկանց, որոնցից նա ստացել էր իրեն ոչ արժանի դաժանություն, ոչ այլ ինչ է, քան Աստված: Եթե չլինեին Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության այլ ապացույցներ, միայն սա կհամոզեր ինձ, որ Հիսուսը աշխարհի Քավիչն էր: Նա Իր կյանքում ուսուցանեց և մարմնավորեց իսկական սկզբունքները, որոնք կփրկեն աշխարհը . . .

Հիսուսը զոհաբերեց Իր կյանքը, որպեսզի իրագործի փրկության ծրագիրը:

Հիսուսը . . . խաչվեց: Խաչի վրայից Նրա մարմինը հանեցին Նրա ընկերները, լվացին և ազնիվ կտավով պատեցին ու քարից փորած գերեզմանի մեջ դրեցին, ուր երբեք ոչ մեկի մարմինը դրված չէր եղել: Թեև դրանից առաջ Հիսուսը ուսուցանել էր Իր աշակերտներին, որ Մարդու Որդին պիտի մահվան ենթարկվի: Նա պարզ խոսքերով ասաց. «Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպեսզի դարձեալ առնեմ նորան: Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան: Ես իշխանություն ունիմ նորան դնելու և իշխանություն ունիմ նորան դարձեալ առնելու»: [Հովհաննես Ժ.17–18:] Ես եկել եմ կատարելու մարգարեների կանխագուշակումները. քանզի ինչպես Ադամով ամենքը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենքը կենդանանում են [տե՛ս Ա Կորնթացիս ԺԵ.22]. . . . Եթե մեղքը եկավ աշխարհ մի մարդու օրինազանցությամբ, իսկ այդ օրինազանցության հետևանքներն ընկան բոլոր մարդկանց վրա առանց իրենց կողմից կատարված որևէ օրինազանցության, արդյոք արդար չէ՞, արդյոք տրամաբանական չէ՞, որ մարդկությունը պետք է ազատվի նման հետևանքներից մեկ մարդու միջոցով: Սա էր այն ծրագիրը, որը հաստատվեց սկզբում, և դրանում միայն արդարություն է և ուրիշ ոչինչ: Հիսուսը զոհաբերեց իր կյանքը, որպեսզի իրագործի սա: Նա մահվան դատապարտվեց ամբարիշտ մարդկանց կողմից, ովքեր անարդարացի կերպով

մեղադրում էին Իրեն, և ովքեր փակում էին իրենց աչքերն ու սրտերը ճշմարիտ սկզբունքների դեմ, որ Նա էր ուսուցանում:

Մենք սուրբ գրություններում կարդում ենք, որ Նրան թաղելուց հետո միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացին եկավ գերեզման. բայց ահա քարը շարժված էր և Նա չկար: Նա նայեց գերեզմանի մեջ և տեսավ երկու հրեշտակ սպիտակ հանդերձներով. «մեկը գլխի կողմին, և մյուսը ոտների կողմին», [Հովհաննես Ի.12] և նրանք ասացին նրան.

«Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում. նորանց ասեց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր առան, և չգիտեմ՝ թե ուր դրին նորան:

Եվ երբոր սա ասեց, դարձավ իր ետին կողմը, և Հիսուսին տեսավ՝ կանգնած. և չգիտեր թե Հիսուսն է:

Հիսուսը նորան ասեց. Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես որոնում. Նա էլ կարծելով թե պարտիզպանն է, ասեց նորան. Տեր. եթե դու վեր առար նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան:

Հիսուսը նորան ասեց. Մարիամ. և նա դարձավ և ասեց նորան. Ռաբբունի, որ կթարգմանուի Վարդապետ:

Հիսուսը նորան ասեց. Մի դպչիր ինձ, որովհետև դեռ չեմ վեր ելել իմ Հոր մոտ. բայց դու գնա իմ եղբայրների մոտ, և նորանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հոր մոտ, իմ Աստուծոյ մոտ և ձեր Աստուծոյ մոտ»: [Հովհաննես Ի.13–17:]

Ապա Մարիամը գալիս է և աշակերտներին պատմում, որ ինքը տեսել է Տիրոջը և Նա հայտնվեց նաև նրանց:

Այժմ, եկեք խորհենք այս պահի մասին: Ահա պատմական մի փաստ, որը վկայում է, որ Մարիամը գնաց գերեզմանի մոտ և այնտեղ տեսավ երկու հրեշտակներին, որից հետո տեսավ հարություն առած Քավիչին: Նա ուներ երկնային սուրհանդակների վկայությունը, որը հաստատվեց Աստծո Որդու կողմից, որ Քավիչը հարություն է առել: Նրա խոսքերը տրվել են մեզ վկայության հետ մենկտեղ: Արդյոք կհակաճառե՞ք դրանց դեմ: Արդյոք կասկածի կենթարկե՞ք Մարիամի վկայությունը . . . Այնուհետև Հիսուսը քայլում էր երկու աշակերտների կողքից, որոնք ճամփորդում էին դեպի Էմմաուս, և գնաց նրանց հետ. սակայն «նորանց աչքերը բռնուած էին, որ չճանաչեն նորան»: [Ղուկաս ԻԴ.16:] Հիսուսը հարցրեց, թե ինչու են տրտմած, իսկ նրանք պատասխանեցին. «Դո՞ւ ես միայն բնակվում Երուսաղեմումն, որ չիմացար այն բաները, որոնք եղան նորանում»: [Ղուկաս ԻԴ.18:] Շուտով նրանց աչքերը բացվեցին և նրանք ճանաչեցին Նրան:

Այնուհետև Նա հայտնվեց Իր աշակերտներին: Աշակերտներից մեկը լսել էր, որ Հիսուսը հարություն է առել, սակայն ասել էր, որ չի հավատա, մինչև չտեսնի Նրան և չմտցնի իր ձեռքը Նրա կողի մեջ և իր մատը չդնի Նրա ձեռքերի բևեռների տեղը: Որքան նման էր այսօրվա մարդուն Թովմասը: Նա կրկին հայտնվեց աշակերտներին, և Թովմասը նրանց մեջ էր:

«Հետոյ Թովմասին ասեց. Բեր քո մատը այստեղ, և տես իմ ձեռքերը, և քո ձեռքը բեր և իմ կողը կոխիր, և մի լինիր անհավատ՝ այլ հավատացեալ:

Եվ Թովմասը պատասխանեց և ասեց նորան. «Ով իմ Տերը, և ով իմ Աստվածը»:

Հիսուսը նորան ասեց. Որովհետև տեսար ինձ՝ հավատացիր. երանի նորանց, որ չեն տեսել և հավատում են» [Հովհաննես Ի.27–29:]

Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք իմանալ, որ ապրում է Քավիչը մեր:

Հիսուսը ծառայեց Իր աշակերտներին Իր հարություն առնելուց հետո և նրանց հասկացողութանը հասցրեց այն փաստը, որ նրանք խաբված չեն, այլ որ Նա իրոք Աստծո Որդին էր, այժմ արդեն մեռելներից հարություն առած դեպի անմահություն և հավերժական կյանք: Նրանք բնական աչքերով չէին տեսնում: Մենք կարող ենք շատ մեծ բաներ տեսնել մեր բնական տեսողությամբ, սակայն կարող է խաբուսիկ թվալ: Մենք կարող ենք լսել մեր ականջներով, սակայն դրանք կարող են խաբվել: Մեր բնական զգացողությունները շատ ընդունակ են խաբկանքների հանդեպ. . . . Բայց թույլ տվեք ասել ձեզ, երբ Ամենազորը հայտնվում է մարդուն, Նա կատարում է դա Սուրբ Հոգու զորությամբ, և ոչ թե բնական աչքի կամ ականջի միջոցով: Նա խոսում է մարդու հետ, կարծես եթե Նա խոսեր նրա հետ նրա մարմնից անկախ. Նա խոսում է հոգու հետ: Հետևաբար, եթե Ամենազոր Աստվածը խոսում է ձեզ հետ և վկայում Իր ճշմարտության մասին Սուրբ Հոգու զորությամբ, . . . դուք կիմանաք, ինչպես Աստված գիտի: Դա չի լինի ինչ–որ բան, որին դուք պարզապես հավատում եք, ինչ–որ բան, որը հաղորդվել է ձեզ՝ ձեր բնական զգայարանների միջոցով, որ դուք սխալվեք կամ խաբվեք. բայց դա կլինի մի բան, որը Աստված է խոսել սրտին, ապրող հոգուն, հավերժական մարդ արարածին, որը ինչպես և Աստված անխախտելի է և հավերժական:

Այսպես Հիսուսն Իր հարությունից հետո բացեց Իր աշակերտների հոգևոր աչքերը և հասկացողությունը, այնպես որ նրանք իմացան, որ Նա էր Տերը և Քրիստոսը: Նրանք իմացան, որ Նա հարություն է առել մեռելներից: Նրանք իմացան, որ Նա է կենդանի Աստծո Որդին, քանի որ Աստված էր հայտնել դա իրենց: Հետևաբար, նրանք կարող էին ասել, ինչպես բանաստեղծն է ասել.

«Այնպես ցնծում է իմ Հոգին,

Գիտեմ ապրում է Փրկիչն իմ» [Գիտեմ Ապրում է Փրկիչն իմ», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 38:]

. . . Ո՞վ կարող է նկարագրել մարդկային հոգու ուրախության և բավարարվածության զգացումը, որ ունենում է այն մարդը, որն այս վկայությունը ստացել է Ամենազոր Աստծուց: Ոչ ոք չի կարող արտաբերել այն: Ոչ ոք չի կարող ասել այդ մասին ձեզ: Այն միայն կարելի է զգալ: Այն կարելի է միայն հասկանալ մարդու անմահ մասով: Աննկարագրելի է ուրախությունն այն մարդու, որը զգում է, որ այս վկայությունը ստացել է Սուրբ Հոգուց: . . .

Աստծո Սուրբ Հոգին խոսել է ինձ հետ, ոչ թե ականջիս, կամ աչքիս միջոցով, այլ դիմել է իմ հոգուն, իմ կենդանի և հավերժական մասին և հայտնել է ինձ, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին: Ես վկայում եմ ձեզ. ես գիտեմ, որ իմ Քավիչն ապրում է: Ավելին, ես գիտեմ, որ պիտի տեսնեմ նրան այս երկրի վրա և պիտի տեսնեմ Նրան, ինչպես որ Նա կա: . . . Քանզի Նա կրկին գալու է երկիր. ոչ այնպես, ինչպես նախորդ անգամ, այլ զորությամբ և մեծ փառքով, վրեժ առնելու ամբարիշտներից և անաստվածներից, ովքեր չեն կամեցել ականջ դնել Հոգու ձայնին, այլ խստացրել են իրենց սրտերը ճշմարտության դեմ և փակել իրենց հասկացողությունը Աստծո ծառաների վկայությունների դեմ: Նրանք կդատվեն. ոչ թե ականջի լսելով, կամ աչքի տեսնելով, այլ կդատվեն արդարությամբ, և նրանք կդատապարտվեն, քանի որ լույսը եկել է աշխարհ և նրանք սիրում են խավարն ավելի, քան լույսը: . . . Տերը հայտնել է սա ինձ: Նա լցրել է իմ ողջ հոգին վկայությամբ, մինչև որ այլևս կասկածի տեղ չկար: . . .

Մենք ունենք Քրիստոսի աշակերտների վկայությունը ասիական մայրցամաքում, և Հիսուսի աշակերտների վկայությունը այս՝ ամերիկյան մայրցամաքում, որոնք վկայում են միևնույն ճշմարտությունների մասին: Ապա մենք ունեցանք Վարդապետություն և Ուխտերի Գիրքը, որը պարունակում է մեր օրերում Իր ծառաներին և Սրբերին Աստծո կողմից տրված հայտնություններն ու

վկայությունները, այս բաների մասին երրորդ վկայությունը։ Ի լրումն այս ամենին, . . . մենք ունենք Սուրբ Հոգու վկայությունը մեր սրտերում, որը չես կարող մերժել, քանի որ նա, ով ստանում է այդ վկայությունը Սուրբ Հոգու ոգեշնչմամբ, չի կարող խաբվել։ Աստծո Հոգին չի վկայում այն մասին, ինչը ճշմարիտ չէ։ Հետևաբար, եթե դուք ստացել եք Սուրբ Հոգու վկայությունը ձեր սրտում, դուք գիտեք, որ ձեր Քավիչն ապրում է . . .

. . . Ես բերում եմ իմ վկայությունը, որ Քավիչն ապրում է։ Թող որ այս վկայությունը տեղ գտնի ձեր սրտում. . . . Եթե մենք սիրենք միմյանց և բարիք գործենք միմյանց համար, այդպիսով կկատարենք Աստծո Որդու Ավետարանի, Քրիստոսի վարդապետության ցուցումները, որոնք հաշվարկված են, որ կփրկագնեն և կբարձրացնեն աշխարհը, մարդկությանը ետ կբերեն դեպի Աստծո ներկայությունը, որը թող որ մենք բոլորս արտոնություն ունենանք ստանալու և վայելելու, սա է իմ աղոթքը։

Ուսումնական առաջարկություններ

- Փրկչի կյանքից ինչպիսի՞ դեպքեր կամ ուսմունքներ են օգնել ձեզ՝ ստանալու վկայություն, որ Նա է Աստծո Որդին։
- Ինչպե՞ս էր Հիսուս Քրիստոսը չարությանը բարությամբ պատասխանում, երբ Նրան հալածում էին։ Ի՞նչ օրհնություններ են գալիս, երբ հետևում ենք Նրա ուսմունքներին՝ չարությանը բարությամբ պատասխանելով։ Ինչպե՞ս կարող ենք մենք ավելի արդյունավետ ձևով հետևել այս վարդապետությանը (Տե՛ս նաև Մատթեոս Ե.38–47։)
- Ինչպե՞ս կարող ենք կապել «ցանեք խոսքը ձեր սրտերում, որպեսզի դուք կարողանաք կատարել փորձը դրա բարության վերաբերյալ» (Ալմա 34.4) խորհուրդը Լեռան Քարոզի վերաբերյալ Նախագահ Սմիթի խոսքի հետ։ (Տե՛ս Մատթեոս Ե.3–6։)
- Ինչպե՞ս կարող է հեզությունը մեր ուժը լինել։ Ինչո՞ւ են աշխարհում շատերը դժվարանում հեզություն զարգացնել։
- Ինչպե՞ս են Փրկչի վերջին խոսքերը, երբ նա կախված էր խաչի վրա, արտացոլում «սեր, ողորմածություն, գթասրտություն և ներում»։ Ինչպե՞ս կարող ենք հետևել Նրա օրինակին, երբ ինքներս ենք գտնվում փորձության մեջ։
- Ինչպե՞ս է ձեր վկայությունը ամրապնդվում հարություն առած Քավիչի մասին տրված Մարիամ Մագդաղենացու վկայությամբ։ (Տե՛ս Հովհաննես Ի.11–18։)

- Ինչպե՞ս էր Թովմասը «շատ նման այսօրվա մարդուն»: Ինչպիսի՞ օրինություններ ենք մենք ստանում, եթե մենք «չենք տեսել և հավատում ենք» (Հովհաննես Ի.29):
- Ի՞նչ սովորեցիք Նախագահ Սմիթից՝ Փրկչի մասին վկայություն բերելու մասին:
- Ինչպե՞ս եք զգում ձեզ Նախագահ Սմիթի վկայությունը կարդալով: Ինչպե՞ս կարող է նրա վկայությունն օգնել ձեզ զորացնելու Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու մասին ունեցած ձեր վկայությունը:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 447.
2. *Gospel Doctrine,* 69.
3. *Deseret News: Semi-Weekly,* 17 Nov. 1896, 1.

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հայտարարել է, որ Սարգարե Զոզեֆ Սմիթը եղել է «Աստծո կողմից ընտրված գործիք և օժտվել է նրա իշխանությամբ՝ վերականգնելու սուրբ Քահանայությունը» (*Gospel Doctrine,* 478):

Անձնական վկայություն Մարգարե Զոզեֆ Սմիթի մասին

Մարգարե Զոզեֆ Սմիթը ընտրվել էր Աստծո կողմից վերականգնելու ավետարանի լրիվությունը երկրի վրա:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Դեռևս իր կյանքի վաղ շրջանում, Զոզեֆ Ֆ. Սմիթը վկայություն ստացավ, որ Մարգարե Զոզեֆ Սմիթը ընտրվել էր վերականգնելու Հիսուս Քրիստոսի ավետարանը այս վերջին ժամանակաշրջանում: Տարիներ անց Նախագահ Սմիթը հիշում է. «Դեռևս մանուկ հասակում ես ճանաչել եմ Մարգարե Զոզեֆ Սմիթին: Փոքր տարիքում ես լսել եմ նրան ավետարանը քարոզելիս, որը Աստված հանձնել էր նրա խնամակալությանը: Մանկուց ես ճանաչում էի նրա ընտանիքին, նրա տան անդամներին, ինչպես ծանոթ էի իմ հոր տան անդամներին: Ես պահել եմ հոգու վկայությունը, որն իմ մեջ էր մտել դեռևս փոքր տարիքում, որը ես ստացել էի իմ սուրբ մորից, ամուր համոզվածություն, որ Զոզեֆ Սմիթը Աստծո մարգարե էր, որ նա ոգեշնչում էր ստացել, և նման ոգեշնչում չէր ստացել ոչ ոք իր սերնդի մեջ կամ նախորդ դարերի ընթացքում. որ նա ընտրվել էր Աստծո կողմից, որպեսզի հիմնադրի Աստծո Արքայությունը»:[1]

Ծառայելով որպես Նախագահ, Զոզեֆ Ֆ. Սմիթը լիազորվեց գնելու Մարգարե Զոզեֆ Սմիթի կյանքի և Եկեղեցու պատմության համար մեծ նշանակություն ունեցող հողերը, որոնցից էին Մարգարեի ծննդավայրը Շարոնում, Վերմոնտ; Քարթեջի բանտը Իլինոյսում և Զոզեֆ Սմիթ ավագի ագարակը Մանչեստրում, Նյու Յորք:

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը այսպես է ներկայացրել Մարգարեի աշխատանքը. «Ես վկայում եմ ձեզ և աշխարհին, որ Զոզեֆ Սմիթը բարձրացվել էր Աստծո զորությամբ՝ հիմնելու այս

վերջին օրերի մեծ աշխատանքը, այս ժամանակաշրջանում աշխարհին հայտնելու ավետարանի լրիվությունը, վերականգնելու Աստծո Քահանայությունը աշխարհի վրա, ըստ որի մարդիկ կարող են գործել Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, և դա կընդունվի Աստծո կողմից. այն կլինի նրա իշխանությամբ: Ես բերում եմ իմ վկայությունն այդ մասին. ես գիտեմ, որ դա ճշմարիտ է»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մարգարե Զոզեֆ Սմիթը Աստծո ընտրյալ գործիքն էր, փրկության ավետարանը վերականգնելու համար:

Զոզեֆ Սմիթը Աստծո ընտրյալ գործիքն էր և օժտված էր նրա իշխանությամբ վերականգնելու Քահանայությունը, երկրի վրա և երկնքում կապելու Աստծո զորությունը, այսինքն՝ Քահանայության զորությունը, ըստ որի մարդիկ կարող են կատարել Հիսուս Քրիստոսի ավետարանի արարողությունները՝ մարդկության փրկության համար: Զոզեֆ Սմիթի միջոցով վերականգնվեց ապաշխարության, մեղքերի թողության համար ջրով մկրտության, Սուրբ Հոգով և կրակով մկրտության ավետարանը, և ճշմարտության հոգով հայտնվեց այն գիտելիքը, որ Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Միածին Որդին: Մենք պարտավոր ենք այս խոնարհ ծառային, որին Տերը ընտրել էր հիմնելու այս աշխատանքը Աստծո Որդու ավետարանի արարողությունների համար, որը հայտնի էր այն ժամանակ և մինչ այժմ, որի միջոցով մենք կարող ենք ժամանակի և ողջ հավերժության համար միանալ որպես ընտանիքներ, ազգականներ, նոր և հավիտենական կապերի ներքո:

Մենք պարտավոր ենք Մարգարե Զոզեֆ Սմիթին, որը գործիք էր Տիրոջ ձեռքում, այն գիտելիքի համար, որ մենք ունենք այս գործի մասին, որն անհրաժեշտ է կատարել Աստծո տանը, ապրողների փրկության և մահացածների փրկագնման համար, և հոգիների հավերժական միության համար, ովքեր միացել են այս կյանքում Աստծո զորությամբ հավիտենական ուխտի կապի ներքո: Ի վերջո, մենք պարտք ենք կամ առնվազն պարտական ենք Մարգարե Զոզեֆ Սմիթին, որը գործիք էր Աստծո ձեռքում, այն գիտելիքի համար, որ մենք այժմ ունենք՝ որ մարդը չի կարող միայնակ բարձրանալ Աստծո ներկայություն և վայելել նրա ողջ փառքը, քանի որ ոչ մարդն է առանց կնկա, և ոչ կինն է առանց մարդու Տերումը:[3]

Աստված ապրում է, և Հիսուսը Քրիստոսն է, աշխարհի Փրկիչը: Զոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է՝ կենդանի, և ոչ թե մեռած,

քանզի նրա անունը երբեք չի կորչի։ Հրեշտակը, որ այցելել էր նրան և հայտնել Աստծո ուղերձը, ասել էր, որ նրա անունը աշխարհում կհիշատակվի և բարի, և չար նպատակներով [տես Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33]։ Այս կանխագուշակումը կատարվեց նրա պատանեկության տարիներին, նախքան Եկեղեցու կազմավորվելը, և մինչև ինչ-որ հեռանկար կլիներ այն ամենի վերաբերյալ, ինչ կատարվել է մինչ այժմ։ Այդ հայտարարությունը կատարվեց, չնայած այն բացարձակապես անհնարին էր թվում, սակայն այդ մասին խոսվելու օրից մինչ այսօրվա վերջին օրերը, տասնիններորդ դարի մարգարեի՝ Զոզեֆ Սմիթի, անունը հայտարարվել է, հայտարարվում է և կհայտարարվի երկրի հեռուներում գտնվող ազգերին և պատվով կամ արհամարհանքով կպահեն նրա անունը աշխարհի մարդիկ. . . քանի որ նա կատարեց և կատարում է Տիրոջ աշխատանքը։ Նա այս ժամանակաշրջանում դրեց հիմքը այն սկզբունքների վերականգնման, որոնք ուսուցանվել էին Աստծո Որդու կողմից, որն այս սկզբունքների համար ապրեց, ուսուցանեց, մեռավ և հարություն առավ։[4]

Եթե [Զոզեֆ Սմիթի անվան] մասին լավ են խոսում, դա նրանք են, ովքեր արտոնություն են ունեցել լսելու ավետարանի մասին, որն աշխարհ եկավ նրա միջոցով, և ովքեր բավականին ազնիվ և խոնարհ են եղել ստանալու դա ևս։ Նրանք խոսում են նրա մասին այն գիտելիքով, որը ստացել են Սուրբ Հոգու ոգեշնչմամբ, հնազանդվելով այն սկզբունքներին, որոնք ուսուցանում էր նա, որպես մարգարե և ոգեշնչված մարդ։ Նրանք գովաբանում են նրան, պատվում են նրան և պահում նրա անունը արժանավայել հիշողությամբ։ Նրանք մեծարում են, սիրում են նրան, ինչպես չեն սիրում մեկ այլ մարդու, քանի որ նրանք գիտեն, որ նա եղել է ընտրյալ գործիք Ամենազորի ձեռքում՝ վերականգնելու կյանքի ավետարանը և փրկելու իրենց, բացելու իրենց հասկացողությունը ապագայի հանդեպ, բարձրացնելու հավերժության վարագույրը իրենց աչքերի առաջից։ Նրանք, ովքեր ստանում են իր հայտարարած սկզբունքները, գիտեն, որ դրանք իրենց հոգևոր և աշխարհիկ փրկության, երջանկության և խաղաղության համար չեն միայն, այլ առանց ճշմարտության գիտելիքն իմանալու մահացած իրենց ազգականների բարօրության, երջանկության, փրկության և համբարձման համար։

Գործը, որի մեջ ներգրավված էր Զոզեֆ Սմիթը, չէր սահմանափակվում միայն այս կյանքով, այլ այն պատկանում է նաև հաջորդ կյանքին և նախորդ կյանքին։ Այլ խոսքով, այն վերաբերում է նրանց, ովքեր ապրել են երկրի վրա, նրանց, ովքեր ապրում են և

նրանց, ովքեր կապրեն մեզանից հետո։ Դա ինչ–որ բան չէ, որը վերաբերում է մարդուն միայն, մինչ նա ապրում է մահկանացու կյանքով, այլ ողջ մարդկային ընտանիքին՝ հավերժությունից հավերժություն. . . . Եվ սա չի սահմանափակվում մի գյուղով, կամ պետությամբ, կամ ազգությունով, այլ տարածվում է ամեն մի ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի վրա։[5]

Ըստ իս, իսկապես շատ տարօրինակ է, որ աշխարհի կողմից այդքան շատ ծայրահեղ հիվանդագին զգացողություններ են դրսևորվում Զոզեֆ Սմիթի հանդեպ։ Նա ոչ ոքի վնաս չի տվել։ Ես դրա ականատեսն եմ, քանի որ ես տեղյակ եմ նրա կյանքին։ Ես տեսել եմ նրան մարմնում, և ես կարդացել եմ նրա խոսքերը։ Ես կարդացել եմ այն հայտնությունները, որոնք Տերը տվել է իրեն։ Ես ծանոթ եմ նրա գործին, և ես գիտեմ, որ նա վնաս չի հասցրել ոչ մի կենդանի հոգու։ Նա չի վիրավորել կամ վնաս հասցրել իր ընկերներին, սակայն շատ բան է արել, որ բարձրացնի նրանց։ Սակայն, տարօրինակն այն է, որ մարդիկ, ովքեր բացարձակապես չեն ճանաչում նրան, նրա հանդեպ տածում են ամենաչար, ոխակալ և ամբարիշտ զգացումները, որ կարող են ունենալ մարդիկ։ Ես հարցնում եմ ինքս ինձ. «Ինչո՞ւ է այդպես»։ Մարդիկ, որպես կանոն, նման զգացումներ չեն տածում խաբեբաների, կամ նորելուկ, մարդու կողմից ստեղծված կրոնական կազմակերպությունների ակտիվ պաշտպանների հանդեպ։ Տարօրինակ է հնչում, սակայն, նրանք գրեթե միշտ զայրանում են, երբ Մարգարե Զոզեֆ Սմիթի անունն է հիշատակվում։ Թեպետ, ամեն դեպքում սա տարօրինակ երևույթ է բնական տեսանկյունից, սակայն այն լիովին համընկնում է այն խոստման հետ, որը տրվել էր նրան դեռևս սկզբում երկնային սուրհանդակներից մեկի կողմից, որն ուղարկվել էր, որ ուսուցաներ իրեն։ . . .

. . . Մարգարե Զոզեֆ Սմիթի կողմից հիմնադրված այս աշխատանքի հիմքը հավերժական ճշմարտությունն է։ Այն չի կարող տապալվել։ Այն նման է ժայռի վրա կառուցված տանը։ Փոթորիկներ կարող են հարվածել դրան, անձրևներ կարող են տեղալ, մարդկանց սրտերը կարող են դրդվել բարկությամբ և հալածանքով դրա դեմ, սակայն այն ամուր է, հավիտենական բլուրների պես, որովհետև այն կառուցվել է ճշմարտության վրա [տե՛ս Մատթեոս Է.24–25]։ Մեր հավատքի հիմնական սկզբունքներն են ազնվությունը, առաքինությունը, կյանքի մաքրությունը, հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոսը և Նրա հարությունը, հնազանդությունն առ Աստծո պատվիրանները։ Մենք գիտենք, որ այս վարդապետությունը ճշմարիտ է։[6]

Զոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը Փրկչի Հարությունից հետո տեղի ունեցած մեծագույն իրադարձությունն է:

Ամենանշանակալից իրադարձությունը, որ երբևէ տեղի է ունեցել աշխարհում Աստծո Որդու գերեզմանից հարություն առնելուց և երկինք համբարձվելուց հետո, Հոր և Որդու հայտնվելն էր պատանի Զոզեֆ Սմիթին, որպեսզի ուղի պատրաստվեր՝ դնելու հինքն իր արքայության, ոչ թե մարդու թագավորության, արքայություն, որը երբեք չի տապալվի կամ դադարի գոյություն ունենալուց: Այս ճշմարտությունն ընդունելուց հետո ես կարծում եմ, որ հեշտ կլինի ընդունել ցանկացած այլ ճշմարտություն, որը նա ազդարարել է կամ հայտարարել: . . . Նա երբեք չի սովորեցրել կեղծ վարդապետություն: Նա երբեք չի հետևել մի վարդապետության, եթե իրեն չի պատվիրվել հետևել դրան: Նա երբեք չի պաշտպանել սխալը: Նա չի խաբվել: Նա տեսել է, նա լսել է, նա կատարել է, ինչպես իրեն է պատվիրվել կատարել: Եվ այդ պատճառով Զոզեֆ Սմիթի կատարած աշխատանքի համար պատասխանատու է Աստված, ոչ թե ինքը՝ Զոզեֆ Սմիթը: Տերն է պատասխանատու այդ գործի համար, ոչ թե մարդը:[7]

1820թ. գարնանը [Զոզեֆ Սմիթը] ստացավ առաջին գերբնական կամ երկնային հայտնությունը: Նա այն ժամանակ տասնչորս տարեկան էր: Սովորաբար տասնչորս տարեկան տղայից շատ մեծ գործ չենք ակնկալում: Եվ անհավանական է, որ այդ տարիքի տղան կարող էր դառնալ այդքան անբարոյական կամ ամբարիշտ, քանի որ նա ծնվել և մեծացել էր ագարակում, մեծ քաղաքների ապականող չարիքներից և անբարոյականությունից հեռու, և զազրելի ընկերակցությունների ստոր ազդեցությունից ազատ: Անհավանական է, որ իր կյանքում նա մինչև տասնչորս տարեկանը ծուլանար աշխատանքում, քանի որ նրա հայրը տքնում էր, որպեսզի ապրուստի համար վաստակեր և վաստակում էր դա իր ձեռքերի աշխատանքով, լինելով աղքատ մարդ, որը պետք է ապրուստի միջոցներ հայթայթեր մեծ ընտանիքի համար:[8]

Ինչ վերաբերում է հոգևոր հայտնություններին, արդյո՞ք խելամիտ է ենթադրել, որ այդ տղան կարող էր կանխամտածված ձևով խաբել, և հատկապես նրա պես տղան, որն այդքան հասարակ ձևով է ներկայացնում իր տեսածն ու լսածը: Ո՛չ, ոչ էլ կարող էր երկնային սուրհանդակի նրան տված պատասխանը տեղավորվել այդ երեխայի մտքում: Երկնային հայտնության մասին Զոզեֆ Սմիթի վկայությունը իր կյանքի ավելի ուշ ժամանակաշր-

ջանում այնքան հասարակ էր, ուղղակի և ճշմարիտ, որքան նրա պատանեկության տարիներին. Իր կյանքի պատանեկության տարիներին արմատավորված և բնորոշ գիծ դարձած նվիրվածությունը, արիությունը և սերը ոչ պակասել էր, ոչ էլ փոփոխվել տարիքն առնելու հետ: Նա իմաստություն ձեռք բերեց Աստծո կողմից տրված հայտնությունների հետ միասին:[9]

Մեր քննադատներն ասում են, թե այն, ինչ տեսել է Զոզեֆ Սմիթը, տեսիլք է եղել, սակայն նա չի ասում այդ մասին: Նա ասել է, որ իրեն հայտնված անձիք իրական մարդիկ էին. . . . Մեզ է հասել Քրիստոսի ծնունդի, կյանքի և կատարած գործերի մասին պատմությունը, և այդ պատմության մեջ չկա ոչինչ, որ ստիպի մեզ ավելի պատրաստակամորեն հավատալ այդ ամենին, քան Մարգարե Զոզեֆ Սմիթի մասին պատմությանը: Քրիստոսն իր ընկերների հետ քայլում էր, զրուցում և խորհուրդ տալիս, երբ մոտ 1900 տարի առաջ իջավ երկնքից: Արդյո՞ք կա որևէ պատճառ, թե ինչու նա չէր կարող գալ կրկին, ինչու չպետք է այցելեր այս երկիր մեկ անգամ ևս և խոսեր մարդկանց հետ այսօր: Եթե կա որևէ պատճառ, ես ուրախությամբ կլսեի այն: Ես ուզում եմ, որ տպավորվի ձեր մեջ այն, որ Աստված իրական է, և ունի մսից և ոսկորից մարմին, ինչպես դուք և ես: Քրիստոսը՝ նույնպես, սակայն Սուրբ Հոգին ոգեղեն անձնավորություն է:[10]

Մարգարե Զոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը Աստծո պարգևով և զորությամբ:

Երբ [Զոզեֆ Սմիթը] 17–18 տարեկան էր, նա կրկին ստացավ երկնային հայտնություն, և մի քանի մեծ և փառահեղ բաներ հայտնվեցին նրան, և դրանից հետո չորս տարի շարունակ նրան այցելում էր երկնային սուրհանդակը. . . . Այս անձնավորությունը, հաստատում է նա, հայտնեց նրան Տիրոջ միտքն ու կամքը, և ցույց տվեց նրան մեծ գործի բնույթը, գործ, որը նա պետք է հաստատեր երկրի վրա իր ժամանակին՝ լինելով Աստծո ձեռքում մի գործիք: Սա այն գործն էր, որը կատարվեց Մորոնի հրեշտակի կողմից 1823-1827թթ. միջև ընկած չորս տարիների ընթացքում: 1827թ. նա Մորոնի հրեշտակի ձեռքերից ստացավ ոսկե թիթեղները, որոնցից նա թարգմանեց այս գիրքը (Մորմոնի Գիրքը) Ամենազորի ոգեշնչմամբ, և իրեն տրված Աստծո պարգևով ու զորությամբ. . . .

Արդյո՞ք Զոզեֆ Սմիթը 1823–1827թթ. ընկած ժամանակահատվածում հնարավորություն ուներ դառնալու ամբարիշտ կամ ապականված, մինչ այդ երեք տարում նա տքնում էր իր ձեռքերով աղքատիկ ապրուստի միջոցներ հայթայթել, խույս տալով իր թշնամիներից և փորձելով չընկնել ճանկերը նրանց, ովքեր փնտրում էին կործանել նրան և խանգարել նրա առաքելությանը, մշտապես պայքարելով անասելի խոչընդոտների և ընկճող շփոթության մեջ գցող դժվարությունների դեմ, որպեսզի ավարտի այդ գրքի թարգմանությունը: Չեմ կարծում, որ նա հնարավորություն ուներ այդպիսին դառնալու: Երբ նա ավարտեց Մորմոնի Գրքի թարգմանությունը, նա դեռևս պատանի էր, թեև այդ գիրքը լույս աշխարհ բերելիս նա ընկղմվել էր պատմական փաստերի, մարգարեությունների, հայտնությունների, կանխատեսումների, վկայությունների և վարդապետությունների, կանոնների և սկզբունքների մեջ, որոնք կրկնելը կամ հերքելը վեր է կրթված աշխարհի ուժերից ու իմաստությունից: Զոզեֆ Սմիթը անուսում երիտասարդ էր, ինչ վերաբերում է աշխարհիկ կրթությանը: Նա ուսուցանվել էր Մորոնի հրեշտակի կողմից: Նա կրթվել էր վերևից, Ամենազոր Աստծո կողմից, և ոչ թե մարդու ստեղծած հաստատությունների կողմից. բայց ասել, որ նա տգետ էր, և՛ անարդարացի և՛ սխալ կլինի. ոչ ոք կամ մարդկանց ոչ մի խումբ այդքան գիտուն և խելամիտ չէր, որքան նա, ոչ էլ այդ տարիների ողջ իմաստությունն ու փորձը կարող էին կատարել այն, ինչ նա արեց: Նա տգետ չէր, քանզի նա ուսուցանվեց նրա կողմից, ումից ողջ բանականությունն է հորդում: Նա ուներ Աստծո, նրա օրենքի և հավերժության գիտելիքը:[11]

Մորմոնի Գիրքը թարգմանվեց Աստծո պարգևով և զորությամբ, մի երիտասարդի միջոցով. ոչ թե ուսյալ, կրթված, այլ չկրթված մարդու, մի անփորձ, անմեղ տղայի կողմից: Եվ այդ չկրթված, կյանքի փորձ չունեցող, անմեղ տղան Զոզեֆ Սմիթն էր: Նա չուներ իմաստություն, գիտելիք կամ հմտություն, որպեսզի անգլերեն լեզվով թարգմաներ թիթեղների վրա կատարված արձանագրությունները, որոնք պահվել էին այս մայրցամաքի հին բնակիչների կողմից: Նա երբեք չի պնդել, որ այդ հնադարյան տառերն ինքն է թարգմանել իր իսկ իմաստությամբ: Ընդհակառակը, նա հավաստում էր, որ կատարել է դա իրեն շնորհված Աստծո պարգևով և զորությամբ:[12]

Մարգարեն ավելի շատ բան է կատարել մարդկության փրկության համար, քան որևէ այլ մեկը, բացի Հիսուս Քրիստոսից։

Իր պատանեկության տարիներին [Զոզեֆ Սմիթը] բացեց երկնքի հետ հաղորդակցությունը։ Նա ի հայտ բերեց Մորմոնի Գիրքը, որը պարունակում է ավետարանի լրիվությունը և հայտնությունները, որոնք ընդգրկված են Վարդապետություն և Ուխտեր Գրքում, վերականգնեց սուրբ Քահանայությունը մարդու համար, հիմնադրեց և կազմակերպեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, կազմակերպություն, որի նմանը գոյություն չունի ողջ աշխարհում, որը չէր կարող հայտնաբերել կամ ստեղծել, կամ երբեք չէր կարող անել դարերով եկած մարդկային գիտելիքն ու իմաստությունը։ Նա գաղութներ հիմնադրեց Նյու Յորքի, Օհայոյի, Միսուրիի և Իլինոյսի նահանգներում, և գծում էր ճանապարհը, թե ինչպես կարելի էր հավաքել Սրբերին Ռոքի Մաունթինզում, ուղարկեց ավետարանը Եվրոպա և Խաղաղ Օվկիանոսյան կղզիներ, Օհայոյում հիմնեց Կիրթլենդ քաղաքը և այնտեղ կառուցեց հարյուր հազարավոր դոլարներ արժեցող տաճարը, հալածանքների ժամանակ էր, որ նա հիմնադրեց Նավու քաղաքը, Նավույում և դրա մոտակայքում հավաքեց մոտ 20,000 մարդ, և սկսեց այնտեղ տաճարի կառուցումը, որի արժեքը շինարարությունն ավարտելուց հետո կազմում էր մեկ միլիոն դոլար. և այս ամենը կատարելիս նա պետք է պայքար մղեր իր ժամանակներում գոյություն ունեցող նախապաշարումների, ամբոխների կողմից ղեկավարվող անողոք հալածանքների, և նողկալի զրպարտությունների և չարախոսությունների դեմ, որոնք ամեն կողմից թափվում էին նրա գլխին առանց չափի ու սահմանի։ Այլ խոսքով, տասնչորսից քսան տարեկան հասակում նա կատարեց ավելին մարդկության փրկության համար, քան որևէ այլ մարդ, որ երբևէ ապրել է երկրի վրա, բացի Հիսուս Քրիստոսից [տես ՎևՈւ 135.3], թեպետ նա մեղադրվում էր իր թշնամիների կողմից, որ իբր անբան ու անարժան մարդ է։

Որտե՞ղ կարող ենք գնալ, որ գտնենք մեկ այլ մարդու, որը կատարած կլինի Զոզեֆ Սմիթի բարի գործերի մեկ հազարերորդ մասը . . . Տասնիններորդ դարում ոչ ոք, բացի Զոզեֆ Սմիթից, աշխարհում լույսի շող չի գցել սուրբ Քահանայության բանալիների և զորության վրա, ավետարանի արարողությունների վրա, լինեն դրանք կենդանի մարդկանց, թե մահացածների համար։ Զոզեֆ Սմիթի միջոցով Աստված հայտնեց շատ բաներ, որոնք պահվել էին

աշխարհի ստեղծումից ի վեր՝ ի կատարումն մարգարեների խոսքերի . . . Եվ այս ամենը, խստորեն պահելով վերջին օրերի այս աշխատանքի խնդիրներն ու բնույթը, նախասահմանված է ի կատար ածելու ժամանակների լրության տնտեսության հետ կապված Աստծո մեծ նպատակներն ու ծրագրերը:[13]

Մարգարե Զոզեֆը . . . Աստծո նախախնամությամբ դարձավ միջոց՝ վերականգնելու Հիսուս Քրիստոսի ավետարանի հին ճշմարտությունները, փրկության ծրագիրը, որն ավելի հին է, քան մարդկային ցեղը: Ճշմարիտ է նաև այն, որ նրա ուսմունքները նոր էին իր ժամանակների մարդկանց համար, քանի որ նրանք հեռացել էին ճշմարտությունից, սակայն ավետարանի սկզբունքները գոյություն ունեցող ամենահին սկզբունքներն էին: Դրանք նորություն էին Զոզեֆի սերնդի համար, ինչպես նաև մեր սերնդի համար, քանի որ մարդիկ շեղվել էին ճանապարհից, թողնվել առանց առաջնորդության, լինելով երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց, որոնք ուսուցանել էին մարդիկ, այսպես կոչված առաջադեմ մարդիկ: Սա դարձրեց Մարգարե Զոզեֆին հին ճշմարտությունների վերականգնող, ոչ թե կործանող: Եվ սա չի արդարացնում մեզ, երբ հրաժարվում ենք ավետարանի պարզ, հինական սկզբունքներից, և վազում ժամանակակից վարդապետությունների քմահաճույքների և հասկացողությունների ետևից:[14]

Ես հայտարարում եմ ձեզ ողջ անկեղծությամբ, և հոգու ողջ լրջությամբ, որ ես ողջ սրտով հավատում եմ Մարգարե Զոզեֆ Սմիթի աստվածային առաքելությանը, որ ես իմ ամեն մի բջիջով համոզված եմ, որ Աստված բարձրացրեց նրան, որ երկրի վրա վերականգնի Քրիստոսի ավետարանը, որն իրոք Աստծո զորությունն է՝ ի փրկություն: Ես վկայում եմ ձեզ, որ Զոզեֆ Սմիթը գործիք էր Տիրոջ ձեռքում՝ Աստծո ճշմարտությունը աշխարհի վրա վերականգնելու համար, ինչպես նաև վերականգնելու սուրբ Քահանայությունը, որը Նրա իշխանությունն է հանձնված մարդուն: Ես գիտեմ, որ սա ճշմարիտ է, և ես վկայում եմ այդ մասին ձեզ: Ինձ համար դա ամեն ինչ է, դա իմ կյանքն է, իմ լույսը, իմ հույսը, իմ ուրախությունը: Դա ինձ վստահություն է ներշնչում, որ ես կհամբարձվեմ, հարություն կառնեմ նրանց հետ, որոնց ես սիրել եմ և գուրգուրել այս կյանքում, և որոնց հետ ես մտերիմ եմ եղել այս աշխարհում, որոնք ազնվազարմ մարդիկ էին, մաքուր, խոնարհ մարդիկ, որոնք հնազանդվել են Աստծուն և նրա պատվիրաններին, որոնք ամոթ չեն համարել Քրիստոսի ավետարանը, ոչ էլ ավետարանի ճշմարտությունների մասին իրենց

համոզմունքներն ու գիտելիքը, մարդիկ, ովքեր կազմված էին այնպիսի նյութից, որից կազմված են նահատակները, և ովքեր պատրաստ էին ամեն պահի վայր դնել իրենց կյանքը հանուն Քրիստոսի և ավետարանի, եթե դրա կարիքը կա, որը նրանք ստացել էին իրենց սրտում Սուրբ Հոգու վկայությամբ: Ես ուզում եմ կրկին միանալ այդ մարդկանց, երբ ավարտեմ իմ ընթացքն այստեղ: Երբ կատարեմ իմ առաքելությունն այստեղ, հուսով եմ, կգնամ հոգիների աշխարհ, որտեղ նրանք են ապրում, և կմիանամ նրանց: Աստծո Որդու այս ավետարանն է, որ ինձ հույս է ներշնչում, որ կլինեմ այդ հրաշալի մարդկանց հետ և կկատարվի իմ այդ իղձը: Ես ամեն ինչ վտանգել եմ այս ավետարանի համար, և ես գտնում եմ, որ իզուր չի եղել դա: Ես գիտեմ, թե ում եմ վստահում: Ես գիտեմ, որ իմ Փրկիչը կենդանի է, և նա ի վերջո պիտի կանգնի հողի վրա:[15]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպե՞ս Մարգարե Զոզեֆ Սմիթը դարձավ «գործիք Տիրոջ ձեռքում»: Ինչպե՞ս եք օրհնվել դուք այն բաների շնորհիվ, որ Տերը հայտնել է Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով:
- Ինչո՞ւ է կարևոր ունենալ վկայությունը, որ Զոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր այս ժամանակաշրջանում:
- Ինչպիսի՞ նշանակալից ճշմարտություններ իմացավ Զոզեֆ Սմիթը Առաջին Տեսիլքի ժամանակ: Ինչպե՞ս է Առաջին Տեսիլքը հիմք հանդիսանում ավետարանի այլ ճշմարտություններն ընդունելու համար:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Մորմոնի Գիրքը «թարգմանվել է Աստծո պարգևով և զորությամբ»:
- Ինչո՞ւ կարող ենք ասել, որ Մարգարե Զոզեֆ Սմիթը կատարել է ավելին «մարդու փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի Հիսուս Քրիստոսը»:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Մարգարե Զոզեֆ Սմիթը «հին ճշմարտությունների վերականգնողը, ոչ թե կործանողն էր»:
- Ինչպե՞ս եք ամրապնդվել ընկերակցելով այն տղամարդկանց, կանանց կամ երեխաներին, որոնք ամուր վկայություններ ունեն և «ամոթ չեն համարում Քրիստոսի ավետարանը»: Ինչպե՞ս կարող ենք ամրապնդել ուրիշներին մեր վկայություններով:

- Ի՞նչն է ամենաշատը տպավորություն գործել ձեզ վրա Մարգարեյի մասին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի բերած վկայություններում: Ինչպիսի՞ն է ձեր վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության վերաբերյալ:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 493.
2. *Gospel Doctrine,* 168–69.
3. *Gospel Doctrine,* 478–79; paragraphing added.
4. *Gospel Doctrine,* 479.
5. *Gospel Doctrine,* 480–81.
6. *Proceedings at the Dedication of the Joseph Smith Memorial Monument: At Sharon, Windsor County, Vermont, December 23rd, 1905,* 41–42.
7. *Gospel Doctrine,* 495–96.
8. *Gospel Doctrine,* 482.
9. *Gospel Doctrine,* 488–89.
10. *Gospel Doctrine,* 478.
11. *Gospel Doctrine,* 483–84.
12. *Proceedings at the Dedication of the Joseph Smith Memorial Monument,* 38–39.
13. *Gospel Doctrine,* 484–85.
14. *Gospel Doctrine,* 489.
15. *Gospel Doctrine,* 501.

Ճշմարիտ, հավատքով լի, լրջամիտ աղոթք

Ճշմարիտ աղոթքը սրտից բարձրանում է դեպի Աստված Հիսուս Քրիստոսի անունով:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1847թ. իննամյա Զոզեֆ Ֆ. Սմիթը, նրա այրի մայրը՝ Սերի Ֆիլդինգ Սմիթը, նրա քեռին Զոզեֆ Ֆիլդինգը վրան խփեցին Վինթեր Քուորթերս տանող ճանապարհին՝ Միսսուրի Գետի ափին: Հաջորդ առավոտյան նրանք տեսան, որ իրենց եզների լավագույն լծվածքը կորել է:

Զոզեֆ Ֆ. և նրա քեռին երկար ման եկան եզներին և «թրջվել էին մինչև ոսկորները, հոգնել, հուսալքվել և գրեթե ուժասպառ եղել»: Զոզեֆ Ֆ.-ն ասաց. «Այդ խղճալի վիճակում ես առաջինը վերադարձա մեր կառքերի մոտ: Երբ մոտեցա, տեսա մայրս ծնկի իջած աղոթում է: Ես մի պահ կանգ առա, և ապա զգուշորեն մոտեցա այնքան, որպեսզի լսեի, թե ինչ էր աղերսում Տիրոջը: Նա խնդրում էր, որ Տերը չթողնի մեզ անօգնական վիճակում, այլ առաջնորդի մեզ գտնելու մեր կորած լծվածքը, որ մենք կարողանանք ապահով շարունակել մեր ճամփորդությունը: Երբ նա ոտքի կանգնեց, ես կանգնած էի նրա կողքին: Առաջինը բանը, որ ես տեսա նրա թանկագին երեսի վրա, նրա հաճելի ժպիտն էր: Եվ չնայած ես հուսահատված էի, այն իմ մեջ նոր հույս արթնացրեց և վստահություն տվեց, որ ես չէի զգացել նախկինում»:

Նա ուրախ խրախուսեց Զոզեֆին և նրա քեռուն, որ նախաճաշեն, որը նա պատրաստել էր և ասաց. «Ես մի փոքր կզբոսնեմ և կտեսնեմ, թե արդյոք կարող եմ գտնել անասուններին»: Թեև նրա եղբայրը ընդդիմացավ, պատճառաբանելով, որ հետագա փնտրտուքը անիմաստ է, Սերին ճանապարհ ընկավ, թողնելով, որ նա և Զոզեֆը նախաճաշեն: Նա մոտակայքում հանդիպեց մի նախրապանի, որն ասել էր, թե կորած եզներ է տեսել հակառակ կողմում: Զոզեֆ Ֆ.-ը պատմում է. «Մենք պարզ լսեցինք, թե ինչ

ասաց այդ նախրապանը, սակայն մայրս շարունակեց ճանապարհը, և նույնիսկ չթեքեց գլուխը, որ նայի նրան»: Նա շուտով նշան արեց Զոզեֆին և իր եղբորը, որոնք վազեցին այն տեղը, որտեղ կանգնած էր նա: Նրանք տեսան, որ եզները կապված են մի քանի ուռենիներից:

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթն ավելի ուշ պատմում է. «Դա աղոթքի զորության առաջին իրական և դրական դրսևորումն էր, որ ես երբևէ տեսել էի: Այն անջնջելի տպավորություն թողեց ինձ վրա, և եղավ մխիթարության, վստահության և առաջնորդության աղբյուր իմ ողջ կյանքի ընթացքում»:[1]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Գիտենալ, թե ինչպես պետք է աղոթքով մոտենալ Աստծուն:

Ես աղոթում եմ, որ դուք իմանաք, թե ինչպես պետք է աղոթքով մոտենալ Աստծուն: Աղոթել սովորելն այնքան էլ բարդ բան չէ: Դա միայն բառերի շարք չէ, որ մենք մասնավորապես օգտագործում ենք: Ճշմարիտ, հավատարիմ, լրջամիտ աղոթքը կազմված է ավելի շատ զգացմունքներից, որը գալիս է սրտից և մեր հոգու ներքին ցանկությունից, դիմելու Տիրոջը խոնարհաբար և հավատքով, ակնկալելով նրա օրհնությունները: Կապ չունի, թե որքան հասարակ կլինեն բառերը, եթե մեր ցանկությունները անկեղծ են, և մենք գալիս ենք Տիրոջ առաջ կոտրված սրտով և փշրված հոգով, խնդրելու այն, ինչի կարիքը մենք ունենք:[2]

Նա հեռվում չէ: Նրան մոտենալը դժվար չէ, եթե մենք դա անենք կոտրված սրտով և փշրված հոգով, ինչպես Նեփին հնում: Ճիշտ այդպես մոտեցավ Նրան Զոզեֆ Սմիթը պատանի հասակում: Նա գնաց անտառ, ծնկի իջավ և խոնարհաբար ու լրջորեն ձգտում էր իմանալ, թե որ եկեղեցին է ընդունելի Աստծո համար: Նա ստացավ իր աղոթքի պատասխանը, աղոթք, որն ասվել էր սրտի խորքից: Եվ պատասխանը եկավ անակընկալ ձևով:

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, մի ձգտեք միայն շուրթերով աղոթել: Աղոթքն անգիր մի սովորեք և կրկնեք ամեն առավոտյան և երեկոյան: Ես այնքան չեմ սիրում դա: Իրականում շատ մարդիկ են սովորություն դարձնում հաստատված աղոթքներ կրկնելը: Նրանք սկսում են ինչ–որ կետից, և հիշատակում են աղոթքի բոլոր կետերը, մինչև կփակեն իրենց աղոթքը: Իսկ երբ ավարտում են

այն, ես չգիտեմ, արդյոք այդ աղոթքը սենյակի առաստաղից այն կողմ բարձրացա՞վ, թե ոչ։[3]

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք հիշենք և կանչենք առ Աստված և աղերսենք, որ նրա օրհնությունները և բարեհաճությունը լինի մեզ վրա։ Եկեք այդպես անենք, և կատարենք դա իմաստությամբ և արդարությամբ։ Իսկ երբ աղոթենք, մենք պետք է կանչենք առ նա հետևողական և խելամիտ ձևով։ Մենք չպետք է Տիրոջը խնդրենք այն, ինչն անկարևոր է կամ ինչը օգուտ չի բերի մեզ։ Մենք պետք է խնդրենք այն, ինչի կարիքը մենք ունենք, և պետք է խնդրենք հավատքով, «առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանուած ալիքին։ Այն մարդը թող չկարծէ, որ Տերիցը մի բան կառնէ» [Հակոբոս Ա.6–7]։ Սակայն երբ մենք խնդրում ենք Աստծուն օրհնությունների համար, թող որ խնդրենք ավետարանի հավատքով, այն հավատքով, որը նա խոստացել է, որ կտա նրանց, ովքեր հավատում են իրեն և հնազանդվում նրա պատվիրաններին։[4]

Ես մնծապես ազդվեցի և հուզմունք ապրեցի, երբ լսեցի [Նախագահ Հեբեր Չ. Քիմբալի] աղոթքը իր ընտանիքում։ Ես երբեք չէի լսել, որ որևէ մեկն աղոթի, ինչպես նա։ Նա դիմում էր Տիրոջը ոչ թե այնպես, ասես Նա շատ հեռվում է, այլ հաղորդակցվում էր Նրա հետ կարծես դեմ առ դեմ։ Շատ անգամներ, մինչ նա հաղորդակցվում էր նրա հետ աղոթքով, այնքան մեծ է եղել Աստծո ներկա լինելու իրական տպավորությունն ինձ համար, որ չեմ կարողացել զսպել ինձ և նայել եմ շուրջս տեսնելու համար, թե արդյոք նա իրականում ներկա է և տեսանելի։[5]

Հաճախ քայլիր խոնարհությամբ ու հավատքով Տիրոջ առաջ։

Մենք . . . առանց երկմտելու ընդունում ենք վարդապետությունները, որոնք ուսուցանվել են Սարգարե Զոզեֆ Սմիթի կողմից և Աստծո Որդու կողմից, որ մենք աղոթում ենք Աստծուն, Հավերժական Հորը, իր միածին Որդու անունով, որին նաև աղոթում էին մեր հայր Ադամը և նրա ժառանգները սկզբից ի վեր։[6]

Կարծում եմ, որ լավ կլիներ մեզ համար զգուշորեն ընտրել մեր խոսքերը, երբ կանչում ենք առ Տերը։ Նա ծածուկ տեղը լսում է մեզ, և հայտնապես կհատուցի մեզ։ Կարիք չկա, որ շատ խոսքերով աղաղակենք առ նա։ Կարիք չկա, որ հոգնեցնենք նրան երկար աղոթքներով։ Սակայն մենք պետք է հաճախ քայլենք նրա առաջ,

ապացուցելով նրան, որ հիշում ենք իրեն և հոժար ենք մեզ վրա վերցնել իր անունը, պահել իր պատվիրանները, գործել արդարացի և փափագում ենք, որ նրա Հոգին օգնի մեզ. Ահա թե ինչ է անհրաժեշտ և ինչ պետք է մենք անենք, որպես Վերջին Օրերի Սրբեր, մեր իսկ բարիքի համար: Իսկ եթե մենք նեղության մեջ ենք, եկեք գնանք Տիրոջ մոտ և ուղղակիորեն և հատուկ ձևով խնդրենք նրան, որ օգնի մեզ, որ դուրս գանք այդ նեղությունից. և թող որ աղոթքը գա սրտի խորքից, թող որ այն չասվի խոսքերով, որոնք շատ օգտագործվելուց դարձել են ասես ակոսներով ոտնակոխ արահետներ, որոնք չեն արտահայտում ոչ միտք, ոչ էլ զգացում:

Եկեք պարզ խոսքերով արտահայտենք մեր կարիքը, որը ամենաշատը կգրավի ամեն բարիք և կատարյալ պարգև Տվողին: Նա կարող է ծածուկ տեղը լսել. և նա գիտե մեր սրտի իղձերը, նախքան մեր խնդրելը, սակայն նա դարձրել է դա պարտադիր, և պարտավոր ենք կանչել նրա անունը. որ մենք պետք է խնդրենք և կտրվի մեզ, թակենք և կբացվի մեզ համար, որոնենք և կգտնենք [տե՛ս Մատթեոս Է.7]: Ուստի, Տերը դա դարձրել է սիրելի պարտավորություն, որ մենք պետք է հիշենք նրան, որ մենք ցույց տանք նրան առավոտյան, կեսօրին և երեկոյան, որ չենք մոռանում մեզ ամեն բարի պարգև Տվողին:[7]

Պահենք Վարդապետից տրված այդ մեծ պատվիրանը. միշտ հիշենք Տիրոջը, աղոթենք առավոտյան և երեկոյան, և միշտ հիշենք, որ շնորհակալություն հայտնենք նրան օրհնությունների համար, որ դուք ստանում եք ամեն օր:[8]

Ոչ մի սահմանափակում չպետք է լինի կամ դրվի աղոթք ասելու և Բարիք Տվողին գովք ասելու համար, քանզի մեզ հատկապես պատվիրվել է, որ անդադար աղոթենք: Եվ չկա Քահանայության ոչ մի հատուկ իշխանություն կամ Եկեղեցու պաշտոն, որը աղոթք ասելու իրավունք վերապահի որևէ մեկին:[9]

Մարդը կարող է տանջել իրեն ծոմ պահելով կամ աղոթելով. սակայն դրա կարիքը չկա, որ էլ իմաստություն կա դրանում: Ես ասում եմ իմ եղբայրներին, երբ նրանք ծոմ են պահում կամ աղոթում հիվանդների համար, և նրանց համար, ովքեր հավատքի և աղոթքի կարիք ունեն, ծոմում և աղոթքում մի անցնք իմաստության և խելամտության սահմանը: Տերը կլսի հավատքով ասված, ոչ շատ բառերով արտասանված աղոթքը, և նա կընդունի քսանչորս ժամից ոչ ավել տևած ծոմը, այնքան պատրաստակամորեն և այնքան ազդեցիկ ձևով, ինչպես նա կպատասխանի հազարավոր բառերով աղոթքին և մեկ ամիս պահված ծոմին:[10]

Ինչպե՞ս պետք է վարվենք, եթե կարևորություն չենք տվել մեր աղոթքներին: Եկեք սկսենք աղոթելը: Եթե մենք կարևոր չենք համարել մեկ այլ պարտավորություն, եկեք փնտրենք Տիրոջը, որպեսզի ունենանք նրա Հոգին, որպեսզի կարողանանք իմանալ, թե որտեղ ենք սխալ գործել և կորցրել մեր հնարավորությունները, կամ թողել, որ դրանք աննկատ անցնեն մեր կողքով: Եկեք փնտրենք Տիրոջը խոնարհաբար, վճռական, հրաժարվենք այն ամենից, ինչը խոչընդոտ կհանդիսանա ստանալու մեզ համար անհրաժեշտ խելամտություն և լույս, և պատասխան մեր աղոթքներին, որպեսզի կարողանանք մոտենալ Նրան, լինենով վստահ, որ Նրա ականջները բաց են մեր խնդրանքների համար, որ նրա սիրտը կարձագանքի մեր հանդեպ ողորմածությամբ, որ մեր մեղքերը կներվեն, մեր միտքը կլուսավորվի Աստծո ազդեցությամբ ու զորությամբ, որ մենք կհասկանանք մեր պարտականությունը և ցանկություն կունենանք կատարելու այն, ոչ թե կհետաձգենք կամ մի կողմ կդնենք այն:[11]

Մենք պետք է մեզ հետ ունենանք աղոթքի ոգին՝ մեր կյանքում ցանկացած պարտավորություն կատարելիս: Ինչո՞ւ: Հասարակ պատճառներից մեկը, որ մեծ ուժով միտքս է խուժում, այն է, որ մարդն այնքա՜ն շատ է կախված Աստծուց: Որքա՜ն անօգնական ենք մենք առանց նրա, որքա՜ն քիչ բան կարող ենք անել առանց նրա ողորմած նախախնամության:[12]

Եթե չենք մոռանում աղոթել, Աստված չի մոռանա ձեզ, և Նա չի հեռանա ձեզանից, եթե դուք ինքներդ ձեզ չհեռացնեք Նրանից: Ինչո՞ւ են մարդիկ ուրանում: Ինչո՞ւ են կորցնում հավատը: Ինչո՞ւ է նրանց միտքը մթագնում: Որովհետև նրանք շեղվում են ճիշտ ճանապարհից. նրանք արհամարհում են իրենց պարտականությունները ու մոռանում են աղոթել, և ընդունել Տիրոջը և Նա հեռացնում է Իր Հոգին նրանցից և նրանք թողնվում են խավարի մեջ. . . . [Սա տեղի չի ունենա] այն մարդու հետ, որը կաղոթի առավոտյան, կեսօրին և գիշերը, և կխոնարհեցնի իրեն Տիրոջ առաջ, և կաղոթի Տիրոջը իր բարգավաճ վիճակում, ճիշտ ինչպես կաղոթեր Նրան իր դժբախտության մեջ: Նման մարդը երբեք չի ուրանա:[13]

Տունը ընտանիքի համար տաճար է, որ աղոթք և Աստծուն գովք ասվի:

Տիպական «Մորմոնական» տունը ընտանիքի տաճարն է, որտեղ ընտանիքի անդամները առավոտյան և երեկոյան հավաքվում են աղոթելու և գովաբանելու Աստծուն, որն ասվում է

Հիսուս Քրիստոսի անունով, և շատ հաճախ ուղեկցվում սուրբ գրություններ կարդալով և հոգևոր երգեր երգելով:[14]

Սովորական բան է աղոթելը, սակայն ընդհանուր առմամբ որքան հաճախ է այս պարտավորությունն անտեսվում: Ծնողները մոռանում են մեկտեղ հավաքել տան անդամներին և Աստծո օրհնություններն աղերսել նրանց համար: Նրանք շատ հաճախ շտապում են կամ այնքան շատ են տարված կյանքի գործերով, որ մոռանում են, որ գտնվում են Ամենազորի ձեռքի տակ: Ընտանեկան շրջանակներում աղոթքը կարող է շատ սովորական բան համարվել Վերջին Օրերի որոշ Սրբերի կողմից, սակայն եթե այն անտեսվի, լուրջ հետևանքների կարող է հանգեցնել. . . . Վերջին Օրերի որոշ Սրբեր հիշում են Նրան միայն այն ժամանակ, երբ դժբախտությունը հանկարծակի վրա է հասնում իրենց, բարեկեցության ժամանակ նրանք մոռանում են Աստծուն: Իսկ եթե Տերը որոշի, որ մոռանա մեզ, երբ մենք ամենաշատը նրա կարիքն ունենք, և եթե նա կատարի իր որոշումը, մենք կհայտնվենք անբարենպաստ իրավիճակում: Երբե՛ք մի մոռացեք Աստծուն, գիշեր–ցերեկ փնտրեք նրան աղոթքով. . . . Աղոթո՛ղ եղեք փոթորիկի և արևափայլի ժամանակ, իսկ եթե խավարը հանկարծակի վրա հասնի, սփոփումը անկասկած կգա:[15]

Հայրե՛ր, աղոթեք ձեր ընտանիքներով. ձեր ընտանիքի հետ խոնարվեք գիշեր ու ցերեկ. աղոթեք Տիրոջը, զոհություն հայտնեք նրան՝ իր մեծահոգության, ողորմածության և Հայրական բարության համար, ինչպես մեր երկրային հայրերն ու մայրերն են անչափ բարի եղել մեր՝ իրենց խեղճ, անհնազանդ և կամակոր զավակների հանդեպ:

Դուք աղոթո՞ւմ եք: Ինչի՞ համար եք դուք աղոթում: Աղոթեք, որ Աստված ճանաչի ձեզ, որ լսի ձեր աղոթքները, որ կարողանա օրհնել ձեզ իր Հոգով և առաջնորդի ձեզ դեպի ողջ ճշմարտությունը և ցույց տա ճիշտ ճանապարհը, որ զգուշացնի ձեզ սխալի ժամանակ և առաջնորդի դեպի ճիշտ ճանապարհը, որ դուք չմոլորվեք, որ չբռնեք դեպի մահ տանող սխալ ճանապարհը, այլ որ դուք մնաք նեղ ճանապարհի վրա:[16]

Երբ փոքր երեխան խոնարհվում է իր կատարյալ պարզության մեջ և օրհնություն խնդրում Հորից, Հայրը լսում է ձայնը և կպատասխանի օրհնություններով նրա գլխին, որովհետև երեխան անմեղ է և խնդրում է վստահությամբ ու հույսով: Սրանք պարզ սկզբունքներ են, որոնք ես ձգտել եմ ներարկել ձեր մեջ: Դրանք պարզ են, սակայն անհրաժեշտ և էական են:[17]

Մեզ հրահանգվել է կանչել առ Աստված Հիսուս Քրիստոսի անունով: Մեզ պատվիրվել է, որ պետք է հիշենք նրան մեր տներում, անմար պահենք նրա սուրբ անունը մեր մտքում և մնծարենք նրան մեր սրտերում: Մենք պետք է կանչենք առ նա շատ հաճախ, ամեն օր, և իրականում, մեր կյանքի ամեն պահը մենք պետք է ապրենք այնպես, որ մեր սրտի իղձերը լինեն աղոթք առ Աստված՝ արդարության, ճշմարտության և մարդկային ընտանիքի փրկության համար:[18]

Թող ձեր հոգին դուրս թափվի աղոթքով ի բարօրություն ուրիշների:

Երբ մենք հավաքվում ենք միասին, յուրաքանչյուրս պետք է ունենա աղոթքով լի հոգի և նրա հոգին դուրս թափվի աղոթքով ոչ միայն իր համար, այլ ողջ Եկեղեցու համար: Եթե այդպես լինի, ոչ ոք չի հեռանա երկրպագության տնից, առանց Աստծո Հոգին զգալու. . . . [Երբ աղոթքն ասվում է,] ամեն մեկը . . . պետք է հաստատի այն ասելով՝ ամեն:[19]

Երբ մարդը Ամենազորից իմաստություն և ոգեշնչում է փնտրում, . . . Տերը զորացնում է նրան, քանի որ Աստծո երկյուղը նրա աչքի առաջ է, քանի որ նա սիրում է իր մերձավորին իր անձի պես, և նա չի աղոթում. «Ո՜վ, Տեր, օրհնիր ինձ և իմ կնոջը, իմ որդի Հովհաննեսին և իր կնոջը, մեզ չորսիս և ուրիշ ոչ ոքի: Ամեն»: Այդպիսի մարդը չի աղոթում նման ձևով, այլ աղոթում է Սիոնի բարօրության համար, և երկարակեցության համար այն մարդկանց, որոնց Տերը բարձրացրել է, որ լինեն մեր ղեկավարները, մեր խորհրդականները և մեր խորհրդատուները Ավետարանի սկզբունքների մեջ: Նա աղոթում է իր մերձավորի համար:[20]

Մարդը, որը աղոթող է Տիրոջ առաջ, օրինակ կհանդիսանա բոլոր մյուսների համար, ովքեր կտեսնեն նրա վարքը:[21]

Ես երբեք չեմ աղոթել Տիրոջն առանց հիշատակելու Նրա ծառաների մասին, ովքեր աշխարհի ազգերի մեջ քարոզում են Ավետարանը: Իմ աղոթքի հիմնական մասը հետևյալն է. «Ո՜վ, Աստված, պահիր նրանց մաքուր և անարատ աշխարհից, օգնիր նրանց, որ պահպանեն իրենց անարատությունը, որպեսզի չընկնեն իրենց թշնամիների ձեռքը և հաղթվեն, առաջնորդիր նրանց դեպի սրտով մաքուրները»: Սա է եղել իմ աղոթքն այն ժամանակից ի վեր, որ ես եղել եմ միսիայի բնագավառում, և ես կշարունակեմ աղոթել նույն ձևով, քանի դեռ ապրում եմ:[22]

[Իր միսիոներ որդուն՝ Զոզեֆ Ֆիլդինգին, Զոզեֆ Ֆ. Սմիթը գրել է հուլիսի 18-ին, 1899թ.:] Մեր սրտերը լի են օրհնությամբ քեզ համար և . . . երբ էլ որ աղոթում ենք, քո բոլոր ընկերների հետ միասին մենք հիշում ենք քեզ Տիրոջ առաջ: Օ՜, Աստված, Հայր իմ, օրհնիր, սփոփիր, նեցուկ եղիր և ունակ դարձրու իմ որդիներին, և քո բոլոր ծառաներին միսիայի բնագավառում: Երբ դռները փակվում են նրանց առաջ, տուր նրանց նրբազգացություն, ինքնազսպում և ներող սիրտ: Երբ սառնորեն արհամարհական մերժվում են ծաղրող մարդկանց կողմից, տաքացրու նրանց քո թանկագին սիրով, երբ դաժան վերաբերմունքի են արժանանում և հալածվում, ներկա գտնվիր, որպեսզի պաշտպանես նրանց քո զորությամբ: Այնպես արա, որ քո ծառաները իմանան, որ Դու ես Աստվածը և զգան քո ներկայությունը: Սնուցիր նրանց հոգևոր կյանքով և կատարյալ սիրով, որը հեռացնում է ամեն վախ, և թող նրանց մարմնական կարիքներն ապահովվեն: Օգնիր նրանց պահել իրենց մտքում օգտակար գիտելիքները, և նրանց հիշողության մեջ մնա քո ճշմարտությունը, ինչպես գանձերով լի ջրհոր: Թող որ նրանք խոնարհ լինեն Քո առաջ, հեզ և համեստ, ինչպես Քո փառահեղ Որդին: Դիր նրանց հույսը Քո վրա, քո խոսքի, և քո ողորմած խոստումների վրա: Եվ թող իմաստությունը, և դատողությունը, խոհեմությունը և մտքի ճկունությունը, շրջահայացությունը և գթասրտությունը, ճշմարտությունը և մաքրությունը, պատիվը և արժանապատվությունը բնորոշեն նրանց ծառայությունը և լինեն նրանց համար ասես սուրբ հագուստ: Օ՜, Աստված, օրհնիր առատորեն քո երիտասարդ ծառաներին ամեն անհրաժեշտ պարգևով, մեծահոգությամբ և սուրբ մտքով, և զորությամբ, որ իսկապես դառնան քո Որդիները:[23]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է նշանակում «դիմել Տիրոջը խոնարհաբար և հավատքով»: Ի՞նչ է նշանակում ունենալ կոտրված սիրտ և փշրված հոգի: Կոտրված սիրտն ու փշրված հոգին ինչպե՞ս են օգնում մեզ աղոթքով մոտենալ Երկնային Հորը:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ հավատքն աղոթելիս: (Տե՛ս նաև Հելաման 10.5:) Ինչո՞ւ պետք է խուսափենք կրկնվող աղոթքներից: Ի՞նչ պետք է կատարենք, որպեսզի մեր աղոթքներն ավելի իմաստալից լինեն:

- Ինչո՞ւ մենք պետք է պատրաստ լինենք «հրաժարվելու այն ամենից, ինչը խոչընդոտ կհանդիսանա» աղոթքի պատասխանը ստանալու համար: Նշեք այդ խոչընդոտներից մի քանիսը:
- Ինչպե՞ս կարող ենք «մեզ հետ ունենալ աղոթքի ոգին՝ մեր կյանքում ցանկացած պարտավորություն կատարելիս»:
- Ինչպիսի՞ «լուրջ հետևանքների» առջև կարող ենք կանգնել, եթե անտեսենք ընտանեկան աղոթքը:
- Ի՞նչն է երեխայի աղոթքն այդքան ազդու դարձնում: Ինչպե՞ս կարող ենք ավելի երեխայի պես լինել մեր աղոթքներում:
- Ինչո՞ւ է կարևոր «հաստատել» ուրիշների աղոթքներն «ասելով ամեն»:
- Ինչո՞ւ է կարևոր աղոթել ուրիշների համար: Ինչպե՞ս է Եկեղեցու բարձրագույն և տեղի ղեկավարների համար աղոթելը օրհնում նրանց: Ինչպե՞ս է այն օրհնում մեզ և մեր ընտանիքները:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 131–34.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 219.
3. In Conference Report, Oct. 1899, 71–72.
4. *Gospel Doctrine,* 218.
5. *Gospel Doctrine,* 198.
6. In Conference Report, Oct. 1916, 6.
7. *Gospel Doctrine,* 221; paragraphing added.
8. *Gospel Doctrine,* 218.
9. *Gospel Doctrine,* 205.
10. *Gospel Doctrine,* 368.
11. *Deseret News* (weekly), 8 Dec. 1875, 4.
12. *Gospel Doctrine,* 218.
13. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 25 Oct. 1906, 674.
14. In Conference Report, Apr. 1907, 7.
15. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:280.
16. *Gospel Doctrine,* 215.
17. *Gospel Doctrine,* 216; paragraphing altered.
18. *Gospel Doctrine,* 503–4.
19. In *Collected Discourses,* 2:365.
20. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 11 Nov. 1897, 709.
21. *Gospel Doctrine,* 116.
22. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 1 Nov. 1906, 691–92.
23. Joseph F. Smith to Joseph Fielding Smith, 18 July 1899, in Joseph Fielding Smith Papers 1854–1918, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints.

Մայրերի ազդեցությունը

Այն մայրերը, ովքեր ունեն ավետարանի իրենց սրտում, իրենց զավակներին ուղեկցում են արդարակենցության և ճշմարտության ուղիներով։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը բարձր է գնահատել մայրերին։ Նրա մայրը իր համար եղել է հավատքի և վճռականության օրինակ։ Նկարագրելով նրա մեծահոգությունը, նա ասում է. «Ես հիշում եմ մայրիկիս Նավուի օրերին [1839–1846]։ Ես հիշում եմ, թե ինչպես էր նա և իր անօգնական երեխաները շտապելով նստում նավակ, իրենց հետ վերցրած այն ամենը, ինչ կարողացել էին հանել ամբոխների կողմից ռմբակոծվող Նավույում գտնվող իրենց տնից։ Ես հիշում եմ, թե ինչպիսի դժվարին պահեր ապրեց Եկեղեցին այնտեղ և դեպի Վինթեր Քուորթերս գնալու ճանապարհին, Միսուրի գետի վրա, և ինչպես էր նա աղոթում իր զավակների և ընտանիքի համար իրենց այդ հոգնեցուցիչ ճամփորդության ընթացքում. . . . Ես հիշում եմ բոլոր փորձությունները, որոնք ուղեկցում էին մեզ Իսրայելի ճամբարի հետ տեղափոխվելիս, գալով դեպի լեռներով շրջապատված այս հովիտները առանց լծվածքի, որը կքաշեր մեր կառքերը։ Եվ լծվածք ձեռք բերելու համար չունենալով միջոցներ, նա լծեց իր կովերն ու հորթերը, երկու կառքերը կապեց միասին և մենք շարժվեցինք դեպի Յուտա նման թշվառ և անօգնական վիճակում, և մայրս ասաց. «Տերը մի դուռ կբացի», սակայն ոչ ոք չգիտեր, թե ինչպես Նա դա կանի . . .

«Չե՞ք կարծում, որ նման բաները մեծ տպավորություն են գործում։ Կարծում եք ես կմոռանա՞մ մայրիկիս օրինակը։ Ո՛չ։ Նրա հավատքն ու օրինակը միշտ պայծառ կմնա իմ հիշողության մեջ։ Ահա, թե ինչ եմ ես կարծում։ Իմ ամեն շնչով, իմ ամեն զգացումով ես Աստծուն եմ ուղղում իմ շնորհակալությունը, որ մայրս եղել է Սուրբ, որ նա Աստծո կին էր, մաքուր և հավատարիմ, որ նա ավելի շուտ կմահանար, քան հուսախաբ կաներ, որ նա կկրեր

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթն ասել է իր մոր Մերի Ֆիլդինգ Սմիթի մասին.
«Սայրս եղել է Սուրբ, . . . Աստծո կին, մաքուր և հավատարիմ»
(Deseret News: Semi-Weekly, 5 Jan. 1892, 3):

աղքատություն և դառնություն ամայի վայրերում և կփորձեր ընտանիքին միասին պահել, քան կմնար Բաբելոնում: Դա է ոգին, որը տոգորեց նրան և նրա զավակներին: Արդյո՞ք անարժան չէին լինի նրա երեխաները այդպիսի մորը, եթե չլսեին նրան և չհետևեին նրա օրինակին: Հետևաբար, ես ասում եմ՝ Աստված օրհնի Իսրայելի մայրերին»:[1]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մոր ազդեցությունն անցնում է սերնդից սերունդ:

Որքա՜ն եմ ես սիրում և գնահատում ճշմարիտ մայրությունը: Ոչինչ, բացի սելեստիալ թագավորությունից չի կարող գերազանցել իմ անմահ սերը հանդեպ քաղցր, ճշմարիտ, ազնվական հոգին, որը կյանք է տվել ինձ՝ իմ հարազատ, հարազատ մայրիկը: Օ՜, նա բարի էր: Նա անկեղծ էր: Նա մաքուր էր: Նա իսկական Սուրբ էր: Աստծո թագավորական դուստրը: Նրան եմ պարտական իմ գոյությամբ, ինչպես նաև կյանքում ունեցած իմ հաջողությամբ, զուգորդված Աստծո բարեհաճությամբ և ողորմածությամբ:[2]

Որպես կանոն, Սիոնի մայրերը, Իսրայելի մայրերը աշխարհի վրա ապրող ամենալավ կանայք են, ամենալավը, որ չի կարելի գտնել որևէ այլ տեղ. . . . Լավ ազդեցությունը, որ լավ մայրը ունենում է իր զավակների վրա, նման է թթխմորի, որը գցվելով խմորի մեջ, խմորում է ամբողջ խմորը: Եվ, որքանով որ նրա ազդեցությունը տարածվում է, ոչ միայն իր զավակների, այլև իր զավակների ընկերների վրա, այն զգացվում է, և դրա շնորհիվ լավ արդյունք է լինում:

Եվ, քույրե՛ր, դուք չգիտեք, թե որքան հեռու է գնում ձեր ազդեցությունը: Մայրը, որը հաջողությամբ է մեծացնում լավ տղայի, կամ աղջկա, որոնք կընդօրինակեն նրան և կհետևեն նրա ցուցումներին իրենց ողջ կյանքում, առաքինության, պատվախնդրության, ազնվության և արդարակեցության սերմեր է ցանում նրանց սրտերում, որը կզգացվի նրանց ողջ կյանքի ընթացքում: Եվ ուր էլ որ գնան այդ երիտասարդ տղան կամ աղջիկը, դառնալով տղամարդ կամ կին, ինչպիսի հասարակության հետ էլ որ շփվեն, իրենց վրա թողած այդ մոր օրինակի լավ արդյունքները միշտ կզգացվեն, և դա երբեք վերջ չի ունենա, քանի որ այն կանցնի նրանցից իրենց զավակներին՝ սերնդից սերունդ: Եվ հատկապես մենք հույս ունենք, որ դա կվերաբերվի Հիսուս Քրիստոսի Ավետարանին:[3]

Իմ մանկության ընթացքում . . . ես ուսուցանվել եմ հավատալու Հիսուս Քրիստոսի առաքելության աստվածայնությանը: Մայրս, որն իրոք Սուրբ էր, սովորեցրել է ինձ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, որ նա իրոք ոչ այլ ինչ է, քան Աստծո Միածինը մարմնում, և որ հետևաբար, ոչ այլ ոք, քան Աստված՝ հավերժական Հայրը, Նրա Հայրն է և Նրա աշխարհում գոյության հեղինակը: Ես սովորել եմ դա իմ հորից, Մարգարե Զոզեֆ Սմիթից, իմ մորից, որը ամուր կառչել էր ավետարանից, քանի որ հավատացել էր Զոզեֆ Սմիթի վկայությանը, և հավատացել էր, որ իր ամուսինը պատվավոր, ազնիվ և հավատարիմ է: Եվ իմ մանկության օրերին և աշխարհի վրա իմ կյանքի բոլոր տարիներին ես հավատարիմ եմ մնացել այդ հավատքին, իրոք, ես երբեք չեմ ունեցել որևէ լուրջ կասկած իմ մտքում, անգամ մանկության տարիներին:[4]

Մեծ պատասխանատվություն է ընկած Իսրայելի մայրերի վրա:

Ընտանիքում երջանկության և պետության բարգավաճման հիմքում ընկած է մայրությունը: Ինչ վերաբերում է մայրությանը, Աստված տղամարդկանց և կանանց վրա շատ սուրբ պարտավորություն է դրել:[5]

Կարծում եմ, որ աշխարհում ամենալավ մայրերին կարելի է միշտ գտնել Վերջին Օրերի Սրբերի մեջ: Ես հավատացած եմ, որ ամբողջ աշխարհում լավագույն կանայք Վերջին Օրերի Սրբերի կանայք են: Ես չգիտեմ ուրիշ կանանց աշխարհում, որոնք կին և մայր լինելու վերաբերյալ նույն տեսակետն ունենան, ինչ Վերջին Օրերի Սրբերը: Մեր կապերը չեն սահմանափակվում միայն այս կյանքով . . . Մենք ապրում ենք ժամանակի և ողջ հավերժության համար: Մենք ձևավորում ենք կապեր և հարաբերություններ ժամանակի և ողջ հավերժության համար: Մեր կապվածությունը և մեր իդեալները զարգանում և պատրաստվում են, որպեսզի տևեն ոչ միայն ժամանակավոր կամ մահկանացու կյանքի, այլ ողջ հավերժության ընթացքում:[6]

Մենք պետք է բարգավաճենք և կառուցենք Սիոնը երկրի վրա. քանզի սա է մեր առաքելությունը և մեր մայրերի և Սիոնի դուստրերի աշխատանքը,- այժմյան մայրերի, իսկ որոշ ժամանակ անց և նրանց դուստրերի, ովքեր ևս կլինեն Իսրայելի մայրեր: Ձեր վրա մեծ պատասխանատվություն է ընկած: Ձեզանից է կախված ձեր զավակների ուսուցումը, մտքերի ուղղվածությունը և սրտերի ոգեշնչումը, քանզի նրանք տոգորվում են իրենց մայրերի ոգով և

մայրերի թողած ազդեցությունը զավակների վրա հանդիսանում է ամենամնայուն ազդեցությունը: Ոչինչ այնքան անջնջելի չէ, որքան մոր ազդեցությունը, այսինքն, երբ նա բարի է և իր սրտում կրում է Ավետարանի ոգին, և դաստիարակել է իր զավակներին այն ուղով, որ նրանք պետք է գնան:[7]

Մեր մայրերը, և մեր զավակների մայրերը, որոնց սրտերը լի են անհանգստությամբ իրենց երեխաների բարգավաճման համար, որոնց շնորհվել է Սուրբ Հոգին, ձեռնադրությամբ, կարող են գնալ իրենց գաղտնի սենյակները և խոնարհվեն Աստծո առաջ և հաղորդակցեն Նրա հետ այնպես, ինչպես չի կարող անել ոչ մի մայր երկրի վրա, եթե միայն հավատարիմ մնան իրենց յուրացրած սկզբունքներին և ապրեն համաձայն իրենց տրված արտոնությունների: Դրա շնորհիվ իրենց երեխաների սրտում ունեցած ազդեցությամբ, նրանք կառաջնորդեն իրենց երեխաներին արդարության և ճշմարտության շավիղներում, և կմնծացնեն նրանց խրատով ու Տիրոջ ուսմունքով, ճշմարտության հանդեպ սիրով, Նրա պատվիրանների հնազանդությամբ այնպես, որ չեն կարող դա անել մյուսները, որոնք զուրկ են այդ արտոնություններից, օրհնություններից և օժտումներից, որ այնքան առատորեն շնորհվել են Իսրայելի մայրերին:[8]

Չի կարող լինել իսկական երջանկություն, տնից դուրս և հեռու, և ամեն ջանք, որ գործադրվում է տան ազդեցությունը սրբացնելու և պահպանելու համար, վնեացնում ու վսեմացնում է նրանց, ովքեր այդ ուղղությամբ տքնում են և զոհաբերություններ են կատարում: Տղամարդիկ և կանայք հաճախ ձգտում են փոխարինել ընտանեկան կյանքը ուրիշ ինչ-որ կյանքով: Նրանք հավատացած են, որ տունը սահմանափակում է իրենց ազատությունը, որ բարձրագույն ազատությունը դա ամբողջովին կամքի թելադրանքով շարժվելու հնարավորությունն է: Առանց ծառայության չկա երջանկություն, և չկա ավելի բարձր ծառայություն, քան այն, որը տունը դարձնում է աստվածային հաստատություն, և որը զարգացնում ու պահպանում է ընտանեկան կյանքը:

. . . Ամենաուժեղ մանկական տպավորությունները կապված են տան հետ, իսկ ծեր տարիքի ամենաթանկագին հիշողությունները կապված են երիտասարդության և դրա երջանիկ տարիների հետ:[9]

Երեխաների կյանքի վաղ շրջանում տան մայրն է հիմնական կարգուկանոնը պահողը, և նրա ազդեցությունն ու կարգապահությունն է հիմնականում որոշում մեծ տարիքում եկեղեցու և

պետության կառավարման մեջ բարձր պաշտոններ գրավելու իր երեխաների ունակությունը:[10]

Ես մեծ հույս ունեմ, որ Իսրայելի մայրերը ջերմեռանդորեն և զգուշորեն կհսկեն իրենց դուստերի և իրենց որդիների կյանքը: Եթե իմ ուժերի սահմանում լիներ, ես այնպես կանեի, որ բոլոր մայրերը լինեին ուրախ և բավարարված իրենց որդիներին և դուստրերին դաստիարակելիս, այնպես որ մարդիկ ոչ մի մեղք չէին գտնի նրանց մեջ և մեղքը զորություն չէր ունենա նրանց վրա:[11]

Իսկական մայրական սերը նման է Աստծո սիրուն:

Ողջ աշխարհում ոչ մի սեր չի համեմատվի իսկական մոր սիրո հետ. . . . Ես երբեմն մտածել եմ, թե ինչպես կարող է անգամ Հայրը սիրել իր զավակներին ավելի, քան իմ մայրն է սիրել իր զավակներին: Դա ինձ համար կյանք էր, ուժ էր, խրախուսանք էր. դա սեր էր, որ սեր ծնեց իմ մեջ: Ես գիտեմ, որ նա սիրում էր ինձ իր ողջ սրտով: Նա սիրում էր իր զավակներին իր ողջ հոգով: Նա տքնաջան աշխատում էր, տքնում էր և զոհաբերում էր իրեն օր ու գիշեր այն աշխարհիկ հարմարավետության և օրհնությունների համար, որ կարող էր տալ իր զավակներին, շնորհիվ իր գործադրած ջանքերի: Չի եղել այնպիսի զոհաբերություն՝ ժամանակի, ժամանցի կամ հաճույքի, կամ էլ հանգստանալու հնարավորության, որի համար գեթ մեկ վայրկյան նա մտածեր, եթե հարցը իր երեխաների հանդեպ պարտականության և սիրուն էր վերաբերվում:

Երբ ես տասնհինգ տարեկան էի, և կանչվեցի քարոզելու ավետարանը օտար երկրում, կամ էլ սովորել ինչպես քարոզել, և ինքս սովորեի, ամենաամուր խարիսխը, որն ունեի իմ կյանքում, և որն օգնեց ինձ պահել աշխատելու մշտական ձգտումն ու ցանկությունը, խարիսխ, որն օգնեց ինձ բարձրանալ մինչև ճիշտ մակարդակը և մնալ ուղիղ ճանապարհի վրա, եղել է այն սերը, որը համոզված էի, որ նա տածել է իմ հանդեպ, նա, որն ինձ աշխարհ է բերել:

Ես փոքր տղա էի, առանց հասուն դատողության, առանց կրթության, նետված ամենամեծ հրապուրանքների ու գայթակղությունների հորձանուտը, որին կարող էր ենթարկվել ցանկացած պատանի կամ տղամարդ, և այնուամենայնիվ երբ այդ գայթակղությունները դառնում էին ամենահրապուրիչը և ամենագայթակղիչը, առաջին միտքը, որ ունենում էի, սա էր՝ հիշիր մորդ սերը: Հիշիր ինչպես էր նա պայքարում քո բարօրության համար: Հիշիր քո բարիքի համար իր կյանքը զոհաբերելու նրա պատրաս-

տակամությունը։ Հիշիր, ինչ էր նա սովորեցնում քեզ մանկությանդ տարիներին . . . Մորս հանդեպ ունեցած այս զգացումը դարձավ պաշտպանություն, արգելափակում՝ իմ և գայթակղությունների միջև, այնպես որ ես կարողանում էի գայթաղությունից և մեղքից խույս տալ Տիրոջ և այն սիրո օգնությամբ, որը ունեի իմ հոգում նրա հանդեպ, որը գիտեի, սիրում էր ինձ ավելի, քան աշխարհում որևէ այլ մեկին, և ավելի քան որևէ այլ կենդանի էակ կարող է սիրել ինձ։

. . . Իսկական մայրն այն մայրն է, որն Աստվածավախ է և իր հոգում պահում է ճշմարտության հանդեպ սերը, որը երբեք չի փախչի վտանգից կամ չարից և իր երեխային թողնի դրա դեմ։ Սակայն որքան բնական է կրակի կայծերի համար վերև թռչելը, որքան բնական է կյանքի շունչ փչելը, այնքան էլ բնական է այն, որ եթե իր երեխային մի վտանգ սպառնա, նա կկանգնի երեխայի ու վտանգի միջև, նա կպաշտպանի իր երեխային մինչև վերջ։ Դա է երեխաների հանդեպ իսկական մոր սերը . . .

Ես սովորեցի բարձր գնահատել մայրական սերը։ Ես հաճախ էի ասում և պիտի կրկնեմ, որ իսկական մայրական սերը նման է Աստծո սիրուն, քան որևէ այլ տեսակի սիրուն։[12]

Հավանաբար ամենակատարյալ իդեալը բուժելու արվեստում մայրն է, որի քնքուշ և գթառատ սերը հաստատվում է՝ հեռացնելով արժանի կամ անարժան պատժի խայթը։ Ինչպե՞ս է նրա սերը բժշկում յուրքանչյուր վերք։ Որքա՞ն արագ է նրա հոգածությունը կապում վերքը և սփոփում։ Նրա կյանքի օրինակը իմաստություն է, որը սեր է ուսուցանում։[13]

Իմ և երկնքի միջև չկա ոչինչ, որը կարող է համակշռել իմ մորը պատճառած վիշտը կամ վիրավորանքը։ Ինչո՞ւ։ Որովհետև նա սիրել է ինձ, նա կմահանար ինձ համար կրկին ու կրկին, եթե դա հնարավոր լիներ, միայն թե պաշտպաներ ինձ։ Ինչո՞ւ պետք է ես վշտացնեմ, ինչո՞ւ պետք է հիասթափեցնեմ նրան։ Ինչո՞ւ պետք է բռնեմ այնպիսի ուղի, որը հակառակ է նրա կյանքին և ինձ տված նրա կյանքի ուսմունքներին, քանզի նա ուսուցանել է ինձ լինել պատվախնդիր ու առաքինի, ճշմարտացի ու ազնիվ Աստծո արքայության հանդեպ, և նա ուսուցանել է ինձ ոչ միայն ցուցումներ տալով, այլ օրինակով։[14]

Ես չեմ կարող արտահայտել այն ուրախությունը, որ գալիս է այն մտքից, որ տեսնելու եմ իմ հորը և իմ թանկագին մորը, որը ծնել է ինձ հալածանքի և թշվառության մեջ, որը գրկել է ինձ իր ձեռքերով և եղել է համբերատար, զուսպ, քնքուշ և անկեղծ իմ

անօգնական պահերին։ Նրան տեսնելու միտքը միայն, ո՞վ կարող է արտահայտել այդ ուրախությունը։[15]

Աստված օրհնի Սիոնի մայրերին։

Աստված օրհնի Սիոնի մայրերին, և Իսրայելի որդիներին ու դուստրերին, և հեռու պահի մեր զավակներին աշխարհի ճանապարհներից, զանցանքներից և գայթակղություններից, որը կմոլորեցնի նրանց։ Թող որ Աստծո զորությունը լինի բոլոր հավատարիմ ընտանիքների հետ։[16]

Ես նայում եմ Իսրայելի այս մայրերին, ովքեր օժտվել են Սուրբ Հոգու պարգևով, ովքեր կրկին ծնվել են, . . . Իսրայելի դուստրերը ծնվել են ջրից և Հոգուց, և օժտվել են Սուրբ Հոգու պարգևով՝ ձեռնադրվելով նրանց կողմից, ովքեր իշխանություն ունեն շնորհելու այդ զորությունը և այդ ընծան Սիոնի դուստրերին, ինչպեսև Սիոնի որդիներին։ Ես հավատում եմ, որ ամեն մայր իրավունք ունի. . . իմանալու, թե ինչ անի իր ընտանիքում և իր ազդեցության ոլորտում՝ առաջնորդելու և ուղղություն տալու իր զավակներին. և այդ մայրը և յուրաքանչյուր մայր, որն ունի այդ ոգին, ունի հայտնության, ոգեշնչման, գիտության պարգևը, որը մարգարեության ոգին է, խորաթափանցության ոգին, որը պարգև է Աստծուց նրանց, որպեսզի կառավարեն իրենց ընտանիքի գործերը և առաջնորդեն իրենց զավակներին արդարության և ճշմարտության ուղիներով։[17]

Ես սրտանց օրհնում եմ ձեզ, մայրեր և քույրեր, իմ ողջ սրտով, ողջ զորությամբ և իրավունքով, որ ունեմ քահանայության մեջ, որն ըստ Աստծո Որդու կարգի է . . . Ես քահանայության մեջ իրավունք և իշխանություն ունեմ օրհնելու Իսրայելին, և օրհնելու նրանց, ովքեր հատկապես հավատարիմ են, և ես իմ սրտում զգում եմ, որ պետք է ասեմ՝ ես օրհնում եմ ձեզ։[18]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչն է տպավորություն գործել ձեր վրա Նախագահ Սմիթի մոր նկարագրության մեջ։ Մայրական արդարակեցության ինչպիսի՞ հատկանիշներ եք տեսնում այն մայրերի մեջ, որոնց դուք ճանաչում եք։
- Ինչո՞ւ է «ընտանիքում երջանկության և պետության բարգավաճման հիմքում» ընկած մայրությունը։ Որո՞նք են տղամարդ-

կանց և կանանց «սուրբ պատավորությունները՝ «ինչ վերաբերում է մայրությանը»:

- Ինչպե՞ս է հավերժական ընտանիքների մասին մեր հասկացողությունը ազդում մեր արարքների և մայրերի ու մայրության հանդեպ մեր վերաբերմունքի վրա:
- Ինչպե՞ս կարող է մայրն ազդել իր երեխաների մտքի ու սրտի վրա, ինչ վերաբերում է արդարակեցությանը: Ինչպե՞ս ենք օրհնվել Սիոնի մոր ազդեցությամբ:
- Ինչպիսի՞ դժվարությունների են հանդիպում ծնողներն այսօր իրենց երեխաներին «ճշմարտության հանդեպ սիրով, [Աստծո] պատվիրանների հնազանդությամբ» դաստիարակելիս: Ինչպե՞ս կարող են ծնողները հաղթահարել այդ դժվարությունները:
- Նախագահ Սմիթի խոսքերով ինչպիսի՞ հոգևոր օրհնությունների են արժանի մայրերը, որոնք ստացել են Սուրբ Հոգու պարգևը: Ինչպե՞ս կարող են մայրերն օգտագործել այդ պարգևները, որպեսզի օգնեն իրենց զավակներին քայլել արդարության շավիղներում:
- Ինչպե՞ս կարող է մոր սերն ու ուսուցումները դառնալ «պաշտպանություն, արգելափակում [մեր] և գայթակղության մեջ»:

Հղումներ

1. *Deseret News: Semi-Weekly,* 5 Jan. 1892, 3; paragraphing added.
2. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 452.
3. *Deseret News: Semi-Weekly,* 5 Jan. 1892, 3.
4. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 494.
5. *Gospel Doctrine,* 288.
6. "General Conference of the Relief Society," *Relief Society Magazine*, June 1917, 316.
7. *Deseret News: Semi-Weekly,* 5 Jan. 1892, 3.
8. In Conference Report, Apr. 1912, 7.
9. *Gospel Doctrine,* 300–301.
10. *Gospel Doctrine,* 290.
11. "General Conference of the Relief Society," 316–17.
12. *Gospel Doctrine,* 314–15.
13. *Gospel Doctrine,* 264.
14. *Gospel Doctrine,* 463.
15. *Gospel Doctrine,* 429.
16. In Conference Report, Apr. 1907, 118.
17. Address at the home of A. W. McCune, 14 Nov. 1913, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints.
18. "General Conference of the Relief Society," 320.

Սուրբ Գրքերի ոգեշնչումն ու աստվածայնությունը

Եկեղեցու անդամները պետք է հավատարմորեն ուսումնասիրեն սուրբ գրքերը և ջանասիրաբար ապրեն ըստ սուրբ գրքերում ուսուցանված սկզբունքների:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1848թ. դեպի Սոլթ Լեյքի Հովիտ գաղթի ժամանակ, Մերի Ֆիլդինգ Սմիթը նստում էր իր որդի Զոզեֆի և ընտանիքի մյուս անդամների հետ և լամպի ու կրակի լույսի տակ ուսումնասիրում էր սուրբ գրքերը: Այդ օրերին Զոզեֆը ստացավ իր սկզբնական հոգևոր կրթությունը, կրթություն, որը ձեռք բերեց իր մորից վրանի տակ, ճամբարում և տափաստանում:[1] Հետագայում, Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հիշում է. «Երեխա ժամանակ ինձ վրա խորը տպավորություն էր թողել այն միտքը և հաստատուն համոզվածությունը, որ հայտնությունները, որոնք տրվել էին Մարգարե Զոզեֆին և նրա միջոցով . . . Աստծո խոսքն է, ինչպես հին աշակերտների խոսքերը, երբ նրանք վկայում էին Հոր և Որդու մասին: Սանուկ հասակում ստացած այդ տպավորությունը մնաց ինձ հետ աշխարհի տարբեր ազգերի մեջ անցկացրած իրական և գործնական փորձառություններով լի իմ միսիայի բնագավառում անցկացրած ավելի քան վաթսուն տարիների լավ և դժվարին ժամանակներում, ինչպես նաև տանը, երբ Աստծո լիազորված ծառաների կազմում էի ընդգրկված»:[2]

1880թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած գերագույն համաժողովին, Եկեղեցու Առաջին Նախագահությունը՝ Նախագահ Զոն Թեյլորը և նրա Խորհրդականներ Զորջ Գ. Քանոնը և Զոզեֆ Ֆ. Սմիթը, Եկեղեցուն ներկայացրեցին Մեծագին Մարգարիտը և Վարդապետություն և Ուխտերի որոշ լրացուցիչ բաժինները «որպես հայտնություններ Աստծուց՝ տրված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն և ողջ աշխարհին»:[3] Միաձայն

քվեարկությամբ Եկեղեցու անդամները ընդունեցին այս հայտնությունները, որով ընդլայնեցին Եկեղեցու սուրբ գրքերի կազմը: Նախագահ Սմիթի համար սուրբ գրքերը մնում էին «հոգևոր հարստության» հաստատուն աղբյուր:[4] Նա դարձրեց սուրբ գրքերը իր ուսմունքների մասը, և սուրբ գրությունների շուրջ խորհելիս էր, որ նա մեծ հայտնություն ստացավ, որն այժմ հայտնի է որպես Վարդապետություն և Ուխտերի 138-րդ բաժին:

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սուրբ գրքերը հայտնում են սիրո և հոգևոր արժեքների խոսքերը:

Նրանց, ովքեր խաճվել են և չգիտեն, թե ինչ անեն հայտնվելով այժմ աշխարհում գոյություն ունեցող տարբեր տեսակի ուսմունքների մեջ, ես կասեի. Քննեք Սուրբ Գրքերը, աղոթքով փնտրեք Աստծուն, իսկ հետո կարդացեք վարդապետությունները, որոնք Քրիստոսը հայտնեց իր Լեռան քարոզի ժամանակ, որը գրված է Մատթեոսում, և ինչպես դրանք կրկնվել են հին սրբերի համար այս (Ամերիկյան) մայրցամաքում (3 Նեփի): Ուսումնասիրելով այս հոյակապ չափանիշները, և խորապես քննելով այս անզուգական վկայությունները, դուք կարող եք մարտակոչ նետել աշխարհի փիլիսոփայություններին, կամ աշխարհի բարոյական սկզբունքներից որևէ մեկին, որ ներկայացնեն դրան համարժեք որևէ բան: Մարդկանց իմաստությունը չի կարող համեմատվել դրա հետ: Դրանք առաջնորդում են դեպի Քրիստոսի խաղաղարար մյուս հետևորդները, և հնարավորություն են ընձեռում մարդկությանը՝ դառնալու կատարյալ, ինչպես Նա է կատարյալ: Ոչ մի փիլիսոփա երբեք չի ասել, ինչպես Հիսուսն է ասել. «Ինձ մոտ եկեք»: Աշխարհի սկզբից մինչև մեր ժամանակները ոչ մի ուրիշ փիլիսոփա երբեք չի աղաղակել մարդկանց ասելով սիրո նման խոսքեր, ոչ էլ երաշխավորել և հայտարարել, որ իրենում զորություն ունի փրկելու: «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ»,- սա է նրա կոչը մարդկանց բոլոր որդիներին և դուստրերին [Մատթեոս ԺԱ.28]:

Վերջին Օրերի Սրբերը արձագանքել են այդ կոչին, և այդպիսով հազարավորներ հանգստություն և խաղաղություն են գտել, որ ամեն մտքից վեր է. և սա չնայած կրակով չարչարանքներին, իրարանցմանը և պայքարին, որոնց միջով նրանք անցել են: Նրանք մնացել են այն գիտելիքին, որ ոչ մի մարդ չի կարող հայտարարել



Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի Հավայիի լեզվով Մորմոնի Գրքի առաջին խմբագրման օրինակը, 1905թ.: Իսկ 1915թ. Հավայիի Տաճարի հողատարածքի նվիրագործման ժամանակ նրան ներկայացվեց Վարդապետություն և Ուխտերի, Մեծագին Մարգարիտի թարգմանությունը:

կամ ուսուցանել նման վարդապետություն. դա Աստծո ճշմարտությունն է:[5]

Սուրբ գրքերի ոգեշնչումն ու աստվածայնությունը ամենից առավել բնութագրում է հոգին, ըստ որի գրված է այն, և հոգևոր հարստությունը, որը դրանք փոխանցում են հավատարմորեն և մշտապես կարդացողներին: Ոստի, Սուրբ գրքերի հանդեպ ունեցած մեր վերաբերմունքը պետք է ներդաշնակության մեջ լինի այն նպատակների հետ, որի համար դրանք գրվել են: Դրանք նպատակ ունեն ընդլայնելու մարդու հոգևոր պարգևները և բացահայտելու ու ամրապնդելու նրա ու իր Աստծո միջև եղած կապը: Աստվածաշունչը, ինչպես նաև այլ Սուրբ Գրվածքներ, որպեսզի գնահատվեն, պետք է ուսումնասիրեն նրանք, ովքեր հոգևոր հակվածություն ունեն և հոգևոր ճշմարտությունների որոնումների մեջ են:[6]

Ամենամեծ նվաճումը, որ կարող է մարդկությունն ունենալ այս աշխարհում դա՝ ծանոթանալ աստվածային ճշմարտությանն այնքան խորապես, այնքան կատարելապես, որ աշխարհում ապրող ոչ մի կենդանի էակի օրինակ կամ վարք չհեռացնի նրանց իրենց ձեռք բերած գիտելիքից: «Գնալ Վարդապետի հետքերով», ամենամեծ ուսուցչի, որ երբևէ այս աշխարհն ունեցել է, իմ գիտեցած ամենաապահով և ամենավստահ ուղղությունն է, որով կարելի է գնալ աշխարհում: Մենք կարող ենք յուրացնել Վարդապետի ցուցումները, վարդապետությունները և աստվածային խոսքը, առանց որևէ երկյուղի, որ Նա, ով տվել է դրանք, չի կարողանա կատարել և իրագործել իր ցուցումները և իրականացնել իր իսկ վարդապետություններն ու պահանջները:[7]

Ժամանակակից սուրբ գրքերը ուսուցանում են մեզ Աստծո խոսքը և վկայում, որ Հիսուսը Քրիստոսն է:

Աստծուց Սուրբ Հոգու միջոցով ինձ տրված հայտնությամբ ես գիտեմ, որ այս գիրքը, Վարդապետություն և Ուխտերի Գիրքը, որը ես ունեմ իմ ձեռքում, Աստծո խոսքն է, որը հայտնվել է Զոզեֆ Սմիթի միջոցով աշխարհին և հատկապես աշխարհով մեկ սփռված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին, և գիտեմ, որ Աստծո պարգևով և զորությամբ է այս գիրքը (Մորմոնի Գիրքը) նա թարգմանել սկզբնաղբյուր հանդիսացող լեզվից, և ոսկե թիթեղների փորագրություններից այն լեզվով, որով մենք կարդում ենք այժմ այս գրքի կազմի վրա, և այն պարունակում է հավիտենական

Ավետարանի լրիվությունը։ Այն կառաջնորդի մարդկանց ստանալու ճշմարտության գիտելիքը, որով նրանք կարող են փրկվել և կրկին ետ բերվել Աստծո ներկայություն և ճաշակել Նրա փառքից ու ստանալ անվերջ կյանքեր։[8]

Քրիստոսն ինքը խորտակեց գերեզմանի արգելապատերը, հաղթեց մահվանը և գերեզմանին և եղավ «ննջածների առաջնեկ» [Ա Կորնթացիս ԺԵ.20։] . . . Նրա աշակերտները տեսան և վկայեցին հարությունը, և նրանց վկայությունը չի կարելի կասկածի ենթարկել։ Հետևաբար, այն հուսալի է, ճշմարիտ և վստահության արժանի։

Սակայն, արդյո՞ք սա է միակ ապացույցը, որ ունենք։ Արդյո՞ք միայն հնագույն աշակերտների վկայության վրա պետք է մեր հույսը դնենք։ Փառք Աստծուն, մենք ավելին ունենք։ Եվ լրացուցիչ վկայությունը, որ ունենք, հնարավորություն է տալիս դառնալու վկաներն այն բանի, որ հնագույն աշակերտների վկայությունները ճշմարիտ են։ Դառնանք Մորմոնի Գրքին։ Այն պարզ և անսխալ տերմիններով վկայում է Հիսուս Քրիստոսի մահվան և հարության մասին, կարող ենք նայել Վարդապետություն և Ուխտեր գրքին, որը պարունակում է այս ժամանակաշրջանի հայտնությունները, և մենք կգտնենք պարզ և որոշակի վկայություն այնտեղ։ Մենք ունենք Մարգարե Զոզեֆ Սմիթի վկայությունը, Օլիվեր Քաուդերիի վկայությունը, և Սիդնի Ռիգդոնի վկայությունը, որ նրանք տեսել են Տեր Հիսուսին, այն նույնին, որը խաչվեց Երուսաղեմում, և որ Նա հայտնվեց իրենց [տես ՎԵՈՒ 76.22–24]։[9]

Մորմոնի Գիրքը սուրբ գիրք է, որը թարգմանվել է Աստծո պարգևով և զորությամբ, քանզի Աստծո ձայնը հայտնի դարձրեց երեք վկաներին, որ այն թարգմանվել էր Աստծո պարգևով և զորությամբ, և այն ճշմարիտ է։ Երեք վկաները հայտարարեցին և վկայեցին դրա ճշմարտացիության մասին, և ութ այլ վկաներ, բացի Մարգարե Զոզեֆից, հայտարարեցին, որ իրենք տեսել են թիթեղները, իրենց ձեռքում պահել են դրանք և տեսել են դրանց վրայի փորագրությունները, և իրենք գիտեն, որ Զոզեֆ Սմիթը ունի թիթեղները, որոնցից թարգմանվել է Մորմոնի Գիրքը։[10]

Մորմոնի Գիրքը, որն այս սերնդի համար ի հայտ բերելիս Զոզեֆ Սմիթը Աստծո ձեռքում գործիք էր, թարգմանվել է գերմաներեն, ֆրանսերեն, դանիերեն, շվեդերեն, ուելսերեն, հավայիի լեզվով, հինդուերեն, իսպաներեն և հոլանդերեն լեզուներով։ Եվ այս գիրքը կթարգմանվի այլ լեզուներով ևս, համաձայն դրանում

գրված կանխատեսումների, և համաձայն Զոզեֆ Սմիթի միջոցով Տիրոջ տված խոստումների, որ այն պետք է գնա դեպի երկնքի ներքո գոյություն ունեցող ամեն ազգ, ցեղ և ժողովուրդ, մինչև որ Ադամի բոլոր որդիներն ու դուստրերը արտոնություն կունենան լսելու ավետարանը, ինչպես այն վերականգնվել է երկրի վրա ժամանակների լրության ժամանակաշրջանում:[11]

Այն, որ Աստված կհայտնի իր նպատակները Լամանացիներին իր իսկ ժամանակին և իր ձևով, չի կարող կասկած հարուցել նրանց մոտ, ովքեր հավատում են Մորմոնի Գրքի աստվածային ծագմանը, քանզի այդ գրքում այդ փաստը անսխալ ձևով պարզ ներկայացված է, սակայն թե ինչպես այն կգործի յուրաքանչյուր դեպքում և հատկապես ինչպիսի միջոցներ Նա կօգտագործի Իր նպատակներն իրականացնելու համար, այս առումով դա կարող է լինել ենթադրության առարկա, որը դուրս կգա շրջանակներից այն բանի, ինչը իրականում հայտնվել է: Այդ միջոցներից մեկը, ինչպես մենք գիտենք, կլինի հենց Մորմոնի Գիրքը:[12]

Ես ասում եմ իմ եղբայրներին, որ Վարդապետություն և Ուխտեր գիրքը պարունակում է երբևէ աշխարհին հայտնված ամենափառահեղ սկզբունքներից մի քանիսը, որոնք հայտնվել են ավելի լիովին, քան երբևէ հայտնվել էին նախկինում աշխարհին. և դա ի կատարումն այն խոստման, որը տրվել էր հին մարգարեներին, որ վերջին օրերին Տերը կհայտնի աշխարհին բաներ, որոնք թաքցվել էին աշխարհի հիմնադրումից ի վեր: Եվ Տերը հայտնեց դրանք Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով:[13]

Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսի աստվածայնությանը, քանի որ ավելի, քան երբևէ, ես ավելի եմ մոտեցել ստանալու այն գիտելիքը, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, և դա այս գրքում, Վարդապետություն և Ուխտերում Զոզեֆ Սմիթի վկայության միջոցով, որ նա տեսել է Նրան, որ լսել է Նրան, ստացել է հրահանգներ Նրանից, որ հնազանդվել է այդ հրահանգներին, և այսօր կանգնած է աշխարհի առաջ որպես վերջին մեծ, իրական, կենդանի վկա, վկայելով Քրիստոսի առաքելության աստվածայնության և մարդուն ժամանակավոր մահից և երկրորդ մահից փրկագնելու Նրա զորության մասին, երկրորդ մահ, որը գալիս է մարդու անձնական մեղքերի արդյունքում, երբ նա չի հնազանդվում Հիսուս Քրիստոսի ավետարանի արարողություններին:[14]

Ուսումնասիրեք կանոնիկ գրքերը, որպեսզի Աստծո խոսքի մասին գիտելիք ձեռք բերեք:

Ես շատ հաճախ նկատել եմ, որ սուրբ գրքերից հատվածներ կարդալիս Հոգին նոր լույս է սփռում իմ մտքում, և իմ հասկացողություն է բերում մտքեր և տեսակետներ, որոնք թվացել է, նորություն են ինձ համար, չնայած ես ծանոթ էի եղել այդ սուրբ գրություններին և շատ անգամներ էի կարդացել դրանք: Իրականում, գոյություն ունի ինչ-որ օրինաչափություն, որը, ինչպես ես նկատել եմ, ուղեկցում է Աստծո խոսքը կարդալիս. յուրաքանչյուր նոր ընթերցում ենթադրում է հոգու նորացում, մարդու հոգու վերածնում և, որքան հնարավոր է, մոտեցում լույսի, ճշմարտության, իմաստության, սիրո և գիտելիքի աղբյուրին: Այդ պատճառով, լավ է, երբ Վերջին Օրերի Սրբերը շատ հաճախ են կարդում Աստծո խոսքը, ինչպես որ այն գրված է Աստվածաշնչում, Մորմոնի Գրքում և Վարդապետություն և Ուխտերում, և ինչպես որ այն քննարկվել է նաև Եկեղեցու Ղեկավար Երեցների կողմից, նպատակ ունենալով պարզ դարձնել Աստծո օրենքները մարդկանց զավակների հասկացողության համար:

Եվ կարդալով Տիրոջ խոսքը, մենք պետք է հաշվի առնենք, թե ինչպես կարող ենք կիրառել այն մեր պայմաններում և իրավիճակում, և մենք պետք է խորհենք, թե արդյոք մենք կատարո՞ւմ ենք Աստվածաշնչի պահանջները, թե ոչ, և արդյոք ունե՞նք Հոգին մեր սրտերում, որն ուղեկցում է Տիրոջ աշխատանքին ու խոսքին: Մենք չպետք է կարդանք լոկ կարդալու համար, այլ պետք է կարդանք հոգով և հասկացողությամբ, որպեսզի օգուտ քաղենք և ճշմարտությունը հայտնվի մեր հասկացողությանը, և հնարավոր է այնքան տպավորվի մեր մտքում, որ երբեք չհեռանա մեզանից, այլ լինի մեզանում, ինչպես դեպի հավիտենական կյանք բխող կենդանի ջրի աղբյուր, և որը մեր սրտում մշտապես կլինի ճշմարտության, լույսի, ուրախության և խաղաղության անսպառ աղբյուր:[15]

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բոլոր անդամները պետք է հնարավորինս ծանոթ լինեն Նոր Կտակարանում գրված խոսքերին, հատկապես այն բաներին, որ խոսվել են Իր՝ Փրկչի կողմից և արձանագրվել Նրա Առաքյալների կողմից: Վերջին Օրերի Սրբերը պետք է ուշադիր կարդան Մորմոնի Գիրքը, ինչպես նաև Վարդապետություն և Ուխտերը: Սրանք Եկեղեցու կանոնիկ գրքերն են և պարունակում են ճշմարտություն, ոչ թե սուտ, դրանք պարզապես խոսքեր և մարդկանց կարծիքներ, վեպեր կամ վիպակներ և ենթադրություններ չեն, այլ

ճշմարտությունը, Աստծո խոսքը, քանզի Աստծո խոսքը ճշմարտություն է, և սրանք են այն բաները, որ մեր դուստրերը և մեր որդիները, մեր հայրերն ու մայրերը պետք է խորապես հասկանան: Եկեք իմանանք ճշմարտությունը, քանզի ճշմարտությունը կազատի մեզ սխալից, սնահավատությունից, սխալ ավանդույթներից, կեղծ գիտությունից կամ այսպես կոչված գիտությունից, մարդկանց անհեթեթ մտքերից և աշխարհի սին փիլիսոփայություններից: Եթե կարողանանք իմանալ ճշմարտությունը, ապա ազատ կլինենք այն սխալներից ու սխալի զորությունից, որն այնքան զորավոր է աշխարհում:

. . . Մենք ցանկանում ենք, որ մեր որդիներն ու դուստրերն իմանան Աստծո ճշմարտությունը և և ոչ թե՝ աշխարհի անհեթեթ գաղափարները, և մենք ցանկանում ենք, որ դուք ուսումնասիրեք այն գրքերը, որտեղից ձեռք կբերեք մեզ ուղղված Աստծո խոսքի գիտելիքը:

Մեր լավ մարդկանցից ոմանք կարդում են այսօր տպագրվող շատ գրքեր, հայտնի այսպես կոչված արկածային գրականություն, բայց նրանք ժամանակ չունեն կարդալու Տիրոջ Խոսքը: Այդ գրքերից շատերը հրաշալի գրքեր են, բայց հաճախ շատ արտահայտված մտքեր լոկ գեղեցիկ խոսքեր են, լավ կազմված նախադասություններ կամ զգացումների դրսևորումներ, որոնք նման են առանց արմատի ցողունի վրա ծաղկող ծաղիկների: Իսկական ճշմարտությունը դուք կարող եք իմանալ այն գրքերից, որոնք ընդունվել են որպես Եկեղեցու կանոնիկ գրքեր: Ես տեսնում եմ, որ մեր մարդկանցից շատերը ավելի գերադասում են կարդալ հանրաճանաչ հեղինակների գրքերը, քան Աստծո բաները: Նրանք Հիսուս Քրիստոսի Ավետարանի իրական էության մասին չգիտեն մեկ բան, նրանք մեկ բան չգիտեն կամ չեն ըմբռնում Քահանայության ծեսերի և կառավարման սկզբունքների մասին, որ Աստված հայտնել է մարդկանց զավակներին՝ հաստատելու համար Աստծո արքայությունը երկրի վրա: Նրանք ավելին գիտեն, այո, շատ ավելին վեպերի, քան Աստվածաշնչի, Մորմոնի Գրքի և Վարդապետություն և Ուխտերի մասին:[16]

Ապշեցուցիչ է, երբ լսում ենք, թե բյուրավոր հարցեր են շարունակ ուղարկվում Եկեղեցու Նախագահություն, և ղեկավար դիրքերում գտնվող իմ մյուս եղբայրներին, տեղեկացվելու համար ամենահասարակ բաների մասին, որոնք պարունակվում են Ավետարանում: Ժամանակ առ ժամանակ հարյուրավոր հարցեր, հաղորդագրություններ և նամակներ են ուղարկվում մեզ, որոնց հեղինակները ցանկանում են տեղեկացվել և հրահանգվել

այնպիսի հարցերի շուրջ, որոնք պարզորեն գրված են Աստծո հայտնություններում, որոնք գտնվում են Մորմոնի Գրքում, Վարդապետություն և Ուխտերում, Մեծագին Մարգարիտում, և Աստվածաշնչում: Թվում է, թե ամեն ոք, որ կարդա, կհասկանա:[17]

Մենք ունենք ճշմարտությունը ավետարանում: Եթե այդպես է, և ես վկայում եմ, որ դա այդպես է, ապա արժե, որ մեր բոլոր ջանքերը գործադրենք հասկանալու համար ճշմարտությունը, յուրաքանչյուրն իր համար, և հաղորդել այն հոգով և ուսուցանել մեր զավակներին. . . . Սա պետք է կատարվի ամեն օր, և տանը, ցուցումով, ուսուցանելով և օրինակով. . . . Նախքան քնելը կամ առօրյա աշխատանքին գնալը տաս րոպե տրամադրեք Աստվածաշնչից, Մորմոնի Գրքից, Վարդապետություն և Ուխտերից մեկ գլուխ կարդալուն: Սնուցեք ձեզ հոգևորով ինչպես տանը, այնպես էլ հասարակական վայրերում:[18]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպե՞ս են սուրբ գրքերը «առաջնորդում դեպի Քրիստոսի խաղաղարար մյուս հետևորդները» և հնարավորություն տալիս մեզ դառնալ կատարյալ: Ինչպե՞ս են դրանք օգնում ձեզ դառնալու Քրիստոսի խաղաղարար հետևորդ:
- Որո՞նք են այն «նպատակները, որի համար գրվել են [սուրբ գրությունները]»: Ինչպե՞ս են դրանք ամրապնդում մեր և Աստծո միջև կապը:
- Ինչպե՞ս եք ձեզ զգում սուրբ գրքերն ուսումնասիրելիս: Ստքի ինչպիսի՞ տրամադրվածությամբ պետք է ուսումնասիրենք սուրբ գրքերը:
- Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի, կամ Մեծագին Մարգարիտի ո՞ր հատվածներն են առավելագույնս զորացրել ձեր վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է: Ո՞ր հատվածներն են զորացրել Մարգարե Զոզեֆ Սմիթի աստվածային կանչի մասին ձեր վկայությունը:
- Ինչպե՞ս են Աստծո նպատակները հայտնվում այսօր Մորմոնի Գրքի ժողովուրդների հետնորդներին:
- Որո՞նք են «երբևէ աշխարհին հայտնված ամենափառահեղ սկզբունքներից» մի քանիսը, որոնք գրված են Մորմոնի Գրքում, Վարդապետություն և Ուխտերում, և Մեծագին Մարգարիտում: Ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել այդ սկզբունքները ձեր կյանքում:

- Ի՞նչ է նշանակում ուշադիր կարդալ սուրբ գրքերը: Ինչո՞ւ պետք է մենք ուշադիր կարդանք դրանք: Ինչպե՞ս ենք դուք լավ արդյունքների հասնում դրանք կարդալիս և ուսումնասիրելիս:
- Ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ մենք և մեր ընտանիքի անդամները թույլ չենք տալիս, որպեսզի ժողովրդականություն վայելող գրքերը, հեռուստատեսությունը և այլ զվարճանքի ձևերը դառնան ավելի կարևոր, քան սուրբ գրություններ ուսումնասիրելը:
- Ինչպիսի՞ արժեք ունի ամենօրյա սուրբ գրությունների անհատական և ընտանեկան ուսումնասիրությունը: Ինչպե՞ս է ձեզ կամ մյուսներին հաջողվում սուրբ գրությունների ուսումնասիրությունը ընդգրկել հոգսերով լի անձնական և ընտանեկան կյանք:

Հղումներ

1. See Edward H. Anderson, "A Biographical Sketch," in *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 529.
2. *Gospel Doctrine,* 493.
3. "Fiftieth Semi-Annual Conference," *Millennial Star,* 15 Nov. 1880, 724.
4. *Gospel Doctrine,* 45.
5. *Gospel Doctrine,* 128.
6. *Gospel Doctrine,* 45–46.
7. *Gospel Doctrine,* 3–4.
8. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 5:29.
9. *Gospel Doctrine,* 444–45; paragraphing altered.
10. *Gospel Doctrine,* 466.
11. *Gospel Doctrine,* 481.
12. *Gospel Doctrine,* 378.
13. *Gospel Doctrine,* 45.
14. *Gospel Doctrine,* 495.
15. *Deseret News: Semi-Weekly,* 6 Feb. 1893, 2; paragraphing added.
16. "Reading," *Young Woman's Journal,* Aug. 1917, 412–13.
17. In Conference Report, Apr. 1915, 138.
18. *Gospel Doctrine,* 301–2.

Հավատք՝ ամեն արդարության հիմքը

Հավատքն առ Հայր Աստված ու Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, մեր կրոնի առաջին սկզբունքն է և ամեն արդարության հիմքը:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Զոզեֆ Ֆ. Սմիթն իր հավատը կենտրոնացրել էր Երկնային Հոր, Տեր Հիսուս Քրիստոսի և ավետարանի պարզ ու հաստատուն ճշմարտությունների վրա: Երբ Զոզեֆ Ֆ. Սմիթը երիտասարդ էր, նրա հավատը մեծապես զորացավ իր մոր շնորհիվ, որը նվիրված էր իր պարտականությանն ու պատասխանատվությանը:

Նա ասել է. «Իմ ամենավառ հիշողությունը կապված է մանկության տարիներին տեղի ունեցած մի դեպքի հետ: Մայրս առանց ամուսին էր մնացել և պետք է հոգ տաներ մեր մեծ ընտանիքի մասին: Մի անգամ գարնանը [1849–1852թթ. միջև էր], երբ մենք բացեցինք մեր կարտոֆիլի հորը, նա իր տղաներին պատվիրեց հանել ամենալավ կարտոֆիլները և տարավ տասանորդի գրասենյակ: Տարվա այդ եղանակին կարտոֆիլը հազվագյուտ բան էր: Այն ժամանակ ես փոքր տղա էի և քշում էի կառքը: Երբ մենք մոտեցանք տասանորդի գրասենյակի աստիճաններին և պատրաստվում էինք բեռնաթափել կարտոֆիլը, գործավարներից մեկը դուրս եկավ և ասաց մայրիկիս. «Այրի Սմիթ, ամոթ է, որ դուք տասանորդ պետք է վճարեք» . . . Նա նախատեց մայրիկիս տասանորդ վճարելու համար, անվանելով նրան ամեն ինչ, սակայն ոչ իմաստուն կամ խելամիտ, և ասաց, որ կան ֆիզիկապես ավելի ամուր և աշխատունակ մարդիկ, որոնց տասանորդի գրասենյակն է օգնում: Մայրս շրջվեց դեպի նա և ասաց. «. . . Դուք ցանկանում եք մերժե՞լ իմ օրհնությունները: Եթե ես չվճարեմ իմ տասանորդը, ապա պետք է ենթադրեմ, որ Տերը ինձանից ետ կպահի իր օրհնությունները: Ես վճարում եմ իմ տասանորդը ոչ միայն այն պատճառով, որ այն Աստծո օրենքն է, այլ այդպիսով ես օրհնություններ եմ ակնկալում»:

Նախագահ Սմիթը բացատրում է. «Նա բարգավաճեց Աստծո օրենքներին հնազանդվելու շնորհիվ: . . . Այդ ժամանակ այդ այրու անունը գրվեց Տիրոջ օրենքների գրքում: Այդ այրին իրավունք ուներ օգտվելու Տիրոջ տան արտոնություններից: Ավետարանի ոչ մի արարողություն չի մերժվել նրա համար, քանի որ նա հնազանդ էր Աստծո օրենքներին և չթերացավ իր պարտականությունները կատարելիս»:[1]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Անհրաժեշտ է հավատք ունենալ առ Աստված և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը:

Մենք հավատում ենք Աստծուն, որը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հայրն է, երկնքի և երկրի Արարիչը, մեր հոգիների Հայրը: Մենք անվերապահորեն հավատում ենք նրան, մենք ընդունում ենք նրան մեր սրտում, մեր կրոնում, մեր իսկ էությամբ: Մենք գիտենք, որ նա սիրում է մեզ, և մենք ընդունում ենք նրան որպես մեր Հոգիների Հայր և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հայր:[2]

Առաջինը . . . անհրաժեշտ է հավատ ունենալ առ Աստված, հավատ, որը մեզ հայտնված կրոնի առաջին սկզբունքը և ամեն արդարության հիմքն է:

Հավատալ Աստծուն նշանակում է հավատալ, որ Նա կա, և «որ նա միակ գերագույն Կառավարիչն ու անկախ Էակն է, որում իրարից անկախ գոյակցում են ողջ լիությունը, կատարելությունը, ամեն լավ պարգև և սկզբունք», և որի վրա պետք է կենտրոնանա բոլոր մյուս բանական էակների հավատքը կյանքի և փրկության համար, ինչպես նաև, որ նա է բոլոր բաների մեծ Արարիչը, որ Նա ամենազոր է, ամենագետ և իր գործերով ու իր Հոգու զորությամբ ամենագթ [տե՛ս Joseph Smith, comp., *Lectures on Faith* (1985), 10]:

Անհրաժեշտ է ոչ միայն հավատք ունենալ առ Աստված, այլև առ Հիսուս Քրիստոսը, նրա Որդին, մարդկության Փրկիչը և Նոր Ուխտի Միջնորդը, և առ Սուրբ Հոգին, որը վկայում է Հոր և Որդու մասին, «որը նույնն է բոլոր ժամանակներում և հավիտյան»:[3]

Մեր հավատն առ Հիսուս Քրիստոս ընկած է մեր կրոնի հիմքում, մեղքերի թողության, մահից հետո վերհացման և մահից դեպի հավիտենական կյանք հարության համար մեր հույսի հիմքում: Մեր հավատը վարդապետությունների հանդեպ, որոնք վերականգնվել են Սարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով, հաստատում և



Նա հարություն առավ, ըստ Դել Փարսոնի։ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանում էր, որ «անհրաժեշտ է . . . հավատք ունենալ առ Աստված, . . . Հիսուս Քրիստոսը, նրա Որդին, մարդկության Փրկիչը և Նոր Ուխտի Միջնորդը. և առ Սուրբ Հոգին» (*Gospel Doctrine,* 100)։

զորացնում է մեզ, և աներկբայորեն կամ առանց կասկածի հաստատում է մեր հավատն ու համոզվածությունը առ Աստծո Որդու աստվածային առաքելությունը:[4]

Պողոսն ասում է մեզ, որ հավատքը հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է [տե՛ս Եբրայեցիս ԺԱ.1]: Հավատքն առ Աստված նշանակում է հավատալ, որ Նա կա, և իրեն խնդրողներին վարձահատույց կլինի: Հավատքն առ Աստված առաջնորդում է մարդկանց դեպի ամեն գիտելիք և ամեն լրիվություն և ամեն հավատարմություն նրանց առաջ: . . .

Մենք բոլորս մանուկներ ենք ավետարանի այս սկզբունքի մեջ: Մենք, այսինքն մեզանից լավագույնները, միայն սկսում ենք ինչ-որ բան իմանալ կյանքի և փրկության, զորության այս սկզբունքի մասին: Մեզ ասվել է, որ հավատքով են աշխարհներն արարվել: Մեզանից ո՞վ ունի հավատ, որ ոչնչից շատ բաներ ստեղծի: Մեր հավատն այնքան սահմանափակ է, որ մենք հազիվ ենք ապրում ըստ ավետարանի փոքրիկ սկզբունքների, որ Աստված հայտնել է մեզ, և որոնք անհրաժեշտ են հասարակության խաղաղության և վայելքի համար: Մեզ գրեթե չի բավականացնում հավատը, որպեսզի պահենք այդ փոքր սկզբունքները, որոնք հայտնվել են մեզ մեր ամենօրյա կյանքը ղեկավարելու համար: Տերը ստիպված է հանդուրժել մեզ և համբերատար լինել մեզ հետ, ուսուցանել մեզ մի քիչ այստեղից և մի քիչ այնտեղից, տող առ տող և ցուցում առ ցուցում, որպեսզի կարողանանք ի վերջո ձեռք բերել այն հավատը, որը մի անգամ տրվել էր Սրբերին, որով փակվել էր առյուծների բերանը և մեղմացել հնոցի թեժ կրակը: . . . Մեր մեծ Վարդապետը, Հիսուս Քրիստոսը, . . . փորձում է ուսուցանել մեզ կյանքի և փրկության սկզբունքները, որոնք զորավոր սկզբունքներ են, ուսուցանելով մարդկանց, թե ինչպես բարձրանալ խորը վշտից, կյանքի ամենացածր պայմաններից դեպի Աստծո փառքի և գիտելիքի բարձունքները:[5]

Ճշմարտությունն այն է, որ Աստծո յուրաքանչյուր որդի և դուստր նախնառաջ պետք է հավատք ունենա առ Աստված, հավատք, որ Նա կա, որ Նա արդար է, որ Նա ամենազոր է, որ Նա կառավարում է բոլոր բաները և որ Նրանում է կենում բոլոր կատարելությունը: Դուք, հնարավոր է, այս մասին գիտելիք չունենաք, սակայն պետք է ունենաք հավատ, որ սա ճշմարտություն է: Սա է հայտնված կրոնի առաջին սկզբունքը: Գրված է, որ առանց հավատքի անհնար է հաճո լինել Աստծուն: Նաև գրված է, որ արդարը հավատքից կապրի: Ուստի, ես ասում եմ՝ անհրաժեշտ է, որ բոլոր մարդիկ

հավատան Աստծուն, Արարչին և բոլոր բաների Ստեղծողին, երկնքի և երկրի Կառավարչին: Առանց հավատքի աշխարհները չէին կարող արարվել, առանց դրա նրանք չէին կարող գտնվել իրենց ուղեծրի վրա. սակայն հավատքով ամեն ինչ հնարավոր է Աստծո համար և մարդու համար:[6]

Աստված մարդուն տրված իր հայտնության մեջ իր խոսքն այնքան է պարզեցնում, որ ամենախոնարհ մարդիկ, առանց որևէ հատուկ կրթության, կարող են ունենալ մեծ հավատ, ըմբռնել ավետարանի ուսմունքները և անվրդով ուրախանալ իրենց կրոնական համոզմունքների համար:[7]

Ողջ աշխարհում ոչ մի մարդկային հավատ, ոչ մի մարդկային կրոն, կամ կրոնական կազմակերպություն երբևէ չի կարող բարձրանալ ճշմարտությունից վեր: Ճշմարտությունը պետք է լինի կրոնի հիմքը, այլապես այն զուր է և չի հասնի իր նպատակին: Ես ասում եմ, որ ճշմարտությունն ընկած է հիմքում՝ նրա խորքում և գագաթում, և այն ամբողջովին ներթափանցում է Տիրոջ այս մեծ աշխատանքի մեջ, որը հաստատվել է մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով:[8]

Հավատքն Աստծո պարգև է, որը հնազանդությամբ է ձեռք բերվում:

Հավատքը միշտ Աստծո պարգև է մարդկանց համար, որը, ինչպես և բոլոր մյուս օրհնությունները, հնազանդությամբ է ձեռք բերվում: Այս Եկեղեցու տղամարդը կամ կինը, որը փափագում է բարձրացնել իր հավատը հնարավորինս ամենաբարձր աստիճանի, կցանկանա Եկեղեցում պահել ամեն մի ծես և արարողություն՝ համաձայն Աստծո կամքին հնազանդվելու օրենքին: Այսպիսով, մարդը կատարյալ գիտելիք է ձեռք բերում աշխարհում Աստծո նպատակների վերաբերյալ: Զորացած հավատք՝ նշանակում է ավելացած ուժ, ու թեպետ մարդն այս կյանքում, հնարավոր է, առիթ չունենա գործածելու այն բոլոր ուժերը, որոնք գալիս են զորացած հավատքի արդյունքում, այդ ուժերը կարող են ամբողջությամբ գործածվել հավերժության, եթե ոչ՝ ժամանակի մեջ:[9]

Ասում են, որ հավատքը պարգև է Աստծուց, և դա այդպես է: Սակայն հավատքը չի գալիս առանց գործերի: Հավատքը չի գալիս առանց Աստծո պատվիրաններին հնազանդվելու:[10]

Եկեղեցու գլխավոր առաքելությունն է աշխարհին ուսուցանել Քրիստոսի ավետարանը: Այն իր մեջ կարևոր ուղերձ է պարունակում, որն անհրաժեշտ է հասցնել մարդկանց, որը վերաբերում է ոչ միայն մարդկանց հոգևոր փրկությանը, այլև նրանց աշխարհիկ բարեկեցությանը: Այն ոչ միայն ուսուցանում է, որ հավատքն անհրաժեշտ է, այլ նաև, որ գործեր են պահանջվում: Դա շատ լավ է, որ կա հավատք առ Հիսուս, սակայն հավատը պետք է կենդանի լինի, որը դրդում է հավատացյալին իր սեփական փրկությունը իրագործել և օգնել, որ ուրիշներն էլ նույն կերպ վարվեն:[11]

Մենք հավատում ենք, որ անհրաժեշտ է ապրել մեր կրոնի համաձայն շաբաթվա ամեն օրը, օրվա ամեն ժամը և ամեն պահը: Հավատալով և այդպես գործելով մենք կամրանանք մեր հավատքում, Աստծո Հոգին կավելանա մեր մեջ, մենք կառաջադիմենք գիտելիքի մեջ և ավելի լավ կկարողանանք պաշտպանել այն գործը, որի մեջ ներգրավված ենք մենք:[12]

Ես խնդրում եմ ձեզ, իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, որոնք զավակներ ունեն Սիոնում, և որոնց վրա ընկած է մեծ պատասխանատվություն, սովորեցրեք նրանց ավետարանի սկզբունքները, սովորեցրեք նրանց, որ հավատ ունենան առ Տեր Հիսուս Քրիստոսը, մկրտությունը մեղքերի թողության համար, երբ ութ տարեկան դառնան:[13]

Հավատքն առ Աստված կաջակցի մեզ դժվար պահերին:

Որպեսզի հաջողությամբ հաղթահարենք անհանգստությունը կապված այն հարցերի հետ, որոնց լուծումը ժամանակ է պահանջում, կարևոր է ունենալ բացարձակ հավատ և վստահություն առ Աստված և նրա գործի հաղթանակը:[14]

Ճշմարտության մասին խորը գիտելիքներ ունենալու ցանկությունը առաջնակարգ նշանակություն ունի: Նմանապես յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ պետք է խորապես համոզված լինի Աստծո արդարադատության մեջ և անվերապահորեն վստահ լինի և հավատա Նրա գոյությանն ու ողորմածությանը: Ավետարանը ճիշտ հասկանալու և նրա պատվիրանները պահելու համար բացարձակապես անհրաժեշտ է ճշմարտության մասին գիտելիքը: Թող յուրաքանչյուր ոք հարցնի ինքն իրեն, թե արդյոք իր հոգում այս փաստերի վերաբերյալ հաստատուն և անտարակույս համոզվածություն ո՞ւնի: Կարո՞ղ է արդյոք ձեզ հետ տեղի ունեցող ինչ-որ բան . . . փոխել ձեր հավատը Տիրոջ

նպատակների, բացարձակ արդարադատության ու ողորմածության, կամ Նրա ավետարանի փրկող զորության, Նրա փրկության ուղերձի հանդեպ: Եթե այո, ապա ձեր հավատն այնքան էլ խորը արմատներ չունի և համոզվելու խիստ կարիք ունեք:

Սուրբ գրությունները լի են այն մարդկանց օրինակներով, որոնց մեջ հիմնավորապես նստած էր անսասան հավատն առ Աստված: Յուրաքանչյուր պատանի կարիք ունի ուժի նման պատվարի, որին կարելի է հենվել:

Կորցնելով իր երկրային բոլոր ունեցվածքը, և անգամ ավելի ծանր կորուստ կրելով, երբ Հոբը զրկվեց իր զավակներից, նա անվերապահորեն վստահում էր Ամենազորին: . . .

Աբրահամի մեջ մենք տեսնում ենք Աստծո խոսքի հանդեպ նվիրվածության և, ի վերջո, Նրա մեծահոգությունից բաժին ունենալու հավատի մեկ այլ օրինակ: . . . Ամենամեծ փորձության մեջ, որ կարող է ունենալ հայրը, այն է՝ զոհաբերել իր որդուն, Աստծուն վստահելու Աբրահամի պատրաստակամության մեջ մենք տեսնում ենք խորը արմատացած հավատք և աներեր վստահություն հանդեպ Ամենազորը, որն ի վիճակի է և ցանկանում է կատարել Իր խոստումները, որքան էլ որ անհավանական թվա դա ամենածանր փորձության իրավիճակում: . . . Նման ձևով Նա կվարվի նրանց հետ, ովքեր վստահում են իրեն, քանզի այդ խոստումը բոլորի համար է:

Այսպիսի գիտելիքը, հավատքն ու վստահությունը հայտնված կրոնի կարևոր մասն են հանդիսանում: . . . Աբրահամը սովորեց մեծ ճշմարտությունը, որը մենք ևս պետք է դրոշմենք մեր սրտերում, որ Աստված արդար է, և մինչև վերջ կկատարի իր բոլոր խոստումները: Եվ ինչպես որ նա օրհնվեց, մենք նույնպես կօրհնվենք, ամենածանր փորձության պահերին, քանի որ նա վստահեց Տիրոջը և հնազանդվեց Նրա ձայնին: Ավելի ուշ նրան ասվել էր՝ այսպես է ասում Տերը. «Քեզ օրհնելով կօրհնեմ և, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզերքում լինող ավազի պես շատացնելով կշատացնեմ. և քո սերունդը իր թշնամիների դուռը կժառանգէ. և երկրի բոլոր ազգերը քո սերունդովը կօրհնուին»: [Ծննդոց ԻԲ.17–18:]

Այսօրվա իրավիճակը նույնն է. մինչև որ Սրբերը չունենան իրական գիտելիք, որ այն ուղին, որին հետևում են, ներդաշնակ է Աստծո կամքին, նրանք կթուլանան փորձության ժամանակ և կնվաղեն հալածանքներում: . . . Սակայն, ընդհակառակը, առ Աստված իրենց հոգում բռնկված վստահությամբ, ցանկացած

պայմաններում նրանք երջանիկ են կատարելով Նրա կամքը, քանզի անկասկած գիտեն, որ ի վերջո խոստացված օրհնություններն իրենցն են: Այսպես է աշխարհը հաղթվում, և փառքի պսակը ձեռք բերվում, որն Աստված պահել է նրանց համար, ովքեր սիրում, պատվում և հնազանդվում են Իրեն: . . .

Ոչ ոք չի կարող ձեռք բերել Աստծո օրհնությունների լրիվությունը, եթե առնվազն որոշ չափով չկարողանա մոտենալ Աստծո արդարադատության հանդեպ եղած այն հավատին, որը դրսևորվում է վերը նշված օրինակներում: Նա պետք է հաստատի իր հոգում համոզումն ու վստահությունը առ Աստծո արդարադատությունն ու ողորմածությունը: Դա պետք է անհատական ձևով արվի, ոչ ոք չի կարող դա կատարել ուրիշի փոխարեն: Այսպիսի դասերը պետք է ուսուցանվեն Սիոնի երիտասարդներին, որպեսզի նրանց գիտակցության մեջ ամրանա այն ճշմարտությունը, որը նրանց ազատ կդարձնի, և նրանք կկարողանան ամուր կանգնել հավատքում: Երբ նրանք միասին հավաքվեն իրենց ժողովներում, թող ներկայանան Աստծո առաջ, և թող նրանց հիշեցվի Նրա ողորմած պարգևների մասին, որոնք դրսևորվեցին Մորմոնի Գիրքն ի հայտ բերելիս, Կիրթլանդի, Սիոնի [Զաքսոն գավառ, Միսուրի], Նավուի դեպքերում, մեկնումի փորձության օրերին, և ամայի վայրերում: Դա նրա համար, որ նրանք կարողանան հաշվել Աստծո ողորմությունները. և տեսնեն, թե ինչպես են անցած տառապանքներն ու դառը փորձությունները վերածվում բարօրության Իր ժողովրդի համար, և այդպիսով նորացնեն իրենց ուխտերը, Աստծո մեծահոգության և ողորմածության հանդեպ արմատացած, անսասան համոզումով լի: Յուրաքանչյուր անհատ պետք է սովորի այս դասը, այն պետք է այնքան խորը արմատավորվի նրա հոգում, որ ոչինչ չկարողանա բաժանել նրան Աստծո սիրո մասին գիտելիքից, թեև մահը և դժոխքը կանգնեն նրա ճանապարհին: . . .

Աստված բարի է. Նրա խոստումները միշտ կատարվում են. Նրա բարությանն ու ողորմածությանն անվերապահորեն վստահելը ճիշտ սկզբունք է: Ուստի, եկեք վստահենք Նրան:[15]

Կան մարդիկ, որոնք սիրում են ասել, թե կանայք թույլ անոթներ են: Ես չեմ հավատում դրան: Ֆիզիկապես հնարավոր է, սակայն հոգեպես, բարոյապես, դավանանքով և հավատով, ո՞ր տղամարդը կհամեմատվի կնոջ հետ, եթե այդ կինը իսկապես համոզված է: Դանիելը հավատ ուներ, որպեսզի դիմանար առյուծների հորում, սակայն կանայք տեսել են, թե ինչպես են իրենց որդիներին կտոր-կտոր անում, և դիմացել են բոլոր

տանջանքներին, ինչպիսին որ կարող էր սատանայական դաժանությունը հնարել, քանի որ հավատացել են: Նրանք միշտ ավելի պատրաստակամորեն են զոհաբերություններ կատարում և հավասար են տղամարդկանց իրենց տոկունությամբ, բարեպաշտությամբ, բարոյականությամբ և հավատով:[16]

Որպեսզի ամուր կանգնեք ճնշող ընդդիմության դեմ, եթե արդեն ձեր ուժերի սահմանում կատարել եք ամեն բան, պետք է լինի հավատի քաջությունը: Հավատի քաջությունը առաջընթացի քաջությունն է: Մարդիկ, ովքեր ունեն այդ աստվածային արժանիքը, առաջ են գնում: Նրանց թույլ չի տրվում կանգնել, եթե նույնիսկ իրենք ցանկանան: Նրանք ոչ միայն լոկ իրենց ուժի և իմաստության ստեղծողն են, այլ ավելի բարձր օրենքի և աստվածային նպատակի գործիքներն են:[17]

Հավատքով մենք կարող ենք մտնել
Աստծո հանգստի մեջ:

Հին մարգարեները խոսում են «Աստծո հանգիստը մտնելու մասին» [տես Ալմա 12.34; ՎևՈ 84.23–24], ի՞նչ է դա նշանակում: Իմ կարծիքով, դա նշանակում է մտնել Աստծո գիտելիքի և սիրո մեջ, հավատալով Նրա նպատակին և Նրա ծրագրին այնքանով, որքանով գիտենք, որ մենք ճիշտ ենք, և որ մենք ուրիշ ոչինչ չենք փնտրում, որ մենք չենք տատանվի վարդապետության ամեն քամուց կամ մարդկանց խաբեությամբ, որ մոլորեցնեն խաբեության խորամանկությամբ: Մենք գիտենք, որ այս վարդապետությունը Աստծուց է, և մենք ոչ մեկին չենք հարցնում դրա մասին. մարդիկ կարող են իրենց կարծիքն ունենալ՝ իրենց մտքերն ու իրենց խենթ գաղափարները: Մարդը, որը հասել է առ Աստված հավատքի այն աստիճանին, որ բոլոր կասկածներն ու երկյուղը հեռացրել է իրենից, ապա նա մտել է «Աստծո հանգիստը»:[18]

Առանց Սուրբ Հոգու օգնության, ոչ ոք չի կարող իմանալ Աստծո կամքը, կամ որ Հիսուսը Քրիստոսն է՝ աշխարհի Քավիչը, կամ որ ուղին, որով գնում է, գործը, որը կատարում է, կամ որ իր հավատքը, ընդունելի են Աստծո համար, և այնպիսին են, որ նրա համար կապահովեն հավերժական կյանքի պարգևը, որը բոլոր պարգևներից մեծագույնն է:[19]

Ոչ ոք չի կարող ձեռք բերել հավերժական կյանքի պարգևը, եթե ցանկություն չունենա զոհաբերել աշխարհիկ բոլոր բաները, որպեսզի ձեռք բերի այն: Մենք չենք կարող ունենալ այն, քանի դեռ կապված կլինենք աշխարհիկ բաներին:

. . . Սակայն եթե մենք գանձեր դիզենք երկնքում, եթե ազատվենք այս աշխարհի բաների հանդեպ կապվածությունից և ասենք մեր Տեր Աստծուն. «Հայր, ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի», [տե՛ս Ղուկաս ԻԲ.42] այն ժամանակ Աստծո կամքը կլինի երկրի վրա, ինչպես երկնքում, և Աստծո արքայությունը իր զորությամբ և փառքով կհաստատվի երկրի վրա: Մեղքն ու սատանան կկապվեն և կարտաքսվեն երկրի վրայից, և դա չի լինի, մինչև որ մենք չհասնենք գիտակցության և հավատի այդպիսի աստիճանի:[20]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է հավատը: Ինչո՞ւ է հավատն առ Աստված և Հիսուս Քրիստոս հանդիսանում «մեր կրոնի հիմքը»:
- Ի՞նչ գիտենք Աստծո և Հիսուս Քրիստոսի մասին, որն օգնում է մեզ հավատ ունենալ նրանց հանդեպ: Ինչո՞ւ պետք է մեր հավատը հիմնված լինի ճշմարտության վրա: (Տե՛ս Ալմա 32.21:)
- Ինչպե՞ս է հավատք ձեռք բերվում: Ինչպե՞ս կարող ենք զորացնել մեր հավատքը: Ինչպիսի՞ն է հավատքի և գործերի միջև կապը:
- Ինչպե՞ս կարող ենք արդյունավետ ձևով օգնել մեր երեխաներին հավատք զարգացնել առ Հիսուս Քրիստոս:
- Որպեսզի դիմանանք դժվարին պահերին, ինչո՞ւ պետք է Վերջին Օրերի յուրաքանչյուր Սուրբ լիովին հավատ ունենա Տիրոջ «բացարձակ արդարադատության, ողորմածության և «Նրա ավետարանի փրկող զորության» հանդեպ:
- Ի՞նչ կարող ենք իմանալ հավատի մասին Աբրահամի, Հոբի և այս ժամանակաշրջանի առաջին ղեկավարների ու անդամների օրինակներից: Ինչպե՞ս է Տիրոջն ապավինելն ամրացնում և օրհնում ձեզ, երբ հանդիպում եք ամենադժվարին փորձություններին:
- Ինչո՞ւ է կարևոր մեզ համար իմանալ, որ այն ուղին, որին հետևում ենք, «ներդաշնակ է Աստծո կամքին»: Ինչպե՞ս կարող ենք իմանալ դա:
- Ի՞նչ է «հավատի քաջությունը» և ինչպես կարող է այն արդյունավետ դառնալ մեր ամենօրյա կյանքում:

- Ինչո՞ւ պետք է պատրաստ լինենք զոհաբերելու բոլոր աշխարհիկ բաները, որպեսզի հավերժական կյանքի պարգևը ձեռք բերենք։
- Ի՞նչ է նշանակում «մտնել Աստծո հանգստի մեջ։ Ինչպե՞ս կարող ենք մտնել այդ հանգստի մեջ։

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 228–29.
2. *Gospel Doctrine,* 138.
3. *Gospel Doctrine,* 100.
4. *Gospel Doctrine,* 478.
5. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:299–300; paragraphing added.
6. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 26 Sept. 1895, 609.
7. *Gospel Doctrine,* 9.
8. *Gospel Doctrine,* 1.
9. *Gospel Doctrine,* 212–13; paragraphing altered.
10. In Conference Report, Oct. 1903, 4.
11. *Gospel Doctrine,* 236.
12. *Gospel Doctrine,* 82.
13. *Gospel Doctrine,* 293–94.
14. *Gospel Doctrine,* 155.
15. "Editor's Table," *Improvement Era,* Nov. 1903, 53–56.
16. *Gospel Doctrine,* 352.
17. *Gospel Doctrine,* 119.
18. *Gospel Doctrine,* 58.
19. *Gospel Doctrine,* 101.
20. *Gospel Doctrine,* 261.

Ապաշխարության և մկրտության փառահեղ աշխատանքը

Ապաշխարությունը և մկրտությունը կարևոր դեր ունեն սեղեստիալ արքայության ժառանգները դառնալու համար:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Զոզեֆ Ֆ. Սմիթը մկրտվել է 1852թ. մայիսի 21-ին Սիթի Քրիք գետում Սոլթ Լեյք Սիթիի Տաճարային Հրապարակի հյուսիս-արևելյան անկյունից ոչ հեռու: Արարողությունը կատարվել է Առաջին Նախագահության անդամ և Զոզեֆի նահատակված հոր մոտ ընկերոջ Նախագահ Հեբեր Չ. Քիմբալի կողմից: Նկարագրելով այդ օրը, Զոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. «Ես իմ հոգում զգացի, որ եթե ես մեղանչել էի, իսկ ես անշուշտ առանց մեղքի չէի, ապա ներվել եմ. որ ես իրոք մաքրվել եմ մեղքերից. իմ սիրտը լի էր զգացմունքներով, և զգում էի, որ ամենափոքր միջատին անգամ չեմ տրորի: Ես զգում էի, որ ցանկանում եմ բարիք գործել ամենուր, բոլորի համար և ամեն ինչում: Ես զգում էի նոր կյանքը, նոր ցանկությունները՝ կատարել այն, ինչը ճշմարիտ է: Իմ հոգում չէր մնացել չարին ձգտելու ցանկության ոչ մի մասնիկ: Ճիշտ է ես փոքր տղա էի, երբ մկրտվեցի, սակայն այդ զգացումն էր, որ ներգործեց ինձ վրա, և ես գիտեմ, որ դա Աստծուց էր: Այն ինձ համար եղել է և միշտ կմնա Տիրոջ կողմից ընդունված լինելու կենդանի վկայություն»:[1]

Իր կյանքի ընթացքում, Նախագահ Սմիթը ձգտել է պատվել իր մկրտության ժամանակ կապած ուխտերը: Նա սովորեցնում էր, որ մեղքերից ապաշխարելն էական դեր ունի այդ ուխտերը պահելու համար. «Ես հավատում եմ ապաշխարության սկզբունքին, քանի որ ես փորձել եմ այն և գիտեմ, որ այն ճշմարիտ է: Եթե ինչ-որ վատ պահի ես խոսքով կամ արարքով վիրավորել եմ իմ եղբորը, ապա երբեք չեմ կարողացել բավարարվել կամ ազատվել գերության ինչ-որ աստճանից, մինչև որ չեմ գնացել այդ եղբոր

մոտ, որի հետ վատ եմ վարվել, և ապաշխարել իմ մեղքից ու հարթել նրա հետ իմ հարաբերությունները: Այդ ժամանակ բեռը թեթևացել է, և ես անմիջապես ունեցել եմ մեղքից ապաշխարելու հաճելի զգացումը»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Ապաշխարությունը և մկրտությունը ավետարանի ճշմարիտ սկզբունքներն են:

Ցանկանում եմ ասել ձեզ, որ ավետարանի սկզբունքները միշտ ճշմարիտ են՝ հավատն առ Աստված, մեղքից ապաշխարելը, Աստծո իշխանությամբ մեղքերի թողության համար մկրտությունը և ձեռնադրմամբ Սուրբ Հոգին ստանալը: Այս սկզբունքները միշտ ճշմարիտ են և միշտ առանց բացառության անհրաժեշտ են մարդկանց զավակների փրկության համար, անկախ նրանից, թե ովքեր են նրանք և որտեղ են գտնվում: . . . Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա չի կարող երկնային արքայությունը մտնել: Այս սկզբունքները պարտադիր են, քանզի Աստված է հայտնել դրանք: Ոչ միայն Քրիստոսն է իր իսկ ձայնով հայտնել դրանք և նրա աշակերտները սերնդից սերունդ հին ժամանակներում, այլ այս վերջին օրերին նրանք վերցրել են այդ նույն վկայությունը և հայտնել այդ մասին աշխարհին: Դրանք ճշմարիտ են այսօր, ինչպես ճշմարիտ էին այն ժամանակ, և մենք պետք է հնազանդվենք այդ ամենին:[3]

Մենք պետք է հնազանդվենք Հոր կամքին: Ես հաճախ եմ լսում, թե ինչպես են մարդիկ ասում. «Այն ամենը, ինչ պահանջվում է այս աշխարհի մարդուց՝ լինել ազնիվ և արդար» և այդպիսի մարդը ձեռք կբերի վեհացում ու փառք: Սակայն նրանք, ովքեր ասում են սա, չեն հիշում Տիրոջ խոսքերը, որ ասում է. «Եթե մեկը վերստին չծնուի՝ կարող չէ Աստուծոյ արքայությունը տեսնել»: [Տե՛ս Հովհաննես Գ.3:] . . . Կարևոր չէ, թե որքան բարի, պատվավոր, ազնիվ է մարդը, նա պետք է անցնի այդ դռան միջով, որպեսզի Աստծո արքայություն մտնի: Տերն է պահանջում դա: Ուստի, եթե նա հրաժարվում կամ մերժում է, որ անցնի այդ ոչխարների գավթի դռնով, նա երբեք չի կարող դառնալ Աստծո ժառանգը և ժառանգակից Հիսուս Քրիստոսի հետ:[4]

Մեղից ապաշխարելը հավերժական սկզբունք է, և այնքան անհրաժեշտ է իր տեղում, և այնքանով է Հիսուս Քրիստոսի ավետարանի անբաժանելի մասը, որքանով «մի սպանիր», կամ «բացի ինձանից ուրիշ աստվածներ չունենաս» պատվիրանները:

Մեղքերի թողության համար իշխանություն ունեցողի կողմից կատարված մկրտությունը հավերժական սկզբունք է, քանզի Աստված է հորինել և պատվիրել դա, և Ինքը Քրիստոսն անգամ ազատված չէր դրանից: Նա հնազանդվեց այդ օրենքին, որպեսզի արդարության օրենքը կատարվի:[5]

Տերը Զոզեֆ Սմիթի միջոցով ուսուցանել է՝ ապաշխարություն մեղքերից, ապա մկրտություն Քրիստոսի հետ ընկղմամբ, Նրա հետ թաղվելով ջրի մեջ, հեղուկ գերեզմանի մեջ, և կրկին հեղուկ գերեզմանից դուրս գալով, որը նման է մահից դեպի կյանք Նրա հարություն առնելուն, ընկղմամբ մկրտություն և Սուրբ Հոգով մկրտություն՝ ձեռնադրմամբ: Այս ամենն անհրաժեշտ է մարդկանց զավակների փրկության համար:[6]

Միայն ճշմարիտ ապաշխարությունն է ընդունելի Աստծո համար:

Մարդիկ կարող են Աստծո արքայության մեջ փրկվել և համբարձվել միայն արդարությամբ, ուստի մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից, և լույսի մեջ քայլենք, ինչպես Քրիստոսն է լույսի մեջ, որ նրա արյունը մաքրագործի մեզ բոլոր մեղքերից, և որպեսզի մենք կարողանանք հաղորդակցվել Աստծո հետ և ստանալ նրա փառքից ու վեհացումից:[7]

Արդյո՞ք ապաշխարությունը դա տառապանք է՝ կատարած սխալ քայլերի համար: Այո, սակայն սա՞ է բոլորը: Իհարկե, ոչ: Ճշմարիտ ապաշխարությունն է միայն ընդունելի Աստծո կողմից, դրանից ցածր ոչինչ չի կարող նպատակին ծառայել: Այդ դեպքում ի՞նչ է ճշմարիտ ապաշխարությունը: Ճշմարիտ ապաշխարությունը ոչ միայն տառապանք է կատարած մեղքերի համար, և խոնարհ զղջում ու ափսոսանք Աստծո առաջ, այլ դրանցից հեռանալու անհրաժեշտություն, պետք է բոլոր չար գործերը դադարեցնել, կյանքը արմատապես վերափոխել, շրջվել չարից դեպի բարին, անառակությունից դեպի առաքինություն, խավարից դեպի լույս: Ոչ միայն դա, այլ հնարավորինս հատուցել կատարած բոլոր սխալների համար, վճարել մեր պարտքերը և վերադարձնել Աստծուն և մարդուն մեր կողմից իրենց նախասահմանված իրավունքները: Սա է ճշմարիտ ապաշխարությունը, և պահանջվում է գործադրել մարմնի և մտքի կամքն ու բոլոր ուժերը, ավարտելու համար ապաշխարության այս փառահեղ աշխատանքը: Միայն այդ դեպքում Աստված կընդունի այն:[8]

Խոսքերով արտահայտված ոչ մի ապաշխարություն չի ընդունվում Աստծո կողմից, եթե այն գործով չի կատարվում: Մենք պետք է գործով ցույց տանք մեր հավատը. մենք պետք է *կատարենք*, ոչ թե *ձևացնենք*, թե կատարում ենք:[9]

Ո՞վ կարող է ասել իր սրտում, Աստծո և մարդու ներկայությամբ. «Ես իսկապես ապաշխարել եմ իմ բոլոր մեղքերից»: . . . Ես շատ թուլություններ և անկատարություններ ունեմ: Ես այնքան թուլություններ ունեմ, որքան ձեզանից շատերը, և ես չգիտեմ, թե ինչ ավելի շատ ունեմ, քան ձեզանից շատերը: . . . Ես դեռևս չեմ կարողացել ապրել ըստ Հիսուս Քրիստոսի ավետարանի երկրորդ սկզբունքի և պատվել այն, և ես կցանկանայի տեսնել այն մարդուն, որի մոտ ստացվում է դա: Ես կցանկանայի տեսնել մարդկանց այն քարոզչին, որին դա հաջողվում է: Սակայն ես փորձում եմ, ես ցանկանում եմ, որ դուք հասկանաք, իմ եղբայրներ և քույրեր, որ ես դեռևս փորձում եմ»:[10]

Դուք չեք կարող մարդասպանին, . . . շնացողին, խաբեբային, կամ նրան, որն իր կյանքում ամեն տեսակի նողկալի բաներ է կատարել, ուղղակիորեն ավետարանի որևէ արարողություն կատարելով մաքրել նրան մեղքից և ներս թողնել Աստծո ներկայություն: Աստված նմանատիպ ծրագիր չի հաստատել, և հնարավոր չէ դա անել: Նա ասել է՝ դուք պետք է ապաշխարեք ձեր մեղքերից: Ամբարիշտները պետք է ապաշխարեն իրենց ամբարշտությունից: Նրանք, ովքեր կմահանան գիտելիք չունենալով ավետարանի մասին, պետք է գան այդ գիտելիքին, և նրանք, ովքեր մեղանչում են լույսի դեմ, նախքան երբևէ կրկին դեպի այն վերադառնալը, պետք է ամենավերջին կոպեկը վճարեն իրենց զանցանքների և ավետարանից հեռանալու համար: Մի՛ մոռացեք դա: Դա երբեք մի՛ մոռացեք, դո՛ւք, Իսրայելի երեցներ, ոչ էլ, դո՛ւք, Իսրայելի մայրեր: Իսկ երբ փորձեք փրկել ապրողներին, թե մեռածներին, հիշեք, որ դուք կարող եք դա անել միայն այն պայմանով, եթե նրանք ապաշխարեն և ընդունեն կյանքի ծրագիրը:[11]

Եկել է հաշտեցման ժամանակը . . . այնպես որ պետք է . . . Տիրոջից աղերսենք ապաշխարության ոգին, և ձեռք բերելով այն, հետևենք նրա հուշումներին, որպեսզի խոնարհեցնելով մեզ Նրա առաջ և միմյանցից ներում փնտրելով, գթություն և մեծահոգություն դրսևորենք նրանց հանդեպ, ովքեր ցանկանում են ունենալ մեր ներումը, որը մենք խնդրում ենք և ակնկալում Երկնքից:[12]

Քանի դեռ գոյություն ունի կյանք, գոյություն ունի հույս, և քանի դեռ գոյություն ունի ապաշխարություն, գոյություն ունի ներում, և

եթե գոյություն ունի ներում, գոյություն ունի աճ և զարգացում, մինչև որ ձեռք բերենք այս սկզբունքների մասին լիակատար գիտելիք, որը կբարձրացնի, կփրկի և կպատրաստի մեզ՝ մտնելու Հայր Աստծո ներկայությունը:[13]

Մկրտությամբ մենք մտնում ենք Եկեղեցի և Աստծո արքայություն:

Նման ձևով ապաշխարելուց հետո հաջորդ անհրաժեշտ քայլը մկրտությունն է, որն ավետարանի կարևոր սկզբունքն է: Ոչ ոք չի կարող մտնել ավետարանի ուխտի մեջ առանց դրա: Այն Քրիստոսի Եկեղեցու դուռն է, մենք չենք կարող այլ կերպ այնտեղ ոտք դնել, քանզի Քրիստոսն ասել է. ջուր «ցողելը» կամ «լցնելը» մկրտություն չէ: Մկրտություն նշանակում է ջրի մեջ ընկղմում, և պետք է կատարվի նրա կողմից, որն իշխանություն ունի, Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Մկրտությունն առանց աստվածային իշխանության օրինական չի համարվում: Այն խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի թաղվելն ու հարություն առնելը, և պետք է դրա նմանությամբ կատարվի նրա կողմից, ով լիազորված է Աստծո կողմից, և կատարվի նկարագրված ձևով, այլապես այն օրինական չի լինի և չի ընդունվի Նրա կողմից, ոչ էլ կբերի մեղքերի թողություն, նպատակ, որի համար նախատեսված է այն: Այլ ով հավատում է, իսկապես ապաշխարում է և «թաղվում նրա հետ մկրտությունումը», նրա կողմից, որն աստվածային իշխանություն ունի, կստանա մեղքերի թողություն և ձեռնադրմամբ կարժանանա Սուրբ Հոգու պարգևին:[14]

Մենք մկրտվում ենք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Մենք ընդունվում ենք Եկեղեցի և Աստծո Արքայություն Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, և մենք երկրպագում ենք Հորը: Մենք ձգտում ենք հնազանդվել Որդուն և հետևել նրա օրինակին:[15]

Վերջին Օրերի Սրբերի պարտականությունն է՝ ճշմարտությունն ուսուցանել իրենց զավակներին, կրթել երեխաներին իրենց ճանապարհի համեմատ, սովորեցնել նրանց ավետարանի առաջին սկզբունքները, մկրտության անհրաժեշտությունը՝ մեղքերի թողության և Քրիստոսի Եկեղեցու անդամ դառնալու համար:[16]

Ընկղմամբ մկրտությունը մեղքերի թողության համար, նրա կողմից, ով իշխանություն ունի, ճշմարիտ սկզբունք է, քանի որ Քրիստոսն է սովորեցրել դա: Քրիստոսը հնազանդվեց դրան և ոչ մի բանում չթերացավ, որպեսզի կատարեր այն՝ ոչ թե այն պատճառով, որ Ինքը մեղավոր էր և մկրտվելու կարիք ուներ մեղքերի

թողության համար, այլ Նա պետք է կատարեր դա միայն այն պատճառով, որ ամեն արդարություն կատարի, այսինքն՝ օրենքը կատարի:[17]

Հիսուսն Ինքը կատարեց մկրտության արարողությունը. նա սահմանեց Տիրոջ ընթրիքի հաղորդությունը և այն պահելու կարգը: Նա կատարեց այլ ծեսեր, որոնք նա կարևոր էր համարում մարդու փրկության համար: Նիկոդեմոսի դեպքում Նա այնքան կարևորեց մկրտությունը, որ ջրից և Հոգուց ծնվելն էական համարեց մարդու փրկության համար [տե՛ս Հովհաննես Գ.1–5]:[18]

Թվում է մեր որոշ մարդկանց մեջ Սուրբ Քահանայության որոշ արարողությունների սրբության վերաբերյալ անհարիր պատկերացում գոյություն ունի: Իրականում, մեր մեջ համապատասխան պաշտոնում ծառայողներին անհարիր է . . . ցուցադրական և աշխարհիկ հանդիսավորությունը . . . , իսկ այն փաստը, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ունի Քահանայություն, որը բավարար է Եկեղեցում համապատասխան իշխանությամբ ցանկացած արարողություն կատարելու համար, դարձել է գերագույն կարևորության իրադարձություն: Նման որևէ արարողություն կատարելիս նա, ով կատարում է այն, խոսում կամ գործում է ոչ թե իրենով կամ իր անձնական իշխանությամբ, այլ ըստ իր կարգման և նշանակման՝ որպես երկնային զորությունների ներկայացուցիչ: Մենք . . . մկրտության արարողությունը չենք վերածում թատերական ներկայացման, այլ Քրիստոսի Եկեղեցում հաստատված կարգի պարզությունը պետք է ավելի շուտ ընդգծի, քան նսեմացնի որոշ արարողությունների սրբազան բնույթը:[19]

Աստված կբարձրացնի նրանց, ովքեր ապաշխարում են, մկրտվում են և շարունակում հավատարիմ մնալ:

Կան օրհնություններ, որոնք վերաբերում են Հիսուս Քրիստոսի ավետարանին և գալիք աշխարհին, որոնք չեն կարող երաշխավորվել անձնական ներգործությամբ, ոչ էլ գնվել դրամով, և որոնք ոչ ոք չի կարող ձեռք բերել իր սեփական մտավոր կարողությամբ կամ իմաստությամբ, այլ միայն տրված որոշակի արարողությունների, օրենքների կամ պատվիրանների միջոցով: Իմ կարծիքով լավ է, որ Վերջին Օրերի Սրբերը շարունակ մտքում հիշեն, որ ավետարանի անգին օրհնությունները շնորհվել են իրենց՝ իրենց հավատքի շնորհիվ, որ մեղքերի թողություն ձեռք է բերվել մկրտությամբ և ապաշխարությամբ, և որ միայն հավատարիմ մնալով

կարող են պահել հավերժական կյանքին վերաբերող պարգևներն ու օրհնությունները:[20]

Այդ ժամանակ, մենք ասում ենք ձեզ՝ նրանց, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերից, ովքեր թաղվել են Քրիստոսի հետ մկրտության ժամանակ, ովքեր հեղուկ գերեզմանից դուրս են եկել դեպի նորոգված կյանք, ծնվել են ջրից և Հոգուց, և ովքեր դարձել են Հոր զավակները, Աստծո ժառանգները և ժառանգակիցները Հիսուս Քրիստոսի հետ, մենք ասում ենք ձեզ՝ եթե պահեք Աստծո օրենքները և դադարեք չարիք գործելուց, . . . և հավատաք Աստծուն, հավատաք ճշմարտությանը և ընդունեք այն, լինեք ազնիվ Աստծո և մարդու հանդեպ, այն ժամանակ դուք կհաստատվեք վերևում և Աստված կդնի ձեզ գլխավերևում, և այնքան հաստատ, որքան կպահեք այդ պատվիրանները: Ովքեր, որ կպահեն Աստծո պատվիրանները, լինեք դուք, թե ուրիշները, նրանք կբարձրանան և չեն ընկնի, կառաջնորդեն և չեն հետևի, կգնան վեր և ոչ թե վար: Աստված կբարձրացնի և կմեծարի նրանց երկրի ազգերի առաջ, և նա իր հավանության կնիքը կդնի նրանց վրա՝ իրենը կոչելով նրանց: Սա է իմ վկայությունը ձեզ:[21]

Սա Հիսուս Քրիստոսի ավետարանն է, ճանաչելու համար միակ ճշմարիտ և կենդանի Աստծուն և Նրա Որդուն, որին Նա աշխարհ ուղարկեց, գիտելիք, որը գալիս է Նրա բոլոր պատվիրաններին հնազանդվելու, հավատքի, մեղքերից ապաշխարելու, մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտվելու, ոչ թե մարդու կամքով, այլ աստվածային իշխանությամբ Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ ստանալու արդյունքում: Հետևաբար, սա է Հիսուս Քրիստոսի ավետարանը, որը դեպի փրկություն տանող Աստծո զորությունն է՝ հնազանդվել ճշմարտությանը, ընդունել կարգը, որն Աստված հաստատել է իր տանը, քանզի Աստծո տունը կարգուկանոնի տուն է և ոչ թե անկարգության տուն:[22]

Մենք վկայում ենք, որ Աստծուց մարդուն բաժանող անջրպետը հաղթահարվել է, որ Տերը կրկին հաղորդում է Իր կամքը մարդուն: «Սակայն»,- կասի որևէ մեկը, -«ինչպե՞ս կարող ենք իմանալ այս բաները: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ դուք խաբված չեք»: Նրանց բոլորին մենք ասում ենք՝ ապաշխարեք ձեր մեղքերից սրտի անկեղծությամբ, ապա առաջ գնացեք և մկրտվեք, և ձեռնադրվեք Սուրբ Հոգու պարգևի համար, և այդ հոգին կվկայի ձեզ, որ մեր վկայությունը ճշմարիտ է, և դուք մեզ պես կդառնաք դրա վկան և կկարողանաք համարձակ կանգնել և վկայել աշխարհին, ինչպես մենք ենք վկայում:[23]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է «ճշմարիտ ապաշխարությունը»: Ինչո՞ւ է մկրտությանը նախորդում ապաշխարությունը:
- Ինչպե՞ս է ներգործում մեզ վրա Աստծո օրենքին չհնազանդվելը: Ինչո՞ւ է ավելի լավ հնազանդվել Աստծո օրենքին, քան մեղանչել հետագայում ապաշխարելու միտումով:
- Ինչպե՞ս է ապաշխարության սկզբունքը մեզ հույս պարգևում: (Տե՛ս նաև Մորոնի 7.41:) Ինչո՞ւ պետք է ապաշխարությանը դիտել որպես «աճի և զարգացման հնարավորություն»:
- Ի՞նչ եք զգում իմանալով, որ ինչ-որ մեկը լիազորված Հիսուս Քրիստոսի կողմից մկրտում է մեզ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով (Տես նաև ՎևՈ 20.73:) Ի՞նչ եք զգացել մկրտվելիս կամ երբ ներկա եք եղել մեկ այլ անձնավորության մկրտությանը:
- Ինչո՞ւ է մկրտելու քահանայության իշխանությունն ավելի կարևոր մկրտության արարողության համար, քան որևէ այլ «ցուցադրական և աշխարիկ հանդիսավորություն»: Ինչպե՞ս կարելի է պահպանել և պատվել մկրտության արարողության պարզությունը:
- Ապաշխարելով և մկրտվելով ի՞նչ գիտելիք ու օրհնություններ եք ստացել: Ինչպե՞ս կարող եք պահել այդ օրհնությունները:
- Ինչպիսի՞ ուխտեր ենք կապում մկրտվելիս: (Տես նաև Մոսիա 18.8–10; ՎևՈ 20.37:) Ձեր մկրտությունից հետո ինչպե՞ս եք պատվում Փրկչի հետ կապած ձեր ուխտերը:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 96.
2. *Deseret News: Semi-Weekly,* 3 Jan. 1893, 2.
3. *Gospel Doctrine,* 3.
4. "The Gospel in Precept and Example," *Millennial Star,* 15 Mar. 1906, 162.
5. *Gospel Doctrine,* 11–12.
6. In Conference Report, Oct. 1911, 6.
7. *Gospel Doctrine,* 250–51.
8. *Gospel Doctrine,* 100–101.
9. *Deseret Evening News,* 31 Dec. 1870, 2.
10. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:300.
11. *Gospel Doctrine,* 95.
12. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 3:243.
13. *Gospel Doctrine,* 27–28.
14. *Gospel Doctrine,* 101.
15. *Gospel Doctrine,* 139.
16. *Gospel Doctrine,* 291.
17. In Conference Report, Apr. 1912, 9.
18. *Gospel Doctrine,* 212.
19. *Gospel Doctrine,* 142–43.
20. *Gospel Doctrine,* 48–49.
21. *Gospel Doctrine,* 312.
22. In *Messages of the First Presidency,* 5:9.
23. *Deseret News: Semi-Weekly,* 1 Dec. 1868, 2.

Սուրբ Հոգին

Սուրբ Հոգին վկայում է Հոր և Որդու մասին և գործում որպես դեպի ամեն ճշմարտություն առաջնորդող հավատարիմ ուղեկից։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1854թ. ապրիլին Եկեղեցու գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Բրիգամ Յանգը կանչեց Զոզեֆ Ֆ. Սմիթին ծառայելու Սենդվիչ (Հավայան) Կղզիներում։ Զոզեֆը 15 տարեկան էր։ Նրա մայրը վերջերս էր մահացել՝ թողնելով նրան որբ։ Այդ ժամանակներում գրված նրա օրագիրը ցույց է տալիս, որ նա սովորում էր ապավինել Սուրբ Հոգուն՝ սփոփանքի և առաջնորդության համար։

1856թ. փետրվարի 8-ին Հավայան կղզիների Սրբերի հետ զրուցելուց հետո նա գրել է. «Հոգու նշանակալի հոսք էր զգացվում»։ 1856թ. մարտի 19-ին մեկ այլ հանձնարարության կատարումից հետո, նա գրել է. «Առաջին անգամ [Սրբերը] արտասվեցին»։ Մարտի 30-ին նա գրել է. «Այն ժամանակ ես վեր կացա և փորձեցի խոսել, սակայն արցունքները թույլ չէին տալիս։ . . . Սրբերը միացան ինձ կարճատև և սրտառուչ արցունքներ թափելով»։ Նույն տարվա հունիսի 29-ի նրա գրառումը ցույց է տալիս, որ նա սկսում էր զգալ իր ծառայության ողջ ուժը. «Աստծո հոգին ուղեկցում էր մեզ ողջ օրը։ . . . Ես ուրախանում էի, քանզի Հոգին վկայում էր ինձ Տիրոջ գործի մասին»։[1]

Ավելի ուշ, որպես Տասներկուսի Քվորումի անդամ, Զոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. «Իմ առաջին միսիայի ժամանակ ես ինքս որոշ բաներ սովորեցի։ Մինչ այդ ես հավատում էի Աստծո ծառաների վկայություններին, որոնց ես լսել էի ելույթ ունենալիս և քարոզելիս, ինչպես նաև ամենաբարի և քնքուշ մայրիկիցս ստացած խրատներին և այն ամենին, ինչ հասկանում էի Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, Աստվածաշունչը կարդալիս։ Սակայն ծառայության մեջ, որտեղ լրջորեն տքնում էի, Սուրբ Հոգու ոգեշնչմամբ սկսեցի ավելի խորն ըմբռնել այն, ինչ կարդացել էի և

սովորեցվել։ Այսպիսով այդ ամենն իմ գիտակցության մեջ դարձան անառարկելի փաստեր, որոնցում ես լիովին համոզված էի, ինչպես և այն բանում, որ ես գոյություն ունեի»։[2]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սուրբ Հոգու պարգևը հաստատուն վկայություն է։

Սուրբ Հոգին ոգեղեն անձնավորություն է, այն Սուրբ Երրորդության, Աստվածագլխի երրորդ անձնավորությունն է։ Սուրբ Հոգին պարգևելը կամ նվիրելը՝ մարդուն այն շնորհելու հեղինակավոր գործողություն է։ Սուրբ Հոգին անձնապես կարող է այցելել մարդուն և կայցելի նրանց, ովքեր արժանի են, և կարող է վկայել նրանց հոգուն Աստծո և Քրիստոսի մասին, սակայն կարող է չմնալ նրանց հետ [տես ՎԵՈՒ 130.22–23]։[3]

«Սուրբ Հոգու պարգևը», հատուկ օրհնություն է, որը կնքվում է Հիսուս Քրիստոսին հավատացող մկրտված և ապաշխարած մարդկանց վրա և այն «հաստատուն վկայություն է»։ Աստծո հոգին կարելի է վայելել որպես ժամանակավոր ազդեցություն, որի հետևանքով աստվածային լույսն ու զորությունը գալիս են մարդկանց՝ հատուկ նպատակներով ու առիթներով։ Սակայն Սուրբ Հոգու պարգևը, որը . . . շնորհվում է հաստատման ժամանակ, մշտական վկայություն է և ավելի բարձր օժտում։[4]

Ինչպե՞ս պետք է մենք ձեռք բերենք Սուրբ Հոգին։ Եղանակը կամ ձևը պարզորոշ նշվում է։ Մեզ ասվում է, որ պետք է ունենանք հավատ առ Աստված, հավատանք, որ Նա կա, և որ Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի, ապաշխարենք մեր մեղքերից, խեղդենք մեր կրքերը, անմտություններն ու անպատշաճությունները, մեր բոլոր գործերում միմյանց հետ լինենք առաքինի, ազնիվ և շիտակ, մտնենք Աստծո հետ ուխտի մեջ, հետևենք ճշմարիտ սկզբունքներին և պահենք պատվիրանները, որ Նա տվել է մեզ, այնուհետև մկրտվենք մեր մեղքերի թողության համար, իշխանություն ունեցողի կողմից։ Իսկ երբ ավետարանի այս արարողությունը կատարվում է, մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրվելով նրանց կողմից, ովքեր կրում են Քահանայության իշխանությունը։ Այդպիսով Հոգին և Աստծո զորությունը՝ Սխիթարիչը, ջրի աղբյուր կլինի մեր մեջ և հավիտենական կյանքի համար կբխի։ Նա վկայություն կբերի Հոր մասին, վկայելով Հիսուսի մասին, և «կվերցնի Հորից ճշմարիտ բաները և կհայտնի դրանք մեզ», ամրացնելով մեր հավատը, հաստատելով

մեզ ճշմարտության մեջ, որ չլինենք այլևս երերված և տատանված վարդապետության ամեն քամուց, այլ «իմանանք վարդապետության համար», թե արդյոք այն Աստծո՞ւց է, թե մարդուց [տե՛ս Եփեսացիս Գ.14; Հովհաննես Է.17]:[5]

Սուրբ Հոգին, որը վկայում է Հոր և Որդու մասին, որը վերցնում է Հորից ճշմարիտ բաները և ցույց տալիս դրանք մարդկանց, որը վկայում է Հիսուս Քրիստոսի և հավիտենական Աստծո, Հիսուս Քրիստոսի Հոր մասին, և որը վկայում է ճշմարտության մասին, այս Հոգին, այս Բանականությունը չի տրվում բոլոր մարդկանց, եթե նրանք չեն ապաշխարում իրենց մեղքերից և արժանի չեն դառնում Տիրոջ առաջ [տե՛ս 3 Նեփի 28.11]: Այն ժամանակ նրանք ստանում են Սուրբ Հոգու պարգևը՝ ձեռնադրվելով նրանց կողմից, ովքեր լիազորված են Աստծո կողմից՝ շնորհելու Նրա օրհնությունները մարդկանց զավակներին:[6]

Սուրբ Հոգու նվիրումը կամ «պարգևը» պարզապես մարդուն իրավունք է տալիս ցանկացած պահի, երբ նա արժանի է դրան կամ ցանկանում է դա, ստանալ Սուրբ Հոգուց ճշմարտության զորությունն ու լույսը, թեև նա հաճախ կարող է թողնվել իր անձնական հոգուն և դատողությանը:[7]

Սուրբ Հոգին լապտեր է, որպեսզի լուսավորի մեր առաջընթացը:

Սուրբ Հոգին նախատեսված է՝ վկայություն բերել Քրիստոսի մասին, կամ վկայել Նրա մասին, և հավաստել հավատացյալին ճշմարտության մասին՝ հիշեցնելով նրան այն, ինչն անցել է և ցույց տալով կամ հայտնելով նրա մտքում ներկա և գալիք բաները: «Բայց Սխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, և կհիշեցնէ ձեզ ամեն ինչն որ ձեզ ասեցի»: [Հովհաննես ԺԴ.26:] «Նա կառաջնորդէ ձեզ ամեն ճշմարտության մեջ»: [Հովհաննես ԺԶ.13:][8]

Վերջին Օրերի Սրբերի պարտականությունն է՝ ուսուցանել երեխաներին . . . Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ ստանալու անհրաժեշտության մասին, որը նրանց կառաջնորդի դեպի ամեն ճշմարտություն, և որը կհայտնի անցած և գալիք բաների մասին, և ավելի պարզորոշ ցույց կտա նրանց ներկա բաները, որպեսզի հասկանան ճշմարտությունը և քայլեն լույսի մեջ, ինչպես Քրիստոսն է լույսի մեջ, որպեսզի ընկերակցեն Նրան և Նրա արյունը մաքրի իրենց բոլոր մեղքերը:[9]

Մեզ համար գծված է մի ճանապարհ, որով պետք է քայլենք։ Դա այն նեղ և անձուկ ճանապարհն է, որը տանում է ետ՝ դեպի Աստծո ներկայություն։ Լապտերը, որ պետք է լուսավորի մեր առաջընթացը, Սուրբ Հոգին է, որը մենք ստանում ենք մեր նոր ծնունդի ժամանակ կամ դրանից հետո։ Եթե մենք վարանում ենք կամ շեղվում ճանապարհից, մեր լապտերը կաղոտանա և, ի վերջո, կհանգչի։ Այն ժամանակ, ահա Սխիթարիչը, հայտնության աղբյուրը, կլքի մեզ և խավարը կփոխարինի նրան։ Արդ որքա՜ն մեծ կլինի այդ խավարը։ Կախված նրանից, թե որքան պայծառ էր մեր լույսը, այնքան էլ խիտ կլինի մեզ պատող խավարը։ Եվ եթե անհապաղ չապաշխարենք, խավարն այնքան կխտանա, որ մեր տեսադաշտից կկորցնենք մեր կոչումն ու կմոռանանք Նրան, ով փրկագնել է և Իր սեփականը համարել մեզ։[10]

Սուրբ Հոգու նշանակումն է՝ լուսավորել մարդկանց մտքերը Աստծո բաների վերաբերյալ, որպեսզի դարձի գալու ժամանակ նրանց հավաստիացնի Աստծո կամքը կատարելու վերաբերյալ և նրանց մեջ լինի հաստատուն վկայություն, որպես իրենց կյանքի ընկերակից, գործելով որպես դեպի ամեն ճշմարտություն տանող հաստատուն և ապահով առաջնորդ և օրեցօր լցնելով նրանց ուրախությամբ ու ցնծությամբ, բոլոր մարդկանց հանդեպ բարիք գործելու տրամադրվածությամբ, գերադասելով վնասվել, քան վնասել, լինել բարի ու ողորմած, համբերատար ու գթասիրտ։ Նրանք, ովքեր ունեն անգին պարգևը, այս մեծագին մարգարիտը, ունեն արդարության անհագ ծարավ։ Առանց Սուրբ Հոգու օգնության ոչ մի մահկնացու չի կարող քայլել նեղ ու անձուկ ճանապարհով, ի վիճակի լինելով տարբերել չարը բարուց, անկեղծը կեղծից, որոնք այնքան նման կարող են թվալ։ Ուստի, Վերջին Օրերի Սրբերը պետք է մաքուր և շիտակ ապրեն, որպեսզի այս Հոգին մնա նրանց մեջ, քանզի այն ունենում են միայն արդարակյացները։ Ես չեմ կարող ստանալ այն ձեզ համար, ոչ էլ դուք՝ ինձ համար. յուրաքանչյուրն ինքը պետք է ձգտի դրան, ինչպիսի պայմաններում էլ որ ծնված լինի, լինի կիրթ, թե անկիրթ։ Արտոնություն է տրված բոլորին՝ դառնալ ճաշակողները դրա։[11]

Սուրբ Հոգին իջնում է միայն արդարակյացների և նրանց վրա, որոնց մեղքերը ներվել են։ . . . Քանի դեռ Վերջին Օրերի Սրբերը կհնազանդվեն Աստծո պատվիրաններին, կգնահատեն արտոնություններն ու օրհնությունները, որոնք ունեն Եկեղեցում, և իրենց ժամանակն ու ունեցվածքը կօգտագործեն ի փառս Աստծո անվան, կկառուցեն Սիոնը, և կհաստատեն ճշմարտությունն ու արդարությունը երկրի վրա, մեր Երկնային Հայրը կապված կլինի

իր երդումով և ուխտով՝ պաշտպանելու նրանց ամեն մի թշնամուց և օգնելու հաղթահարել ամեն մի խոչընդոտ, որ կարող է կանգնել նրանց առաջ կամ նրանց ճանապարհին: Սակայն երբ համայնքի անդամները սկսեն մտածել միայն իրենց մասին, դառնալով եսասեր, կլանվեն կյանքի նյութական բաներով և իրենց հավատը դնեն հարստությունների վրա, այդ ժամանակ Աստծո զորությունը կսկսի հեռանալ նրանցից, և եթե չապաշխարեն, ապա Սուրբ Հոգին ամբողջովին կլքի նրանց և նրանք կմնան իրենք իրենցով:[12]

Դուք, որ հնազանդվել եք հավիտենական Ավետարանի պահանջներին և ընտրվել եք աշխարհից, ստանալով Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրմամբ, ձեր արտոնությունն է ստանալ Հոգու վկայությունը, ձեր արտոնությունն է կռահել և տեսնել միտքն ու կամքը Հոր՝ ինչ վերաբերում է ձեր բարօրությանը և Աստծո գործի վերջնական հաղթանակին:[13]

Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք վերածնվել:

Փրկիչն ասաց Նիկոդեմոսին. «Եթե մեկը վերստին չծնուի՝ կարող չէ Աստուծոյ արքայությունը տեսնել», [տե՛ս Հովհաննես Գ.3] և դա ճշմարիտ է նաև այսօր: Մարդը պետք է անգիտությունից դեպի ճշմարտություն ծնվի այսօր: . . . Եթե նա նման ձևով չծնվի, ապա ավելի կույր է, քան նա, ում Քրիստոսը բժշկեց, քանզի ունենալով աչք նա չի տեսնում և ունենալով ականջ, չի լսում:[14]

Այսօր այդ փոփոխությունը կատարվում է Աստծո յուրաքանչյուր որդու և դստեր հետ, որն ապաշխարում է իր մեղքերից, որն իրեն խոնարհեցնում է Տիրոջ առաջ և փնտրում է ներում ու մեղքերի թողություն՝ ընկղմամբ մկրտության միջոցով նրա կողմից, որը իշխանություն ունի կատարելու Հիսուս Քրիստոսի ավետարանի այդ սրբազան արարողությունը: Քանզի այս նոր ծնունդի մասին է ասում Քրիստոսը Նիկոդեմոսին, որպես բացառիկ կարևորություն, որպեսզի մարդիկ կարողանան տեսնել Աստծո արքայությունը, և առանց որի մարդը չի կարող մտնել այդ արքայությունը: Հավանաբար, մեզանից յուրաքանչյուրը կարող է հիշել այն փոփոխությունը, որը տեղի է ունեցել մեր սրտում, երբ մկրտվել ենք մեր մեղքերի թողության համար: . . . Ես խոսում եմ Սուրբ Հոգու ազդեցության և զորության մասին, որը ես զգացել եմ, երբ մկրտվեցի իմ մեղքերի թողության համար: Դա խաղաղության, սիրո և լույսի զգացողություն էր: . . .

Օ՜, եթե այդ օրվանից մինչ այսօր կարողանայի պահել այդ նույն հոգին և անհագ ցանկությունն իմ սրտում կյանքիս ամեն մի

վայրկյանին: Թեև մեզանից շատերը, ովքեր ստացել են այդ վկայությունը, սրտի այդ փոփոխությունը, չնայած հնարավոր է սխալվել ենք դատողության մեջ կամ կատարել շատ սխալներ և մեր կյանքում թերացել ենք պահել ճշմարիտ չափանիշները, սակայն ապաշխարել ենք չարիքից և ժամանակ առ ժամանակ փնտրել թողություն Տիրոջ ձեռքից: Այդպես էլ մինչ այսօր նույն ցանկությունը և նպատակը, որը լցրել է մեր հոգին, երբ մկրտվել ենք և ստացել մեր մեղքերի թողությունը, դեռևս համակում է մեր սիրտը և մնում մեր հոգիների գլխավոր զգացմունքն ու տենչը: Թեև ժամանակ առ ժամանակ մենք հնարավոր է զայրանանք, և մեր ցասումը դրդի մեզ ասել կամ անել այնպիսի բաներ, որոնք հաճելի չեն Աստծո աչքում, այնուամենայնիվ եթե անմիջապես վերադառնում ենք խոհեմությանը և հեռանում խավարի իշխանությունից, մենք զգում ենք մեզ խոնարհ, ապաշխարող և թողություն ենք խնդրում մեզ և, հնարավոր է, ուրիշներին պատճառած վնասի համար: Այն հզոր, լուրջ, տոգորող ցանկությունը, որը ճշմարտությունից և Սուրբ Հոգու վկայությունից ծնվում է այն մարդկանց սրտերում, որոնք հնազանդվում են ճշմարտությանը, արթնանում է և կրկին համակում մեր հոգին, որպեսզի առաջնորդի մեզ պարտականության ճանապարհով: Սա է իմ վկայությունը, և ես գիտեմ, որ դա ճշմարիտ է:[15]

Աններելի մեղք է համարվում Սուրբ Հոգին կամովին մերժելն ու արհամարելը՝ Նրա վկայությունը ստանալուց հետո:

Ոչ ոք չի կարող մեղանչել լույսի դեմ, մինչև չուններնա այն, ոչ էլ Սուրբ Հոգու դեմ, մինչև որ չստանա այն Աստծո պարգևով՝ նշված եղանակով կամ ճանապարհով: Մեղանչել Սուրբ Հոգու դեմ՝ ճշմարտության Հոգու, Մխիթարիչի, Հոր և Որդու Վկայի դեմ, կամովին մերժելով և արհամարելով Նրան, դա [աններելի մեղք է]:[16]

Ոչ ոք ոչ մի կերպ չի կարող անգիտակցորեն աններելի մեղք գործել: Մարդը պետք է Քրիստոսի մասին գիտելիք ստանա, նա պետք է իր սրտում Քրիստոսի մասին վկայություն ստանա, և ուններնա լույս ու զորություն, գիտելիք ու հասկացողություն, նախքան այդ մեղքը կկարողանա գործել: Սակայն եթե մարդը, Հոգու վկայությունը ստանալուց հետո, երես է դարձնում ճշմարտությունից, պղծում է իր ստացած գիտելիքը, կոխ տալիս իր ոտքերով, կրկին խայտառակ անում Քրիստոսին, ուրանում Նրա քավությունը, հարության զորությունը, հրաշքները, որոնք Նա

գործել է մարդկային ընտանիքի փրկության համար, և իր սրտում ասում է. «Դա ճշմարիտ չէ», և մնում է այդ ճշմարտությունը մերժելու վիճակում, ապա նա աններելի մեղք է գործում։[17]

Ինչո՞ւ [Փրկչի Խաչելությունից հետո Առաքյալները] մոռացան և կարծես անտեղյակ էին այն ամենից, ինչ Փրկիչը սովորեցրել էր, ինչ վերաբերում էր երկրի վրա Իր առաքելության նպատակին։ Որովհետև նրանք չունեին մեկ կարևոր գիծ, նրանք դեռևս «օժտված չէին զորությամբ վերևից»։ [Տե՛ս Ղուկաս ԻԴ.49։] Նրանք դեռևս չէին ստացել Սուրբ Հոգու պարգևը։ . . .

Եթե այդ ժամանակ աշակերտներն օժտված լինեին «Սուրբ Հոգու պարգևով», կամ «զորությամբ վերևից», նրանց ճակատագիրն ամենևին այլ կլիներ . . ., որը և ապացուցեցին հետագա իրադարձությունները։ Եթե Պետրոսը, որը գլխավոր առաքյալն էր, ստացած լիներ Սուրբ Հոգու պարգևը և դրա զորությունն ու վկայությունը մինչև սոսկալի գիշերը, որի ժամանակ նա անիծեց, երդումով ուրացավ իր Տիրոջը [տե՛ս Մատթէոս ԻՁ.69–75], հետևանքները նրա համար այլ կերպ կդասավորվեին, քանզի նա մեղանչեց «լույսի և գիտելիքի» դեմ, և «Սուրբ Հոգու դեմ», որի համար չկա ներում։ Այդպիսով, այն փաստը, որ նա ներվեց, դառնաղի արցունքների և ապաշխարության արդյունքում, ապացույցն է այն բանի, որ նա չուներ Սուրբ Հոգու վկայությունը և երբեք չէր ստացել այն։ Այուս հետևորդները կամ Քրիստոսի առաքյալները նույն վիճակում էին, և միայն այդ օրը երեկոյան, երբ Հիսուսը գերեզմանից դուրս եկավ, նրանց շնորհեց այս անգին պարգևը [տե՛ս Հովհաննես Ի.22]։[18]

Նախքան հարություն առած Քավիչը կթողներ աշխարհը, նա պատվիրեց իր աշակերտներին մնալ Երուսաղեմ քաղաքում, մինչև չօժտվեն զորությամբ վերևից։ Նրանք այդպես էլ արեցին, և մինչ միասին էին, խոստման համաձայն Սխիթարիչը եկավ լցնելով նրանց սրտերը աննկարագրելի ուրախությամբ, այնպես որ նրանք խոսում էին լեզուներով և մարգարեանում։ Եվ այս սուրբ էակի ոգեշնչող ազդեցությունը ուղեկցում էր նրանց՝ իրենց ծառայության բոլոր պարտականությունները կատարելիս, որի շնորհիվ նրանք կարողանում էին կատարել այն մեծ առաքելությունը, որին կանչվել էին Փրկչի կողմից։[19]

Տարսոնացի Սողոսն ունենալով բացառիկ խելք և կրթություն, Գամաղիէլի ոտքի մոտ մեծացած, կատարյալ ձևով ուսուցանված օրենքին, հալածում էր Սրբերին ի մահ, կապելով և բանտ նետելով և՛ տղամարդկանց և՛ կանանց։ Իսկ երբ մարտիրոսացած

Ստեփանի արյունն էր թափվում, Սողոսը կանգնած պահպանում էր նրանց հագուստները, ովքեր սպանում էին նրան, և խրախուսում էր նրան սպանողներին: Եվ նա «տանից տուն էր մտնում, և մարդկանց և կանանց քաշում մատնում էր բանտի մեջ»: [Գործք Ը.3:] Իսկ երբ նրանց մահապատժի էին ենթարկում, նա նրանց դեմ էր բարձրացնում իր ձայնը և «բոլոր ժողովարաններումը շատ անգամ պատիժ տալով նորանց և բռնադատում որ հայհոյեն. և էլ ավելի նորանց վերայ կատաղած՝ հալածում էր մինչև դրսի քաղաքները», [Գործք ԻԶ.11] և չնայած այս ամենին այդ մարդը աներերելի մեղք չէր գործել, քանի որ նա չէր ճանաչում Սուրբ Հոգուն:[20]

Եթե որևէ մեկն այս աշխարհում կարող է աներերելի մեղք գործել, դուք կգտնեք նրան այն մարդկանց մեջ, ովքեր ունեն կամ գալու են ճշմարտության գիտելիքին: . . . Դուք և ես ստացել ենք լույսը: Մենք ստացել ենք Սուրբ Քահանայությունը: Մենք ստացել ենք Սուրբ Հոգու վկայությունը, և մահից դեպի կյանք ենք բերվել: Այդ պատճառով մենք այժմ շատ ապահով կամ վտանգավոր հողի վրա ենք կանգնած. վտանգավոր՝ եթե կատակում ենք սրբազան բաների հետ, որոնք մեր հոգածությանն են հանձնվել: Ուստի, ես զգուշացնում եմ ձեզ, իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, հատկապես իմ եղբայրներին, որ չկատակեք ձեր [քահանայության] հետ: . . . Եթե կատակեք, ինչպես կենդանի է Աստված, Նա կհեռացնի Իր Հոգին ձեզանից, և կգա ժամանակը, երբ կհակառակվեք լույսի և գիտելիքի դեմ, որը դուք ստացել եք, և դուք կորստի որդիներ կդառնաք: Ուստի, դուք լավ կլիներ զգուշանայիք, չլինի թե երկրորդ մահը անցնի ձեր վրայով:[21]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞րն է տարբերությունը Սուրբ Հոգու ժամանակավոր ազդեցության կամ դրսևորման և Սուրբ Հոգու պարգևի միջև: (Տե՛ս նաև Մորոնի 10.4:) Ինչպե՞ս կարող ենք ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս մեզ, երբ պատվում ենք այս պարգևը:
- Ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին ուղեկցել մեզ դեպի ամեն ճշմարտություն: (Տե՛ս Հովհաննես ԺԶ.13:) Ո՞ր ճշմարտությունների մասին է Սուրբ Հոգին վկայել ձեզ:

- Ինչո՞ւ է լապտերը լավ խորհրդանիշ հանդիսանում Սուրբ Հոգին ներկայացնելու համար: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հավաստիանանք, որ այդ լապտերը պայծառ լույս է տալիս մեր կյանքում:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի մեծացնենք Սուրբ Հոգու ազդեցությունը մեր կյանքում: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին հասկանալ, թե ինչպես է Սուրբ Հոգին օրհնում իրենց կյանքը:
- Ի՞նչ պետք է մենք կատարենք, որպեսզի կրկին ծնվենք, ինչպես Փրկիչն է ասել: (Տե՛ս Հովհաննես Գ.5:) Ինչպիսի՞ զգացումներ են ուղեկցում այս վերածնունդին: Ինչպե՞ս կարող ենք պահել այս զգացումները: (Տե՛ս Ալմա 5.14–16, 26:)
- Ո՞րն է աններելի մեղքը: Ի՞նչ է նշանակում կատակել «սրբազան բաների հետ, որոնք մեր հոգածությանն են հանձնվել»:

Հղումներ

1. Joseph F. Smith Journal, 1856, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints; spelling modernized.
2. *Deseret News: Semi-Weekly,* 29 Jan. 1878, 1.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 61.
4. In James R. Clark, *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:4.
5. *Gospel Doctrine,* 59–60.
6. *Gospel Doctrine,* 67.
7. *Gospel Doctrine,* 60–61.
8. *Gospel Doctrine,* 101.
9. *Gospel Doctrine,* 291.
10. *Deseret News: Semi-Weekly,* 28 Nov. 1876, 1.
11. *Deseret News: Semi-Weekly,* 28 Nov. 1876, 1.
12. *Gospel Doctrine,* 50–51.
13. *Deseret News: Semi-Weekly,* 22 Apr. 1884, 1.
14. *Gospel Doctrine,* 97.
15. *Gospel Doctrine,* 96–97.
16. *Gospel Doctrine,* 434.
17. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9.
18. *Gospel Doctrine,* 20–21.
19. *Gospel Doctrine,* 92.
20. *Gospel Doctrine,* 433–34.
21. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9.

Մեր միսիոներական պարտականությունը

Միսիոներները գնում են ողջ աշխարհին վկայելու Հիսուս Քրիստոսի մասին և ցանելու հավերժական կյանքի թանկագին սերմերը։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Հավայան Կղզիներ իր մեկնումից քիչ անց, 1854թ. հոկտեմբերի 20-ին, Զոզեֆ Ֆ. Սմիթը նամակ է գրում իր հոր հորեղբոր որդուն՝ Տասներկուսի Քվորումի անդամ Զորջ Ա. Սմիթին, որն իրեն երեց էր կարգել։ Երիտասարդ միսիոները գրում է Տիրոջ գործի հանդեպ իր նվիրվածության մասին. «Ես ուրախ եմ ասելու, որ պատրաստ եմ անցնել նեղ և լայն օրերի բովով այս գործի համար, որը կատարում եմ. և իրապես հույս ունեմ և աղոթում եմ, որ հավատարիմ մնամ մինչև վերջ»։[1] Նրա հավատքը պետք է փորձվեր շատ անգամներ։

Մի անգամ հրդեհը ոչնչացրեց նրա ունեցվածքի մեծ մասը, ներառյալ «հագուստը, Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտերի (եվրոպական) առաջին խմբագրության օրինակները, որոնք Հայրապետ Հայրում Սմիթին որպես նվեր էին տրվել։ Այս գրքերից մեկում Երեց Զոզեֆ Ֆ. Սմիթը դրել էր իր Երեցի վկայականը։ Երբ տունն իր ունեցվածքով այրվեց, Երեց Սմիթի սնդուկը և նրանում գտնվող բոլոր իրերը մոխիր էին դարձել, բացի նրա միսիոներական վկայականից։ Ինչ-որ հրաշքով այն անվնաս էր մնացել, եթե հաշվի չառնենք այրված եզրերը, սակայն ոչ մի բառ չէր այրվել, թեև գիրքը, որի մեջ դրված էր այն ամբողջովին մոխրացել էր։ Ոչ միայն գրքերն էին ոչնչացել, այլև Երեց Սմիթի օրագրերը, որոնք նա բարեխղճորեն լրացնում էր»։

Այս դեպքի հետ մի ծիծաղելի միջադեպ է կապված, որն այն ժամանակ լուրջ էր թվում։ Միսիոներական հագուստն այրվել էր, և Զոզեֆ Սմիթն ու իր ընկերը ստիպված էին մեկ կոստյումը հերթով հագնել։ Մեկը մնում էր տանը, իսկ մյուսը հագնելով կոստյումը

հաճախում էր ժողովներին: Ապա մյուսն էր մնում տանը, մինչ մյուս ընկերը ժողովի էր մասնակցում: «Իհարկե, դա երկար չտևեց, սակայն դա մի ծիծաղելի պատմություն էր, որի մասին շատ հաճախ էին հիշում հետագա տարիներին, երբ ժամանակը հեռացրել էր այդ տառապյալ Երեցներին իրենց նեղությունների և դժվարությունների վայրից»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Միսիոներները պետք է այնպես ապրեն, որպեսզի Աստծո Հոգին միշտ իրենց ուղեկցի:

Աշխարհին քարոզելու գնացող Երեցների պարտադիր հատկանիշները պետք է լինեն՝ համեստությունը, հեզությունը և անկեղծ սերը, մարդկային ընտանիքի բարօրության և փրկության համար, և ցանկությունը՝ հաստատելու խաղաղություն և արդարություն երկրի մարդկանց մեջ: Մենք չենք կարող քարոզել Քրիստոսի ավետարանն առանց խոնարհության, հեզության, առ Աստված հավատի, Նրա խոստումներին և մեզ ուղղված խոսքին ապավինելու: Դուք կարող եք սովորել մարդկային ողջ իմաստությունը, սակայն այն չի կարող որակել ձեզ գործելու այնպես, ինչպես խոնարհ, Աստծո Հոգու առաջնորդող ազդեցությունն ունեցող մարդը: «Կորուստից առաջ գնում է գոռոզությունը, և կործանումից առաջ ամբարտավան հոգին»: [Առակաց ԺԶ.18:]

Երեցները, ովքեր գնում են աշխարհին քարոզելու, պետք է ուսումնասիրեն ավետարանի ոգին, որը խոնարհության ոգին է, հեզության և անկեղծ նվիրվածության ոգին, տքնելու ձեռքով, թե խելքով, ձեր նպատակին հասնելու համար: Ինչ վերաբերում է ավետարանը քարոզելուն, մենք պետք է նվիրվենք այդ ծառայության պարտականություններին և պետք է պայքարենք մեր բոլոր ջանքերով, որպեսզի որակվենք կատարելու այդ առանձնահատուկ աշխատանքը, իսկ ճանապարհը մնկն է՝ ապրել այնպես, որպեսզի Աստծո հոգին ընկերակցի և մեզ մոտ լինի օր ու գիշեր, մեր ծառայության ամեն վայրկյանին և ժամին:[3]

Իմ եղբայրներ, դուք ներգրավված եք Աստծո գործում. դուք աշխատանքի մեջ եք. դուք մեծապես ստանում եք Ավետարանի Հոգին, քանի որ բացառիկ ձևով եք զբաղված այս աշխատանքով: Դուք հավիտենական ուխտի ծառայողներն եք: Դուք աղոթում եք, դուք, իհարկե, չեք մոռանում ձեր աղոթքները: Երեցը չի կարող մոռանալ իր աղոթքները, նա չի կարող մոռանալ Տիրոջը, նա

անշուշտ կհիշի Նրան, եթե կատարի իր պարտականությունը։ Եթե նա գտնվում է այնպիսի դիրքում, որ կարող է ամենաշատը բարիք գործել, նա չի կարող մոռանալ Տիրոջը առավոտյան, կեսօրին և երեկոյան։ Նա աղոթում է Տիրոջը և խոնարհվում է Նրա առաջ ու ընդունում Նրան։ Եթե դուք այդպես եք ծառայում, ապա վայելում եք Նրա Հոգին։[4]

Սիսիոնները պետք է իր մեջ ունենա Աստծո Հոգու վկայությունը՝ Սուրբ Հոգու վկայությունը։ . . . Մարդիկ դարձի չեն գալիս պերճախոսությամբ կամ հռետորական հնարքներով, նրանք համոզվում են, երբ տեսնում են, որ դու ունես ճշմարտությունը և Աստծո Հոգին։[5]

Սիսիոներները պետք է լինեն ազնիվ, առաքինի և հավատարիմ իրենց ուխտերին։

Կարծում ենք տրամաբանական չէ ուղարկել մարդկանց աշխարհ, որ նրանք հավատացնեն ուրիշներին հնազանդվել ավետարանին, եթե նրանք այդպիսին չեն։ Ոչ էլ պատշաճ է ուղարկել մարդկանց ինչ-որ տեղ, որպեսզի այնտեղ վերափոխվեն։ Թող որ նրանք նախ տանը վերափոխվեն, եթե խստորեն չեն պահել Աստծո պատվիրանները։ Դա վերաբերվում է Իմաստության Խոսքին, ինչպես նաև երկնքի մյուս բոլոր օրենքներին։ Ոչ մի առարկություն չի կարող լինել այն կանչված մարդկանց հանդեպ, ովքեր ավելի վաղ տարիներին հնարավոր է եղել են կոպիտ կամ ինքնահաճ, սակայն վերջին տարիներին ապրել են բարեպաշտ կյանքով և տվել ապաշխարության թանկարժեք պտուղներ։[6]

Մեզ անհրաժեշտ են այնպիսի երիտասարդներ . . . , որոնք անբիծ են պահել իրենց աշխարհից և կարող են գնալ երկրագնդի տարբեր ազգերի մեջ և ասել մարդկանց. «Հետևեք ինձ, ինչպես ես եմ հետևում Քրիստոսին»։ Ապա մենք կցանկանայինք, որ նրանք երգել և աղոթել իմանային։ Մենք ակնկալում ենք, որ նրանք մինչև մահ ազնիվ, առաքինի և հավատարիմ կլինեն իրենց ուխտերին, իրենց եղբայրներին, կանանց, հայրերին ու մայրերին, եղբայրներին ու քույրերին, իրենք իրենց և Աստծուն։ Եթե ունեք նման մարդիկ, որպեսզի քարոզեն ավետարանն աշխարհին, կարևոր չէ շատ գիտեն սկզբի համար, թե ոչ, Տերն Իր Հոգին կդնի նրանց սրտում և կպսակի նրանց մտավոր կարողությամբ և ուժով՝ փրկելու մարդկանց հոգիները։ Քանզի նրանց մեջ է կյանքի սերմը։ Այն չի փչացել կամ ապականվել. այն չի հեռացել նրանցից։[7]

Զոզեֆ Ֆ. Սմիթը մոտավորապես 19 տարեկան հասակում, 1858թ.
Հավայան Կղզիներում Սիսիայից վերադառնալուց անմիջապես հետո։

Կարիք չկա, որ մեր երիտասարդները տեղյակ լինեն այս կամ այն վայրում կատարվող անօրինություններին: Նման գիտելիքը չի վեհացնում, և, հնարավոր է, շատ պատանիներ կարող են նկատել, որ անկում տանող առաջին քայլը հետաքրքրասիրությունն է եղել, որը մղել է նրանց դեպի կասկածելի վայրեր: Թող որ Սիոնի երիտասարդները՝ միսիոներներ լինեն, թե ոչ, խուսափեն անպարկեշտ վայրեր հաճախելուց: Կարիք չկա, որ նրանք իմանան, թե ինչ է կատարվում նման վայրերում: Ոչ ոք ավելի լավը կամ ավելի ուժեղ չի դառնա նման գիտելիքից: Թող որ նրանք հիշեն. «Մեղքի մասին գիտելիքը դրդում է դեպի դրա կատարումը», իսկ այնուհետև խուսափեն այն գայթակղություններից, որոնք կարող են հետագայում վտանգ հանդիսանալ իրենց առաքինության ու Քրիստոսի Եկեղեցում իրենց դիրքի համար:[8]

Լավ միսիոներին բնորոշ գծերն են՝ մարդամոտ և հաղորդակցվող լինելը, մարդ, որի ընկերությունը հարատև է և աշխույժ, որը կարող է շահել խավարում գտնվող մարդկանց վստահությունն ու սերը: Սա չի կարող հանպատրաստից լինել: Դուք պետք է ծանոթանաք տվյալ մարդու հետ, ճանաչեք նրան և նրա վստահությանն արժանանաք, իսկ նա պետք է զգա և իմանա, որ ձեր միակ ցանկությունը նրա համար բարիք գործելն է և նրան օրհնելը: Այնուհետև կարող եք հաղորդել նրան ձեր ուղերձը և բարյացակամությամբ ու սիրով տալ այն լավ բաները, որ ունեք նրա համար: Ուստի, միսիոներներ ընտրելով, ընտրեք նրանց, ովքեր մարդամոտ են, ընկերասեր են և մարդկանց հանդեպ թշնամություն չեն տածում: Եվ եթե դուք չունեք նման պատանիներ ձեր ծխում, ապա մի քանի երիտասարդների սովորեցրեք և պատրաստեք այս աշխատանքի համար:[9]

Միսիոներները պետք է հոգով և պարզորեն ուսուցանեն կյանքի ավետարանը:

Մեր երեցները ուսուցանվում են այստեղ, և նրանց սովորեցնում են դեռևս մանկությունից, որ չպետք է գնան և պատերազմեն աշխարհի կրոնական կազմակերպությունների հետ, երբ կանչվում են գնալու և քարոզելու Հիսուս Քրիստոսի ավետարանը, այլ պետք է գնան և իրենց հետ տանեն այն ուղերձը, որը տրվել է մեզ Զոզեֆ Սմիթի միջոցով, այս վերջին ժամանակաշրջանում, որի շնորհիվ մարդը կարող է իմանալ ճշմարտությունը, եթե կամենում է:

Նրանք ուղարկվում են, որպեսզի աշխարհ տանեն խաղաղության ձիթենու ճյուղը, այն գիտելիքը, որ Աստված երկնքից մեկ անգամ ևս խոսել է երկրի վրա ապրող իր զավակների հետ. որ Աստված իր ողորմածությամբ կրկին երկրի վրա վերականգնել է մարմնի մեջ Իր Միածին Որդու ավետարանի լրիվությունը, որ Աստված հայտնել է մարդկանց և վերականգնել Իր աստվածային զորությունը և իշխանությունը, որի միջոցով նրանք իրավունք և իշխանություն են ունենում կատարելու Հիսուս Քրիստոսի ավետարանի արարողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց փրկության համար. և այդ արարողությունների նրանց կատարումը անպայմանորեն պետք է ընդունվի Աստծո համար, որը իշխանություն է տվել նրանց Իր անունով կատարել դրանք:

Մեր երեցները ուղարկվել են, որպեսզի քարոզեն մեղքերից ապաշխարություն, արդարություն, աշխարհին քարոզեն կյանքի, ընկերության և մարդկանց մեջ եղբայրության ավետարանը, ուսուցանեն տղամարդկանց ու կանանց անել այն, ինչը շիտակ է Աստծո աչքում և բոլոր մարդկանց առաջ, ուսուցանեն նրանց այն փաստը, որ Աստված է կազմակերպել այս Եկեղեցին, իսկ Ինքը Եկեղեցու հեղինակն է և հիմնադիրը:[10]

Հարց է ծագում երիտասարդների մտքում, ովքեր հայտնվում են միսիոներական բնագավառում. «Ի՞նչ պետք է ես ասեմ»: . . . Եվ հետևում է հաջորդ հարցը. «Ինչպե՞ս պետք է ես դա ասեմ»: . . . Թեև որոշակի օրենք չենք կարող առաջարկել, փորձը ցույց է տվել, որ լավագույնը ամենապարզ ձևն է: Աղոթող հոգով և խորը ուսումնասիրությամբ սովորած լինելով ավետարանի սկզբունքները, դրանք պետք է մարդկանց ներկայացնել խոնարհությամբ, խոսքի ամենապարզ ձևով, առանց կանխավարկածների կամ գոռոզության և Քրիստոսի առաքելության ոգով: Սա չի հաջողվի, եթե երիտասարդ միսիոները իր ուժերը վատնում է ցուցամոլ ձգտումով դառնալու բարձրախոս հռետոր: Ահա թե ինչի վրա կուզենայի, որ երեցներն ուշադրություն դարձնեին և խորհուրդ կտայի, որ հռետորական պերճախոսությունը սահմանափակվեր ճիշտ պահով և վայրով: Միսիան հռետորական ջանքեր ներդնելու վայրը չէ: Ավետարանի հաջող ուսուցանումը չի կայանում խոսքերի և փաստարկների ցուցամոլ ներկայացման մեջ, այլ արտահայտվում է պարզ ճշմարտության համեստ և իրատեսական հաստատմամբ, որն արտասանվում է այնպես, որ դիպչի մարդկանց սրտերին և դիմի նաև նրանց առողջ դատողությանն ու բանականությանը:

. . . Նախ Հոգին պետք է միսիոների հետ լինի, եթե նա ցանկանում է արձագանք գտնել իր ունկնդիրների սրտերում. և սա ճշմարիտ է անկախ նրանից, թե այդ խոսքերը ասվում են զրույցի ժամանակ՝ դեմ առ դեմ, թե հասարակական հավաքներում: Հոգին չի հայտնի իրեն այն անձի մեջ, որն իր ժամանակը նվիրում է իր խոսքը փքուն կամ պերճաշուք բառերով ներկայացնել: Նա հույս ունի դուր գալ արհեստականորեն, ոչ թե ազդեցիկ ձևով՝ սրտով:[11]

Ոչ ոք ինքն իրենով չի կարող քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանը. քանզի Աստծո բաները ոչ ոք չգիտի, միայն Աստծո Հոգով, որը նրանում է [տե՛ս Ա Կորնթացիս Բ.11]: Քանզի եթե մարդը փորձում է քարոզել Տիրոջ խոսքն իր իմաստությամբ և գիտելիքով, առանց ոգեշնչման, պարզապես ծաղրում է: Ոչ ոք չի կարող քարոզել Աստծուն, աստվածայնությունը և ճշմարտությունը, ինչպես որ դրանք Քրիստոս Հիսուսի մեջ են, եթե նա ոգեշնչված չլինի Սուրբ Հոգու կողմից: Հնում աշակերտները շրջում էին և հաղորդակցվում Փրկչի հետ՝ մարդկանց զավակների մեջ Նրա առաքելության ժամանակ, և դեռևս . . . նրանց պատվիրվեց մնալ Երուսաղեմում և չգնալ քարոզելու, մինչև վերևից զորություն չհագնեն. այլ խոսքերով, մինչև Սուրբ Հոգին չթափվի նրանց վրա, որի շնորհիվ նրանց մտքերը կպայծառանան, հասկացողությունը կընդլայնվի, Հիսուս Քրիստոսի վկայությունը կամրապնդվի նրանց սրտերում, և նրանք կկարողանան այդ մասին վկայել նրանց, ում մոտ կգնան:[12]

Յուրաքանչյուր երեց զգալի չափով թողնվում է իր կոչման հոգու կողմից առաջնորդվելուն, որով նա պետք է տոգորված լինի: Եթե նա թերանում է սնուցել այդ հոգին, որը եռանդի և գործունեության հոգին է, նա շուտով կդառնա անգործունյա, ծույլ և դժբախտ: Յուրաքանչյուր միսիոներ պետք է ձգտի յուրաքանչյուր օրվա մի մասը տրամադրել ավետարանի սկզբունքների և Եկեղեցու աստվածաբանության ուսումնասիրությանն ու աղոթքով խորհի դրանց շուրջ: Նա պետք է կարդա, խորհրդածի և աղոթի: Իրականում մենք դեմ ենք նախօրոք սահմանված քարոզներ պատրաստելուն, որոնք կներկայացվեն հռետորական և պերճախոս մտքերով. սակայն երբ երեցը կանգնում է իր խոսքը ուղղելու հավաքվածներին՝ լինի դա իր հայրենիքում, թե այլ երկրում, նա պետք է հիմնավորապես պատրաստված լինի իր քարոզին: Նրա միտքը պետք է լցված լինի արտասանվելու, լսվելու և հիշվելու արժանի մտքերով. այն ժամանակ ոգեշնչման ոգին առաջ կբերի այնպիսի ճշմարտություններ, որոնց կարիքն իր ունկնդիրներն ունեն, և նրա խոսքերը զորավոր կդարձնի:[13]

Պետք է լրջորեն առաջարկել այլ երկրներում միսիայում ծառայող երեցներին, ինչպես նաև ընդհանրապես Վերջին Օրերի Սրբերին խուսափել վարդապետությունների թեմայով փաստարկներով վիճաբանելուց և բանավեճերից: Ավետարանի ճշմարտությունը բուռն քննարկումներով ներկայացվելու կարիք չունի. ճշմարտության ուղերձը ավելի մեծ հաջողությամբ կարելի է ներկայացնել պարզ և հոգուց բխող խոսքերով:

. . . ճշմարտության վկայությունը ավելին է, քան լոկ մտքի համաձայնություն, այն սրտի համոզում է, գիտելիք, որը լցնում է ստացողի ամբողջ հոգին:

Միսիոներները ուղարկվում են քարոզելու և ուսուցանելու ավետարանի առաջին սկզբունքները, Քրիստոսի՝ այն էլ խաչված Քրիստոսի ավետարանի սկզբունքները, և ոչինչ ավելին աստվածաբանական վարդապետության հարցում: Նրանք իրավունք չունեն իրենց տեսակետը շարադրել աստվածաբանության բարդ հարցերի վերաբերյալ, խորը գիտելիքի ցուցադրությամբ մոլորեցնել իրենց ունկնդիրներին: Նրանք կան և պետք է լինեն ուսուցիչներ, եթե ինչ-որ չափով բավարարում են իրենց բարձր կոչման պահանջները. սակայն նրանք պետք է ուսուցանեն այնպես, որ հնարավորինս մոտ լինի Վարդապետի ուսուցման ոճին՝ ձգտելով սիրով առաջնորդել իր ընկերներին, պարզ ձևով բացատրել և համոզել, ոչ թե փորձել ուժով համոզել:

Եղբայրնե՛ր, հանգիստ թողեք այս անօգուտ քննարկման թեման. մոտ կանգնեք հայտնված խոսքի ուսմունքներին, որոնք պարզորոշ ներկայացված են Եկեղեցու գրականության մեջ և կենդանի մարգարեների ելույթներում: Եվ թույլ մի՛ տվեք, որ վարդապետության հարցերի շուրջ դժվար հասկանալի տարբեր տեսակետները գրավեն ձեր ուշադրությունը, չլինի թե դրա հետևանքով դուք օտարանաք մեկդ մյուսից և հեռանաք Տիրոջ Հոգուց:[14]

Միսիոներական ծառայությունը կարևոր դեր ունի ինչպես տանը, այնպես էլ արտերկրում:

Ցավալի է, որ շատ տղաներ, ովքեր գնում են օտար երկրներ և հրաշալի միսիա կատարում, վերադառնալով տուն, Եկեղեցու նախագահող իշխանությունների կողմից ըստ երևույթին մոռացվում են կամ անտեսվում և թույլ է տրվում, որ կրկին դառնան անհոգ, անտարբեր և ի վերջո, միգուցե լիովին հեռանան Եկեղեցու իրենց պարտականություններից: Նրանց պետք է աշխատանքի

մեջ պահել, նրանց պետք է ինչ-որ ձևով ակտիվացնել ծառայության գործում, որպեսզի ավելի լավ պահեն ավետարանի ոգին իրենց մտքում և իրենց սրտում, և օգտակար լինեն ինչպես տանը, այնպես էլ այլ երկրներում:

Անկասկած, միսիոներական ծառայությունը պահանջարկ ունի և այնքան կարևոր է Սիոնում կամ այստեղ տանը, որքան արտասահմանում: . . . Մենք շատ տղաներ ենք տեսնում, ովքեր շեղվում են դեպի անհոգ, եթե ոչ կործանարար, ճանապարհը և սովորությունները: Յուրաքանչյուր պատանի միսիոներ, ով վերադառնում է միսիայից հավատով և բարի ցանկություններով լի, պետք է պարտավորվի, որքանով որ հնարավոր է, դառնալ փրկիչ՝ իր ավելի երիտասարդ ու անփորձ ընկերների համար: Երբ վերադարձած միսիոները տեսնում է տղայի, որը սխալ ուղի է բռնել և վատ սովորություններ է ձեռք բերել, նա պետք է գիտակցի, որ դա իր պարտականությունն է՝ հոգ տանել նրա համար իր ցցի կամ ծխի նախագահող ղեկավարության հետ, և գործադրել ողջ ուժն ու ազդեցությունը այդ մոլորված երիտասարդին փրկելու համար, որը չունի այն փորձը, որը մեր երեցներն են ձեռք բերում այլ երկրներում. և այդպիսով, դառնալով շատերի համար փրկության և ճշմարտության մեջ ավելի ամուր հաստատվելու միջոց:[15]

Միսիոներական բնագավառում աշխատելը ընդլայնում է տեսադաշտը, դարձնում կենսունակ ու եռանդուն, ավելի աշխատունակ ցանկացած բնագավառում և ամեն տեսակետից ավելի ուժեղ և ավելի օգտակար քաղաքացի, ինչպես նաև ավելի նվիրված Եկեղեցու անդամ: Մինչ միսիոները միսիայում է գտնվում, նա պետք է լիովին նվիրվի իր գործին՝ ողջ ուժն ու եռանդը նվիրաբերելով իրեն հանձնարարված պարտականությունները կատարելուն: Երբ նա վերադառնում է տուն, ընդհանուր իմաստով նա դեռևս միսիոներ է. սակայն նա պետք է հիշի, որ կրկին գրավել է իր տեղը մշակների շարքում, որ երեսի քրտինքով հաց ուտի: . . . Վերադարձած միսիոներները պահանջվում են այնտեղ, որտեղ քաջարի սրտերի, ուժեղ մտքի և կամեցող ձեռքերի կարիքը կա: Ավետարանի ոգին բարությունը բացասող ոգին չէ, լոկ վատ բաների բացակայությունն է, այն բարեգործության համար ճիշտ ձևով նպատակաուղղված եռանդուն ուժի կողմնակիցն է, այսինքն՝ աշխատանքի կողմնակիցն է:[16]

Որպես հավերժական կյանքի թանկագին սերմի կրողներ և ցանողներ, թող որ մեր կյանքը համապատասխանի մեր հավատին, մեր խոսքերը համահունչ լինեն այն ճշմարտությանը, որ մենք ենք կրում, և մեր գործերը համաձայնության մեջ լինեն

Աստծո հայտնված կամքի հետ. քանզի [եթե] մեր հավատի դավանանքը որոշ չափով նման պտուղներ չտա, մենք որպես Երեցներ կամ Սրբեր, միայն խոչընդոտներ կհանդիսանանք այս աշխատանքի առաջընթացի համար, գայթակղության քար՝ փաստերով մտածող դիտորդի համար, և ոչ միայն չենք մեծացնի ուրիշների փրկության հնարավորությունը, այլ կվտանգենք մեր անձնական փրկությունը:[17]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ են միսիոներների համար պարտադիր հատկանիշներ հանդիսանում՝ «համեստությունը, հեզությունը և անկեղծ սերը»: Ինչպիսի՞ այլ գծեր կարող են օգնել երեցներին ու քույրերին արդյունավետ միսիոներներ դառնալ: (Տես նաև ՎԵՈՒ 4:) Ինչպե՞ս կարող են այդ գծերն օգնել մեզ արդյունավետ անդամ-միսիոներներ լինել:
- Ինչո՞ւ է կարևոր, որ միսիոներներն իրենց «անբիծ պահեն աշխարհից»: Ինչպե՞ս է Տերն օրհնում նման միսիոներներին:
- Ինչպե՞ս կարող ենք մեր ոչ անդամ ընկերների և հարևանների վստահությանն արժանանալ և օգնել նրանց իմանալ, որ մեր «միակ ցանկությունը [նրանց] համար բարիք գործելն է և [նրանց] օրհնելը»: Ինչպե՞ս կարող ենք ավելի արդյունավետ լինել ոչ անդամ մեր ընկերների հետ ավետարանով կիսվելիս:
- Ինչպիսի՞ ճշմարտություններ պետք է պատրաստ լինեն միսիոներները ուսուցանելու:
- Ինչո՞ւմ է կայանում վտանգը, երբ միսիոներներն ավետարանն ուսուցանելիս օգտագործում են փաստարկներ, բանավեճեր և անօգուտ քննարկումներ: Ինչո՞ւ է ավելի մեծ զորություն գալիս պարզապես Հոգով ուսուցանելու դեպքում: (Տես ՎԵՈՒ 100.5–8:)
- Ինչպե՞ս կարող է միսիոները սնուցել «իր կոչման հոգին»: Ինչպե՞ս կարող ենք մենք որպես անդամներ, ավետարանով կիսվելիս, ձեռք բերել և սնուցել «եռանդի ու գործունեության հոգին»:
- Ինչպե՞ս կարող են վերադարձած միսիոներները «աշխատանքի մեջ» մնալ: Ինչպե՞ս կարող են Եկեղեցու ղեկավարները և մյուս անդամները օգնել վերադարձած միսիոներներին «ակտիվ մնալ ծառայության գործում»: Ինչպե՞ս կարող են վերադարձած միսիոներները դառնալ «շատերի համար փրկության և ճշմարտության մեջ ավելի ամուր հաստատվելու միջոց»:

Հղումներ

1. George Albert Smith Papers, 1834–75, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints, 3; spelling and punctuation modernized.
2. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 183–84.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 356.
4. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 25 Oct. 1906, 674.
5. *Gospel Doctrine,* 357.
6. *Gospel Doctrine,* 355.
7. *Gospel Doctrine,* 356.
8. *Gospel Doctrine,* 373–74.
9. *Gospel Doctrine,* 356–57.
10. *Gospel Doctrine,* 357; paragraphing added.
11. *Gospel Doctrine,* 358–59.
12. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 19 Sept. 1895, 593.
13. *Gospel Doctrine,* 363.
14. *Gospel Doctrine,* 364.
15. *Gospel Doctrine,* 369.
16. "Counsel to Returning Missionaries," *Millennial Star,* 2 Oct. 1913, 646–47.
17. *Life of Joseph F. Smith,* 231–32.

Հիսուս Քրիստոսը փրկագնում է ողջ մարդկությանը ֆիզիկական մահից

Հիսուս Քրիստոսի քավությունը առանց պայմանի հաղթում է ֆիզիկական մահը և բոլոր մարդկանց պարգևում հարություն և անմահություն:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Որպես միսիոներ ծառայելիս և իր ողջ կյանքում Ջոզեֆ Ֆ. Սմիթը կիսվել է փրկության վերականգնված ավետարանի ուղերձով նրանց հետ, ովքեր լսել են իրեն: Նա ուսուցանել է, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը ողջ մարդկության պատմության մեջ կատարված գլխավոր և կարևորագույն իրադարձությունն է:

Մեր Փրկչի Քավությունը առանց պայմանի հաղթում է ֆիզիկական մահը և բոլոր մարդկանց տալիս հարության և անմահության պարգևը: Ավելին, Հիսուս Քրիստոսի Քավությունը հաղթում է հոգևոր մահը՝ փրկագնելով մեզ մեր մեղքերից և հնարավոր դարձնում մեր վերհացումը, եթե ապաշխարում ենք և պահում պատվիրանները: Այս գլխում քննարկվում են Քավության ոչ պայմանական տեսակետները, իսկ հաջորդ գլխում քննարկվում են պայմանական տեսակետները:

Իր 19-ամյա դստեր Էլիսի՝ իր «սիրելի Էլիբոյի» մահվան օրը, 1901թ. ապրիլի 29-ին Ջոզեֆ Ֆ. Սմիթը որդուն գրած նամակում հաղորդում էր Քավության հանդեպ իր հավատը. «Մեր սրտերը դեռևս զետնին են խոնարհված, որտեղ հողի մեջ մեր Անուշիկ աղջկա և նրա փոքրիկ եղբայրների ու քույրերի մարմիններն են հանգչում: . . . Սակայն մենք կանենք լավագույնը, ինչին ունակ ենք, Տիրոջ օգնությամբ: Մեր սրտում զգում ենք, որ մեր բոլոր Քնած գանձերը Նրա սուրբ հովանու տակ են և շուտով հողից կբարձրա-

նան դեպի անմահություն և հավերժական կյանք: Եթե չլիներ թանկարժեք համոզումը և փառահեղ հույսն առ Քրիստոսի Ավետարանը, կյանքը ոչ միայն չարժեր կորցրած ժամանակի առումով, այլ այն կլիներ անարգ ու նզովված մի *անմիտ բան*: Սակայն «Օ՜, ինչ ուրախություն է այս միտքը պարգևում. «Ես գիտեմ, որ ապրում է Քավիչն իմ: Փա՜ռք Աստծուն»:[1]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Հիսուս Քրիստոսը գործեց փառահեղ փրկագնումը մարդկության փրկության համար:

Մենք հավատում ենք Տեր Հիսուսին և աշխարհում կատարած Նրա աստվածային, փրկող առաքելությանը և փրկագնմանը, հրաշալի, փառահեղ փրկագնմանը, որը Նա գործեց մարդկանց փրկության համար:[2]

Հիսուսն իր գործը չէր ավարտել, երբ Նրան սպանեցին, ոչ էլ ավարտել էր այն՝ մեռելներից Իր հարություն առնելուց հետո: Թեև նա իրագործեց այն նպատակը, որի համար աշխարհ էր եկել, սակայն չկատարեց Իր ամբողջ գործը: Իսկ ե՞րբ կկատարի այն: Քանի դեռ չի փրկագնել և փրկել մեր հայր Ադամի յուրաքանչյուր որդուն և դստերը, որոնք ծնվել են կամ դեռ պետք է ծնվեն այս աշխարհում մինչև ժամանակների ավարտը, բացի կորստի որդիներից: Դա է Նրա առաքելությունը:[3]

Հիսուս Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, իսկական չափանիշ է, որին պետք է բոլոր մարդիկ հետևեն, որը պետք է օրինակ լինի բոլորի համար: Նա չի եղել մեղավոր: Նա չի եղել ամբարիշտ: Նրանում չկար ոչ մի չարություն, ոչ մի անհավատություն, ոչ մի անմտություն: Նա կատարելապես օժտված էր Աստծո իմաստությամբ՝ օրորոցից մինչև գերեզման, և Իր հարությունից հետո ձեռք բերեց հոր փառքը և դարձավ Աստծո նման՝ ունենալով զորություն, ինչպես Աստված ունի զորություն, քանզի Նա հայտարարեց, որ ամեն զորություն Իրեն է տրվել և Նա նստում է Ամենազորի աջ կողքին, և մեր Միջնորդն է, մեր Ավագ Եղբայրը, և մենք պետք է հետևենք Նրան և ուրիշ ոչ ոքի:[4]

Ուրիշ անուն չի տրվել երկնքի տակ, բացի Հիսուս Քրիստոսի անունից, որով դու կարող ես փրկվել կամ բարձրանալ Աստծո արքայություն:[5]

Կան որոշ մեծ ճշմարտություններ փրկագնման ծրագրում, որոնք հիմնական են: Դրանք չեն կարող անտեսվել, դրանց

հավասար այլ ճշմարտություններ չեն կարող լինել։ Պետք է մեր ամբողջ սրտով ընդունենք Աստծո Հայր լինելը, մեր Տիրոջ և Փրկչի քավության զորությունը, այս վերջին օրերին ավետարանի վերականգնումը։[6]

Ադամի Անկումը մահ բերեց երկրի վրա։

Մահը պարզապես ահազդու սոսկում չէ։ Դրա հետ են կապված մարդկային կյանքի որոշ հիմնական և կարևորագույն ճշմարտությունները։ Թեև այն ցավ է պատճառում հատկապես նրանց, ովքեր ապրում են իրենց սիրելիների կորուստը, սակայն մահը աստվածային մտահղացման ամենամեծ օրհնություններից մեկն է։

Մենք ծնվում ենք, որպեսզի մահկանացու կյանք ունենանք, այսինքն, որ մեր հոգին մարմին հագնի։ Դա օրհնություն է՝ առաջին քայլն է դեպի անմահ մարմին, իսկ երկրորդ քայլն է մահը։ Մահն ընկած է հավերժական զարգացման ճանապարհին, ու թեև դժվար է այն կրել, նա, ով հավատում է Հիսուս Քրիստոսի ավետարանին, հատկապես հարությանը, չի ցանկանա փոխել այն։ . . . Մահն իսկապես անհրաժեշտություն է, ինչպես օրհնությունը, և . . . մենք առանց դրա չէինք կարող և չէինք լինի բավարարված և լիովին երջանիկ։[7]

Երբ մարդն [Ադամը] օրինազանցեց այն երկնային օրենքը, որը արգելում էր նրան ճաշակել այս երկրի պտուղներից, որով նա պետք է դառնար երկրային, նա իր վրա վերցրեց ֆիզիկական մահը, ինչպես Աստված էր զգուշացրել, եթե նա ճաշակի «արգելված պտուղից»։[8]

Քանզի մահը պատիժ էր օրենքը խախտելու համար, որը մարդն անզոր էր կանխել, Աստծո այն հրամանը չկատարելու համար, որ՝ «այն օրը, երբ դու ուտես նրանից, դու անկասկած կմեռնես», [Մովսես 3.17] և այս պատիժը պետք է տարածվեր բոլոր մարմինների վրա, որպեսզի բոլորը դառնային այնպես անօգնական ու կախյալ, ինչպես նա էր այս պարագայում։[9]

Մենք կոչվում ենք մահկանացու էակներ, քանի որ մեր մեջ կան մահվան սերմերը, սակայն իրականում մենք անմահ ենք, որովհետև մեր մեջ կա հավերժական կյանքի սաղմը։ Մարդը երկակի էակ է, կազմված ոգուց, որը մարդուն տալիս է կյանք, ուժ, բանականություն, ունակություն, և մարմնից, որը ոգուն ապաստան է տալիս և համապատասխանում է նրա ձևին, հարմարվելով նրա

կարիքներին, և ներդաշնակորեն է գործում նրա հետ, և օժտված է ոգու կամքին հնազանդվելու կատարյալ ունակությամբ: Այդ երկուսը միասին հոգևոր մարմին են: Մարմինը կախված է հոգուց, իսկ հոգին մարմնում գտնվելու իր բնականոն վիճակում ենթարկվում է օրենքներին, որոնք կիրառելի են նրա համար և կառավարում են այն իր մահկանացու վիճակում: Այս բնական մարմնում կան թուլության և քայքայման սերմեր, որոնց լիովին հասունանալու կամ վաղաժամ ոչնչացման դեպքում, սուրբ գրության լեզվով, գալիս է «ֆիզիկական մահը»:[10]

Այս աշխարհում ծնված ամեն մարդ պետք է մահանա: Կարևոր չէ, թե ով է նա, կամ որտեղ է նա ապրում, ծնվել է արդյոք այս աշխարհում հարուստների և ազնվականների, թե աղքատների ու խեղճերի մեջ, նրա օրերը հաշվված են Տիրոջ կողմից և սահմանված ժամանակին նա կհասնի վերջին: Մենք պետք է խորհենք այս մասին: Դա չի նշանակում, որ մենք պետք է քայլենք ծանր սրտով կամ մռայլ տեսքով, ամենևին: Ես ուրախ եմ, որ ծնվել եմ ապրելու, մահանալու և կրկին ապրելու համար: Ես շնորհակալ եմ Աստծուն այս գիտելիքի համար: Այն ինձ ուրախություն և խաղաղություն է պարգևում, որն աշխարհը չի կարող տալ կամ վերցնել: Աստված հայտնել է սա ինձ Հիսուս Քրիստոսի ավետարանով: Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է: Ուստի, ես չունեմ տխրելու կամ վշտանալու առիթ:

Այն ամենը, ինչ պետք է ես կատարեմ այս աշխարհում, նախատեսված է, որպեսզի վեհացնի, ուրախություն և խաղաղություն, հույս ու սփոփանք պարգևի այս ներկա կյանքում, և փրկության ու իմ Աստծո ներկայություն համբարձվելու փառահեղ հույս պարգևի գալիք կյանքում: Ես պատճառ չունեմ սգալու, նույնիսկ մահվան առիթով: Իսկապես, ես այնքան թույլ եմ, որ կարող եմ իմ ընկերների ու հարազատների մահվան առիթով արտասվել: Ես կարող եմ արցունք թափել, երբ տեսնում եմ ուրիշների վիշտը:

Իմ հոգում ես կարեկցում եմ մարդկանց զավակներին: Ես կարող եմ արտասվել, երբ նրանք արտասվում են: Ես կարող եմ ուրախանալ, երբ նրանք ուրախանում են, սակայն ես սգալու կամ տխրելու առիթ չունեմ, որ աշխարհ է այցելում մահը: Ես խոսում եմ այժմ ֆիզիկական մահվան, մարմնի մահվան մասին: . . . [Վերջին Օրերի Սրբերը] գիտեն, որ ինչպես Ադամի օրինազանցությամբ իրենք մահանում են, այնպես էլ Հիսուս Քրիստոսի արդարությամբ իրենք կյանք կունենան, ու թեև մահանան, կրկին կապրեն:[11]

Հիսուս Քրիստոսի Քավությունը հաղթում է ֆիզիկական մահը բոլոր մարդկանց հարության միջոցով։

Մահը եկել է մեզ վրա առանց մեր կամքի։ Մենք դրանում ոչ մի մասնակցություն չենք ունեցել, այն եկել է մեր առաջին ծնողների օրինազանցության պատճառով։ Ուստի, այն մարդը, որը ոչ մի մասնակցություն չի ունեցել իր վրա մահ բերելիս, չի մասնակցի դրան կրկին կյանք ձեռք բերելիս։ Քանզի ինչպես որ նա մահանում է Ադամի մեղքի հետևանքով, այնպես էլ կրկին կապրի, ցանկանում է, թե ոչ, Հիսուս Քրիստոսի արդարության և Նրա հարության շնորհիվ։ Ամեն մարդ, որը մահանում է, կրկին պիտի ապրի։[12]

Հիսուս Քրիստոսը . . . մեռելներից հարության առաջնեկը եղավ. ինչպես որ նա հարություն առավ, այնպես էլ նա հարություն կտա Իր Հոր բոլոր զավակներին, որոնց վրա եկել էր Ադամի անեծքը։ Քանզի ինչպես մի մարդով ֆիզիկական մահ եկավ բոլոր մարդկանց վրա, այնպես էլ Քրիստոսի արդարությամբ բոլորը կյանք կստանան, մեռելներից հարության միջոցով, որը կգա բոլոր մարդկանց վրա՝ կարևոր չէ բարի են, թե չար, սև, թե սպիտակ, ստրուկ, թե ազատ, ուսյալ, թե անկիրթ, երիտասարդ, թե ծեր [տե՛ս Ա Կորնթացիս ԺԵ.21–22; Ալմա 11.44]։ Մահը, որը եկել էր մեր առաջին ծնողների անկումով, արմատախիլ է արվել Աստծո Որդու հարությամբ, և դա ինձանից ու ձեզանից կախված չէ։[13]

Մենք բոլորս գիտենք, որ [Աստծո Որդին] խաչը բարձրացվեց. որ նրա կողը խոցեցին, և նրա կենդանի արյունը հոսեց իր մարմնից, որ նա տառապեց խաչի վրա և հոգին տվեց, որ նրա մարմինը վերցվեց խաչի վրայից . . . և պատվեց ազնիվ կտավով և դրվեց քարից փորված գերեզմանի մեջ, որտեղ երբեք ոչ մեկի մարմինը չէր դրվել։[14]

Քրիստոսն Ինքը կործանեց գերեզմանի արգելագիծը, հաղթեց մահվանը և «ննջածների առաջնեկը» եղավ [Ա Կորնթացիս ԺԵ.20]։[15]

Նա աշխարհ եկավ . . . կրկնակի զորություն հագած, մեռնելու զորություն, որը Նա ստացել էր իր մորից, և մահին դիմակայելու զորություն, եթե Նա ցանկանար դա, որը ժառանգել էր Իր Հորից։ Այսպիսով, Նա զորություն ուներ և հավերժ ապրելու, և մահի ծանր փորձության միջով անցնելու, որպեսզի կրեր դա բոլոր մարդկանց համար և դուրս գար գերեզմանից դեպի նորացած կյանք, լինելով հարություն առած էակ, հագած անմահություն ու

հավերժական կյանք, որ բոլոր մարդիկ կարողանան գերեզմանից դեպի հավերժական կյանք դուրս գալ, եթե հնազանդվեն Իրեն: Նրանք ամեն դեպքում հարություն կառնեն կամ որպես պատվի անոթներ կամ անպատվության անոթներ: Նրանք առաջ կգան գերեզմանից, ցանկանում են դա, թե ոչ: Նրանք չեն կարող ոչինչ անել: Մենք չենք կարող մեզ վրա եկող մահկանացու անեծքը վերացնել, ինչպես նաև խուսափել կամ կանխել այս մարմնի հարությունը այդ գերեզմանից: Քանզի ինչպես Աստված բարձրացավ մեռելներից, այնպես էլ բոլոր մարդիկ հարություն կառնեն:[16]

Մենք հաստատապես հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ և միակ ճշմարիտ օրինակն է մահից դեպի կյանք մարդկանց հարության: Մենք հավատում ենք, որ չկա մահից կյանք հարության այլ ձև. որ ինչպես Նա հարություն առավ և պահպանեց Իր ինքնությունը, նույնիսկ Իր ձեռքերի, ոտքերի ու կողի վերքերի սպիները, որպեսզի ապացուցի ուրիշներին, ովքեր չէին հավատա մեռելներից հարություն առնելու հնարավորությանը, որ Ինքն իրոք խաչված Տերն է, գերեզմանում թաղված և մահից կրկին դեպի կյանք հարություն առած, այնպես էլ կլինի ձեզ հետ և այս աշխարհում ծնված Ադամի յուրաքանչյուր որդու ու դստեր հետ:[17]

Մենք դուրս կգանք գերեզմանից, երբ փողը հնչի, և մեր մարմինը հարություն կառնի ու մեր հոգին կրկին կմտնի մարմնի մեջ և կդառնա կենդանի հոգի, որպեսզի այլևս չբաժանվի կամ չառանձնանա, այլ դառնա անբաժանելի, անմահ, հավերժ:[18]

Այս ֆիզիկական մարմինը կազմող տարրերը չեն ոչնչանա, չեն դադարի գոյություն ունենալ, այլ հարության օրն այդ տարրերը կրկին կմիանան՝ ոսկորը ոսկորին և միսը մսին: Մարմինը կկանգնի այնպիսի տեսքով, ինչպես այն հանգչել է, քանզի գերեզմանում չկա աճ կամ զարգացում: Ինչպես որ այն պառկել է, այնպես էլ կբարձրանա, իսկ վերականգնման օրենքով տեղի կունենան կատարելության փոփոխությունները: Հոգին կշարունակի ընդլայնվել և զարգանալ, իսկ մարմինը հարությունից հետո կզարգանա հասնելով մարդու կատարյալ հասակին:[19]

Հոգին ու մարմինը կվերամիավորվեն: Մենք միմյանց կտեսնենք մարմնի մեջ, այն նույն խորանի մեջ, որը մենք այժմ ունենք մահկանացու կյանքում: Մեր խորանները առաջ կգան այնպես, ինչպես պառկել են, թեև վերականգնում տեղի կունենա, յուրաքանչյուր օրգան, վերջույթ, որը խեղվել է, յուրաքանչյուր տձևություն, որը երբևէ առաջացել է պատահարի կամ այլ պատճառի հետևանքով,

կվերականգնվի և կուղղվի: Յուրաքանչյուր վերջավորություն և հոդ պետք է վերականգնվի իր բնական կառուցվածքով: Մենք կճանաչենք միմյանց և կվայելենք միմյանց ներկայությունը հավերժության անվերջ դարերի ընթացքում, եթե պահենք Աստծո օրենքը:[20]

Ի՞նչ սքանչելի միտք, թեկուզև ինձ համար, և պետք է լինի բոլոր նրանց համար, ովքեր հասկացել են ճշմարտությունը կամ ընդունել իրենց սրտերում, որ կրկին կհանդիպենք նրանց, ումից մենք բաժանվել ենք այստեղ, և նրանց կտեսնենք, ինչպես որ կան: Մենք կհանդիպենք նույն անհատին, որի հետ ընկերակցել ենք այստեղ մարմնում, ոչ թե մեկ այլ հոգու կամ մեկ այլ էակի այլ կազմվածքով, այլ նույն անհատին՝ նույն կազմվածքով և նմանությամբ, նույն անձնավորությանը, որի հետ հաղորդակցվել ենք մեր մահկանացու գոյության ժամանակ, նույնիսկ մարմնի վերքերը: Դա չի նշանակում, որ մարդը պետք է միշտ մնա իր սպիներով, վերքերով, տձևություններով, ֆիզիկական թերություններով, քանի որ դրանք իրենց ընթացքով ու պատշաճ ժամանակին կանհետանան, համաձայն Աստծո ողորմած կանխատեսությանը: Տձևությունը կանհետանա, թերությունները կվերանան, և տղամարդիկ ու կանայք ձեռք կբերեն իրենց հոգիների կատարելությունը, այն կատարելությունը, որն Աստված է նախատեսել ի սկզբանե: Նրա նպատակն է, որ տղամարդիկ ու կանայք, նրանց զավակները, որոնք ծնվել են դառնալու Աստծո ժառանգները, և Քրիստոսի ժառանգակիցները, կատարյալ դառնան, ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես, օրենքին հնազանդվելու միջոցով, որով Նա միջոցներ է ձեռնարկել, որ կատարելությունը հասանելի լինի Իր բոլոր զավակներին:[21]

Այնքանով, որքանով հավերժական առաջընթացի և նվաճման աստիճանները հայտնի են դարձվել աստվածային հայտնության միջոցով, մենք պետք է հասկանանք, որ միայն հարություն առած և փառավորված էակները կարող են դառնալ հոգևոր սերնդի ծնողներ: Միայն համբարձված այդպիսի հոգիներն են հասել հասունության՝ հավերժական կյանքի նշանակված ընթացքով: Իսկ նրանցից ծնված հոգիները հավերժական աշխարհներում, նախասահմանված հաջորդականությամբ կանցնեն մի քանի փուլերով կամ վիճակներով, որով փառավորված ծնողներն են համբարձում ձեռք բերել:[22]

Ես չեմ կարող պատկերացնել որևէ այլ բաղձալի բան, քան այն, ինչ շնորհվել է մեզ Հիսուս Քրիստոսի ավետարանով, որ թեև մենք մահանում ենք, միևնույն է, պետք է կրկին ապրենք, ու թեև

մահանում ենք և վերածվում այն բնական տարրերին, որոնցից մեր խորաններն են կազմված, միևնույն է այդ տարրերը կրկին կմիանան մեկը մյուսին ու կվերակազմավորվեն, և մենք կենդանի հոգիներ կդառնանք, ինչպես Փրկիչը մեզանից առաջ: Եվ այն փաստը, որ Նա կատարեց դա, հնարավոր դարձրեց դա մեզ բոլորիս համար:[23]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞րն է Հիսուս Քրիստոսի «աստվածային, փրկող առաքելությունը» փրկագնման ծրագրում:
- Ինչո՞ւ պետք է Քավության իրականությունը և զորությունը «ընդունենք մեր ամբողջ սրտով»: Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր այդպես են վարվում:
- Ինչպե՞ս է, որ մարդը «երկակի էակ» է: (Տես նաև ՎԿՈ 88.15–16:) Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս մեզ այս գիտելիքի շնորհիվ:
- Ի՞նչ է ֆիզիկական մահը: Ինչպե՞ս է այն օգնում ձեզ այն գիտելիքը, որ «մահն ընկած է հավերժական առաջընթացի ճանապարհին»:
- Ո՞ր վարդապետություններն են օգնում մեզ մեր կյանքից վանել ֆիզիկական մահվան հանդեպ վախը: Ինչո՞ւ պետք է ուրախանանք, որ «ծնվել ենք ապրելու, մահանալու և կրկին ապրելու համար»:
- Ինչպե՞ս էր Հիսուս Քրիստոսը «կրկնակի զորություն հագած»:
- Ի՞նչ է նշանակում հարություն առնել: Ի՞նչ տեսք կունենան մեր մարմինները, երբ հարություն առնենք:
- Ի՞նչ եք զգում, երբ հասկանում եք, որ Հիսուս Քրիստոսը ձեզ համար հնարավոր է դարձրել հարությունը և հավերժական կյանքը: Ինչպե՞ս է դրա գիտակցումն օգնում ձեզ պահել Աստծո հետ կապած ուխտերը:
- Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ մեկ օր մենք իսկապես պետք է մահանանք և հարություն առնենք:

Հղումներ

1. Joseph F. Smith to Jos. R. Smith, 14 May 1901, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 138.
3. *Gospel Doctrine,* 442.
4. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 5:54.

5. *Gospel Doctrine,* 39.
6. *Gospel Doctrine,* 117.
7. *Gospel Doctrine,* 296–97.
8. "Latter-day Saints Follow Teachings of the Savior," *Scrap Book of Mormon Literature,* 2 vols. (n.d.), 2:555.
9. *Gospel Doctrine,* 202.
10. *Gospel Doctrine,* 14.
11. *Gospel Doctrine,* 428; paragraphing added.
12. *Gospel Doctrine,* 69.
13. *Gospel Doctrine,* 469.
14. *Gospel Doctrine,* 463.
15. *Gospel Doctrine,* 444.
16. "Latter-day Saints Follow Teachings of the Savior," 2:558.
17. *Gospel Doctrine,* 435.
18. *Gospel Doctrine,* 450–51.
19. "Editor's Table: On the Resurrection," *Improvement Era,* June 1904, 623–24.
20. *Gospel Doctrine,* 447.
21. *Gospel Doctrine,* 23.
22. *Gospel Doctrine,* 69–70.
23. Gospel Doctrine, 458.



Քրիստոսը Գեթսեմանիի պարտեզում, Հարի Անդերսոն։
Իր Քավությամբ Հիսուս Քրիստոսը փրկագնեց ողջ մարդկությանը
ֆիզիկական մահից։ Նա նաև փրկագնում է մեղքից ապաշխարողին։

Հիսուս Քրիստոսը ապաշխարողներին փրկագնում է հոգևոր մահից

Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկագնում է հոգևոր մահից նրանց, ովքեր ապաշխարում են և հավատարիմ են:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

«Ես այժմ երիտասարդ և անփորձ եմ», գրել է Ջոզեֆ Ֆ. Սմիթը Հավայան Կղզիներում իր միսիայի ժամանակ: «Այդ պատճառով ցանկանում եմ Տիրոջ առաջ լինել խոնարհ, աղոթող, որպեսզի լինեմ արժանի Աստծո օրհնություններին և սիրուն»:[1] Հավայան Կղզիներում իր միսիայի սկզբում երիտասարդ միսիոները հոգևոր փորձառություն ունեցով, որը ցույց էր տալիս Հիսուս Քրիստոսի Քավության մաքրագործող և սփոփող զորությունը. Նա ասել է, որ «շատ էր ընկճված» իր միսիայի ժամանակ և գտնվում էր «աղքատության մեջ, կրթության և գիտելիքի պակաս ուներ»:

Այդ պայմաններում ես երազում տեսա, որ ճամփորդում եմ, և այնպիսի զգացում ունեմ, որ պետք է շտապեմ, շտապեմ իմ ողջ կարողությամբ, այլապես կուշանամ: Ես շտապում էի, որքան հնարավոր էր, և ես հիշում էի, որ մի փոքր փաթեթ ունեի, թաշկինակով փաթաթված մի փոքր փաթեթ: Ես չէի հասկանում, թե դա ինչ է, երբ ուժերիս ներածին չափով սլանում էի առաջ: Ի վերջո ես հասա մի հրաշալի պալատի, եթե այն կարելի էր պալատ անվանել: Այն մեծ էր, շատ հսկայական, որը կարելի էր մարդկային ձեռքերով կառուցել, սակայն մի միտք եկավ, որ ես գիտեմ, որ սա է իմ նպատակակետը: Երբ ես արագ մոտեցա դրան, մի գրություն տեսա. «Լողարան»: Ես իսկույն այդ կողմ թեքվեցի, մտա լողարան և լվացվելով մաքրվեցի: Ես բացեցի իմ մոտի փոքրիկ փաթեթը, իսկ այնտեղ տաճարային մի զույգ սպիտակ, մաքուր ներքնազգեստներ էին, մի բան, որ երկար ժամանակ չէի տեսել: . . . Ես դրանք հագա:

Ապա արագ շտապեցի դեպի, թվում էր թե, մեծ մուտքը կամ դուռը: Ես թակեցի և դուռը բացվեց, և մարդը, որ կանգնած էր այնտեղ Մարգարե Զոզեֆ Սմիթն էր: Նա մի փոքր հանդիմանությամբ նայեց ինձ վրա և նրա արտասանած առաջին բառերն էին. «Զոզե՛ֆ, դու ուշացել ես»: Այնուամենայնիվ, ես համարձակություն ունեցա ասելու.

«Այո, բայց ես մաքուր եմ, ես մաքուր եմ»:

. . . Այդ տեսիլքը, այդ հայտնությունն ու վկայությունը, որ ես վայելում էի այդ ժամանակ, ինձ դարձրեց այնպիսին, ինչպիսին ես այժմ եմ, եթե իմ մեջ կա ինչ-որ լավ, մաքուր, կամ շիտակ բան Տիրոջ առաջ, եթե կա ինչ-որ բարի բան իմ մեջ: Դա օգնեց ինձ դուրս գալ բոլոր փորձություններից և դժվարություններից»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Ադամի Անկումով հոգևոր մահ եկավ աշխարհ:

Ես ուզում եմ երկու խոսք ասել մյուս մահվան մասին, որն ավելի սոսկալի է, քան մարմնական մահը: Երբ Ադամը, մեր առաջին ծնողը, ճաշակեց արգելված պտղից, խախտեց Աստծո օրենքը և ենթարկվեց սատանային, նա վտարվեց Աստծո ներկայությունից: . . . Սա առաջին մահն էր: Թեև ապրում էր, սակայն նա մահացած էր՝ մահացած Աստծո համար, լույսի և ճշմարտության համար, հոգեպես մահացած. արտաքսված Աստծո ներկայությունից, կտրված Հոր և Որդու հետ հաղորդակցվելուց: Նա այնքան հաստատապես էր դուրս գցվել Աստծո ներկայությունից, որքան սատանան և նրան հետևող զորքերը: Դա հոգևոր մահ էր:[3]

Ես ուզում եմ ձեր մտքում տպավորվի, թե «ինչպես [Ադամը] հոգևոր մահ տարավ»: Ինչպիսի՞ն էր նրա վիճակը, երբ նա դրվեց Եդեմի Պարտեզում: Նա մոտ էր Աստծուն: Նա Նրա Ներկայության մեջ էր: Նա քայլում էր և խոսում էր Նրա հետ՝ դեմառդեմ, ճիշտ ինչպես մի մարդ խոսում է մեկ ուրիշի հետ: Այսպիսին էր Ադամի և Եվայի վիճակը, երբ նրանք պարտեզում էին: Սակայն երբ ճաշակեցին արգելված պտղից, դուրս գցվեցին և արտաքսվեցին Աստծո ներկայությունից, . . . «որով նրանք դարձան հոգեպես մահացած, որն առաջին մահն է»: [Տես ՎԿՈ 29.41:] Եվ անհնար էր Ադամի համար դուրս գալ այն վիճակից, որի մեջ դրել էր ինքն իրեն: Նա սատանայի տիրապետության տակ էր: . . . Նա «հոգեպես մեռած էր»՝ արտաքսված Աստծո ներկայությունից: Եվ եթե նրան դրանից ձերբազատվելու ոչ մի ճանապարհ չտրվեր, նրա

մահը կլիներ մշտական, անվերջ, հավերժական մահ, չունենալով դրանից փրկագնվելու որևէ հույս:[4]

Ոչ ոք չի կարող մեղքի մեջ փրկվել Աստծո արքայության մեջ:

Ոչ ոք իր մեղքերի մեջ Աստծո ներկայություն չի կարող մտնել, և ոչ ոք չի կարող իր մեղքերից թողություն ստանալ, եթե չապաշխարի և [չթաղվի] Քրիստոսի հետ [տե՛ս Հռովմայեցիս Զ.4]: Քանզի Աստված մեզ ազատ կամքով է ստեղծել՝ ընտրելու բարին կամ չարը, քայլելու լույսի կամ խավարի մեջ, թողնելով մեր ընտրությանը, և Նա սահմանել է այնպես, որ մենք կարողանանք Իրեն նմանվել, որ եթե դրսևորենք մեզ այնպես, որ արժանի լինենք հավերժական կյանքին և Նրա ներկայության փառքին, ապա այդպես էլ կլինի, քանի որ ապաշխարել ենք մեր մեղքերից, հնազանդվել և պահել Նրա պատվիրանները:[5]

Ոչ ոք մեղքերի մեջ չի կարող փրկվել Աստծո արքայությունում: Ոչ ոք երբեք չի ներվի իր մեղքերի համար արդար Դատավորի կողմից, եթե չապաշխարի իր մեղքերից: Ոչ ոք երբեք չի ազատվի [հոգևոր] մահի իշխանությունից, եթե վերստին չծնվի, ինչպես Ամենազոր Տերն է վճռել:[6]

Աստված բոլորին ազատ գործելու իրավունք է տվել և մեզ արտոնություն է շնորհել՝ Իրեն ծառայել կամ չծառայել, ճիշտ կամ սխալ գործել: Եվ այս արտոնությունը տրվել է բոլորին՝ անկախ իրենց համոզմունքներից, մաշկի գույնից կամ վիճակից: Հարուստն ունի գործելու այս ազատությունը, աղքատն ունի գործելու այս ազատությունը, և ոչ ոք Աստծո ոչ մի իշխանությամբ չի զրկվել այն լիովին և ազատորեն գործադրելուց: Այս ազատությունը տրվել է բոլորին: Սա օրհնություն է, որ Աստված շնորհել է մարդկային աշխարհին, իր բոլոր զավակներին նույն ձևով: Բայց նա մեզ խստորեն պատասխանատվության կենթարկի այն բանի համար, թե ինչպես ենք օգտագործել ազատ գործելու այդ իրավունքը, և ինչպես որ ասվել է Կայենի մասին, նույնը կասվի մեզ համար. «Եթե բարի լինիս, կբարձրանաս, բայց եթե բարի չլինիս, մեղքը դռան մոտ պառկած է» (Ծնն. Դ.7): . . . Բոլոր մարդկանց, անկախ իրենց վիճակից, շնորհելով ազատ գործելու այս իրավունքը՝ ընտրելու բարին կամ չարը, Աստված չի շնորհել և չի շնորհի մարդկանց զավակներին մեղքերի թողություն, բացի միայն օրենքին հնազանդվելու միջոցով: Հետևաբար, ամբողջ աշխարհը մեղքի մեջ է պառկած և դատապարտության տակ է այնքան,

որքան լույս է եկել աշխարհ, իսկ մարդիկ չեն ցանկանում իրենց պատշաճ դիրքում դնել Աստծո առաջ:[7]

Քրիստոսի Քավությունը փրկագնում է մեզ հոգևոր մահից՝ ապաշխարության և հնազանդության միջոցով:

Տերն ի սկզբանե նախատեսել էր մարդու առաջ բացել բարու և չարի մասին գիտելիքը, պատվիրան էր տվել՝ չարն ատեցեք և բարուն հետևեք: Սակայն եթե նա ձախողվեր դրանում, Նա պետք է զոհաբերության օրենք և Փրկիչ տար մարդուն, որ նա կրկին ետ բերվեր դեպի Աստծո ներկայություն և Նրա բարեհաճությանը, և Նրա հետ ճաշակեր հավերժական կյանքը: Սա էր փրկագնման ծրագիրը՝ ընտրված և հաստատված Ամենազորի կողմից, նախքան մարդը երկրի վրա կդրվեր: Եվ երբ մարդն ընկավ՝ զանց առնելով օրենքը, որը տրվել էր իրեն, Տերը տվեց նրան զոհաբերության օրենքը, և նրա հասկացողությանը հասցրեց, որ դրա նպատակն է՝ հիշեցնել իրեն այն մեծ իրադարձության մասին, որը պետք է կատարվի ժամանակների գագաթնակետում, որով նա և իր բոլոր սերունդները կարող են բարձրանալ մեռելներից՝ փրկագնման և հարության զորությամբ, և Աստծո հետ ճաշակել հավերժական կյանքից՝ Նրա արքայությունում:[8]

[Ադամի] փրկագնման համար ծրագիր էր նախատեսված: Ամենազորը վճռել էր, որ նա չպետք է ֆիզիկապես մահանար, մինչև որ չսովորեցվեր, թե ինչպես խույս տա հոգևոր մահից, որը եկել էր նրա վրա մեղքի պատճառով: Հետևաբար, հրեշտակը եկավ և փրկության Ավետարանը սովորեցրեց նրան, պատմեց Քրիստոսի՝ աշխարհի Քավիչի մասին, որը պետք է գար ժամանակների գագաթնակետում, զորություն ունենալով՝ հաղթելու մահին և փրկագնելու Ադամին ու նրա սերունդներին անկումից և սատանայի իշխանությունից: . . . Մեկ ուրիշն էլ էր հարկավոր, որպեսզի ձեռք մեկներ և նրան օգներ բարձրանալ: Մեկ այլ և ավելի բարձր ուժ, քան իրենը, պետք է դուրս հաներ նրան այն վիճակից, որտեղ դրել էր ինքն իրեն. քանզի նա ընկել էր սատանայի տիրապետության տակ, ինքն իրենով դարձել անզոր և անօգնական:

Այդ պատճառով ավետարանը քարոզվեց նրան և ճանապարհ ցույց տրվեց, թե ինչպես կարելի է ազատվել այդ հոգևոր մահից: Այդ ազատումը գալիս է Աստծո հանդեպ հավատքի, մեղքերից ապաշխարության, մեղքերից թողության համար՝ մկրտության, ձեռնադրությամբ Սուրբ Հոգու պարգևի միջոցով: Այդպիսով, նա գիտելիք ստացավ ճշմարտության և Հիսուս Քրիստոսի վկայության մասին, և փրկագնվեց հոգևոր մահից, որը եկել էր նրա վրա,

որն առաջին մահն էր, լիովին ու կատարյալ մահը, ինչ վերաբերում է հոգուն, թեև նա ապրում էր, շարժվում էր և գոյություն ուներ այնպես, ինչպես մինչև արգելված պտուղը ճաշակելը և հոգեպես մահանալը: Նա իր էությունն ու իր օրգանիզմն ուներ, սակայն հոգեպես մահացած էր և պետք է փրկագնվեր այդ վիճակից:[9]

Ադամը . . . պետք է փրկագնվեր [հոգևոր մահից] Քրիստոսի արյունով, և հավատքով ու Աստծո պատվիրաններին հնազանդվելով: Այդպիսով, Ադամը փրկագնվեց առաջին մահից և ետ բերվեց Աստծո ներկայություն, կրկին ետ դեպի Ամենազորի բարեհաճությունը, դեպի հավերժական զարգացման ու առաջընթացի ուղին:[10]

Եթե Տերը հայտնել է աշխարհին փրկության և մեղքից փրկագնման ծրագիրը, ըստ որի մարդիկ կարող են կրկին բարձրացվել Նրա ներկայության մեջ և նրա հետ ճաշակել հավերժական կյանքից, ես հաստատում եմ, որպես հիմնավորում, որը չի կարող վիճարկվել, որ ոչ ոք չի կարող բարձրացվել Աստծո ներկայություն, և նրա արքայության ու ներկայության մեջ ձեռք բերել փառքի ու երջանկության լիությունը, եթե չհնազանդվի ծրագրին, որն Աստված է նախագծել և հայտնել:[11]

Եթե մենք ներդաշնակության մեջ ենք ապրում մեր Երկնային Հոր ծրագրերի հետ, եթե մեր սրտերն ուղղված են առ Տերը և մեր Ավագ Եղբայրը՝ Աստծո Որդին, մեր փառահեղ Քավիչը, ապա Նրա միջոցով մենք ոչ միայն հարություն ենք առնում մահից, այլև փրկագնվում ենք, կամ կարող ենք փրկագնվել հոգևոր մահից և ետ դառնալ Աստծո ներկայություն:[12]

Քրիստոսը աստվածային ձևով նշանակվեց և աշխարհ ուղարկվեց՝ փրկելու մարդկությանը մեղքից՝ ապաշխարության միջոցով, փրկելու մարդկությանը մահից, որը նրանց վրա եկավ առաջին մարդու մեղքով, [օրինազանցությամբ]: Ես հավատում եմ դրան իմ ողջ հոգով:[13]

Երբ մենք մեղք ենք գործում, անհրաժեշտ է, որ ապաշխարենք և մեր ուժերի սահմանում փոխհատուցենք վնասը: Եթե չենք կարող փոխհատուցել մեր կողմից հասցված վնասը, ապա պետք է հայցենք Աստծո թողությունն ու ողորմածությունը, որ այն մաքրի մեզ այդ անօրինությունից:

Մարդիկ չեն կարող ներել իրենց մեղքերը: Նրանք չեն կարող իրենց մաքրել՝ իրենց իսկ մեղքերի հետևանքներից: Մարդիկ կարող են դադարել մեղքեր գործելուց և կարող են ճիշտ գործել հետագայում, և այն ժամանակ իրենց գործերը կընդունվեն Տիրոջ

առաջ և ուշադրության կարժանանան: Բայց ով պետք է շտկի այն սխալները, որ կատարել են իրենց և ուրիշների հանդեպ, որոնք անհնար է, որ իրենք շտկեն: Հիսուս Քրիստոսի քավությամբ ապաշխարողի մեղքերը կլվացվեն, թեև որդան կարմրի պես լինեն, բրդի պես սպիտակ պիտի դառնան [տե՛ս Եսայիա Ա.18]: Սա է մեզ տրված խոստումը:[14]

Քավությամբ և մեր հավատարմությամբ մենք կարող ենք Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցներ լինել:

Մենք պետք է կանգնենք Աստծո դատարանի առջև դատվելու: Այսպես է ասում Աստվածաշունչը, այսպես է ասում Մորմոնի Գիրքը, և այսպես են ասում հայտնությունները, որոնք մեզ են հասել ուղղակիորեն Սարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Եվ ապա ովքեր չեն ենթարկվել և հնազանդվել սելեստիալ օրենքին, չեն կենդանացվի սելեստիալ փառքով: Իսկ ովքեր չեն ենթարկվել և հնազանդվել թերեստրիալ օրենքին, չեն կենդանացվի թերեստրիալ փառքով: Իսկ նրանք, ովքեր չեն ենթարկվել և հնազանդվել թելեստիալ օրենքին, չեն կենդանացվի թելեստիալ փառքով, սակայն նրանք կունենան առանց փառքի թագավորություն:[15]

Գերեզմաններում պառկած բոլոր մարմինները պետք է ի լույս կանչվեն. ոչ բոլորը առաջին հարության ժամանակ և առաջին հարության առավոտյան, սակայն ոմանք մի գուցե վերջին հարության ժամանակ: Եվ ամեն մի հոգուց կպահանջվի կանգնել Աստծո դատարանի առջև և դատվել մարմնում կատարված գործերի համաձայն: Եթե նրա գործերը բարի են եղել, ապա նա ստանում է բարեգործի վարձքը, եթե [դրանք] չար են եղել, ապա նա կարտաքսվի Տիրոջ ներկայությունից:[16]

Այն ժամանակ մենք կապրենք: Մենք չենք մահանա, մենք չենք սպասի մահվան, այլ կսպասենք կյանքին, անմահությանը, փառքին, համբարձմանը և կկենդանացվենք սելեստիալ արքայության փառքով, և կստանանք դա նույնիսկ ամբողջությամբ: Սա է մեր ճակատագիրը: Սա է համբարձված վիճակը, որին կարող ենք հասնել, և ոչ մի զորություն չի կարող զրկել մեզ դրանից կամ գողանալ այն մեզանից, եթե մենք նվիրված և հավատարիմ լինենք ավետարանի ուխտին:[17]

Մեր երկրային գոյության նպատակն է՝ ունենալ լիարժեք ուրախություն և դառնալ Աստծո որդիներն ու դուստրերը, բառի ամբողջական իմաստով, լինելով Աստծո ժառանգներ և Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցներ, լինել թագավորներ և քահանաներ Աստծո

համար, ժառանգել փառք, տիրապետություն, համբարձում, գահեր և մեր Երկնային Հոր կողմից զարգացրած ու ձեռք բերած ամեն զորություն ու հատկություն: Սա է մեր երկրային գոյության նպատակը: Որպեսզի ձեռք բերենք այս համբարձված վիճակը, անհրաժեշտ է, որ անցնենք այս մահկանացու փորձառության կամ փորձության միջով, որով մենք կարող ենք անցնել արժանիորեն, մեր ավագ եղբոր՝ Հիսուսի օգնությամբ:[18]

Մարդիկ կարող են փրկվել և համբարձվել Աստծո արքայության մեջ, եթե արդարակյաց են, ուստի մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից և քայլենք լույսի մեջ, ինչպես Քրիստոսն է լույսի մեջ, որ Նրա արյունը մաքրի մեզ բոլոր մեղքերից, և որպեսզի մենք կարողանանք բնակվել Աստծո հետ և ստանալ Նրա փառքից ու համբարձումից:[19]

Ընդունելով հաղորդությունը մենք հիշում ենք Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությունը:

Պարտեզից դուրս գցվելուց հետո Ադամին պատվիրվեց Աստծուն զոհեր մատուցել. այսպիսով նրան և բոլորին, ովքեր մասնակցում էին զոհ մատուցելուն, հիշեցվում էր Փրկչի մասին, որը պետք է գար փրկագնելու իրենց մահից, որը, եթե չլիներ Նրա կողմից գործված քավությունը, հավիտյան կբացառեր կրկին Աստծո ներկայության մեջ բնակվելու հնարավորությունը: Սակայն Նրա գալով և մահով, այս պատվիրանը կատարվեց. նա հաստատեց Ընթրիքը և պատվիրեց իր հետևորդներին ճաշակել դրանից հետագայում, որպեսզի հիշեն Իրեն, մտաբերելով, որ Նա է փրկագնել իրենց, և նաև, որ իրենք ուխտ էին կապել՝ պահել Նրա պատվիրանները և վերածնված քայլել Նրա հետ: Հետևաբար, անհրաժեշտ է ընդունել Հաղորդությունը, որպես վկայություն Նրան, որ մենք հիշում ենք Իրեն, ցանկանում ենք պահել պատվիրանները, որ Նա տվել է մեզ, որպեսզի միշտ կարողանանք Նրա Հոգին մեզ հետ ունենալ, նույնիսկ մինչև վերջ, և նաև, որպեսզի հետագայում էլ կարողանանք մեղքերի թողություն ստանալ:[20]

Երբ Հիսուսը եկավ և տառապեց, «արդարը անարդարների վրա», Նա, որ անմեղ էր, տառապեց նրանց համար, ովքեր մեղանչել էին, և պատժի ենթարկվեց այն օրենքով, որը մեղավորն էր խախտում, զոհաբերության օրենքը իրագործվեց, և դրա փոխարեն նա մեկ այլ օրենք տվեց, որը մենք կոչում ենք «Տիրոջ Ընթրիքի Հաղորդություն», ըստ որի՝ Նրա կյանքն ու առաքելությունը, Նրա մահն ու հարությունը, մեծ զոհաբերությունը, որը նա մատուցեց

մարդկանց փրկագնելու համար, պետք է հավիտյան մնան հիշողության մեջ, քանզի Նա ասաց. «Այս արեք . . . իմ հիշատակի համար, որովհետև քանի անգամ որ այս հացն ուտեք, և այս բաժակը խմեք, Տիրոջ մահը պատմեցեք՝ մինչև որ նա կգա»: Հետևաբար, այս օրենքը մեզ համար է, մինչև որ Նա կգա կրկին, ինչպես որ զոհաբերության օրենքը նրանց համար էր, ովքեր ապրել էին նախքան Մարդու Որդու առաջին գալուստը: Հետևաբար, մենք պետք է պատվենք և սրբորեն պահենք այն, քանզի գոյություն ունի պատիժ՝ այն խախտելու դեպքում [տե՛ս Ա Կորնթացիս ԺԱ.25–29].[21]

Տիրոջ Ընթրիքի Հաղորդությունը . . . Ավետարանի սկզբունք է, որը պետք է բոլոր հավատացյալները պահեն, ինչպես և ավետարանի այլ արարողություն: Ո՞րն է դրա նպատակը: Այն, որ մենք պետք է միշտ հիշենք Աստծո Որդուն, որը փրկագնել է մեզ հավերժական մահից և ավետարանի զորությամբ կրկին կյանքի կոչել: Նախքան Քրիստոսի երկիր գալը այս իրողությունը պահվում էր երկրի բնակիչների մտքում, որոնց քարոզվում էր Ավետարանը, մեկ այլ արարողությամբ, որը կենդանիների զոհաբերությունն էր, արարողություն, որը նախատիպն էր այն մեծ զոհաբերության, որը պետք է տեղի ունենար ժամանակների գագաթնակետում:[22]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է Քավությունը: Ե՞րբ եք ձեր կյանքում հստակ զգացել Քավության զորությունը:
- Ի՞նչ է հոգևոր մահը: Ինչո՞ւ է այն ավելի սոսկալի, քան մարմնական մահը»:
- Եթե Ադամի և նրա սերունդների համար «ազատվելու ճանապարհ չտրվեր, ապա ինչպիսի՞ն կլիներին հետևանքները մեզ համար: (Տե՛ս նաև 2 Նեփի 9.6–9:)
- Ի՞նչ է արել Փրկիչը, որպեսզի հնարավոր դարձնի հոգևոր մահից մեր ազատումը: Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի հաղթենք հոգևոր մահին: Ինչպե՞ս կարող ենք «հայցել Աստծո թողությունն ու ողորմածությունը, որ այն մաքրի մեզ . . . անօրինությունից»:
- Ինչպիսի՞ օրհնություններ են եկել ձեր կյանք այն բանի շնորհիվ, որ գիտեք, որ Հիսուս Քրիստոսը կարող է մաքրել մեր և

ուրիշների հանդեպ կատարած մեր սխալները: Նկատե՞լ եք արդյոք այս նույն օրհնությունները ուրիշների կյանքում:

- Ի՞նչ է նշանակում կենդանացվել: Ինչպե՞ս կարող ենք հոգեպես կենդանացվել այժմ: (Տե՛ս Մովսես 6.64–68:) Ի՞նչ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր «կենդանացվում են սելեստիալ արքայության փառքով»: (Տես նաև ՎԵՈ 88.28–29:)
- Ո՞րն է «երկրային գոյության մեր նպատակը»:
- Ինչպե՞ս է հաղորդություն ընդունելն օգնում մեզ հաղթել հոգևոր մահին: Ինչպե՞ս կարող ենք միշտ հիշել Փրկչին: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի պատվենք հաղորդությունը և սրբորեն պահենք այն:
- Ինչպե՞ս կարող ենք երախտապարտորեն ստանալ Քավության պարգևը մեր կյանքում:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 180–81.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 542–43.
3. *Gospel Doctrine,* 432.
4. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9.
5. "Latter-day Saints Follow Teachings of the Savior," *Scrap Book of Mormon Literature,* 2 vols. (n.d.), 2:563.
6. *Gospel Doctrine,* 250.
7. *Gospel Doctrine,* 49.
8. *Gospel Doctrine,* 202.
9. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9; paragraphing added.
10. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9.
11. *Gospel Doctrine,* 6.
12. *Deseret News: Semi-Weekly,* 6 Feb. 1893, 2.
13. *Gospel Doctrine,* 420.
14. *Gospel Doctrine,* 98–99.
15. *Gospel Doctrine,* 451.
16. *Deseret Evening News,* 9 Feb. 1895, 9.
17. *Gospel Doctrine,* 443.
18. *Gospel Doctrine,* 439.
19. *Gospel Doctrine,* 250–51.
20. *Gospel Doctrine,* 103–4.
21. *Gospel Doctrine,* 204.
22. *Deseret News: Semi-Weekly,* 19 Feb. 1878, 1.

Քաջարիները Քրիստոսի գործում

Մենք պետք է քաջարի լինենք Քրիստոսի գործում և հավատարիմ մեր ուխտերին, մեր Աստծուն և Սիոնի գործին:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1857թ. աշնանը Զոզեֆ Ֆ. Սմիթը՝ 19 տարեկան հասակում Հավայան կղզիներում ավարտելով իր միսիան տուն վերադարձավ: Տունդարձի ճանապարհին անցնում էր Սան Ֆրանցիսկոյով, Լոս Անջելեսով և Սան Բեռնարդինոյով: Սայլակների խումբը Հարավային Կալիֆորնիայում մի որոշ տարածություն անցնելով դեռ նոր էր կանգառ կատարել և ճամբար խփել, երբ մի քանի հակամորմոնական տրամադրություն ունեցող ավազակներ ձիերով եկան ճամբարի վրա՝ անիծելով, հայհոյելով և սպառնալիքներ տեղալով, որ հաշվեհարդար կտեսնեն մորմոնների հետ: Զոզեֆը մի փոքր հեռացել էր ճամբարից, որպեսզի փայտ հավաքեր, և տեսավ, որ իր խմբից մի քանի հոգի աննկատ անցան ծառերի ետևը՝ դեպի կիրճն ի վար: Տեսնելով դա, . . . նա մտածեց. «Արդյո՞ք պետք է փախչեմ: Իսկ ինչո՞ւ պետք է վախենամ նրանցից»: Այդպես մտածելով, փայտերի կույտը ձեռքին նա մոտեցավ խառույկին, որտեղ այդ խուլիգաններից մեկը հրացանը ձեռքին բղավելով և անիծելով մորմոններին, բարձրաձայն ասաց Զոզեֆին.

«Դու մորմո՞ն ես»:

Պատասխանն ուղղակի դուրս թռավ. «Այո, պարոն, այն էլ ինչ-պիսին, մինչև ուղն ու ծուծը լիովին հավատարիմ»:

Այդ ժամանակ ավազակը բռնեց նրա ձեռքը և ասաց.

«Դու, ամենահաճելի մարդն ես, որին երբևէ հանդիպել եմ: Թույլ տուր սեղմեմ քո ձեռքը, երիտասա՛րդ, ուրախ եմ տեսնել մի մարդու, որը պաշտպանում է իր համոզմունքները»:[1]

Նախագահ Սմիթն ապրել է՝ հավատարիմ մնալով Տիրոջը, անկախ նրանից, թե ինչ խոչընդոտներ կամ դժվարություններ են

հանդիպել։ Ահա թե ինչ է ասում նրա մասին մտերիմ ընկեր և Նախագահող Եպիսկոպոս Չարլզ Վ. Նիբլին. «Ոչ մի սիրտ երբևէ չի եղել ավելի հավատարիմ քաջության և արդարակեցության, արդարության և որորմածության բոլոր սկզբունքներին, քան նրա սիրտը։ Այդ մեծ սիրտը, գտնվելով հրաշալի մարմնում, նրան դարձնում էր իր ժամանակներում երկրի վրա քայլող բոլոր մարդկանցից ամենամեծ, ամենաքաջարի, ամենաքնքուշ, ամենամաքուր և ամենալավ մարդը»։[2]

Չոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք պետք է հավատարիմ մնանք մեր ուխտերին, մեր Աստծուն և Սիոնի գործին։

Մենք պետք է օրինակ լինենք, մենք պետք է հավատարիմ լինենք մեր հավատին։ . . . Մենք պետք է հավատարիմ լինենք մեր ուխտերին, մեր Աստծուն, մեկս մյուսին և պետք է նվիրված լինենք Սիոնի գործին՝ անկախ նրանից, թե ինչպես կդասավորվեն հանգամանքները և ինչպիսի արդյունքի կհանգեցնեն։ . . . Մարդը, որը մնում է Աստծո արքայության հետ, որը հավատարիմ է այս ժողովրդին, որն իրեն աշխարհից մաքուր և անբիծ է պահում, այն մարդն է, որին կընդունի Աստված, որին Աստված կպաշտպանի և կօգնի, որը կբարգավաճի այս երկրի վրա՝ լինի նա ազատության մեջ, թե բանտի խցում, անկախ նրանից, թե որտեղ կգտնվի, ի վերջո ամեն ինչ լավ կլինի նրա համար։[3]

Մենք կարող ենք տեսնել, թե որ կողմ է շեղվել աշխարհը, ինչ վերաբերում է կրոնին։ Եթե այն չնչին գնով է ձեռք բերվում, եթե ուժերի որևէ լարում չի պահանջում, նրանք դեմ չեն լինի մի փոքր ունենալ դրանից։ Սակայն դա չի վերաբերում Վերջին Օրերի Սրբերին։ Ոչ էլ դա այդպես է կենդանի կրոնի առումով։ Քանզի ես ցանկանում եմ ասել ձեզ, որ Քրիստոսի կրոնը կիրակնօրյա կրոն չէ, մեկօրյա կրոն չէ, դա հարատև կրոն է, և այն իր նվիրյալներից պահանջում է պարտականությունների կատարում երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի և շաբաթվա բոլոր օրերին, այնքան անկեղծորեն, այնքան հաստատակամորեն, որքան կիրակի օրը։ Եվ ես մի քոռ կոպեկ անգամ չէի տա կիրակնօրյա կրոնի կամ այն կրոնի համար, որը ստեղծվել է մարդկանց կողմից՝ լինեն նրանք քահանաներ, թե աշխարհիկ մարդիկ։

Իմ կրոնը Աստծո կրոնն է։ Դա Հիսուս Քրիստոսի կրոնն է, այլապես այն բացարձակապես ինձ համար գին չէր ունենա և այն գին չէր ունենա մյուս բոլոր մարդկանց համար, ինչ վերաբերում է

կրոնին։ Եթե այն իմ հոգու մեջ չէ, եթե ես այն չեմ ընդունել իմ սրտի մեջ, կամ եթե ես չեմ հավատում դրան իմ ողջ զորությամբ, մտքով և ուժով, և չեմ մարմնավորում այն, չեմ ապրում դրանով և չեմ պահում այն իմ սրտում իմ ողջ կյանքի ընթացքում՝ աշխատանքային օրերին և հանգստյան օրերին, թե զաղտնի և թե հրապարակայնորեն, տանը թե դրսում, ամենուր միևնույն ձևով, այդ դեպքում Քրիստոսի կրոնը, բարեգործության կրոնը, արդարակեցության կրոնը, մաքրության կրոնը, բարության, հավատի, աշխարհիկ մեղքերից փրկության, ինչպես նաև Աստծո արքայությունում փրկվելու և համբարձվելու կրոնը, ի՛մ կրոնը ինձ համար չէր լինի Աստծո Որդու ավետարանը։ Սա «մորմոնիզմ» է, և դա կրոնի այն տեսակն է, որը մենք ցանկանում ենք սովորեցնել մեր երեխաներին։ Մենք պետք է այն ինքներս ընդունենք և սրտանց, ջերմորեն սովորեցնենք, որ այն դիպչի նրանց սրտերին, և այնժամ կարող ենք ոգեշնչել նրանց մեր հավատքի, Եկեղեցու հանդեպ մեր հավատարմության և համոզմունքների շնորհիվ։[4]

Մեր պարտականությունն է անսասան կանգնել ընդդիմությանը դեմ առ դեմ։

Ճշմարիտ ղեկավարության ամենաբարձր որակներից մեկը արիության բարձր մակարդակն է։ Երբ խոսում ենք արիության և ղեկավարության մասին, մենք օգտագործում ենք կյանքի որակը ներկայացնող տերմիններ, որոնց օգնությամբ մարդիկ գիտակցում են, թե որն է ճշմարիտ ընթացքը, որպեսզի հետևեն դրան և հավատարմորեն պաշտպանեն իրենց համոզմունքները։ Եկեղեցում երբեք չի եղել ժամանակ, երբ նրա ղեկավարներից չպահանջվեր լինել արիասիրտ, այսինքն՝ ոչ միայն ի վիճակի լինել ֆիզիկական վտանգներին դիմակայելու, այլ նաև լինելու հաստատակամ և հավատարիմ մաքուր ու շիտակ համոզմունքին։[5]

Ցավալի է, որ գոյություն ունեն Վերջին Օրերի Սրբեր, որոնք փորձում են սկզբունքը վտանգելով ժողովրդականացնել «մորմոնիզմը»։ Նրանք ցանկանում են մեր կրոնը համապատասխանեցնել մյուս մարդկանց ուսմունքներին և ցանկություններին։ Թվում է, նրանք ավելի են մտահոգված աշխարհի մարդկանց հետ ներդաշնակության մեջ լինելու, քան ավետարանի սկզբունքներով ապրելու համար։ . . . Նման եղբայրները պետք է հիշեն, որ աշխարհիկ իմաստությունը չի կարող անխաթար ձևով ավետարանի սկզբունքների մի մասը դառնալ։ . . .

. . . Վերջին Օրերի Սուրբ լինելու համար անհրաժեշտ է զոհաբերել աշխարհիկ նպատակներն ու հաճույքները. այն պահանջում է նվիրվածություն, ամուր կամք, սեր ճշմարտության հանդեպ, հավատարմություն սկզբունքներին և ուժգին ցանկություն տեսնելու ճշմարտության հաղթական առաջընթացը: Սա նշանակում է, որ հաճախ մենք ժողովրդականություն չենք վայելի: Սա նշանակում է անվերջ պատերազմ մղել մեղքի և աշխարհիկի դեմ: Սա հեշտ ճանապարհ չէ, . . . սակայն միայն այդպես մենք կարող ենք հաստատել ճշմարտությունը, կոփել բնավորությունը և մաքուր պահել մեզ վստահված ավետարանի սկզբունքները:[6]

Կան մարդիկ, որոնք քաջասրտորեն կատարում են այն ամենը, ինչ կարող են, որպեսզի որոշակի արդյունքների հասնեն: Նրանք կարող են մարտնչել չարի դեմ և դիմակայել անիրավություններին, որոնք թափվում են իրենց և ուրիշների վրա: Սակայն երբ իրենք պարտվում են, երբ տեսնում են, որ արդարությունը տուժում է, իսկ չարակամ մարդիկ հաղթում են, նրանք անձնատուր են լինում: Ի՞նչ օգուտ: Այս հարցն է գրավում նրանց միտքը: Նրանք տեսնում են, որ անազնիվ մարդկանց ակնհայտ կերպով հաջողություններն են ուղեկցում: Նրանք տեսնում են, որ չար համբավ ունեցող մարդիկ վայելում են իրենց շրջապատի հարգանքը, այնպես որ իրենք գրեթե համոզվում են, որ ճակատագիրը վարձատրում է անիրավ գործերի համար: Դրա հետ մեկտեղ այն, ինչ նրանց համար թվում է կորած գործ, այլևս ոչ մի հույս չի ներշնչում: Կորած բան է, և մենք պետք է լավագույն ձևով գործենք, սակայն ոչինչ չձեռնարկենք: Նրանք մինչև սրտի խորքը հիասթափվում են: Ոմանք անգամ հարցականի տակ են դնում Նախախնամության նպատակները: Այդ մարդիկ ունեն քաջարի սիրտ, սակայն ոչ քաջարի հավատք:

Այլ կերպ էր Պողոսի մոտ: Նա աներկյուղ տքնում էր, նա հաղորդում էր աստվածային ուղերձը, նա դիմակայում էր թշնամիներին, իսկ նրանք կարծես թե հաղթում էին նրան: Նա բանտարկվեց և օրենքը գործադրողների կողմից նվաստացնող վերաբերմունքի արժանացավ: Նա շղթայված էր և մահ էր սպասում նրան, սակայն նա դեռևս խիզախում էր: Նա քաջարի հավատ ուներ: Կարդացեք այս հուզիչ խոսքերը ուղղված Եփեսացիներին, գրված Եփեսացիս Զ.13-ում, որոնք ուղարկվել էին այն ժամանակ, երբ շատերը կարող էին մտածել, որ իրենց գործը կորած է. «Սորա համար Աստուծոյ սպառազինությունն առէք, որ կարող լինիք հակառակ կենալ չարության օրումը, և ամենը կատարելով հաստատ կանգնել»:

Պողոս Առաքյալը գրելիս, Ռոբերտ Բարեթ։ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է, որ Պողոսը «շղթայված էր և մահ էր սպասում նրան, սակայն նա դեռևս խիզախում էր։ Նա քաջարի հավատ ուներ» (*Gospel Doctrine,* 119)։

Մեր ուժերի սահմաններում ճշմարտության գործի համար կատարելով ամեն ինչ և դիմակայելով չարին, որ շատ մարդիկ կարող են պատճառել մեզ, և մենք ճնշվելով նրանց չարագործություններից, այնուամենայնիվ մեր պարտքն է՝ դիմանալ։ Մենք չպետք է անձնատուր լինենք, չպետք է ետ կանգնենք։ Մեծ գործերը չեն հաղթանակում մեկ սերնդի ժամանակ։ Ճնշող ընդդիմության հանդեպ հաստատուն կանգնելու համար, երբ կատարել եք ձեր ուժերի սահմանում ամեն ինչ, անհրաժեշտ է հավատքի քաջությունը։ Հավատի քաջությունը առաջընթացի քաջությունն է։ Մարդիկ, ովքեր ունեն այդ աստվածային արժանիքը, առաջ են գնում։ Նրանց թույլ չի տրվում կանգնել, եթե նույնիսկ իրենք ցանկանան։ Նրանք ոչ միայն լոկ իրենց ուժի և իմաստության ստեղծողն են, այլ ավելի բարձր օրենքի և աստվածային նպատակի գործիքներն են։

Սյուսները կգերադասեին հեռանալ, միայն թե խուսափեին անհանգստություններից։ . . . Նման մարդիկ, եթե անգամ կարդում են պատմություն, ապա միայն այն դեպքում, երբ իրենք են այն ստեղծում։ Նրանք չեն կարող տեսնել Աստծո ձեռքը մարդ-

կանց գործերի մեջ, քանի որ նրանք նայում են միայն մարդու աչքերով, ոչ թե հավատի աչքերով: Նրանք չեն դիմադրում, նրանք երես են թեքել Աստծուց: Նրանք չեն հագել Նրա ողջ սպառազինությունը: Առանց դրա նրանց համակում է վախը, և նրանք սուզվում են: Նման մարդկանց այն, ինչ անհանգստություն է պատճառում, թվում է անխուսափելի: Որպես Աստծո Սրբեր, մեր պարտքն է «դիմակայել», անգամ երբ չարը հաղթում է:[7]

Երբ մարդը որոշում է թողնել աշխարհը, իր հիմարություններն ու մեղքերը, հարել Աստծո ժողովրդին, որոնց մասին ամենուր չարախոսում են, անհրաժեշտ է ունենալ քաջություն, տղամարդկություն, անկախ բնավորություն, գերագույն բանականություն և վճռականություն, որը սովորական բան չէ մարդկանց համար: Քանզի մարդիկ ընկրկում են այն ամենից, ինչը ժողովրդականություն չի վայելում, ինչը իրենց գովասանք և քծնանք չի բերում, ինչը որևէ կերպ վարկաբեկում է այն, ինչն իրենք պատիվ կամ լավ անուն են համարում:[8]

Թող որ այս ավետարանի ոգին այնպես դրոշմվի իմ հոգում, որ թեև ընկնեմ աղքատության, դժբախտության, հալածանքի մեջ կամ մահվան ենթարկվեմ, ես և իմ ընտանիքը ծառայենք Աստծուն և պահենք Նրա օրենքները: Ինչևէ, խոստում գոյություն ունի, որ դուք պետք է օրհնվեք հնազանդվելով: Աստված կպատվի նրանց, ովքեր պատվում են Իրեն, և կհիշի նրանց, ովքեր կհիշեն Իրեն: Նա նեցուկ կլինի և կպաշտպանի բոլոր նրանց, ովքեր կպաշտպանեն ճշմարտությունը և հավատարիմ կլինեն դրան: Աստվա՛ծ, օգնի՛ր մեզ, որ հավատարիմ լինենք ճշմարտությանը, այժմ և հավիտյան:[9]

Մենք կարող ենք լինել քաջարի զինվորներ Քրիստոսի գործում:

Այսօր կեսօրին լսելով եղբայրներին ես խորհեցի մեր ընկերներից մի քանիսի մասին, որոնք մահացել են: Երբ մենք ետ ենք նայում և մտածում Նախագահ Յանգի, Հեբեր Ջ. Քիմբալի, Վիլարդ Ռիչարդսի, Զորջ Ա. Սմիթի, Օրսոն Փրատի, Փարլի Փրատի, Նախագահ Ջոն Թեյլորի, Էրաստուս Սնոուի և Աստծո հազարավոր հավատարիմ, քաջարի Սրբերի մասին, որոնք Միսուրիի Օհայոյում և Իլինոյսում անցել են հալածանքների միջով, քշվել են իրենց տներից շատ ու շատ անգամներ, և ի վերջո գնացել ամայի վայրեր, առանց գիտելիքի, ունենալով Սուրբ Հոգու խոստումներն իրենց սրտերում, որ միշտ կգտնեն իրենց հոգնած ոտքերը հանգստացնելու տեղ, հեռու իրենց տներից, իրենց հարազատներից և իրենց

ընկերներից, ունենալով ամենաաղոտ հեռանկարներն աշխարհում, ինչ վերաբերում էր մարդկային գիտելիքին կամ կանխատեսմանը երբևէ հանգիստ ապաստանի հասնելու առումով, դժվարությամբ քարշ տալով ոտքերը հարթավայրերում, բայց և այնպես նրանք անխախտ հավատք ունեին առ Տերը և անսասան հավատք առ Նրա խոսքը: Երբ ետ ենք նայում և մտածում այդ պահերի մասին, մենք չենք կարող մոռանալ հավատարիմ տղամարդկանց և կանանց, որոնք անցել են այդ ամենով: Նրանք չթուլացան ճանապարհին, նրանք չուրացան, նրանք չհեռացան ճշմարտությունից: Որքան ծանր էր փորձությունը, որքան դժվարին էր ճանապարհը, որքան մեծ էին խոչընդոտները, այնքան ամուր ու վճռական էին նրանք:[10]

Ես ավելի քան վաթսուն տարի, սկսած իմ պատանեկության տարիներից, ծառայել եմ այնպիսի մարդկանց հետ, ինչպիսին էին Բրիգամ Յանգը, Հեբեր Չ. Քիմբալը, Վիլարդ Ռիչարդսը, Ջորջ Ա. Սմիթը, Զեդեդիա Մ. Գրանտը, Դանիել Հ. Վելսը, Ջոն Թեյլորը, Ջորջ Քյ. Քենոնը և Վիլֆորդ Վուդրուֆն ու նրա ընկերները, Լորենզո Սնոուն ու նրա ընկերները, տասներկու առաքյալների անդամները, յոթանասունականները, և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու բարձրագույն քահանաները: Եվ ես ցանկանում եմ վկայել ձեզ, այնպես որ իմ խոսքը լսի իմ ձայնի սահմաններում գտնվող յուրաքանչյուր անծանոթ, որ ես չեմ ճանաչել նրանցից ավելի լավ մարդկանց: Ես այսքանով կարող եմ վկայել, որ ճանաչել եմ այդ մարդկանց, նրանց հետ մեծացել մանկուց, համագործակցել խորհուրդներում, միացել աղոթքում և աղերսներում, նրանց հետ ճամփորդել մեր երկրի բնակավայրերով և հարթավայրերով: Ես լսել եմ առանձին և հասարակության առջև ասված նրանց խոսքը, և ես բերում եմ իմ վկայությունը, որ նրանք Աստծո մարդիկ էին, ճշմարիտ, մաքուր, Աստծո ազնվազարմ մարդիկ:[11]

Ահա մեր քույրերն ընդգրկված են Սփոփող Միության աշխատանքում . . . Ահա քույրեր, որոնք նաև կապված են Փոխադարձ Բարելավման ընկերությունների, ինչպես նաև Երեխաների Միության և մեր Կիրակնօրյա դպրոցի աշխատանքի հետ: . . . Նրանք բոլորն ունեն մեր օրհնությունները, քանի որ մենք վստահում ենք նրանց: Մենք հավատում ենք, որ նրանք գիտեն ճշմարտությունը և կարիք չունեն մեկ ուրիշից լույս փոխ առնել: Մենք գիտենք, որ նրանք ազնիվ են: Մենք գիտենք, որ նրանք սիրում են Աստծուն ու ճշմարտությունը, և սիրում են այս գործն իրենց անձնական շահերից առավել: Մենք ճանաչում ենք նրանցից շատերին և գիտենք, որ այսպիսին են նրանց զգացումները: Մենք

սիրում ենք նրանց, նրանք վայելում են մեր հարգանքը, մեր ողջ վստահությունը, Տիրոջ օրհնությունները կլինեն նրանց հետ։[12]

Սփոփող Միության քույրերը միշտ ակտիվ են և պատրաստ օգնելու, նրանց կարելի է գտնել ամենուր, որտեղ օգնության կարիք կա։ Նրանք օգնում են աղքատներին, մխիթարում են տառապյալներին, այցելում են այրիներին ու որբերին, և ճամփորդում են հեռավոր վայրեր՝ կարևոր հրահանգներ հաղորդելու համար։[13]

Նախագահ Հեբեր Ջ. Քիմբալը Աստծո ազնվազարմ մարդկանցից մեկն էր։ Նա պողպատի պես հուսալի էր և արժանի էր վստահության։ Նա զտված ոսկու պես մաքուր էր։ Նա չէր վախենում թշնամիներից և մահից։ Խորաթափանց էր, մարգարեների ոգով լի, Աստծուց ոգեշնչված, անվեհեր էր Քրիստոսի վկայության մեջ, մինչև կյանքի վերջ Զոզեֆ Սմիթի անդավաճան ընկերն էր և նրա աստվածային կոչման ու առաքելության վկան էր։ Նա կանչվել էր Աստծո շնորհով, կարգվել կենդանի իշխանությամբ, ապրել և մահացել որպես Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալ։[14]

Ես հավատում եմ, որ Տասներկուսի եղբայրները, ովքեր զբաղեցնում են իրենց պաշտոնները, կատարում են իրենց պարտքը, հաստատուն կանգնած են Աստծո արքայությունը առաջ տանելու համար և միավորված են իրենց տեսակետներով և գործով՝ Սիոնը կառուցելու համար։ . . . Նրանք արժանի են, որ Վերջին Օրերի Սրբերը վստահեն իրենց, քաջարի են ճշմարտության վերաբերյալ իրենց վկայության մեջ, լրջամիտ են ու աչալուրջ Սիոնի շահերը պաշտպանելիս։[15]

Արդ, թող Աստված օրհնի ձեզ։ Թող խաղաղությունը բնակվի ձեր հոգում, և ճշմարտության հանդեպ սերն առատանա ձեզանում։ Թող որ առաքինությունը զարդարի ձեր բոլոր ճանապարհները։ Թող որ շիտակ ու ազնիվ ապրեք Տիրոջ առաջ, պահեք հավատն ու քաջարի լինեք Հիսուս Քրիստոսի մասին վկայության մեջ, քանզի նա, ով քաջարի է, կստանա իր վարձքը։ Թող Աստված ձեզ օրհնի, սա է իմ աղոթքը Հիսուսի անունով, ամեն։[16]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է նշանակում քաջարի լինել Քրիստոսի վկայության մեջ։ Ինչպե՞ս կարող ենք մեր առօրյա կյանքում պատրաստակամություն դրսևորել, որ հավատարիմ կլիներենք մեր կրոնի և մեր Աստծո հանդեպ։

- Ինչո՞ւ Քրիստոսի կրոնը «կիրակնօրյա կրոն» չէ միայն: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր կրոնը մեր զավակներին «սրտանց, ջերմորեն, որպեսզի այն դիպչի նրանց սրտին»:
- Ինչպե՞ս կարող ենք մենք՝ Եկեղեցու անդամներս, փորձել երբեմն «ժողովրդականացնել» ավետարանը՝ «սկզբունքը վտանգելով»:
- Ինչպե՞ս կարող ենք պատշաճ ձևով հանդուրժողականություն դրսևորել ուրիշների կարծիքի և ապրելակերպի հանդեպ, չզոհաբերելով սկզբունքի հանդեպ ազնվությունը:
- Ինչպե՞ս կարող ենք ուրիշներին, ինչպես նաև մեր երեխաներին, ուսուցանել այնպիսի սկզբունքները, ինչպիսին են՝ քաջությունը, սկզբունքի հանդեպ ազնվությունը և ըստ ավետարանի քաջարի ապրելակերպը:
- Ինչպե՞ս էին Եկեղեցու առաջին ղեկավարները քաջություն դրսևորում իրենց վկայություններում: Ի՞նչ կարող ենք մենք սովորել այդ ղեկավարների կյանքից այն մասին, թե ինչ է նշանակում լինել խիզախ և քաջարի:
- Ի՞նչ է «քաջարի հավատքը»: Ե՞ր ենք դրսևորել նման քաջություն ընդդիմության հանդիպելիս:
- Ինչպե՞ս կարող ենք քաջարի լինել մեր Եկեղեցու կոչումներում:
- Ի՞նչ օրհնություններ են գալիս մեզ և մեր ընտանիքներին, երբ մենք խիզախորեն ապրում ենք՝ ըստ ավետարանի: (Տես նաև ՎԵՈ 14.7:) Ի՞նչ հավերժական հետևանքներ են ունենում նրանք, ովքեր խիզախ չեն Հիսուսի վկայության մեջ (Տես նաև ՎԵՈ 76.79:)

Հղումներ

1. Charles W. Nibley, “Reminiscences,” in *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 518.
2. Charles W. Nibley, “Reminiscences,” 525.
3. *Gospel Doctrine,* 257.
4. *Gospel Doctrine,* 394–95; paragraphing added.
5. *Gospel Doctrine,* 155.
6. “Editor’s Table: Principle, Not Popularity,” *Improvement Era,* July 1906, 731, 733.
7. *Gospel Doctrine,* 119–20.
8. *Gospel Doctrine,* 211.
9. *Gospel Doctrine,* 251.
10. *Deseret News: Semi-Weekly,* 9 Aug. 1898, 1.
11. *Gospel Doctrine,* 169.
12. In Conference Report, Oct. 1906, 9.
13. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:296.
14. *Gospel Doctrine,* 198–99.
15. In Conference Report, Apr. 1906, 2.
16. In Conference Report, Apr. 1906, 8.

Կառչեք ճշմարտությունից, որպեսզի չխաբվեք

Մենք պետք է պահենք Հիսուս Քրիստոսի մաքուր, ճշմարիտ սկզբունքները և խուսափենք խաբեբաների կեղծիքից ու սխալներից։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Զոզեֆ Ֆ. Սմիթը հինգ ամիս էր, ինչ վերադարձել էր Մեծ Բրիտանիայում անցկացրած միսիայից, երբ Նախագահ Բրիգամ Յանգը կանչեց նրան ծառայելու իր երրորդ միսիան։ Նա երկրորդ անգամ պետք է ծառայեր Հավայան Կղզիներում։ Քանի որ նա գերազանց տիրապետում էր Հավայան լեզվին, Նախագահ Յանգը խնդրեց նրան ծառայել որպես թարգմանիչ Տասներկուսի Քվորումի անդամներ՝ Երեց Էզրա Թ. Բենսոնի և Երեց Լորենզո Սնոուի համար։ Երբ նրանք 1864թ. գարնանը մեկնեցին Հավայան Կղզիներ, Զոզեֆ Ֆ. Սմիթը 24 տարեկան էր։

Զոզեֆ Ֆ. Սմիթն այդ միսիայի մասին ասել է. «Մեր հանձնարարության հատուկ նպատակն էր՝ վերջ դնել մի ինքնակոչի խարդախ գործողություններին, . . . որը խաբում էր . . . Եկեղեցու տեղի անդամներին ոչ միայն վարդապետության առումով, այլ զավեշտական ձևով ներկայացնելով իր ուժն ու իշխանությունը։ Նա վերակազմավորել էր Եկեղեցին իր երևակայությամբ՝ կարգելով Տասներկու Առաքյալների և այլ պաշտոնյաների, վաճառելով նրանց իրենց կարգումները և ստանձնելով հոգևոր ու թագավորող կառավարչի դերը, որին մարդիկ պետք է պատվեին ու մեծարեին։ Մենք ընդդիմացանք նրան, ստիպեցինք, որ պատասխան տա իր կատարած հանցանքների համար և բարեխղճորեն ջանում էինք ուղղել նրան, սակայն նա համառում էր և չէր զղջում, հետևաբար հեռացվեց Եկեղեցուց։ Այնուհետև մեր ջանքերն ուղղեցինք օգնելու համար նրանց, որոնց նա մոլորեցրել էր և այդ գործում մենք Աստծո օրհնությամբ հաջողություններ ունեցանք»։[1] Երեց Բենսոնի ու Երեց Սնոուի Հավայան կղզիները թողնելուց հետո, Զոզեֆ Ֆ. Սմիթը մնաց մինչև հաջորդ ամառ՝

շարունակելով կարգի բերել Եկեղեցու գործերը: Այդ ընթացքում նա խորհուրդներ էր տալիս Եկեղեցու այն անդամներին, որոնք մոլորության մեջ էին ընկել այդ ուրացող մարդու կողմից և ցանկանում էին ապաշխարել: Իր հետագա կյանքի ընթացքում Նախագահ Սմիթն ուսուցանում էր Սրբերին, թե որքան կարևոր է ճանաչել կեղծ ուսմունքները և ընդդիմանալ դրանց:

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Վերջին Օրերի Սրբերը, ինչ էլ որ լինի, պետք է կառչեն ճշմարտությունից:

Մինչ այժմ մենք պետք է բավականին փորձ ձեռք բերած լինեինք, որպեսզի հասկանայինք որ ոչ ոք, ոչ մի անհատ խմբավորում և ոչ մի գաղտնի կազմակերպություն չի կարող միավորել ուժ ու իշխանություն՝ Ամենազորի նպատակները տապալելու կամ Նրա գործի ընթացքը փոխելու համար: Անցյալում շատ ու շատ անհատներ են բարձրացել, և այդ անհատները տարվել են Եկեղեցին արմատապես վերափոխելու կեղծ գաղափարներով: Նրանք ակնկալում էին, որ կարճ ժամանակում ողջ ժողովուրդը կթողնի իր դրոշը, ճշմարտության դրոշը, որի ներքո իրենք հավաքվել էին և որի շուրջը միավորվել էին Եկեղեցու սկզբից ի վեր: Այդ մարդիկ կարծում էին, թե ժողովուրդը կհետևի «նոր հովիվներին», սակայն Աստծո ժողովուրդը ճանաչում է ճշմարիտ հովվի ձայնը, օտարի ձայնին նրանք ականջ չեն դնի, ոչ էլ նրա խորհուրդներին, որը ստանձնում է իշխանություն, որն իրեն չի պատկանում: Նման մարդու ետևից նրանք երբեք չեն գնա: Վերջին Օրերի Սրբերը գիտեն Ավետարանի ոգին, նրանք հասկանում են ճշմարտության ոգին: Նրանք գիտեն իրենց պարտականությունը, և ինչ էլ որ լինի նրանք կկառչեն ճշմարտությունից:

Սկզբից մինչև այժմ մենք ստիպված ենք եղել դիմակայել ողջ աշխարհին: Ամբողջ աշխարհը զինված կանգնում է կամ կանգնել է Տիրոջ գործի դեմ, բոլորը չէ, որ ընդիմացել են ատելության պատճառով, ոչ էլ չարը գործելու կամ ճշմարտության դեմ կռվելու սրտի միտումով կամ ցանկությամբ, այլ նրանք անտեղյակ են եղել ճշմարտությանը և չեն իմացել, թե ինչ են անում: Շատերը խաբվել են կեղծ հովիվների ձայնից կամ մոլորվել են կեղծ ազդեցություններով: Նրանք խաբվել են, նրանք չեն իմանում ճշմարտությունը, նրանք չեն հասկանում, թե ինչ են անում, այդ պատճառով նրանք, այսպես կոչված, զինված կանգնում են

ճշմարտության դեմ, Տիրոջ գործի դեմ, այդպես է եղել ի սկզբանե: Այն օրից, ինչ Մարգարե Զոզեֆ Սմիթն առաջինը հայտարարեց իր տեսիլքի մասին, մինչ օրս, ամեն արդարության թշնամին, ճշմարտության, առաքինության, պատվի, ազնվության և կյանքի մաքրության թշնամին, միակ ճշմարիտ Աստծո թշնամին, և Աստծուց ուղղակիորեն եկող հայտնության և մարդկանց երկնքից եկող ոգեշնչումների թշնամին զինված կանգնել է այս գործի դեմ:

Դուք երբեք չեք տեսել, որ արդարության, հայտնության, Աստծո, ճշմարտության, արդարակյաց ու մաքուր կյանքի ընկերը կամ նա, ով նվիրված է արդարակեցությանը և այնքան խելամիտ է, որ տարբերում է ճշմարտությունը մոլորությունից, և լույսը խավարից, - ես ասում եմ, - դուք երբեք չեք տեսել նման մարդու զինված կանգնած Սիոնի գործի դեմ: Զինված կանգնել Սիոնի գործի դեմ նշանակում է կանգնել Աստծո դեմ, Աստծո հայտնության դեմ, այն հոգու դեմ, որը մարդկանց առաջնորդում է դեպի լույսի և բանականության աղբյուրից եկող ամեն ճշմարտություն, այն սկզբունքի դեմ, որը մարդկանց հավաքում է միասին և դրդում է նրանց թողնել իրենց մեղքերը, փնտրել արդարություն, սիրել Աստծուն իրենց ողջ սրտով, անձով ու մտքով, և սիրել իրենց մերձավորին, ինչպես իրենք իրենց:[2]

Զգուշացեք կեղծ ուսմունքներից:

Կլինեն նաև այնպիսի մարդիկ, ովքեր կցանկանան սահմանափակել Աստծո ուժը՝ հավասարեցնելով այն մարդկանց ուժին: Այդպիսիները կան մեր մեջ և դրանք եղել են մեր դպրոցի ուսուցիչների մեջ: Նրանք կցանկանային, որ դուք չհավատայիք Սուրբ Գրքերի ոգեշնչված պատմություններին, որ քամիներն ու ալիքները ենթարկվում են Աստծո ուժին, այլ հավատայիք, որ Փրկչի դներ հանելու և մեռածներին կենդանացնելու կամ այնպիսի հրաշքներ գործելու կարողությունը, ինչպես բորոտներին մաքրելն է, պարզապես մտացածին բան է: Նրանք կցանկանային, որ դուք հավատայիք, որ Աստված ու նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը անձնապես չեն հայտնվել Զոզեֆ Սմիթին, որ դա պարզապես մտացածին բան է, սակայն մենք ավելի լավ գիտենք: Սուրբ Հոգու վկայությունը ցույց է տվել, որ դա ճշմարտություն է: Եվ ես ասում եմ ձեզ՝ զգուշացեք այն մարդկանցից, ովքեր գալիս են ձեզ մոտ անհեթեթ մտքերով, իբր թե ամեն բան

ինքն իրեն է կատարվում՝ ըստ բնության օրենքների, և Աստված անզոր է:[3]

Վերջին Օրերի Սրբերի մեջ որպես ավետարանի ճշմարտություններ քողարկված կեղծ ուսմունքներ կարող են քարոզել երկու տիպի մարդիկ, հիմնականում միայն նրանք, ահա նրանք.

Առաջինը՝ անհույս տգետ մարդիկ են, որոնց գիտելիքի պակասը բացատրվում է իրենց ծուլությամբ և անաշխատասիրությամբ, որոնք չնչին ջանքեր են գործադրում, իհարկե եթե գործադրում են, որպեսզի զարգանան կարդալով և ուսումնասիրելով: Այդ նրանք են, ովքեր տառապում են ծանր հիվանդությամբ, որը կարող է դառնալ անբուժելի, դա ծուլությունն է:

Երկրորդը՝ հպարտ և պարծենկոտ մարդիկ են, ովքեր կարծում են, թե իրենցից շատ ոչ ոք չի հասկանում, ովքեր մենկնաբանում են իրենց անձնական հնարամիտության կանոններով, ովքեր իրենք իրենց համար դարձել են օրենք և իրենց այնպես են պահում, կարծես իրենք են իրենց գործերի միակ դատավորները: Սրանք ավելի վտանգավոր տգետ են, քան առաջինները:

Զգուշացեք ծույլերից ու հպարտներից:[4]

Մինչ այժմ Վերջին Օրերի Սրբերը պետք է այնքան հավաստիացած լինեն, որ Աստված է երկրի վրա հաստատել իր Եկեղեցին վերջին անգամ, որ մնան և այլևս չտապալվեն կամ չկործանվեն, և որ Աստծո տունը կարգուկանոնի, օրենքի տուն է, և այդ կարգի անհանգիստ խառնվածք ունեցող անկայուն խանգարողները, որոնք իրենց տգիտության և ինքնահավանության պատճառով դառնում են դատարկաբաններ, թեև ձևացնում են, թե ունեն մարգարեական զորություն և այլ հոգևոր շնորհներ ու պարգևներ, չպետք է ոչ մի ազդեցություն ունենան Վերջին Օրերի Սրբերի վրա, ոչ էլ վերջիններս պետք է հոգեպես տարվեն նման անհատներով և նրանց տեսություններով: Քրիստոսի Եկեղեցին Սրբերի հետ է: Նրան է հանձնվել Աստծո օրենքը՝ իր կառավարման և մշտական գոյության համար: Այն ունի բոլոր միջոցները՝ ուղղելու ցանկացած անճշտություն, չարաշահում, կամ սխալ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ առաջ գալ, և այդ ամենը առանց անկարգության, կամ նույնիսկ հեղաշրջման: Այն կարող է անել դա աստիճանական զարգացման գործընթացի միջոցով՝ զարգացման, գիտելիքի աճի, իմաստության, համբերության և գթության ճանապարհով:

Եկեղեցու նախագահող քվորումները միշտ կազմված կլինեն նման մարդկանցից, նրանք կընտրվեն այնպես, որ Սրբերը

վստահ լինեն, որ պարտավորությանը հատուկ հիմնավոր իմաստությունը, արդարակեցությունը և բարեխիղճ հավատարմությունը կբնորոշեն նրանց քաղաքականությունը, որոնց վստահվել է Եկեղեցու գործերը վարելը:[5]

Հայրում Փեյջի օրերից ի վեր (Վարդապետություն և Ուխտեր, Բաժին 28) տարբեր ժամանակահատվածներում խաբուսիկ հոգիների կողմից հայտնություններ են եղել Եկեղեցու անդամներին: Երբեմն դրանք ունեցել են այն տղամարդիկ ու կանայք, ովքեր օրինազանցության պատճառով հեշտությամբ Մեծ Խաբեբայի զոհն են դարձել: Այլ դեպքերում մարդիկ, որոնք հպարտացել են Եկեղեցու կանոնները, արարողություններն ու ծեսերը պահելով, մոլորեցվել են կեղծ հոգիների կողմից, որոնք այնքան ճարպկորեն են նմանակում Աստվածային աղբյուրից բխող ազդեցությունը, որ նույնիսկ այն մարդիկ, որոնք իրենց համարում են «ընտրվածներ», դժվարությամբ են զանազանում հիմնական տարբերությունը [Մատթեոս ԻԴ.24]: Սատանան ինքը մի անգամ փոխակերպվել է՝ «լույսի հրեշտակի» տեսք ընդունելով [Բ Կորնթացիս ԺԱ.14; 2 Նեփի 9.9]:

Երբ տեսիլքները, երազները, լեզուները, մարգարեությունը, տպավորությունները, որևէ արտասովոր պարգևը կամ ոգեշնչումը հայտնում են այն, ինչը չի համապատասխանում Եկեղեցու ստացած հայտնություններին կամ հակասում է նրա օրինական իշխանությունների որոշումներին, Վերջին Օրերի Սրբերը կարող են իմանալ, որ դա Աստծուց չէ, որքան էլ որ ճշմարտանման այն թվա: Ինչպես նաև նրանք պետք է հասկանան, որ Եկեղեցու ղեկավարմանը վերաբերող հրահանգները գալիս են հայտնության ձևով՝ նրա ղեկավարի միջոցով: Բոլոր հավատարիմ անդամները իրավունք ունեն ստանալ ոգեշնչում Սուրբ Հոգու կողմից՝ իրենց, իրենց ընտանիքների և նրանց համար, որոնց վրա նշանակված և կարգված են նախագահելու: Սակայն այն ամենը, ինչը հակասում է այն բանին, ինչը գալիս է Աստծուց՝ Եկեղեցու ղեկավարի միջոցով, չպետք է ընդունվի որպես պաշտոնական կամ հուսալի բան:[6]

Հոգու պարգևները և սուրբ Քահանայության զորությունները Աստծուց են, դրանք տրվում են մարդկանց օրհնելու, խրախուսելու և նրանց հավատքը ամրապնդելու համար: Դա Սատանան լավ գիտի, այդ պատճառով նա ձգտում է կուրացնել և խաբել Աստծո զավակներին ճշմարտանման հրաշքների միջոցով: Հիշեք, որ Եգիպտոսի մոգերը իրենց ջանքերը գործադրելով

խաբեցին փարավոնին, ինչ վերաբերում էր Մովսեսի և Ահարոնի աստվածային առաքելությանը: . . .

Քրիստոսը մեծ դատաստանի վերաբերյալ իր մարգարեության մեջ հայտարարել է, որ հրաշքներ գործելու զորությունը կարող է գալ չար աղբյուրից. «Շատերը կասեն ինձ այն օրը, Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, և քո անունովը դևեր հանեցինք, և քո անունովը շատ զորություններ գործեցինք: Եվ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց. թե Երբեք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դեն գնացեք, ով անօրինություն գործողներ»: (Մատթ. Է.22–23:)

Կախարդության վտանգավորությունն ու չար ուժը այնքան կախարդության մեջ չէ, որքան անմիտ դյուրահավատության մեջ, որ սնահավատ մարդիկ դրսևորում են իրենց հասցեին կատարված հայտարարությունների հանդեպ: Վրդովեցուցիչ է հավատալը, որ դևը կարող է վնասել կամ վիրավորել անմեղ տղամարդուն կամ կնոջը, հատկապես, Քրիստոսի Եկեղեցու անդամներին, եթե այդ տղամարդը կամ կինը չեն հավատում, որ իրեն կարելի է վնաս հասցնել նման ազդեցությամբ և նման միջոցներով: Եթե նրանք թույլ են տալիս ունենալ նման միտք, ապա նրանք հակված են տեղի տալ իրենց սնապարծությանը: Կախարդության մեջ ոչ մի զորություն չկա, եթե դրան չհավատան և այն չընդունեն:[7]

Խուսափեք կրոնական հոբիներից:

Եղբայրներ և քույրեր, մի ունեցեք կրոնական հոբիներ: Հոբիները վտանգավոր են Քրիստոսի Եկեղեցում: Դրանք վտանգավոր են, քանի որ անորոշ նախապատվություն են տալիս որոշակի սկզբունքների կամ գաղափարների, անտեսելով և անկարևոր համարելով մյուսները, որոնք նույնքան կարևոր են, նույնքան ամրապնդող, նույնքան փրկող, որքան սիրված և ընտրված վարդապետությունները կամ պատվիրանները:

[Կրոնական] հոբիներ ունեցող մարդիկ կեղծ պատկերացում են ունենում Քավիչի ավետարանի մասին, դրանք աղավաղում և խաթարում են ավետարանի սկզբունքների և ուսմունքների ներդաշնակությունը: Դա անբնական տեսակետ է: Աստծո կողմից հայտնված յուրաքանչյուր սկզբունք և սահմանված կարգ էական դեր ունի մարդու փրկության համար, և անմիտ ու վտանգավոր է դնել դրանցից որևէ մեկը ամենաառաջին պլանում՝ թաքցնելով և անկարևոր համարելով մյուսները: Դա վտանգի է ենթարկում

մեր փրկությունը, քանզի այն մթագնում է մեր միտքը և աղոտ դարձնում մեր հասկացողությունը: Նման տեսակետը, ինչ ուղղություն էլ որ այն ունենա, նեղացնում է մտապատկերը, թուլացնում է հոգևոր ընկալումը և մթագնում է միտքը: Արդյունքում այսպիսի ինքնահաճ և սահմանափակ մտահորիզոնով մարդը իրեն դնում է մի վիճակում, որ կարող է գայթակղվել չարի կողմից, աղոտ ընկալման կամ խորաթափանցության աղճատման պատճառով թերագնահատել իր նեղբայրներին և տեղի տալ ուրացության ոգուն: Նա ազնիվ չէ Տիրոջ առաջ:

Մենք նկատել ենք, որ խնդիրը հետևյալն է. հոբի ունեցող Սրբերը հակված են դատելու և մեղադրելու իրենց նեղբայրներին ու քույրերին, որոնք այնքան եռանդուն չեն իրենց սիրելի տեսության մի որոշակի ուղղության մեջ, ինչպես իրենք: Մարդը, որի գլխում միայն Իմաստության Խոսքն է, ընդունակ է անթիվ մեղքեր գտնել Եկեղեցու մյուս անդամների մեջ, որոնք հետևում են ազատական գաղափարներին, ինչ վերաբերում է ավետարանի մյուս վարդապետությունների կարևորությանը:

Գոյություն ունի այս խնդրի մյուս կողմը. հոբի ունեցող մարդը ընդունակ է բռնել «ես ավելի սուրբ եմ, քան դու» դիրքը, գոռոզանալով և մեծամտանալով, քամահրանքով, եթե ոչ ավելի դաժան ձևով նայելով իր նեղբայրներին ու քույրերին, որոնք այնքան կատարյալ ձևով չեն պահում այդ որոշակի օրենքը: Նման մոտեցումը վիրավորում է իր հավատացյալ ընկերներին և Տիրոջը: «Կորուստից առաջ գնում է գոռոզությունը, և կործանումից առաջ՝ ամբարտավան հոգին» (Առակ. ԺԶ.18):

Փրկագնման ծրագրում գոյություն ունեն հիմնավոր հանդիսացող մի քանի մեծ ճշմարտություններ: Դրանք չի կարելի անտեսել. ոչ մի ուրիշ ճշմարտություններ չեն կարող դրվել դրանցից առաջ: Պետք է մեր ամբողջ սրտով ընդունենք Աստծո Հայր լինելը, մեր Տիրոջ և Փրկչի քավության զորությունը, այս վերջին օրերին ավետարանի վերականգնումը: Մենք չենք կարող այս կարևորագույն վարդապետությունների հանդեպ ունեցած հավատի պակասը լրացնել ամենախիստ ձևով ձեռնպահ մնալով առողջության համար վտանգավոր բաներ օգտագործելով, հաստատուն ձևով վճարելով տասանորդը մեր «սամիթից և չամանից» [տե՛ս Մատթեոս ԻԳ.23], կամ որևէ արտաքին արարողություն պահելով: Առանց Աստծո հանդեպ հավատքի մկրտությունն ինքնին ոչինչ է:[8]

Ճշմարտությունն ունենալն ազատում է մեզ մեղքից ու խավարից։

Որպեսզի չխաբվենք, մոլորության մեջ չընկնենք, երերված ու տատանված չլինենք վարդապետության ամեն քամուց, անմիտ, անհեթեթ գաղափարներից կամ մարդկանց խաբեբայության խորամանկությամբ կամ հետևենք կեղծ աղաղակներին, թե՝ Ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ [տե՛ս Մատթեոս ԻԴ.23], Աստված հաստատել է իր և մարդու միջև հաղորդակցման ճիշտ կարգը, և դա հաստատել է իր Եկեղեցում, և ողջ մարդկությունը ճիշտ կանի, եթե ուշք դարձնի այդ ճշմարտությանը, որպեսզի չխաբվի։ Այն, ինչը ներդաշնակ է դրան, Աստծուց է, իսկ այն ինչը հակառակ է դրան, ներքևից է։[9]

Ամենօրյա սովորությունը . . . առաջընթաց ապրելով՝ փնտրել աստվածային ողորմություն և ներողամտություն, մեզ ուժ է տալիս խույս տալու չարից, որին կարելի է հաղթել միայն դրանից հաստատապես հրաժարվելով։[10]

Աստծո Սուրբ Հոգին վայելող մարդը բացարձակապես անհնար է նույնիսկ հավատա, որ [կախարդանքը և նման այլ չար] ազդեցությունները կարող են ինչ-որ կերպ ներգործություն ունենալ իր վրա։ Սուրբ Հոգին ունենալը բացարձակապես պաշտպանում է բոլոր չար ազդեցություններից։[11]

Ես հավատում եմ, որ Վերջին Օրերի Սրբերից շատերը զորանում են հավատի մեջ։ Ես հավատում եմ նաև, որ Վերջին Օրերի Սրբերից շատերն այնքան իմաստուն են, որ բավականաչափ մտավոր կարողություն ունեն և նրանց սրտում բնակվում է կենդանի Աստծո Հոգին, որպեսզի տարբերեն ճշմարտությունը մոլորությունից, ճիշտը սխալից, լույսը խավարից. և ես կասեմ՝ ես հավատում եմ, որ նրանք բավականին գիտակից են՝ պահելու Հիսուս Քրիստոսի ավետարանի հասարակ, մաքուր, հավատարիմ սկզբունքները, գերադասելով դրանք փիլիսոփաների, գիտնականների կամ ուրիշների անհեթեթ մտքերից։ Չկա ոչ մի գիտություն կամ փիլիսոփայություն, որը կարող է փոխարինել Ամենազոր Աստծո ճշմարտությանը։

Տերն ասել է. «Քո խոսքը ճշմարտություն է» [տե՛ս Հովհաննես ԺԷ.17]։ Իրոք այդպես է, և ես հավատում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը բավականաչափ գիտեն Աստծո խոսքը, որպեսզի ճանաչեն այն, ինչը Նրա խոսքն է, երբ տեսնում են այն, և խուսափեն նրանից, ինչը Նրա խոսքը չէ, և որ նրանք կպահեն Աստծո խոսքը, քանզի այն ճշմարտություն է։ Ինչպես Փրկիչն է ասել. «Եթե դուք իմ

խոսքի մեջ կենաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչէք, և ճշմարտությունը կազատէ ձեզ» [տե՛ս Հովհաննես Ը.31–32]:

Ես հավատում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը հատկապես ղեկավարներն Իսրայելում, բավականաչափ գիտեն և հասկանում են ավետարանի սկզբունքները, որ նրանք գիտեն ճշմարտությունը և ունենալով այն՝ նրանք ազատվել են մեղքից, սխալներից, խավարից:[12]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպե՞ս կարող ենք խուսափել, որպեսզի «չխաբվենք կեղծ հովիվների ձայնից» և ճանաչենք ճշմարիտ Հովվի ձայնը: Ինչպե՞ս դա կօգնի մեզ, որ «ինչ էլ որ լինի կառչենք ճշմարտությունից»:
- Ինչպե՞ս կարող ենք մեր հասարակության մեջ դիմակայել այն ազդեցություններին, որոնք «զինված կանգնել են Տիրոջ գործի դեմ»:
- Ինչպե՞ս են այսօր մարդիկ փորձում «սահմանափակել Աստծո ուժը հավասարեցնելով այն մարդկանց ուժին»:
- Ինչպե՞ս կարող են հպարտները մեզ մոլորեցնել: Ինչպե՞ս կարող է ծուլությունը նույն բանն անել: Ինչո՞ւ է այդքան կարևոր, որպեսզի մենք չխաբվենք «ծույլերի ու հպարտների» կողմից «կեղծ ուսմունքների քարոզմամբ»:
- Ինչպիսի՞ զգուշացում է տվել Տերը նրանց վերաբերյալ, ովքեր «ձևացնում են, թե ունեն մարգարեական զորություն» (Տես նաև ՎԵՈՒ 42.11:)
- Ինչպե՞ս կարող են կրոնական հոբիները վտանգավոր լինել անհատների և Եկեղեցու համար: Ինչո՞ւ որևէ «արտաքին արարողություն» խստորեն պահելը բավարար չի կարող լինել «կարևորագույն վարդապետությունները» չպահելու դեպքում:
- Ինչպե՞ս կարող ենք խուսափել խաբվելուց և «չերերանք ու չտատանվենք վարդապետության ամեն քամուց»:
- Ինչպե՞ս է ճշմարտությունն ունենալն ազատ դարձնում մեզ: Ինչպե՞ս կարող ենք օգտագործել Սուրբ Հոգու պարգևը, որը կօգնի մեզ տարբերել բարին չարից և դիմակայել չար ազդեցություններին:

Հղումներ

1. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:20–21.
2. In Conference Report, Apr. 1909, 3–4; paragraphing added.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 372.
4. *Gospel Doctrine,* 373.
5. *Gospel Doctrine,* 381.
6. In *Messages of the First Presidency,* 4:285.
7. *Gospel Doctrine,* 376–77.
8. *Gospel Doctrine,* 116–17.
9. *Gospel Doctrine,* 381.
10. *Gospel Doctrine,* 374.
11. *Gospel Doctrine,* 377–78.
12. In Conference Report, Apr. 1911, 7; paragraphing added.

Լինել օրինապահ քաղաքացիներ

Մենք պետք է հնազանդվենք Աստծո և մարդկանց օրենքներին, պատվելով Եկեղեցու մեր անդամությունը և մեր քաղաքացիությունն այն պետության մեջ, որտեղ ապրում ենք:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի անձնական կյանքը լավ քաղաքացի լինելու և իր հասարակությանը ծառայելու օրինակ է եղել: 1865–1882թթ. մի քանի ժամկետ նա ծառայել է որպես Յուտայի Տարածքային Օրենսդրական մարմնի օրենսդիր, 1867թ. ծառայել է քաղաքային խորհրդում, ինչպես նաև եղել է 1895թ. կոնվենցիայի անդամ, որը պատրաստում էր Յուտայի նահանգի սահմանադրությունը:

Նախագահ Սմիթը, որը Նավուի ամբոխների կողմից դաժանության ականատեսն է եղել, հաճախ է խոսել քաղաքակիրթ հասարակության մեջ օրենքը պահելու կարևորության մասին: Նա և Առաջին Նախագահության մեջ նրա Խորհրդականները թախանձագին խնդրում էին Սրբերին լինել օրենքը հարգող և օրինապահ քաղաքացիներ, որտեղ էլ որ ապրեն, և լինեն հավատարիմ ու նվիրված իրենց կառավարությանը:[1] Մի առիթով, երբ կառավարության մի պաշտոնյա արհամարհական ձևով էր արտահայտվել Միացյալ Նահանգների Սահմանադրության մասին, Նախագահ Սմիթը հակաճառել էր. «Վերջին Օրերի Սրբերը չեն կարող հանդուրժել այսպիսի մոտեցում: Դա անարխիա է: Դա կործանում է նշանակում: Դա ամբոխավարության ոգին է, Տերը գիտե, որ մենք շատ ենք տառապել ամբոխավարությունից, և մենք չենք ցանկանում կրկին վերադառնալ դրան: . . . Մենք չենք կարող մեզ թույլ տալ անձնատուր լինել այդ ոգուն կամ նվազագույն իսկ չափով աջակցել դրան: Մենք պետք է կայծքարի պես ամուր կանգնենք մեր պետության սահմանադրության և մեր երկրի սահմանադրական օրենքների հանդեպ

արհամարհական կամ ոչ հարգալից վերաբերմունք ունեցող ամեն հոգու դեմ»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Վերջին Օրերի Սրբերը հավատարիմ են իրենց երկրին:

Եկեք գործենք շիտակ, պահենք Աստծո օրենքները, և մարդկանց օրենքները, պատվենք մեր անդամությունը Աստծո արքայության մեջ, մեր քաղաքացիությունը . . . այն պետության մեջ, որի մասն ենք մենք, և այդ ժամանակ Աստված կաջակցի և կպահպանի մեզ, իսկ մենք կշարունակենք աճել, ինչպես որ եղել է ի սկզբանե, միայն թե մեր հետագա աճը կլինի արագացված և ավելի հզոր, քան անցյալում էր:[3]

Սովորեցրեք ձեր երեխաներին պատվել Աստծո օրենքը, նահանգի օրենքը և ձեր երկրի օրենքը: Սովորեցրեք երեխաներին հարգել և պատվել նրանց, ովքեր ընտրվել են ժողովրդի կողմից, որպեսզի լինեն այդ ժողովրդի ղեկավարները, գործադրեն արդարադատություն և կիրառեն օրենքը: Սովորեցրեք նրանց լինել հավատարիմ իրենց երկրին, արդարությանը, ազնվությանը և պատվին, և այդպես նրանք կաճեն ու կդառնան աշխարհի ընտրյալ տղամարդիկ ու կանայք:[4]

Իրականում լինել Վերջին Օրերի Սուրբ նշանակում է լինել աշխարհում Աստծո լավագույն ժողովուրդներից մեկը կամ զավակները: . . . Վերջին Օրերի լավ Սուրբը կլինի լավ քաղաքացի, կարևոր չէ, կլինի նա Մեծ Բրիտանիայի, Միացյալ Նահանգների, Հոլանդիայի, Գերմանիայի, թե աշխարհի մեկ այլ երկրի հպատակ: Եթե նա ցանկանում է լինել Վերջին Օրերի լավ Սուրբ, նա պետք է լինի լավ քաղաքացին այն երկրի, որտեղ նա ծնվել է, կամ որը նա ընդունել է որպես իր տուն: . . . Աստծո արքայության քաղաքացին ամբողջ աշխարհում Աստծո լավագույն մարդկանց մեջ պետք է առաջին տեղում լինի:[5]

Ես աղոթում եմ ոչ միայն Սիոնի բարգավաճման համար, այլ մեր երկրի բարգավաճման համար: Մենք պետք է միշտ հիշենք, որ ոչ միայն Աստծո Արքայության քաղաքացիներն ենք, այլ քաղաքացիներն ենք . . . այն նահանգի, որում ապրում ենք: Մենք միշտ հավատարիմ ենք եղել և մեր պետությանը, և երկրին, ինչպես նաև՝ Աստծո Եկեղեցուն: . . . Մենք պատրաստ ենք եղել կռվելու մեր երկրի ճակատամարտերում, պաշտպանելու նրա պատիվը, բարձր պահելու նրա բարի անունը, և մենք նպատակ

ունենք շարունակել հավատարիմ մնալ մեր պետությանը և մեր ժողովրդին մինչև վերջ։[6]

Եթե հայրենասիրությունն ու հավատարմությունը արժանիքներ են, որոնք դրսևորվում են խաղաղ ժամանակներում արդար, չափավոր, բարյացակամ, աշխատասեր և առաքինի ապրելակերպով, իսկ փորձության ժամանակներում՝ համբերությամբ, միայն օրինական միջոցներով դիմադրելով երևելի կամ աներևույթ չարին, և անխոտոր ենթարկվելով երկրի օրենքներին, թեպետ անհանգստություն և վիշտ են հարուցում, իսկ պատերազմի ժամանակ պատրաստակամորեն մարտնչելով երկրի կռվում, ապա, անառարկելիորեն, «Մորմոն» ժողովուրդը հայրենասեր և հավատարիմ ժողովուրդ է։[7]

Թող Ամենազոր Տեր Աստվածը օրհնի ձեզ։ Իմ սիրտը լիքն է օրհնությամբ Վերջին Օրերի Սրբերի համար։ Ես իմ ամբողջ սրտով սիրում եմ այն մարդուն, որը գիտեմ, որ ազնիվ, շիտակ, ճշմարիտ ու հավատարիմ Վերջին Օրերի Սուրբ է։ Նման բնութագրով մարդը ցանկացած երկրի լավ քաղաքացիներից մեկն է, նա ցանկացած քաղաքի, շրջանի, նահանգի կամ երկրի լավագույն քաղաքացին է, որտեղ էլ որ նա ապրի, և նա *ամենաշատերից* մեկն է։ Իսկական Վերջին Օրերի Սուրբը լավ ամուսին է, լավ հայր, լավ հարևան, լավ քաղաքացի, և ամեն տեսակետից լավ մարդ է։[8]

Արդարակեցությունը բարձրացնում է պետությունը։

Տիպիկ «մորմոնական» տունը ընտանիքի տաճարն է։ . . . Այստեղ են ուսուցանվում և մեղմորեն սերմանվում բարոյական և կրոնական ճշմարտությունները, որոնք միասին վերցրած ստեղծում են այն արդարակեցությունը, որը բարձրացնում է պետությունը և կանխում է այն մեղքը, որը նախատինք է ցանկացած ազգի համար։ . . . Ահա մեր որդիներն ու դուստրերը, ձեր ցանկությամբ ենթարկեք նրանց ցանկացած փորձության՝ ինչ վերաբերում է ճշմարտության հանդեպ ուշադրությանը, մեծերի հանդեպ հարգանքին, Աստծո հանդեպ ակնածանքին, մարդկանց հանդեպ սիրուն, երկրի հանդեպ հավատարմությանը, օրենքը հարգելուն, լավ վարքին և ի վերջո, . . . մտքի մաքրությանն ու ողջախոհ վարքին։ Չափից շատ ինքնագովասանք չի լինի, եթե «Մորմոնական» ընտանիքներում ծնված և դաստիարակված մեր մարդկանց սերունդների մասին ասենք, որ նրանք կհաղթեն մրցակցությունը քրիստոնեական արժանիքների,

և այն ամենի, ինչը համապատասխանում է ցանկացած համայնքում այս կամ մեկ այլ երկրի լավ քաղաքացի լինելուն:[9]

«Մորմոնիզմը» գոյություն ունի աշխարհում ի օգուտ ողջ աշխարհի: Ուսուցանելով ճշմարտությունը, արմատավորելով բարոյականությունը, պահպանելով տան մաքրությունը, պատվելով իշխանությունն ու կառավարությունը, խթանելով կրթությունը և բարձրացնելով տղամարդուն ու կնոջը, մեր կրոնը դատապարտում է հանցագործությունը և դեմ է ամեն տեսակի բռնապետությանը: «Մորմոնիզմը» ձգտում է բարձրացնել և ոչ թե կործանել հասարակությունը:[10]

Վերջին Օրերի լավ Սուրբը լավ քաղաքացի է ամեն տեսակետից: Ես ցանկանում եմ ասել մեր համայնքի երիտասարդ տղամարդկանց. Եղեք օրինակելի Վերջին Օրերի Սրբեր, և թող ոչինչ ձեզ ետ չպահի ամենաբարձր դիրքը գրավելու ձգտումից, որը կարող է առաջարկել մեր պետությունը: Ձեռք բերելով այդ տեղը, թող որ ձեր նվիրված «Մորմոն» մայրերի կողմից մանկուց ձեր սրտերում արմատավորած առաքինությունը, շիտակությունը, ազնվությունը, ունակությունը, կրոնական ուսմունքները «այնպես լուսավորեն ձեր լույսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն, և փառավորեն ձեր Հորը որ երկնքումն է»: [Մատթեոս Ե.16:][11]

Թող որ Տերն օրհնի մեր կառավարությանը և առաջնորդի նրանց, ովքեր իրենց ձեռքում ունեն իշխանություն, կատարելու այն, ինչը արդար է, Աստծուն հաճելի ու Նրա համար ընդունելի:[12]

Մենք Եկեղեցին պետությունից առանձին լինելու վարդապետության կողմնակիցն ենք:

Եկեղեցու անդամներին պատվիրվել է Աստվածային հայտնությամբ . . . «Թող ոչ ոք չխախտի երկրի օրենքները, քանզի նա, ով պահում է Աստծո օրենքները, պետք չէ, որ խախտի երկրի օրենքները»: [տես ՎԵՈ 58.21:][13]

Ինչ վերաբերում է Եկեղեցու օրենքներին, հստակ ասվել է. . . .

«Ահա, օրենքները, որ դուք ստացաք իմ ձեռքից, եկեղեցու օրենքներն են, և այդ լույսի ներքո դուք պիտի պահեք դրանք»: [տես ՎԵՈ 58.23:]

Այսինքն, ոչ մի օրենք, հաստատված կանոն կամ Եկեղեցու կողմից ստացված հայտնություն, չի հայտարարվել պետության

համար։ Վերևում տրված նման օրենքներն ու հայտնությունները միմիայն նախատեսված են Եկեղեցու կառավարման համար։

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կառչում է այն վարդապետությունից, ըստ որի եկեղեցին պետությունից առանձին է, եկեղեցու իշխանությունը չի միջամտում քաղաքական խնդիրների լուծմանը, անհատները բացարձակ ազատ են և անկախ իրենց քաղաքական պարտականությունները կատարելիս։ Եթե ինչ-որ ժամանակ այս վարդապետությանը հակասող վարք է դրսևորվել, ապա դա եղել է Եկեղեցու կողմից պատշաճ ձևով հաստատված սկզբունքների և քաղաքականության խախտում։

Մենք հայտարարում ենք, որ սկզբունքայնորեն և քաղաքականապես մենք կողմ ենք, որ եկեղեցին ամբողջությամբ առանձին լինի պետությունից, պետության կողմից ոչ մի գերիշխանություն չլինի եկեղեցու վրա, եկեղեցին ոչ մի կերպ չմիջամտի պետության ֆունկցիաներին, պետությունը չմիջամտի եկեղեցու գործերին կամ ազատ կրոնական դավանանքին, անհատը բացարձակապես ազատ լինի եկեղեցական գերիշխանությունից քաղաքական հարցերում, բոլոր եկեղեցիները հավասար լինեն օրենքի առաջ։[14]

Եկեղեցին չի զբաղվում քաղաքականությամբ, նրա անդամները քաղաքական կուսակցություններին են միանում իրենց կամքով։ . . . Նրանց չեն խնդրում, ավելին՝ նրանցից չեն պահանջում քվեարկել այս կամ այն ձևով։ . . . Սակայն նրանք չեն կարող օրենքով զրկվել իրենց քաղաքացիական իրավունքներից և դրա համար ոչ մի պատճառ գոյություն չունենա, քանզի միջին հաշվով նրանք այնքան հավատարիմ, խոհեմ, կրթված, ազնիվ, աշխատասեր, առաքինի, բարոյական, խնայող, և արժանի են ամեն տեսակետից, ինչպես ցանկացած ժողովուրդ այս պետության մեջ, կամ երկրի վրա։[15]

Մենք ենթարկվում ենք իշխանություններին, քանի դեռ չի եկել Աստծո արքայությունը։

Աստվածաշունչը, որը հանդիսանում է «Մորմոնական» Եկեղեցու կանոնիկ գրքերից մեկը, լի է երկրի վրա Աստվածային օրենքի հաստատման, ամբողջ երկրագնդի վրա արդարության թագավորության գալուստին վերաբերող կանխատեսումներով և խոստումներով։ Քրիստոսը պետք է լինի Թագավոր, իսկ բոլոր

ազգերն ու ժողովուրդները պետք է ծառայեն և հնազանդվեն Նրան: Դա պետք է լինի Աստծո իսկական Արքայությունը: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հաստատվել է որպես այդ Թագավորության նախատիպ: Նրա ավետարանը «արքայության ավետարանն» է: Նրա սկզբունքները, արարողությունները, իշխանությունը և պարգևները երկնային ծագում ունեն: Հետևաբար, դա հոգևոր «երկնային արքայությունն» է, որն իր մեջ կրում է այն ազդեցությունը և զորությունը, որոնք պետք է ճանապարհ բացեն Աստծո Որդու համընդհանուր տիրապետության վերաբերյալ մարգարեությունների կատարման համար:[16]

Երբեմն ասում են, թե Եկեղեցու անդամները սպասում են երկրի վրա Աստծո Արքայության իրական գալուստին, որը կմիավորի աշխարհի բոլոր թագավորությունները մեկ ակներև, աստվածային կայսրության մեջ, որը կկառավարի հարություն առած Մեսիան:

Այս ամենը, ասում են, «Մորմոնի» համար անհնար է դարձնում, իսկապես նվիրվել իր երկրին, կամ որևէ երկրային կառավարությանը:

. . . Մենք համաձայն չենք, որ աստվածային հայտնությանը հավատալը կամ Աստծո արքայության գալուստին սպասելը ինչ-որ չափով նվազեցնում է մեր անկեղծ նվիրվածությունը մեր երկրի հանդեպ: Երբ այդ աստվածային կայսրությունը կհաստատվի, մենք հնարավոր է չենք իմանա ուրիշ ոչինչ, բացի մյուս քրիստոնյաներից, ովքեր աղոթում են. «Գա քո արքայությունը, լինի քո կամքը, ինչպես երկնքումն՝ այնպես էլ երկրի վերայ», [Մատթեոս Զ.10], սակայն մենք գիտենք, որ մեր երկրի հանդեպ նվիրվածությունն ու հավատարմությունը ամրապնդվում են այն փաստով, որ սպասելով Մեսիայի արքայության գալստին, մենք հավատարիմ ենք մնում Աստծո պատվիրանին՝ ենթարկվել գոյություն ունեցող իշխանություններին, մինչև որ կգա Նա, «ում իրավունքն է թագավորել»: [տես ՎԵՈՒ 58.22:][17]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ պետք է Վերջին Օրերի Սրբերը հավատարիմ լինեն իրենց երկրին, որտեղ նրանք ապրում են: (Տես նաև ՎԵՈՒ 134.5:) Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ մեր հավատարմությունն ու հարգանքը մեր երկրի հանդեպ, թեև չհամաձայնվենք նրա որոշ քաղաքականության հետ:

- Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր երեխաներին լավ քաղաքացիներ լինել:
- Որո՞նք են մեր պարտականությունները որպես քաղաքացիներ: Ինչո՞ւ պետք է հավատարիմ Վերջին Օրերի Սուրբը լինի «ցանկացած երկրի լավ քաղաքացիներից մեկը»:
- Ինչպե՞ս կարող է անձնական արդարակեցությունը բարձրացնել պետությանը: Ինչո՞ւ է անձնական արդարակեցությունը լավ քաղաքացի լինելու կարևոր տարր հանդիսանում: Ինչպիսի՞ դեր կարող է խաղալ անձնական արդարակեցությունը նրանց կյանքում, ովքեր ձգտում են զբաղեցնել կամ զբաղեցնում են բարձր հասարակական դիրք:
- Ինչպե՞ս կարող է եկեղեցու և պետության առանձին լինելը օգնել մարդկանց ազատորեն գործադրել իրենց կրոնական համոզմունքները: (Տե՛ս նաև Վ և Ու 134.7, 9:) Ինչո՞ւ է կարևոր ունենալ անհատական ազատություն եկեղեցական իշխանությունից քաղաքական հարցերում:
- Ինչպիսի՞ն կլինի Աստծո արքայությունը, որը կգա, և ո՞վ կենթարկվի այդ թագավորությանը:

Հղումներ

1. See James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:165.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 404.
3. *Gospel Doctrine,* 409–10.
4. *Messages of the First Presidency,* 5:55.
5. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 27 Sept. 1906, 610.
6. In Conference Report, Apr. 1905, 46.
7. *Messages of the First Presidency,* 4:150.
8. In Conference Report, Apr. 1910, 8.
9. *Messages of the First Presidency,* 4:147.
10. *Messages of the First Presidency,* 4:154.
11. "Editor's Table: Congress and the 'Mormons,' " *Improvement Era*, Apr. 1903, 473.
12. In Conference Report, Oct. 1908, 127.
13. *Messages of the First Presidency,* 4:81.
14. *Messages of the First Presidency,* 4:153; paragraphing altered.
15. "Editor's Table: The Probable Cause," *Improvement Era,* June 1903, 626.
16. *Messages of the First Presidency,* 4:81.
17. *Messages of the First Presidency,* 4:154.

Փոքր երեխաների փրկությունը

Փոքր երեխաները, որոնք մահացել են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը, փրկագնված են Քրիստոսի արյունով։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Թեև Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը իր անձնական փորձով գիտեր, թե ինչ է տառապանքը, միայնակությունը և սերը, որ գալիս են երեխայի մահվան հետ, փոքր երեխաների փրկության վերաբերյալ նրա ուսմունքները ոգեշնչող էին և համոզիչ։ 1869–1898թթ. միջև ընկած ժամանակահատվածում նա թաղել է իր ինը փոքր երեխաներին։

1870թ. հունիսի 6-ին իր առաջնեկի՝ Մերսի Զոզեֆինի մահից հետո, նա իր մեծ վիշտն է հայտնել. «Օ՜, միայն Աստված գիտե, թե որքան էի ես սիրում իմ աղջնակին՝ իմ սրտի լույսին ու ուրախությանը։ Առավոտյան, նախքան նրա մահանալը, ամբողջ գիշեր նրա մահճակալի մոտ անցկացնելուց հետո, քանի որ ես էի հերթապահում նրա մոտ ամեն գիշեր, ասացի նրան. «Իմ փոքրիկ բալիկը չքնեց ամբողջ գիշեր»։ Նա շարժեց գլուխը և ասաց. «Ես այսօր կքնեմ, հայրիկ»։ Օ՜, այդ խոսքերն ինչպես խոցեցին սիրտս։ Ես գիտեի, թեպետ չէի ուզում հավատալ, որ դա ուրիշ ձայն էր, որը նշանակում էր, որ նա մահվան քնով կքնի և նա քնեց։ Եվ, Օ՜, իմ սրտի լույսը հանգչեց։ Իմ հոգում դրոշմված երկնային պատկերը գրեթե անհետացավ։ . . . Դու էիր երկնային պարգևը իմ սրտերի սրտում»։[1]

1879թ. հուլիսի 6-ին, Զոզեֆ Ֆ. Սմիթը իր օրագրում գրեց դստեր Ռոնդայի մահվան հետ կապված իր վշտի մասին. «Ես նրան դրեցի բարձի վրա և այդպես քայլեցի նրա հետ, նա կրկին ուշքի եկավ, սակայն մնաց մեկ ժամ և գիշերվա 1:40-ին մահացավ իմ ձեռքերի վրա։ Այժմ միայն Աստված գիտի, թե որքան խորն է մեր վիշտը։ Սա 5-րդ մահն է մեր ընտանիքում։ Բոլոր իմ ամենասիրելի փոքրիկները։ Օ՜, Աստված օգնիր մեզ դիմանալ այս փորձությանը»։[2]

Սակայն նա սփոփվում էր այն գիտելիքով, որ Փրկչի Քավության շնորհիվ ամեն բան լավ է իր սիրելի երեխաների հետ: 1898թ. մարտի 17-ին, իր դստեր Ռութի մահվան օրը նա փառահեղ հայտնություն ստացավ. «Օ՜, իմ հոգի: Ես տեսնում եմ իմ քնքուշ մոր ձեռքերը ջերմորեն պարզված, որպեսզի իր գիրկն առնի իմ քաղցր բալիկի փրկագնված փառահեղ հոգին: Օ՜, Աստված իմ: Ես երախտապարտ եմ Քեզ այս փառահեղ տեսիլքի համար: Եվ այնտեղ, իմ Հոր ապարանքում հավաքվել են իմ բոլոր սիրելիները, ոչ թե որպես անօգնական երեխաներ, այլ որպես սրբագործված հոգիներ՝ իրենց ողջ ուժով, փառքով ու վեհությամբ, լի բանականությամբ, ուրախությամբ, շնորհով ու ճշմարտությամբ»:[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Փոքր երեխաները, որոնք մահանում են մինչև պատասխանատվության տարիքը, փրկագնված են:

Ինչ վերաբերում է փոքր երեխաներին, որոնք մահանում են վաղ մանկական հասակում և անմեղ, նախքան պատասխանատվության տարիքին հասնելը, և նրանք ունակ չեն մեղք գործելու, ավետարանը հայտնում է մեզ այն փաստը, որ նրանք փրկագնված են և սատանան զորություն չունի նրանց վրա: Ոչ էլ մահը զորություն ունի նրանց վրա: Նրանք փրկագնված են Քրիստոսի արյամբ և փրկված են այնքան հաստատապես, ինչպես մահն է եկել աշխարհ մեր առաջին ծնողների անկումով: . . .

. . . Մեր սիրելի ընկերները, որոնք ներկայումս կորցրել են իրենց մանկանը, մեծ առիթ ունեն ուրախանալու և ցնծալու, նույնիսկ իրենց խորը վշտի մեջ, որը կրում են իրենց փոքրիկին ժամանակավորապես կորցնելու պատճառով: Նրանք գիտեն, որ նրա հետ ամեն ինչ կարգին է, նրանք վստահ են, որ իրենց փոքրիկը մահացել է առանց մեղքի: Նման երեխաները Հոր ծոցում են: Նրանք կժառանգեն իրենց փառքը և իրենց վեհացումը, և նրանք չեն զրկվի իրենց հասանելի օրհնություններից, քանզի երկնային արդյունավետ ղեկավարմամբ և Հոր իմաստությամբ, որն ամեն բան լավ է անում, նրանք, ովքեր մահանում են, լինելով փոքր երեխաներ, ոչ մի պատասխանատվություն չեն կրում իրենց հեռանալու համար, չունենալով բանականություն և իմաստություն, որպեսզի հոգ տանեն իրենց համար և հասկանան կյանքի օրենքները: Եվ Աստծո՝ մեր Երկնային Հոր իմաստությամբ, ողորմածությամբ և ղեկավարությամբ այն, ինչ կարող էին ձեռք բերել և վայելել, եթե իրենց թույլ տրվեր ապրելու մարմնում,

նրանց կտրվի հետագայում: Նրանք ոչինչ չեն կորցնի՝ նման ձևով մնզանից վերցվելով: . . .

Նման մտքեր ունենալով ես սփոփվում եմ այն փաստով, որ պիտի հանդիպեմ վարագույրի այն կողմն անցած զավակներիս: Ես կորցել եմ շատերին և կարծում եմ, զգացել եմ այն ամենը, ինչ ծնողը կարող է զգալ զավակներին կորցնելիս: Ես շատ ցավ եմ ապրել, քանզի սիրում եմ երեխաներին, և հատկապես սիրում եմ մանուկներին, սակայն երախտապարտ եմ Աստծուն այդ սկզբունքների գիտելիքի համար, քանի որ այժմ ես լիովին հավատում եմ նրա խոսքին և նրա խոստումին, որ հետագայում ես կունենամ այն ամենը, ինչ ինձ է պատկանում և իմ ուրախությունը լիակատար կլինի: Ես զրկված չեմ լինի ոչ մի արտոնությունից կամ օրհնությունից, որին արժանի եմ, և որը պատշաճ կերպով կվստահվի ինձ: Սակայն իմը կլինեն բոլոր պարգևները և օրհնությունները, որոնց հնարավոր է արժանի լինեմ կամ ժամանակի կամ հավերժության մեջ, կարևոր չէ երբ կլինի, քանի որ ես ընդունում եմ Աստծո ձեռքն այս ամենում և ասում եմ իմ սրտում. «Տերը տուավ և Տերն առավ, Տիրոջ անունը օրհնյալ լինի» [տե՛ս Հոբ Ա.21]: Այսպես պետք է լինի մեր վերաբերմունքը մեր երեխաների, մեր մտերիմների, ընկերների հանդեպ կամ տարբեր իրավիճակների փոփոխության ժամանակ, որի միջով մենք, հնարավոր է, կոչված լիննք անցնելու:[4]

Հարությունից հետո երեխայի մարմինը կաճի, որպեսզի համապատասխանի հոգու վիճակին:

Մենք արդյո՞ք բավարարված կլինեինք, եթե տեսնեինք, որ երեխաներին, որոնց թաղել ենք մանուկ հասակում, երեխաներ են մնում հավերժության անթիվ դարերի ընթացքում: Ո՛չ: Ոչ էլ հոգիները, որոնք միացել էին մեր երեխաների մարմիններին, բավարված չէին լինի մնալու այդ վիճակում: Սակայն մենք գիտենք, որ մեր երեխաները ստիպված չեն լինի միշտ մնալ մանուկ վիճակում, քանի որ այս ժամանակահատվածում մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով Աստծո կողմից հայտնվել է ճշմարտության աղբյուրը, որ մահացածների հարության ժամանակ երեխան, որը թաղվել է իր մանկական տարիքում, առաջ կգա երեխայի տեսքով, ինչպես նա մահացել էր, ապա նա կսկսի զարգանալ: Հարության օրից սկսած, նրա մարմինը կզարգանա, մինչև որ կհասնի իր հոգու կատարյալ հասակին, լինի նա տղամարդ, թե կին: Եթե այդ հոգին ունի Աստծո բանականությունը և

մահկանացու հոգիների ձգտումները, այն չի բավարարվի սրանից ավելի քչով: Հիշում եք, որ մեզ ասել են, թե Հիսուս Քրիստոսի հոգին այցելեց հին մարգարեներից մեկին և հայտնվեց նրան և հայտարարեց, թե ով է ինքը, ասելով, որ ինքն այն նույն Աստծո Որդին է, որը պետք է գա ժամանակների գագաթնակետում: Նա ասաց, որ կհայտնվի մարմնի մեջ, ճիշտ ինչպես հայտնվել էր այդ մարգարեին [տե՛ս Եթեր 3.9, 16–17]: Նա մանուկ չէր, նա չափահաս, զարգացած հոգի էր, որն ուներ մարդու և Աստծո կառուցվածք, նույն այն կառուցվածքը, որը Նա ուներ, երբ եկավ և իր վրա վերցրեց խորանը և զարգացրեց այն մինչև իր հոգու կատարյալ հասակի չափը:[5]

Ամեն հոգի, որ գալիս է այս աշխարհ իր վրա վերցնելու խորանը, Աստծո որդի կամ դուստր է, և ունի այն ամբողջ բանականությունը և հատկանիշները, որոնք կարող է վայելել ցանկացած որդի կամ դուստր հոգիների աշխարհում կամ այս աշխարհում, բացի հոգու մեջ լինելուց, որը բաժանված է մարմնից, երբ իրենք պարզապես խորան չունեն, որպեսզի լինեն Հայր Աստծո նման: Ասվել է, որ Աստված հոգի է, և նրանք, ովքեր երկրպագում են նրան, պետք է երկրպագեն հոգով և ճշմարտությամբ [տես Հովհաննես Դ.24]: Սակայն նա հոգի է, որն ունի մսից ու ոսկորներից խորան, նույնքան շոշափելի է, որքան մարդունը, և հետևաբար Աստծուն և Հիսուսին նման լինելու համար բոլոր մարդիկ պետք է մարմին ունենան: Կարևոր չէ արդյոք այդ խորանները տարիքով մեծ են, թե պետք է սպասեն և հասունանան գալիք աշխարհում, որտեղ Մարգարե Զոզեֆ Սմիթի խոսքի համաձայն, մարմինը կզարգանա, լինի դա ժամանակի թե հավերժության մեջ, հոգու կատարյալ հասակի չափով, և երբ մայրը մահվան ձեռքով զրկվում է իր երեխային մեծացնելու հաճույքից և ուրախությունից, որ նա դառնա տղամարդ կամ կին այս աշխարհում, այդ արտոնությունը ևս մեկ անգամ կտրվի նրան ապագայում, և նա կվայելի այն ավելի լիարժեք, քան դա հնարավոր կլիներ այստեղ: Երբ նա դա անի այնտեղ, հաստատ կիմանա, որ անհաջողության չի մատնվի, մինչդեռ այստեղ արդյունքներն անհայտ են, մինչև որ չանցնենք փորձությունը:[6]

Մեր երեխաների հոգիները անմահ են, մինչև մեզ մոտ գալը, իսկ մարմնական մահից հետո նրանց հոգիները այնպիսին են, ինչպիսին մինչև այստեղ գալն էին: Նրանք այնպիսին են, ինչպիսին կարող էին դառնալ, եթե ապրեին մարմնի մեջ և հասունանային կամ զարգացնեին իրենց ֆիզիկական մարմինը իրենց հոգու կատարյալ հասակին համապատասխան: Եթե դուք տեսնում եք

ձեր մահացած երեխաներից մեկին, ապա այն կարող է հայտնվել այնպիսի տեսքով, որով կճանաչեք նրան, այսինքն՝ մանկական տեսքով: Սակայն եթե նա գալիս է որպես սուրհանդակ, բերելով ինչ-որ կարևոր ճշմարտություն, նա, հավանաբար, կգա ինչպես Եպիսկոպոս Էդվարդ Հանթերի որդին (որը մահացել է մանուկ հասակում) էր եկել նրա մոտ, լիովին հասունացած տղամարդու տեսքով և իր հորն ասել էր. «Ես քո որդին եմ»:

Եպիսկոպոս Հանթերը չհասկացավ դա: Նա գնաց իմ հոր մոտ և ասաց. «Հայրում, ի՞նչ է դա նշանակում: Ես կորցրել եմ իմ որդուն, երբ նա մանուկ էր, իսկ նա եկավ ինձ մոտ որպես հասուն տղամարդ՝ ազնվազարմ, փառահեղ մի երիտասարդ և հայտարարեց, որ իմ որդին է: Ի՞նչ է դա նշանակում»:

Հայրս (Հայրապետ Հայրում Սմիթը) ասաց նրան, որ Հիսուս Քրիստոսի Հոգին լիովին հասուն էր նախքան նա այս աշխարհում կծնվեր: Նմանապես մեր զավակները, նախքան մահկանացու կյանք մտնելը լիովին հասուն են եղել և իրենց հոգու կատարյալ հասակի մեջ են եղել, որն այն նույն հասակն է, որը նրանք կունենան, երբ կհեռանան այս կյանքից, և երբ առաջ կգան հարությունից հետո, երբ ավարտած կլինեն իրենց առաքելությունը:

Զոզեֆ Սմիթը ուսուցանում էր հետևյալ վարդապետությունը. այն մանուկը, որը մահացել է, հարության ժամանակ կբարձրանա որպես մանուկ, և դառնալով դեպի երեխան կորցրած մայրը, նա ասել է. «Դու ուրախություն, զոհունակություն և բավարարվածություն կունենաս՝ մնծացնելով այդ մանկանը, նրա հարությունից հետո, մինչև որ նա կհասնի իր հոգու լրիվ տարիքին»: Կա վերականգնում, աճ, զարգացում հարությունից հետո: Ես սիրում եմ այս ճշմարտությունը: Այն իմ հոգուն պարգևում է մեծ երջանկություն, ուրախություն և երախտագիտություն: Շնորհակալություն Աստծուն, որ նա բացեց այդ սկզբունքները մեզ համար:[7]

Ամեն բան լավ է այն երեխաների հետ, ովքեր մահանում են մանուկ հասակում:

Եթե մեր հոգում ստացել ենք ճշմարտության հոգու վկայությունը, մենք գիտենք, որ ամեն բան լավ է մեր երեխաների հետ, որոնք մահացել են փոքր տարիքում, որ մենք չէինք կարող, եթե ցանկանայինք, ավելի լավացնել նրանց վիճակը. և առնվազն նրանց վիճակը կլավանար, եթե նրանց կարողանայինք ետ կանչել այստեղ, այն պատճառով, որ քանի դեռ մարդն այս աշխարհում է, մահկանացու մարմին հագած, շրջապատված այս

աշխարհի չարով, նա հնարավորություններ է ունենում և վտանգի է ենթարկվում, և նրա վրա ընկած են պատասխանատվություններ, որոնք հնարավոր է ճակատագրական դեր խաղան նրա հետագա բարգավաճման, երջանկության և համբարձման համար։[8]

Շատ դժվար է վշտի և ծանր կորստի ժամանակ ինչ-որ բան ասել վշտացած սրտերին, նրանց, ովքեր այսօր սգի մեջ են։ Նման վիշտը կարող է լիովին փարատվել միայն ժամանակի հետ և, երբ լավ հոգիներ են շփվում նրանց հետ, ովքեր սգի մեջ են, այդպիսով նրանք կարող են սփոփանք և բավարարվածություն գտնել իրենց ապագա հույսերի հետ կապված։ . . . Ես իմացել եմ, որ մահից շատ ավելի վատթար բաներ կան։ Կյանքի և մահվան վերաբերյալ իմ այժմյան զգացմունքների, տեսակետների և հասկացողության առումով ես կնախընտրեի իմ բոլոր զավակներին իրենց անմեղության ու մաքրության մեջ գերեզման տանել, քան տեսնել, թե ինչպես են մեծանում, դառնալով հասուն տղամարդ կամ կին, և կործանում իրենց աշխարհի վնասակար սովորություններով, ինչպես են մոռանում Ավետարանը, մոռանում Աստծուն և կյանքի ու փրկության ծրագիրը, շրջվում գալիք աշխարհում հավերժական վարձք ու վեհացում ձեռք բերելու միակ հույսից։[9]

Եթե հավատարիմ ենք, վարագույրի այն կողմում մենք կմիանանք մեր երեխաներին։

Եղիա մարգարեն պետք է զավակների սրտերում սերմաներ այն խոստումները, որոնք տրվել էին իրենց հայրերին, կանխատեսելով այն մեծ աշխատանքը, որ պետք է կատարվեր Տիրոջ տաճարներում, ժամանակների լրության տնտեսության մեջ, մահացածների փրկագնման և երեխաներին իրենց ծնողներին կնքելու համար, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով և լիովին ամայանա նրա գալստյան ժամանակ։[10]

Եթե մենք ապրենք՝ երես դարձնելով ճշմարտությունից, հավերժության անթիվ դարերի ընթացքում մենք հեռու կլինենք մեր սիրելիներից։ Մենք ոչ մի իրավունք չենք ունենա նրանց վրա, նրանք էլ ոչ մի իրավունք չեն ունենա մեզ վրա։ Անանցանելի մի անդունդ կլինի մեր միջև, որի վրայով մենք չենք կարող անցնել՝ միմյանց միանալու համար։ Եթե մահանում ենք ունենալով հավատ, ապրած լինելով արդարակյաց կյանք, մենք Քրիստոսինն ենք, մենք ունենք հավերժական վարձքի հավաստիացում, և ունենալով հավերժական ճշմարտության սկզբունքները կհագնենք

փառք, անմահություն և հավերժական կյանք։ Լինելով մարմնում մեր կյանքի մեծ մասը մենք անցկացնում ենք վշտի մեջ։ Մահն անջատում է մեզ մի կարճ ժամանակով, մեզանից ոմանք անցնում են վարագույրի այն կողմը, սակայն կգա ժամանակը, երբ մենք կհանդիպենք նրանց հետ, ովքեր հեռացել են, և կվայելենք միմյանց ընկերակցությունը։ Կարելի է ասել, որ անջատումը կլինի մի փոքր ժամանակով։ Այնուհետև ոչ մի ուժ չի կարող մեզ բաժանել։ Աստծո միջոցով միացած լինելով, մենք իրավունք ունենք միմյանց վրա՝ անժխտելի իրավունք, այնքանով, որքանով որ մենք միացած ենք քահանայության զորությամբ Քրիստոսի Ավետարանում։ Հետևաբար, ավելի լավ է այս կյանքում բաժանված լինել մի փոքր ժամանակով, թեև մենք պետք է անցնենք զրկանքների, վշտի, տառապանքի, տքնաջան աշխատանքի, այրիության, որբության և ճակատագրի շատ այլ փոփոխությունների միջով, քան բաժանված լինել ողջ հավերժության ընթացքում։[11]

Մենք ծնվել ենք Իր՝ Քրիստոսի նմանությամբ։ Մենք սկզբում ապրել ենք Հոր և Որդու հետ, որպես Աստծո որդիներ ու դուստրեր, և նշանակված ժամին եկել ենք երկիր մեզ վրա վերցնելու խորանը, որպեսզի կարողանայինք լինել Հիսուս Քրիստոսի նմանությամբ ու կերպարին համապատասխան և դառնայինք նրա պես. որպեսզի կարողանայինք ունենալ խորան, անցնել մահվան միջով, ինչպես նա է անցել, կարողանայինք հարություն առնել մեռելներից, ինչպես նա է հարություն առել։ . . . Ինչպիսի՜ երջանկություն է պարգևում ինձանից առաջ վարագույրի այն կողմն անցած իմ զավակների, իմ հարազատների և ընկերների հետ հանդիպելու միտքը։ Քանզի գիտեմ, որ ես կհանդիպեմ նրանց այնտեղ։ Աստված ցույց է տվել ինձ, որ դա ճշմարիտ է։ Նա բացահայտել է ինձ համար, ի պատասխան իմ աղոթքին ու նվիրվածությանը, ինչպես որ նա պարզորոշ բացահայտել է դա բոլոր մարդկանց հասկացողության համար, ովքեր ջանասիրաբար ձգտել են ճանչել նրան։[12]

[Երեց Զոզեֆ Հ. Դինին, Օահույում, Հավայան Կղզիներ, Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը գրել է.] Ես խորը ցավով լսեցի ձեր երեխայի մահվան լուրը։ Ես գիտեմ, ինչպես ցավակցել, քանի որ ինքս անցել եմ նման դառը փորձության միջով։ Ես կգրեի ձեզ, սակայն ինձ պատկերացրեցի ձեր փոխարեն և չգրեցի։ Նման հանգամանքներում ես ցանկանում եմ գնալ ինչ-որ հեռու, խաղաղ, առանձնացված վայր, որտեղ բացի Աստծո աչքից, ոչ մեկի աչքը չնայի ինձ, և այնտեղ միայնակ կրել և տանել իմ վիշտը,

միայն Աստված գիտի դա։ . . . Ժամանակը, միայն ժամանակը, վերքերի այդ մեծ բժիշկը, կարող է դիպչել իմ հոգուն, և կարծում եմ դուք, անկասկած, նույնն եք զգում։ Սակայն, երբ անցնում են վշտի առաջին ծակող ցավերը և հոգին հանդարտվում է ժամանակի հետ և ճակատագրով, այն ժամանակ տեղին ասված մտերմիկ ցավակցական խոսքը կարող է դիպչել ընկերական նուրբ լարերին, անցնելով սրտից սիրտ։ Տերն իրոք գիտի, թե ինչն է լավ և մենք գիտենք, որ անմեղները, որոնք իրենց գալուց հետո այդքան շուտ կանչվել են երկրից, չվարակվելով այս ընկած աշխարհի զզվելի տարրերով, վերադառնում են Նրա մոտ, Ում մոտից, որ եկել էին, մաքուր և սուրբ, փրկագնված հենց սկզբից նրա զոհաբերության շնորհիվ, որն ասել է. «Այդպիսիներին է երկնքի արքայությունը»։ Իմ ամենալուրջ ու սրտագին աղոթքն է. Ո՜վ, Աստված, օգնիր ինձ ապրել և արժանի լինել՝ միանալու իմ անմեղ երեխաներին, իրենց տանը քեզ հետ։[13]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ օրհնություններ են խոստացվել փոքր երեխաներին, որոնք մահանում են նախքան պատասխանատվության տարիքին հասնելը։ (Տես նաև ՎԵՈ 29.46։) Ինչպե՞ս կարող է դա մխիթարել և հույս պարգևել, երբ մենք սգում ենք փոքր երեխայի մահը։
- Եթե մանուկը մահանում է, ինչպիսի՞ն է նրա հոգու վիճակը։ Ե՞րբ այդ մանկան մարմինը կզարգանա և կհասունանա։
- Ո՞վ պատասխանատու կլինի երեխայի դաստիարակման համար, որը փոքր հասակում է մահանում։ Ինչպիսի՞ օրհնություններ են խոստացվում փոքր երեխաներ կորցրած արդարակյաց ծնողներին հաջորդ կյանքում։
- Ինչպե՞ս կարող է փրկության ծրագրի սկզբունքները հասկանալը սփոփել և օգնել նրանց, ովքեր սգում են իրենց փոքր երեխայի մահը։
- Ինչպե՞ս կարող են տաճարային կնքող արարողությունները սփոփանք և հույս պարգևել երեխա կորցրած ծնողներին։ Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի միանանք մեր երեխաներին, որոնք մահացել են փոքր հասակում։
- Ինչպե՞ս կարող է «տեղին ասված խոսքը» մխիթարել հոգին, որը սգում է սիրելիի մահը։ Ինչպե՞ս կարող ենք մենք պատրաստվել նման խոսքեր ասելուն։

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 456–57; paragraphing added.
2. *Truth and Courage: The Joseph F. Smith Letters,* ed. Joseph Fielding McConkie (n.d.), 56.
3. *Life of Joseph F. Smith,* 463.
4. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 452–54.
5. *Gospel Doctrine,* 24.
6. *Gospel Doctrine,* 453–54.
7. *Gospel Doctrine,* 455–56.
8. *Gospel Doctrine,* 452.
9. *Deseret News: Semi-Weekly,* 24 Apr. 1883, 1.
10. *Gospel Doctrine,* 475.
11. *Deseret News: Semi-Weekly,* 24 Apr. 1883, 1.
12. *Gospel Doctrine,* 428–29.
13. *Truth and Courage: The Joseph F. Smith Letters,* 57.

Քահանայություն՝ Աստվածային կառավարում

Սուրբ քահանայությունը Աստծո իշխանությունն ու զորությունն է տրված մարդուն՝ Իր ժողովրդին կառավարելու և օրհնելու համար:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

28 տարեկանին մոտ, Զոզեֆ Ֆ. Սմիթը ծառայում էր որպես Առաջին Նախագահության Խորհրդի և Տասներկուսի Քվորումի քարտուղար: 1866թ. հուլիսի 1-ին, երբ պարբերաբար տեղի ունեցող Խորհրդի աղոթքի հավաքի ժամանակ ընդմիջում հայտարարվեց, Նախագահ Բրիգամ Յանգն իր եղբայրներին հայտնեց. «Ես միշտ ինձ լավ եմ զգում, երբ Հոգին թելադրում է ինձ: Իմ ցանկությունն է, որ Եղբայր Զոզեֆ Ֆ. Սմիթը կարգվի որպես Առաքյալ և դառնա իմ խորհրդականներից մեկը»: Նա կոչ արեց Իր եղբայրներից յուրաքանչյուրին այդ կոչման հետ կապված իրենց կարծիքը հայտնել, և նրանք բոլորը աջակցեցին Նախագահ Յանգին «սրտանց հավանություն տալով»:

Այնուհետև նրանք ձեռնադրեցին Զոզեֆին և Նախագահ Յանգն ասաց. «Եղբայր Զոզեֆ Ֆ. Սմիթ, մենք դնում ենք մեր ձեռքերը քո գլխին Հիսուս Քրիստոսի անունով, և Սուրբ Քահանայության իշխանությամբ կարգում ենք քեզ լինելու Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Առաքյալ և հատուկ վկա երկրի ազգերի համար: Մենք կնքում ենք քո գլխին այդ սուրբ Առաքելության ողջ իշխանությունը, զորությունն ու բանալիները. և մենք կարգում ենք քեզ լինելու երկրի վրա Աստծո Արքայության և Եկեղեցու Առաջին Նախագահության խորհրդական: Այս օրհնությունները մենք կնքում ենք քեզ վրա Հիսուս Քրիստոսի անունով և Սուրբ Քահանայության իշխանությամբ, ամեն»:[1]

1867թ. հոկտեմբերի 8-ին գերագույն համաժողովի ժամանակ Զոզեֆ Ֆ. Սմիթը աջակցվեց և ձեռնադրվեց որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, այն դարձավ ուղենիշ ամբողջ

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը 1860-ականներին, երբ նա Տասներկու Առաքյալների և Նախագահ Բրիգամ Յանգի Խորհրդականն էր։

կյանքում շարունակվող իր աշխատանքում՝ որպես Եկեղեցու քահանայության ղեկավարող խորհուրդների անդամ: 50 տարուց ավելի տևած իր ծառայության ընթացքում քահանայության և Եկեղեցու կառավարման մեջ նրա ձեռք բերած մեծ փորձն ու իմաստությունն օգնեցին ամբողջ աշխարհում սփռված Եկեղեցուն:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Քահանայությունը իշխանություն է, ըստ որի Աստված կառավարում և օրհնում է Իր ժողովրդին:

Սուրբ Քահանայությունը դա այն իշխանությունն է, լիազորված Աստծո կողմից մարդուն, որի միջոցով նա կարող է հայտնել Աստծո կամքը, կարծես, եթե հրեշտակները այստեղ լինեին և իրենք դա ասեին. որի միջոցով մարդիկ իրավունք են ստանում կապել երկրի վրա և այն կկապվի երկնքում, և արձակել երկրի վրա և այն կարձակվի երկնքում, որի միջոցով մարդու խոսքերը, այդ զորությունը գործադրելիս, դառնում են Տիրոջ խոսք և Աստծո օրենք մարդկանց համար, սուրբ գրություններ և աստվածային պատվիրաններ: . . . Դա իշխանություն է, որի միջոցով Ամենազոր Տերը կառավարում է իր ժողովրդին, և գալիք ժամանակներում կկառավարի աշխարհի ժողովուրդներին:[2]

Շատ բան կարելի է ասել քահանայության իշխանության և իրավունքների մասին: Այն կառավարման և կազմակերպման գլխավոր սկզբունքն է, որի միջոցով բոլոր դարերում ուղղորդվել են և պետք է ուղղորդվեն Աստծո ժողովրդի ջանքերն ու ուժը: Դա այն սկզբունքն է, որի միջոցով Ամենազոր Աստվածը կառավարում է Իր ողջ տիեզերքը: Դա այն սկզբունքն է, որով կառավարվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: . . . Դա այն իշխանությունն է, որն Աստված հայտնել է և վերականգնել է մարդկանց զավակների համար, որպեսզի նրանք կառավարվեն և ղեկավարվեն Սիոնը կառուցելիս և երկրի ազգերին Ավետարանը հռչակելիս, մինչև որ Ադամի ամեն մի որդին և դուստրը արտոնություն կունենա լսելու Ավետարանի ձայնը և կբերվի ճշմարտության գիտելիքին, ոչ միայն այս երկրի վրա, այլև հոգևոր աշխարհում:[3]

Մելքիսեդեկյան կամ Սուրբ Քահանայությունը . . . իշխանություն է, որի միջոցով անհատները կամ . . . քվորումները, որոնք կազմում են Եկեղեցու քահանայությունը, կարող են օրինական ձևով գործել Տիրոջ անունով: Դա շարժիչ, ուղղորդիչ, հսկող, կառավարող կամ նախագահող ուժ է, իրավունք և իշխանություն,

որով օժտված է Աստվածագլուխը և որը հանձնվում է մարդուն նրա հրահանգման, Եկեղեցի բերվելու, հոգևոր և աշխարհիկ ձևով ղեկավարման, կառավարման և վեհացման նպատակով:[4]

Տերը երկրի վրա հաստատել է Քահանայությունն իր ամբողջությամբ . . . ուղղակի երկնքից տրված հայտնության և պատվիրանի միջոցով. . . . Նա հաստատել է կարգ կամ կառավարություն, որը մեր ունակությունից, իմաստությունից, կրթությունից և հասկացողությունից վեր է, այնքանով, որ իսկապես անհնար է թվում, որ մարդկային գիտակցությունը, որը զրկված է Աստծո Հոգու օգնությունից, կարողանա ըմբռնել Սուրբ Քահանայության ողջ գեղեցկությունը, ուժն ու բնույթը: Թվում է, դժվար է մարդկանց համար ըմբռնել Քահանայության գործունեության մեխանիզմները, նրա օրինական իշխանությունը, նրա հնարավորություններն ու զորությունը, սակայն հոգու լույսով հեշտ է ըմբռնել այդ ամենը:[5]

Որքան էլ անկատար լինեն մարդիկ, նրանք հագել են այդ իշխանությունը, որի միջոցով կարող են խոսել և գործել Հոր և Որդու անունով, և Աստված կապված է, եթե նրանք խոսում են Իր հոգու միջոցով, որպես Նրա ծառաներ իրենց պարտականությունները կատարելիս, հարգելով և կատարելով այն, ինչ իրենք ասում են, քանի որ խոսում են այն իշխանությամբ, որ Նա է տվել: . . . Անշուշտ, բոլոր բաները պետք է արդարությամբ կատարվեն: Ոչ ոք չի կարող անարդար ձևով կատարել որևէ բան, որն Աստված կապված է հարգելու: Սակայն երբ Քահանայություն կրող մարդը արդար ձևով է գործում, Աստված կապված է ընդունելու այն, կարծես, եթե Նա Ինքը կատարեր դա:[6]

Բուն էությունը կայանում է նրանում, որ Տերն է հաստատել իր Եկեղեցին, կազմակերպել իր քահանայությունը և իշխանություն շնորհել որոշ անհատների, խորհուրդների և քվորումների, և Աստծո ժողովրդի պարտականությունն է ապրել այնպես, որպեսզի իմանան, որ դա ընդունելի է Նրա կողմից:[7]

Թեև քահանայությունը շնորհվում է միայն տղամարդկանց, դրա օրհնությունները ճաշակում են և տղամարդիկ, և կանայք:

Քահանայությունը սկզբում գործադրվում էր հայրապետական կարգով. նրանք, ովքեր կրում էին այն, գործադրում էին իրենց իշխանությունը նախնառաջ ըստ հայրական իրավունքի: Դա այդպես է նաև մեծ Էլոհիմի հետ: Դա առաջին և ամենածանրակշիռ իրավունքն է մեր սիրո, ակնածանքի և հնազանդության վրա,

հիմնավորված այն փաստով, որ Նա է ողջ մարդկության Հայրը, Արարիչը: . . . Տղամարդը, որը սուրբ Քահանայություն ունի, ինչ-որ առումով նման է Նրան: Սակայն մարդիկ երկրի վրա չեն կարող գործել Աստծո փոխարեն, որպես Նրա ներկայացուցիչներ, բնական կարգով չունենալով իշխանություն, չլինելով նշանակված և կարգված: Ոչ ոք ինքնակոչ ձևով չի կարող իր վրա վերցնել այդ պատիվը, այլ նա, ով կանչված է Աստծուց, այն ուղիներով, որոնք Նա է ընդունում և Նա է լիազորել:[8]

Հայրապետական կարգն աստվածային ծագում ունի և կշարունակվի ժամանակի և հավերժության մեջ: . . . Աստծո ժողովրդի տներում տղամարդիկ, կանայք և երեխաները պետք է հասկանան այս կարգը և իշխանությունը, և ձգտեն դարձնել այն այնպիսին, ինչպիսին Աստված է նախատեսել, որպեսզի դա լինի զարգացում և նախապատրաստում իր զավակների բարձրագույն վեհացման համար:[9]

Ինչպիսի պատիվներ, արտոնություններ կամ փառք, որ ձեռք է բերում տղամարդը Քահանայության միջոցով, կիսվում են կնոջ հետ և կինը նույնպես վայելում է դրանք: Նա ամուսնու հետ լինելով մեկ Քրիստոսում, ամուսնու բոլոր պատիվները, օրհնությունները, փառքը նրա պատիվներն են, օրհնություններն ու փառքը, քանզի նրանք մեկ են և անբաժանելի: . . . Ինչպես Պողոսն է ասել. «Ոչ կինն առանց մարդի, և ոչ մարդն առանց կնկա, Տերումը» [տե՛ս Ա Կորնթացիս ԺԱ.11:] Այլ խոսքով, տղամարդն առանց կնոջ չի կարող ձեռք բերել փառք, պատիվ կամ վեհացում, ոչ էլ կինը՝ առանց տղամարդու: Նրանք պարզապես երկու բաղկացուցիչ մասերն են մեկ ամբողջի: . . . Աստծո Որդու Քահանայությունը շնորհվում է տղամարդուն, որը ձեռք բերելով միևնույն գերազանցությունն ու կատարելությունը, կարող է գործել ինչպես Քրիստոսն ու Աստված են գործում: . . . Թեպետ տղամարդն է . . . ուղղակի օբյեկտը, որին Քահանայության զորությունն ու պատիվն է շնորհվում, և նա է քահանայության գործողությունների ակտիվ հաղորդիչը, կինը նրա հետ միասին ճաշակում է դրա բարիքներից, օրհնություններից, զորություններից, իրավունքներից և արտոնություններից, որպես տղամարդու բաղկացուցիչ մի մաս: . . . Զորությունը չի տրվում կնոջը, որպեսզի նա գործի տղմարդուց անկախ, ոչ էլ այն տրվում է տղամարդուն, որ նա գործի Քրիստոսից անկախ:[10]

Կանայք պատասխանատու են իրենց արարքների համար այնքանով, որքանով տղամարդիկ են պատասխանատու, թեև

տղամարդը կրելով քահանայության իշխանությունը համարվում է գլուխ, ղեկավար: . . . Ավելին, երբ խոսում ենք տղամարդկանց մասին, մենք ի նկատի ունենք կանանց նույնպես, քանի որ կանայք տղամարդկանց հետ միասին կազմում են ողջ մարդկությունը և դրա անբաժանելի մասն են հանդիսանում:[11]

Քահանայության բանալիները անհրաժեշտ են Եկեղեցու կառավարման համար:

Ընդհանրապես Քահանայությունը իշխանություն է, որը տրվում է մարդուն՝ գործելու Աստծո համար: Այս իշխանությունը տրվում է յուրաքանչյուր տղամարդու, որը կարգված է Քահանայության որևէ աստիճանի:

Սակայն անհրաժեշտ է, որ այս իշխանության ներքո կատարված յուրաքանչյուր գործողություն կատարվի պատշաճ ժամանակին ու տեղում, պատշաճ ձևով ու կարգով: Այդ գործերը ուղղորդող զորությունը կազմում է Քահանայության *բանալիները*: Որոշակի ժամանակահատվածում այդ բանալիներն ամբողջությամբ կրում է միայն մեկ մարդ՝ Եկեղեցու Մարգարեն և Նախագահը: Նա կարող է այդ զորության մի մասը հանձնել մեկ ուրիշին, և այդ դեպքում տվյալ անձնավորությունը կկրի այդ մասնակի գործի բանալիները: Այսպես, տաճարի նախագահը, ցցի նախագահը, ծխի եպիսկոպոսը, միսիայի նախագահը, քվորումի նախագահը՝ նրանցից յուրաքանչյուրը կրում է տվյալ մասնավոր մարմնում կամ տեղում կատարվող աշխատանքների բանալիները: Նրա Քահանայությունը չի ավելանում այդ հատուկ նշանակման միջոցով, . . . օրինակ, երեցների քվորումի նախագահը չունի ավելի մեծ Քահանայություն, քան այդ քվորումի որևէ անդամ: Սակայն նա կրում է այդ քվորումում . . . կատարվող պաշտոնական գործերն ուղղորդող զորությունը, կամ այլ խոսքով, այդ աշխատանքի տվյալ մասի *բանալիները*:[12]

Նախագահը ողջ Եկեղեցու համար Աստծո ձայնափողն է, հայտնողը, թարգմանիչը, տեսանողը և Աստծո Մարգարեն: Նա է, որ կրում է այս Սուրբ Քահանայության բանալիները, բանալիներ, որոնք բացում են Աստծո Տաճարների և Նրա տան արարողությունների դռները՝ ապրողների փրկության և մահացածների փրկագնման համար: Նա է, որ կրում է կնքման զորությունը, որով մարդը կարող է կապել երկրի վրա և այն կկապվի երկնքում, և որով մարդիկ, որոնք պատշաճ կերպով լիազորվել և նշանակվել են նրա կողմից, որը կրում է այդ բանալիները, կարող են

արձակել երկրի վրա և այն կարձակվի երկնքում: Սա է Սուրբ Քահանայության կարգը:[13]

Քահանայությունը ղեկավարում է սիրո օրենքով:

Տերը հայտնել է կազմակերպման մեծ սկզբունքը, որով պետք է կառավարվի Նրա Եկեղեցին, որն Ինքը Տերն է հաստատել Եկեղեցում Սուրբ Քահանայության իշխանությունը, այսինքն՝ Բարձրագույն Քահանայությունը՝ Առաքյալներին, Յոթանասունականներին և Երեցներին, իսկ ապա ավելի ցածր Քահանայությունը՝ Եպիսկոպոսներին, Քահանաներին, Ուսուցիչներին և Սարկավագներին: Աստված հաստատել է այս կազմակերպությունները Եկեղեցում՝ Իր ժողովրդի կառավարման համար: Ի՞նչ նպատակով: Որպեսզի ճնշի՞ նրանց: Ո՛չ: Վիրավորի՞ նրանց: Ո՛չ, հազար անգամ ոչ: Ինչի՞ համար: Որպեսզի նրանք և նրանց երեխաները օգուտ քաղեն այդ կազմակերպություններից՝ ուսուցանվելով, խորհուրդ ստանալով, առաջնորդվելով, հայտնություն և ոգեշնչում ստանալով, որպեսզի կատարեն այն, ինչ Տերն է պահանջում իրենց ձեռքից, որ կարողանան կատարյալ դառնալ իրենց կյանքում:[14]

Մենք կառավարվում ենք օրենքով, քանի որ սիրում ենք միմյանց և մեզ առաջ է մղում երկայնամտությունը, գթասրտությունն ու բարի կամքը. և մեր ամբողջ կազմակերպությունը հիմնված է ինքնակառավարման գաղափարի վրա. տալու և վերցնելու սկզբունքի վրա և գերադասելով տառապել ուրիշի անօրինության պատճառով, քան անօրինություն գործել: Մեր ուղերձն է՝ երկրի վրա խաղաղություն, և մարդկանց մեջ հաճություն, սեր, գթություն և ներողամտություն, որը պետք է խթան հանդիսանա բոլոր նրանց համար, ովքեր կապված են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հետ: Մեր Եկեղեցում իշխում է օրենքը, սակայն այդ օրենքը՝ սիրո օրենքն է:[15]

Ոչ ոք չպետք է ճնշվի: Քահանայության ոչ մի իշխանություն չի կարող վարել գործերը կամ աշխատել որևէ աստիճանի անարդարակեցություն դրսևորելով՝ առանց Աստծուն վիրավորելու: Ուստի, երբ մենք գործ ենք ունենում մարդկանց հետ, մենք չպետք է վարվենք նրանց հետ՝ մեր մտքում նրանց վնասելու կանխատրամադրվածություն ունենալով:[16]

Չկա Եկեղեցու իշխանության մեջ ինչ-որ պաշտոն զբաղեցնող մարդ, որը կարող է իր պարտականությունը կատարել որևէ այլ հոգով, բացի հայրության և եղբայրության հոգի դրսևորելով

նրանց հանդեպ, ում վրա նա նախագահում է: Նրանք, ովքեր իշխանություն ունեն, չպետք է կառավարիչներ կամ էլ բռնապետներ լինեն, նրանք չպետք է բռնան մարդկանց վրա, այլ պետք է գրավեն մարդկանց սրտերը, շահեն վստահությունն ու սերը նրանց, ում վրա նրանք նախագահում են, բարությամբ ու անկեղծ սիրով, հոգու քնքշությամբ, համոզումով, օրինակով, որը վեր է հանդիմանությունից և անարդար քննադատությունից: Այսպես, իրենց սրտի բարությամբ, իրենց մարդկանց հանդեպ սիրով նրանք առաջնորդում են նրանց արդարակեցության ճանապարհով և ուսուցանում են նրանց փրկության ճանապարհը՝ ցուցումով և օրինակով նրանց ասելով. Հետևեք ինձ, ինչպես որ ես հետևում եմ մեր գլխին:[17]

Պատվեք սուրբ քահանայության զորությունն ու իշխանությունը:

Մեզ վայել է ընդունել և պատվել Սուրբ Քահանայությունը, որը վերականգնվել է երկրի վրա Զոզեֆ Սմիթ Մարգարեի կողմից այս ժամանակահատվածում: Ես գիտեմ, որ այն բարի է, քանի որ նախատեսված է պաշտպանել ճշմարտությունը, աջակցել Եկեղեցուն և զարգացնել մարդկանց գիտելիքի, լավ գործերի, Աստծո նպատակների հանդեպ նվիրվածությամբ, և այն էական դեր ունի երկրի վրա Աստծո ժողովրդին պատշաճ ձևով կառավարելու և ինքներս մեզ կառավարելու, մեր ընտանիքները, մեր աշխարհիկ և հոգևոր գործերը ղեկավարելու համար՝ ինչպես անհատապես, այնպես էլ ընդհանուր ձևով:[18]

Պատվեք այդ զորությունն ու իշխանությունը, որը մենք կոչում ենք Սուրբ Քահանայություն, որն ըստ Աստծո Որդու կարգի է, և որը շնորհվել է մարդուն Աստծո կողմից: Պատվեք այդ Քահանայությունը: Ի՞նչ է Քահանայությունը: Այն ոչ այլ ինչ է, քան Աստծո կողմից մարդուն տրված աստվածային իշխանություն: Դա սկզբունք է, որը մենք պետք է պատվենք: . . . Աստծո Որդու Քահանայությունը չի կարող գործադրվել որևէ աստիճանի անարդարությամբ, ոչ էլ Նրա զորությունը, ուժը և իշխանությունը կմնա նրա հետ, ով անմաքուր է, ով հոգով դավաճան է Աստծո և իր ընկերների հանդեպ: Այն չի մնա նրա ուժի և զորության մեջ, ով չի պատվում այն իր կյանքում՝ ենթարկվելով երկնքի պահանջներին:[19]

Պատվո՞ւմ եք արդյոք այս Քահանայությունը: . . . Կրելով այդ Քահանայությունը և ունենալով Աստծուց տրված իրավունք և

իշխանություն գործելու Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից, կխաթարե՞ք արդյոք Աստծո վստահությունն ու սերը, մեր բոլորի Հոր հույսն ու փափագը: Քանզի, շնորհելով մեզ այդ բանալին և օրհնությունը, Նա ցանկանում է և ակնկալում է ձեզանից, որ մենծարեք ձեր կոչումը:[20]

Եթե պատվեք սուրբ Քահանայությունը նախ ձեր մեջ, դուք կպատվեք այն նրանց մեջ, ովքեր նախագահում են ձեզ վրա և ովքեր ծառայում են տարբեր կոչումներում՝ ամբողջ Եկեղեցում:[21]

Լավ չէ . . . եթե Վերջին Օրերի Սրբերը և Վերջին Օրերի Սրբերի երեխաները թեթևամտորեն վերաբերվեն իշխանության այս սրբազան սկզբունքին, որը հայտնվել է երկնքից այն ժամանակաշրջանում, որում մենք ենք ապրում: . . . Այն սրբազան է և մարդիկ պետք է սրբորեն պահեն դա: Քահանայությունը պետք է պատվեն և հարգեն նրանք, ովքեր կրում են այն և որոնց վրա պատասխանատվություն է դրված Եկեղեցում: Երիտասարդ տղամարդիկ և կանայք, և ընդհանրապես մարդիկ պետք է պատվեն այդ սկզբունքը և ընդունեն այն որպես սուրբ մի բան, որի հետ չի կարելի կատակել, որի մասին չի կարելի թեթևամտորեն խոսել և անպատիժ մնալ: Այդ իշխանությունը չհարգելը տանում է դեպի խավար և ուխտադրժություն, կորստի մատնելով Աստծո տան բոլոր իրավունքներն ու արտոնությունները, քանզի այդ իշխանության շնորհիվ է, որ ավետարանի արարողությունները կատարվում են ողջ աշխարհում և ամեն սուրբ վայրում, և առանց քահանայության դրանք չեն կարող կատարվել: Նրանք, ովքեր կրում են այդ իշխանությունը, պետք է նաև պատվեն այն իրենց մեջ: Նրանք պետք է այնպես ապրեն, որպեսզի արժանի լինեն իրենց վստահված այդ իշխանությանը և իրենց շնորհված պարգևներին:[22]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է քահանայությունը: Ի՞նչ նպատակով է Տերը լիազորել մարդուն քահանայության իշխանությամբ:
- Ինչպե՞ս կարող ենք «ըմբռնել Քահանայության գործունեության մեխանիզմները»:
- Ինչպե՞ս են Աստծո տղամարդիկ և կանայք ճաշակում քահանայության օրհնությունները, զորություններն ու արտոնությունները:

- Ինչպե՞ս է քահանայությունն օրհնել ձեր կյանքը: Ինչպե՞ս է այն օրհնել ձեր տան անդամներին:
- Որո՞նք են քահանայության բանալիները: Ինչո՞ւ են դրանք տրվում: Ո՞վ է կրում քահանայության բոլոր բանալիները: Ո՞վ է կրում բանալիները ծխի և ցցի մակարդակով:
- Ինչպիսի՞ հոգով պետք է քահանայություն կրողները կատարեն իրենց պարտականությունները: (Տես ՎԿՈ 121.41–46:) Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում քահանայություն կրողը տանը և Եկեղեցում, երբ նա «անկեղծ սեր» և «քնքուշ հոգի է» դրսևորում:
- Ինչպե՞ս կարող ենք պատվել քահանայությունը և սուրբ պահել այն: Ինչպե՞ս կարող ենք «թեթևամտորեն վերաբերվել» այս սրբազան իշխանությանը:
- Ինչպե՞ս է Փրկչի օրինակն օգնում մեզ հասկանալ, թե ինչպես պետք է գործադրենք և պատվենք քահանայության իշխանությունը:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 227.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 140–41.
3. *Deseret News: Semi-Weekly,* 23 Aug. 1892, 6.
4. *Gospel Doctrine,* 190.
5. *Gospel Doctrine,* 40–41.
6. *Deseret News: Semi-Weekly,* 23 Aug. 1892, 6.
7. *Gospel Doctrine,* 45.
8. *Gospel Doctrine,* 147.
9. *Gospel Doctrine,* 287.
10. Letter to Susa Young Gates, 7 July 1888, in *Truth and Courage: The Joseph F. Smith Letters,* ed. Joseph Fielding McConkie (n.d.), 11–12.
11. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:80.
12. *Gospel Doctrine,* 136.
13. *Deseret News: Semi-Weekly,* 27 Apr. 1897, 1.
14. In Conference Report, Oct. 1911, 7.
15. *Gospel Doctrine,* 143–44.
16. *Gospel Doctrine,* 149.
17. *Gospel Doctrine,* 150–51.
18. In Conference Report, Apr. 1912, 9.
19. *Gospel Doctrine,* 160.
20. *Gospel Doctrine,* 165.
21. *Gospel Doctrine,* 165.
22. *Gospel Doctrine,* 140–41.

Կյանքի և փրկության մեծ ծրագիրը

Մեր Երկնային Հայրն Իր որդիներին և դուստրերին ծրագիր է տվել, որպեսզի նրանք դառնան Հիսուս Քրիստոսի նման և վայելեն վերացումը:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1874թ. Եվրոպական Սիսիայում նախագահելու նպատակով Անգլիա ժամանելուց մի փոքր անց և իր 36-ամյակի կապակցությամբ Զոզեֆ Ֆ. Սմիթն իր օրագրում գրել է.

«Ցուրտ, սառը ու մռայլ օր էր, խավար ու ծանր, իմ ծննդյան օրվա տարեդարձին հարմար և համապատասխան եղանակ, երբ հայրս [Հայրումը] և նրա եղբայրը [Զոզեֆը] գցվել էին բանտախուցը՝ ավետարանի համար, և անողոք ամբոխը սրբերին քշում էր Սիսուրիի իրենց տներից: Իմ հոգու վառ լույսը այդպես էլ ամբողջովին չցրեց այն մռայլ իրադարձություններով լի ժամանակաշրջանի մութ ստվերները:

Չնայած Աստծո ողորմած ձեռքը և նրա բարյացակամ նախախնամությունը միշտ տեսանելի կերպով հասնում է ինձ, իմ մանկությունից ի վեր և իմ օրերն էլ ավելի են լավանում համեստության միջոցով, հետամուտ լինելով իմաստությանը և Աստծո արքայության մեջ երջանկություն ունենալուն: Ժամանակի և փորձ ձեռք բերելու հետ միասին իմ կյանքի նպատակներն ավելի ակնհայտ են դառնում: Այդ նպատակներն են՝ ավետարանի հռչակումը կամ Աստծո արքայության հաստատումը երկրի վրա, հոգիների փրկությունը և ինձ համար ամենակարևորը՝ իմ և իմ ընտանիքի փրկությունը»:[1]

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը գիտելիքով և համոզումով էր ուսուցանում և վկայում մեր Երկնային Հոր փրկության հավերժական ծրագրի մասին: «Երկնքի տակ չկա ոչինչ այնքան կարևոր ինձ համար կամ մարդկանց զավակների համար, որքան կյանքի և փրկության մեծ ծրագիրը»,- հայտարարել է նա:[2]



Քրիստոսը և Սամարացի Կինը, Կառլ Բլոխ։ Հակոբի ջրհորի մոտ Փրկիչն ասաց Սամարացի կնոջը, որ Ինքն է աշխարհի Փրկիչը (տե՛ս Հովհաննես Դ.5–30)։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մեր Երկնային Հայրը նախատեսել է փրկության ծրագիր, որպեսզի մենք կարողանանք վեհացում ստանալ։

Ամենազոր Տերն ապրում է, նա է արարել երկինքներն ու երկիրը, և ջրերի աղբյուրները, և մենք նրա զավակներն ենք, նրա սերունդը, և մենք պատահական չենք այստեղ։ Տերը նախատեսել է մեր գալն ու մեր գոյության նպատակը։ Նա նախատեսել է, որ մենք կկատարենք մեր առաքելությունը, որպեսզի համապատասխանենք Հիսուս Քրիստոսի պատկերին ու նմանությանը որպեսզի կարողանանք նրա պես առանց մեղքերի գնալ դեպի փրկություն, կարողանանք նրա պես լցվել մաքուր բանականությամբ, կարողանանք նրա պես համբարձվել Հոր աջ կողմում, որպեսզի նստենք գահերի վրա և ունենանք տիրապետություն ու զորություն այն բնագավառում, որտեղ կկանչվենք գործելու։ Ես վկայում եմ այս վարդապետության մասին, քանզի Տերն ինձ հայտնի է դարձրել և հնարավորություն տվել զգալու դրա ճշմարտացիությունը մազերիս ծայրից մինչև ոտքերիս մատները։[3]

Մարդը գալիք կյանքում պատասխանատվության կենթարկվի այս կյանքում կատարած գործերի համար և պատասխան կտա այստեղ իր հոգածությանը վստահված ոլորտների համար՝ կենդանիների և մահացածների Դատավորի, մեր հոգիների Հոր և մեր Տիրոջ ու Վարդապետի առաջ։ Սա է Աստծո ծրագիրը, նրա մեծ նպատակի մի մասը։ Մենք այստեղ չենք, որպեսզի ապրենք մի քանի ամիս կամ տարի՝ ուտենք, խմենք և քնենք, իսկ հետո մահանանք, հեռանանք ու կորչենք։ Ամենազոր Տերը երբեք չի նախատեսել, որ մարդն այդքան անցողիկ, անօգտակար և անկատար լինի։[4]

Եթե նախքան մեր [աշխարհ] գալը մենք չիմանայինք մեր գալու անհրաժեշտության, խորաններ ձեռք բերելու կարևորության մասին, այն փառքի մասին, որ պետք է ձեռք բերվի ժառանգներով, այն մեծ նպատակի մասին, որ պետք է ձեռք բերվի փորձության և փորձվելու, այսինքն՝ կշեռքով կշռվելու միջոցով՝ աստվածային հատկանիշները, աստվածանման զորությունները և մեզ շնորհված կամքի ազատությունը գործադրելիս, որի միջոցով Քրիստոսի պես իջնելով բոլոր բաներից ցած, մենք կարող էինք բարձրանալ բոլոր բաներից վեր [տես ՎևՈւ 88.6] և դառնալ մեր Հոր, Որդի և Ամենազոր ու Հավերժական Ավագ Եղբոր պես, մենք երբեք չէինք գա այստեղ։[5]

Երկնքի տակ ոչինչ այդքան կարևոր չէ ինձ համար կամ մարդկանց զավակների համար, որքան կյանքի և փրկության մեծ ծրագիրը, որը նախագծվել է Երկնքում սկզբում և, որը ժամանակ առ ժամանակ ներքև է հաղորդվել Աստծո կողմից կանչված սուրբ մարդկանց ոգեշնչման միջոցով, մինչև Մարդու Որդու գալու օրը, քանզի այս ավետարանը և փրկության այս ծրագիրը հայտնվել էր դեռևս մեր առաջին ծնողներին: Աստծո հրեշտակը հաղորդել էր նրանց փրկագնման և մահից ու մեղքից փրկվելու ծրագիրը, որը ժամանակ առ ժամանակ աստվածային իշխանությամբ հայտնվել էր մարդկանց զավակներին և այն ոչ մի փոփոխության չէր ենթարկվել: Ի սկզբանե նրանում չկար ոչ մի ավելորդ կամ անկարևոր բան. չկար ոչինչ, առանց որի կարելի էր դիմանալ, դա ավարտված ծրագիր էր, սկզբից ենթ նախագծված Հոր և սրբերի իմաստությամբ՝ մարդկային ցեղի փրկագնման և նրանց փրկության ու Աստծո ներկայության մեջ վերհացման համար: . . . Բոլոր ժամանակների սերունդների ընթացքում, կյանքի և փրկության նույն ծրագիրը, նույն արարողությունները, որոնք արտացոլում են Քրիստոսի հետ թաղվելը, մեծ զոհաբերության հիշատակը, որը մատուցվեց աշխարհի մեղքերի և մարդու փրկագնման համար, տրվել են ժամանակ առ ժամանակ, արարման ժամանակից ի վեր:[6]

Դա կյանքի ծրագիրն է, որն Ամենազորը վերադարձրել է մարդուն վերջին օրերին՝ մարդկանց հոգիների փրկության համար, ոչ միայն գալիք աշխարհում, այլ մեր ներկայիս կյանքում, քանզի Տերը հաստատել է իր աշխատանքը, որպեսզի իր ժողովուրդը վայելի այս կյանքի օրհնություններն ամբողջությամբ, որպեսզի նրանք փրկվեն այս ներկա կյանքում, ինչպես նաև գալիք կյանքում, որպեսզի նրանք այստեղ դնեն մեղքից և դրա բոլոր ազդեցություններից ու հետևանքներից պաշտպանված լինելու հիմքը, որպեսզի նրանք ժառանգություն ձեռք բերեն Աստծո արքայության մեջ՝ այս վշտի հովտից հեռու: Հիսուս Քրիստոսի ավետարանը դեպի փրկություն տանող Աստծո զորությունն է:[7]

Աստված խոսեց Իր ծառա Զոզեֆ Սմիթի հետ և հայտնվեց Նրան՝ ոչ միայն Հայրը, այլև Որդին: Նրանք հայտնվեցին նրան և տվեցին նրան պատվիրաններ և իրենց օրենքը, իրենց Ավետարանը և հավերժական կյանքի իրենց ծրագիրը: . . . Այս ծրագիրը նախատեսում էր ոչ միայն մեղքից փրկություն այստեղ և հետագայում, այլև վերհացում, փառք, զորություն և տիրապետություն, որոնք կգան Աստծո զավակներին ավետարանի օրենքներին և սկզբունքներին հնազանդվելու միջոցով:[8]

Մենք գալիս ենք աշխարհ, որպեսզի պատրաստվենք հավերժական կյանքին։

Մեր երկրային գոյության նպատակը լիակատար ուրախություն ունենալն է և, որպեսզի կարողանանք Աստծո որդիներն ու դուստրերը դառնալ բառի լրիվ իմաստով, որպեսզի լինենք Աստծո ժառանգներ և ժառանգակիցներ Հիսուս Քրիստոսի հետ [տե՛ս Հռովմայեցիս Ը.14–17], լինենք թագավորներ և քահանաներ Աստծո համար, ժառանգենք փառք, տիրապետություն, վեհացում, գահեր և ամեն զորություն ու հատկանիշ, որ զարգացրել և ձեռք է բերել մեր Երկնային Հայրը։ Սա է երկրի վրա մեր լինելու նպատակը։ Որպեսզի հասնենք այս վեհացած վիճակին, անհրաժեշտ է, որ անցնենք այս մահկանացու կյանքը կամ փորձնական ժամանակահատվածը, որով, մեր ավագ եղբոր Հիսուսի օգնությամբ, մենք կարող ենք ապացուցել մեր արժանիությունը։[9]

Մեր գոյության նպատակն է՝ կատարել Հոր կամքը, ինչպես երկնքում է, արդարություն գործել երկրի վրա, հպատակեցնել և ոտքի տակ գցել ամբարշտությունը, հաղթել մեղքին և մեր հոգիների հակառակորդին, բարձրանալ խեղճ, ընկած մարդկության անկատարություններից ու թուլություններից վեր, Ամենազոր Աստծո ոգեշնչմամբ ու նրա հայտնած զորությամբ, և այդպիսով երկրի վրա իսկապես դառնալ սրբեր և Տիրոջ ծառաներ։[10]

Մենք բոլորս մահանալու ենք։ Բայց արդյո՞ք դա է մեր գոյության վերջը։ Եթե մենք գոյություն ենք ունեցել մինչև այստեղ գալը, մենք անշուշտ պետք է շարունակենք այդ գոյությունը, երբ հեռանանք այստեղից։ Հոգին կշարունակի գոյություն ունենալ, ինչպես նախկինում, լրացուցիչ արտոնություններով, որոնք ձեռք են բերվել այդ փորձնական ժամանակով անցնելիս։ Շատ կարևոր է, որ մենք երկիր գանք և խորաններ հագնենք, քանի որ եթե չունենանք խորաններ, մենք չենք լինի Աստծո կամ Հիսուս Քրիստոսի նման։ . . . Մեզ վիճակված է գերեզմանից դուրս գալ, ինչպես Հիսուսը, և ձեռք բերել անմահ մարմին, ինչպես նա, այսինքն՝ որպեսզի մեր խորանները անմահ դառնան, ինչպես նրանը դարձավ անմահ, որպեսզի հոգին ու մարմինը միանան իրար և դառնան մեկ կենդանի էություն, անբաժանելի, անանջատելի, հավերժական։[11]

Ես անհամբեր սպասում եմ այն պահին, երբ կանցնեմ գոյության այս փուլից դեպի այնտեղ, որտեղ ինձ կթույլատրվի ավելի

լիարժեքորեն վայելել ամեն մի պարգևը և օրհնությունը, որը ինձ երջանկություն է բերել այս կյանքում, ամեն բան: Ես չեմ հավատում, որ կա մի բան, որը նախատեսված է եղել կամ նպատակ է ունեցել ինձ ուրախություն կամ երջանկություն պարգևել և որից ես կզրկվեմ այս կյանքից հետո, միայն եթե շարունակեմ հավատարիմ մնալ, այլապես իմ ուրախությունը չի կարող լիարժեք լինել: . . . Ես ի նկատի ունեմ երջանկությունը, որը զգում ես, երբ ձգտում ես կատարել Աստծո կամքը երկրի վրա, ինչպես որ այն երկնքում է: Մենք ակնկալում ենք, որ մեր կանայք և ամուսինները մեզ հետ կլինեն հավերժության մեջ: Մենք ակնկալում ենք, որ մեր զավակները հավերժության մեջ կընդունեն մեզ ինչպես իրենց հայրեր և մայրեր: Ես ակնկալում եմ սա: Ես ուրիշ ոչինչ չեմ փնտրում: Առանց դրա, ես չեմ կարող երջանիկ լինել:[12]

Ավետարանի սկզբունքները, որոնք Տերը հայտնել է այս օրերին, կառաջնորդեն մեզ դեպի հավերժական կյանք: Դրանք այն մասին են, թե ինչպիսին կլինենք հետագայում, ինչի համար ենք մենք ստեղծվել, ինչի համար է երկիրն արարվել: Այստեղ մեր գտնվելու իմաստը կայանում է նրանում, որ կարողանանք հաղթահարել ամեն մի անմտություն և պատրաստվենք գալիք հավերժական կյանքին: . . .

Ուրեմն, եկեք հավատարիմ և խոնարհ լինենք, եկեք ապրենք ըստ Քրիստոսի ավետարանի, մի կողմ թողնենք անմտությունները, մեղքերը և մարմնական թուլությունները, և հարենք Աստծուն ու նրա ճշմարտությանը՝ նվիրված սրտով և վճռականությամբ լի պատերազմելու հավատքի բարի պատերազմը և հաստատակամորեն շարունակելու մինչև վերջ:[13]

Մեր գոյության գլխավոր նպատակներից մեկն է՝ համապատասխանել Հիսուս Քրիստոսի պատկերին ու նմանությանը:

Ես հավատում եմ, որ մեր Փրկիչը միշտ կենդանի օրինակ է բոլոր մարմինների համար: . . . Մեզ պատվիրվել է կատարել այն գործերը, որոնք նա կատարեց: Մեզ պատվիրվել է հետևել նրան, ինչպես Նա հետևեց Իր Գլխին, որպեսզի մենք էլ կարողանանք լինել այնտեղ, որտեղ Ինքն է, և լինելով նրա հետ, լինենք նրա նման:[14]

Կարևոր չէ, թե որքան կապրենք, այլ որքան լավ կկարողանանք սերտել կյանքի դասը և կատարել Աստծո և միմյանց հանդեպ մեր պարտականություններն ու պարտավորությունները:

Մեր գոյության հիմնական նպատակներից մեկն այն է, որ կարողանանք համապատասխանել պատկերին ու նմանությանը Նրա, որը մարմնի մեջ ապրեց անթերի՝ անարատ, մաքուր ու անբիծ կյանք: Քրիստոսը եկավ ոչ միայն քավելու աշխարհի մեղքերը, այլ օրինակ հանդիսանալու բոլոր մարդկանց համար և հաստատելու Աստվածային կատարելության, Աստծո օրենքի և Հորը հնազանդվելու չափանիշը:[15]

Ոչ մի վարդապետություն այնքան կատարյալ չի եղել, որքան Հիսուսի վարդապետությունը: . . . Նա հայտնել է մեզ փրկության ճանապարհը՝ սկզբից և այս կյանքի բոլոր ոլորապտույտների միջով մինչև երբևէ չվերջացող վեհացում ու փառք՝ իր արքայությունում և նոր կյանք՝ այնտեղ: . . .

Իրոք, երջանիկ է այն մարդը, ով կարող է ստանալ այս հոգեպարար վկայությունը, հանգիստ լինել և միայն Հիսուս Քրիստոսի վարդապետությունների միջոցով փնտրել դեպի խաղաղություն տանող ճանապարհը: Նրա ավետարանն ուսուցանում է մեզ՝ սիրել մեր մերձավորներին, վարվել մարդկանց հետ այնպես, ինչպես որ կամենում ենք մեզ հետ վարվեն, լինենք արդար, ողորմած, ներողամիտ և կատարենք ամեն լավ գործ, որը կփառավորի մարդու հոգին: . . .

. . . «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ», [Մատթէոս ԺԱ.28] այսպես է կանչում նա մարդկանց բոլոր որդիներին ու դուստրերին:[16]

Քրիստոսը մեծ օրինակ է ողջ մարդկության համար, և ես հավատում եմ՝ որքանով կանխորոշված էր, որ մարդկությունը նմանվի նրան, նույնքանով էլ կանխորոշված էր, որ նա պետք է դառնար մարդու Քավիչը: . . . Մենք . . . Աստծո կազմվածքով ենք ֆիզիկապես և կարող ենք նմանվել նրան հոգեպես, և Նրա պես ունենալ գիտելիք, բանականություն, իմաստություն և զորություն:

Մեր այս աշխարհ գալու մեծ նպատակն այն է, որ կարողանանք դառնալ Քրիստոսի պես, քանի որ եթե մենք նրա նման չենք, ապա չենք կարող դառնալ Աստծո որդիներ և Քրիստոսի հետ ժառանգակիցներ:[17]

Եկեք հետևենք Աստծո Որդուն: Նրան դարձնենք մեզ համար օրինակ և մեզ առաջնորդ: Նմանվենք նրան: Կատարենք նրա գործը: Նմանվենք նրան այնքանով, որքանով կների մեր ուժը՝ նմանվել մեկին, որը կատարյալ էր և առանց մեղքի:[18]

Մենք ունենք հավերժական կյանքի հույս միայն Քրիստոսի և Նրա ավետարանին հնազանդվելու միջոցով։

Չկա ոչ մի անուն՝ տրված երկնքի տակ, որով մարդ կարողանա փրկվել Աստծո Արքայությունում։[19]

Մարդը, որը անցնում է այս փորձնական շրջանը և մնում է հավատարիմ՝ Քրիստոսի արյունով փրկագնված լինելով մեղքից, ավետարանի արարողությունների միջոցով և ձեռք է բերում վեհացում Աստծո արքայության մեջ, ոչ թե ցածր, այլ բարձր է հրեշտակներից։[20]

Մենք մտել ենք այդ նոր և հավերժական ուխտի պարտավորության մեջ՝ համաձայնվելով, որ կհնազանդվենք Աստծո պատվիրաններին բոլոր բաներում, ինչ էլ որ նա պատվիրի մեզ։ Դա հավիտենական ուխտ է նույնիսկ մինչև մեր օրերի վերջը։ . . . Մենք երբեք չենք տեսնի այնպիսի օր ժամանակի կամ հավերժության մեջ, երբ մեր՝ որպես նրա զավակների համար, չլինի ինչպես անհրաժեշտություն և հաճույք, այնպես էլ պարտականություն՝ հնազանդվելու Տիրոջ բոլոր պատվիրաններին հավերժության անվերջ դարերի ընթացքում։ Այդ սկզբունքով է, որ մենք կապ ենք պահում Աստծո հետ և ներդաշնակության մեջ ենք մնում նրա նպատակների հետ։ Միայն այս ձևով մենք կարող ենք ավարտել մեր առաքելությունը և ձեռք բերել մեր թագը և հավերժական կյանքի պարգևը, որն Աստծո մեծագույն պարգևն է։ Կարո՞ղ եք պատկերացնել մեկ այլ ճանապարհ։[21]

Միայն Աստծո նշած ճանապարհով կլինի փրկություն։ Հավիտենական կյանքի հույս կլինի միայն հնազանդվելով օրենքին, որը կյանքի Հայրն է սահմանել. «որի մեջ բնավ փոփոխում կամ դարձուածքի շուք չկա» [Հակոբոս Ա.17], և չկա մեկ այլ ճանապարհ, որով մենք կարող ենք ձեռք բերել այդ լույսն ու վեհացումը։ Այդ հարցերը ինձ մոտ կասկած չեն հարուցում. ես գիտեմ, որ դրանք ճշմարիտ են։[22]

Ամեն մի օրհնություն, արտոնություն, փառք կամ վեհացում ձեռք է բերվում միայն օրենքին հնազանդվելու շնորհիվ, որով այն որոշվում է։ Եթե մենք պահենք օրենքը, ապա վարձք կստանանք, սակայն մենք չենք կարող ստանալ այն ոչ մի այլ հիմքով։[23]

Նույնիսկ Քրիստոսն ինքը սկզբում կատարյալ չէր. նա սկզբից չստացավ լրիվությունը, այլ ստացավ շնորհ շնորհի վրա, և նա շարունակեց ստանալ ավելի ու ավելի շատ, մինչև որ ստացավ լրի-

վությունը [տես ՎԵՈՒ 93.11–13]: Արդյո՞ք դա այդպես չպետք է լինի մարդկանց զավակների հետ: Արդո՞ք որևէ մեկը կատարյալ է: Արդյո՞ք որևէ մեկը ստացել է լրիվությունն անմիջապես: Հասե՞լ ենք արդյոք մենք այն կետին, երբ կարող ենք ստանալ Աստծո, նրա փառքի և նրա բանականության լրիվությունը: Ոչ, և եթե Հիսուսը՝ Աստծո Որդին, Հայրը Երկնքի և երկրի, որտեղ մենք ապրում ենք, սկզբից չստացավ լրիվությունը, այլ զորացրեց հավատը, ավելացրեց գիտելիքը, հասկացողությունը և շնորհը, մինչև որ ստացավ լրիվությունը, արդյոք հնարավո՞ր չէ, որ բոլոր մարդիկ, ովքեր ծնվել են կանանցից, ստանան քիչ-քիչ, տող առ տող, ցուցում առ ցուցում, մինչև որ կստանան ամբողջությունը, ինչպես նա ստացավ ամբողջությունը, և վեհացում կստանան նրա հետ Հոր ներկայության մեջ:[24]

Ես ապրում եմ իմ փրկության համար այժմ և այսուհետև. իմ անձնական փրկությունից հետո գալիս է իմ երեխաների, նրանց սիրելիների և թանկագին մայրերի փրկությունը: Այն ամենը, ինչ կարող եմ անել այս աշխարհում ապահովելու համար այս փառահեղ ավարտը, չի կարող կոչվել զոհաբերություն: Դա սիրո գործ է, նպատակ՝ հավերժական կյանք և ուրախության լիություն ձեռք բերելու համար: «Նա, ով ունի հավերժական կյանք, հարուստ է» [տես ՎԵՈՒ 6.7]:[25]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞վ է փրկության ծրագրի հեղինակը: Ինչպե՞ս կարող է այս գիտելիքը օգնել մեզ մեր մահկանացու կյանքի ընթացքում:
- Որո՞նք են այս աշխարհում մեր կյանքի նպատակները: Ինչպե՞ս է ձեր կյանքն արտացոլում այդ գիտելիքը:
- Ինչո՞ւ է այդ նույն ծրագիրը Տիրոջ կողմից հայտնվում բոլոր ժամանակաշրջաններում: Ինչպե՞ս է ավետարանի ծրագիրը գործում մեր փրկության համար «ոչ միայն գալիք աշխարհում, այլ մեր ներկայիս կյանքում»:
- Ինչո՞ւ էր անհրաժեշտ մեզանից յուրաքանչյուրիս համար մարմին ստանալը: (Տես նաև ՎԵՈՒ 93.33–34:) Ինչպե՞ս կարող ենք օգտագործել մեր մարմինը Աստծո կամքը կատարելու համար:
- Ինչո՞ւ ենք ասում, որ Փրկիչը մեր «մեծ օրինակն է»: Ի՞նչ պետք է մենք կատարենք, որպեսզի համապատասխանենք Քրիստոսի «պատկերին ու նմանությանը» և ի վերջո դառնանք Նրա պես:

- Ինչո՞ւ Աստծո պատվիրանները պահելը անհրաժեշտ է ժամանակի և հավերժության համար: Ինչպե՞ս կարող է Տիրոջը հնազանդվելը լինել «ինչպես հաճույք, այնպես էլ պարտականություն»:
- Ի՞նչ է նշանակում ստանալ «շնորհ շնորհի վրա» (տես նաև ՎԵՐ 93.12:) Ինչպե՞ս ենք դուք աճում Փրկչի պես «քիչ-քիչ, տող առ տող, ցուցում առ ցուցում»:
- Ինչո՞ւ ոչինչ չի կարելի զոհաբերություն կոչել, եթե այն կատարվում է մեր անձնական կամ ուրիշների փրկության համար:

Հղումներ

1. Joseph F. Smith's diary, 13 Nov. 1874, quoted in Francis M. Gibbons, *Joseph F. Smith: Patriarch and Preacher, Prophet of God* (1984), 98.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 11.
3. *Gospel Doctrine,* 6.
4. *Gospel Doctrine,* 21–22.
5. *Gospel Doctrine,* 13.
6. *Gospel Doctrine,* 11.
7. *Gospel Doctrine,* 72–73.
8. In Conference Report, Oct. 1909, 3.
9. *Gospel Doctrine,* 439.
10. *Gospel Doctrine,* 249.
11. *Gospel Doctrine,* 32–33.
12. *Gospel Doctrine,* 65.
13. *Gospel Doctrine,* 85.
14. *Gospel Doctrine,* 13.
15. *Gospel Doctrine,* 270.
16. *Gospel Doctrine,* 127–28.
17. *Gospel Doctrine,* 18.
18. *Gospel Doctrine,* 180.
19. *Gospel Doctrine,* 3.
20. *Gospel Doctrine,* 18.
21. *Gospel Doctrine,* 210.
22. *Gospel Doctrine,* 503.
23. *Gospel Doctrine,* 441.
24. *Gospel Doctrine,* 68.
25. Joseph F. Smith to one of his sons, 1907, quoted in *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 454.

Մաքրաբարոյություն և մաքրություն

Տերը պատվիրում է մեզ լինել մաքուր և պատվել ամուսնական ուխտի սրբությունը:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը տխրել էր, երբ որպես Եվրոպական Միսիայի նախագահ 1875թ. ստիպված էր ազատել իր կոչումից մի միսիոների, որը խախտել էր մաքրաբարոյության օրենքը: Խորհելով այդ միսիոների ունեցած զղջման զգացմունքի և սրտի ցավի մասին նա գրել է. «Մարդն այսպես կարող է պատվով ու հավատով գրեթե ավարտել միսիան կամ ապրել կյանքը, և վերջին պահին, այսպես ասած, մեկ գործողությամբ կամ հանցանքով, անմտությամբ կամ սխալմամբ, տապալել և կործանել այդ ամենը մեկ վայրկյանում, կյանքի բաժակում եղած քաղցրությունը վերածելով լեղու և դառնության»:

Նախագահ Սմիթն այնուհետև շարունակել է խորհել, թե որքան երախտապարտ է ինքը Տիրոջ պաշտպանող ձեռքի համար, որն օգնում է իրեն հավատարիմ մնալ իր ուխտերին: «Օ՜, որքան երախտապարտ եմ իմ Աստծուն Իր պաշտպանող, հսկող հոգածության համար, . . . որը պաշտպանում է ինձ աշխարհի մահացու մեղքերից և բյուրավոր անգամներ իմ իսկ թուլություններից ու սխալ գործելու հակումներից»: Նա լի էր վճռականությամբ լինել այնպիսի մարդ, որը կարող է «նայել իր ընկերների երեսին և Աստծո առաջ մաքուր խղճով գլուխը բարձր կանգնել՝ ճշմարտության ազնիվ հպարտությամբ, բարոյապես և ֆիզիկապես մաքուր»: Նա ուրախ էր, որ ապրել է իր ընտանիքի «մաքուր, անարատ սիրո» մեջ և ասել է. «Ես ոչ մի դեպքում չեմ չարաշահի նրանց սերն ու վստահությունը»:[1]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մաքրաբարոյությունը ամրապնդում և զորացնում է երկրի վրա ապրող մարդկանց:

Մենք հավատում ենք, որ Աստված ապրում է, և որ նա է մահացածների և կենդանիների դատավորը: Մենք հավատում ենք, որ նրա աչքն աշխարհի վրա է, և որ նա հետևում է այս աշխարհի վրա ապրող ստորություններ, սխալներ գործող և թուլություններ ունեցող իր զավակներին: Մենք հավատում ենք, որ այստեղ ենք նրա նախագծով . . . որ այստեղ ենք իրականացնելու ճակատագիրը, և ոչ երկրային կյանքի տենչանքների քմայքներն ու հաճույքները:[2]

Անձնական մաքրությունն ու պատշաճ մտքերը . . . բոլոր պատշաճ գործերի հիմքն են: Ես ցանկանում եմ, որ բոլոր երիտասարդները գնահատեին նման կյանք վարելու և իրենց երիտասարդության օրերը Տիրոջը ծառայելուն նվիրելու արժեքը: Բնական է, որ երիտասարդության տարիներին բռնած նման ուղուն հետևում է աճը, զարգացումը, առաջընթացը, ինքնահարգանքը, մարդկանց գնահատելն ու նրանցով հիանալը: Փրկիչն ապշեցուցիչ օրինակ է հանդիսացել այս առումով և դեռ մանկուց իր Հոր գործն էր կատարում: . . . Սամուել մարգարեն այնպես էր պատրաստվել մաքուր, արժանապատվությամբ լի մանկությամբ, որ լիովին համահունչ էր Աստծո հուշումներին:[3]

Թվում է, գոյություն ունեն մարդկային գիտակցության համար անըմբռնելի պատճառներ, թե ինչու է մաքրաբարոյությունը ուժ ու զորություն տալիս երկրի վրա ապրող մարդկանց, և դա այդպես է:[4]

Մենք հավատում ենք տղամարդկանց և կանանց համար բարոյականության մեկ չափանիշին: Եթե կյանքի մաքրությունն անտեսվի, մյուս բոլոր վտանգները գետերի ջրերի պես կհոսեն մեզ վրա, երբ շլյուզները բացվում են:[5]

Մենք ցանկանում ենք սրբազան եռանդով նշել սեռական մեղքի նողկալիությունը: Թեև դրանք հաճախ են թերագնահատվում նրանց կողմից, ովքեր չգիտեն Աստծո կամքը, սակայն դա զզվելի է Նրա աչքում, և եթե մենք ցանկանում ենք մնալ Նրա արտոնյալ ժողովուրդը, դրանցից պետք է հեռու մնալ, ինչպես դժոխքի դարբասներից: Այդ մեղքերի կործանարար հետևանքներն այնքան ակնհայտ են արատների, հանցանքների, թշվառության և հիվանդությունների առումով, որ թվում է բոլորը,

երիտասարդ, թե ծեր, պետք է հասկանան և զգան դա։ Դրանք կործանում են աշխարհը։ Եթե մենք ցանկանում ենք պաշտպանվել, ապա պետք է գարշենք, հեռու մնանք դրանցից, փոքրագույն չափով իսկ թույլ չտանք, որ դրանք մտնեն մեր կյանք, քանզի դրանք թուլացնում և ջլատում են, հոգեպես սպանում են մարդուն, դարձնում են նրան ոչ պիտանի արդար մարդկանց ընկերակցությանն ու Աստծո ներկայությանը։[6]

Մենք գտնում ենք, որ սեռական մեղքը անձնական հանցանքների շարքում երկրորդ տեղն է գրավում անմեղ արյուն թափելուց հետո։ . . . Մենք հայտարարում ենք, ինչպես Տիրոջ խոսքն է ասում. «Շնություն մի անիր»։ [Ելից Ի.14։] «Նա, ով նայում է մի կնոջ վրա ցանկանալով նրան, կամ, եթե մարդիկ շնություն գործեն իրենց սրտում, նրանք չեն ունենա Հոգին, այլ կուրանան հավատքը»։ [տես ՎԵՈՒ 63.16։][7]

Մարմնական շատ հիվանդությունների նման, սեռական զանցանքը իր ետևից բերում է մի շարք այլ չարիքներ։ Ինչպես հարբեցողության ֆիզիկական հետևանքներն են հանգեցնում հյուսվածքների քայքայման և կենսական ֆունկցիաների խանգարման, այդպիսով մարմինը դարձնելով զգայուն ցանկացած տկարության համար, որի զոհը կարող է այն դառնալ և միևնույն ժամանակ անգամ ամենացածր աստիճանի հասցնելով դիմադրողականությունը, այնպես էլ անառակությունն է մարմինը ենթարկում տարբեր տեսակի հոգևոր ախտերի, և զրկում նրան, թե դիմադրողականությունից, և թե կազդուրվելու կարողությունից։ Քրիստոսի ժամանակներում շնացող սերունդը խուլ էր ճշմարտության ձայնի հանդեպ և չնայած իրենց մտքի և սրտի հիվանդագին վիճակին, նշաններ էին փնտրում և անիմաստ առակները գերադասում էին փրկության ուղերձից։ [տե՛ս Մատթէոս ԺԶ.4]։[8]

Ավելին, անառակությունը ոչ միայն պատժի է ենթարկում նրան, ով զանցանք է կատարում, այլ անբեկանելի պատիժ է բերում երրորդ և չորրորդ սերնդի գլխին, խորտակելով ոչ միայն մեղանչողին, այլ շատերին, որոնց հետ նա ուղղակի առնչություն է ունեցել, որի հետևանքով քայքայվում են ընտանեկան կապերը, կոտրվում են ծնողների սրտերը և առաջ է գալիս վշտի սև հոսանք, որը կարող է կործանել նրանց կյանքը։[9]

Մաքրաբարոյության օրենքը կենսական նշանակություն ունի տղամարդկանց, կանանց և երեխաների համար։

Մաքրաբարոյության օրենքը ամենակենսական կարևորություն ունեցող օրենքն է, թե երեխաների, և թե տղամարդկանց ու կանանց համար։ Այն կենսական կարևորություն ունեցող սկզբունք է Աստծո զավակների համար՝ նրանց ողջ կյանքի ընթացքում՝ օրորոցից մինչև գերեզման։ Աստված սոսկալի պատիժներ է սահմանել մաքրաբարոյության, առաքինության, մաքրության վերաբերյալ Իր օրենքը զանց առնելու դեպքում։ Երբ Աստծո օրենքը ուժ կունենա մարդկանց մեջ, նրանք, ովքեր բացարձակապես մաքուր, անարատ և անբիծ չեն, թե տղամարդիկ և թե կանայք, կվտարվեն։ Մենք ակնկալում ենք, որ կանայք լինեն մաքուր, անբիծ ու անբասիր և նույնքան անհրաժեշտ և կարևոր է, որ տղամարդիկ լինեն մաքուր ու առաքինի, ինչպես կանայք։[10]

Հետաձգել Տիրոջը ծառայելը, մինչև որ երիտասարդության անմիտ արարքները կատարվեն, պարսավանքի է արժանի։ . . . Ավելի լավ է մարդը ուշ երես դարձնի չարիքից, քան շարունակի մեղքի մեջ մնալ իր կյանքի ողջ ընթացքում, սակայն . . . անմտություններից և երիտասարդության տարիների մեղքերից կյանքում ուշ ապաշխարելիս ներկա է զղջումն ու սրտի ցավը։[11]

Ցավալի փաստ է, որ սեռական մեղսագործության առումով հասարակության մեջ շարունակվում է պահպանվել մեծ խստություն կանանց հանդեպ, քան տղամարդկանց։ Ներման ոչ մի նշույլ, էլ չենք խոսում արդարացման մասին, չի կարելի գտնել նման անպատիվ և ստոր խտրականության համար։ . . .

Քանի դեռ կինը մեղանչում է, նա անպայմանորեն կտառապի, քանի որ հատուցումն անխուսափելի է, լինի դա անհապաղ, թե հետաձգված։ Ու եթե տղամարդու անարդարության հետևանքով նրա մեղսագործությունների համար պետք է պատասխան տա կինը, ապա տղամարդը շատ ավելի է մեղավոր։ Եվ տղամարդը մեծապես պատասխանատու է անպարկեշտ ու անառակ մեղքերի համար, որի ծանրությունը շատ հաճախ ընկնում է զանցանքի մեջ ավելի թույլ մասնակցի վրա . . .

Մենք առանց վերապահության կամ առանց պայմանի ընդունում ենք Աստվածության հաստատումը՝ Նեփիացի հին մարգարեի կողմից ասված արտահայտությամբ. «Քանզի ես՝ Տեր Աստված, հիանում եմ կանանց մաքրաբարոյությամբ։ Եվ պոռնկությունները պղծություն են իմ առաջ. այսպես է ասում Զորաց Տերը»։ (Հակոբ 2.28։)[12]

Մենք մեր ձայնն ենք բարձրացնում մարմնավաճառության և անբարոյականության բոլոր ձևերի դեմ: Մենք այստեղ չենք, որ ինչ-որ տեսակի անբարոյականությամբ զբաղվենք: Նախ և առաջ, սեռական անբարոյականությունը ամենանողկալին է Աստծո աչքում: . . . Հետևաբար, մենք մեր ձայնն ենք բարձրացնում սեռական անբարոյականության և ամեն տեսակի անպարկեշտության դեմ:[13]

Մեր ամուսնական երդումներն ամենասրբազանն են:

Սեռերի օրինական միությունը կարգված է Աստծո կողմից, ոչ միայն որպես լոկ ցեղի շարունակության միջոց, այլ մարդկային բնության ավելի բարձր ընդունակությունների և ազնվական գծերի զարգացման համար, որը կարող է ապահովվել միայն տղամարդու և կնոջ սիրով ոգեշնչված միությամբ: Սուրբ Գրքում պարզորոշ խոսվում է Աստվածային այդ նպատակի և սեռերին վերաբերող համապատասխան պատվիրանի մասին: Լավ չէ որ մարդը մենակ լինի. հետևաբար սահմանվել է, որ «մարդը կթողէ իր հայրը և իր մայրը, և կհարի իր կնոջը. և մեկ մարմին կլինին»: [Տե՛ս Ծննդոց Բ. 18, 24:]

Ուսմունքն այն մասին, որ ամուսնությունը պատվելի է, այնքան ճշմարիտ է այսօր, որքան այն ժամանակ, երբ արտասանվեց հին Առաքյալի կողմից [տե՛ս Եբրայեցիս ԺԳ.4]: . . .

Ամուսնության շրջանակներում սեռական միությունն օրինական է, և եթե դրանում ներգրավվում են ճիշտ մտադրությամբ, ապա այն պատվարժան է և սրբագործող: *Սակայն առանց ամուսնական կապերի սեռական հարաբերությունը ստոր մեղք է, պղծություն՝ Աստվածության աչքում:*[14]

Այսօր անօրինության հոսանքը ողողել է քաղաքակիրթ աշխարհը: Դրա ամենամեծ պատճառը՝ ամուսնությանը կարևորություն չտալն է: Մեծամասնության աչքում այն կորցրել է իր սրբազան լինելը: Լավագույն դեպքում դա քաղաքացիական պայմանագիր է, իսկ շատ հաճախ պատահականություն կամ քմահաճույք, կամ էլ կրքերը բավարարելու միջոց: Իսկ երբ այդ ուխտի սրբազանությունն անտեսվում է կամ տեսադաշտից կորում է, այդ դեպքում ամուսնական երդումներն անտեսելը, եթե նայենք մեծամասնության այժմյան բարոյական մակարդակով, ուղղակի չնչին բան է, անխոհեմ արարք:[15]

Ամուսնական երդմանն անհավատրիմ մնալը պատճառ է հանդիսանում շատ բաժանությունների համար, իր հետ բերելով շատ չարիքներ, որոնցից փոքրագույն չարիք չի կարելի համարել՝ թեև անմեղ, սակայն դժբախտ երեխաներին պատճառված ամոթն ու անպատվությունը: Շնության սոսկալի ազդեցությունները չեն կարող սահմանափակվել մեղանչող կողմերով: Լինի բացահայտ, թե մասամբ քողարկված՝ մեղսավոր քարտուղարուհուն մեղադրելով, այնուամենայնիվ դրա հետևանքները լի են չար ազդեցությամբ: Անմահ հոգիները, որոնք գալիս են երկիր, որպեսզի ապրեն մարմնի մեջ, իրավունք ունեն արժանիորեն ծնվելու այն ծնողներից, որոնք ազատ են սեռական չարիքի ապականությունից:[16]

Մաքրաբարոյության դեմ մեղքը խորանում է սրբազան ուխտերը խախտելու հետևանքով:

Մենք հավատում ենք, որ ինչպես որ տրված է օրենքը, այն մեկ է բոլոր Սրբերի համար: Սակայն անկասկած, երբ իրականում մաքրաբարոյության օրենքները խախտելու հետ միասին խախտվում են նաև ուխտերը, ապա կրկնակի զանցանքի համար պատիժը համապատասխանաբար կլինի ավելի մեծ և ավելի սոսկալի:[17]

Ասում են, կանաչ գույնի ավելի շատ երանգներ կան, քան մեկ այլ գույնի, մենք ևս այն կարծիքին ենք, որ մեր իմացած մեղքերից սեռական անպարկեշտ հարաբերությունների հետ կապված մեղքի շատ ավելի աստիճաններ և գնահատականներ կան: Մաքրաբարոյության դեմ մեղքերը բոլորն էլ ծանր զանցանքներ են, սակայն շատ դեպքերում սրբազան ուխտերը դրժելով այդ մեղքը շատ ավելի է ծանրանում, որին շատ հաճախ միանում է խաբեությունը, ահաբեկումը կամ բռնությունը:

Թեև այդ բոլոր մեղքերը պախարակման ու դատապարտման են արժանի, մենք ինքներս կարող ենք տեսնել միտումի և հետևանքի միջև տարբերությունը, երիտասարդ զույգի, որը նշանված լինելով, ոչ դիտավորյալ մեղանչում է, և այն մարդու, որը լինելով սուրբ վայրերում և սրբազան ուխտեր կնքած լինելով, խորամանկությամբ կամ էլ ուժով դավադրում է զրկել հարևանուհուն իր առաքինությունից, և իրականացնել իր գարշելի մտադրությունը:

Այդ սխալ արարքների միջև տարբերություն գոյություն ունի ոչ միայն միտումի, այլ նաև հետևանքների առումով . . . Այդ [մարդու

դեպքում, որը ուխտեր է կապել], աղետալի վիճակում են հայտնվում ուրիշները, ընտանիքներ են կործանվում, անմեղ մարդիկ են դժբախտանում, հասարակությունն է տուժում . . . այդ ամենի հետ միասին, չարիք է գործվում թե ապրողների և թե մահացածների հանդեպ, ինչպես նաև դեռևս չծնված էակների հանդեպ, իսկ մեղավորների ուժից վեր է ինչ-որ բան փոխելը կամ շտկելը:[18]

Ավետարանը հույս է տալիս նրանց, ովքեր լի են մաքուր լինելու վճռականությամբ:

Միայն անառակ և իսկապես ամբարիշտ մարդիկ են, որ չեն ձգտում մարքրության. նրանք չեն սիրում մաքրությունն ու ճշմարտությունը: Ես չգիտեմ հնարավոր է արդյոք, որ որևէ մեկի հոգին դառնա այնքան փչացած, որ կորցնի հարգանքն այն ամենի հանդեպ, ինչը մաքուր է ու բարոյական, լավ, ճշմարիտ ու աստվածային: Ես հավատում եմ, որ ամենաապականվածների և անբարոյականների սրտում դեռևս, համենայն դեպս երբեմն, մնում է այն աստվածության մի կայծ, որը դրվել է Աստծո բոլոր որդիների հոգիներում: Մարդիկ կարող են դառնալ այնքան ապականված, որ նրանց մեջ մնան այդ աստվածային ոգեշնչման լոկ առկայծումներ, որը ձգտում է տանել նրանց դեպի բարին և նրանց մեջ արթնացնում է սեր դեպի բարին: Սակայն ես չեմ հավատում, որ աշխարհի վրա կա մի հոգի, որը լիովին կորցրել է բարու, մաքրության և շիտակության ըմբռնումը և տեսնելիս չի հիանում դրանցով: Դժվար է պատկերացնել, որ մարդկային էակը կարող է դառնալ այնքան անբարոյական, որպեսզի լիովին կորցնի հնարավորության դեպքում ևս բարի ու մաքուր դառնալու իր ցանկությունը, սակայն շատ մարդիկ անձնատուր են եղել չարին և եկել են այն եզրակացության, որ իրենց համար այլևս ելք չկա: Քանի դեռ ապրում ենք, հույս կա, և քանի դեռ գոյություն ունի ապաշխարություն, ներվելու հնարավորություն կա:[19]

Հիսուս Քրիստոսի ավետարանը Աստվածային ձևով կարգված դարմանող միջոց է մարդկությանը կեղեքող չարիքներից, և հատկապես սեռական մեղքի սարսափելի հետևանքներից:[20]

Այդ ժամանակ մենք ասում ենք ձեզ. նրանք, ովքեր ապաշխարել են իրենց մեղքերից, ովքեր թաղվել են Քրիստոսի հետ մկրտության ժամանակ, ովքեր ջրի գերեզմանից դուրս են եկել դեպի նորոգված կյանք, ծնվել են ջրից և Հոգուց, և ովքեր դարձել են Հոր զավակները, Աստծո ժառանգները և ժառանգակիցները Հիսուս Քրիստոսի հետ, մենք ասում ենք ձեզ, եթե պահեք Աստծո

օրենքները և դադարեք չարիք գործելուց, անպարկեշտ, անբարոյական, անօրեն, անհավատարիմ լինելուց, և հավատաք Աստծուն, հավատաք ճշմարտությանը և ընդունեք այն, լինեք ազնիվ Աստծո և մարդու հանդեպ, այն ժամանակ դուք կհաստատվեք վերևում և Աստված կդնի ձեզ գլխավերևում, և այնքան հաստատ, որքան կպահեք այդ պատվիրանները: Ովքեր, որ կպահեն Աստծո պատվիրանները, լինեք դուք, թե ուրիշները, նրանք կբարձրանան և չեն ընկնի, կառաջնորդեն և չեն հետևի, կգնան վեր և ոչ թե՝ վար: Աստված կբարձրացնի և կմեծարի նրանց երկրի ազգերի առաջ, և նա իր հավանության կնիքը կդնի նրանց վրա՝ իրենը կոչելով նրանց: Սա է իմ վկայությունը ձեզ:[21]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞րն է Տիրոջ մաքրաբարոյության օրենքը: Ինչպե՞ս է մաքրաբարոյությունը «ամրապնդում և զորացնում» մարդկանց:
- Ինչպե՞ս կարող ենք «անձնական մաքրություն և պատշաճ մտքեր» սերմանել մեր մեջ: Ինչպե՞ս կարող է անձնական մաքրությունն օրհնություն լինել մեր, մեր ընտանիքների և աշխարհի համար:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է մաքրաբարոյության օրենքի խախտումը «անմեղ արյուն թափելուց հետո երկրորդ» տեղում համարվում (Տե՛ս նաև Ալմա 39.5:)
- Որո՞նք են «այլ չարիքները», որոնք իր հետ բերում է մաքրաբարոյության օրենքը խախտելը: Ինչպե՞ս է մաքրաբարոյության օրենքի խախտումը ազդում ոչ միայն զանցանք գործողների, այլ ուրիշ մարդկանց վրա:
- Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի «մեր ձայնը բարձրացնենք սեռական անբարոյականության և ամեն տեսակի անպարկեշտության դեմ»:
- Ինչպիսի՞ նպատակներ է հետապնդում «Աստծո կողմից . . . կարգված սեռերի օրինական միությունը»:
- Ինչո՞ւ է ամուսնական սրբությունը անտեսելը «ամենամեծ պատճառը» հանդիսանում, որպեսզի «անօրինության հոսանքը ողողի քաղաքակիրթ աշխարհը»:
- Ինչպե՞ս է մաքրաբարոյության օրենքը խախտելը «կրկնակի զանցանք» հանդիսանում նրանց համար, ովքեր սրբազան ուխտեր են կապել Աստծո հետ: Ինչպիսի՞ն են այդ կրկնակի զանցանքի հետևանքները:

- Ի՞նչ հույս է տալիս Հիսուս Քրիստոսի ավետարանը նրանց, ովքեր լի են մաքրվելու և մաքրաբարոյության օրենքը պահելու վճռականությամբ:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 450–51.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 312.
3. *Gospel Doctrine,* 334.
4. *Gospel Doctrine,* 274.
5. *Gospel Doctrine,* 313.
6. *Gospel Doctrine,* 275–76.
7. *Gospel Doctrine,* 310; paragraphing altered.
8. *Gospel Doctrine,* 309–10.
9. *Gospel Doctrine,* 335.
10. *Gospel Doctrine,* 273–74.
11. *Gospel Doctrine,* 335.
12. *Gospel Doctrine,* 309–10.
13. *Gospel Doctrine,* 312.
14. "Unchastity the Dominant Evil of the Age," *Improvement Era,* June 1917, 739.
15. *Gospel Doctrine,* 274.
16. *Gospel Doctrine,* 309.
17. *Gospel Doctrine,* 311.
18. *Gospel Doctrine,* 310–11.
19. *Gospel Doctrine,* 27–28.
20. "Unchastity the Dominant Evil of the Age," 743.
21. *Gospel Doctrine,* 312.

Խնայողությունը բարգավաճման հիմքն է

Մենք պետք է վճարենք մեր պարտքերը և խնայենք մեր միջոցները, որպեսզի ավելի լավ կարողանանք ծառայել Աստծո արքայությունում:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1918թ. Ջոզեֆ Սմիթը նամակ է գրել իր որդուն, որտեղ նա հիշում է իր երիտասարդության տարիների Սուրբ Ծննդյան օրերը, երբ նա միշտ «փող չուներ»: Ահա թե ինչ է նա պատմում իր վաղ ամուսնական կյանքից. «Այդ օրերին ես երբեք ոչ ոքի պարտք չեմ եղել, և *ստիպված* էի աշխատել: Ես չէի կարող անգործության մատնվել»: Նա պատմում էր, որ ինքը և իր ընտանիքը աշխատում էին. «Մեր ողջ ուժերը լարած քրտնաջան աշխատում էինք, որպեսզի կարողանայինք գոյատևել»: Նման պայմաններում էր, որ նա Սուրբ Ծննդից առաջ դուրս եկավ տնից իր երեխաների համար ինչ-որ հատուկ բան անելու նպատակով: Նա պատմում է. «Ես ցանկանում էի ինչ-որ բանով ուրախացնել նրանց, որպեսզի Սուրբ Ծնունդը տարբերվեր մյուս բոլոր օրերից, սակայն դա անելու համար ոչ մի ցենտ չունեի: Ես Մեյն փողոցով վեր ու վար արեցի, նայելով խանութների ցուցափեղկերին . . . իսկ հետո թաքնվելով մարդկանց հայացքներից, նստեցի ու մանկան պես լաց եղա, մինչև որ դուրս հորդող կսկիծս փարատեց սրտիս ցավը, և ես մի փոքր անց վերադարձա տուն, դատարկ գրպաններով, ինչպես որ դուրս էի եկել տնից, և խաղացի երեխաներիս հետ՝ լինելով երախտապարտ ու երջանիկ նրանց համար . . .

Այդ փորձություններից հետո, իմ ճանապարհն ավելի սահուն դարձավ: Ես սկսեցի բարելավել իմ վիճակը տքնաջան աշխատանքով, խիստ տնտեսվարությամբ, ինքնազսպմամբ, և Աստծո հանդեպ սիրով ես բարգավաճեցի»:[1]

Եպիսկոպոս Չարլզ Վ. Նիբլին, որը կողք-կողքի աշխատում էր Նախագահ Սմիթի հետ, պատմել է. «Նա միշտ զգույշ էր ծախսեր

կատարելիս . . . Նա ատում էր պարտքը, և ես չգիտեմ մեկին, որն այդքան արագորեն էր վճարում իր բոլոր պարտավորությունները՝ մինչև վերջին պենին . . . Նա վճռականորեն հակադրվում էր պարտքին, և ոչ մի դեպքում կամ հանգամանքներում Եկեղեցին չէր դնի պարտքի տակ: Ոչ էլ նա ինքը կընկներ պարտքի տակ՝ իր անձնական գործերում, և նա հաստատակամորեն հետևում էր հին նշանաբանին. «Անհապաղ վճարիր»:[2]

Նախագահ Սմիթը հատկանշում էր ավետարանի գործնական լինելը, երբ նա ուսուցանում էր. «Վերջին Օրերի Սրբերի հիմնական ուսմունքներից մեկը միշտ եղել է այն, որ կրոնը, որը չունի զորություն մարդկանց փրկելու աշխարհում և նրանց բարգավաճ ու երջանիկ դարձնելու այստեղ, չի կարող փրկել նրանց հոգևոր առումով, և վեհացում պարգևել գալիք կյանքում»:[3]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Խուսափիր պարտքից և դու ֆինանսապես ու հոգեպես ազատ կլինես:

Այսպիսով, ես անկեղծորեն հավատում եմ, որ մեր մեջ գոյություն ունեցող թշվառության հիմնական պատճառներից մեկն այն է, և ես հավատում եմ, որ դա վերաբերում է մեր երկրում ապրող բոլոր մարդկանց, որ մարդիկ ծախսում են իրենց հնարավորություններից շատ: Նրանք մեծ պարտքեր են անում, գրավ են դնում իրենց տունը, իրենց ֆերմաները և գրեթե այն ամենը, ինչ ունեն, որպեսզի ետ չմնան իրենց հարևաններից, մրցակցում են միմյանց հետ, թե ով ավելի լավ տեսք ունի և ով ավելի շատ վարկ վերցնելով իր բիզնեսն առաջ կտանի, որն այնքան մեծ տարածում է գտել աշխարհում: . . .

. . . Մեզանից շատերը պարտքերի մեջ են թաղվել . . . որպեսզի առնվազն իրենց հարևանի պես հագնվեն: Եթե մենք այդպես չվարվեինք, այլ ապրեինք մեր միջոցներով, ինչպես նաև մի փոքր խնայեինք սև օրվա համար, այսօր մենք կլինեինք ամենաանկախ ժողովուրդը այս մայրցամաքի վրա . . . Ինչ վերաբերվում է ինձ, ես կցանկանայի տեսնել . . . որ երբ էլ որ մենք մեկ դոլարին համարժեք ապրանք ենք գնում, դրա դիմաց վճարում ենք մեկ դոլարը կամ էլ մեկ դոլարին համարժեք մեկ այլ բան, որ մենք դա անում ենք առանց վնասելով տունը կամ գրավ դնելով ինչ-որ բան, որը կարող է վնաս պատճառել նաև մեր երեխաներին: Ամեն ոք, ով ապրում է վարկով, շղթայակապ է անում իրեն և իր ընտանիքը: . . .

Տնտեսական ինքնությունը խրախուսելու համար, պիոներ Սրբերը հիմնեցին այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք էին Zion's Cooperative Mercantile Institution (Սիոնի առևտրական կոոպերատիվ հաստատությունը):

Երբևէ տեսե՞լ եք որևէ մեկին, որն ընկել է պարտքերի տակ, գրավ է դրել իր գույքը, և իրեն այնքան ազատ, այնքան անկախ ու երջանիկ է զգացել, ինչպես այն մարդը, որն անմիջապես վճարել է իր ունեցածի դիմաց: Մենք պետք է ապրենք ըստ մեր միջոցների և դնենք հիմք, որի վրա կարող ենք կառուցել, և որի վրա կարող են մեր զավակները կառուցել, չվճարելով մեր կողմից արված պարտքերի տոկոսները: Ես լավ գիտակցում եմ, որ սա աշխարհի ֆինանսական ավետարանի քարոզ չէ: Ես ընդունում եմ, որ ինձ վտանգի եմ ենթարկում կոչվելու հնաոճ պահպանողական, հետադիմական և այլն: Բոլոր այս մակդիրները թափվում են այն մարդկանց գլխին, որոնք հանդգնում են մարդկանց խորհուրդ տալ իրենց միջոցներով ապրել: . . . Երբեմն մենք այնպիսի իրավիճակում ենք հայտնվում, որ անհրաժեշտ է պարտք անել: Եթե դա անհրաժեշտություն է, թող այդպես լինի . . . Սակայն ինձ ոչ ոք երբեք չի կարողացել համոզել, որ ներկա կամ ապագա սերնդի բարօրության համար անհրաժեշտ է, որ իմ զավակները կախվածության մեջ ընկնեն իմ գործողությունների պատճառով:[4]

Ինչպիսի՜ օրհնյալ վիճակ կստեղծվի Սիոնում, եթե յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ, թե երիտասարդ, և թե մեծահասակ, կարողանա հասկանալ, թե որքան վտանգավոր է պարտքի տակ ընկնելը: Իրականում, որքան լավ կլինի, եթե գրավի որոշ ծանրություն և դրան ուղեկցող ցավը զգա և հասկանա ամեն ոք, ով մտադիր է իր տունը և հողը գրավ դնել փողի դիմաց, որ կարողանա գիտակցել դրա պատճառած ստրկությունն ու սարսափը, և նախքան գործարք կատարելը գիտակցի դա այնքան պարզորոշ, որքան խորը նա հաստատապես կզգա այդ գործարքը կատարելուց հետո:[5]

Բարգավաճման ժամանակ . . . Վերջին Օրերի Սրբերի համար հույժ կարևոր կլինի ազատվել պարտքերից: . . . Ես կասեի, այս առումով, որ իմ պարտավորությունները իմ եղբորը, հարևանին կամ գործընկերոջը վճարելու ամենալավ եղանակներից մեկը ինձ համար, նախ իմ պարտավորությունները Տիրոջը վճարելն է: Ես կարող եմ իմ պարտքերի մեծ մասը վճարել իմ հարևաններին, եթե ես պայման եմ կապել նրանց հետ, որ կվճարեմ միայն Տիրոջ հանդեպ իմ պարտավորությունները ազնվորեն կատարելուց հետո, ոչ թե անտեսելով վերջինս. և դուք կարող եք նույն կերպ վարվել: Եթե դուք ցանկանում եք բարգավաճել, և լինել ազատ մարդիկ ու ազատ ժողովուրդ, նախ ճշգրիտ կատարեք Աստծո հանդեպ ձեր պարտավորությունները, իսկ հետո միայն ձեր պարտավորությունները ձեր ընկերների հանդեպ:[6]

Հիմա է իսկական ժամանակը, որ բոլոր մարդիկ ուսումնասիրեն ճշմարիտ տնտեսագիտությունը, և սկսեն խնայել, ազատվել պարտքից և դառնալ ազատ ու անկախ ժողովուրդ։ . . . Եթե մենք որպես Վերջին Օրերի Սրբեր լոկ կատարենք մեր պարտավորությունը և մեր միջոցները խելամտորեն օգտագործենք, ապա պայմանները բարենպաստ կլինեն մեզ համար, մեր գործերը կօրհնվեն, հողը պտղաբեր կդառնա, և մենք առատ բերք կհավաքենք և կուրախանանք դրանով, քանզի Աստված բարեհաճությամբ կնայի Իր հավատարիմ զավակներին։ . . . Հիմա է իսկական ժամանակը նվազեցնել ծախսերը։ Հիմա է իսկական ժամանակը պակասեցնել շռայլ վատնումը և հրաժարվել որոշ աշխարհիկ հաճույքներից։ Ուրեմն, եկեք գթասիրտ լինենք։ Մի՛ մնողդրեք միմյանց։ . . . Մի՛ գնացեք ձեր ընկերոջ մոտ, որը ձեզ մի քանի ցենտ պարտք է և մի պահանջեք վերադարձնել ձեր պարտքը, իսկ եթե նա խնդրում է մի փոքր սպասել, մի զցեք նրան բանտ, եթե փոխաբերական ձևով խոսենք։ Հիշեք Փրկչի առակը այս թեմայով, և եղեք գթասիրտ ու ողորմած մենդ մյուսի հանդեպ [տես Մատթեոս ԺԸ.23–35]։[7]

Ձեր ունեցվածքը պարտքից ազատ պահեք։ Ձեր պարտքերից որքան հնարավոր է արագ ազատվեք, և կրկին պարտքեր մի արեք, քանզի դա է ուղին, որով Աստծո խոստումը կկատարվի իր Եկեղեցու ժողովրդի համար, ըստ որի նրանք կդառնան աշխարհի ամենահարուստ ժողովուրդը։ Սակայն սա չի պատահի, քանի դեռ դուք գրավ եք դնում ձեր տունն ու ձեր ագարակները, կամ պարտք եք վերցնում ձեր հնարավորությունից վեր, և այդպիսով, ձեր անունն ու պատիվը կվտանգվի, քանի որ դուք դուրս եք եկել ձեր հնարավորությունների սահմանից։[8]

Վերջին Օրերի Սրբերին հաճախ ենք զգուշացրել և լրջորեն հորդորել՝ վտանգի տակ չդնել իրենց տները, իրենց հետ միասին ֆինանսական գործարքների զոհասեղանին դնելով իրենց կանանց ու երեխաներին։ . . . Եթե Վերջին Օրերի Սրբերն ականջ դնեն խելամիտ հորդորներին ու անցյալից դասեր քաղեն, նրանք չեն նկատի հրապուրիչ գայթակղությունները, որոնք այժմ ամենուր են, և գրավ չեն դնի իրենց տները, իրենց ձեռնարկությունները, ջրանցքներն ու ագարակները, որպեսզի միջոցներ ձեռք բերեն ֆինանսական գործարքների մեջ մտնելու և հարստանալու համար . . .

Այստեղ տրված հորդորները հիմնականում ուղղված են նրանց, ովքեր տրամադրված են գրավ դնել իրենց տները ֆինանսական գործարքներ կատարելու նպատակով, ոչ թե նրանց,

ովքեր անհրաժեշտ կհամարեն շինարարական ընկերությունների միջոցով կամ այլ կերպ տան սեփականության իրավունք ձեռք բերել կանոնավոր վճարումներ կատարելով: Վերջինս կարող է նպաստել խնայողության սովորություններ ձեռք բերել, մինչդեռ ֆինանսական գործարքները շատ հաճախ շռայլորեն վատնելու ոգի են ձևավորում:[9]

Ցավոք կարող եմ ասել, որ կարծես թե շատերն այն աստիճան են հրապուրվել ֆինանսական գործարքներով, որ իրենց հոգին, թվում է, պարուրված է աշխարհիկի հանդեպ սիրով: . . . Երբ անհատներն իրենց շուրջն են հավաքում հարստությունները և կլանվում են միայն այդ հոգսով, որը բնականորեն փաթաթվում է իրենց, ապա նրանք հակվում են մոռանալու . . . Աստծուն, որից նրանք ամբողջովին կախված են՝ թե այն ժամանակ, երբ ունեն այդ հարստությունը, և թե այն ժամանակ, երբ գտնվում են ծայրահեղ աղքատության մեջ:[10]

Եթե այստեղ կան մարդիկ, ովքեր մտադիր են պարտքեր անել ֆինանսական գործարքների համար, . . . ես խորհուրդ կտայի չշտապել, աղոթել և խորը քննել դա, նախքան պարտավորություն կվերցնեն գումար պարտք անել: Այսինքն, եթե կարող եք պարտքեր մի՛ արեք: Որքան հնարավոր է շուտ վճարեք ձեր պարտքերը:[11]

Փողը մի բան է, որը մարդը պետք է կարողանա տնօրինել և իմաստուն ձևով օգտագործել, եթե նա ունի դա: Եթե նա չգիտի ինչպես օգտագործել փողը, այն կփախչի նրա գրպանից՝ արագ թևեր կառնի ու կփախչի:[12]

Ես կրկին հորդորում եմ Վերջին Օրերի Սրբերին նպատակ դնել և ջանասիրաբար աշխատել ազատվել պարտքից: Ազատվեք պարտքից և հեռու մնացեք պարտքից, այդպիսով դուք ազատ կլինեք և՛ ֆինանսապես, և՛ հոգեպես:[13]

Մենք պետք է Աստծուն սիրենք ավելի շատ, քան սիրում ենք փողն ու հաճույքներ փնտրելը:

Մարդը մի թուլություն ունի, և . . . դա լուրջ թուլություն է, ծառայել ինքն իրեն, բավարարել իր անձնական ցանկությունները, իրականացնել իր անձնական նպատակները, անկախ նրանից ինչպես այն կանդրադառնա ուրիշների վրա: Անկախ կործանիչ հետևանքներից, որոնք կարող են թափվել ուրիշների վրա, նա ձգտում է բավարարել իր փառասիրությունը, իր ցանկությունները, բարձրացնելով իրեն և իր ես-ի շահերն առաջ տանելով: Սա

մեր ժամանակների արատներից մեկն է: Դա այն թուլություններից է, որի պատճառով մարդը չի նմանվում Իր Վարդապետին, հեռանում է Աստծուց և ճշմարտությունից, և ինչ ցանկանում այն էլ անում է: Դա լավ չէ:[14]

Իմաստուն մարդը . . . ձգտում է հաճույք փնտրող կենդանի մահից հեռու մնալ: Նա կախման մեջ չի ընկնում կամ պարտք չի անում, որպեսզի ավտոմնքենա և այլ թանկարժեք անհրաժեշտ իրեր գնի, որպեսզի համընթաց գնա մոդայիկ հաճույք փնտրող բուռն տեմպին: . . .

Այս հաճույքի, զվարճության և համընթաց գնալու մրցակցության արդյունքում, որը միայն շատ հարուստները կարող են իրենց թույլ տալ, իսկ մյուսները չպետք է դա անեն, շատերը ստիպված են ներգրավվել ամեն տեսակի անօրինական մնքենայությունների մեջ, որպեսզի փող ձեռք բերեն իրենց այդ կանխատրամադրվածությունը բավարարելու համար: Այստեղից էլ գալիս է ֆինանսական անբարոյականության աճը: Միջոցներ ձեռք բերելու շատ անազնիվ եղանակներ են գործադրվում, փող ձեռք բերելու համար անգամ շատ հաճախ կիրառվում են ընկերներին ու հարևաններին խաբելն ու ստելը, որպեսզի գումար ունենան հաճույքների չափազանց մեծ ցանկությունը բավարարելու համար:[15]

Ես խղճում եմ հարուստ մարդուն, որը սիրում է իր փողերն ավելի շատ, քան Աստծուն: . . . Մի օր մենք կկշռվենք կշեռքով և հայտնի կդառնա՝ արդյո՞ք մենք աշխարհն ավելի շատ ենք սիրում, քան Աստծուն: . . . Տերն ասել է, որ հարուստը դժվար կմտնի երկնքի արքայությունը: Ոչ թե նրա համար, որ մարդը հարուստ է, քանզի Տերը ցանկանում է, որ մենք լինենք ամենահարուստ ժողովուրդը: Հետևաբար, ոչ մի հանցանք չկա հարուստ լինելու մեջ: Հանցանքը փող ունենալու մեջ չէ: Մենք հաճախ ենք լսում, թե ինչպես են ասում, որ «փողը ամեն չարիքի արմատն է»: Սակայն դա այդպես չէ: Սուրբ գրություններն այդպես չեն ասում: Նրանք ասում են, որ փող *սիրելն* է ամեն չարիքի արմատը [տես Ա Տիմոթեոս Զ.10]:[16]

Միակ իրական վտանգը, որ ես կարող եմ տեսնել Վերջին Օրերի Սրբերի ճանապարհին, դա այն է, ինչը գալիս է հարստություն ունենալու արդյունքում: Դա հպարտությունն ու փառամոլությունն է, իրենց ցանկություններով տարվելը և Աստծուն մոռանալը, նաև սրբազան պարտավորություններն ու պարտականություններն անտեսելը, որոնք մենք ունենք Նրա հանդեպ և միմյանց հանդեպ.

և այս ամենը երկրային օրհնությունների առատության պատճառով է, որոնք Նա բարեհաճությամբ շնորհել է մեզ: Ասում են, որ նեղության օրը մենք ձգտում ենք փնտրել Տիրոջը, իսկ բարգավաճման ժամանակ Նրան չենք հիշում: Ինձ թվում է, սրանում է կայանում այսօր մեզ սպառնացող ամենամեծ վտանգը:[17]

Ավելի օրհնության արժանի է, երբ մենք ենք մխիթարում և ուրախություն պատճառում մեր մերձավորներին, քան եթե նրանք են ծառայում մեզ: Սակայն հաշվի առնելով այն ոգին ու ազդեցությունը, որի ներքո ներկայումս գտնվում է աշխարհը, ապա սա համընդհանուր տեսակետ չէ: Աշխարհի մարդիկ գլուխ կոտրելով ընկած են այն բաների ետևից, որոնք, իրենց կարծիքով, հաճույք են պատճառում: Նրանց չի մտահոգում ինչ միջոցներով են հաճույք ստանում, քանի դեռ նրանք ստանում են այն: Ընդունված է, որ ոսկին կամ փողը այն միջոցներն են, որոնք նպաստում են նրանց հաճույք և ուրախություն պատճառելուն: Այնուամենայնիվ, մի քանի տարուց նրանք ետ կկանչվեն այս աշխարհից, երբ իրենց փայփայած հարստությունն ու այն ամենը, ինչի վրա նրանք դողում էին, կմնա ետևում: Նրանք չեն կարող իրենց հետ վերցնել իրենց ոսկին, քանի որ այն պատկանում է աշխարհին: Երբ նրանք վարագույրից այն կողմ անցնեն, այն, ինչ իրենց երջանկացրել էր, անհասանելի կլինի: Նրանց հաճույքի աղբյուրը կանհետանա . . .

Ի՞նչը կարող է այս աշխարհում այնքան ուրախություն կամ հաճույք պատճառել, որքան այն գիտելիքը, որ մեր մեղքերը ներված են, որ Աստված՝ մեր Երկնային Հայրն ընդունում է մեզ, որ մենք մեր մերձավորներից ոչ մեկին չենք վիրավորել, որ մենք ազատ ենք ամեն պարտականությունից կամ պարտավորությունից, որ մենք գերության մեջ չենք գտնվում ոչ աշխարհի, ոչ էլ մեր մերձավորների կողմից: Փողը չի կարող դա տալ: Աշխարհի հարստությունը չի կարող այդ հաճույքը պարգևել մարդուն:[18]

Եկեք իմաստուն լինենք մեր աշխարհիկ գործերում, որպեսզի ավելի լավ կարողանանք կառուցել Աստծո թագավորությունը:

Մի բանում ես վստահ եմ, որ մենք պետք է ձգտենք ծանոթանալ տնտեսական սկզբունքներին: Մենք պետք է օգտագործենք մեր ողջ իմաստությունը, դատողությունը և հասկացողությունը մեր աշխարհիկ, հոգևոր գործերում և հոգսերում . . . Մենք չափազանց եսասեր ենք: Չպետք է լինի «ամեն մարդ իր համար»,

սակայն մեզանից շատերը ագահ են։ Մենք ցանկանում ենք մեր սրտերում ունենալ այն ամենը, ինչ մեր հարևանը ունի, անկախ նրանից մենք դրա կարիքը ունենք, թե ոչ։ Որպեսզի լինենք մեր հարևանի նման, որպեսզի կարողանանք նրա հետ շփվել, և որպեսզի մեր երեխաները շփվեն նրա երեխաների հետ, մենք պետք է ունենանք նրա տան պես հիանալի տուն, նրա կահույքի պես թանկարժեք կահույք, . . . այնպիսի մեծ ճոխություններ թույլ տանք, ինչպես մեր հարևանը կարող է իրեն թույլ տալ։ Այս ամենը բացարձակ անմտություն է։ Դա սխալ է . . .

. . . Յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ, և հատկապես, յուրաքանչյուր երիտասարդ Իսրայելում, պետք է սովորի, որ իրենցից յուրաքանչյուրը պետք է փորձի աշխարհը մի փոքր ավելի լավը դարձնել իրենց ապրելու համար, եթե դա հնարավոր է։ Մենք բոլորս պետք է փորձենք ինչ-որ լավ բան անել։ Եթե ձգտենք դրան, ապա մեր կյանքը ինչ-որ բանի համար պետք է։ Աստված կօրհնի մեզ մեր աշխատանքում և ջանքերում, և եթե մենք համագործակցենք միմյանց հետ մեր աշխարհիկ գործերում և վարենք մեր գործերը ճիշտ սկզբունքների հիման վրա, աշխարհն ավելի լավը կլինի մեզ համար և մենք ավելի հարուստ կլինենք աշխարհում։ Մենք ավելի շատ միջոցներ կունենանք Աստծո արքայությունը կառուցելու համար, մենք ավելի շատ միջոցներ կունենանք աղքատներին հավաքելու, Սիոնը կառուցելու, Սրբերի և մեր բարօրության համար։[19]

Եկեք պահենք Աստծո պատվիրանները, խնայենք մեր միջոցները . . . վճարենք մեր պարտքերը, լինենք ազատ տղամարդիկ ու կանայք, և ոչ թե գերիներ, ինչպես մեզանից շատերն են այսօր։ Մեզանից շատերը պարտքի գերիներ են, և մեզ համար դժվար կլինի ազատվել դրանից, սակայն եթե հնարավորություն ունենք պատվով ազատվելու դրանից, եկեք մեր ողջ ջանքերն ուղղենք այդ նպատակին և անենք դա, որպեսզի երբ մեզ կանչեն միսիայում ծառայելու, կարողանանք ասել. «Այո, ես պատրաստ եմ և ցանկանում եմ գնալ», և ավելին՝ «Ես ոչ ոքի պարտք չեմ, և ես միջոցներ ունեմ՝ և միսիայի գնալու և իմ ընտանիքը ապահովելու համար»։[20]

Ես հավատում եմ, որ մեր գործն է՝ պատրաստվել սովի, ժանտախտի, փոթորիկների և երկրաշարժերի օրերի համար, և այն ժամանակի համար, երբ ծովը դուրս կգա իր սահմաններից։ Ինչպե՞ս պետք է մենք դա անենք։ . . . Ուսումնասիրելով ու իրագործելով ճշմարիտ տնտեսվարության սկզբունքները մեր կյանքում, և եղբայրության ու սիրո համակցությամբ, ըստ որի

յուրաքանչյուրը կօգնի իր եղբորը, և բոլորը միասնական կլինեն, այնպես որ ոչ ոք կարիքից չի նեղվի, եթե մյուսներն ի զորու են թեթևացնել նրա կարիքը: Իր ժողովրդին տված Տիրոջ խոստումներից ամենամեծը, ինչպես տրված է Վարդապետություն և Ուխտերում, դա այն է, որ նրանք կդառնան ժողովուրդներից ամենահարուստը [տես ՎԵՈՒ 38.39]: Ինչպե՞ս կարող է դա տեղի ունենալ, երբ ամեն օր մենք ծախսում ենք այն, ինչ վաստակում ենք, և մի փոքր էլ պարտք ենք վերցնում մեր հարևանից . . .

. . . Եկեք լինենք աշխատասեր ու տնտեսվար, խնայենք մեր միջոցները: Ոչ թե նրա համար, որ մեր հույսը դնենք մեր հարստության վրա, ոչ էլ այն դարձնենք մեր աստվածը. ապա ինչի՞ համար: Որպեսզի, երբ դժվար ժամանակները գան, կարողանանք բավարարել այդ ժամանակների կարիքները և կատարենք այն պարտավորությունները, որոնք դրված կլինեն Աստծո ժողովրդի վրա, որպեսզի իրականանան Ամենազորի նպատակները երկրի վրա:[21]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ պետք է անենք մենք, եթե ցանկանում ենք հոգեպես ու նյութապես բարգավաճել: Ինչպե՞ս կարող է ագահությունը կործանել բարգավաճումը:
- Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս, եթե խուսափում ենք պարտք անելուց: Ի՞նչ խնդիրներ կարող են ունենալ նրանք, ովքեր ոչ իմաստուն ձևով պարտքեր են կուտակում: Ինչպիսի՞ արդարացումներ են երբեմն գտնում մարդիկ ոչ իմաստուն ձևով պարտքեր կուտակելիս:
- Ի՞նչ կարող ենք անել «բարգավաճման ժամանակ»՝ պարտքերից ազատվելու համար: Որո՞նք են Տիրոջ հանդեպ մեր ֆինանսական պարտավորությունները: Ինչո՞ւ պետք է առաջինը դրանք կատարենք:
- Թեև ստիպված ես լինում տուն գնել «կանոնավոր վճարումներ» կատարելով, ինչպիսի նախազգուշացումների պետք է մենք հետևենք գրավների առումով: Ինչպե՞ս կարող է «շռայլորեն վատնելու ոգին» մղել այն բանին, որ մարդիկ կորստի մատնեն իրենց տունն ու ֆինանսական ապահովությունը: Ինչպե՞ս կարող ենք խուսափել դրանից:

- Ինչպե՞ս է նասիրությունը և հաճույք փնտրելը մեզ բաժանում Աստծուց: Որո՞նք են Աստծուց առավել փողը սիրելու վտանգները:
- Ինչպե՞ս կարող ենք նյութապես և հոգևոր առումով պատրաստվել «սովի օրվա համար»:
- Ինչպե՞ս կարող ենք մեր միջոցներն օգտագործել, որպեսզի «իրականանան Ամենազորի նպատակները»: Ինչպե՞ս կարող է նյութական պատրաստվածությունը մեզ օգուտ բերել:
- Ինչպե՞ս կարող ենք մեր երեխաներին սովորեցնել փողը իմաստուն ձևով տնօրինելու սկզբունքները:

Հղումներ

1. "Editor's Table: In Memoriam—Joseph Fielding Smith," *Improvement Era,* Jan. 1919, 266–67.
2. Charles W. Nibley, "Reminiscences," in *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 519.
3. "The Truth about Mormonism," *Out West: A Magazine of the Old Pacific and the New,* Sept. 1905, 242.
4. *Deseret Weekly,* 19 Aug. 1893, 282.
5. *Gospel Doctrine,* 307.
6. *Gospel Doctrine,* 259–60.
7. *Deseret Weekly,* 19 Aug. 1893, 283.
8. *Gospel Doctrine,* 299–300.
9. *Gospel Doctrine,* 306–7; paragraphing altered.
10. *Deseret News: Semi-Weekly,* 1 May 1883, 1.
11. In Conference Report, Oct. 1911, 128–29.
12. *Deseret News: Semi-Weekly,* 8 Aug. 1884, 1.
13. In Conference Report, Oct. 1903, 5.
14. *Deseret News: Semi-Weekly,* 21 Jan. 1896, 1.
15. *Gospel Doctrine,* 323–24.
16. *Deseret Weekly,* 19 Aug. 1893, 283.
17. *Deseret News: Semi-Weekly,* 1 May 1883, 1.
18. *Deseret News: Semi-Weekly,* 11 Mar. 1884, 1; paragraphing added.
19. *Deseret News: Semi-Weekly,* 8 Aug. 1884, 1.
20. *Deseret News: Semi-Weekly,* 20 Nov. 1894, 1.
21. *Deseret Weekly,* 19 Aug. 1893, 283.

Ամուսնու և կնոջ հավերժական միությունը

Տղամարդն ու կինը, ովքեր սուրբ քահանայության իշխանության ներքո կնքվել են հավերժության համար, կարող են վնահացում ձեռք բերել Աստծո սելեստիալ արքայությունում:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Որպես Նախագահ Զոն Թեյլորի Խորհրդական ծառայելիս Զոզեֆ Ֆ. Սմիթը ճամփորդեց Հավայան կղզիներ կնոջ Զուլինայի հետ, որը նրա խոսքերով՝ «ամուր էր, ինչպես պողպատը, հաստատուն էր, ինչպես բևեռային աստղը, հավատարիմ, ինչպես ժամանակը և ավելի լավը, քան ոսկին»:[1] Հավայան կղզիներում Նախագահ Սմիթը ծանր հիվանդացավ և Զուլինան խնամեց նրան, և նա ապաքինվեց: Մի քանի ամիս անց 1887թ. մարտին անհրաժեշտ էր, որպեսզի Զուլինան և երեխաները վերադառնան մայրցամաք, իսկ Զոզեֆ Ֆ.-ը մնաց կղզիներում:

Մարտի 15-ին նա գրել է իր օրագրում. «Շոգենավը արձակեց կառանները ժամը 12:00-ին և ուղիղ 12:15 այն սկսեց շարժվել նավահանգստից: Ես վերջին անգամ նայեցի իմ սիրելիների հեռացող պատկերներին, մինչև որ Աստված իր ողորմածությամբ կրկին թույլ կտա մեզ հանդիպել: Երբ նավը հեռացավ տեսադաշտից, ես շտապեցի [դեպի այն տեղը, որտեղից ավելի լավ կարող էի տեսնել] . . . որպեսզի կրկին անգամ տեսնեի արագություն հավաքող *Սվասրաշիա* շոգենավը, իր թանկագին սրբազան գանձերով, մինչև որ այն ամբողջովին անցավ Ադամանդե Գլուխ հրվանդանի ետևը: Մնալով միայնակ, հոգիս դուրս պոռթկաց, արցունքները թափվեցին, և ես անդադար լաց էի լինում՝ զգալով երկրի վրա իմ սրտի ամենաթանկագին գանձերից բաժանվելու ցավի ու վշտի ողջ խորությունը:[2]

Չնայած նման բաժանումներից կրած ցավին, Նախագահ Սմիթը գիտեր Մարգարե Զոզեֆ Սմիթի կողմից աշխարհին

Ռեբեկան ջրհորի մոտ, Սայքլ Դիսի։ Աբրահամի ծառան Աստծո ուխտյալ ժողովրդի մեջ կին էր փնտրում Աբրահամի որդու Իսահակի համար։ Ռեբեկան ջուր էր հանում ջրհորից այդ ծառայի ուխտերի համար, այդպիսով ի կատար ածելով նրա աղոթքը, որպեսզի նա կարողանար գտնել արդարակյաց երիտասարդ կին։

հայտնված հավերժական սկզբունքի զորությունն ու խոստումը: «Ո՞րն է դա»: Տղամարդու և կնոջ միությունը ժամանակի և ողջ հավերժության համար . . . Ո՞վ էր հասկանում ամուսնու և կնոջ միասնության պատասխանատվությունը, մինչև որ Ջոզեֆ Սմիթը բացահայտեց այն պարզությամբ, ինչպես որ այն հայտնվեց աշխարհին . . . Այն բացեց իմ աչքերը: Եթե ինչ-որ բան այս աշխարհում կարող էր ինձ ավելի լավ մարդ դարձնել, կամ ավելի լավ ամուսին, . . . դա Տիրոջ հայտնած սկզբունքն է, որը ցույց է տալիս իմ պարտավորությունները:[3]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Աստված հաստատել է ամուսնությունը մեր հավերժական փառքի ու վեհացման համար:

Աստված հաստատել է ամուսնությունն ի սկզբանե: Նա ստեղծել է մարդուն իր պատկերով և նմանությամբ, տղամարդ և կին, և նրանց արարումով նախատեսվել էր, որ նրանք պետք է միանան ամուսնական սրբազան կապերով, և որ նրանցից ոչ մեկը կատարյալ չէ առանց մյուսի:[4]

Տղամարդու և կնոջ օրինական միությունը միջոց է, որով նրանք կարող են իրականացնել իրենց բարձրագույն ու ամենասուրբ ձգտումները: Վերջին Օրերի Սրբերի համար ամուսնությունը մեր Երկնային Հոր կողմից չի նախատեսվել լինելու լոկ երկրային միություն, այլ միություն, որը կանցնի ժամանակի փոփոխությունների միջով և կշարունակվի հավերժ, պարգևելով պատիվ և ուրախություն այս աշխարհում, փառք ու հավերժական կյանքեր՝ գալիք աշխարհներում:[5]

[Ավետարանը] վերցնում է տղամարդուն և կնոջը, և Աստծո կողմից տրված սուրբ ու մաքուր ամուսնության հավերժական ուխտով միացնում է նրանց, որը տրամադրում է անհրաժեշտ բաները և բավարարում է հոգու ամենամաքուր և ամենաբաղձալի ցանկությունները: Այն ամբողջական է դարձնում տղամարդուն և կնոջը, ամուսիններին և կանանց՝ ժամանակի և ողջ հավերժության համար: Ինչպիսի՜ փառահեղ ժամանակ է դա:[6]

Աստված ոչ միայն առաջարկում է, այլ պատվիրում է ամուսնությունը: Երբ մարդը դեռևս անմահ էր, նախքան մեղքը կմտներ աշխարհ, մեր Երկնային Հայրն ինքը կատարեց առաջին ամուսնությունը: Նա մեր առաջին ծնողներին միացրեց սուրբ ամուսնական կապերով և նրանց պատվիրեց աճել, բազմանալ և լցնել

երկիրը։ Այդ պատվիրանը նա երբեք չի փոխել կամ չեղյալ համարել. և այն շարունակել է ուժի մեջ մնալ մարդկության պատմության բոլոր սերունդների ընթացքում։[7]

[Մարդիկ] . . . ավելի ու ավելի են լցվում եսասիրական և անաստվածային գաղափարներով, որ ամուսնությունը սխալ է և երեխաներն անպատվություն են։ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ամբողջովին հակառակ տեսակետն ունի, և հավատում ու ուսուցանում է դա՝ որպես ավետարանի ճշմարտություն, մարդուն տված Աստծո առաջին մեծ աստվածաշնչյան պատվիրան. «Աճեցեք և շատացեք և լցրեք երկիրը, տիրեցեք նորան»։ [Ծննդեց Ա.28։]

. . . Աստված պատվիրել, լիազորել և հաստատել է ամուսնական հարաբերությունը։ Այդ մասին շատ պարզորոշ է խոսվում Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված Աստծո հայտնության մեջ, ինչպես որ այն տրված է Վարդապետություն և Ուխտերի բաժին 49.15-ում. «Եվ կրկին ես ասում եմ ձեզ, ով որ արգելում է ամուսնանալը, կարգված չէ Աստծո կողմից, քանզի ամուսնությունը Աստծո կողմից է կարգված մարդու համար»։[8]

Ամուսնությունը . . . ավետարանի սկզբունք կամ արարողություն է, ամենաէականը մարդկության երջանկության համար, որքան էլ անկարևոր այն թվա կամ որքան էլ թեթևամտորեն դրան վերաբերվեն շատերը։ Կյանքի ծրագրում չկա ավելնորդ կամ անկարևոր սկզբունք, միևնույն ժամանակ չկա ամուսնությունից ավելի կարևոր կամ էական սկզբունք մարդու երջանկության համար, ոչ միայն այստեղ, այլ հատկապես հետագայում։[9]

Փառահեղ արտոնություն է՝ լինել միավորված որպես ամուսին և կին ժամանակի և ողջ հավերժության համար։

Փառահեղ արտոնություն է՝ արժանանալ Աստծո Տաճար գնալուն, միավորվել, որպես տղամարդ և կին սուրբ ամուսնական կապով, ժամանակի և ողջ հավերժության համար, Սուրբ Քահանայության իշխանությամբ, որը Աստծո զորությունն է, քանի որ նրանք, ովքեր այսպես միանում են միասին, «մարդը չի կարող բաժանել», քանի որ Աստված է միավորել նրանց։[10]

Տղամարդը և կինը, ովքեր մասնակցում են ամուսնական այդ արարողությանը, մասնակցում են մի բանում, որը հեռուն գնացող բնույթ է կրում, և այնքան մեծ կարևորություն ունի, որ դրանից է կախված կյանքը, մահը և հավերժական զարգացումը։

Դրանից է կախված հավերժական երջանկությունը կամ հավերժական թշվառությունը։[11]

Ինչո՞ւ [Աստված] ուսուցանեց մեզ տղամարդու և կնոջ հավերժական միության սկզբունքը։ . . . Որպեսզի տղամարդը վերցնելով իր կնոջը Աստծո իշխանությամբ, ժամանակի և ողջ հավերժության համար, իրավունք ունենա պահանջել նրան, իսկ նա՝ իր ամուսնուն, գալիք աշխարհում։[12]

Տղամարդիկ և կանայք կարող են փրկվել առանձին առանձին, սակայն վեհացում չեն ստանա միայնակ։ Նրանք պետք է կապված լինեն միասին այն միության մեջ, որը հայտնվել է այս վերջին ժամանակահատվածում։ Ոչ կինն առանց մարդի, և ոչ էլ մարդը առանց կնկայ Տերումը։ Ինչ էլ որ տղամարդիկ և կանայք ասեն կամ մտածեն այս առումով, նրանք չեն կարող վեհացում ձեռք բերել Աստծո արքայությունում միայնակ և չամուսնացած . . .

Մենք եկել ենք այստեղ, որպեսզի դառնանք Աստծո նման։ Նա սկզբում մեզ ստեղծել էր Իր պատկերով և Իր նմանությամբ, և Նա արու և էգ ստեղծեց մեզ։ Մենք երբեք չէինք կարող Աստծո պատկերով լինել, եթե չլինեինք տղամարդ և կին . . . Երբ մենք դառնանք Նրա նման, դուք կտեսնեք, որ մենք կներկայանանք Նրան այն տեսքով, ինչպես որ ստեղծվել էինք՝ տղամարդ և կին։ Կինը միայնակ չի գնա այնտեղ, և տղամարդը միայնակ չի գնա այնտեղ, և պահանջի վեհացում։ Նրանք կարող են փրկության մի աստիճանի հասնել միայնակ, սակայն երբ նրանք վեհացում ձեռք բերեն, վեհացում ձեռք կբերեն սելեստիալ արքայության օրենքի համաձայն, և ոչ մի այլ կերպ։[13]

Չկա ժամանակի և հավերժության համար այնպիսի միություն, որը կարողանա կատարելագործվել Աստծո օրենքից և նրա տան կարգից դուրս։ Մարդիկ կարող են ցանկանալ այն, նրանք կարող են անցնել դա ինչ-որ ձևով երկրային կյանքում, սակայն այն ոչ մի արդյունք չի ունենա, եթե չկատարվի և չհաստատվի աստվածային իշխանությամբ, Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով։[14]

Վերջին Օրերի Սրբերը ամուսնանում են ժամանակի և հավերժության համար, ոչ թե լոկ մինչև մահը կբաժանի ամուսնուն և կնոջը։ Քաղաքացիական օրենքով և այլ դավանանքների ծառայողների կողմից կատարված ամուսնությունները համարվում են պատվավոր և ուժի մեջ, երբ խոսքը վերաբերում է այս կյանքին, սակայն որպեսզի այն ուժի մեջ լինի գալիք կյանքում, այդ ուխտերը պետք է կապվեն հավերժության համար, այդ միությունները

պետք է կազմվեն Աստծո օրենքի համաձայն և Նրա իշխանության ներքո, այլապես նրանք ոչ մի ուժ չեն ունենա հետագայում: Ընտանիքը հավերժական փառքի հիմքն է, անսահման արքայության միջուկը: Ամուսինը կունենա իր կնոջը, կինը՝ իր ամուսնուն, ծնողները՝ իրենց երեխաներին, հավերժ, այն պայմանով, որ նրանք ապահովում են նրանց այն ձևով, որը տրված է Նրա կողմից, որի իրավունքն է կանոնակարգել իր թագավորությանը վերաբերող բոլոր բաները:[15]

Ամուսանցեք հավատով, ճիշտ ժամանակին և Տիրոջ տանը:

Մենք ասում ենք մեր երիտասարդներին՝ ամուսնացեք և ամուսնացեք ճիշտ ձևով: Ամուսնացեք հավատով, և թող ծեսը կատարվի Աստծո նշանակած վայրում: Այնպես ապրեք, որպեսզի արժանի լինեք այդ օրհնությանը:[16]

Ես ցանկանում եմ, որպեսզի Սիոնի երիտասարդները գիտակցեն, որ ամուսնության այդ հաստատությունը չի ստեղծվել մարդու կողմից: Այն Աստծուց է: . . . Այն պարզապես նախատեսված չի միայն մարդու համար, որպեսզի համապատասխանեցվի նրա անհատական հասկացողությանը և նրա անձնական գաղափարներին. ամուսնանալ, իսկ հետո բաժանվել, ընդունել, իսկ հետո հրաժարվել, ինչպես որ ինքը կուզենա: Մեծ հետևանքներ են կապված դրա հետ, հետևանքներ, որոնք անցնում են ներկա ժամանակի սահմաններից այն կողմ, դեպի ողջ հավերժություն, քանզի այդպես են հոգիները գալիս աշխարհ, և տղամարդիկ ու կանայք ձեռք բերում իրենց գոյությունը աշխարհում: Ամուսնությունը մարդկային ցեղի պահապանն է: Առանց դրա Աստծո նպատակները կխափանվեին, առաքինությունը կտապալվեր, իր տեղը զիջելով անբարոյականությանն ու ապականությանը, իսկ երկիրը կլիներ դատարկ ու ամայի:[17]

Ամուրի կյանքը և փոքր ընտանիքները մակերեսային մտքին գաղափար են տալիս, որ իրենք ցանկալի են, քանի որ իրենց հետ փոքրագույն պատասխանատվություն են կրում: Նա, ով խույս է տալիս պատասխանատվությունից, խույս է տալիս աշխատանքից: Ծուլությունն ու հաճույքը գրավում են աշխատասիրության և տքնաջան աշխատանքի տեղը: Հաճույքի ու հեշտ կյանքի հանդեպ սերն իր հերթին գրավում է այն երիտասարդներին, ովքեր չեն նայում ամուսնությանն ու ընտանիքի հետագա մեծացմանը որպես սրբազան պարտականություն . . .

. . . Դա կորուստ է տան համար, որը տարիներ հետո պետք է զգա ազգը: Ժամանակը կապացուցի, որ Աստծո օրենքները ճշմարիտ են և մարդկային երջանկությունը ընկած է պարտականության կատարման մեջ և ոչ թե հաճույքի ու անհոգ ազատության մեջ:

Աշխարհիկ ոգին վարակիչ է: Մենք չենք կարող ապրել սոցիալական նման պայմաններում՝ չենթարկվելով այդ հրապուրանքների ազդեցությանը: Մեր երիտասարդները կգայթակղվեն հետևելու աշխարհի օրինակին: Արդեն իսկ կա մեծ հակում՝ ծիծաղել ամուսնական պարտականությունների վրա: Որպես արդարացում փառասիրական պատրվակներ են բերվում ամուսնությունը հետաձգելու համար, մինչև որևէ հատուկ նպատակ կիրագործվի: Մեր առաջադեմ երիտասարդներից ոմանք ցանկանում են նախ ուսումնառությունը ավարտել հայրենիքում կամ արտերկրում: Լինելով բնույթով հասարակական ղեկավարներ, նրանց օրինակը վտանգավոր է և նրանց արդարացման պատշաճությունը կասկածելի է: Լավ կլիներ, որ նման երիտասարդներից շատերը երբեք քոլեջ չգնային, քան ուսանողական կյանքը որպես արդարացում բերեին պատշաճ տարիքից հետո ամուսնության հետաձգման համար:[18]

Երիտասարդները նախքան ամուսնանալը, ցանկանում են ճոխ, ամեն տեսակետից ընտիր և ժամանակակից տուն ձեռք բերել: Կարծում եմ, դա սխալ է: Ինձ թվում է երիտասարդ տղաներն ու աղջիկները նույնպես պետք է ցանկանան հենց այսօր և ներկայիս պայմաններում մտնել ամուսնության սրբազան կապերի մեջ և միասին գնալ դեպի հաջողություն, միասին հարթեն իրենց առջև ծառացած խոչընդոտներն ու դժվարությունները, և միասին ձգտեն հաջողության, համագործակցեն իրենց աշխարհիկ գործերում, այնպես որ հաջողություն ունենան: Այն ժամանակ նրանք կսովորեն ավելի ամուր սիրել միմյանց և ավելի միասնական կլինեն իրենց կյանքում և Տերն ավելի առատորեն կօրհնի նրանց:[19]

Եկեղեցու ղեկավարները և երիտասարդների ուսուցիչները պետք է արմատավորեն ամուսնության սրբությունը և ուսուցանեն ամուսնության պարտականությունը, ինչպես որ այն հայտնվել է մեզ վերջին օրերին: Պետք է ներկա լինի . . . պատվավոր ամուսնության օգտին խոսող ոգին, և թող որ դա կանխի երիտասարդ տղաներին և աղջիկներին, ովքեր Եկեղեցու անդամ են, ամուսնանալ ոչ այլ կերպ, քան Աստծո կողմից հաստատված իշխանությամբ:[20]

Ամուսնությունը պետք է կառուցվի սիրո և սրբազան նվիրվածության սկզբունքների հիման վրա:

Ոչ մի դժվարություն չպետք է լինի տունը ամենամեծ ակնածանքով և վեհ մտքերով պահելու համար, եթե այն կառուցվի մաքրության, ճշմարիտ կապվածության, արդարակենցության և արդարության սկզբունքների վրա: Տղամարդն ու նրա կինը, որոնք բացարձակ վստահում են միմյանց, և որոշել են հետևել Աստծո օրենքներին իրենց կյանքում և կատարել իրենց առաքելությունը երկրի վրա, չպետք է բավարարվեին և երբեք չէին կարող բավարարվել առանց տան: Նրանց սրտերը, նրանց զգացողությունները, մտքերը, ցանկությունները բնականորեն կհակվեին տուն և ընտանիք կառուցելու և իրենց արքայությունը կառուցելու ուղղությամբ, դնելու հիմքը հավերժական շարունակության և զորության, փառքի, վեհացման և տիրելու անսահման աշխարհների:[21]

Ավետարանի տեսակետից տունը տուն չէ, եթե այնտեղ չի տիրում բացարձակ վստահություն և սեր՝ ամուսնու և կնոջ միջև: Տունը կարգուկանոնի, սիրո, միության, հանգստության և բացարձակ վստահության վայր է, որտեղ անհավատարմության կասկածի շունչը չի կարող մտնել, որտեղ կինը և տղամարդը՝ յուրաքանչյուրը լիովին վստահ են միմյանց պատվի և առաքինության վրա:[22]

Սիոնը սեռերի պատերազմի վայր չէ: Աստված նախատեսել է, որ նրանք մեկ լինեն և այդպես էլ հայտարարել է: Նրա գործը նրանց առանձին պահելը չէ կամ ստիպել նրանց զգալ, որ իրենք տարբեր, հակադիր հետաքրքրություններ ունեն, և որ առանձնացումն է նրանց ստեղծման նպատակը, և ոչ թե միությունը:[23]

Ինչպիսի՞ն է այդ դեպքում կատարյալ տունը, տան օրինակը, այն, որը Վերջին Օրերի Սրբերի երազանքը պետք է լինի: Դա այն տունն է, որտեղ աշխարհիկ բոլոր պատկերացումները երկրորդական տեղում են: Դա այն տունն է, որտեղ հայրը նվիրված է ընտանիքին, որով Աստված օրհնել է իրեն, համարելով նրանց առաջնային, և որտեղ ընտանիքի անդամներն էլ իրենց հերթին նրան պահում են իրենց սրտում: Տուն, որտեղ տիրում է վստահությունը, միասնությունը, սերը, սրբազան նվիրվածությունը մոր, հոր և երեխաների ու ծնողների միջև: Տուն, որտեղ մայրը, ունենալով հոր աջակցությունը, ուրախություն է գտնում իր երեխաների մեջ, և որտեղ բոլորը բարոյական են, մաքուր ու աստվածավախ:[24]

Ծնողները . . . պետք է սիրեն և հարգեն միմյանց, և միշտ միմյանց վերաբերվեն հարգալից զգուշությամբ ու բարյացակամ ուշադրությամբ: Ամուսինը պետք է իր կնոջը վերաբերվի ծայրաստիճան քաղաքավարությամբ և հարգանքով: Նա երբեք չպետք է իր կնոջը վիրավորի, երբեք նրա մասին չպետք է արհամարանքով խոսի, այլ պետք է միշտ նրան բարձր գնահատի տանը, իրենց երեխաների ներկայությամբ . . . Կինը նույնպես պետք է ամուսնուն վերաբերվի մեծ հարգանքով և քաղաքավարությամբ . . . Կինը պետք է լինի իր ամուսնու ուրախությունը, և նա պետք է ապրի և պահի իրեն տանը այնպես, որպեսզի իր ամուսնու համար տունը լինի ամենաուրախ, ամենաօրհնյալ վայրը երկրի վրա: Այսպես պետք է լինեն ամուսինն ու կինը, հայրը և մայրը, սրբազան պատերի ներսում այդ սուրբ վայրի, որը կոչվում է տուն:[25]

Եղբայրներ և քույրեր, ոչինչ թույլ մի տվեք որ կանգնի ձեր միջև, հայրեր և մայրեր, ամուսիններ և կանայք: Երբեք չպետք է զգացողությունների տարբերության ստվեր անգամ լինի. երբեք ոչինչ չպետք է կանգնի ձեր միջև և ձեզ հեռացնի միմյանցից, դուք չպետք է դա թույլ տաք: Դա էական դեր է խաղում ձեր բարօրության և երջանկության համար, ինչպես նաև ձեր միասնության համար, որը պետք է լինի ձեր տանը: Մենք բոլորս ունենք մեր թուլություններն ու թերությունները: Երբեմն ամուսինը տեսնում է ինչ-որ թերություն իր կնոջ մեջ, և կշտամբում է նրան դրա համար: Երբեմն էլ կինն է զգում, որ ամուսինը ինչ-որ բան այնպես չարեց, և նա է կշտամբում ամուսնուն: Ի՞նչ օգուտ դրանից: Ներելն ավելի լավ չէ՞: Գթասրտությունն ավելի լավ չէ՞: Սերն ավելի լավ չէ՞: Ավելի լավ չէ՞ չխոսել սխալների մասին, չմեծացնել թուլությունները՝ կրկին ու կրկին խոսելով դրանց մասին: Այդպես ավելի լավ չէ՞: Արդյոք չի՞ լինի ավելի հուսալի այն միությունը, որն ամրացել է ձեր ունեցած երեխաներով և նոր ու հավերժական ուխտի կապով, եթե դուք մոռանաք նշել միմյանց թերություններն ու սխալները: Ավելի լավ չէ՞ շրջանցել դրանք և ոչինչ չասել այդ մասին, թաղել դրանք և խոսել միայն այն լավի մասին, որը դուք գիտեք և զգում եք միմյանց հանդեպ, և այդպիսով, թաղեք միմյանց սխալները և չմեծացնեք դրանք. այդպես ավելի լավ չէ՞:[26]

Ի՞նչը կարող է ավելի մեծ ուրախություն պարգևել, եթե ոչ այն միտքը, որ [տղամարդը], որը սիրում է իր կնոջը, և որին սիրում է կինը, որին նա հավատարիմ է և որը հավատարիմ է իրեն որպես կին և մայր իրենց համատեղ ողջ կյանքի ընթացքում, արտոնություն կունենա առաջ գալ առաջին հարության առավոտը անմա-

հություն և հավերժական կյանք հագած, և կշարունակվի նրանց մեջ այս կյանքում գոյություն ունեցող հարաբերությունը, որն է ամուսնու և կնոջ, հոր և մոր, ծնողների և երեխաների միջև հարաբերությունը, դնելով Աստծո արքայության մեջ հավերժական փառքի ու հավերժական վեհացման հիմքը:[27]

Սրբագործված և Աստծո կողմից հաստատված ամուսնությունն է, որի վրա հիմնվում է փառավորված տունը, որը օրհնում է, երջանկացնում է, վեհացնում է և, ի վերջո, տանում է դեպի մեր Երկնային Ծնողների ներկայություն և հավերժական, միասնական կյանք և աճ:[28]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ նպատակների համար է ամուսնությունը հաստատվել Աստծո կողմից: Ինչպե՞ս է հավերժական ամուսնությունը հնարավորություն տալիս մեզ իրականացնել մեր «ամենամեծ ու ամենասուրբ ձգտումները»:
- Ինչո՞ւ է ամուսնությունը «ամենաէականը մարդկության երջանկության համար»: Ինչո՞ւ է այն անկարևոր համարվում շատերի կողմից:
- Ինչպե՞ս է հավերժական աճը և հավերժական երջանկությունը կախված տղամարդու և կնոջ հավերժական միասնությունից: Ի՞նչ ենք զգում, իմանալով, որ դուք իրավունք կունենաք ձեր ամուսնու կամ կնոջ վրա ողջ հավերժությունում:
- Ինչո՞ւ պետք է ձգտենք ամուսնանալ տաճարում:
- Ինչպիսի՞ն կլինեն մեր և ուրիշների համար՝ ամուսնության նոր ու հավերժական ուխտը դրժելու հետևանքները:
- Ինչպիսի՞ գայթակղություններ և ուշադրությունը շեղող գործոններ կարող են ոմանց ստիպել հետաձգել ամուսնությունը կամ խույս տալ դրանից: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե երբ պետք է ամուսնանանք:
- Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը մարգարեացել է, որ ամուսնության պատասխանատվությունից խույս տալը «կորուստ է, որը տարիներ հետո կզգա ազգը»: Ինչպե՞ս են այսօր հասարակությունները զգում այդ կորուստը:
- Ինչպե՞ս է հավերժական ամուսնության ուխտը ամրացնում զույգերին, երբ նրանք հանդիպում են «իրենց առջև ծառացած խոչընդոտներին և դժվարություններին»:

- Ինչո՞ւ է կարևոր «բացարձակ վստահությունը» ամուսնու և կնոջ միջև: Ինչպիսի՞ այլ հատկանիշներ պետք է զարգացնեն ամուսիններն ու կանայք: Ինչպե՞ս է բացասական պահվածքը, ինչպիսին է՝ քննադատությունը, խայթող հեգնանքը, չներելը և հպարտությունը, թուլացնում ամուսնական հարաբերությունները:
- Ի՞նչ է նշանակում ամուսնու և կնոջ համար մեկ լինել: Ինչպիսի՞ զոհաբերություններ կարող են անել զույգերը մեկ դառնալու համար: Ուրիշ ի՞նչ կարող են անել զույգերը իրենց հավերժական միությունն ամրապնդելու համար:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 453.
2. Quoted in Francis M. Gibbons, *Joseph F. Smith: Patriarch and Preacher, Prophet of God* (1984), 153.
3. In Conference Report, Oct. 1911, 8.
4. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 272.
5. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:147.
6. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 15 Feb. 1900, 98.
7. *Gospel Doctrine,* 274.
8. "Editor's Table: Marriage God-Ordained and Sanctioned," *Improvement Era,* July 1902, 713; paragraphing altered.
9. *Gospel Doctrine,* 105.
10. *Deseret News: Semi-Weekly,* 10 Sept. 1878, 1.
11. *Gospel Doctrine,* 273.
12. *Gospel Doctrine,* 277.
13. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1.
14. *Gospel Doctrine,* 272.
15. In *Messages of the First Presidency,* 4:250.
16. *Gospel Doctrine,* 275.
17. *Gospel Doctrine,* 272.
18. *Gospel Doctrine,* 281.
19. *Gospel Doctrine,* 278.
20. *Gospel Doctrine,* 273.
21. *Gospel Doctrine,* 304.
22. *Gospel Doctrine,* 302.
23. "Editorial Thoughts: The Righteousness of Marriage, and Its Opposite," *Juvenile Instructor,* 1 July 1902, 402.
24. *Gospel Doctrine,* 302–3.
25. In Conference Report, Apr. 1905, 84–85.
26. "Sermon on Home Government," *Millennial Star,* 25 Jan. 1912, 49–50.
27. *Gospel Doctrine,* 458.
28. "Editor's Table: Marriage God-Ordained and Sanctioned," 717–18.

Սփոփող Միություն. Աստծո կողմից ստեղծված՝ հոգուտ Սրբերի

Սփոփող Միությունը հաստատվել է աստվածային իշխանությամբ՝ կարիքավորներին սփոփելու և Սիոնի կանանց հոգևոր բարօրությունը բարձրացնելու համար:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ասել է, որ Սփոփող Միությունը «ստեղծվել է, հաստատվել է, կարգվել է Աստծո կողմից»:[1] Նա մասնակցել է Սփոփող Միության շատ տոնակատարություններին, սիրով և հիացմունքով խոսելով կանանց աշխատանքի մասին: 1892թ. մարտի 17-ին Սփոփող Միությունը նշեց իր 50- ամյակը՝ Արծաթե տարեդարձը նշանավորող իր ծառայություններով: Սոլթ Լեյքի Թաբերնակլում և Եկեղեցու ճյուղերում, ծխերում և ցցերում Սփոփող Միության և քահանայության ղեկավարները իրենց գնահատանքի տուրքը մատուցեցին Սփոփող Միության հիմնադրման և Եկեղեցու կանանց երկարատև տարիների ծառայության համար:

Ողջ աշխարհում տեղի ունեցած այդ հավաքների մասնակիցներին խնդրել էին միաժամանակ աղոթել: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, որն այն ժամանակ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի Խորհրդականն էր, Թաբերնակլում հատուկ զովքի և երախտագիտության աղոթք ասաց. «Դու մեզ տվել ես լույս, որը ուրախությամբ է լցրել մեր սրտերը և օգնել ծառայելու Քեզ . . . Դու տվել ես մեզ երկրի վրա Քո Եկեղեցին հիմնադելու և արդարակեցություն փնտրելու ցանկություն»,- ասաց նա: «Օրհնիր . . . Սփոփող Միության անդամներին ողջ աշխարհում, Սիոնում և օտար երկրներում, ծովի կղզիներում և որտեղ էլ որ նրանք հավաքվեն միասին . . . Եղիր նրանց հետ Քո հոգով, որպեսզի օրհնես նրանց, ուրախացնես նրանց սրտերը՝ Քո առաջ»:[2]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սփոփող Միությունը հաստատվել է Աստծո կողմից։

Ինչպիսի՜ հզոր, ինչպիսի՜ մեծ և ինչպիսի՜ զորավոր կազմակերպություն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Սփոփող Միության կազմակերպությունը։[3]

Ներկայումս չկա կանանց մեկ այլ կազմակերպություն աշխարհում, որն ունենա աստվածային իշխանության նման բարձր դիրք։ Այուս կազմակերպությունները տղամարդկանց կամ կանանց կողմից են ստեղծվել . . . Այս կազմակերպությունը ստեղծվել, լիազորվել, հաստատվել և կարգվել է Աստծո կողմից՝ ծառայելու կանանց և տղամարդկանց հոգիների փրկության համար։ Այդ իսկ պատճառով չկա մեկ այլ կազմակերպություն, որ համեմատվի նրա հետ, որ կարողանա երբևէ գրավի նման դիրք, եթե միայն Տերը չկազմակերպի մեկ ուրիշը։ Եվ եթե Նա անի դա, Նա կանի դա ոչ այլ կերպ, քան քահանայության միջոցով, այն նույն քահանայության, որի միջոցով կազմակերպեց այս մեկը։[4]

Կանայք կարող են կազմակերպել ակումբներ և միություններ, նրանք կարող են ընդունել դրանց օրենսդրությունները, համաձայնագրերի հոդվածները և դրանք ի կատար ածելու օրենքները և նման այլ բաներ։ Մի՛ մոռացեք, որ դրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ծխի կանոնավոր կերպով կազմակերպված Սփոփող Միության հետ . . . Պետք չէ, որ դուք առաջնորդվեք աշխարհի կանանց կողմից, դուք պետք է ձեր ետևից տանեք աշխարհը, և հատկապես աշխարհի կանանց, այն ամենում, ինչը արժանավայել է, Աստվածանման, վեհացնող և մարդկանց զավակներին մաքրագործող . . . Առաջին տեղում դրեք [Սփոփող Միությունը], համարեք այն ամենակարևորը, համարեք այն աշխարհում գոյություն ունեցող ցանկացած կազմակերպությունից ամենաբարձր, լավագույն և ամենալուրջ կազմակերպությունը։ Դուք Աստծո Մարգարեի ձայնով կոչված եք կատարելու դա, լինելու ամենաբարձրը, ամենահրաշալին և լավագույնը, ամենամաքուրը և ամենանվիրվածը այն բանին, ինչը ճշմարիտ է, և ձեր պարտականությունն է վայելել ձեր արտոնությունները և ձեռք բերել այն ամենը, ինչը կապված է ձեր կոչման հետ և ինչը դուք պետք է ժառանգեք Տիրոջից և Նրա պարգևներից։[5]

Սփոփող Միությունը պետք է հոգ տանի կարիքավորների համար, սփոփի և լուսավորի։

Ես հավատում եմ, որ մեր Սփոփող Միությունը վիթխարի աշխատանք է տանում մարդկանց մեջ . . . Դա կազմակերպություն է, որն էական դեր ունի Իսրայելի բարօրության, Սիոնի քույրերի, մայրերի և դուստրերի բարեկեցության համար։[6]

Երկու խոսք Սփոփող Միության մասին։ Սա մի կազմակերպություն է, որը հաստատվել է Մարգարե Զոզեֆ Սմիթի կողմից։ Ուստի, այն Եկեղեցու ամենահին օժանդակ կազմակերպությունն է, և այն առաջնակարգ դեր ունի։ Այն ոչ միայն պետք է հոգա աղքատների, հիվանդների և կարիքավորների մասին, այլ նրա պարտականության մի մասն է, և ամենամեծ մասը նաև, հետևել Սիոնի մայրերի և դուստրերի հոգևոր բարօրությանը և փրկությանը, հավաստիանա, որ ոչ ոք անտեսված չէ, այլ որ բոլորը պաշտպանված են անհաջողությունից, դժբախտությունից, խավարի ուժերից, և աշխարհում նրանց սպառնացող չարից։ Սփոփող Միությունների պարտականությունն է հետևել իրենց և Եկեղեցու բոլոր կին անդամների հոգևոր բարօրությանը։[7]

Ուրիշ որտե՞ղ երկրի վրա մենք պետք է փնտրենք բարին, ճշմարտության հոգին, անկեղծությունը, աստվածային սերը, համբերությունը և երկայնամտությունը, ներողամտությունը և տոկունությունը, գթությունը և այլ երանելի բաներ, եթե ոչ կազմակերպություններում, որոնք ծառայում են զարգացնելու Սիոնի մայրերին և դուստրերին։ Ինչպիսի՜ ուժ ունեք, իմ սիրելի քույրե՛ր, ձեր պարտականությունները կատարելիս, ձեր կոչումներում ծառայելիս որպես գթացող հրեշտակներ տառապյալների և ոտնահարվածների, ընկածների, մոլորվածների, թույլերի և օգնություն ակնկալողների համար, ուժ, որը դուք ունեք և կարող եք ունենալ Աստծո ժողովրդի մեջ և այլ մարդկանց մեջ, ում հետ ձեզ բախտ կվիճակվի շփվել։

Որտեղ էլ որ սփոփելու կարիք կա՝ գոյություն ունի այս կազմակերպությունը, այն միշտ մոտ է և պատրաստ տրամադրելու անհրաժեշտ սփոփումը։ Որտեղ էլ որ կյանքի սկզբունքների, ճիշտ ապրելու սկզբունքների գիտելիքի պակասություն կա, այս կազմակերպությունը մոտ է, առձեռն՝ խելամտություն տալու, լուսավորելու և օրինակով ու ցուցումով սովորեցնելու նրանց, ովքեր նման օգնության և աջակցության կարիքն ունեն։

Որտեղ էլ որ տգիտության կամ առնվազն անհասկացողության պակաս գոյություն ունի, ինչ վերաբերում է ընտանիքին, ընտանեկան պարտականություններին, այն պարտականություններին, որոնք պետք է գոյություն ունենան և որոնք իրավացիորեն գոյություն ունեն ամուսնու և կնոջ, ծնողների և երեխաների միջև, այնտեղ գոյություն ունի այս կազմակերպությունը, այն մոտ է՝ առձեռն, և այս կազմակերպությանը հատուկ բնական օժտվածությամբ ու ոգեշնչմամբ նրանք պատրաստված են և պատրաստ ուսուցանելու այս կարևոր պարտականությունների վերաբերյալ: Որտեղ որ անփորձ երիտասարդ մայր կա, որը պետք է հոգ տանի և խնամի իր երեխային, կամ դարձնի իր տունը հաճելի, գրավիչ ու ցանկալի վայր իր և իր ամուսնու համար, այս կազմակերպությունը գոյություն ունի իր այս կամ այն ձևով, որպեսզի սովորեցնի այդ երիտասարդ մորը և օգնի նրան լավ կատարելու իր պարտականությունները: Եվ որտեղ որ փորձի պակասություն կա երեխաներին բնական, սնուցող և առողջ սնունդ պատրաստելու համար, կամ որտեղ որ երեխաներին հոգևոր ուսուցում և հոգևոր սնունդ տալու կարիքը կա, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Սփոփող Միությունների կազմակերպություններում և Սիոնի մայրերի և դուստրերի կազմակերպություններում կան այնպիսիք, որ կարող են նման գիտելիքներ տալ:[8]

Հոգ տարեք կարիքավորների համար ավելի ջանասիրաբար, քան երբևէ . . . Մենք վախենում ենք, որ կան այնպիսիք, որ կարող է անձայն տառապեն, սակայն որոնք օգնության ձեռքի կարոտ են: Ձեր վրա դրված պարտականությունն է՝ օգնել ձեր շրջապատում գտնվող նման մարդկանց: Հիշե՛ք ծերերին և հոգ տարեք որբերի և այրիների մասին:[9]

Վերջերս ես պատիվ ունեցա այցելել Սիոնի հեռավոր մի Ցցի մեր բնակավարերից մեկը, որտեղ հիվանդությունն էր մոլեգնում և չնայած մենք մի քանի օր արդեն ճամփորդում էինք և այդ բնակավայր հասանք երեկոյան, մեզ թախանձագին խնդրեցին նախագահի հետ շրջել և այցելել հիվանդներին: Մենք տեսանք մի աղքատ կնոջ՝ պառկած անկողնում, շատ ծանր վիճակում: Նրա խեղճ ամուսինը իր կնոջ ծանր հիվանդությունից շփոթված, նստած էր նրա անկողնու մոտ: Այդ կինը մի քանի երեխաների մայր էր, որոնք խմբվել էին այնտեղ: Ինչպես երևում էր, ընտանիքը շատ չքավոր պայմաններում էր:

Շուտով նրանց տուն եկավ մի հմայիչ կին, իր հետ բերելով մի զամբյուղ, որը լի էր սննդարար ուտելիքով և մի քանի նրբաճաշակ խորտիկներով, որոնք այդ տառապող ընտանիքի համար էին: Հարցուփորձից իմացանք, որ ծխի Սփոփող Միությունը նրան հանձնարարել էր հետևել և խնամել այդ կնոջը ողջ գիշեր: Նա եկել էր պատրաստված, որպեսզի հոգ տանի երեխաների համար՝ լողացնի, կերակրի և քնեցնի նրանց, մաքրի տունը և ինչպես հարկն է ծառայի այդ տառապող կնոջն ու նրա ընտանիքին: Մենք նաև իմացանք, որ մեկ այլ բարի քույր էլ նրան փոխարինելու պիտի գար վաղը, և այդպես շարունակ ամեն օր այս աղքատ, տառապյալ ընտանիքը ամենաբարի հոգածությանն ու ուշադրությանն էր արժանանում Սփոփող Միության քույրերի կողմից, մինչև որ հիվանդն առողջացավ:

Մենք իմացանք նաև, որ այս Սփոփող Միությունն այնպես էր կազմակերպված և գործում, որպեսզի այդ բնակավայրի բոլոր հիվանդները նման ուշադրության և ծառայության արժանանային՝ սփոփվելով և մխիթարվելով: Նախկինում երբեք ես այդքան ակնհայտորեն չէի տեսել այս մեծ կազմակերպության օգտակարության և գեղեցկության հաստատումը, ինչպես այս օրինակում, որի մասին մենք վկայեցինք, և ես մտածում էի՝ ինչպիսի՜ ողորմածություն է, որ Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին նման կազմակերպություն հաստատել Եկեղեցում:[10]

Սփոփող Միության քույրերը պետք է ձգտեն հավատք և հոգևոր ուժ կառուցել իրենց և նրանց մեջ, ում ծառայում են:

Ով կարող է ներկայացնել լավ կազմակերպված և հիմնավորապես կարգապահության վարժեցված Սփոփող Միության կողմից Սրբերի հանդեպ ցուցաբերված բարության չափը, ոչ միայն աշխարհիկ իմաստով, այլ նաև հոգևոր տեսակետից: Աշխատանքը բարեգործական է և, հավանաբար, չկա ոչ մի բան, որը կունենա ավելի զորավոր և խորը ազդեցություն, քան ճիշտ ուղղորդված գթությունը, որը կոչված է շահելու մեր մտերիմների վստահությունն ու սերը: Եվ շահելով նրանց վստահությունը ողորմածության հասարակ գործերով, դուռը բաց է՝ շահելու նրանց հոգիները և առաջնորդելու նրանց դեպի հավատքի նոր բարձունքներ և հոգևոր կատարելություն. և ի վերջո, հոգևորն ավելի մեծ արժեք ունի, քան սոսկ աշխարհիկը . . .

Եվ վերջապես ավելի լավ է սովահար լինել կամ նույնիսկ մահանալ աշխարհիկ սննդի պակասից, քան հյուծվել և մահանալ մտավոր և հոգևոր գիտելիքի պակասից, որոնք կարևոր են հավերժական կյանքի պարգևն ունենալու համար, որն Աստծո մեծագույն պարգևն է: Ինձ համար ավելի կարևոր է ունենալ հավերժական ճշմարտության սկզբունքների գիտելիքը, քան ուտելիք կամ հագուստ: Թեև մենք ցանկանում ենք ունենալ թե աշխարհիկ, և թե հոգևոր սնունդ, և Աստված այնպես է նախասահմանել որ այդ երկուսն էլ հեշտ հասանելի լինեն ողջ մարդկության համար, եթե միայն նրանք պահեն Նրա օրենքները և ապրեն ըստ դրանց:

Սրանում է կայանում Սփոփող Միությունում աշխատողի արտոնությունը՝ վերցնել փոքրիկներին իրենց մանկության տարիքից և օգնել ուսուցանել նրանց, որ լինեն առաքինի և ազնիվ, հավատան Աստծուն՝ Հավերժական Հորը և Նրա Որդու աստվածային առաքելությանը: Եվ ուսուցանեն մայրերին, որ այս ձևով դաստիարակեն իրենց փոքրիկներին: Սա կարևոր պարտականություն է, անգամ շատ կարևոր, քան պարզապես բավարարել աշխարհիկ կարիքները, որոնք դուք ունեք, ի՛մ քույրեր: Իսկապես ամեն կերպ և ամենուր ձեր ուժերի ներածին չափով բարիք գործելու ձեր արտոնություններին կամ բացառիկ իրավունքին սահման չկա:[11]

Սփոփող Միության ջանքերը մեծապես ուղղված են բավարարելու Եկեղեցու ժողովրդի կյանքի նյութական, աշխարհիկ կարիքները, թեպետ նրանց ջանքերի ազդեցությունը կարող է անցնել մահկանացու կյանքից այն կողմ, քանի որ դրանք անդրադառնում են հոգևոր աճի վրա այնպես, ինչպես աշխարհիկ կարիքների վրա . . . Ձեր պարտավորության մի մասն է հոգ տանել հայրազուրկների և անօգնականների մասին, ոչ միայն բավարարելով նրանց աշխարհիկ ցանկությունները, այլ ուղղակիորեն հետևելով նրանց մտավոր և հոգևոր զարգացմանը: Իրականում դուք պետք է լինեք մայրեր մայր չունեցողների համար և օգնողներ անօգնականների համար: Այդ բոլոր լավ գործերում Եկեղեցին կանգնած է ձեր թիկունքին՝ ձեզ օգնելու նպատակով:[12]

Ամենակարևորը հոգևոր բաներն են, որոնք ամրապնդում են տղամարդկանց և կանանց հավատքը, որոնք պարգևում են լույս, բանականություն և զորություն դիմադրելու չարին և չարի գայթակղություններին, զորություն՝ զանազանելու մարդկանց խաբեությունները, որ մոլորեցնում են խաբեբայության խորամանկությունով: Այդ բանականությունը, այդ հոգևոր գիտելիքը, հոգևոր

բանականությունը, որը հնարավորություն կտա ձեզ տարբերել ճիշտը սխալից, լույսը խավարից և բարին չարից, սա է ամենամեծ բանը մեզ համար, որին պետք է ձգտել և ձեռք բերել։[13]

Ստածեք Մորաքույր Էմիի մասին [Էմիլի Բ. Վենս, Սփոփող Միության գերագույն նախագահ] . . . որը եկել է Եկեղեցի, երբ փոքր աղջնակ էր, կրելով փորձություններ, դժբախտություններ և հիասթափություններ, և այն ամենը, ինչը անհանգստություն և հոգս էր պատճառում Վերջին Օրերի Սրբերի կյանքում այն ժամանակ, երբ նրանք դուրս էին եկել Միսուրիից և Նավուից՝ շարժվելով դեպի լեռների հովիտները, անցնելով անապատների միջով, չունենալով ոչ մի տեղ, որ դնեն իրենց ոտքերը և գլուխը։ Հուսահատվա՞ծ էր նա։ Հուսահատվա՞ծ էր իմ մայրը։ Հուսահատվա՞ծ էր մորաքույր Վիլայթ Քիմբալը։ Ո՛չ. նրանք այդ ամենը համարում էին չնչին և անարժեք բաներ, քանզի նրանց հոգում ծնվել էր Աստծո լույսը և Նրա ճշմարտությունը։ Կարո՞ղ էիք այդ կանանցից որևէ մեկին հեռացնել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում ունեցած իրենց համոզմունքներից։ Կարո՞ղ էիք մթագնել նրանց միտքը՝ ինչ վերաբերում է Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելությանը։ Կարո՞ղ էիք կուրացնել նրանց ինչ վերաբերում է Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու առաքելությանը։ Ո՛չ, երբեք աշխարհում դուք չէիք կարող դա անել։ Ինչո՞ւ։ Որովհետև նրանք գիտեին դա։ Աստված հայտնել էր դա նրանց, և նրանք հասկացել էին դա և ոչ մի ուժ երկրի վրա չէր կարող շեղել նրանց այն բանից, ինչը նրանք գիտեին, որ ճշմարիտ է։ Սահը ոչինչ էր նրանց համար։ Դժվարությունները ոչինչ էին։ Սառնամանիքը կամ անձրևը, կամ էլ տոթը ոչինչ էին նրանց համար։ Այն ամենը, ինչ նրանք զգում էին, գիտեին և ցանկանում էին, դա Աստծո արքայության հաղթանակն էր և ճշմարտությունը, որ Տերը տվել էր իրենց։

Օ՜, իմ հոգի, որտե՞ղ են այժմ այս կանայք։ Փառք Աստծուն մենք ունենք նրանց նման մի քանիսը, նրանք շատ են։ Սակայն մենք ունենք նաև մի քանիսը, որոնք այդպիսին չեն . . . Դուք ուշադիր զննում եք նրանց կյանքը, նրանց սրտերը և սովորույթները, հետևում եք այն ամենին, թե ինչ են անում իրենց տներում, և տեսնում եք, որ նրանք ամենևին էլ այն չեն, ինչ մենք ենք փնտրում, նրանք այնպիսին չեն, ինչպիսին ավետարանն է դարձնում տղամարդկանց և կանանց, որոնք ընդունում են ավետարանը և ապրում ըստ դրա, քանի որ նրանք չգիտեն ավետարանը, ոչ էլ ապրում են դրանով։ Այնուամենայնիվ, արտաքինից ձեզ կթվա, թե նրանք ամեն ինչ ունեն և ունեն ողջ լույսն ու հավատքը, ամեն իմաստություն և գիտելիք, սակայն դա այդպես չէ, այդպես չէ։ Երբ

ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ դադարում են Աստված կանչել աղոթքով, ուրեմն ինչ-որ բան պակասում է . . . Նրանք իրենց հոգում անկայուն են, չունեն հավատք, չունեն սեր, որ պետք է ունենային:[14]

Աստծո խոսքը և օրենքը կարևոր են ինչպես կանանց համար, ովքեր ցանկանում են կատարել իմաստուն եզրահանգումներ, այնպես էլ տղամարդկանց համար: Կանայք պետք է վերջին օրերի այս մեծ աշխատանքի խնդիրներն ուսումնասիրեն և խորհեն դրանց շուրջ Աստծո հայտնությունների տեսանկյունից, ինչպես որ հուշում է Նրա Հոգին, և նրանց իրավունքն է ստանալ դա անկեղծ և սրտառուչ աղոթքով:[15]

Եկեք աշխատենք Եկեղեցու աշխարհիկ և հոգևոր բարօրության ուղղությամբ, և եկեք այնուամենայնիվ ավելի տքնաջան աշխատենք հոգևոր վեհացման և հոգևոր օգնության, և հոգևոր կյանքի ու Եկեղեցու փրկության համար:[16]

Սփոփող Միությունը անկախ չէ Աստծո Որդու քահանայությունից:

Սփոփող Միության աշխատանքում ներգրավված մեր քույրերը . . . վայելում են մեր հարգանքը, մեր լրիվ վստահությունը: Տիրոջ օրհնությունները կլինեն նրանց հետ: Նա օրհնել է անցյալում և Նա կշարունակի օրհնել նրանց այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կշարունակեն աջակցել Աստծո Քահանայությանը, որը ուղարկվել է երկիր՝ առաջնորդելու Եկեղեցին և խորհուրդներ տալու Աստծո թագավորության գործերի վերաբերյալ:[17]

Ես ցանկանում եմ ասել . . . Սփոփող Միությանը . . . և Եկեղեցու մնացած բոլոր կազմակերպություններին, որ նրանցից ոչ մեկն անկախ չէ Աստծո Որդու Քահանայությունից, նրանցից ոչ մեկը չի կարող մեկ պահ անգամ Տիրոջ կողմից ընդունվել, եթե հեռանան Քահանայություն կրողների և իրենց վրա նախագահողների ձայնը և խորհուրդը լսելուց: Նրանք ենթակա են Եկեղեցու զորություններին և իշխանությանը, և նրանք անկախ չեն նրանցից, ոչ էլ կարող են իրենց կազմակերպություններում որևէ իրավունք գործադրել Քահանայությունից և Եկեղեցուց անկախ:[18]

Իմ հոգու խորքում ես մեկ ցանկություն ունեմ այս ազնվազարմ գործում ներգրավված բոլոր լավ կանանց համար, ես ցանկանում եմ, որ Աստված օրհնի նրանց, պահպանի նրանց կյանքը, օգնի, որ լինեն հաստատուն և ճշմարիտ Սիոնի գործի հանդեպ

իրենց նվիրվածության մեջ, և օգնի իրենց հոգում զգալ, որ չկա ոչինչ, որ պետք է վեր դասել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց, և չկա ավելի լավ բան, քան սելեստիալ թագավորության Եկեղեցին: Եկեղեցին ունի Աստծո զորությունը, արդարակեցությունը, ճշմարտությունը և աստվածային իշխանությունը, երկրի վրա Նրա կամքը կատարելու համար:[19]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ իշխանությամբ էր կազմակերպվել Սփոփող Միությունը: Ինչպե՞ս է այն գիտելիքը, որ Սփոփող Միությունը աստվածային ուժով է հաստատվել, օգնում քույրերին կատարել իրենց պարտականությունները: Ինչպե՞ս է այդ գիտելիքը օգնում քահանայություն կրողներին աջակցել Սփոփող Միությանը:
- Ինչպե՞ս կարող են Սփոփող Միության քույրերը «իրենց ետևից տանել . . . աշխարհի կանանց» այն ամենում, ինչը գովասանքի արժանի է, վեհացնող և մաքրագործող (Տե՛ս նաև Հավատո Հանգանակներ 1.13:)
- Ինչպե՞ս կարող են Սփոփող Միության քույրերը ծառայել «իրենց կոչումներում որպես գթացող հրեշտակներ տառապյալների և ոտնահարվածների համար»: Ինչպե՞ս կարող ենք գտնել նրանց, ովքեր «անձայն են տառապում»:
- Ինչպե՞ս կարող է Սփոփող Միությունը, որպես կազմակերպություն, մխիթարել: Ինչպե՞ս կարող է այն ուսուցանել ճիշտ ապրելու սկզբունքները: Ինչպե՞ս այն կարող է ավելացնել իրենց ընտանիքների հանդեպ ունեցած պարտականությունների վերաբերյալ կանանց հասկացողությունը:
- Ինչո՞ւ են հոգևոր բաներն ամենամեծ բաները: Ինչպե՞ս կարող է «ճիշտ ուղղորդված գթությունը» և «ողորմածության հասարակ գործերը» օգնել մեզ առաջնորդել հոգիներին դեպի «հավատքի նոր բարձունքներ և հոգևոր կատարելություն»:
- Ի՞նչն է տպավորվել ձեզ մոտ Սփոփող Միության քույրերի հատկանիշներից, որոնց մասին գրված է այս գլխում:
- Ինչպե՞ս է Սփոփող Միությունը օրհնվում քահանայության կողմից ղեկավարվելով:
- Ինչպե՞ս է Սփոփող Միության «ազնվազարմ գործը» օրհնել ձեր կյանքը:

Հղումներ

1. Minutes of the General Board of the Relief Society, 17 Mar. 1914, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints, 54.
2. Minutes, 17 Mar. 1892, 233–34.
3. Minutes, 17 Mar. 1914, 51.
4. Minutes, 17 Mar. 1914, 54–55.
5. Minutes, 17 Mar. 1914, 55–56.
6. In Conference Report, Apr. 1914, 3–4.
7. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 385.
8. Minutes, 17 Mar. 1914, 49–51; paragraphing added.
9. "Epistle to the Relief Society concerning These War Times," *Relief Society Magazine,* July 1917, 364.
10. *Woman's Exponent,* May 1903, 93; paragraphing added.
11. *Woman's Exponent,* May 1903, 93; paragraphing added.
12. *Woman's Exponent,* May 1903, 93.
13. Minutes, 17 Mar. 1914, 57.
14. Minutes, 17 Mar. 1914, 58–60; paragraphing added.
15. *Gospel Doctrine,* 290.
16. Minutes, 17 Mar. 1914, 63.
17. In Conference Report, Oct. 1906, 9.
18. *Gospel Doctrine,* 383.
19. " 'Peace on Earth, Good Will to Men,' " *Relief Society Magazine,* Jan. 1915, 16.

Գթությունը մեր հոգիներում

Մենք պետք է հոգ տանենք կարիքավորների համար և բոլոր մարդկանց հանդեպ լցված լինենք բարությամբ ու սիրով։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը աղերսում էր Վերջին Օրերի Սրբերին սիրել իրենց մերձավորներին և ողորմածությամբ ու մաքուր գթությամբ հոգալ միմյանց աշխարհիկ և հոգևոր կարիքները։ «Այն պահին, որ Վերջին Օրերի Սուրբը սովորում է իր պարտականությունը, նա իմանում է, որ իր պարտքն է . . . լցված լինել բարության, սիրո, գթության և ներողամտության հոգով», սովորեցրել է նա։[1]

Նրան ևս մեծ ծառայություն էր մատուցվել, ինչպես ակնհայտ էր դարձել այն ժամանակ, երբ նա, լինելով Եկեղեցու Նախագահ, Եպիսկոպոս Չարլզ Վ. Նիբլիի հետ այցելել էր Հավայան կղզիներ։ Ավելի ուշ Եպիսկոպոս Նիբլին այսպես է նկարագրում.

«Երբ հասանք Հոնոլուլուի նավամատույց, բազմաթիվ բնիկ Սրբեր դիմավորեցին մեզ ծաղկեպսակներով, բազմատեսակ և բազմերանգ ծաղիկներով։ Մեզ նվիրեցին դրանք, իհարկե նրան ավելի շատ, քան մեկ ուրիշին։ Հայտնի Հավայան նվագախումբն իր նվագով դիմավորեց մեզ . . . Որքան հրաշալի էր տեսնել խորը արմատներ գցած սերը, նույնիսկ հուզում պատճառող կապվածությունը, որ այդ մարդիկ տածում էին նրա հանդեպ։ Այդ ամենի մեջ ես նկատեցի մի խեղճ, ծեր, կույր կնոջ, որն ինսուն տարիների ծանրության տակ երերալով մոտենում էր, ուրիշի օգնությամբ։ Նա իր ձեռքին ուներ մի քանի ընտիր բաներ, դա նրա նվերն էր։ Նա կանչում էր. «Իոսեպա, Իոսեպա»։ Տեսնելով նրան, Զոզեֆը վազեց և գրկախառնվեց նրան, պինդ սեղմեց և անընդհատ համբուրում էր, շոյում նրա գլուխն ասելով. «Մայրի՜կ, մայրի՜կ, իմ թանկագին ծեր մայրիկ»։

Եվ արցունքներով ողողված դեմքը շրջվեց դեպի ինձ, ասելով. «Չարլի, նա խնամել է ինձ, երբ հիվանդ տղա էի, և ոչ ոք չկար, որ հոգար իմ մասին: Նա տարավ ինձ իր մոտ և մայր էր ինձ համար»:

Օ՜, որքան հուզիչ էր . . . որքան գեղեցիկ էր տեսնել մի մեծ, պատվարժան մարդու, որը լցված էր սիրով և իր հանդեպ ցուցաբերված բարության քնքուշ հուշերով, հուշեր, որոնք հիսուն տարվա վաղեմություն ունեին, և որքան հրաշալի էր տեսնել մի խեղճ ծեր կնոջ, որը բերել էր իր սերն արտահայտող ընծան՝ մի քանի բանան: Դա էր ամենը, որ նա ուներ, որպեսզի դներ իր սիրելի Իոսեպայի ձեռքը»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Եղիր առատաձեռն աղքատների և անհաջողակների հանդեպ:

Մեր Տիրոջ և Վարդապետի կողմից ուսուցանված մեծ պատվիրանն է՝ սիրել Աստծուն քո ողջ սրտով, քո ողջ մտքով և քո ողջ անձով: Երկրորդն էլ դրա նման է. սիրիր քո մերձավորին քո անձի պես: «Այս երկու պատվիրանքից կախուած են բոլոր օրէնքը և մարգարէքը»: [Տե՛ս Մատթեոս ԻԲ. 37–40:] Ուստի, եկեք գթություն և ներողամտություն, սեր և ողորմածություն ցուցաբերենք միմյանց հանդեպ. և ջանքեր չխնայենք օգնելու թշվառներին, այնպես որ այրու ձայնը չբարձրանա առ Աստված՝ դժգոհելով մարդկանցից, որ սնունդի, հագուստի և ապաստանի կարիք ունի: Հետևենք, որ որբն անտուն չմնա այս մարդկանց մեջ, ոչ էլ առանց սնունդի, հագուստի, կամ իր միտքը զարգացնելու հնարավորության: Հետևենք, որ գթությունը տարածվի ձեր բոլոր գործերով և մնա ձեր սրտում, ոգեշնչելով ձեզ, որ հոգ տանեք աղքատների և տառապյալների համար, մխիթարեք նրանց, ովքեր բանտում են, եթե մխիթարության կարիք ունեն, և ծառայեք նրանց, ովքեր հիվանդ են. քանզի նա, ով մի բաժակ սառը ջուր է տալիս մարգարեին մարգարեի անունով, կստանա մարգարեի վարձքը:

Նրանք, որ այդպես են վարվում ձեր մեջ գտնվող աղքատների հանդեպ, մի օր նրանց կասվի. «Սովեցի և դուք տուիք ինձ ուտել. ծարավեցի և խմեցրիք ինձ. օտար էի, և ինձ ձեզ մոտ առաք. Մերկ էի, և հագցրիք ինձ. հիվանդ էի, և ինձ այցելեցիք. բանտի մեջ էի, և ինձ մոտ եկաք»: Եվ մենք չենք ասի. «Տե՛ր, ե՞րբ տեսանք քեզ սոված», քանզի ամեն խելամիտ մարդ գիտե, որ եթե ծառայում ես արժանի աղքատի, կգնահատվի որպես ծառայություն

մատուցված Նրան, ով նրանց հոգիների Հայրն է: [Տե՛ս Մատթեոս ԻԵ.31–45:][3]

Մեր զավակներին պետք է ուսուցանել՝ հարգել ոչ միայն իրենց հորը և մորը, իրենց եղբայրներին ու քույրերին, այլ նրանց պետք է սովորեցնել հարգել բոլոր մարդկանց, հատկապես նրանց պետք է սովորեցնել, ուղղություն տալ և դաստիարակել այնպես, որ հարգեն տարեց և թույլ մարդկանց, անհաջողակներին և աղքատներին, կարիքավորներին և նրանց, ում մարդիկ չեն կարեկցում:[4]

Մենք միշտ կարողացել ենք ինչ-որ բան տալ աղքատին, և չմերժել մեզանից հաց խնդրողին: Ես համոզված եմ, որ այսպիսի մոտեցումը հատուկ և բնորոշ է Վերջին Օրերի Սրբերին: Ես կարծում եմ, որ բոլոր Մորմոնները բարյացակամորեն են տրամադրված և առատաձեռն են աղքատների և անհաջողակների հանդեպ, և Վերջին Օրերի Սրբերի մեջ չկա մեկը, որ լսում է իմ ձայնը կամ որտեղ էլ որ նա գտնվի, չկիսվի կարիքի մեջ գտնվող իր մերձավորի հետ . . .

Ես տեսել եմ մարդկանց, ովքեր դուրս են եկել իմ դռնից լավ հաց ու կարագ իրենց ձեռքում (որը լավ կթվար ցանկացած թագավորին, քանի որ իմ տնեցիները լավ հաց ու կարագ են պատրաստում, ամենալավը, որ ինձ բախտ է վիճակվել երբևէ ուտել) և երբ դուրս են եկել դարպասից, նրանք զցել են դա փողոցում: Նրանք սնունդ չէին ցանկանում, այլ փող էին ուզում: Ինչի՞ համար: Որպեսզի գնան թղթախաղով զբաղվեն կամ սրճարանում խմեն: Իհարկե նրանք պատասխանատու են դրա համար: Մենք միայն կարող ենք դատել տեսքից և մեր ներքին ձայնի հուշումներից: Սակայն ավելի լավ է տալ շատ անարժաններին, քան դատարկ ետ դարձնել մեկ արժանի մարդու:[5]

Գթությունը կամ սերը գոյություն ունեցող մեծագույն սկզբունքն է: Եթե մենք կարողանանք օգնության ձեռք մեկնել ընկճվածներին, հուսահատվածներին և վշտահարներին, եթե կարողանանք բարձրացնել և բարելավել մարդկանց պայմանները, ապա մեր առաքելությունն է կատարել դա, դա մեր կրոնի ամենակարևոր մասն է:[6]

Սիրիր մեծավորիդ, ինչպես ինքդ քեզ:

Համեմատաբար մարդու համար հեշտ է ասել, որ հավատում է Աստծուն և Հիսուս Քրիստոսի քավող արյանը, որ հավատում է մեղքերից ապաշխարությանը, մեղքերի թողության համար

մկրտությանը և Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար ձեռնադրմանը: Հավանաբար, մարդու համար դժվար չէ նման առաջընթացը: Սակայն երբ խոսքը վերաբերում է մերձավորին սիրելուն, ինչպես իր անձը, դա հեշտ չէ: Այստեղ մենք մոտենում ենք դժվար գագաթ բարձրանալուն, որտեղ մեզ անհրաժեշտ է բոլոր մեր ուժերը լարել գագաթին հասնելու համար: Եվ մագլցելով մեր կյանքի երկար տարիների ընթացքում, ես կխիզախեմ ասել, որ կարթնանանք մի առավոտ և կտեսնենք, որ դեռ մագլցում ենք սարի ստորոտում, անգամ չենք մոտեցել գագաթին: Քանզի, իրականում ընդամենը մի քանի տղամարդիկ և կանայք, նույնիսկ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի մեջ, կարող են իսկապես ասել. «Ես սիրում եմ իմ մերձավորին իմ անձի պես»:

Մենք, որպես օրենք, չենք սիրում մեր մերձավորին մեր անձի պես: [Ինչ-որ] մեկը մի անգամ ասել է. «Իմ մայրիկի որդիներից ես ամենաշատը ինձ էի սիրում»: Նույնը կարող ենք ասել նաև երկրի վրա ապրող Աստծո զավակների համար: Թեպետ մեր Հայրը շատ զավակներ ունի, և մենք արյունակիցներ ենք, և հավանաբար, մեկ համայնքի անդամներ, մեկ հավատք ունենք, հավատալով մեկ Աստծու և մեկ Տեր Հիսուս Քրիստոսին, սակայն մեզանից յուրաքանչյուրը ամենաշատը իրեն է սիրում: Այս զգացումը դրսևորվում է մեր առօրյա կյանքում, մեր ամենժամյա շփումներում: Այն շատ հաճախ դրսևորվում է անգամ ամուսնու և կնոջ, հաճախ հոր և երեխայի հարաբերություններում, և շատ տարածված է երեխաների մեջ: Արդյո՞ք սա Քրիստոնեություն է: Արդյո՞ք սա Հիսուս Քրիստոսի վարդապետությունն է: Դա չի համընկնում գրքերում իմ կարդացածի և կյանքի ու փրկության սկզբունքների մասին ունեցած իմ հասկացողության հետ: Սուրբ գրությունները ասում են մեզ, որ մենք պետք է սիրո մեջ իրարից առաջ անցնենք, որ պետք է հրաժարվենք մեր հանգստությունից, մեր հարմարավետությունից, մեր ցանկություններից կամ մեր երջանկությունից հօգուտ մեր մերձավորների ցանկությունների, հանգստության և երջանկության, չխոսելով մեր հարազատների և սիրելիների մասին:[7]

Ինչպես սիրենք մեր մերձավորին, երբ մեզ ենք սիրում: Դա ամենահասարակ բանն է աշխարհում. սակայն շատ շատերն են նսասեր և սահմանափակվում են իրենք իրենցով, նրանց հասանելի չէ զգացումների այն մեծությունը, որը հասնում է մերձավորներին՝ հոգալով նրանց օգուտի և բարօրության համար. և նրանք սահմանափակվում են իրենց անձնական և բացառիկ օգուտով,

օրհնությամբ և բարօրությամբ, և ես լսում եմ, թե ինչպես են ասում. «Դե, թող իմ մերձավորն ինքն իր մասին հոգա»: Սա չէ այն հոգին, որ պետք է բնորոշի Վերջին Օրերի Սրբին:[8]

Երբ մենք տեսնում ենք մեր եղբայրների կամ քույրերի մոտ անհաջողություններ, թուլություններ կամ սխալներ, լինեն դրանք իրական, թե երևակայական, դրսում տարածելու և մեր ընկերների և մտերիմների ականջը լցնելու փոխարեն, երբ էլ որ հանդիպենք նրանց, բավականաչափ գթություն և ընկերասիրություն կցուցաբերենք, . . . եթե գնանք մեր ընկերների մոտ, ովքեր տհաճ են մեզ համար կամ համոզված ենք, որ նրանք սխալական են, և ցույց տանք, թե ինչ ենք զգում ու մտածում այդ առումով և կատարենք դա օգնելու նպատակով, որպեսզի հաղթահարեն իրենց թուլությունները, դրանով մենք մեզ և նրանց շատ բարիք կբերենք: Մենք չենք գնա նրանց մոտ դատապարտության և դժգոհության ոգով, որպեսզի վիրավորենք նրանց զգացումները և թշնամությամբ լցնենք նրանց սիրտը:[9]

Ես խորհուրդ կտայի, որ մենք սովորենք սիրել միմյանց, և ապա ընկերությունը ճշմարիտ ու քաղցր կլինի: Ինչ-որ մեկն ասել է, որ «մենք կարող ենք տալ առանց սիրելու, սակայն մենք չենք կարող սիրել առանց տալու»: Այսպես ենք մենք ցանկանում սիրել միմյանց, և ինչպես Տերն է ասել Պետրոսին, մենք պետք է արածեցնենք նրա գառներին [տե՛ս Հովհաննես ԻԱ.15–17], զորացնենք մեկս մյուսին: Մենք պետք է պաշտպանենք և աջակցենք մեկս մյուսին, ոչ թե կործանենք, ցածրացնենք միմյանց կամ էլ կենտրոնանանք մեր մերձավորների ու եղբայրների թուլությունների կամ թերությունների վրա, որոնք տեսնում ենք բոլոր մարդկանց մեջ: Փոխարենը ավելի լավ կլինի, եթե մենք տեսնենք մի արժանիք, գովաբանենք այն, և եթե հնարավոր է փչենք, որ կրակը բոցավառվի, որը լույս, կյանք, էներգիա ու արիություն կպարգևի բոլոր նրանց, ովքեր կտեսնեն այն և հատկապես նրանց, ովքեր սխալի ու խավարի մեջ են, որպեսզի հնարավոր լինի նրանց դեպի լույս բերել:[10]

Իմ կրոնը սովորեցնում է ինձ սիրել բոլոր մարդկանց: Որքան էլ որ ես արհամարհեմ նրանց գործերը, կամ դատապարտեմ նրանց ամբարշտությունը և խավար միտքը, այնուամենայնիվ նրանք ստեղծվել են Իմ Հոր և Աստծո պատկերով և նմանությամբ, նրանք իմ եղբայրներն ու քույրերն են: Ինձանից պահանջվում է սիրել իմ մերձավորին իմ անձի պես: Հնարավոր է, ես դեռ չեմ հասել կատարելության նման բարձր չափանիշի, հնարավոր

է. իմ մեջ դեռևս նստած է այդ եսասիրությունը, որն ինձ ավելի բարձր է դասում իմ մերձավորից, բայց ես նպատակ ունեմ ճիշտ վերաբերվել իմ ընկերների հետ, քանի որ Ավետարանն է դա պահանջում:[11]

Աստված բոլոր ջանքերը գործադրել է, որպեսզի այս ժամանակահատվածում հայտնի մեզ Ավետարանի ամբողջությունը, որը . . . ուսուցանում է մարդկանց անձնազոհություն՝ ի բարօրություն ուրիշների, և որը ուսուցանում է մեզ, որ ուրիշների հանդեպ բարին գործելով, մենք բարիք ենք գործում մեզ համար . . . Շատ շատերն են այս աշխարհում կապված իրենք իրենց և այնքան հոգով սահմանափակ են, որ անգամ չեն կամենում պայքարել ինչ-որ մեկի համար, բացի իրենցից . . . Մարդկության պարտականությունն է, ինչպես ես եմ հասկանում մեր ստացած սուրբ Ավետարանի լույսի ներքո, պաշտպանել բոլոր տղամարդկանց ու կանանց անմեղությունը, առաքինությունը, պատիվը և իրավունքները այնպիսի եռանդով, ինչպես մենք կպաշտպանեինք մերը:[12]

Աստված պաշարներ է ստեղծել Իր Եկեղեցում կարիքավորների մասին հոգ տանելու համար:

Աստված Իր Եկեղեցու ողջ կառուցվածքում պայմաններ է ստեղծել, որ ամեն մի հավատարիմ հոգի հոգատարություն և աջակցություն ստանա կարիքի ժամանակ:[13]

Աստված պատվիրել է իր ժողովրդին՝ հիշել աղքատներին և միջոցներ ձեռք առնել նրանց օժանդակելու համար . . . Մենք չենք հավատում, որ գթությունը բիզնես է, այլ փոխարենը մենք ապավինում ենք փոխադարձ օգնությանը: Բացի այն որ ավետարանը պատգամում է հավատք և ապաշխարություն, այն պահանջում է նաև աշխարհիկ կարիքների բավարարում: Այսպիսով, Տերը հայտնել է մարդկանց աշխարհիկ փրկության ծրագրերը:

Աղքատներին օգնելու համար հաստատվել է ծոմ, որի գլխավոր նպատակն է, մյուս բաներից բացի, աղքատներին սնունդով և այլ անհրաժեշտ իրերով ապահովելը, մինչև որ կարողանան իրենք իրենց համար հոգալ: Քանզի պարզ է, որ բավարար չեն այն ծրագրերը, որոնք միայն նախատեսված են ներկա դժվարությունները թեթևացնելու համար: Եկեղեցին միշտ ձգտել է իր անդամներին դնել իրենք իրենց օգնելու ուղղու վրա, քան օգտագործել բարեգործական հաստատությունների եղանակը, որոնք միայն ընթացիկ կարիքներն են բավարարում: Երբ նման ձևով

օգնելու հնարավորություն այնս չկա կամ օգնությունը մերժվել է, սակայն ավելի շատ մարդկանց է անհրաժեշտ ապահովել, այդ ժամանակ աղքատները դառնում են մուրացկաններ, քանի որ նրանց սխալ սկզբունք են սովորեցրել՝ հույսը դնել ուրիշների օգնության վրա, քան ապավինել իրենց ուժերին . . . Հետևաբար, գթության մեր գաղափարը կայանում է նրանում, որ թեթևացվեն ընթացիկ պահանջները, իսկ ապա դնել աղքատներին իրենք իրենց օգնելու ուղղու վրա, այնպես որ իրենք էլ կարողանան օգնել ուրիշներին: Ֆինանսների բաշխումը վստահվում է իմաստուն մարդկանց, հիմնականում Եկեղեցու եպիսկոպոսներին, որոնց պարտականությունն է հոգ տանել աղքատների համար:

Մենք աշխարհի եկեղեցիներին ենք ներկայացնում Տիրոջ ծոմի օրվա արդար կարգը՝ որպես իմաստուն և համակարգված ձև աղքատներին օգնելու համար . . . Մարդկանց համար դժվար չէ կատարել այդ պահանջները՝ յուրաքանչյուր ամսվա մեջ մեկ օր չուտել և չխմել, և աղքատների համար նվիրաբերել այն, ինչը պետք է սպառվեր այդ օրը, և նույնիսկ ավելին, ինչպես իրենք են կամենում: Տերն է հաստատել այս օրենքը, այն պարզ է և կատարյալ, պատճառաբանված ու խելամիտ: Այն ոչ միայն կլուծի աղքատներին բավարարելու հարցը, այլև կլինի հոգուտ նրանց, ովքեր կպահեն այդ օրենքը: Այն . . . մարմինը կենթարկի հոգուն և, այդպիսով, կնպաստի Սուրբ Հոգու հետ հաղորդակցմանը, և հոգևոր ուժով ու զորությամբ կապահովի այս ժողովրդին, որի կարիքը նրանք այնքան ունեն: Քանի որ ծոմապահությունը պետք է միշտ ուղեկցվի աղոթքով, այս օրենքը մարդկանց էլ ավելի կմոտեցնի Աստծուն, և առնվազն ամիսը մեկ անգամ նրանց միտքը կշեղի աշխարհիկ գործերի խելագար բուռն ընթացքից և նրանք հնարավորություն կունենան անմիջապես շփվել գործնական, մաքուր և անբիծ կրոնի հետ՝ այցելել որբերին և այրիներին, իրենց աշխարհի մեղքերից անարատ պահել [տե՛ս Հակոբոս Ա. 27]:[14]

Ակնհայտ է, որ ընդունելի ծոմն իր հետ բերում է Աստծո և մարդու հանդեպ սիրո ճշմարիտ ոգի, և ծոմի նպատակն է պահպանել սրտի կատարյալ մաքրություն և պարզ մտադրություն, ծոմ, որը նվիրված կլինի Աստծուն իր ամբողջական և ամենախորը իմաստով, քանզի նման ծոմը դարման կլինի գործով կամ մտքով թույլ տրված ցանկացած սխալի համար. փառամոլությունը կանհետանա, դրան կփոխարինի մեր ընկերների հանդեպ սերը, և մենք ուրախությամբ կօգնենք աղքատներին ու կարիքավորներին:[15]

Աստվածաշունչը դարձնում է մեզ անեսասեր և պատրաստակամ զոհաբերելու մեր ցանկությունները՝ ի բարօրություն ուրիշների։

Մենք հորդորում և աղերսում ենք մեր եղբայրներին ու քույրերին Հիսուս Քրիստոսի ավետարանով, որ ձեզանից յուրաքանչյուրը ոչ միայն պատվի իրեն՝ պատշաճ կյանք վարելով, այլ նաև պատվի, սիրի և գթառատ լինի իր մերձավորների հանդեպ։[16]

Ես կարծում եմ, որ մենք պետք է ապրենք մեր հավատքի համաձայն։ Մենք պետք է պահենք Աստծո պատվիրանները։ Մենք պետք է ձեռք բերենք և վայելենք ավետարանի ոգին մեր սրտերում և մեր կյանքում պետք է կրենք հոգու պտուղները, որոնք են հավատք, հույս և գթություն, սեր, խոնարհություն և միմյանց հանդեպ ներողամտություն, և հնարավորինս խուսափենք մեղադրելու ոգուց, վեճից, որը դառնում է կռվի, խառնակության և մարդկանց մեջ բաժանումների պատճառ և առաջ է բերում ատելության հոգին։ Օ՜, հեռու վանենք ատելությունը ձեզանից։ Ատելությունը, որը տեղ է գտել մեր սրտերում, կամ նախանձն ու խանդը, հազար անգամ ավելի շատ կվնասեն նրանց, ովքեր թույլ կտան, որ դրանք մնան իրենց հոգում և չարացնեն իրենց մտքերը, քան ուրիշներին։ Ուրեմն, եկեք մեր սրտերից և մտքերից հեռու վանենք նման բաները։ Եկեք արդար կյանքով ապրենք, թող որ ամուսինը սիրի իր կնոջը և հավատարիմ ու բարի լինի նրա հանդեպ, իսկ կինը թող հավատարիմ ու բարի լինի իր ամուսնու հանդեպ, և թող նրանք հավատարիմ, սիրող ու հոգատար ծնողներ լինեն իրենց զավակների համար, թող որ նրանք միավորվեն որպես ընտանեկան միավոր Եկեղեցում և որքան որ դա տարածվի Սիոնի սահմաններից դուրս, մենք կունենանք հազարամյա թագավորություն մեր մեջ և ամենուր երկրի վրա կլինի խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն։[17]

Ավետարանի նպատակն է, որ հեռացնի մեզանից այն ամենը, ինչը անհամատեղելի է Աստծո և փրկության ծրագրի հետ, որը նա հայտնել է մարդկանց։ Այն նախատեսված է, որ սովորեցնի մեզ ապրել այնպես, որ վայելենք ճշմարտության լույսի լիությունը, և հասկանանք Աստծո նպատակները, և կարողանանք ապրել այնքան մոտ Նրան, որ Նրա ցանկությունների հետ ներդաշնակության մեջ լինենք։ Ավետարանի սկզբունքները նպատակ ունեն մեզ դարձնել անեսասեր, ընդլայնել մեր միտքը, մեծացնել բարիք գործելու մեր ցանկությունը, մեր սրտից հեռացնել ատելությունը, չարությունը, նախանձը և զայրույթը, և դարձնեն մեզ խաղաղ,

հնազանդ, ուսուցանվող և պատրաստակամ զոհաբերելու մեր ցանկությունները և, հնարավոր է, նաև մեր շահերը մեր մերձավորների բարօրության և Աստծո Թագավորության առաջադիմության համար: Մարդը, որը չի կարող զոհաբերել իր անձնական ցանկությունները, որը չի կարող իր սրտում ասել. «Հայր, քո կամքը լինի, և ոչ թե իմը», իսկապես և լիովին դարձի եկած Աստծո զավակ չէ, նա դեռևս ինչ-որ չափով գտնվում է սխալի իշխանության տակ և խավարի ստվերում, որը պատել է աշխարհը՝ թաքցնելով Աստծուն մարդկանց ներկայությունից:[18]

Ուսումնական առաջարկություններ

- Որո՞նք են երկու ամենամեծ պատվիրանները: (Տե՛ս նաև Մատթեոս ԻԲ.22:37–40:) Ինչո՞ւ են այդ պատվիրաններն այդքան կարևոր:
- Ի՞նչ է գթությունը: (Տե՛ս նաև Մորոնի 7.45–48:) Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի գթությունը տարածվի մեր գործերով և մնա մեր սրտերում: Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «գթությունը երբեք չի խափանվում»: (Տե՛ս Մորոնի 7.46:)
- Ո՞րն է մեր պարտականությունը նրանց հանդեպ, ովքեր անհաջողակ են, կարիքավոր են կամ «ում մարդիկ չեն կարեկցում»:
- Ինչպե՞ս կարող ենք ավելացնել մեր ունակությունը, որպեսզի իրոք ասենք. «Ես սիրում եմ իմ մերձավորին իմ անձի պես»: Ինչպե՞ս պետք է մենք վարվենք, երբ թերություններ ենք նկատում ուրիշների մեջ: (Տե՛ս նաև Ղուկաս Զ.41–42:) Ինչպե՞ս կարող ենք մեծարել ուրիշների արժանիքները:
- Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս ամեն ամիս ծոմ պահելու և ծոմի նվիրատվություններ կատարելու արդյունքում: Աղոթքով խորհեք, թե ինչպես կարող եք օգնել Եկեղեցուն կարիքավորների մասին հոգ տանելու գործում, օրինակ փնտրելով նոր կամ միայնակ անդամներին, կամավոր օգնելով համայնքում, ավելացնելով ծոմի նվիրատվությունները կամ մասնակցելով բարօրության և մարդասիրական օգնության ծրագրերին:
- Որո՞նք են «մեր կյանքում հոգու պտուղները» (Տե՛ս նաև Գաղատացիս Ե.22–23:) Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս մեզ և ուրիշներին, երբ մենք պատրաստակամորեն ենք զոհաբերում մեր ցանկությունները ուրիշների բարօրության համար:

- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ավետարանը «մեր սրտերից հեռացնում ատելությունը, չարությունը, նախանձը և զայրույթը» և օգնում մեզ գթառատ լինել ուրիշների հանդեպ։

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1915, 4.
2. Charles W. Nibley, "Reminiscences," in *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 519–20.
3. *Deseret Weekly,* 19 Aug. 1893, 284.
4. *Gospel Doctrine,* 282–83.
5. In Conference Report, Apr. 1898, 47–48; paragraphing added.
6. In Conference Report, Apr. 1917, 4.
7. *Deseret News: Semi-Weekly,* 31 Mar. 1896, 1; paragraphing added.
8. *Gospel Doctrine,* 270.
9. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:91.
10. In *Messages of the First Presidency,* 5:93.
11. "The Gospel in Precept and Example," *Millennial Star,* 15 Mar. 1906, 162.
12. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 11 Nov. 1897, 706–7.
13. In Conference Report, Apr. 1915, 7.
14. *Gospel Doctrine,* 236–38; paragraphing altered.
15. "Editor's Table," *Improvement Era,* Dec. 1902, 147.
16. In *Messages of the First Presidency,* 5:53.
17. In Conference Report, Oct. 1916, 8.
18. "Blind Obedience and Tithing," *Millennial Star,* 20 Jan. 1893, 79.

Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ստանալը

Մեզ համար անհրաժեշտ է մեր սրտերում ունենալ Հիսուս Քրիստոսի մասին վկայություն և կատարել այն ամենը, ինչ Ինքն է պատվիրել:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Իր ծառայության ընթացքում Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը վկայել է, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին: Նա ուսուցանել է, որ Աստծո բոլոր որդիներն ու դուստրերը կարող են ստանալ այսպիսի անձնական հայտնություն՝ Հոգու այս պարգևը:

«Երբ պատանի էի և նոր էի սկսել իմ ծառայությունը»,- պատմում է նա,- «Ես հաճախ էի դուրս գալիս տնից և խնդրում Տիրոջն ինձ ինչ-որ հրաշքներ ցույց տալ, որ ես վկայություն ստանայի: Սակայն Տերը ետ էր պահում հրաշքներն ինձանից և ցույց էր տալիս ճշմարտությունը՝ տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ, մինչև ես իմացա ճշմարտությունը իմ մազերի ծայրերից մինչև ոտքերիս մատները, և մինչև որ կասկածն ու վախը լիովին հեռացան ինձանից: Դրա համար Նա հրեշտակ չուղարկեց երկնքից, ոչ էլ հրեշտակապետի փողով խոսեց: Կենդանի Աստծո Հոգու մեղմ ու բարակ ձայնի հուշումներով նա տվեց ինձ վկայություն, որն ունեմ: Եվ այս սկզբունքով ու զորությամբ նա կտա բոլոր մարդկանց զավակներին ճշմարտության գիտելիքը, որը կմնա նրանց հետ, և նրանք կիմանան ճշմարտությունը, ինչպես Աստված գիտի, և կանեն հոր կամքը, ինչպես Քրիստոսն արեց»:[1]

Նախագահ Սմիթը վկայել է. «Ես ստացել եմ Աստծո Հոգու վկայությունն իմ սրտում, որը գերազանցում է բոլոր մյուս վկայությունները, քանզի այն վկայում է ինձ, իմ հոգուն իմ Քավիչի՝ Հիսուս Քրիստոսի գոյության մասին: Ես գիտեմ, որ նա ապրում է, և որ վերջին օրը նա կկանգնի երկրի վրա, որ նա կգա այն մարդկանց մոտ, ովքեր պատրաստ կլինեն դիմավորելու Նրան»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Հիսուս Քրիստոսի մասին վկայությունը գալիս է որպես Աստծո փառահեղ պարգև:

Ես գտնում եմ, որ Ավետարանի յուրաքանչյուր սկզբունք, որ մենք ստացել ենք, ինքնին Աստծո փառահեղ պարգև է մարդկանց զավակների համար: Իմաստության պարգևը, հասկացողության պարգևը, մարգարեության պարգևը, լեզուների պարգևը, բժշկության պարգևը, վկայության պարգևը, գիտելիքի պարգևը, այս ամենը նախատեսված են Ամենազորի կողմից մեզ համար, եթե հնազանդ լինենք կյանքի և փրկության սկզբունքներին:[3]

Տղամարդիկ չեն ստանում . . . Կենդանի Աստծո Հոգու վկայության պարգևն իրենց սրտերում, [եթե] չեն փնտրում այն: Սկզբունքը հետևյալն է. Խնդրեցեք և կտրուի ձեզ. որոնեցեք և կգտնեք, դուռը թակեցեք և կբացուի ձեզ [տե՛ս Մատթեոս Է. 7–8]. և եթե իմաստություն եք ցանկանում, խնդրեք, ինչպես Սողոմոնը խնդրեց. եթե գիտելիք և հոգու վկայությունն եք ցանկանում ունենալ ձեր սրտերում, լրջորեն փնտրեք այն:[4]

[Վկայությունը] գալիս է . . . որովհետև ներդաշնակության մեջ ենք դնում մեզ Աստծո և մարդու հաղորդակցման սկզբունքի հետ: Մենք հավատում ենք, ապաշխարում և զղջում ենք մեր կատարած մեղքերի համար, մենք կատարում ենք այն, ինչ Տերն է պահանջում, որպեսզի մեր մեղքերին թողություն ստանանք, և այդպիսով ստանում ենք Սուրբ Հոգու պարգևը: Մեր միտքը համահունչ է դառնում Աստծո Հոգուն և այն եղանակին, որն Աստված հաստատել է մարդկանց զավակներին Իր միտքը հայտնելու համար:

Արդ, հրաշալի բան է մարդու համար իր սրտում ստանալ Աստծո Որդու աստվածային առաքելության և Մարգարե Զոզեֆ Սմիթի աստվածային առաքելության վերաբերյալ վկայություն. . . Մեր հոգում մենք զգում ենք սկզբունքների ճշմարտացի լինելը, որոնք վերականգնվել են Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով, և մենք զգում ենք դա, քանի որ ինչ-որ չափով հասել ենք Հոգու հետ հաղորդակցման վիճակին և լսում ենք ձայնը, որը խոսում է մեզ հետ: Աստծո Հոգին խոսում է մեր հոգու հետ: Տերը շատ հաճախ չի հաղորդակցվում մեզ հետ մեր բնական զգայարանների միջոցով, բայց երբ Նա խոսում է, Նա խոսում է մեր անմահ մասի հետ. մարդու հոգին ստանում է հաղորդակցությունները, որ Տերն ուղարկում է Իր զավակներին, ուստի մենք պետք է ներդաշնակության մեջ լինենք դրանք ստանալու համար:[5]

Մենք պետք է հայտնությամբ ստանանք [վկայության] այս լույսը, մենք չենք կարող այն ստանալ մեր իմաստությամբ: Աստված կտա մեզ գիտելիք ու հասկացողություն, նա կառաջնորդի մեզ ճշմարտության ուղիով, եթե մենք մեր ողջ հույսը դնենք նրա վրա և ոչ թե՝ մարդու:[6]

Աստծո պարգևը, եթե անտեսվի կամ անարժան ձևով օգտագործվի, ժամանակի ընթացքում ետ կվերցվի. ճշմարտության մասին վկայությունը չի մնա նրա հետ, ով ստանալով այդ սրբազան պարգևը, չի օգտագործում այն անձնական և համընդհանուր զարգացման համար:[7]

Այս անտարակույս հավաստիացումը, որը ձեռք է բերվում հավերժական կյանքի սկզբունքներին հնազանդվելով և, եթե կիրառվում է, շարունակ հաստատվում է, այսպես ասած, «տող առ տող, ցուցում առ ցուցում» Սուրբ Հոգու հայտնություններով, որը բանականության, ուրախության ու երջանկության հարատև ու անսպառ աղբյուր է, Աստծուն մոտեցնելով նրան, ով ունի այդ Հոգին, և ի վերջո դարձնելով նրան իր Արարչի նման:[8]

Սուրբ Հոգին վկայում է մեր սրտում, որ Հիսուսը Քրիստոսն է:

Հիսուսը . . . մեր նախակարապետն է, մեր օրինակը: Մենք պետք է գնանք նրա նախանշած ճանապարհով, եթե ակնկալում ենք երբևէ ապրել և թագադրվել նրա թագավորությունում: Մենք պետք է հնազանդվենք և մեր վստահությունը դնենք Նրա վրա, իմանալով որ նա է աշխարհի Փրկիչը:

Ինձ համար դժվար չէ հավատալ դրան, քանի որ ես կարդում եմ Աստվածաշունչը, որտեղ գտնում եմ նրա գործերի, խոսքերի, ցուցումների ու օրինակների մասին պատմող պատմություններ: Եվ ես չեմ հավատում, որ որևէ արդարամիտ, ազնիվ տղամարդ կամ կին, որն ունի սովորական բանականություն, կարող է Նոր Կտակարանը և դրանում տրված Փրկչի վկայությունները կարդալ առանց ներըմբռնողական զգացումի, որ Նա է Այն, որ պետք է լիներ: Քանզի յուրաքանչյուր արդարամիտ, ազնիվ մարդ շատ թե քիչ ունի Սուրբ Հոգուց, և այդ սուրբ սուրհանդակն է մարդկանց սրտերում բերում Աստծո խոսքի մասին վկայություն, և երբ բոլոր նրանք սրտի անկեղծությամբ և հոգու հեզությամբ են կարդում այդ ոգեշնչված գրվածքները, ազատ լինելով ավանդույթներից և սխալ կրթությունից եկող նախապաշարմունքներից և կեղծ գաղափարներից, Տիրոջ Հոգին անվրեպ լեզվով կվկայի, ինչպես

այրող հավաստիացում: Ուստի, ես հավատում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է, Փրկիչը, Հոր Միածինը, և սա նույպես Աստվածաշունչը կարդալու շնորհիվ:

Բայց արդյո՞ք այս հավաստիացման ու գիտելիքի համար մենք կախված ենք միայն Աստվածաշնչից: Ոչ, փառք Տիրոջը միայն Աստվածաշնչից չենք կախված: Ուրիշ ի՞նչ ունենք, որ մեզ հաղորդի այս գիտելիքը և հաստատի այս վկայությունը: Մենք ունենք Մորմոնի Գիրքը՝ «Եփրեմի փայտը», որը եկել է մեզ մոտ Աստծո պարգևով և զորությամբ, որը նույնպես վկայում է Նրա մասին, և որը հայտնում է Նրա հարությունից հետո այս կիսագնդի բնակիչների մեջ ունեցած Նրա առաքելության և կատարած գործերի մասին, երբ նա եկավ այս երկիր՝ այցելելու Իր «ուրիշ ոչխարներին», միավորելու նրանց մի հոտի մեջ, որ նրանք նույնպես կարողանային լինել Իր ոչխարները, իսկ Նա նրանց մեծ հովիվը: Այդ Գրքի մեջ եղած հավաստիացմանը զուգահեռ մենք ունենք նրա վկայությունը, ով թարգմանեց այդ գիրքը, ով կնքեց իր վկայությունն իր արյամբ. նաև ուրիշ վկաների վկայությունները, ովքեր վկայել էին ամբողջ աշխարհին, որ տեսել են թիթեղները և դրանց վրայի փորագրությունները, որոնցից էլ Գիրքը թարգմանվել էր. . .

Այսպիսով, մենք ունենք երկու վկաներ՝ Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը, որոնք երկուսն էլ միևնույն ճշմարտության մասին են վկայում, որ Հիսուսը Քրիստոսն էր, որ նա մեռավ և կրկին ապրում է, կոտրելով մահվան կապանքները և հաղթելով գերեզմանին: Այս վերջին լրացուցիչ ապացույցը, որ ունեն այս փաստի վերաբերյալ Վերջին Օրերի Սրբերը, վեր է այն ամենից, ինչ ունի քրիստոնյա աշխարհը, ովքեր չեն հավատում Մորմոնի Գրքին:

Բայց արդյո՞ք սա է ամենը: Ոչ: Մենք ունենք մեկ այլ գիրք՝ Վարդապետություն և Ուխտերը, որը հայտնություններ է պարունակում Աստծուց՝ տրված Զոզեֆ Սմիթ մարգարեի միջոցով, որը միևնույն ժամանակաշրջանում ապրեց մեզ հետ: Դրանք Քրիստոսի խոսքերն են, որոնք հայտարարում են, թե ինքը այն նույնն է, որը եկավ Հրեաների մեջ, որը խաչ բարձրացվեց, դրվեց գերեզմանի մեջ, ջարդեց մահվան կապանքները և դուրս եկավ գերեզմանից . . . Այդպիսով մենք ունենք մեկ այլ վկայություն այս աստվածային ճշմարտության վերաբերյալ. ուստի, մենք ունենք երեք վկաներ: Մեզ ասվել է, որ երկու կամ երեք վկաների բերանով բոլոր բաները կհաստատվեն. և երկու կամ երեք վկաների վկայությամբ մենք կարդարացվենք կամ կդատապարտվենք:

Բայց կբավարարե՞ր սա ինձ: Հնարավոր է, եթե չկարողանայի հետագայում էլ լույս կամ գիտություն ձեռք բերել: Սակայն երբ ավելի շատ լույս է գալիս, և ես արտոնություն ունեմ ունենալ այն, ես չեմ կարող քչով բավարարվել: Մենք չենք կարող բավարարվել կամ երջանիկ լինել ապագայում, եթե չստանանք արդարների համար պատրաստված ամբողջ լույսն ու օրհնությունները. . .

Մեզ տրված է, որ ինքներս իմանանք այս բաները: Աստված ասել է, որ ցույց կտա այս բաները մեզ. և այս նպատակով Սուրբ Հոգին տրվել է նրանց, ովքեր արժանի են դրան իրենց հնազանդությամբ, որը վկայում է Հոր և Որդու մասին, և Աստծուց վերցնելով բաները ցույց է տալիս մարդուն: Ճշմարտության վերաբերյալ համոզմունքները, որոնք հնարավոր է նախկինում ունեցել ենք, Սուրբ Հոգին հաստատում է՝ տալով մեզ բացարձակ վստահություն դրանց ճշտմարտացի լինելու վերաբերյալ, և որի շնորհիվ մենք ձեռք ենք բերում անձնական գիտելիք, ոչ թե լինելով մեկը, որին ասվում է, այլ մեկը, որը տեսել է, զգացել, լսել և ինքնուրույն գիտի:

Ահա, կանգնած ձեր առջև, իմ եղբայրներ և քույրեր, որպես խոնարհ գործիք Աստծո ձեռքում, ես վկայում եմ, ոչ թե գիտելիքի հիման վրա, որ հնարավոր է ստացել եմ գրքերից, այլ ինձ տրված Աստծո հայտնություններից, որ Հիսուսը Քրիստոսն է: Ես գիտեմ, որ Քավիչս ապրում է. ես գիտեմ, որ թեև որդերը կուտեն մարմինս, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն, և ես ոչ թե ուրիշի, այլ ինձ համար եմ տեսնելու նրան: Այս լույսը եկել է ինձ մոտ, և այն իմ սրտում է ու մտքում, և նրա մասին եմ ես վկայում, և նրանով ու նրա շնորհիվ եմ ես վկայում, և ես գիտեմ, թե ինչի մասին եմ խոսում. . .

Արդյո՞ք ես միայնակ եմ: Ոչ, այսօր բյուրավորներ կարող են այս վկայությունը բերել: Նրանք նույնպես ինքնուրույն գիտեն, Աստված ցույց է տվել նրանց, նրանք ստացել են Սուրբ Հոգին, որն այդ բաների մասին վկայել է իրենց սրտում, և նրանք նույնպես կախված չեն գրքերից, ոչ էլ ուրիշի խոսքերից, քանզի նրանք իրենք են Աստծուց գիտելիք ստացել, և գիտեն, ինչպես նա գիտի և տեսնում են, ինչպես նա է տեսնում այդ պարզ ու անգին բաները:[9]

Հիսուս Քրիստոսի մասին վկայությունը ոգեշնչում է մեզ անել այն, ինչ Նա է պատվիրել:

Մենք խոսում ենք Փրկչի, Աստծո Որդու՝ Հիսուսի մասին, և Նրանում ենք տեսնում ապահովություն ու ամրություն: Մենք

գտնվում ենք հավերժական ճշմարտության հիմքի վրա, երբ Քրիստոսի հոգին մեր սրտում է:

Ես ցանկանում եմ ասել իմ եղբայրներին ու քույրերին, որ եթե ողջ աշխարհում կա մեկը, որ ինձանից ավելի խորը և ավելի ուժգին է զգացել Քրիստոսի սերն իր հոգում, ես կցանկանայի տեսնել նրան, ես կցանկանայի շփվել նման մարդու հետ: Քրիստոսն իրոք իմ հոգու Փրկիչն է, մարդկության Փրկիչը: Նա զոհաբերել է Իր կյանքը մեզ համար, որպեսզի մենք կարողանանք փրկվել, նա կոտրել է մահվան կապանքները, մարտահրավեր նետել գերեզմանին, և առաջարկել հետևել իրեն: Նա մահից կյանք է եկել կրկին, նա հայտարարել է, որ ինքն է փրկության ճանապարհը, աշխարհի լույսն ու կյանքը: Եվ ես իմ ողջ սրտով հավատում եմ դրան: Ես ոչ միայն հավատում եմ դրան, այլ ինչպես գիտեմ, որ արևը շողում է, այդպես էլ գիտեմ, որ Նրա հանդեպ հավատը ոգեշնչում է ի բարին, ոչ թե ի չարը, և ինչպես գիտեմ, որ նրա հոգին մղում է դեպի կյանքի մաքրությունը, հարգանքը, շիտակությունը, ազնվությունը, արդարակեցությունը, և ոչ թե դեպի չարը, այնպես էլ գիտեմ ինձ համար մատչելի բոլոր ապացույցներով, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, մարդկության Փրկիչը:

Սակայն այդ ամենի հետ մենկտեղ, իմ սրտում ունեցած այս համոզմամբ, այս գիտելիքով, որ ստացել եմ, ի՞նչ օգուտ կունենամ ես, եթե կանգնած մնամ այս կետում: Ի՞նչ օգուտ կտա ինձ այս գիտելիքը: Ի՞նչ օգուտ կտա միայն այս գիտելիքը: Դա կտա այն, որ իմ սրտում ստանալով այդ վկայությունը, իմ հոգում ստանալով կենդանի Աստծո Հոգու վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, ես կանգ առնեմ այդտեղ և այլևս առաջ չգնամ, միայն այդ վկայությունը իմ հոգում կավելանա իմ հավերժական նզովքին: Ինչո՞ւ: Որովհետև մեր պարտականությունն է ոչ միայն իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է, այլ նրա հոգու ազդեցությունը պահել մեր հոգում: Մեզ համար անհրաժեշտ է ոչ միայն ունենալ նրա վկայությունը մեր սրտում, այլ կատարենք այն, ինչ նա է պատվիրել է, և կատարենք արդար գործեր, որ նա է արել, որպեսզի մենք կարողանանք հասնել վեհացմանը, որը Նա պահել է իր զավակների համար, ովքեր ոչ միայն հավատում են, այլև արդար գործեր են կատարում: Իսկ նրանք, ովքեր այդպես չեն վարվում, անկասկած կձախողվեն: «Ոչ թե ամեն ինձ Տեր, Տեր ասողը կմտնէ երկնքի արքայությունը. այլ նա որ *կատարում է* իմ Հոր կամքը, որ երկնքումն է»: [Մատթէոս Է.21:]

Փրկիչն ասել է. «Շատերը կասեն ինձ այն օրը, Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարեացանք, և քո անունովը դևեր հանեցինք,

և քո անունովը շատ զորություններ գործեցինք։ Եվ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց, թե երբեք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դեն գնացեք, ով անօրինություն գործողներ»։ [Մատթեոս Է.22–23։] Իսկ ինչո՞ւ։ Որովհետև ձեր շրթունքներով հավաստել եք, որ սիրում եք ինձ, ձեր բերանով կամ ձեր խոսքերով հավաստել եք, որ ընդունում եք ինձ, բայց չեք արել այն, ինչ պատվիրել եմ ձեզ. դուք չեք ապաշխարել ձեր մեղքերից, դուք չեք սիրել Աստծուն ձեր ողջ սրտով, մտքով և անձով, դուք չեք սիրել ձեր մերձավորին, ինչպես ձեր անձը, մեղքերի թողության համար դուք չեք մկրտվել նրա կողմից, ով մկրտելու իշխանություն ունի. դուք չեք ստացել Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրումով. դուք ձեզ չեք համարել Իմ ժողովուրդը. դուք չեք եկել իմ հոտը, դուք չեք համարվել իմ ընտրյալների թվում, և ես ձեզ չեմ ճանաչում, «հեռացեք ինձանից դուք, որ անօրինություն եք գործում»։ Ով որ բարին գիտենա և չանէ, նորա համար մեղք է (Հակոբոս Դ.17)։ Այդպես կլինի նրանց հետ, ովքեր պարզապես հավատում են։ Հավատալով ինչո՞ւ չեք անում այն, ինչ Նա է պահանջում . . .

. . . Այն, որ ձեզ Վերջին Օրերի Սրբեր եք համարում, ոչինչ չի տա ձեզ, եթե ձեր վարքով, ձեր կյանքով, ձեր գործերով դուք նմանվում եք . . . նրան, ով չի հավատում Աստծուն և Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությանը։ Դևը կօգտվի ձեզանից, նա կմոլորեցնի և կկործանի ձեզ, եթե չապաշխարեք ձեր այն գործերից, որոնք ներդաշնակության մեջ չեն կամ հակասում են այն ավետարանին, որ դուք եք ընդունել։[10]

Մեր ողջ սիրտն ու հոգին պետք է լցված լինեն Փրկչի հանդեպ սիրով։

Պարզ վկայությունը ամուր հենարան է բոլոր ժամանակներում։[11]

Իմ եղբայրներ և քույրեր, ես ցանկանում եմ իմ վկայությունը բերել ձեզ, քանզի ես համոզվածություն եմ ձեռք բերել, որը տիրել է իմ ողջ էությանը։ Այն թափանցել է իմ հոգու խորքը, այն լցրել է իմ հոգու յուրաքանչյուր բջիջը։ Այդ պատճառով ես ցանկանում եմ ասել այս ժողովրդին և հաճույքով կասեմ այդ մասին ամբողջ աշխարհի առաջ, որ Աստված հայտնել է ինձ, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, աշխարհի Քավիչը։[12]

Ես ամբողջովին վստահում եմ [Հիսուս Քրիստոսին]։ Իմ ողջ սիրտն ու հոգին ամբողջովին լի է նրա հանդեպ սիրով։ Իմ հույսը հիմնված է Նրա փառահեղ բնավորության և Նրա խոսքի վրա։ Նա

չուներ ոչ մի մեղք, Նա անբիծ էր և ուներ հավերժական կյանքի զորությունը: Նա բացեց գերեզմանից հավիտենական կյանք տանող ճանապարհը ինձ համար և բոլոր մարդկանց զավակների համար: Նրա հանդեպ իմ վստահությունն անսահման է: Նրա հանդեպ իմ սերը գերազանցում է երկրի վրա ամեն ինչին: Երբ ես լցված եմ Ավետարանի հոգով, այնպես, ինչպես պետք է լինեն, Նա ինձ համար ամենաառաջինն է ու ամենագլխավորը: Նա մեծագույնն է բոլորից, ովքեր երբևէ ժամանակավորապես ապրել են մեր այս աշխարհում, և Նա եկել է լինելու մեր լույսի փարոսը, մեր ուղեցույցն ու օրինակը, և մեր գործն է՝ հետևել Նրան:[13]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է վկայությունը: Ինչպե՞ս ենք Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ստանում: Ի՞նչ դեր է խաղում վկայության զարգացման գործում «կյանքի ու փրկության սկզբունքներին հնազանդ լինելը»:
- Ինչպե՞ս է ձեր վկայությունն աճում «տող առ տող և ցուցում առ ցուցում»: Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր Սուրբ Հոգուց շարունակ հայտնություններ են ստանում:
- Ե՞րբ է վկայության պարգևը վերցվում: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել մեր վկայությունները: Ինչպիսի՞ հետևանքներ են հաջորդում, եթե թերանում ենք զարգացնել մեր վկայությունները:
- Ինչպե՞ս կարող ենք մեր երախտագիտությունը հայտնել վկայության պարգևի համար:
- Ինչպե՞ս է սուրբ գրություններ ուսումնասիրելը օգնում Հիսուս Քրիստոսի մասին վկայություն ձեռք բերել: Ինչպիսի՞ հոգով մենք պետք է վերաբերվենք սուրբ գրություններին, որպեսզի մեր վկայություններն աճեն:
- Ինչպե՞ս կարող ենք անձնական գիտելիք ձեռք բերել, որ Հիսուսը Քրիստոսն է, «ոչ թե լինելով մեկը, որին ասվում է, այլ մեկը, որը . . . ինքնուրույն գիտի»:
- Ինչպե՞ս է Սուրբ Հոգու միջոցով ստացված վկայությունը վեր մնացած բոլոր ապացույցներից: Ի՞նչ եք զգացել, երբ օրհնվել եք Սուրբ Հոգուց եկած վկայությամբ:
- Ինչո՞ւ է կարևոր, որ և կատարենք այն ամենը, ինչ Փրկիչն է պատվիրել, և հավատանք Նրան: Ինչպե՞ս է արդար գործերով

ամրապնդվել ձեր վկայությունը: Ինչպե՞ս կարող ենք «[Փրկչի] հոգու ազդեցությունը պահել մեր հոգում»:

- Ինչպե՞ս է Փրկչի վերաբերյալ Նախագահ Սմիթի զորավոր վկայությունը շարժել ձեր սիրտը: Ինչպե՞ս են Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների վկայություններն օրհնել ձեզ: Երբ բերում ենք մեր վկայությունները, ինչո՞ւ պետք է մեր մտքերը կենտրոնացնենք Հիսուս Քրիստոսի վրա:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 7.
2. *Gospel Doctrine,* 506–7.
3. *Deseret News: Semi-Weekly,* 14 May 1895, 1.
4. In Conference Report, Oct. 1903, 4.
5. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 6 Sept. 1906, 561–62.
6. *Deseret News: Semi-Weekly,* 29 Jan. 1878, 1.
7. *Gospel Doctrine,* 206.
8. *Deseret News: Semi-Weekly,* 28 Nov. 1876, 1.
9. *Deseret News: Semi-Weekly,* 30 Apr. 1878, 1; paragraphing added.
10. "Testimony," *Improvement Era,* Aug. 1906, 806–8; paragraphing added.
11. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:356.
12. *Gospel Doctrine,* 501.
13. In *Collected Discourses,* 5:55–56.

Աջակցել նրանց, ովքեր կանչված են նախագահելու

Մենք պետք է խոսքով և գործով պատվենք ու աջակցենք քահանայության մեր ղեկավարներին, ովքեր կանչված են նախագահելու։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթն աջակցել է քահանայության իր ղեկավարներին իր ողջ սրտով և իր գործերով։ Բազմիցս են նրա գործերում արձագանքել Նեփիի հավատարիմ խոսքերը. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է» (1 Նեփի 3.7)։

1873թ. հոկտեմբերին Նախագահ Բրիգամ Յանգը կրկին կանչեց նրան միսիայում ծառայելու։ Զոզեֆ Ֆ. Սմիթն այդ ժամանակների մասին ասել է. «Ես կանչվեցի միսիայում ծառայելու, երբ արդեն չորս տարի աշխատել էի մի հողակտորի վրա և ինձ անհրաժեշտ էր մեկ տարի ևս մնալ այնտեղ, որպեսզի իրավունք ձեռք բերեի այդ հողի վրա։ Սակայն Նախագահ Յանգն ասաց, որ կցանկանար, որպեսզի ես գնայի Եվրոպա միսիայի, և հետևեի այնտեղի միսիային։ Ես նրան չասացի. «Եղբայր Յանգ, ես չեմ կարող գնալ, ես հողատարածքի տեր եմ դառնում և եթե գնամ, ես կզրկվեմ դրանից»։ Ես ասացի Եղբայր Յանգին. «Շատ լավ, Նախագահ Յանգ, երբ կուզենաք, որ մեկնեմ, ես կմեկնեմ։ Ես պատրաստ եմ հնազանդվել իմ ղեկավարի կանչին»։ Եվ ես գնացի։ Ես կորցրեցի հողատարածքը, և երբեք չդժգոհեցի։ Ես երբեք Եղբայր Յանգին չմեղադրեցի, որ նա դրանով իսկ կողոպտեց ինձ։ Ես զգում էի, որ ներգրավված եմ մի ավելի կարևոր գործում, քան 65 հեկտար հող ստանալը։ Ես ուղարկվել էի երկրի ազգերին հայտարարելու փրկության ուղերձը։ Ես կանչվել էի Աստծո իշխանությամբ, և չէի դադարում ինձ և իմ փոքր

իրավունքներն ու արտոնությունները հարգել: Կանչվելուն պես ես գնացի, և Աստված աջակցեց և օրհնեց ինձ դրանում»:[1]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք բարձրացնում ենք մեր ձեռքը որպես ուխտի նշան՝ ի պաշտպանություն և աջակցություն մեր ղեկավարների:

Իմ կարծիքով Եկեղեցու համաժողովներում կատարած ամենակարևոր գործերից մեկն այն է, որ մենք բարձրացնում ենք մեր ձեռքը Տիրոջ առաջ՝ ի աջակցություն Եկեղեցու և նրա կազմակերպության իշխանությունների, այն կառուցվածքով, ինչպես որ այն գոյություն ունի: Սակայն այդ կարևոր բանը ոմանց համար փոքր նշանակություն ունի: Այլ խոսքով, ոմանք իրենց ձեռքերը բարձրացնելով և Եկեղեցու իշխանություններին իրենց աջակցությունը հայտնելուց հետո հեռանում են և այլևս չեն մտածում այդ մասին և որոշ առումով գործում են այնպես, ասես սոսկ ինչ-որ ընդունված կարգ են պահել, որին չարժե որևէ կարևորություն տալ: Ես համարում եմ, որ դա սխալ մոտեցում է . . . Նրանք, ովքեր ուխտել են պահել Տիրոջ պատվիրանները, և ապա դրժում են այդ ուխտը թերանալով պահել այդ պատվիրանները, ոչնչով չեն տարբերվում նրանցից, ովքեր բարձրացնում են իրենց ձեռքը ի պաշտպանություն և ի աջակցություն Եկեղեցու իշխանությունների, և ապա թերանում են կատարել դա: Երկու դեպքում էլ սկզբունքը նույնն է. դա մեր կապած ուխտի դրժումն է:[2]

Մեծ չարիք է Ամենազորի ներկայությամբ ձայն տալ՝ ի աջակցություն Եկեղեցու իշխանություններին և ապա հեռանալ և հակառակ խոսել ու ոտնակոխ անել նրանց տված խորհուրդները: Տերը կդատի նրանց դրա համար:[3]

Կարևոր պարտականություն է դրված Սրբերի վրա իրենց ձայնը տալ ի աջակցություն Եկեղեցու իշխանությունների, կատարելով դա ոչ միայն ձեռք բարձրացնելով, ինչպես ընդունված կարգ, այլ գործով և խոսքով: Երբեք չպետք է ոչ մի օր անցնի առանց աղոթքի, երբ Եկեղեցու բոլոր մարդիկ բարձրացնում են իրենց ձայնն առ Տերը՝ Նրա ծառաների համար, ովքեր դրվել են նախագահելու իրենց վրա . . . Այդ մարդկանց անհրաժեշտ է մարդկանց հավատը, որ աջակցի իրենց, որ իրենց բեռը թեթևանա, որ ուժեղ դառնան Տիրոջով . . .

. . . Տիրոջ պատվիրանն է հավաքվել միասին . . . աջակցել Եկեղեցու իշխանություններին, այդպիսով նորացնելով մեր ուխտը

պաշտպանել Աստծո Իշխանությանը, որը Նա հաստատել է երկրի վրա՝ երկրի վրա Իր Եկեղեցին կառավարելու համար: Եվ ես խոսք չեմ գտնում շեշտել, թե որքան կարևոր է Վերջին Օրերի Սրբերի համար խոսքով և գործով պատվել և աջակցել Սուրբ Քահանայության իշխանությունը, որը կանչված է նախագահելու: Այն պահին, երբ անդամի մեջ մտնում է Եկեղեցու օրինական իշխանություններին չաջակցելու ոգին, այդ պահին նրան համակում է ապստամբության և տարաձայնության ոգին, և եթե նա թույլ տա այդ ոգուն խորը արմատներ գցել իր մտքում, այն ի վերջո կտանի նրան դեպի խավար և ուրացություն:[4]

Լիովին հասկանալի է, որ տարին երկու անգամ մենք հավաքվում ենք միասին գերագույն համաժողովում, որպեսզի ներկայացվեն անունները նրանց, ովքեր ընտրվել են որպես Եկեղեցու նախագահող պաշտոնյաներ, և հասկանալի է, որ նրանք, ովքեր գրավում են այդ պաշտոնները, կախված են մարդկանց ձայնից երկարաձգելու իրենց իշխանությունը, իրավունքներն ու արտոնությունները, որ գործադրում են: Եկեղեցու կին անդամները ունեն ձայն տալու նույն արտոնությունը՝ աջակցելու իրենց նախագահող պաշտոնյաներին, ինչպես և Եկեղեցու տղամարդ անդամները, և արդարակյաց քրոջ ձայնը ունի նույն կշիռը, ինչպես և եղբոր ձայնը:[5]

Որպես Վերջին Օրերի Սրբեր մենք աջակցում և պատվում ենք Բարձրագույն Իշխանություններին, ովքեր կանչված են նախագահելու:

Այժմ, երբ Աստծո պատվիրանները տրված են ողջ աշխարհին, կան հատուկ պատվիրաններ, որոնք միայն Վերջին Օրերի Սրբերի համար են: Որո՞նք են դրանք: Այդ պատվիրաններից մեկն այն է, որ մենք պետք է պատվենք նրանց, ովքեր նախագահում են մեզ վրա. այլ խոսքով, մենք պետք է պատվենք Քահանայությունը: Ես չեմ խնդրում ոչ մեկին հարգել ինձ, եթե ես չեմ կատարում այն, ինչը ճշգրտորեն համապատասխանում է իմ կոչման ոգուն և քահանայությանը, որ ես եմ կրում: Եկեղեցու ոչ մի անդամ պարտավոր չէ հարգել ինձ, եթե ես չարաշահում եմ այդ քահանայությունը և իշխանությունը, որը շնորհվել է ինձ Աստծո ընտրությամբ և Եկեղեցու ձայնով: Սակայն երբ ես խոսում եմ Տիրոջ Հոգով իմ պաշտոնի պարտականությունների համաձայն, Եկեղեցու յուրաքանչյուր անդամ լավ կանի ականջ դնի իմ



Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը իր որդու Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետ, որն այս նկարում նկարվելիս 1914թ. Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, իսկ հետագայում դարձավ Եկեղեցու տասներորդ նախագահը։

խոսքերին։ Քանզի այն ասվել է Աստծո Հոգով և իմ պարտականության համաձայն, դա Ամենազորի խոսքն ու կամքն է։

«Եվ ինչ որ նրանք խոսեն, երբ դրդվում են Սուրբ Հոգու կողմից, պիտի լինի սուրբ գրվածք, պիտի լինի Տիրոջ կամքը, պիտի լինի Տիրոջ միտքը, Տիրոջ խոսքը, Տիրոջ ձայնը, և Աստծո զորությունը՝ ի փրկություն։

Ահա, սա Տիրոջ խոստումն է ձեզ, ո՛վ դուք, ի՛մ ծառաներ» [տես Վ և Ու 68.4–5]։

Բոլորի արտոնությունն է իմանալ, թե արդյոք Աստծո Հոգով ես ճշմարտությունն եմ խոսում, թե ոչ։ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն տրված է պատվիրան՝ մենք պետք է ականջ դնենք Հոգու ձայնին, որը դրսևորվում է այն միջոցներով, որոնք Աստված նշանակել է Իր ժողովրդին առաջնորդելու համար . . . Եթե ես անարդար խորհուրդներ տամ, ինձ դատարանի առջև կկանգնեցնեն։ Ոչ ոք չի կարող ամբարշտություն ուսուցանել այս ժողովրդին և այդպես երկար շարունակել։ Քանզի Աստված երևան կհանի նրան և նրա սրտի խորհուրդները կհայտնի, նրա նպատակն ու մտադրությունը հայտնի կդարձվի Սրբերին, և նա Աստծո Հոգու կողմից դատապարտված կկանգնի Սրբերի առաջ։ Եթե դուք ընդունում եք . . . Եկեղեցու Նախագահին և նրա խորհրդականներին որպես նախագահող իշխանություն, ապա այն անդամը, որն ուշադրություն չի դարձնում նրանց խորհրդին, արժանի է խղճալու, քանի որ նա զանցանք է գործում։ Այդ մարդիկ ձեզ սխալ խորհուրդ չեն տա . . .

. . . Ես երբեք չեմ ցանկանա տեսնել այն օրը, երբ այս մարդիկ, որոնց դուք վստահել եք նախագահելու, փակեն իրենց բերանը՝ չհանդգնելով մեղադրել մեղքը և հանդիմանել անօրինությունը . . . Դա կատարելը մեր պարտականությունն է։ Մենք Սիոնի աշտարակների հսկողներն ենք [տե՛ս Եզեկիէլ Գ.17–19]։ Դա մեր գործը և պարտականությունն է մատնանշել մարդկանց սխալներն ու հիմարությունները։ Եվ եթե մարդիկ չընդունեն դա, նրանք պետք է իրենց ճանապարհով գնան և ճաշակեն իրենց վարքի պտուղները։ Կտառապեն նրանք, ովքեր չեն հնազանդվի արդար խորհուրդներին, և ոչ թե նրանք, ովքեր կհանդիմանեն անօրինությունը։[6]

Մենք առաջարկում ենք իրականացնել մեր պարտականությունը համաձայն այն լույսի, որը մենք ունենք, սիրող Հոր օգնությամբ։ Ես առաջարկում եմ չկատարել ոչինչ, որի ճիշտ լինելու մասին ես չունեմ բացարձակ համոզում իմ խորհրդականների միաբանությամբ, երբ լիովին համաձայն ենք միմյանց հետ և միևնույն ձևով ենք հասկանում . . . Ես չեմ առաջարկում կատարել

կամ թույլ տալ կատարել որևէ բան և հավանություն տալ ինչ-որ բանի, որը վնաս կհասցնի Աստծո արքայությանը երկրի վրա, եթե ոչ ընդհանուր համաձայնությամբ կամ տեսնելով միմյանց աչքերում այս կամ այն հարցի վերաբերյալ: Այդ դեպքում ես գիտեմ՝ մեր թիկունքում ուժ կունենանք, և Աստծո զորությունը մեզ հետ կլինի, և Սրբերը կպաշտպանեն և կաջակցեն մեզ:[7]

Մարդիկ հնարավոր է դժգոհ լինեն միմյանցից, նրանք հնարավոր է դժգոհ լինեն Նախագահից կամ Տասներկուսի Քվորումից կամ ուրիշներից և հնարավոր է ասեն իրենց սրտում. «Ինձ դուր չի գալիս այսինչը. ես չեմ հավատում, որ նա այնքան լավն է, որքան պետք է լինի, նա չափից շատ սխալներ և թուլություններ ունի, այդ պատճառով ես չեմ կարող և չեմ ընդունի նրա իշխանությունը, քանի որ չեմ հավատում այդ մարդուն»: Անկասկած, կան այնպիսիք, հավանաբար շատերն են այդպես մտածում, սակայն ցավը կայանում է նրանում, որ . . . նրանք պարզապես դժգոհելով այդ անհատից և իրենց եղբայրների հանդեպ դառը զգացումներ պահելով իրենց սրտում, այլևս չեն տեսնում Ամենազորի խորհուրդները, նրանք դեմ են կանգնում Սուրբ Քահանայության իշխանությանը, և իրենց կուրությամբ թույլ են տալիս, որ իրենք մոլորեցվեն և, ի վերջո, երես են դարձնում Եկեղեցուց:

Արդ, ինչպե՞ս պետք է վարվել: Ես կասեմ ձեզ: Առաջինը, յուրաքանչյուրը պետք է իմանա, որ Ավետարանը ճշմարիտ է, քանի որ դա ամեն մեկին տրված արտոնություն է, ով մկրտվել է և ստացել է Սուրբ Հոգին: Մարդը կարող է դառնանալ իր և [Եկեղեցու Նախագահի և նրա Խորհրդականների] միջև կանգնած ինչ-որ մեկի պատճառով, նա հնարավոր է իր սրտում ունենա զգացումներ, որոնք կստիպեն նրան մտածել, որ ինքը չի կարող աջակցել մեզ իր հավատքով ու աղոթքներով: Բայց եթե այդպես է, ի՞նչ ճանապարհով նա պետք է գնա: Նա պետք է իր սրտում ասի. «Աստված հաստատել է Իր Արքայությունը, Նրա Քահանայությունը երկրի վրա է. և չնայած ինձ դուր չեն գալիս որոշ մարդիկ, ես գիտեմ, որ Ավետարանը ճշմարիտ է և Աստված Իր ժողովրդի հետ է: Եվ եթե ես կատարեմ իմ պարտականությունն ու պահեմ Նրա պատվիրանները, ամպերը կցրվեն և մառախուղը կանհետանա, Տիրոջ Հոգին ավելի առատորեն կթափվի ի սփոփումն ինձ և շուտով, եթե սխալ եմ թույլ տվել, ես կկարողանամ տեսնել որտեղ եմ սխալվել և ապա կապաշխարեմ, քանզի գիտեմ, որ ամեն սխալ, ինչ էլ որ լինի կուղղվի»: Կարծում եմ բոլոր մարդիկ պետք նման զգացումներ ունենան:[8]

Եկեք աջակցենք մեր տեղական իշխանություններին և լսենք նրանց խորհուրդը։

Ինչպես Եկեղեցու Նախագահությունն է նախագահում ամբողջ Եկեղեցու վրա՝ ողջ աշխարհում բոլոր ցցերի, ծխերի և միսիաների վրա, այնպես էլ մարդիկ [ցցի նախագահությունը] են նախագահում Սիոնի այս ցցի և նրա բոլոր ծխերի ու ճյուղերի վրա։ Եվ երբ նրանք կոչ են անում մարդկանց աջակցել իրենց նրանում, ինչը արդար է, իսկ մարդիկ թերանում են աջակցել նրանց, հետևանքները կլինեն այդ մարդկանց գլխին և ոչ թե իրենց գլխին։ Նրանց պարտականությունն է հանդիմանել անօրինությունն ու մեղադրել անարդարակեցությունը։ Նրանց պարտականությունն է խորհուրդ տալ և հորդորել մարդկանց լինել հավատարիմ և ջանասեր իրենց ամբողջ ցցում . . . Ես ցանկանում եմ, որ դուք ճիշտ ձևով հասկանաք սա . . . [Ցցի նախագահը] իրավունք ունի նախագահել, խորհուրդ տալ, ուղղություն տալ և հսկել տեղի մարդկանց շահերը այստեղ . . .

. . . Մենք որպես օրինակ ունենք գրված խոսք, հրահանգ, նախազգուշացում, նկատողություն, հանդիմանություն, խորհուրդ և հորդոր։ Յուրաքանչյուր ոք պետք է կարդա և հասկանա այն, և ապա բոլորը կիմանան, որ իրենց մեջ Աստծո պատգամախոսներ կան։ Իսկ երբ նրանք չեն կարդում Աստծո խոսքը, ոչ էլ հասկանում են այն, երբ պատգամախոսները խոսում են, նրանք չեն կարող ականջ դնել նրանց։ Ցցի Նախագահությունը մեր պատգամախոսներն են այստեղ։ Նրանք ընտրվել են Տիրոջ կողմից . . . Դուք պետք է աջակցեք և պաշտպանեք նրանց, և լսեք նրանց խորհուրդները։ Նրանք չեն տանի ձեզ սխալ ուղով։ Նրանք չեն առաջնորդի ձեզ ամբարշտության մեջ։ Խորհուրդ տալիս նրանք չեն սխալվի, քանի որ նրանք կանգնած են որպես լույսի փարոս մարդկանց համար, և ոչ միայն լույսի փարոս, այլ նրանք կանգնած են իրենց տեղում որպես Եկեղեցու նախագահներ Սիոնի այս Ցցում, և Աստված հայտնում է Իրեն մարդկանց՝ նրանց միջոցով։ Ավելին, յուրաքանչյուր տղամարդու և կնոջ իրավունքն է հայտնություն և իմաստություն ունենալ Ամենազորից, որպեսզի իմանան, որ նրանք լավ մարդիկ են և իրենց հանձնարարականներն են կատարում։[9]

Եպիսկոպոսը իր ծխի նախագահող պաշտոնյան է, և երբ ծխում կա եպիսկոպոս, նրա խորհրդականներն ու ծխի անդամները ենթարկվում են նրա նախագահությանը։ Նա չի կարող հրաժարվել դրանից։ Նա չի կարող դա տալ մեկ ուրիշին, կամ

եթե տալիս է ուրիշի, ապա խախտում է քահանայության ղեկավարության սրբազան սկզբունքներից մեկը:[10]

Ահա մարդն ասում է. «Ես չեմ հավատում եպիսկոպոսին: Ես չեմ հավանում եպիսկոպոսին: Ես չեմ հավատում նրան, նա անկարող է: Նա անարդար է, և ես չեմ աջակցի նրան Եկեղեցում ունեցած իր պաշտոնում» . . . Մոռացա՞ք, որ [եպիսկոպոսը և նրա խորհրդականները] այնտեղ են ոչ այն պատճառով, որ մենք ենք մեր կամքով դրել նրանց այնտեղ: Նրանք այնտեղ են, որովհետև Տերն է որոշել այդպես՝ ծխում հաստատելով աստվածային իշխանությամբ նախագահության կարգ, և եպիսկոպոսն իշխանություն ունի Աստծո, և ոչ թե մարդու կողմից . . .

. . . Երբ մարդն ասում է. «Ես Վերջին Օրերի Սուրբ եմ, ես Եկեղեցու անդամ եմ, ապրում եմ ըստ Եկեղեցու օրենքների, քանի որ գիտեմ, թե որոնք են ավետարանի սկզբունքները և գիտեմ Եկեղեցու ղեկավարման սկզբունքները», սակայն եթե նման մարդն ասում է. «Ես եպիսկոպոսի դեմ եմ, քանի որ ես նրան չեմ հավանում» կամ «քանի որ ես նրան չեմ հավատում», վկայում են այն մասին, որ նա չի հասկանում ղեկավարման և աստվածային իշխանությանը ենթարկվելու սկզբունքը: Ուստի, նա դառնում է անհանգիստ, չենթարկվող, անկառավարելի, անցանկալի և արժանի նրան, որ նրա հետ վարվեն իր արժանիքների և թերությունների համաձայն:[11]

Մարդը հնարավոր է չվստահի իր Եպիսկոպոսին կամ իր Խորհրդականներին, . . . սակայն որովհետև նման զգացումներ ունի, արդյոք նրա, որպես Իսրայելի երեցի համար ճիշտ կլիներ կամ պատշաճ դատել Եպիսկոպոսին, իր Խորհրդականներին կամ ողջ Եկեղեցուն: Նման դիրք ընդունողը կնմանվի [մարդկանց, ովքեր հեռացել են Եկեղեցուց]. . . . Կարծում եք, կարող եք համոզվե՞լ, որ նրանք ուրացել են Եկեղեցուն: Ո՛չ, այդ մարդիկ հաստատապես համոզված են իրենց մեջ, որ երբեք չեն ուրացել: Նրանք համառորեն և վրդովված մերժում են, որ երբևէ ուրացել են կամ երես դարձրել Եկեղեցուց . . . Եթե ես երբևէ ձեռքս բարձրացնեմ իմ Եպիսկոպոսի, Տասներկուսի կամ Առաջին Նախագահության դեմ, որովհետև նրանց չեմ հավանում, այդ պահին ես ինձ կդնեմ այն տեղում, որտեղ այժմ այդ մարդիկ են գտնվում և գտնվել են շատերը, ովքեր անցյալում նման դիրք են գրավել, և ասեմ. «Եկեղեցին ուրացել է, Զոզեֆ Սմիթը, Բրիգամ Յանգը, Զոն Թեյլորը ուրացել են, սակայն ես հաստատուն եմ իմ հավատքում. բոլորը մոլորվել են, քանի որ չեն ընդունում ինձ»: Ահա, թե որտեղ է գտնվում նա, ով ապստամբում է

Քահանայության Իշխանության դեմ, և միևնույն ժամանակ ջանում է համառել, որ հավատում է: Միշտ, որոշակի ժամանակ, նշանակված է մեկը, որ երկրի վրա կրի Աստծո արքայության բանալիները:[12]

Ուստի ես ասում եմ ձեզ, պատվեք Ցցի Քահանայությանը և ձեր Եպիսկոպոսներին, և բոլոր նրանց, ովքեր ձեր մեջ դրվել են նախագահելու: Աջակցեք նրանց իրենց պաշտոնում՝ ձեր հավատքով և ձեր աղոթքներով, և ցույց տվեք, որ կօգնեք նրանց լավ խոսքով և գործով, և Աստված կօրհնի ձեզ դրա համար:[13]

Մեր ղեկավարներին աջակցելը վկայում է մեր բարի կամքի, հավատի և ընկերության մասին:

Ես հավատում եմ, որ Եկեղեցու պարտականությունն է ճանաչել և ընդունել յուրաքանչյուրին, ով իր գործունեությամբ և կոչումով որևէ պաշտոն ունի: Ես հիմնվում եմ այն վարդապետության վրա, որ ուսուցչի պարտականությունը սրբազան է, որքան առաքյալինը, այն բնագավառում, որում նա կանչված է գործելու, և որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է այնպես հարգի իր տուն այցելած ուսուցչին, ինչպես կհարգեր Եկեղեցու նախագահող քվորումի պաշտոնն ու խորհուրդը: Նրանք բոլորն էլ Քահանայություն ունեն, նրանք բոլորն էլ գործում են իրենց կոչումներում, և նրանք բոլորն էլ կարևոր դեր ունեն իրենց տեղում, քանի որ Տերն է նշանակել նրանց և դրել իր Եկեղեցում: Մենք չենք կարող անտեսել նրանց, կամ եթե նման ձևով ենք վարվում, մեղքը կլինի մեր գլխին:[14]

Մենք չպետք է թույլ տանք, որ ամեն օր դժգոհենք և մեղք գտնենք մեր սրտում նրանց դեմ, ովքեր ներկայացվել են մեր առջև, որ աջակցենք նրանց իրենց պատասխանատու պաշտոնում: Եթե մեր սրտում ինչ-որ բան ունենք այդ եղբայրներից որևէ մեկի դեմ, որպես Եկեղեցու բարեխիղճ անդամներ մեր պարտականությունն է՝ առաջինը, ինչպես Սուրբ Գրքերն են ուղղորդում, հանդիպել նրանց մենակ և ասել, թե ինչ ենք զգում իրենց հանդեպ և բացատրել, թե որն է դրա պատճառը, սակայն մեր սրտում չպետք է ունենանք ցանկություն ընդլայնելու կամ խորացնելու խնդիրը, այլ նրանց մոտ պետք է գնանք հաշտության ոգով և եղբայրական սիրով, ճշմարիտ քրիստոնեական ոգով, այնպես որ եթե որևէ խստություն կա մեր մեջ, պետք է ամբողջովին այն հանվի. և եթե որևէ բան ունենք մեր եղբոր դեմ, ապա միայն չարիքը ուղղելու համար: Մենք պետք է ձգտենք սիրել և նեցուկ լինել միմյանց, որպես Աստծո զավակներ և քույրեր Սիոնի գործում:[15]

Իմ եղբայրներ և քույրեր, ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ . . . այն միասնության համար, որ դրսևորվեց այստեղ այս բազմաքանակ ժողովում բարձրացված ձեռքերով: Ես ընդունում եմ սա որպես բարի կամքի, հավատքի և ընկերության ապացույց այս բազմաթիվ հավաքվածների կողմից բոլոր՝ թե բարձրագույն և թե տեղական, կամ օժանդակ իշխանությունների հանդեպ, որոնք ներկայացվել էին ձեր առջև, և որ դուք հավատարիմ կմնաք Տիրոջը և միմյանց տրված խոստումին բարձրացրած ձեռքով, որ դուք նեցուկ կլինեք և կաջակցեք այդ պաշտոնյաներին այդ բոլոր կազմակերպություններում, առաջինից մինչև վերջինը, որ դուք չեք չարախոսի նրանց ետևից, որ առանց պատճառի մեղք չեք գտնի նրանց մեջ, որ դուք վնաս չեք հասցնի նրանց անունին, չեք խանգարի նրանց առաջընթացին, կամ միջամտի նրանց օրինական գործին: Հակառակը դուք պետք է ամեն ինչ անեք, որ օգնեք և օգտակար լինեք նրանց, օրհնեք և խրախուսեք այն գործում, որում նրանք ներգրավված են:[16]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ մեր ղեկավարներին աջակցելը «Եկեղեցու համաժողովներում կատարած ամենակարևոր գործերից մեկն է»: Ինչո՞ւ է այն օգնում հասկանալ, որ մեր ղեկավարներին աջակցելը «ուխտ է, որ կապում ենք»:
- Ինչպե՞ս կարող ենք աջակցել մեր ղեկավարներին, ոչ թե «ինչպես ընդունված կարգ, այլ գործով և խոսքով»: Եղե՞լ են պահեր, երբ դուք տեսել եք, որ ձեր հավատն ու աղոթքներն օգնել են ձեր ղեկավարներին:
- Ի՞նչ կարող է պատահել նրանց հետ, ովքեր «հրաժարվում են աջակցել Եկեղեցու օրինական իշխանություններին»:
- Ինչպե՞ս է, որ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը «Սիոնի աշտարակների հսկողներն» են: Այդ դեպքում ո՞րն է նրանց պարտականությունը: Ինչպե՞ս կարող ենք աջակցել և հարգել նրանց իրենց պարտականությունը կատարելիս: (Տե՛ս նաև Վ և Ու 107.22:)
- Որո՞նք են ցցի նախագահության որոշ պարտականությունները: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ աջակցել և պաշտպանել նրանց:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ, որ եպիսկոպոսը ծխում իշխանություն ունի «Աստծո, և ոչ թե մարդու կողմից»: Ինչպե՞ս կարող

ենք ավելի լավ աջակցել եպիսկոպոսությանը իրենց պարտականություններում:

- Ինչո՞ւ է տնային ուսուցչի պարտականությունը այնքան «սրբազան, որքան առաքյալինը, այն բնազավառում, որում նա կանչված է գործելու»: Ինչպե՞ս կարող ենք աջակցել և հարգել տնային ուսուցիչներին և այցելող ուսուցիչներին:
- Ինչպե՞ս է մեր ղեկավարներին աջակցելն ու հարգելը հանդիսանում Տիրոջ հանդեպ ունեցած մեր հավատքի ապացույց:

Հղումներ

1. *Deseret News: Semi-Weekly,* 28 Apr. 1896, 1.
2. *Deseret News: Semi-Weekly,* 14 May 1895, 1.
3. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 4:298.
4. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1.
5. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 158.
6. *Deseret News: Semi-Weekly,* 21 Jan. 1896, 1.
7. In Conference Report, Apr. 1902, 86–87.
8. *Deseret News: Semi-Weekly,* 26 June 1883, 1.
9. *Deseret News: Semi-Weekly,* 21 Jan. 1896, 1.
10. *Gospel Doctrine,* 185.
11. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:83–85.
12. *Deseret News: Semi-Weekly,* 26 June 1883, 1.
13. *Deseret News: Semi-Weekly,* 31 Mar. 1896, 1.
14. *Gospel Doctrine,* 163–64.
15. *Deseret News: Semi-Weekly,* 21 June 1898, 1.
16. In Conference Report, Oct. 1911, 130–31.

Եկեղեցու Բարձրագույն Քահանայության Նախագահը

Մենք պետք է աջակցենք և լսենք Եկեղեցու Նախագահին, որը կրում է սուրբ քահանայության բանալիները և ղեկավարում է Աստծո Եկեղեցին երկրի վրա:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հաստատվել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վեցերորդ Նախագահ 1901թ. նոյեմբերի 10-ի հատուկ համաժողովի ժամանակ: Այս նոր նշանակումով իրականացավ Նախագահ Լորենզո Սնոուի մարգարեությունը, որ Զոզեֆ Ֆ. Սմիթը Եկեղեցու Նախագահ է դառնալու:[1]

1866թ. Նախագահ Բրիգամ Յանգի կողմից կանչված լինելով որպես Առաքյալ և ծառայելով որպես Խորհրդական Եկեղեցու չորս Նախագահների՝ Բրիգամ Յանգի, Զոն Թեյլորի, Վիլֆորդ Վուդրուֆի և Լորենզո Սնոուի համար, Նախագահ Սմիթը հաճախ էր վկայում Աստծո այդ ծառաների «աստվածային իշխանության . . . ազնվության, պատվարժանության, կյանքի մաքրության, բարձր ինտելեկտի և աստվածային առաքելության ու կոչման» մասին:[2]

17 տարի նա բարեխղճորեն ծառայեց որպես Եկեղեցու Նախագահ, մեծ հեզությամբ և նվիրվածությամբ: Նա ասում էր Սրբերին. «Ես ինձանից ոչինչ չեմ ներկայացնում այս աշխատանքում, և ես ոչինչ եմ, չհաշված իմ պարտականությունը կատարելու գործում իմ համեստ ջանքերը, քանի դեռ Տերը տալիս է ինձ այդ հնարավորությունը»:[3]

Նա վկայել է, որ Եկեղեցին Աստծո կողմից է ղեկավարվում. «Ես ցանկանում եմ ասել ձեզ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի

Սրբերի Եկեղեցու կազմավորումից ի վեր երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ մարդը ղեկավարեր Եկեղեցին, ո՛չ մի պահ: Այդպես չի եղել Զոզեֆի օրերին, այդպես չի եղել նրանից հետո, այդպես չի լինի երբեք: Աշխարհի ժողովուրդների մեջ այս գործի ղեկավարությունը երբեք չի թողնվել մարդկանց: Սա Աստծո գործն է»:[4]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Աստված Ինքն է ղեկավարում Իր գործը և Իր ժողովրդին:

Աստված հաստատել է բոլոր բաները իրենց կարգով: Աստծո տունը կարգուկանոնի տուն է, ոչ թե խառնաշփոթի տուն: Այս տանը Աստված ինքն է Գերագույն Ղեկավարը, և նրան պետք է հնազանդվել: Քրիստոսը՝ նրա Միածին Որդին նրա պատկերով և նմանությամբ է, և նա մեր Փրկիչն ու մեր Աստվածն է: . . . Աստծուց և Քրիստոսից հետո երկրի վրա դրված է մեկը, որին սուրբ Քահանայության զորության և իշխանության բանալիներն են շնորհված, և որին նախագահության իրավունքն է տրված: Նա Աստծո խոսնակն է իր ժողովրդի համար՝ բոլոր բաներում, ինչ վերաբերում է Սիոնի կառուցմանը և իր ժողովրդի հոգևոր ու ֆիզիկական փրկությանը:[5]

Ոչ *ոք* չի ղեկավարի Աստծո ժողովրդին, ոչ էլ նրա գործը: Աստված կարող է ընտրել մարդկանց և նրանց իր ձեռքի գործիքները դարձնել իր նպատակների իրագործման համար, սակայն փառքը, պատիվը և զորությունը պատկանում են միայն Հորը, քանզի նրանում է իր ժողովրդին ղեկավարելու և իր Սիոնի մասին հոգ տանելու իմաստությունը և զորությունը: Ես չեմ ղեկավարում Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, ոչ էլ Վերջին Օրերի Սրբերին, և ես ցանկանում են, որ սա պարզորոշ հասկանալի լինի: Ո՛չ ոք չի ղեկավարում . . . Հիշե՛ք, որ Աստված է ղեկավարում այս գործը: Սա նրա գործն է: Սա մարդու գործը չէ: Եթե դա լիներ Զոզեֆ Սմիթի կամ Բրիգամ Յանգի, կամ Զոն Թեյլորի, Վիլֆուրդ Վուդրուֆի, կամ էլ Լորենզո Սնոուի գործը, այն չէր դիմանա բոլոր փորձություններին, որոնց ենթարկվել է:[6]

Գովք ու պատիվ [Եկեղեցու Նախագահին] Աստծո ձեռքի գործիքին, անորոշության մեջ կարգ և որոշակի կանոններ հաստատելիս, որոնց շնորհիվ մենք գիտենք մեր շարժվելու ուղղությունը:[7]

Նախագահող երեք քահանայապետները երկրի վրա կանգնած են Եկեղեցու գլխավերևում:

Աստված Հայր, Աստված Որդի, Աստված և Սուրբ Հոգի կազմում են Աստվածագլուխը և անհամեմատելի ղեկավարող քվորումը Հոր բոլոր արարումների վրա: Երեք մարդ են կանգնած երկրի վրա Եկեղեցու գլխին . . . մարդիկ, որոնց միակ միտքը ողջ մարդկության համար բարիք գործելն է, որոնց մեծագույն մտահոգությունը Տիրոջ ժողովրդի բարօրությունն է, և որոնց մշտական ձգտումն է՝ միասնական դարձնել նրանց և այնպես անել, որ աշխատեն, երկրի վրա իրենց տեղում և կոչման մեջ, օգնելով Սիոնի կառուցման գործին:[8]

Տերը այս գործի սկզբնական շրջանում հայտնել է, որ պետք է երեք քահանայապետեր լինեն Եկեղեցու Բարձրագույն Քահանայության և ողջ Եկեղեցու վրա նախագահելու համար: (Տես Վարդապետություն և Ուխտեր 107.22, 64, 65, 66, 67, 91 և 92:) Նա նրանց է շնորհել ողջ իշխանությունը Եկեղեցու բոլոր գործերի վրա նախագահելու համար: Նրանք կրում են Աստծո տան, ավետարանի արարողությունների և յուրաքանչյուր օրհնության բանալիները, որոնք վերականգնվել են երկրի վրա այս ժամանակաշրջանում: Այս իշխանությունը հանձնվել է երեք քահանայապետերի նախագահությանը: Նրանք երեք նախագահներ են: Տերն ինքն է այդպես կոչում նրանց: (Վարդապետություն և Ուխտեր 107.29:) Սակայն կա մեկ նախագահող նախագահ, որի խորհրդականները ևս նախագահներ են:[9]

Ողջ Եկեղեցու վրա նախագահում է խորհուրդ, որը կոչվում է առաջին նախագահություն, որը կազմված է նախագահից և նրա խորհրդականներից, որոնց հաջորդում են տասներկու առաքյալները, որոնց իշխանությունը համազոր է առաջին նախագահության իշխանությանը, թեև ենթարկվում են և գործում են նրանց ղեկավարության ներքո:[10]

Եկեղեցու նախագահող պաշտոնյայի մասին խոսելիս և նրան դիմելիս անհրաժեշտ է օգտագործել «Նախագահ» բառը, նաև արժե այդպես դիմել Առաջին Նախագահության խորհրդականներին, քանի որ նրանցից յուրաքանչյուրը Նախագահ է, ինչպես Տերն է այդպես ասել (տես Վ և Ու 107.22, 24, 29), սակայն պատշաճ չէ էժանագին ձևով խոսել Եկեղեցու Նախագահի մասին, և չարժե նրան դիմել որպես «Մարգարե», «Տեսանող», կամ «Հայտնող», թեև այդ վեհ կոչումները հատկապես իրեն են պատկանում, ինչպես նաև նրա խորհրդականներին և Տասներկուսից

յուրաքանչյուրին։ . . . Դրանք կրում են հոգևոր իշխանություն և ֆունկցիաներ, և չափազանց սրբազան բնույթ ունեն, որպես հասարակ դիմելաձևեր գործածվելու համար։[11]

Եկեղեցին միշտ ունի ղեկավարություն, իսկ եթե Եկեղեցու Նախագահության անդամները հեռանում են մահվան կամ այլ պատճառով, ապա Եկեղեցու հաջորդ ղեկավարող օրգանը Տասներկու Առաքյալներն են, մինչև կրկին կկազմակերպվի երեք նախագահող քահանայապետերից կազմված Նախագահությունը, որոնք իրավունք ունեն կրելու Եկեղեցու Առաջին Նախագահության պաշտոնը . . . և Տասներկու Առաքյալների պարտականությունն է, որ ապահովեն Առաջին Նախագահության վերակազմավորումը, որպեսզի ոչ մի թերություն չլինի Եկեղեցու Քահանայության աշխատանքում և կարգի մեջ։[12]

Բարձրագույն Քահանայության Նախագահը կրում է սուրբ քահանայության բանալիները։

Ընդհանրապես Քահանայությունը իշխանություն է՝ տրված մարդուն, Աստծո անունից գործելու համար։ Այդ իշխանությունը հանձնվում է յուրաքանչյուր տղամարդու, որը կարգվում է Քահանայության որևէ աստիճանի։

Սակայն կարևոր է, որ այս իշխանությամբ կատարված ցանկացած գործ, կատարվի պատշաճ ժամանակին և տեղում, պատշաճ ձևով և կարգով։ Այդ ջանքերը ղեկավարող զորությունը կազմում են Քահանայության *բանալիները*։[13]

Եկեղեցու կառավարմանը, Մելքիսեդեկյան և Ահարոնյան Քահանայությանը վերաբերող բոլոր բանալիները, իշխանությունը և զորությունը կենտրոնացած են Եկեղեցու նախագահող պաշտոնյայի մոտ։ Եկեղեցում չկա ոչ մի գործ կամ պաշտոն, որ Եկեղեցու Նախագահը չկարողանա կատարել, եթե դրա անհրաժեշտությունը կա, կամ նրանից պահանջվում է դա կատարել [տես Վ և Ու 107:9]։ Եկեղեցում նա կրում է հայրապետի, քահանայապետի և առաքյալի, յոթանասունականի, երեցի, եպիսկոպոսի և քահանայի, ուսուցչի և սարկավագի աստիճան։ Այս ամենը պատկանում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահությանը, և անհրաժեշտության դեպքում նրանք կարող են վարել այս բոլոր պաշտոնները և կոչումները։[14]

Միշտ մի որոշակի ժամանակահատվածում կա միայն մեկը, որ կրում է երկրի վրա Աստծո արքայության բանալիները։ Երբ Քրիստոսը երկրի վրա էր, նա էր կրում դրանք։ Սակայն երբ

Առաջին Նախագահությունը, 1910թ. ապրիլից մինչև 1911թ. հոկտեմբերը (ձախից աջ)։ Անտոն Հ. Լանդ, Զոզեֆ Ֆ. Սմիթ, Զոն Հենրի Սմիթ։

նա հեռացավ, նա հանձնեց դրանք Պետրոսին, որը նախագահն էր կամ առաքյալների ղեկավարը, և նրա իրավունքն էր ղեկավարել ու հայտնություններ ստանալ Եկեղեցու համար, խորհուրդ տալ բոլոր եղբայրներին։ Այն բանից հետո, երբ սատանան ու չար մարդիկ իշխանություն ձեռք բերեցին Եկեղեցու վրա, խաչեցին Փրկչին և սպանեցին առաքյալներին, արքայության բանալիները վերցվեցին երկրի վրայից. . . . Այդ ժամանակից, ինչ Քահանայության բանալիները վերցվեցին երկրի վրայից մինչև այն պահը, երբ Զոզեֆ Սմիթը ստացավ դրանք, ոչ ոք չի կրել այդ Քահանայությունը, ոչ էլ դրա բանալիները կամ Աստծո Սիոնը կառուցելու և եկեղեցին կամ ժողովրդին Քրիստոսի երկրորդ գալստին պատրաստելու իշխանությունը։[15]

Վարդապետություն և Ուխտերը պարզորոշ է դարձնում այն, որ մինչ Եկեղեցու յուրաքանչյուր պաշտոնյա իրավունք ունի նախագահել իր կոչման մեջ, «Մելքիսեդեկյան Քահանայությունը կրում է նախագահելու իրավունքը, և զորություն ու իշխանություն ունի եկեղեցու բոլոր պաշտոնների վրա՝ աշխարհի բոլոր դարաշրջաններում հոգևոր բաներում սպասավորելու համար» (տես Վարդապետություն և Ուխտեր, բաժին 107.8։)

Այնուհետև, նույն հայտնության 65 և 66 հատվածներում, մեզ ասվում է.

«Ուստի, անպայման անհրաժեշտ է, որ Բարձրագույն Քահանայությունից մեկը նշանակվի՝ նախագահելու քահանայության վրա, և նա պետք է կոչվի Եկեղեցու Բարձրագույն Քահանայության Նախագահ.

Կամ, այլ խոսքերով, Եկեղեցու Բարձրագույն Քահանայության վրա Նախագահող Քահանայապետ»:[16]

Գլխավոր փաստը, որ պետք է հիշել այն է, որ Քահանայությունը բարձր է նրա ցանկացած պաշտոնից. և Մելքիսեդեկյան Քահանայություն կրող ցանկացած մարդ, ըստ իր կրած քահանայության զորության, կարող է կատարել քահանայությանը պատկանող կամ դրա հետ կապված ցանկացած արարողություն, երբ կանչվում է կատարելու այն նրա կողմից, որը կրում է համապատասխան իշխանություն, իսկ համապատասխան իշխանությամբ օժտված է Եկեղեցու Նախագահը, կամ նա, որին նա կարող է նշանակել: Եկեղեցու յուրաքանչյուր պաշտոնյա գտնվում է նրա ղեկավարության ներքո, իսկ նրան Աստված է ղեկավարում: Նրան նաև ընտրել է Տերը, որպեսզի գլխավորի Եկեղեցին, և նա կատարում է դա, երբ Եկեղեցու Քահանայությունը (որը ընդգրկում է նրա պաշտոնյաներին ու անդամներին) ընդունում և աջակցում է նրան: (տես Վարդապետություն և Ուխտեր, բաժին 107.22:)[17]

Նախագահի նշանակումն է ողջ Եկեղեցու համար հայտնություններ ստանալը:

Տերը նաև ամեն ժամանակահատվածում նշանակել է մեկին, որպեսզի կրի հայտնության բանալիները ողջ Եկեղեցու համար՝ նրա բոլոր կազմակերպություններում, պաշտոններում, արարողություններում և վարդապետություններում: Հայտնության ոգին շնորհվում է բոլոր անդամներին, որպեսզի յուրաքանչյուրն օգուտ ստանա և լուսավորվի ոգեշնչմամբ, և համաձայն այն ասպարեզի, որտեղ նա կանչվել է աշխատելու: Սակայն ինչ վերաբերում է ողջ Եկեղեցուն, միայն Եկեղեցու գլխին կանգնած մարդուն է նշանակված պատվիրանի ձևով հայտնություններ ստանալ և վերջ տալ հակասությանը: Իր խորհրդականների օգնությամբ նա նախագահում է ողջ Եկեղեցու վրա ամբողջ աշխարհում. այդպիսով Առաջին Նախագահությունը իրավունք ունի հեղինակավոր ձևով ուղղություն տալու այն հարցերում, որոնք վերաբերում են Եկեղեցու շինությանը, ղեկավարմանը և կանոնակարգմանը:[18]

Վերջին Օրերի Սրբերը իրենց հավատքում կառչում են այն սկզբունքից, որ . . . Եկեղեցու Նախագահը ընդունվում է որպես միակ մարդ, որի միջոցով աստվածային հաղորդակցությունը կրոնական կազմակերպություն է գալիս որպես օրենք և վարդապետություն, որ նման հայտնությունը որպես Աստծո կամք կարող է գալ ցանկացած պահի, ցանկացած հարցի շուրջ, լինի դա հոգևոր, թե աշխարհիկ, և ի վերջո, որ Վերջին Օրերի յուրաքանչյուր Սրբի մտքում նման հայտնությունը, ինչպիսի հարցի էլ որ այն առնչվի, ինչպիսի խորհուրդ տա կամ պահանջ ներկայացնի, առաջնակարգ նշանակություն ունի:[19]

Այն պահին, երբ անհատը բարձրանում է՝ ենթադրելով, որ ինքն իրավունք ունի ղեկավարելու, թելադրելու կամ դատելու իր եղբայրներին, հատկապես նրանց, ովքեր նախագահում են, նրան պետք է անհապաղ կանգնեցնել, այլապես արդյունքը կլինի տարաձայնությունները, բաժանումներն ու խառնաշփոթը: Այս Եկեղեցու ամեն մի տղամարդ և կին պետք է լավատեղյակ լինի, որպեսզի չտրվի նման ոգուն: Այն պահին, երբ նման զգացում է ի հայտ գալիս, նրանք պետք է հանդիմանեն այն, քանզի դա ուղղակիորեն հակասում է Քահանայության կարգին և այս աշխատանքի ոգուն ու բնույթին: Մենք կարող ենք որպես հեղինակավոր բան ընդունել միայն այն, ինչն ուղղակիորեն գալիս է նշանակված ճանապարհով, քահանայության հաստատված կազմակերպությունների միջոցով, որը և Աստծո կողմից նշանակված ճանապարհն է, որով հայտնի է դառնում նրա միտքն ու կամքն այս աշխարհի վերաբերյալ:[20]

Բացարձակապես անհարիր, անխոհեմ և անհեթեթ կլիներ ենթադրելը, որ Աստված կանչելով մի մարդու և նշանակելով նրան այս աշխատանքը, շրջանցի նրան և մեկ ուրիշին նշանակի՝ այդ նույն նպատակն իրականացնելու համար: Ոչ մի խելամիտ մարդ ոչ մի վայրկյան չի համակերպվի նման ենթադրության հետ: Նմանատիպ հարցին լուրջ նայելը կնշանակեր Ամենազորին մեղադրել անհետևողականության մեջ, համարելով Նրան խառնաշփոթի, տարաձայնության և հերետիկոսության մեջ: Աստծո Արքայությունը երբեք նման ձևով չի հաստատվել երկրի վրա:[21]

Եթե [Եկեղեցու Նախագահը] ընկնի անհավատության մեջ, Աստված կհեռացնի նրան իր տեղից: Ես վկայում եմ Իսրայելի Աստծո անունով՝ Նա երբեք չի հանդուրժի, որ Եկեղեցու ղեկավարը, որին ինքն է ընտրել որպես գլխավոր, խախտի Իր Օրենքները և ուրանա: Այն պահին, երբ նա այդ ուղին բռնի,

Աստված կհեռացնի նրան։ Ինչո՞ւ։ Որովհետև հանդուրժել, որ ամբարիշտ մարդը լինի նման տեղում նշանակում է, այլ խոսքերով, թույլ տալ, որ աղբյուրը պղտորվի, որը Նա երբեք չի հանդուրժի։[22]

Աստված կպատվի և կմեծարի Իր ծառաներին։

[Սա] մարդու աշխատանքը չէ, այլ Ամենազոր Աստծո. և Նրա գործն է հետևել, որ մարդիկ, ովքեր զբաղեցնում են այս դիրքը Իր սրտով են, մարդիկ, որոնք հրահանգներ են ստանում, կիրագործեն դրանք Իր կամքի և խորհուրդների համաձայն։[23]

[Աստծո] քահանայության մեջ միշտ կլինեն հավատարիմ մարդիկ, որոնք կհամապատասխանեն այս տեղին, մարդիկ, որոնց մեջքը հարմարեցված կլինի նման բեռ կրելուն, մարդիկ, որոնց միջոցով Նա կարող է աշխատել և կարգավորել Իր Եկեղեցու գործերը, որոնք կկատարվեն ըստ Իր կամքի և խորհուրդների։ Եվ այն պահին, երբ մարդիկ հույսը դնում են մեկ այլ աղբյուրի վրա, նրանք բաց կլինեն Սատանայի գայթակղիչ ազդեցության համար և կդնեն իրենց մի վիճակում, երբ դևի ծառաները լինելու հավանականությունը մեծ է։ Նրանք տեսադաշտից կորցնում են ճշմարիտ կարգը, որին հետևողները վայելում են Քահանայության օրհնությունները։ Նրանք դուրս են գալիս Աստծո արքայության սահմանից և ոտք են դնում վտանգներով լի հողի վրա։[24]

Աստված կպատվի և կմեծարի իր ծառաներին մարդկանց առաջ։ Նա կաջակցի նրանց արդարությամբ։ Նա կբարձրացնի նրանց, կբարձրացնի նրանց Իր ներկայության մեջ և նրանք կճաշակեն նրա փառքից հավիտյանս հավիտենից։[25]

Ես բերում եմ իմ վկայությունը, որ նրանք, ովքեր հաջորդել են Մարգարե Զոզեֆ Սմիթին այս Եկեղեցու նախագահության մեջ, աստվածային իշխանություն են ունեցել։ Նրանք Աստծո մարդիկ էին . . . Ես կարող եմ վկայել Բրիգամ Յանգի, Զոն Թեյլորի, Վիլֆորդ Վուդրուֆի և Լորենզո Սնոուի ազնվության, պատվարժանության, կյանքի մաքրության, բարձր բանականության, աստվածային առաքելության և կոչման մասին։ Նրանք ոգեշնչվել էին Աստծո կողմից կատարելու այն առաքելությունը, որի համար կանչվել էին, և ես գիտեմ դա։ Ես գոհություն եմ հայտնում Աստծուն այդ վկայության և Հոգու համար, որը դրդում է ինձ և ձգում դեպի այդ մարդիկ, դեպի իմ Աստվածը և իմ Քավիչը։[26]

Իմ եղբայրներ և քույրեր, իմ գործն ու իմ պարտականությունն է քարոզել Հիսուս Քրիստոսի Ավետարանը և Նրան, որը խաչվեց ու բարձրացվեց մեռելներից և Իր Հոր, մեր Աստծո աջ կողմում գահին նստեց զորությամբ, փառքով և մեծությամբ: . . . Ես պետք է իմ ուժերի սահմանում լավագույն ձևով աշխատեմ այն մարդկանց համար, որոնց Աստված իմ հոգածությանն է վստահել: Ես նաև պետք է իմ պարտականությունները կատարեմ Աստծո մարդկանց հանդեպ, որոնց համար, Նրա կամքով, ես պետք է լինեմ խոնարհ ծառա և Ավետարանի ուսուցիչ:[27]

Սա Աստծո աշխատանքն է, և ես աղաչում եմ ձեզ, որ չմոռանաք դա: Ես աղերսում եմ ձեզ, որ չդադարեք հավատալ դրան, քանզի դա է ճշմարիտությունը: Այն ամենը, ինչ Տերն ասել է այս վերջին օրերի աշխատանքի մասին, կկատարվի: Աշխարհը չի կարող խոչընդոտել դրան: . . . Աստված ղեկի մոտ է, և նա կտանի իր ժողովրդին դեպի հաղթանակ:[28]

Ամեն անգամ, երբ ասում եմ այն, ինչն Աստծո համար ընդունելի է, երբ հայտնում եմ Նրա ճշմարտությունը, դա տեղի է ունենում Նրա Հոգու ներկայությամբ և ազդեցությամբ, և հատկապես Նրա պատվի և Նրա փառքի համար է, որ կատարում եմ դա: Ես երբեք որևէ պատիվ չեմ վերցրել ինձ վրա: Ես պատիվ չեմ փնտրում: Ես ոչինչի համար չեմ հավակնում, բացի Քրիստոսի Եկեղեցու անդամը լինելուց, պատիվ ունենալ լինելու անարատ, անբիծ, անխախտ և անհողդողդ իմ Աստծո և Նրա Որդու արքայության մեջ:[29]

Կամ Աստծո արքայությունը կամ ոչինչ, ինչ ինձ է վերաբերում: Ես անձնապես ինձանից ոչինչ չեմ ներկայացնում այս աշխատանքում, և ես ոչինչ եմ, չհաշված իմ պարտականությունը կատարելու գործում իմ համեստ ջանքերը, քանի դեռ Տերը տալիս է ինձ այդ հնարավորությունը: Սակայն սա Աստծո արքայությունն է: Աստծո արքայության տակ ես ի նկատի ունեմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմակերպությունը, որի թագավորն ու գլուխը Հիսուս Քրիստոսն է:[30]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞վ է ղեկավարում Եկեղեցին: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հասկանալ, որ «ոչ *ոք* չի ղեկավարի Աստծո ժողովրդին, ոչ էլ նրա գործը»:

- Ի՞նչ օրհնություններ են խոստացվել Եկեղեցու անդամներին, եթե նրանք հավատարմորեն հետևեն Եկեղեցու Նախագահին: (Տե՛ս նաև Վ և Ու 21.4–6:) Հետևելով կենդանի մարգարեի խորհրդին, ինչպե՞ս եք օրհնվել դուք:
- Ինչպե՞ս կարող եք աջակցել Առաջին Նախագահությանը և Տասներկու Առաքյալների Քվորումին իրենց աշխատանքում:
- Ի՞նչ են նշանակում մարգարեի, տեսանողի և հայտնողի «վեհ կոչումները»: Ո՞ւմ են այդ կոչումները վերաբերում:
- Ի՞նչ են քահանայության բանալիները: Ի՞նչ է նշանակում աջակցել Եկեղեցու Նախագահին որպես երկրի վրա միակ մարդու, որը կրում է քահանայության բոլոր բանալիները և իշխանություն ունի գործածել դրանք:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ միայն Եկեղեցու Նախագահն է նշանակված հայտնություն ստանալու ողջ Եկեղեցու համար: Ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել կեղծ մարգարեներին և կեղծ հայտնություններին հավատալուց:
- Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ Եկեղեցու Նախագահը միշտ Աստծո կամքով կղեկավարի մեզ:

Հղումներ

1. See Conference Report, Oct. 1901, 71.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 169.
3. *Gospel Doctrine,* 154.
4. *Gospel Doctrine,* 76.
5. *Gospel Doctrine,* 210.
6. *Gospel Doctrine,* 138–39.
7. In Conference Report, Oct. 1902, 87.
8. In Conference Report, Apr. 1898, 69.
9. *Gospel Doctrine,* 176.
10. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:248.
11. *Messages of the First Presidency,* 4:307.
12. *Gospel Doctrine,* 177–78.
13. *Gospel Doctrine,* 136.
14. *Gospel Doctrine,* 176.
15. *Gospel Doctrine,* 43–44.
16. *Gospel Doctrine,* 175–76.
17. *Gospel Doctrine,* 174.
18. *Messages of the First Presidency,* 4:270.
19. *Messages of the First Presidency,* 4:154.
20. *Gospel Doctrine,* 41–42.
21. *Deseret News: Semi-Weekly,* 26 June 1883, 1.
22. *Deseret News: Semi-Weekly,* 26 June 1883, 1.
23. *Deseret News: Semi-Weekly,* 26 June 1883, 1.
24. *Gospel Doctrine,* 42.
25. *Gospel Doctrine,* 502.
26. *Gospel Doctrine,* 169.
27. In Conference Report, Oct. 1915, 6–7.
28. *Gospel Doctrine,* 502.
29. In Conference Report, Apr. 1912, 137–38.
30. *Gospel Doctrine,* 154.

Կիրակին պահելը. որ քո ուրախությունը լիակատար լինի

Կիրակին սահմանվել է Աստծո կողմից, որպեսզի մենք երկրպագենք, աղոթենք և մեր տուրքը մատուցենք Բարձրյալին:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը ընդունում և ուսուցանում էր, որ Վերջին Օրերի Սրբերի մեծ պատասխանատվությունն է՝ պատվել Կիրակին: Նա Սրբերին ուսուցանում էր՝ երկրպագել Տիրոջը և այդ ժամանակն օգտագործել իրենց ընտանիքները ուսուցանելու և օրհնելու նպատակով: Նա ասել է. «Կիրակի օրերին, եթե խոսենք իմ մասին, ծառայության ժամերից զատ, ես երազում էի այն արտոնության մասին, որ կարող էի նստել տանը՝ իմ ընտանիքի հետ, զրուցել նրանց հետ, այցելել նրանց և ավելի շատ մտերմանալ նրանց: Ես երազում էի այն արտոնության մասին, որ կիրակի օրն այդ նպատակի համար տրամադրեի այնքան ժամանակ, որքան կարող էի, որպեսզի ավելի լավ ծանոթանայի իմ երեխաներին, կապ պահպանեի նրանց հետ, որպեսզի նրանք կապ պահպանեին սուրբ գրքերի հետ և ուրախությունից, կատակներից, ծիծաղից, զվարճանքներից ու նման այլ բաներից բացի մտածեին այլ բաների մասին ևս»:[1]

Նա նաև ուսուցանել է Տիրոջ կողմից սրբագործված օրը պղծելու հետևանքների մասին: 1898թ. հունիսի 12-ին, կիրակի օրը, Սոլթ Լեյք Սիթիի Թաբերնաքլում նա ասաց. «Երբ գալիս էի այս հանդիպմանը, ես հասա մի եղբոր, որը նշեց այն փաստը, որ կայարանի մոտով անցնելիս մարդկանց մի հոծ բազմություն էր տեսել, որոնք պատրաստվում էին մեկնել ինչ-որ հաճելի հանգստյան վայր: . . . Եթե նրանցից որևէ մեկն իրեն Վերջին Օրերի Սուրբ է համարում, ապա այն ուղին, որով նա գնում է այսօր, հակասում է Աստծո օրենքին, հակասում է այն ուխտերին, որ նա

կապել է մկրտության ջրերում և հակասում է այն ուխտերին, որոնք նա կապել է, գտնվելով այն վայրերում, ուր Վերջին Օրերի Սրբերին է թույլատրվում լինել: Նրանք խախտում են Կիրակի օրը, չեն պատվում Տիրոջ պատվիրանը, ցույց են տալիս, որ չեն հնազանդվում օրենքին և կատարում են այն, ինչը հաճելի չէ Աստծո աչքում, որն էլ, ի վերջո, կվնասի իրենց, իհարկե, եթե չտանի ուրացության»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Տերը սահմանել և սրբագործել է յոթ օրերից մեկը:

Աստված ստեղծել կամ նախատեսել է կիրակի օրը որպես հանգստյան, երկրպագության օր, բարի գործերի, խոնարհության ու ապաշխարության, Ամենազորին հոգով ու ճշմարտությամբ երկրպագելու օր:[3]

Ամբողջ աշխարհում աճող միտում է նկատվում՝ անտեսել Կիրակին պահելը: «Հիշիր հանգստության օրը սուրբ պահելու համար» պատվիրանը նույնքան օրենք է հանդիսանում այսօր, որքան երբ այն տրվեց Իսրայելին Սինա սարի վրա [Ելից Ի.8]:[4]

Կիրակին հանգստության և երկրպագության օր է, որը նախատեսվել և հաստատվել է Տիրոջ հատուկ պատվիրանով, որը տրվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, և մենք պետք է պատվենք և սուրբ պահենք այն: Մենք նաև պետք է սովորեցնենք այս սկզբունքը մեր երեխաներին:[5]

Յոթ օրերից մեկը հաստատվել և սրբագործվել է որպես երկրպագության օր, լուրջ մտքերի օր, աղոթքի և զոհաբանության օր, և Տիրոջ Ընթրիքը ճաշակելու օր՝ ի հիշատակ Նրա և Նրա կատարած անզուգական Քավության: Եկեք սովորեցնենք մեր երեխաներին, որ նրանք պետք է սուրբ պահեն Կիրակին, և նաև սիրով անեն դա, քանի որ Աստված է պատվիրել: Այդ ժամանակ մյուս օրերին նրանք օրինական ձևով կթարմանան ու կհանգստանան, փոփոխություն ու հաճույք կզգան: . . . Եկեք չպղծենք Կիրակին: . . .[6]

Ի՞նչ պետք է մենք անենք Կիրակի օրը:

Պատվեք Կիրակին, և այն սուրբ պահեք: Կիրակի օրը երկրպագեք Տիրոջը: Մի աշխատեք: Կիրակի օրը մի փնտրեք սին հաճույքներ: Հանգստացեք և թարմացրեք ձեր միտքը կյանքի և փրկության սկզբունքների մասին աղոթելով, սովորելով և խորհելով: Սրանք են Կիրակի օրվա օրինավոր գործերը: . . .

Սոլթ Լեյքի 20-րդ Ծխի երգչախումբը 1900-ականների սկզբին: Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը բարձր էր գնահատում երաժշտությունը, որը կատարվում էր «Սրբերի երգչախմբերի» կողմից, որպես «Աստծո բարեպաշտ գոհաբանություն», որը կարևոր է կիրակնօրյա մեր երկրպագության համար (*Gospel Doctrine,* 259):

Թող որ մարդիկ այստեղից տուն գնան և տանեն այս ուղերձն իրենց հետ և հաղորդեն այն այստեղ բացակա գտնվող իրենց ընտանիքի անդամներին: Ասացեք նրանց, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահությունը դեմ է Կիրակի օրը խախտելուն:[7]

Կիրակին պատշաճ ձևով պահելը յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի ուղղակի պարտականությունն է, և այն վերաբերում է նաև երիտասարդ տղամարդկանց ու կանանց, տղաներին ու աղջիկներին: Հնարավոր է, տարօրինակ կթվա այն, որ անհրաժեշտություն է առաջանում կրկնել այսքան հաճախակի հաստատվող փաստը: Սակայն կարծես դեռևս կան ոմանք, իսկ երբեմն ամբողջ համայնքներ, որոնք արհամարհում են այս պարտականությունը և այդ իսկ պատճառով նման հորդորի կարիքն ունեն:

Ի՞նչ պետք է մենք անենք Կիրակի օրը: Մարգարե Զոզեֆին տրված Տիրոջ հայտնությունները շատ հստակ են այդ առումով և պետք է կառավարեն մեզ, քանզի դրանք խիստ ներդաշնակության մեջ են գտնվում Փրկչի ուսմունքների հետ: Ահա այդ պարզ պահանջներից մի քանիսը.

Կիրակին տրված է ձեզ, որ ձեր գործերից հանգստանաք։

Կիրակին հատուկ օր է ձեզ համար, որ երկրպագեք, աղոթեք և ջանք ու եռանդ ներդնեք ձեր կրոնական հավատքի ու պարտականության մեջ՝ տուրք մատուցեք Բարձրյալին։

Կիրակին մի օր է, երբ ձեզանից պահանջվում է ձեր ժամանակն ու ուշադրությունը նվիրել Տիրոջը, լինի դա ժողովի ժամանակ, տանը, կամ ուր էլ որ լինեք։ Դա պետք է միշտ պահեք ձեր մտքում։

Կիրակին մի օր է, երբ դուք պետք է ձեր եղբայրների և քույրերի հետ հաճախեք Սրբերի ժողովներին, պատրաստ լինելով ընդունելու Տիրոջ ընթրիքի հաղորդությունից. նախ զղջաք ձեր կատարած մեղքերի համար Տիրոջ և ձեր եղբայրների ու քույրերի առաջ, և ներեք ձեր մերձավորներին, եթե ցանկանում եք, որ Տերը ների ձեզ։

Կիրակի օրը դուք ուրիշ բաներ չպետք է անեք, միայն թող ձեր ուտելիքը պատրաստվի սրտի պարզությամբ, որ ձեր ծոմապահությունը լինի կատարյալ, իսկ ձեր ուրախությունը՝ լիակատար։ Ահա, թե ինչն է Տերը կոչում ծոմապահություն և աղոթք [տես ՎԵՈՒ 59.13–14]։

Կիրակին պետք է այդպես անցկացնել նաև այն պատճառով, որ այդ մասին հստակ նշված է հայտնություններում։ Որպեսզի դուք կարողանաք էլ ավելի անբիծ պահել ձեզ աշխարհից, և այդ նպատակով նաև Սրբերից պահանջվում է գնալ աղոթքի տուն և իրենց հաղորդությունները մատուցել Կիրակի օրը [տես ՎԵՈՒ 59.9]։ . . .

Տիրոջը հաճելի չեն այն մարդիկ, որոնք գիտեն այս ամենը և չեն կատարում։

Մարդիկ չեն հանգստանում իրենց գործերից, եթե նրանք ցանում են ու տնկում, փորում են ու հողից հանում։ Նրանք չեն հանգստանում, երբ ամբողջ կիրակի օրն անցկացնում են տանը՝ հասարակ տնային գործեր կատարելով, քանի որ մյուս օրերին զբաղված լինելու պատճառով չեն կարողացել անել։

Մարդիկ ջանք ու եռանդ չեն գործադրում իրենց կրոնական հավատքի ու պարտականության մեջ, երբ կիրակի առավոտյան շտապում են . . . դեպի կիրճերը, հանգստյան վայրերը, այցելում են ընկերներին կամ իրենց կանանց ու երեխաների հետ գնում են զվարճանքի վայրեր։ Այդպիսով, նրանք իրենց տուրքը չեն մատուցում Բարձրյալին։

Հաճույք ու զվարճանք փնտրելով նրանք իրենց ժամանակն ու ուշադրությունը չեն նվիրաբերում Տիրոջը երկրպագելուն։ Ոչ էլ

այսպիսով նրանք կարող են ցնծալ թողության և երկրպագության ոգով, որը գալիս է սուրբ հաղորդությունն ընդունելու հետ:

Տղաներն ու երիտասարդ տղամարդիկ ծոմ չեն պահում սրտի պարզությամբ, որ իրենց ուրախությունը կատարյալ լինի, երբ նրանք Կիրակին անցկացնում են գյուղի պաղպաղակի կրպակի կամ ռեստորանի մոտակայքում թրև գալով, խաղեր խաղալով կամ անվաչմուշկներով սահելով, ձկնորսությամբ, որսորդությամբ կամ սպորտով զբաղվելով, շրջագայություններ կատարելով կամ զբոսնելով: Նման պահվածքը նրանց աշխարհից անբիծ չի թողնի, այլ նրանց ետ կպահի Տիրոջ հարուստ խոստումներից՝ ուրախության փոխարեն նրանց բերելով վիշտ, խաղաղության փոխարեն՝ անհանգստություն ու տագնապ, խաղաղություն, որը գալիս է արդար գործերի հետ:[8]

Մենք կարող ենք կամ կկարողանայինք օգուտ քաղել, եթե կիրակի օրվա բոլոր ժամերը նվիրեինք միայն ինչ-որ գործի, զբաղմունքի կամ ուսումնասիրության, որը կզարգացներ մեր միտքը և ամբողջովին կծանոթացներ Եկեղեցում մեր պարտականություններին, Եկեղեցու օրենքներին, Աստծո պատվիրաններին, և Հիսուս Քրիստոսի ավետարանի կանոններին: . . .

Ես համոզված եմ, որ Վերջին Օրերի Սրբերի պարտականությունն է՝ պատվել Կիրակին և այն սուրբ պահել, ինչպես Տերն է պատվիրել մեզ: Գնացեք աղոթքի տուն: Լսեք հրահանգները: Բերեք ձեր վկայությունը ճշմարտության մասին: Խմեք գիտելիքի ու ուսուցման աղբյուրից, որը կարող են մեզ համար բացել նրանք, ովքեր ոգեշնչված են մեզ հրահանգելու: Տուն գնալով եկեք հավաքենք ընտանիքը, երգենք մի քանի երգ: Եկեք Աստվածաշնչից, Մորմոնի Գրքից կամ Վարդապետություն և Ուխտերից մեկ կամ երկու գլուխ կարդանք: Եկեք քննարկենք ավետարանի սկզբունքները, որոնք վերաբերում են աստվածային գիտելիքի դպրոցում առաջընթացին, և այս ձևով անցկացնենք յոթ օրերից մեկը: . . .

Ես կարծում եմ, որ լավ կլինի մեզ համար, եթե առնվազն շաբաթը մեկ անգամ, վերցնենք մեր երեխաներին մեր թևերի տակ, ուսուցանենք նրանց, թե ինչ է պատիվն ու ազնվությունը, արդարի ու աստվածայինի հանդեպ ակնածանք ցուցաբերելը, ուսուցանել նրանց հարգել տարիքով և հաշմանդամ մարդկանց, լինել բարի օտարականների հանդեպ: . . . Մենք պետք է ուսուցանենք նրանց քաղաքավարի լինել: Մենք պետք է մեր տղաներին սովորեցնենք ջենտլմեն լինել, իսկ աղջիկներին՝ օրիորդներ լինել: Իսկ երբ ես խոսում եմ օրիորդի կամ ջենտլմենի մասին, ես ի նկատի ունեմ տղա կամ աղջիկ, տղամարդ կամ կին, որն

անկեղծորեն համեստ, հեզ, մեղմ, համբերատար, սիրով և բարությամբ է վերաբերվում մարդկանց զավակներին։ . . .

Շատ բաներ կան, որ կարող ենք կատարել Կիրակի օրը, որը կզբաղեցնի, կհետաքրքրի և կհրահանգի մեր երեխաներին տանը, ծառայությունից ազատ ժամերին։ . . . Թող որ նրանք զվարճանան հարմար պահերին, սակայն թող կիրակի օրերին նրանց լավ բաներ ուսուցանվեն։[9]

Իմաստուն կլինի, որ շաբաթ երեկոն լինի Տիրոջ օրվա նախաբանը։

Եկեղեցու անդամները պետք է այնպես ծրագրեն իրենց աշխատանքը, որպեսզի չարդարանան, որ կողոպտել են Տիրոջ օրվա սրբությունը։ Դրա համար թող որ տղաներն ու աղջիկները շաբաթվա ընթացքում [ժամանակ] տրամադրեն օգտակար զվարճանքին ու հանգստին, կիրակին նվիրելով միայն հոգևոր մշակույթին և երկրպագությանը։ Ինչպես նաև անհրաժեշտ է այնպես ծրագրել մեր զվարճանքները, որ դրանք խորչընդոտ չհանդիսանան մեր երկրպագությանը։[10]

Շաբաթ երեկոն կարելի է խելամտորեն նվիրել խորհրդաստ բովանդակալից զրույցին կամ օգտակար ընթերցանությանը, որը կարող է հանդիսանալ կիրակի օրվա նախաբան։[11]

Ժամանակակից լավ . . . պատվիրանը կարող է հնչել հետևյալ կերպ. Չափից շատ մի աշխատեք կամ մի տանջվեք շաբաթ օրը, որպեսզի զրկեք ձեզ կիրակի օրվա աստվածապաշտությունից և երկրպագությունից, որը պատկանում է այդ հանգստության օրվան։

Տանը անցկացված շաբաթ օրը նախատեսված է տունը մաքրելու, եփելու, կարելու և ամեն տեսակի վերանորոգումներ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են Կիրակի օրը պահելու համար։ Ինչ վերաբերում է աշխատանքին, շաբաթ օրը նախատեսված է շաբաթվա ընթացքում թողնված անավարտ գործերը կատարելու, ավարտին հասցնելու համար։

Հետևանքներն այն բանի, թե ինչպես ենք մենք անցկացնում շաբաթ օրը, շատ դեպքերում հանդիսանում են ծուլությունն ու դատարկ անտարբերությունը, որոնք համակում են մեր զգացմունքները, ու եռանդի պակասը, որոնք գրեթե անհամատեղելի են երկրպագության ոգու հետ։ Շաբաթ առավոտից մինչև երեկո տքնաջան աշխատանքից հյուծված տղամարդը կամ կինը չի

կարող հոգով ու ճշմարտությամբ պատշաճ ձևով երկրպագել Աստծուն:[12]

Մարդիկ, ովքեր սովորություն ունեն պղծելու Տիրոջ օրը, կկորցնեն Տիրոջ Հոգին:

Դատվիր Կիրակին և այն սուրբ պահիր: Արդյո՞ք մենք այդպես ենք վարվում: Անհրաժե՞շտ է արդյոք դա: Անշուշտ, անհրաժեշտ է այդպես վարվելը, որպեսզի Աստծո օրենքի և պատվիրանների հետ ներդաշնակության մեջ գտնվենք. և ամեն անգամ, երբ խախտում ենք այդ օրենքը կամ այդ պատվիրանը, մենք մեղավոր ենք լինում Աստծո օրենքը զանց առնելու մեջ: Եվ ինչ հետևանք կունենա այն, եթե մենք այդ ձևով շարունակենք: Մեր երեխաները կհետևեն մեր քայլերին, նրանք կանարգեն յոթ օրերից մեկը սուրբ պահելու Աստծո պատվիրանը և կկորցնեն Աստծո օրենքներին և նրա պահանջներին հնազանդվելու հոգին, ճիշտ ինչպես հայրը կկորցնի այն, եթե շարունակի խախտել պատվիրանները:[13]

Այն մարդիկ, ովքեր սովորություն են դարձրել պղծել Տիրոջ օրը, որոնք արհամարում են հրապարակային երկրպագությունը, հաղորդությունն ընդունելը և չեն հիշում Կիրակին սուրբ պահելը, չեն կարող մնալ Եկեղեցու ընկերակցության և անդամության մեջ: Նրանք կթուլանան հավատքի մեջ և կդառնան հոգով հիվանդ, կկորցնեն Հոգին, Աստծո բարեհաճությունը, և, ի վերջո, կզրկվեն Եկեղեցում ունեցած իրենց դիրքից և հնազանդների ու հավատարիմների հետ իրենց վեհացումից:[14]

Տերն ասել է. «Հիշիր հանգստության օրը սուրբ պահելու համար»: Սա Աստծո օրենքն է, ոչ միայն այս ժողովրդի համար, այլ ողջ մարդկության համար: Եկեղեցու անդամը, որը չի պատվում Կիրակին և այն սուրբ չի պահում, օրինազանցություն է գործում. նա չի շարունակում մնալ ճշմարտության խոսքում. իրականում նա Քրիստոսի աշակերտը չէ. նա չի իմանա ճշմարտությունը, և ճշմարտությունը չի ազատի նրան, եթե նա իրոք չիմանա այն և չապրի դրանով:[15]

Մեր օրերում թատերական ներկայացումներն ու տարբեր հասարակական զվարճանքները տեղի են ունենում կիրակի օրերին, որոնք հակասում են Տիրոջ հայտնություններին, և դրանք հավատքը կործանող հզոր գործոն են հանդիսանում նրանց համար, ովքեր մասնակցում են դրանց: Սիոնի երիտասարդության ծնողները պետք է պաշտպանեն իրենց երեխաներին դրանից և ամեն չարից, քանի որ նրանք պատասխանատու են այն

բանի համար, որ իրենց զավակները ճանապարհից չշեղվեն ծնողական իրենց անուշադրության պատճառով:[16]

Վերջին Օրերի Սրբերի պատասխանատվությունն է՝ պատվել Կիրակին, կատարել այն պարտականությունները, որոնք դրված են իրենց վրա այդ օրը, ինչպես նաև, լինել ազնիվ իրենց մերձավորների հանդեպ և արդարակյաց կյանք վարել ամեն տեսակետից . . . Ծնողների պարտականությունն է նաև, օրինակ լինել իրենց երեխաների համար՝ կիրակին պատվելով, ընտանիքում աղոթելով և որպես Վերջին Օրերի Սրբեր, բոլոր պարտականությունները կատարելով . . . Այն հայրերն ու մայրերը, ովքեր չեն սովորեցնում իրենց զավակներին և չեն քաջալերում նրանց կատարել իրենց պարտականությունները, կապրեն մինչև այն օրը, որ կզղջան իրենց իսկ անմտության համար:[17]

Նրանք, ովքեր պատվում են Կիրակին, վայելում են աշխարհիկ ու հոգևոր մեծ օրհնությունները:

Կիրակին ոչ միայն հանգստյան, շաբաթվա առօրյա սովորական գործերից շեղվելու օր է, այն ավելին է: Դա երկրպագության օր է, երբ մարդու հոգևոր կյանքը կարող է հարստանալ: Անբանության, ֆիզիկական ուժերը վերականգնելու օրը շատ հաճախ տարբերվում է Աստծո կողմից սահմանված հանգստյան օրից: Ֆիզիկապես հյուծված լինելը և անբանությունը անհամատեղելի են երկրպագության ոգու հետ: Պատշաճ ձևով պարտականությունների կատարումն ու Կիրակի օրվա բարեպաշտությունը պահելը, որը բնորոշ է այդ օրվան, կպարգևեն լավագույն հանգիստը, որը կարող են վայելել մարդիկ Կիրակի օրը:[18]

Ես անկեղծորեն ցանկանում եմ . . . որ մենք ամրանանք մեր հավատքում, դառնանք ավելի լավ Վերջին Օրերի Սրբեր, քան եղել ենք նախկինում: Սա է հիմնական նպատակներից մեկը, որ մենք ունենք, երբ միասին հավաքվում ենք Կիրակի օրը . . . Ես համոզված եմ, որ մենք սովորություն ենք ձեռք բերել գալու հավաքին առանց սրտի հատուկ ապաշխարության: Հնարավոր է, կոպիտ եմ արտահայտվում, և սա չի վերաբերում մեզ բոլորիս, սակայն հավաստիացել եմ, որ շատերը գալիս են ժողովներին անտարբեր, առանց հատուկ նպատակ ունենալու: Կարծում եմ, որ մենք պետք է գանք, որպեսզի հավաստիացնենք Տիրոջը, որ հիշում ենք Կիրակին և նպատակ ունենք սովորել Նրա ճանապարհները . . .

Կարծում եմ, բոլորը պետք է տոգորվեն այն մտքով, որ այս աշխատանքի մի մասը կախված է յուրաքանչյուրից: Յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ կինձի այն, ինչ կցանի: Ուստի, յուրաքանչյուրը պետք է վճռականորեն աշխատի, և երբ հավաքվում ենք միասին, յուրաքանչյուրը պետք է ունենա աղոթքով լի հոգի և դուրս թափի իր հոգին ոչ միայն իր, այլ ողջ եկեղեցու համար: Եթե այդպես լինի, ոչ ոք չի հեռանա երկրպագության տնից առանց Աստծո հոգին զգալու:[19]

Արդ, որն է Սրբերին տրված խոստումը, որոնք պահում են Կիրակին: Տերը հայտարարում է, որ որքանով որ նրանք կանեն այս բաները ուրախ սրտերով ու դեմքերով, երկրի լիությունը իրենցը կլինի. «դաշտի գազաններն ու երկնքի թռչունները, և այն, ինչ մագլցում է ծառերի վրա և քայլում երկրի վրա. այո՛, և բուսականությունը, և ամեն լավ բան, որ բխում է երկրից, թե՛ սնունդ և թե՛ հագուստ, թե՛ տներ, թե՛ ամբարներ, թե՛ պտղատու այգիներ, թե՛ պարտեզներ և թե՛ խաղողի այգիներ» [տես ՎԵՌ 59.16–17]:

Այս ամենն արարվել է մարդու օգտի և գործածության համար՝ աչքը շոյելու և սիրտն ուրախացնելու, մարմինն ամրացնելու և հոգու կենարարության համար: Այս ամենը խոստացվել է նրանց, ովքեր պահում են պատվիրանները, որոնց մեջ կարևոր պատվիրան է համարվում Կիրակին պատշաճ պահելը . . .

Կարող ենք ուրախանալ և զվարճանալ, բավարարելով սրտի ցանկությունները շաբաթվա այլ օրերին, իսկ Կիրակի օրը եկեք հանգստանանք, երկրպագենք, գնանք աղոթքի տուն, ընդունենք հաղորդությունը, ուտենք մեր կերակուրը սրտի պարզությամբ և մեր տուրքը մատուցենք Աստծուն, որպեսզի երկրի լիությունը մերը լինի, և մենք ունենանք խաղաղություն՝ այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում:[20]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ նպատակներով է Տերը «սահմանել և սրբագործել Կիրակին»: Ինչպիսի՞ օրհնություններ է բերում հանգստության և երկրպագության օրը:
- Ի՞նչ է նշանակում Կիրակի օրը հանգստանալ մեր գործերից: Որո՞նք են «Կիրակի օրվա օրինավոր գործերը»: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր ընտանիքի անդամներին պատվել Կիրակին:

- Ի՞նչ է նշանակում «անբիծ մնալ աշխարհից»: Ինչպե՞ս է Կիրակին պահելը օգնում մեզ դրանում:
- Ինչպե՞ս է ուրախությունն ու ցնծությունը Կիրակին պահելու մի մասը հանդիսանում: (Տես նաև ՎԵՈՒ 59.13–14:) Ինչպե՞ս է Կիրակին չհարգելը հանգեցնում տխրության, հոգին կորցնելուն և ուրացության:
- Որո՞նք են մեր ընտանեկան պարտականությունները Կիրակի օրը: Կիրակի օրը ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր երեխաներին «արդարի ու աստվածային հանդեպ ակնածանք ցուցաբերել»:
- Ինչպե՞ս կարող են կիրակնօրյա մեր գործերը օգնել կամ խանգարել մեր Կիրակի օրվա երկրպագությանը:
- Ո՞րն է մեր պարտականությունը, երբ գնում ենք Կիրակի օրվա ժողովին: Ինչպիսի՞ օրհնություններ ենք ստանում, երբ մեր ժողովներին երկրպագության ճշմարիտ հոգի ենք ունենում:
- Ինչպիսի՞ հոգևոր օրհնություններ ենք ունենում, երբ պատվում ենք Կիրակին: Ինչպիսի՞ աշխարհիկ օրհնություններ են խոստացվել մեզ (Տես նաև ՎԵՈՒ 59.9–23):

Հղումներ

1. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:17–18.
2. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1.
3. In Conference Report, Apr. 1915, 10.
4. In *Messages of the First Presidency,* 4:210.
5. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 242.
6. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1.
7. *Deseret News: Semi-Weekly,* 5 July 1898, 1.
8. *Gospel Doctrine,* 244–46.
9. In *Messages of the First Presidency,* 5:17–18, 20–21.
10. *Gospel Doctrine,* 247.
11. *Gospel Doctrine,* 242.
12. *Gospel Doctrine,* 241–42.
13. *Gospel Doctrine,* 402.
14. In *Messages of the First Presidency,* 3:123.
15. *Deseret News: Semi-Weekly,* 21 Jan. 1896, 1.
16. In *Messages of the First Presidency,* 4:210.
17. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1.
18. *Gospel Doctrine,* 242.
19. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:364–65; paragraphing added.
20. *Gospel Doctrine,* 245–46.

Նախքան 1917թ. Սոլթ Լեյք Սիթիում Յուտայի Տոհմաբանական Ընկերության գրասենյակը, որը նախակարապետն էր այսօրվա Ընտանիքի Պատմության Գրադարանի։ Ձախից աջ՝ Լիլիան Քամերոն, Ջոզեֆ Քրիչենսեն, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ և Բերտա Էմերի։

Մեր աշխատանքն է՝ հոգիներ փրկել

Մեր ամենակարևոր աշխատանքն է՝ տքնել ապրող և մահացած հոգիների փրկության համար:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Իր կյանքի ընթացքում, Զոզեֆ Ֆ. Սմիթը աշխատել է՝ ծառայելով Աստծո արքայությունում, «միշտ մտահոգվելով Տիրոջ գործը առաջ տանելու մասին»:[1] Հատուկ համաժողովի ժամանակ, հաստատվելով որպես Եկեղեցու Նախագահ, նա հորդորեց Սրբերին. «Մեր պարտականությունն է եռանդով տրվել այս աշխատանքին, այն առաջ տանելու վճռականությամբ ու սրտի փափագով, Տիրոջ օգնությամբ և Նրա Հոգու ոգեշնչմամբ, ինչպես որ դա արվել է նախկինում»:[2]

Ամբողջ աշխարհում բազմաթիվ ավելացող ծխերի և ճյուղերի Սրբերին նա խրախուսեց իրենց հնարավորության սահմաններում ծառայել և օրհնել մյուսներին: Մինչ նա նախագահում էր Անգլիայի միսիայում, Եկեղեցու անդամ Վիլիամ Ֆաուլերը Շեֆիլդից, ներկայացրեց, թե ինչ էր ինքն արել, որպեսզի առաջ տաներ Աստծո արքայության գործը: Եղբայր Ֆաուլերը, որը Եկեղեցուն միանալուց հետո մեծ փորձությունների ու դժվարությունների միջով էր անցել, մի օրհներգ էր գրել՝ որպես ավետարանում իր հավատքի արտահայտություն և երախտագիտություն այն ամենի համար, ինչ նա ստացել էր: Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը ներկա էր գտնվում այն ժողովի ժամանակ, երբ այդ օրհներգն առաջին անգամ կատարվեց: Օրհներգը սկսվեց այն խոսքերով, որոնք քաջ ծանոթ են ամբողջ աշխարհի Վերջին Օրերի Սրբերին. «Փառք քեզ Տեր, մարգարեի համար» (*Հիմներ և մանկական երգեր,* էջ 36):

Զոզեֆ Ֆ. Սմիթը գնահատում էր Տիրոջ աշխատանքում ունեցած յուրաքանչյուր հավատարիմ Սրբի ներդրումը և ցանկանում

էր իր ողջ կյանքը նվիրել բոլոր մարդկանց ծառայությանը, լինեին նրանք կենդանի, թե մահացած: Նա սիրում էր աշխատել տաճարում, որտեղ ծառայել էր որպես տաճարային արձանագրող: Նա ղեկավարել էր տաճարային աշխատանքը Էնդովմենտ Հաուսում, իսկ ավելի ուշ դարձել էր Սոլթ Լեյք Տաճարի նախագահը: 1894թ. Յուտայի Տոհմաբանական ընկերությունը նրա ղեկավարության շնորհիվ մեծ ծաղկում է ապրել: Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքը բոլոր մարդկանց բարօրությանն ու փրկությանը նվիրված առաքելություն էր, առաքելություն, որը նա պատվիրել է Սրբերին. «Չկա աշխարհում ոչինչ այնքան մեծ ու այնքան փառահեղ, որքան ապրողների փրկության և մահացածների փրկագնման համար աշխատելը»:[3]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք այստեղ երկրի վրա ենք գտնվում, որպեսզի Աստծո գործը կատարենք:

Նա, որ ուղարկեց իր Միածին Որդուն աշխարհ, որպեսզի կատարի Իր առաքելությունը, որը Նա արեց, նաև ուղարկեց ամեն մի հոգու, որը լսում է ինձ, և իսկապես աշխարհում ապրող յուրաքանչյուր տղամարդու և կնոջ, որպեսզի առաքելություն կատարի, իսկ այդ առաքելությունը չի կարող անհոգությամբ կամ անտարբերությամբ կամ էլ տգիտությամբ կատարվել: Մենք պետք է իմանանք մեր պարտականությունները, իմանանք այն պահանջները, որոնք Տերն ակնկալում է մեզանից և հասկանանք այն պատասխանատվությունները, որոնք նա դրել է մեզ վրա: Մենք պետք է իմանանք պարտականությունը, որ ունենք Աստծո և միմյանց հանդեպ, ինչպես նաև Սիոնի գործի հանդեպ, որը վերականգնվել է երկրի վրա վերջին օրերին:[4]

Եկեք հիշենք, որ մենք ներգրավված ենք Աստծո գործում, և երբ ասում եմ Աստծո գործ, ի նկատի ունեմ, որ ներգրավված ենք այն գործում, որը Ամենազորը հաստատել է երկրի վրա մեր անհատական փրկության համար: Յուրաքանչյուր մարդ պետք է աշխատի իր բարիքի և որքան հնարավոր է ուրիշների բարիքի համար: Կյանքի գիտության մեջ չկա այնպիսի գաղափար, որ մարդը աշխատում է բացառապես միայն իր համար: Նախատեսված չի եղել, որ մենք պետք է միայնակ լինենք ժամանակի և հավերժության մեջ: Յուրաքանչյուր մարդ հավատքի ընտանիքի մի անդամ է, և յուրաքանչյուր անդամ պետք է զգա իր մասը այն պարտականության, որը տարածվում է բոլորի վրա:

Յուրաքանչյուր անհատ պետք է ջանասիրաբար կատարի իր պարտականությունը: Անելով դա, և մաքուր ու անբիծ պահելով իրեն աշխարհից, նա աջակցում է ուրիշներին մաքուր ու անբիծ պահել իրենց:[5]

[Քրիստոսի ավետարանը] կենդանի, ամենօրյա, ամենժամյա կրոն է: Այն պահանջում է, որ մենք հենց հիմա, այս ժամին, այս շաբաթ, այս ամիս ու այս տարի, և այսպես շարունակ տարեցտարի, ապրենք մեր կրոնով, որը Հիսուս Քրիստոսի կրոնն է՝ արդարակեցության, ճշմարտության, ողորմածության, սիրո, ներողամտության, բարության, միասնության, խաղաղության երկրի վրա և ողջ աշխարհում, և մարդկանց հանդեպ բարի կամքի կրոն: Սա է մեր առաքելությունը:[6]

Մենք ունենք փառավոր ճակատագիր: Մենք ներգրավված ենք փառավոր գործում: Այն արժե, որ գրավի մեր ողջ ուշադրությունը, մեր կյանքը և արժե այն ամենը, ինչ Տերը տվել է մեզ, և տասն անգամ ավելին: Իրոք, այն չի կարելի համեմատել ոչ մի բանի հետ, այն ամեն ինչ է, այն անզուգական է: Դա այն ամենն է, ինչ կա և կլինի: Ավետարանը փրկություն է, և առանց դրա ոչինչ գին չունի:[7]

Մենք յուրաքանչյուրս պարտավոր ենք անել այն ամենը, ինչ կարող ենք մեր փրկությունը ձեռք բերելու համար:

Եկեք մեր փրկությունը իրականացնենք ահով ու դողով Հոր առաջ, և հավատարիմ լինենք մինչև վերջ: Հիշեք, որ դուք զինվորագրվել եք այս աշխատանքին ժամանակի և հավերժության համար: Չկա դրանից խույս տալու, դրանում թերանալու հնարավորություն, իհարկե միայն մեղքով, որից հետո գալիս է զանցանքի համար պատիժը: Սակայն եթե դուք ակնկալում եք վնհացում ստանալ, եթե դուք սպասում եք հայրերին և մայրերին, եղբայրներին և քույրերին, հարազատներին և ընկերներին, եթե դուք ակնկալում եք ունենալ փառք, բանականություն և անվերջ կյանք, դուք պետք է ձեռք բերեք այդ ամենը Աստծո աշխատանքում, քանզի դրա սահմաններից դուրս չեք կարող ձեռք բերել դրանք ոչ մի այլ տեղում: Ուստի թող որ ձեր ողջ կապվածությունը և հետաքրքրությունը կենտրոնանա այս գործի վրա: Թող որ ձեր ողջ սերը ուղղված լինի միայն այս գործին, և միայն դրան: Թող աշխարհը գնա, ուր ուզում է:[8]

Հիսուս Քրիստոսի ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկելու համար, և այն բացարձակ անհրաժեշտ է Քրիստոսի Եկեղեցու յուրաքանչյուր մարդու համար լինել արդարակյաց, պահել

Աստծո օրենքներն ու պատվիրանները, որոնք նա տվել է, որպեսզի կարողանան օգտվել Աստծո զորությունից այս կյանքում փրկություն ստանալու համար:[9]

Մենք հավատում ենք, որ այս դարի մարդիկ պետք է ապրեն, գործեն և կապված լինեն Հայր Աստծո և Որդու հետ, որպեսզի ճանաչեն Նրանց, որովհետև Նրանց ճանաչելը հավերժական կյանք է: Մենք հավատում ենք, որ որպեսզի ճանաչենք Նրանց և կապված լինենք Նրանց հետ, անհրաժեշտ է այս դարում ապրել այնպես, ինչպես ապրել են Սրբերը հին ժամանակներում, որպեսզի կարողանանք վայելել նույն օրհնությունները, ինչ և իրենք և սովորենք Նրա մասին ամեն օր, տող առ տող, ցուցում առ ցուցում, մի փոքր այստեղից, մի փոքր այնտեղից, մինչև որ գանք Հոր գիտելիքին և ինքներս ճանաչենք Նրան: Անհնարին է, որպեսզի ես իմանամ ձեր փոխարեն, կամ որևէ մարդ իմանա իմ փոխարեն: Աստծո Հոգին ձեզ չի հայտնի ավետարանը ինձ համար, կամ Հոր մասին վկայություն չի բերի ձեզ՝ ինձ համար: Ես չեմ կարող փրկել ձեզ, դուք էլ չեք կարող փրկել ինձ: Այս առումով ոչ ոք չի կարող փրկիչ լինել որևէ մեկի համար: Բայց և այնպես, մարդը, որն ունի Հոգու վկայությունն իր սրտում և ունի գիտելիք ավետարանի առաջին սկզբունքների մասին, կարող է հայտարարել դրանք ուրիշին, այդպիսով մյուս հոգին կարող է հավաստիանալ ճշմարտության մեջ և այդ մարդը ինքը ընդունի դրանք: Սակայն ավետարանի հանդեպ *իր* հնազանդությամբ և *իր* իսկ արդար գործերի շնորհիվ է նա փրկվում և ոչ թե այն մարդու, որը վկայություն է բերում իրեն: Միայն այս ճանապարհով է մարդը փրկվում:[10]

Դուք ոչ միայն պետք է հավատաք, այլև պետք է հնազանդվեք և անեք այն, ինչ [Աստված] է պատվիրում: Դուք ոչ միայն պետք է դա անեք, այլ պետք է Աստծուն նվիրեք ձեր սիրտը, սերը, ամբողջ հոգին ու ազատ կամքը: Դուք պետք է հրաժարվեք ձեր կամքից հանուն Աստծո կամքի, և պետք է անեք այն ամենը, ինչ Նա է պահանջում ձեզանից, եթե ցանկանում եք փրկվել և վերացում ստանալ Նրա ներկայության մեջ:[11]

Մենք պետք է տքնենք փրկվելու համար:

Օ՜ Աստված, թող որ չկորցնեմ ինքս ինձ: Ես չեմ կարող կորցնել իմ հարազատներին, որոնց Աստված տվել է ինձ, և որոնց համար ես պատասխանատու եմ Տիրոջ առաջ, և որոնք կախված են իմ

առաջնորդությունից, ցուցումներից և ճիշտ ազդեցությունից: Հայր, թույլ մի տուր, որ կորցնեմ հետաքրքրությունն իմ հանդեպ՝ փորձելով փրկել ուրիշներին: Գթությունը սկսվում է տնից: Հավիտենական կյանքը պետք է սկսվի տնից: Ես շատ վատ կզգամ ինձ, եթե շուտով գիտակցեմ, որ իմ տունը անտեսելու պատճառով, մինչ փորձել եմ փրկել ուրիշներին, ես կորցրել եմ ինքս ինձ: Ես դա չեմ ուզում: Տեր, օգնիր ինձ փրկել ինքս ինձ, որքանով որ մեկը կարող է օգնել մյուսին: Ես գիտակցում եմ, որ չեմ կարող փրկել որևէ մեկին, սակայն կարող եմ սովորեցնել նրանց ինչպես փրկվել: Ես կարող եմ օրինակ ծառայել իմ երեխաներին, թե ինչպես կարող են նրանք փրկվել, և իմ պարտականությունն է առաջինը դա անել: Այդ առումով ես պարտական եմ նրանց ավելի, քան որևէ մեկին այս աշխարհում: Ապա, երբ վերջացնեմ այն աշխատանքը, որը պետք է կատարեմ իմ ընտանիքում, թույլ տուր որքան կարող եմ հեռու տարածել իմ բարիք գործելու զորությունը:[12]

Այս աշխարհում մեր առաքելությունն է՝ բարիք գործել, անօրինությունը գցել մեր ոտքերի տակ, բարձրացնել արդարակեցությունը, մաքրությունը և սրբությունը՝ մարդկանց հոգիներում, և մյուս բոլոր բաներից առավել մեր երեխաների մտքում սերմանել սերն Աստծո և նրա խոսքի հանդեպ, որը պետք է դառնա նրանց համար լույսի, ուժի, հավատքի ու զորության աղբյուր, առաջնորդելով նրանց մանկությունից դեպի խոր ծերություն, և դարձնելով նրանց անսասան հավատացյալներ Տիրոջ խոսքում, վերականգնված ավետարանում և Քահանայության մեջ և Սիոնը հաստատելիս, որն այլևս չի կործանվի կամ չի տրվի ուրիշ մարդկանց: Եթե կա ինչ-որ բան, որը ես ամենաշատն եմ ցանկանում այս աշխարհում, դա այն է, որ իմ երեխաները արմատներ գցեն այս գիտելիքի ու հավատքի մեջ, որպեսզի երբեք չշեղվեն դրանից:[13]

Հոգին, որը փրկվում է այս աշխարհում այնքան թանկարժեք է Աստծո աչքում, որքան այն հոգին, որը փրկվում է տանը: Բայց մենք աշխատանք ունենք կատարելու տանը, մեր տան դռներից ներս, և մենք չենք կատարի այն, եթե անտեսենք այն աշխատանքը, որն անհրաժեշտ է կատարել մեր սեփական տանը, հետո միայն կարող ենք գնալ աշխարհ, կատարելու այն, ինչն ավելի անհրաժեշտ չէ: Եկեք կատարենք մեր պարտականությունն ամենուր:[14]

Մենք պետք է աշխատենք ապրողների և մահացածների փրկության համար։

Եկեք աջակցենք Քրիստոսին, Նրա ժողովրդին, Նրա արդար գործին ու փրկագնմանը։ Եկեք աջակցենք մեկս մյուսին այն ամենում, ինչը ճիշտ է, և բարյացակամորեն հորդորենք միմյանց սխալ քայլերի համար, որպեսզի լինենք միմյանց համար ընկերներ և փրկիչներ Սիոն սարի վրա, և որպեսզի կարողանանք օգնել թույլերին և ուժեղացնել նրանց, քաջալերենք կասկածողներին և լույս պարգևենք նրանց հասկացողությանն այնքան, որքան հնարավոր է, որպեսզի լինենք գործիքներ Աստծո ձեռքում՝ լինելու փրկիչներ մարդկանց մեջ։ Դա չի նշանակում, որ մենք մարդկանց փրկելու զորություն ունենք։ Մենք դա չունենք, սակայն մենք զորություն ունենք ցույց տալու նրանց, թե ինչպես իրենք կարող են փրկություն ստանալ Աստծո օրենքներին հնազանդվելու միջոցով։ Մենք կարող ենք ցույց տալ նրանց ինչ ուղղությամբ քայլեն, որպեսզի փրկվեն, քանի որ մենք իրավունք ունենք դա անելու, մենք գիտելիք ու հասկացողություն ունենք, ինչպես անենք դա, և մենք արտոնված ենք ուսուցանել դա . . . օրինակով և ցուցումով մեր ընկերների շրջապատում, ուր էլ որ լինենք այս աշխարհում։[15]

Մարդկանց փրկության մեջ է կայանում մեր առաքելությունը։ Մենք աշխատում ենք . . . մարդկանց բերել Հիսուս Քրիստոսի ավետարանի իմացությանը, ապաշխարությանը, հնազանդությանը՝ Աստծո օրենքի պահանջներին։ Մենք ձգտում ենք փրկել մարդկանց իրենց սխալներից, համոզել նրանց հեռանալ չարից և սովորել բարիք գործել։[16]

Մեր առաքելությունն է՝ փրկել, պաշտպանել չարից, վնհացում պարգևել մարդկանց, լույս ու ճշմարտություն բերել աշխարհ, համոզել երկրի մարդկանց շիտակ քայլել Աստծո առաջ և պատվել Նրան իրենց կյանքում։[17]

Մեր հոգու մեծության չափը . . .կարելի է որոշել . . . սփոփելու և մխիթարելու, ուրիշներին օգնելու մեր ունակությամբ, ոչ թե կենաց պայքարում ինքներս մեզ օգնելու և ուրիշներին ներքև գցելու մեր ունակությամբ։[18]

Մենք միշտ պետք է նպատակ ունենանք օգնելու ուրիշներին հաղթանակելու, ոչ թե նրանց հաղթելու։ Մեր ձգտումը հավերժական կյանքն է, մեր նպատակը՝ մարդկանց բարձրացնելը, ոչ թե նրանց ցածրացնելը։[19]

Մեր գործը աշխարհը փրկելն է, մարդկանց փրկելը, նրանց Աստծո օրենքների ներդաշնակությանը, արդարակեցության, արդարության և ճշմարտության սկզբունքներին բերելը, որպեսզի նրանք կարողանան փրկվել մեր Աստծո արքայությունում, և ի վերջո, ավետարանի արարողություններին հնազանդվելով դառնան Աստծո ժառանգներ և Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցներ: Դա է մեր առաքելությունը:[20]

Մենք չենք ավարտի մեր աշխատանքը, մինչև որ չփրկենք մեզ, այնուհետև մինչև չփրկենք բոլոր նրանց, ովքեր կախված են մեզանից, քանի որ մենք պետք է դառնանք փրկիչներ Սիոն սարի վրա, ինչպես և Քրիստոսը: Մենք կանչված ենք այս առաքելությանը: Մահացածները կատարյալ չեն առանց մեզ, ոչ էլ մենք ենք կատարյալ առանց նրանց: Մենք առաքելություն ունենք կատարելու նրանց համար և նրանց անունից: Մենք որոշակի աշխատանք ունենք անելու, որպեսզի ազատենք նրանց, ովքեր իրենց անգիտության և անբարենպաստ պայմանների պատճառով, որոնց մեջ հայտնվել են այստեղ լինելու ժամանակ, պատրաստ չեն հավերժական կյանքին: Մենք պետք է դուռ բացենք նրանց համար կատարելով արարողություններ, որոնք նրանք չեն կարող կատարել, և որոնք կարևոր են, որպեսզի նրանք «բանտից» ազատվեն և ապրեն հոգով՝ ըստ Աստծո, և դատվեն մարմնով՝ ըստ մարդկանց:[21]

Չպետք է անտեսվի մեր մահացածների համար աշխատանքը, որը Մարգարե Զոզեֆը դրել է մեզ վրա ոչ թե սովորական հրամանով, այլ հրահանգելով մեզ, որ պետք է հոգ տանենք մեր հարազատների և նախնիների համար, ովքեր մահացել են առանց ավետարանի մասին գիտելիք ունենալու: Մենք պետք է օգտագործենք ավետարանային այն սրբազան և զորավոր արարողությունները, որոնք որպես էական սկզբունքներ հայտնությամբ տրվել են նրանց երջանկության, փրկության և փրկագնման համար, ովքեր ապրել են այս աշխարհում, երբ չէին կարող սովորել ավետարանը և մահացել են առանց այդ մասին գիտելիք ունենալու, և այժմ սպասում են մեզ, իրենց զավակներին, որոնք ապրում են մի ժամանակահատվածում, երբ այդ արարողությունները կարելի է կատարել, իրականացնել մի աշխատանք, որն անհրաժեշտ է իրենց բանտից ազատելու համար: Նրանց համար գործադրվող մեր ջանքերի շնորհիվ նրանց գերության շղթաները կընկնեն և նրանց շրջապատող խավարը կանհետանա, որպեսզի լույսը ճառագի նրանց վրա, և նրանք հոգևոր աշխարհում լսեն այն

աշխատանքի մասին, որը կատարվել է նրանց համար իրենց զավակների կողմից այստեղ, և հրավեն ձեզ հետ այդ պարտականությունները կատարելու համար:[22]

Երբեք ժամանակ չի եղել, երբեք չի գա ժամանակը, երբ նրանք, ովքեր Քահանայություն են կրում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, կարողանան ասել իրենց համար, որ իրենք բավականին գործ են արել: Քանի դեռ կյանքը շարունակվում է, և քանի դեռ մենք ի վիճակի ենք բարիք գործել, աշխատել Սիոնի կառուցման համար, և ի օգուտ մարդկային ընտանիքի, մենք պետք է պատրաստակամորեն, մեծ ցանկությամբ ենթարկվենք այն պահանջներին, որոնք տրվել են մեզ մեր պարտականությունները կատարելու համար, լինեն դրանք մեծ, թե փոքր:[23]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ յուրաքանչյուր մարդ աշխարհ է ուղարկվել «որպեսզի առաքելություն կատարի»: Ինչո՞ւ է կարևոր մեզ համար, մեր առաքելությունը կատարել «աշխատելով բացառապես» միայն մեզ համար:
- Ինչպե՞ս կարող ենք Աստծո աշխատանքը մեր աշխատանքը դարձնել: Ինչո՞ւ Տիրոջ աշխատանքը արժե, որ գրավի «մեր ողջ ուշադրությունը»: Ինչպե՞ս պետք է մեր ընտրությունները արտացոլեն Տիրոջ աշխատանքի հանդեպ մեր նվիրվածությունը:
- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի «փրկվենք և վեհացում ստանանք [Աստծո] ներկայության մեջ»: Ի՞նչ է նշանակում ձեզ համար «Աստծուն նվիրել ձեր սիրտը, սերը, ամբողջ հոգին ու ազատ կամքը»: Մեր ողջ ջանքերը ներդնելուց հետո, ինչպե՞ս ենք ստանում փրկություն (տես նաև 2 Նեփի 25.23):
- Ի՞նչ պետք է մենք ձգտենք սերմանել մեր ընտանիքի անդամների մեջ «մյուս բոլոր բաներից առավել»:
- Ինչպե՞ս կարող ենք ձգտել փրկել մեզ և միևնույն ժամանակ կատարել մեր մյուս ծառայությունների պարտականությունները: Ինչպե՞ս կարող է Եկեղեցում և այլուր ուրիշներին ցուցաբերած մեր ծառայությունը օրհնություն լինել մեր ընտանիքի համար:
- Ինչպե՞ս կարող ենք ձգտել «մարդկանց վեհացմանը»: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք ուրիշներին՝ հավատարիմ լինել Աստծո օրենքներին:

- Ի՞նչ կարող ենք անել «գերության շղթաները» հանելու նրանցից, ովքեր մահացել են առանց ավետարանի մասին գիտելիք ունենալու: Ինչպիսի՞ զգացումներ են առաջանում ձեզ մոտ այն գիտելիքից, որ մարդիկ, որոնց դուք օգնում եք, «հրճվում են ձեզ հետ այդ պարտականությունները անելու համար»:
- Ինչո՞ւ է «մեր հոգու մեծության չափը» որոշվում «մյուսներին օգնելու ունակությամբ»: Ինչո՞ւ եք կարծում, որ դա ճիշտ է: Ինչպե՞ս և երբ եք զոհաբերություններ կատարել ի օգուտ ուրիշների: Ինչպե՞ս եք ձեզ զգացել այդ ժամանակ:

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1918, 2.
2. In Conference Report, Oct. 1901, 69.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 460.
4. *Gospel Doctrine,* 249.
5. *Gospel Doctrine,* 115–16.
6. *Gospel Doctrine,* 397.
7. *Gospel Doctrine,* 84.
8. *Deseret Weekly,* 5 May 1894, 608.
9. *Gospel Doctrine,* 73.
10. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 19 Sept. 1895, 596–97.
11. *Deseret News: Semi-Weekly,* 9 Aug. 1898, 1.
12. *Gospel Doctrine,* 462.
13. *Gospel Doctrine,* 141–42.
14. *Gospel Doctrine,* 390.
15. *Gospel Doctrine,* 255.
16. *Gospel Doctrine,* 72.
17. *Gospel Doctrine,* 73.
18. *Gospel Doctrine,* 265.
19. Joseph F. Smith to his son Hyrum M. Smith, 31 July 1896, in *Truth and Courage: Letters of Joseph F. Smith,* ed. Joseph Fielding McConkie (n.d.), 52.
20. *Gospel Doctrine,* 150.
21. *Gospel Doctrine,* 442.
22. *Gospel Doctrine,* 469–70.
23. *Gospel Doctrine,* 188.

Դաժանության անօրեն ճանապարհը

Մենք երբեք չպետք է դաժան լինենք ուրիշների հանդեպ, այլ պետք է կարեկցանք ցուցաբերենք ու նրբանկատ լինենք բոլորի՝ հատկապես ընտանիքի անդամների հանդեպ։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը զգայուն և հեզաբարո մարդ էր, որը ցավում էր ամեն տեսակի բռնության համար։ Նա հասկանում էր, որ բռնությունը բռնություն է առաջ բերում, և նրա անձնական կյանքը կարեկցանքի և համբերության, ջերմության և հասկացողության ազնիվ դրսևորում էր։

Մի առիթով Նախագահ Սմիթը ասել է. «Այսօր մեր ժողովին ես ականատեսը եղա մի աննշան միջադեպի, որը տեղի ունեցավ դահլիճի շարքերում։ Մի փոքր երեխա նստել էր իր մայրիկի կողքի աթոռին։ Մեկը մոտեցավ, հանեց երեխային իր տեղից և զբաղեցրեց այդ տեղը, թողնելով երեխային կանգնած։ Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես ցանկանում եմ ասել ձեզ, որ այդ արարքը խոցեց իմ սիրտը։ Ես ոչ մի դեպքում . . . չէի վշտացնի երեխային Տիրոջ տանը, չլինի թե նրա մեջ տպավորվի, որ աղոթքի տունը նողկալի վայր է, և գերադասի՝ ավելի լավ է չգալ այնտեղ, քան գալ և վիրավորվել»։[1]

Նախագահ Սմիթը հաճախ է խորհուրդ տվել իր եղբայրներին և քույրերին՝ միմյանց վերաբերվել մեծ բարությամբ։ Բռնությունը կամ ուրիշ անձին նվաստացնող վարքն իր համար աներևակայելի էր։ Նա գտնում էր, որ ամուսիններն ու կանայք պետք է միմյանց վերաբերվեն մեծ հարգանքով և օրինակով ուսուցանեն իրենց երեխաներին՝ հարգել ընտանիքի անդամներին և բոլոր մարդկանց։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք պետք է միմյանց վերաբերվենք մեծ հարգանքով և քաղաքավարությամբ։

Եկեք հաղթենք ինքներս մեզ և ապա գնանք և որքանով որ կարող ենք հաղթենք բոլոր չարին, որ տեսնում ենք մեր շուրջը։ Եվ մենք դա կանենք առանց բռնություն գործադրելու, առանց տղամարդկանց կամ կանանց ազատ կամքի իրավունքը խախտելու։ Մենք կանենք դա համոզումով, երկայնամտությամբ, համբերությամբ, ներողամտությամբ ու անկեղծ սիրով, որով մենք կշահենք սրտեր, համակրանք և մարդկանց զավակների հոգիներ կբերենք դեպի ճշմարտությունը, ինչպես Աստված է հայտնել մեզ։[2]

[Աստված] մեզ ստեղծել է իր պատկերով ու նմանությամբ, և այստեղ մենք տղամարդ ու կին ենք, ծնողներ ու երեխաներ։ Եվ մենք պետք է ավելի ու ավելի նմանվենք նրան, ավելի նմանվենք նրան սիրով, գթասրտությամբ, ներողամտությամբ, համբերությամբ, երկայնամտությամբ և զսպվածությամբ, մաքուր մտքով ու գործով, բանականությամբ և ամեն առումով, որպեսզի արժանի լինենք համբարձվելու նրա ներկայություն։[3]

Ծնողները . . . պետք է սիրեն ու հարգեն միմյանց, և միշտ վերաբերվեն միմյանց պատշաճ հարգանքով և բարյացակամորեն։ Ամուսինը պետք է իր կնոջը վերաբերվի ծայրաստիճան քաղաքավարությամբ ու հարգանքով։ Ամուսինը երբեք չպետք է վիրավորի նրան, արհամարանքով չխոսի նրա մասին, այլ պետք է միշտ երեխաների ներկայությամբ մեծ հարգանքով վարվի նրա հետ տանը։ . . . Կինն իր հերթին պետք է մեծագույն հարգանքով ու քաղաքավարությամբ վերաբերվի իր ամուսնուն։ Նրան ուղղված խոսքերը չպետք է խիստ ու կտրուկ, և հեգնական լինեն։ Նա չպետք է արհամարական կամ զրպարտիչ խոսքեր թույլ տա նրա հասցեին, չպետք է անընդհատ խոսի նրա վրա։ Նա չպետք է ամուսնուն զայրացնի կամ նրա համար տանը գտնվելը տհաճ դարձնի։ Կինը պետք է ուրախություն լինի իր ամուսնու համար, և նա պետք է ապրի ու տանը իրեն այնպես պահի, որպեսզի իր ամուսնու համար տունը ամենաուրախ, ամենաօրհնված վայրը լինի երկրի վրա։ Այսպիսին պետք է լինեն ամուսինն ու կինը, հայրը և մայրը, այդ սուրբ վայրի՝ տան սրբազան պատերի ներսում։

Այդ ժամանակ ծնողների համար հեշտ կլինի իրենց զավակների սրտերը ներարկել ոչ միայն սեր հոր և մոր հանդեպ, ոչ



Քրիստոսը երեխաների հետ, Հարի Անդերսենի: Հիսուս Քրիստոսը սիրում էր մանուկներին և սովորեցնում էր, որ «ով որ գայթակղեցնե այս փոքրներից մեկին, որ ինձ հավատում են, ավելի լավ էր նորան, որ նորա վզիցը մի ջաղացի քար անցնուի, և ծովը գցուի» (Մարկոս Թ.41):

միայն հարգանք ու քաղաքավարություն իրենց ծնողների հանդեպ, այլ սեր, քաղաքավարություն և հարգանք տանը՝ երեխաների միջև: Փոքր եղբայրները պետք է հարգեն իրենց փոքր քույրերին: Փոքր եղբայրները պետք է հարգեն միմյանց: Փոքր աղջիկները պետք է հարգեն միմյանց, և աղջիկներն ու տղաները պետք է հարգեն միմյանց ու միմյանց հանդեպ տածեն այնպիսի սեր ու հարգանք, որը պետք է տիրի տանը երեխաների մեջ: Այդ ժամանակ . . . ճիշտ դաստիարակության հիմքը կդրվի տանը երեխայի սրտում ու մտքում:[4]

Ամուսինները պետք է նրբանկատորեն վերաբերվեն իրենց կանանց:

Մտածեք, թե ինչ է նշանակում կրել իշխանության բանալիներ, որոնք եթե գործադրվեն իմաստությամբ ու արդարությամբ, պետք է հարգեն Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին: Դուք պատվո՞ւմ եք այս Քահանայությունը: . . . Դուք, որպես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու երեց, անպատվո՞ւմ եք ձեր կնոջը կամ երեխաներին: Դուք կլքե՞ք ձեր երեխաների մորը, ձեր ծոցի կնոջը, որը Աստծո նվերն է ձեզ, և որը կյանքից ավելի թանկ է: Քանզի առանց կնոջ, մարդը կատարյալ չէ, ոչ էլ կինն է առանց մարդի կատարյալ Տերումը:[5]

Ես չեմ կարող հասկանալ, թե ինչպես է տղամարդը անբարյացակամորեն վերաբերվում որևէ կնոջ, առավել ևս իր ծոցի կնոջը և իր զավակների մորը, և ես ասում եմ, որ կան մարդիկ, որոնք շատ կոպիտ են և արժանի չեն մարդ կոչվելու:[6]

Երբ ես մտածում եմ մեր մայրերի, մեր զավակների մայրերի մասին, և տեսնում եմ, որ Ավետարանի ոգեշնչման ներքո նրանք ապրում են առաքինի, մաքուր, պատվախնդիր կյանքով, հավատարիմ մնալով իրենց ամուսիններին, իրենց երեխաներին, Ավետարանի համոզմունքներին, օ՜, որքան է իմ հոգին լցվում անեղծ սիրով նրանց հանդեպ, որքան ազնվազարմ են և աստվածատուր, որքան ընտիր են, ցանկալի ու անփոխարինելի նրանք Աստծո նպատակներն իրականացնելու և նրա հրամանագրերը կատարելու գործում: Իմ եղբայրնե՛ր, կարո՞ղ եք արդյոք վատ վերաբերվել ձեր կանանց, ձեր զավակների մայրերին: Կարո՞ղ եք նրանց վերաբերվել սիրով ու բարությամբ: Կարո՞ղ եք փորձել նրանց կյանքը հնարավորինս հարմարավետ ու երջանիկ դարձնել, թեթևացնել նրանց բեռը ձեր կարողության լավագույն չափով, տանը նրանց և ձեր զավակների կյանքը հաճելի դարձնել: Ինչպե՞ս կարող եք դա անել: Ինչպե՞ս կարող է որևէ մեկը մեծ

հոգատարություն ցուցաբերել իր երեխաների մոր, ինչպես նաև իր երեխաների հանդեպ: Եթե մենք ունենք Աստծո Հոգին, չենք կարող այլ կերպ վարվել: Դա միայն կլինի այն ժամանակ, երբ տղամարդիկ հեռանան ճշմարիտ հոգուց, երբ ընկրկեն իրենց պարտականություններից, անտեսեն կամ վիրավորեն որևէ հոգու, որը հանձնված է իրենց խնամքին: Նրանք պարտավոր են պատվել իրենց կանանց ու երեխաներին:[7]

Ստավոր աշխատանքով զբաղվող տղամարդիկ, բիզնեսմենները, ձեռներեցները, տղամարդիկ, որոնք մշտապես զբաղված են աշխարհիկ աշխատանքով, և ստիպված են իրենց ողջ էներգիան ու միտքը նվիրել իրենց աշխատանքին ու պարտականություններին, հնարավոր է չկարողանան վայելել իրենց ընտանիքների հետ շփվելու ուրախությունն այնքան, որքան կցանկանային, սակայն եթե ունենան Տիրոջ Հոգին իրենց հետ իրենց աշխարհիկ պարտականությունները կատարելիս, նրանք երբեք չեն անտեսի իրենց զավակների մայրերին, ոչ էլ իրենց զավակներին:[8]

Հայրե՛ր և մայրե՛ր, մի հեռացրեք ձեր երեխաներին ձեզանից:

Օ՜, իմ եղբայրե՛ր, հավատարիմ եղեք ձեր ընտանիքներին, հավատարիմ եղեք ձեր կանանց և զավակներին: Սովորեցրեք նրանց կյանքի ուղին: Թույլ մի տվեք նրանց հեռանալ ձեզանից այնքան, որ մոռանան ձեր մասին կամ պատվի, մաքրության և ճշմարտության որևէ սկզբունքի մասին . . . Եթե դուք ձեր տղաներին սեղմեք ձեր սրտին, գրկեք նրանց, եթե այնպես անեք, որ նրանք զգան, որ սիրում եք իրենց, որ դուք նրանց ծնողներն եք, իսկ նրանք ձեր զավակները, պահեք նրանց ձեզ մոտ, ապա նրանք ձեզանից հեռու չեն գնա և չեն կատարի որևէ լուրջ մեղք: Բայց դա տեղի է ունենում, երբ նրանց հեռացնում եք տնից, գրկում եք ձեր սիրուց, դուրս եք գցում դեպի գիշերվա խավարը, դեպի անբարոյական կամ այլասերված հասարակությունը: Դա տեղի է ունենում, երբ նրանք ձանձրացնում են ձեզ, կամ դուք հոգնած տանը նրանց անմեղ աղմուկից ու շատախոսելուց, ասում եք. «Գնա մեկ ուրիշ տեղ»: Ձեր երեխաների հետ նման վերաբերմունքն է, որ նրանց հեռացնում է ձեզանից:[9]

Մեր երեխաները մեր նման են: Մեզ չէին կարող հարկադրելով դրդել որևէ բան անել, մեզ չեն կարող այժմ հարկադրել: Մենք նման ենք աշխարհում ապրող մի քանի հայտնի կենդանիների: Դուք կարող եք սիրաշահել նրանց, ղեկավարել նրանց՝ նրանց

դեմ պահելով հրապուրիչ որևէ բան և բարյացակամորեն խոսելով նրանց հետ, սակայն չեք կարող ստիպել ինչ-որ բան անել, նրանք հարկադրված ոչինչ չեն անի: Մենք հարկադրված ոչինչ չենք անի: Տղամարդիկ սովորություն չունեն հարկադրված որևէ բան անել, ուղղակի նրանք այդպես են ստեղծվել: . . .

Դուք չեք կարող ձեր տղաներին, կամ աղջիկներին ստիպելով ներս մտցնել դրախտ: Դուք կարող եք ստիպելով նրանց գցել դժոխք, օգտագործելով խիստ միջոցներ նրանց լավը դարձնելու համար, երբ դուք ինքներդ այդքան լավը չեք, որքան պետք է լինեք: Տղամարդը, որը կբարկանա իր տղայի վրա և կփորձի ուղղել նրան իր զայրույթի մեջ, ամենամեծ սխալը կգործի, նա ավելի շատ է խղճահարության և մեղադրանքի արժանի, քան երեխան, որը սխալ է գործել: Դուք կարող եք երեխային ուղղել միայն սիրով, բարությամբ, անկեղծ սիրով, համոզելով և բացատրելով:[10]

Հայրե՛ր, եթե դուք ցանկանում եք ձեր երեխաներին սովորեցնել ավետարանի սկզբունքները, եթե ցանկանում եք, որ նրանք սիրեն ճշմարտությունն ու հասկանան այն, եթե ցանկանում եք, որ նրանք հնազանդ լինեն ձեզ և միասնական լինեն ձեզ հետ, սիրեք նրանց և ապացուցեք նրանց, որ դուք սիրում եք նրանց ձեր յուրաքանչյուր խոսքով կամ գործով: Ձեր իսկ օգտի համար, հանուն սիրո, որը պետք է գոյություն ունենա ձեր և ձեր տղաների միջև, որքան էլ կամակոր որ նրանք լինեն, կամ որքան էլ կամակոր լինի նրանցից մեկը կամ մյուսը, երբ խոսում եք կամ զրուցում եք նրանց հետ, մի զայրացեք նրանց վրա, մի կոպտեք նրանց մեղադրող ոգով: Նրանց հետ բարյացակամորեն խոսեք, հանգստացրեք նրանց և անհրաժեշտության դեպքում լաց եղեք նրանց հետ, և եթե հնարավոր է, թող որ նրանք արտասվեն ձեզ հետ: Փափկացրեք նրանց սիրտը, թող որ նրանք քնքշություն զգան ձեր հանդեպ: Մի օգտագործեք մտրակ և բռնություն մի կիրառեք, այլ . . . փորձեք ողջամտորեն, համոզումով և անկեղծ սիրով մոտենալ նրանց:[11]

Թող որ հայրերն Իսրայելում ապրեն այնպես, ինչպես պետք է ապրեն, իրենց կանանց վերաբերվեն այնպես, ինչպես պետք է վերաբերվեն, իրենց տունը իրենց կարողության չափով հարմարավետ դարձնեն, իրենց կողակիցների բեռը հնարավորինս թեթևացնեն, լավ օրինակ հանդիսանան իրենց զավակների համար, սովորեցնեն նրանց հավաքվել միասին աղոթքով, առավոտյան և երեկոյան, և երբ նստեն ճաշելու, ընդունեն Աստծո ողորմածությունը, որն իրենց հաց է տվել ուտելու և հագուստ է տվել հագնելու, և ընդունեն Աստծո ձեռքը բոլոր բաներում:[12]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է նշանակում «հաղթենք ինքներս մեզ»։ Ինչպե՞ս կարող ենք մեր երեխաների և մյուսների «սրտերը շահել» և բերել դեպի ճշմարտությունը։
- Ինչպե՞ս կարող են ամուսիններն ու կանայք վերաբերվել միմյանց «ծայրահեղ քաղաքավարությամբ» և «մեծագույն հարգանքով»։ Ի՞նչ օգուտ կա դրանից։ Երբ ծնողները միմյանց հարգանքով ու քաղաքավարությամբ են վերաբերվում, ինչպե՞ս է նրանց վարքը ազդում իրենց երեխաների վարքի վրա։
- Ինչպե՞ս կարող ենք լավագույն ձևով ազդել ուրիշների վրա, որպեսզի նրանք արդարակյաց կյանքով ապրեն։ (Տես ՎԵՈՒ 121.41–44։) Ինչպիսի՞ վարքն է հակասում Տիրոջ այս խորհրդին։
- Ինչպե՞ս ենք մենք երբեմն հեռու վանում մեր երեխաներին մեզանից։ Ի՞նչ կարող է պատահել մեզ և մեր երեխաներին, եթե հեռու վանենք նրանց։
- Ինչո՞ւ է ծնողը, որը դաստիարակում է երեխային բարկանալով, ավելի մեծ մեղք գործում, քան երեխան։ Ի՞նչ կարող է անել ծնողը, երբ զայրանում է երեխայի վրա։
- Ինչպե՞ս էր Փրկիչը վերաբերվում փոքր երեխաներին։ (Տես Մատթեոս ԺԹ.13–15; 3 Նեփի 17.11–24։) Ի՞նչի մասին Նա զգուշացրեց նրանց, ովքեր դաժանորեն կվերաբերվեն փոքր երեխաներին։ (Տես Մատթեոս ԺԸ. 1–6.)
- Ինչպե՞ս կարող ենք մեր երեխաներին մեզ մոտ և ավետարանի սկզբունքներին մոտ պահել։ Ինչպե՞ս են օրհնվում նրանք, ովքեր իրենց երեխաներին «իրենց սրտին մոտ են» պահում։

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 283.
2. *Gospel Doctrine,* 253–54.
3. *Gospel Doctrine,* 276.
4. *Gospel Doctrine,* 283–84; paragraphing added.
5. *Gospel Doctrine,* 165.
6. *Gospel Doctrine,* 352.
7. In Conference Report, Apr. 1915, 6–7.
8. *Gospel Doctrine,* 285.
9. *Gospel Doctrine,* 281–82.
10. *Gospel Doctrine,* 316–17.
11. *Gospel Doctrine,* 316.
12. *Gospel Doctrine,* 288.

Ոխ մի պահեք ոչ մեկի հանդեպ

Եկեք հետևենք Փրկչի օրինակին, դրսևորելով ներողամտություն և ողորմածություն նրանց հանդեպ, ովքեր վիրավորում են մեզ։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Իր կյանքի մեծ մասի ընթացքում Զոզեֆ Ֆ. Սմիթը Եկեղեցու և նրա անդամների հանդեպ ուղղված դաժան հալածանքների ականատեսն է եղել։ Նրան շատ անգամներ են անհանգստություն պատճառել նրանք, ովքեր հակառակվել են Տիրոջ և Նրա Եկեղեցու աշխատանքին, և նա շատ է տառապել նրանց ձեռքից։ Չնայած այդ դաժանություններին նա հանգիստ շարունակում էր կատարել իր աշխատանքը, չվախենալով և հազվադեպ պատասխանելով իր թշնամիներին, թշնամիներ, որոնց նա ներկայացրել է որպես «ոչ *իմը*», այլ «նրանք, ում ես փորձում եմ ծառայել»։[1]

Նրա դուստրը՝ Էդիթ Էլենորը, իր երիտասարդությունից հիշում էր մի դեպք, երբ «լրատվամիջոցները, իրոք, հալածում էին իմ հորը։ Դպրոցում ոմանք կարդացել էին սխալ տեղեկություններ և հորս մասին գրված սուտը։ Մի օր ես դպրոցից տուն եկա շատ բորբոքված։ Երբ այդ երեկո հայրս տուն եկավ, ես ասացի նրան. «Հայրիկ, ինչո՞ւ ոչինչ չես ձեռնարկում։ Դու ոչինչ չես անում, իսկ մարդիկ օգտվելով դրանից ստեր են տպում քո մասին, և դու ոչինչ չես անում այդ ուղղությամբ»։ Հայրը նայեց նրան, ժպտաց և ասաց. «Դստրիկս, մի տխրիր, նրանք ինձ ամենևին էլ չեն վնասում, նրանք վնասում են իրենց։ Ի՞նչ է, չգիտես, դստրիկս, որ երբ որևէ մեկը սուտ է ասում, նա իրեն ավելի է վնասում, քան ուրիշին»։[2]

Նախագահ Սմիթը նպատակադրված էր բարով հատուցել չարին և այնքան վճռական էր բարիք գործելու իր մտադրության մեջ, որ եթե իմանում էր, որ ինչ-որ մեկին վիրավորել էր, չէր հանգստանում, մինչև չբժշկեր նրա վերքերը։ Մի անգամ նա ասաց. «Արդյո՞ք ինչ-որ բան եմ արել կամ ասել, որը վիրավորել է ձեզ։ Եթե



Նույնիսկ տաքապելով խաչի վրա, Հիսուս Քրիստոսը ոչ մի ոխ չէր տածում Իրեն հալածողների հանդեպ, այլ աղոթում էր. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թե ի՛նչ են անում» [Ղուկաս ԻԳ.34]։

արել եմ, ուզում եմ ասել, որ դա եղել է անգիտակցաբար։ Իմ կյանքում երբեք գիտակցաբար չեմ վիրավորել որևէ մեկի զգացմունքները։ . . . Բոլոր նրանց, ում ցավ եմ պատճառել, բոլոր նրանց, ում հանդեպ սխալ եմ թույլ տվել, եթե կան նման մարդիկ, խնդրում եմ ասացեք ինձ, թե ինչում է իմ մեղքը, և ես իմ ուժերի սահմանում ամեն ինչ կանեմ իմ սխալն ուղղելու համար։ Ես իմ սրտում բացարձակապես ոչ մի ոխ չունեմ իմ եղբայրների հանդեպ, ես միայն սեր, գթություն և բարիք գործելու մեծ ցանկություն ունեմ»։[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Ոխ մի պահեք ոչ մեկի հանդեպ։

Մենք հորդորում ենք, մենք աղերսում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանում մեր եղբայրներին և քույրերին, ճիշտ ձևով ապրելով ոչ միայն հարգել իրենց, այլ նաև պատվել ու սիրել իրենց բոլոր մերձավորներին ու գթասիրտ լինել նրանց բոլորի հանդեպ։ Մենք հորդորում ենք ձեզ ոչ միայն պահել Աստծո կողմից երբևէ մարդուն տրված բոլոր պատվիրաններից մեծագույնը՝ սիրել ձեր Տեր Աստծուն ձեր ողջ սրտով, մտքով ու զորությամբ, այլ նաև հորդորում ենք ձեզ պահել դրան հաջորդող երկրորդ օրենքը՝ սիրել ձեր մերձավորներին, ինչպես ձեզ [տես Մատթեոս ԻԲ.36–40], բարությամբ հատուցել չարին, անարգանքին անարգանքով չպատասխանել։ Մենք կարիք չունենք կործանել ուրիշների տները (սա փոխաբերական իմաստով է գործածված)։ Մենք ցանկանում ենք, որպեսզի նրանք ապրեն իրենց կառուցած տներում, և մենք կփորձենք նրանց ցույց տալ լավ ճանապարհը . . . և կառուցել նրանց համար ավելի լավ տներ, այնուհետև բարյացակամորեն, Քրիստոսի, ճշմարիտ քրիստոնեական ոգով կհրավիրենք նրանց մուտք գործել այդ ավելի լավ բնակարանը։[4]

Եղբայրներ և քույրեր, մենք ցանկանում ենք, որ դուք լինեք միասնական։ Մենք հույս ունենք և աղոթում ենք, որ դուք գնաք . . . ձեր տները, ձեր սրտերում և ձեր հոգու խորքում ցանկություն ունենալով ներել միմյանց, և այսօրվանից սկսած այլևս երբեք ոխ չպահեք մեկ ուրիշ մերձավորի հանդեպ։ Ինձ համար կարևոր չէ, նա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի անդամ է, թե ոչ, ընկեր է, թե թշնամի, լավն է, թե վատը։ Բացարձակապես վնասակար է ցանկացած տղամարդու համար, որը քահանայություն է կրում և ունի Սուրբ Հոգու պարգևը, որ նա նախանձի կամ ոխի, վրեժխնդրության կամ անհանդուրժողականության ոգով լցված լինի իր մերձավորների հանդեպ։ Մենք պետք է ասենք մեր

սրտում. «Թող Աստված դատի իմ և քո միջև, իսկ ինչ վերաբերում է ինձ, ես ներում եմ քեզ»: Ես ուզում եմ ասել ձեզ, որ Վերջին Օրերի այն Սրբերը, որոնց հոգիները չներելու զգացումով է լցված, ավելի մեղավոր են և ավելի պարսավանքի են արժանի, քան նրանց դեմ մեղանչողը: Գնացեք տուն և ձեր սրտերից թոթափեք նախանձն ու ատելությունը. թոթափեք չներելու զգացումը, և ձեր հոգիներում զարգացրեք Քրիստոսի այն ոգին, որը խաչի վրայից բացականչում էր. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թե ի՛նչ են անում» [Ղուկաս ԻԳ.34]: Սա է այն ոգին, որ պետք է Վերջին Օրերի Սրբերը միշտ ունենան:[5]

Եթե իմանայի, որ կան այնպիսիք, որոնք վիրավորված են ինձանից, ես ուրախությամբ կգնայի նրանց մոտ, և չէի հանգստանա, մինչև որ չտեսնեի նրանց և չիմանայի, թե ինչն է եղել իմ սխալը: Եթե պարզվի, որ ես իսկապես ինչ-որ ձևով վիրավորել եմ իմ եղբորը, ես չեմ խնդրի նրան փոխզիջման գնալ և այդպիսով լուծել խնդիրը, այլ ինքս կանեի այն ամենը, ինչ իմ ուժերի սահմանում է, որպեսզի շտկեի իրավիճակը: Իմ առաքելությունը կայանում է ոչ թե վիրավորելու, անարդարացի վարվելու, այլ միայն բարիք գործելու մեջ:[6]

Փոխեք ձեր հայացքի, ձեր աչքերի ուղղվածությունը՝ տեսեք ոչ թե չարը, այլ բարին, այն, ինչ մաքուր է, կոչ արեք նրանց, ովքեր սխալ են գործել, առաջնորդելով դեպի այն ճանապարհը, որտեղ չկա և չի կարող ոչ մի սխալ լինել: Մարդկանց մեջ բարին փնտրեք, իսկ եթե այն չկա, փորձեք սերմանել այն նրանց մեջ, փորձեք լավը շատացնել նրան մեջ, փնտրեք լավը, սերմանեք բարին, ամրացրեք բարին և փորձեք որքան հնարավոր է քիչ խոսել չարի մասին: Ոչ մի օգուտ չկա չարը մեծացնելու, հրապարակելու և լեզվով կամ գրչով այն տարածելու մեջ: Ոչ մի լավ բան չկա դրա մասին լսելու մեջ: Ավելի լավ է թաղել չարը և մեծացնել բարին, և դրդել բոլոր մարդկանց՝ թողնել չարությունը և սովորել բարիք գործել: Եվ թող մեր առաքելությունը լինի մարդկությանը փրկելը, մարդկանց ուսուցանելը և արդարության շավիղներով առաջնորդելը, և ոչ թե լինել դատավորներ և դատավճիռ կայացնել չարագործներին, ավելի լավ է լինել մարդկանց փրկիչները:[7]

Մենք ողորմածության կարիք ունենք, ուրեմն եկեք լինենք ողորմած: Մենք գթասրտության կարիք ունենք, ուրեմն եկեք գթասիրտ լինենք: Մենք ներողամտության կարիք ունենք, ուրեմն եկեք լինենք ներողամիտ: Եկեք ուրիշների հետ վարվենք այնպես, ինչպես կուզենայինք, որ նրանք մեզ հետ վարվեին [տես Մատթեոս Է.12]:[8]

Ողորմած եղեք ձեր թշնամիների հանդեպ։

Տեր Աստված ողորմած եղիր նրանց հանդեպ, ովքեր ձգտում են վնաս հասցնել Սիոնի գործին։ Ով Աստված, խղճա մոլորվածներին, մեղանչողներին, հիմարներին, անմիտներին։ Քո հոգին դիր նրանց սրտերում, ետ դարձրու նրանց իրենց սխալ ճանապարհներից ու իրենց հիմարություններից, դիր նրանց արդարակյաց ճանապարհի վրա և քո բարեհաճությունը ցույց տուր նրանց։ Ես խնդրում եմ ողորմած եղիր իմ թշնամիների հանդեպ, նրանց հանդեպ, ովքեր ստեր են տարածում իմ մասին և զրպարտում են ինձ, և ովքեր ամեն տեսակի չար բաներ են խոսում իմ դեմ։ Ի պատասխան, ես աղաչում եմ Աստծուն, իմ Երկնային Հորը ողորմած լինել նրանց հանդեպ, որովհետև նրանք, ովքեր անում են դա, չգիտեն թե ինչ են անում, և մոլորված են, իսկ նրանք, ովքեր անում են դա գիտակցաբար, հիարկե ամենաշատը Աստծո ողորմածության, կարեկցանքի և խղճահարության կարիքն ունեն։ Թող որ Աստված խղճա նրանց։ Թող որ նա ողորմած լինի նրանց հանդեպ։ Ես թույլ չէի տա, որ մի մազ անգամ պակասեր նրանց գլխից, ոչ մի դեպքում։ Ես քար չէի գցի նրանց բարգավաճման ճանապարհին։ Ոչ, և ես աղերսում եմ իմ եղբայրներին, որ նրանք իրենց ձեռքերը ետ պահեն մեր ժողովրդի թշնամիներից, և նրանցից, ովքեր պատրաստում են իրենց կործանման ճանապարհը և չեն ապաշխարում, ովքեր գիտակցաբար մեղանչում են, ովքեր գիտեն, որ զանց են առնում Աստծո օրենքները և սևացնում են Տիրոջ ծառաներին և ստեր են տարածում նրանց մասին։ Ողորմած եղեք նրանց հանդեպ։ Մի՛ դիպչեք նրանց, քանզի հենց դա են նրանք ուզում։ Հանգիստ թողեք նրանց։ Թող ինչ ուզում են անեն։[9]

Ես խոստովանում եմ, որ դժվար է ինձ համար սիրել իմ թշնամիներին, այսինքն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու թշնամիներին, սիրել ինչպես իմ ընկերներին։ Դա դժվար խնդիր է ինձ համար։ Ես խոստովանում եմ, որ ամբողջովին չեմ կատարում դա, ինձ համար դժվար է, սակայն երբեմն Տիրոջ Հոգին դիպչում է ինձ և փափկացնում է իմ հոգին այնքան, որ կարողանում եմ պատրաստակամորեն ասել. «Տիրոջն եմ թողնում դատաստանը»։[10]

Քրիստոսի ավետարանով ձեզանից պահանջվում է գթասրտություն ցուցաբերել բոլորի հանդեպ և սեր տածել Աստծո հանդեպ։ Ձեզանից պահանջվում է սիրել ձեր մերձավորներին, ունենալ ներողամտության ոգին և ողորմած լինել ձեր մերձավորների հանդեպ, ինչպես խաչի վրա Փրկչի աղոթքում է դրսևորվում.

«Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թե ի՛նչ են անում» [Ղուկաս ԻԳ.34]: Ուրեմն, եկեք մտածենք մեր թշնամիների մասին, եկեք աղոթենք նրանց համար, որպեսզի նրանք լիովին չկորչեն, այլ որ Նրա փրկիչ շնորհը և Հիսուսի ավետարանի փրկող զորությունը, այնուամենայնիվ, հասնի նրանց, որպեսզի նրանց սրտերը փափկեն, որպեսզի նրանք ապաշխարեն իրենց մեղքերից և որքան հնարավոր է փոխհատուցեն իրենց կատարած սխալների համար, դառնան հնազանդ և մաքրվեն իրենց մեղքերից՝ ապաշխարությամբ և իրենց մեղքերի թողության համար մկրտությամբ, որը կատարվում է նրա կողմից, ով իշխանություն ունի այդ սուրբ արարողությունը կատարելու:

Մենք սիրում ենք բոլորին: Մենք ոչինչ չունենք մարդկության դեմ, և երբեք չենք հակադրվի մարդկանց, քանի դեռ նրանք մեզ հանգիստ կթողնեն: Մենք պատերազմ չենք մղում նրանց վարդապետությունների, ոչ էլ նրանց եկեղեցիների կամ կրոնական հավատալիքների դեմ: Մեր նպատակը դա չէ, ոչ էլ դա մեր առաքելության մասն է կազմում, թող երկրպագեն ինչպես կամ որտեղ ուզում են . . . Մեր պարտականությունն է պարզապես առաջ գնալ, կատարել մեր պարտականությունները, քարոզել ավետարանը լավ օրինակով, ինչպես նաև ցուցումով, և թող մեր լույսը այնպես լուսավորի նրանց հասկացողությունը, որ կարողանան տեսնել լույսն այնպես, ինչպես Աստված է այն տեսնում, և եթե ցանկանում են, ընդունեն այն և քայլեն դրանում:[11]

Տիրոջ աշխատանքն ունի իր թշնամիները, սակայն Աստված չի թողնի, որ զուր անցնեն մեր ջանքերը:

Տիրոջ աշխատանքն ունի թշնամիներ, ինչպես և Աստծո Որդին ուներ թշնամիներ: Կան այնպիսիք, որ միայն չարախոսում են Վերջին Օրերի Սրբերին: Կան այնպիսիք, . . . որ փակում են իրենց աչքերը վերջին օրերի այս աշխատանքի հետ կապված ամեն արժանիքի և լավ բանի հանդեպ, և ստի ու մտացածին բաների հեղեղներ են տեղում Աստծո ժողովրդի դեմ:[12]

«Եթե այս աշխարհիցը լինեիք, ապա աշխարհքն իրանը կսիրեր, բայց որովհետև աշխարհքիցը չեք, այլևս ձեզ ընտրեցի աշխարհքիցը, նորա համար աշխարհքն ատում է ձեզ» (Հովհ. ԺԵ.19): Հիսուսի հետևորդները նրա ընտրած մարդիկ էին, և քանի որ նրանց Նա էր ընտրել, աշխարհն ատեց նրանց: . . . Արհամարական վերաբերմունքը ընտրյալ ժողովրդի ժառանգությունն է: Արդյո՞ք մենք պետք է փնտրենք աշխարհի արհամա-

րանքը։ Ոչ մի դեպքում։ Այուս կողմից մենք չպետք է հուսահատվենք, քանի որ այդ անցանկալի բաները գալիս են մեզ մոտ։[13]

Ես չեմ հավատում, որ երբևէ եղել է մի ժողովուրդ, որն առաջնորդվել է հայտնությամբ, ժողովուրդ, որը Տերը համարում էր Իրենը, որոնց չեն ատել և հալածել ամբարիշտ ու այլասերված մարդիկ։[14]

Այն օրից, ինչ Մարգարե Զոզեֆ Սմիթն առաջին անգամ հայտարարեց իր տեսիլքի մասին, մինչ այժմ ամեն արդարության թշնամին, ճշմարտության, առաքինության, պատվախնդրության, ազնվության և կյանքի մաքրության, միակ ճշմարիտ Աստծո թշնամին, որը նաև թշնամին է Աստծուց ուղղակի ստացվող հայտնության ու երկնքից մարդուն եկող ոգեշնչումների, աշխարհազոր է կազմում այս աշխատանքի դեմ։[15]

Անձնապես ես թշնամիներ չունեմ։ Իմ թշնամիները *իմը* չեն, նրանք Նրանն են, որին ես փորձում եմ ծառայել։ Դեռ այնքան էլ հետաքրքրված չէ *ինձանով*։ Ես նրա համար նշանակություն չունեմ, այլ նա ատում է *Քահանայությունը*, որն ըստ Աստծո Որդու կարգի է։[16]

Իրականում ավետարանը տանում է մեզ մարդկության հոսքի ընթացքին հակառակ։ Մենք կանգնում ենք զուտ մարդկային գործերի ճանապարհին և խախտում ենք կյանքի ընթացքը տարբեր ճանապարհներով և շատ բնագավառներում։ Մարդիկ, որոնք հարմարավետ տեղավորվել են և լավ են ապահովված, չեն ցանկանում, որ իրենց անհանգստացնեն։ Դա զայրացնում է նրանց։ . . . Սրբերը երբեք չեն լինի ապահով վիճակում, եթե հետևեն բողոքարկումներին և խորհուրդներին նրանց, ովքեր կցանկանային մեզ միշտ տեսնել աշխարհի հետ։ Մենք մեր հատուկ առաքելությունն ունենք իրականացնելու և որպեսզի մենք այն կատարենք աստվածային նպատակներին համաձայն, գնում ենք մարդկանց ճանապարհներին հակառակ ուղղությամբ։ Այդ պատճառով ժողովրդականություն չենք վայելում։ Աշխարհի արհամարանքը ուղղվում է մեր կողմ։[17]

Մի վախեցեք, մի դանդաղեցրեք հանուն ճշմարտության տարվող ձեր աշխատանքը, ապրեք Սրբերին վայել կյանքով։ Դուք ճիշտ ճանապարհի վրա եք, և Տերը չի թողնի ձեր ջանքերը զուր անցնեն։ Այս Եկեղեցին վտանգված չէ դրսի հակադրություններից և հալածանքներից։ Ավելի շատ պետք է վախենալ ներսի անհոգությունից, մեղքից ու անտարբերությունից, ավելի վտանգավոր է, երբ անհատները թերանում են ճիշտ գործել և մեր Տեր և Փրկիչ

Հիսուս Քրիստոսի կողմից հայտնված վարդապետություններին համաձայն ապրել։ Եթե մենք ճիշտ ենք ապրում, ամեն բան լավ կլինի, մեր հայրերի Աստվածը կաջակցի մեզ, և ամեն հակադրություն կնպաստի ճշմարտության գիտելիքի հետագա տարածմանը։[18]

Եկեք մեր թշնամիներին թողնենք Աստծո ձեռքերում։

Այսպես է գրված և ես հավատում եմ, որ դա ճիշտ է, որ թեև անհրաժեշտ է, որ գայթակղություններ գան, սակայն վայ նրանց, ում միջոցով դրանք կգան [տես Մատթեոս ԺԸ.7], սակայն նրանք Տիրոջ ձեռքում են, ինչպես և մենք։ Մենք նրանց դեմ ոչ մի վիրավորական մեղադրանքներ չենք կայացնում։ Մենք ցանկանում ենք թողնել նրանց Ամենազորի ձեռքերում, որպեսզի Նա նրանց հետ վարվի այնպես, ինչպես Իրեն բարի կթվա։ Մեր գործն է կատարել արդարության գործը երկրի վրա, ձգտել խորացնել Աստծո կամքի, Աստծո ճանապարհների և Նրա մեծ ու փառահեղ ճշմարտությունների մասին գիտելիքը, ճշմարտություններ, որոնք Նա հայտնել է մարգարե Զոզեֆի միջոցով, ոչ միայն ապրողների փրկության, այլև մահացածների փրկագնման և փրկության համար։[19]

Աստված [մեր թշնամիների] հարցերը կլուծի իր ժամանակին և իր ձևով, իսկ մենք միայն պետք է կատարենք մեր պարտականությունները, պահպանենք հավատքը, արդար գործեր կատարենք աշխարհում և թողնենք արդյունքը Նրան, որը կառավարում է բոլոր բաները նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Իրեն և պահում են Իր պատվիրանները։[20]

Մեր սրտերում չար զգացումներ չկան որևէ կենդանի էակի հանդեպ։ Մենք ներում ենք նրանց, ովքեր մեղանչում են մեր դեմ։ Նրանց հանդեպ, ովքեր չարախոսում են մեր դեմ, մեզ սխալ են ներկայացնում աշխարհին, մենք ոչ մի ոխ չենք պահում մեր սրտերում։ Մենք ասում ենք. «Թող Աստված դատի մեր և նրանց միջև. թող որ Նա հատուցի նրանց իրենց գործի դիմաց» [տես ՎԵՌ 64.11]։ Մենք ձեռք չենք բարձրացնի նրանց վրա, այլ մենք ընկերական և բարեկամական ձեռք կմեկնենք նրանց, եթե նրանք ապաշխարեն իրենց մեղքերից և գան Տիրոջ մոտ ու ապրեն։ Կարևոր չէ, թե որքան չարացած են եղել կամ որքան հիմար ձևով են գործել, եթե նրանք ապաշխարեն, մենք նրանց գրկաբաց կընդունենք և մեր կարողության չափով ամեն ինչ կանենք, որպեսզի օգնենք նրանց փրկել իրենց։[21]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպե՞ս եք զգացել ձեզ, երբ ներել եք նրանց, ովքեր վիրավորել են ձեզ: Ի՞նչ եք կարծում, ինչու Վերջին Օրերի Սրբերը, որոնք չեն ներում, ավելի մեղավոր են, քան նրանք, ովքեր մեղանչել են նրանց դեմ: (Տես նաև ՎԿՈ 64.9–11):
- Ի՞նչ պետք է անենք մենք, իմանալով, որ ինչ-որ մեկը մեր հանդեպ չար զգացողություններ է տածում:
- Ինչպե՞ս ուրիշ մարդկանց մեջ «շատացնելով լավը» կօգնի մեզ ավելի լավ կատարել «մարդկությանը փրկելու . . . մեր առաքելությունը»:
- Ինչո՞ւ պետք է ողորմած լինենք և կարեկցանք ունենանք նույնիսկ մեր թշնամիների հանդեպ: Ինչպիսի՞ խոսքեր կարող ենք ընդգրկել մեր աղոթքներում մեր թշնամիների համար:
- Ինչո՞ւ Սրբերը կարող են հաճախ «աշխարհի արհամարանքը» զգալ: Ինչպե՞ս պետք է մենք վերաբերվենք այդ արհամարանքին: Ինչո՞ւ Եկեղեցին «վտանգված չէ դրսի հակադրությունից և հալածանքներից»:
- Երբ մեզ վիրավորում են ուրիշները, ինչո՞ւ պետք է կամովին թողնենք նրանց պատիժը «Ամենազորի ձեռքերում»:
- Ինչպե՞ս Փրկիչը վարվեց Իր թշնամիների հետ: (Տես Ղուկաս ԻԳ.34:) Ինչպե՞ս կարող ենք մենք հետևել Նրա օրինակին «ընկերական և բարեկամական ձեռք» մեկնելով մեր թշնամիներին:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 271.
2. Quoted in Norman S. Bosworth, "Remembering Joseph F. Smith, *Ensign,* June 1983, 22.
3. *Deseret News: Semi-Weekly,* 31 Mar. 1896, 9.
4. *Gospel Doctrine,* 256.
5. *Gospel Doctrine,* 255–56.
6. *Deseret News: Semi-Weekly,* 31 Mar. 1896, 9.
7. *Gospel Doctrine,* 254.
8. *Gospel Doctrine,* 339.
9. *Gospel Doctrine,* 339.
10. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:97.
11. "Testimony," *Improvement Era,* Aug. 1906, 808–9.
12. *Gospel Doctrine,* 337.
13. *Gospel Doctrine,* 340.
14. *Gospel Doctrine,* 46.
15. *Gospel Doctrine,* 371.
16. *Gospel Doctrine,* 271.
17. *Gospel Doctrine,* 118–19.
18. *Gospel Doctrine,* 413–14.
19. *Gospel Doctrine,* 338.
20. *Gospel Doctrine,* 338–39.
21. *Gospel Doctrine,* 2.

Ենթարկվեք Հոգու հուշումներին

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ իրավունք ունի Սուրբ Հոգու ոգեշնչումը ստանալ անձնական առաջնորդության համար:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը Եպիսկոպոս Չարլզ Վ. Նիբլիի հետ գնացքով վերադառնում էր տուն՝ արևելյան տարածքներ կատարած ճամփորդությունից: Գրին Ռիվերի մոտ, Վայոմինգ նահանգ, նա դուրս եկավ վագոնից և ոտքը դնելով կառամատույցի վրա մի ձայն լսեց, որն ասաց. «Ներս գնա և նստիր»: Նա վերադարձավ գնացք, մի պահ տատանվելով, այնուհետև ինքն իրեն ասաց. «Դե, դա հավանաբար իմ երևակայությունն էր»: Ապա նա կրկին լսեց ձայնը. «Նստիր»: Անհապաղ ենթարկվելով հրամանին, Նախագահ Սմիթը նստեց իր տեղում: Այդ ժամանակ գնացքը երերալով թեքվեց, և կոտրված ռելսի պատճառով լոկոմոտիվը և վագոնների մեծ մասը դուրս եկան գծից: Եպիսկոպոս Նիբլին ասել է, որ եթե Նախագահ Սմիթը այդպես չվարվեր, նա ծանր կվիրավորվեր, որովհետև թեպետ նրա վագոնը մնացել էր գծի վրա, մյուս բոլոր վագոնները «շատ ուժեղ սեղմվել էին միմյանց»:

Նախագահ Սմիթն այդ դեպքի մասին այսպես է ասել. «Ես լսել եմ այդ ձայնը շատ անգամներ իմ կյանքում, և հնազանդվելով դրան ես միշտ շահել եմ»:

«[Նախագահ Սմիթը] սերտորեն հաղորդակցվում էր Տիրոջ Հոգու հետ»,- ասել է Եպիսկոպոս Նիբլին, - «նա այնքան օրինական և ողջախոհ կյանքով էր ապրում, որ Տերը կարող էր առանց դժվարության հայտնվել իր ծառային: Իրականում նա կարող էր ասել. «Խոսիր Տեր, որովհետև քո ծառան լսում է» [Ա Թագավորաց Գ.9]: . . . Նախագահ Սմիթի սիրտը լարված էր սելեստիալ մեղեդիների համար, նա կարող էր լսել և լսում էր»:[1]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Եկեղեցու բոլոր անդամներն իրավունք ունեն անձնական առաջնորդություն ստանալ Սուրբ Հոգուց:

Ոգեշնչման ոգին, հայտնության պարգևը չեն պատկանում լոկ մեկ մարդու, այդ պարգևը միայն Եկեղեցու Նախագահությանը և Տասներկու Առաքյալներին չի պատկանում: Այն չի սահմանափակվում Եկեղեցու նախագահող իշխանություններով, այն պատկանում է Եկեղեցու անդամ յուրաքանչյուր անհատի: Եվ յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և պատասխանատվության տարիքի հասած յուրաքանչյուր երեխայի իրավունքն ու արտոնությունն է վայելել հայտնության ոգին, ունենալ ոգեշնչման ոգին՝ որպես Եկեղեցու անդամներ իրենց պարտականությունները կատարելիս:[2]

Եկեղեցու յուրաքանչյուր անհատ այնպիսի իրավունք ունի վայելելու ոգեշնչման ոգին և Աստծուց եկող հասկացողությունը, որը հայտնության այդ ոգին է տալիս իրեն, իր օգտի համար, ինչպեսև եպիսկոպոսը, որին հանձնարարված է նախագահել իր ծխում: Յուրաքանչյուր տղամարդ արտոնություն ունի գործադրելու այդ պարգևները և այդ արտոնությունները իր գործերը վարելիս, իր երեխաներին ճիշտ ձևով դաստիարակելիս, իր ագարակը ղեկավարելիս, իր նախիրների, իր անասունների մասին հոգ տանելիս և իր բիզնեսը տնօրինելիս . . . Նա իրավունք ունի վայելելու հայտնության և ոգեշնչման ոգին, որպեսզի ճիշտ գործի, լինի իմաստուն և խելամիտ, արդար և բարյացակամ՝ իր կատարած բոլոր գործերում: Ես գիտեմ, որ սա ճիշտ սկզբունք է:[3]

Անհատների իրավունքն է ոգեշնչվել և հայտնություններ ստանալ Սուրբ Հոգուց իրենց անձնական առաջնորդության համար, որպեսզի ամրապնդեն իրենց հավատքը, և խրախուսվեն արդարակեցության գործեր կատարել, լինեն հավատարիմ, պահեն ու պահպանեն պատվիրանները, որոնք Աստված տվել է իրենց. յուրաքանչյուր տղամարդու և կնոջ արտոնությունն է՝ ստանալ հայտնություն մինչև այդ սահմանը, ոչ ավելին: Այն պահին, երբ անհատը բարձրանում է՝ ենթադրելով, որ ինքն իրավունք ունի ղեկավարելու, թելադրելու կամ դատելու իր եղբայրներին, հատկապես նրանց, ովքեր նախագահում են, նրան պետք է անհապաղ կանգնեցնել, այլապես արդյունքը կլինի տարաձայնությունները, բաժանումներն ու խառնաշփոթը: Այս Եկեղեցու ամեն մի տղամարդ և կին պետք է լավատեղյակ լինի, որպեսզի չտրվի նման ոգուն:[4]



Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը, ձախից, և Նախագահող Եպիսկոպոս Չարլզ Նիբլին երկաթգծի կայարանում։ Նման ճամփորդություններից մեկի ժամանակ Նախագահ Սմիթը զերծ մնաց վնասվելուց, որովհետև ականջ դրեց Հոգու հուշումներին։

Մենք պետք է այնքան մոտ ապրենք Տիրոջը, Սուրբ Հոգու ազդեցության ներքո մեր հոգով այնքան խոնարհ լինենք, այնքան հնազանդ և ենթարկվող, որպեսզի ի վիճակի լինենք իմանալու Հոր միտքն ու կամքը մեզ համար՝ որպես անհատներ և որպես Քրիստոսի Եկեղեցու պաշտոնյաներ բոլոր իրավիճակներում:[5]

Մենք պետք է . . . միշտ այդպես ապրենք, որպեսզի Սուրբ Հոգին լինի մեր մեջ որպես կենդանի ջուր, որը նախատեսված է տանելու մեզ դեպի կատարելություն արդարակեցության, առաքինության և ազնվության մեջ Աստծո առաջ, մինչև որ կիրականացնենք մեր երկրային առաքելությունը, կատարելով բոլոր պարտականությունները, որոնք կպահանջվեն մեզանից:[6]

Հայտնությունը շատ հաճախ գալիս է Հոգու մեղմ ու բարակ ձայնով:

Մենք հաստատվում ենք ճշմարտության մեջ ոչ թե մեզ տրված հրաշալի հայտնություններով, այլ Աստծո պատվիրաններին և օրենքներին խոնարհվելու և հավատարմորեն հնազանդվելու շնորհիվ: Երբ պատանի էի և նոր էի սկսել իմ ծառայությունը, ես հաճախ էի դուրս գալիս տնից և խնդրում Տիրոջն ինձ ինչ-որ հրաշքներ ցույց տալ, որ ես վկայություն ստանայի: Սակայն Տերը ետ էր պահում հրաշքներն ինձանից և ցույց էր տալիս ճշմարտությունը՝ տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ [տես 2 Նեփի 28.30], մինչև ես իմացա ճշմարտությունը իմ մազերի ծայրերից մինչև ոտքերիս մատները, և մինչև որ կասկածն ու վախը լիովին հեռացան ինձանից: Դրա համար Նա հրեշտակ չուղարկեց երկնքից, ոչ էլ հրեշտակապետի փողով խոսեց: Կենդանի Աստծո Հոգու մեղմ ու բարակ ձայնի հուշումներով նա տվեց ինձ վկայություն, որն ունեմ: Եվ այս սկզբունքով ու զորությամբ նա կտա բոլոր մարդկանց զավակներին ճշմարտության գիտելիքը, որը կմնա նրանց հետ, և նրանք կիմանան ճշմարտությունը, ինչպես Աստված գիտի, և կանեն Հոր կամքը, ինչպես Քրիստոսն արեց: Եվ երբևէ ոչ մի հրաշալի հայտնություն չի պարգևի դա:[7]

Դուք կարիք չունեք երբևէ վախենալու, իմ եղբայրներ և քույրեր, եթե չեք ստանում որևէ մեծ կամ հրաշալի հայտնություն: Միայն թե ապրեք այնպես, որ Աստված Ինքը հայտնվի ձեզ, եթե Նա կամենա: Ձեզ մոտ ամեն բան լավ կլինի, դուք ոչնչից չեք վախենա, ոչինչի պակասություն չեք ունենա, ինչ վերաբերում է ձեր կարիքներին, եթե լինեք այնպիսի վիճակում, որ ստանաք Աստծո կամքը, երբ էլ որ Նա պատրաստ լինի կամ ցանկանա

հայտնել այն ձեզ: Դա բավական է: Իսկ այնուհետև Աստված միայն կհայտնի ձեզ այն, ինչ անհրաժեշտ է ճշմարտության գիտելիքի մեջ ձեր զարգացման, աճի և առաջադիմության համար:

Եկեք անենք այն, ինչ Հոգին է թելադրում:

Առանց Տիրոջ Հոգու օգնության ես ինձ թե՛ ֆիզիկապես և թե՛ մտավոր ձևով ի վիճակի չեմ համարում կատարելու ինձանից պահանջվող պարտականությունները: Ես չգիտեմ մեկին, որ կարողանա կատարել իրենից պահանջվող աշխատանքը, անկախ Տիրոջից, կամ առանց Հոգու հուշումների և ոգեշնչման, որը գալիս է Լույսի Հորից:[9]

Երբ ապրում ենք այնպես, որ կարողանում ենք լսել և հասկանալ Աստծո Հոգու մեղմ ու բարակ ձայնի հուշումները, եկեք առանց հետևանքներից վախենալու անենք այն, ինչ Հոգին է թելադրում: Չպետք է որևէ նշանակություն ունենա՝ համապատասխանո՞ւմ է դա մանրախնդիր մարդկանց, քննադատների կամ Աստծո արքայության թշնամիների գաղափարներին, թե ոչ: Համապատասխանո՞ւմ է արդյոք դա Տիրոջ կամքին: Արդյո՞ք այն համապատասխանում է վերջին օրերի այս մեծ աշխատանքի ոգուն, աշխատանք, որի մեջ ներգրավված ենք մենք: Արդյո՞ք մեր վերջնանպատակն է հանդիսանում՝ առաջ տանել Եկեղեցին և հզորացնել այն երկրի վրա: Եթե գնում ենք այդ ուղղությամբ, ապա եկեք կատարենք դա, անկախ նրանից, թե ինչ կասեն մարդիկ կամ կմտածեն:[10]

Մեզ համար բավական չէ միայն բավարարվել այն գիտելիքով, թե ինչն է ճիշտ: Իմանալով, թե ինչն է ճիշտ, մենք պետք է գնանք և անենք այն, ինչը ճիշտ է, ինչ էլ որ այն լինի, ինչ էլ որ մեզանից [Հիսուս Քրիստոսը] պահանջի: Եթե գիտենք ճիշտը, եթե գիտենք ճշմարտությունը, մենք պետք է ապրենք այդ ճշմարտությամբ, և պետք է միշտ, բոլոր հանգամանքներում ճիշտ ձևով վարվենք, և երբեք չտրվենք գայթակղությանը կամ չշեղվենք ճիշտ ճանապարհից, նեղ ու անձուկ ճանապարհից, որը տանում է դեպի Աստծո ներկայություն:[11]

[Մենք] պետք է կամավոր ձևով հնազանդվենք, այն չպետք է պարտադրվի, չպետք է հարկադրվի: Մարդկանց չպետք է պարտադրել՝ իրենց կամքին հակառակ հնազանդվել Աստծուն: Նրանք պետք է հնազանդվեն դրան, որովհետև գիտեն, որ այն

ճշմարիտ է, որովհետև ցանկանում են անել դա, և որովհետև դա նրանց հաճույք է պատճառում: Աստված զմայլվում է կամեցող սրտերով:[12]

հնազանդվելով հոգուն մենք ավելի մեծ գիտելիք ենք ձեռք բերում և աճում ենք խորաթափանցության զորության մեջ:

Մարդը պարտական է Ողջ բանականության և ճշմարտության Աղբյուրին, իր ունեցած գիտելիքի համար: Եվ բոլոր նրանք, ովքեր կհնազանդվեն Հոգու հուշումներին, որն առաջնորդում է դեպի առաքինություն, ազնվաբարոյության, Աստծո և մարդու սերը, դեպի ճշմարտության սերը և այն, ինչը ազնվացնում ու վեհացնում է հոգին, կստանան ավելի մաքուր, խորը և ավելի ուղղակի ու համոզիչ գիտելիք Աստծո ճշմարտությունների մասին, քան ուրիշ որևէ մեկը:[13]

Տղամարդիկ ու կանայք պետք է հաստատվեն ճշմարտության մեջ, հիմնվեն ավետարանի գիտելիքի վրա, կախված չլինեն ուրիշի գիտելիքից կամ վկայությունից, այլ վստահեն միայն Սուրբ Հոգուն, որը միշտ նույնն է, որը լուսավորում է և վկայում է անհատներին և քահանայությանը, որոնք ապրում են ավետարանի օրենքներին, հոր փառքին ու կամքին ներդաշնակ: Այդ ժամանակ նրանք կունենան անմար հավիտենական լույսը:[14]

Որպես անհատներ, մեզ համար միակ ապահով ճանապարհը դա Աստծո առաջ այնքան խոնարհ, այնքան արդարակյաց և այնքան հավատարիմ ապրելն է, որպեսզի ունենանք Նրա Հոգին այն աստիճան, որ կարողանանք արդար դատել և զանազանել ճիշտը սխալից:[15]

Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ [Եկեղեցու ղեկավարներից ստացված խորհուրդը] ճիշտ է: Ստանալով Աստծո Հոգին մեր սրտում, որը բացում և լուսավորում է մեր միտքը, որպեսզի կարողանանք ինքներս հասկանալ այդ վարդապետությունը և տարբերել ճիշտը սխալից, լույսը խավարից և բարին չարից:[16]

Վերջին Օրերի հավատարիմ Սրբին իրավունք է տրվում իմանալ ճշմարտությունն այնպես, ինչպես Աստված գիտի այն, և սելեստիալ թագավորությունից ցածր ոչ մի զորություն չի կարող նրան շեղել, մթագնել նրա հասկացողությունը, մշուշել նրա միտքը, թուլացնել նրա հավատքը կամ Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքների մասին գիտելիքը: Դա չի կարող լինել, քանի որ

Աստծո լույսը ավելի պայծառ է շողում, քան կեղծիքի ու սխալի լուսարձակումը: Ուստի նրանք, ովքեր ունեն Քրիստոսի լույսը, հայտնության ոգին և Աստծո գիտելիքը, վեր են բարձրանում աշխարհի բոլոր անհեթեթություններից, նրանք իմանում են այդ վարդապետության մասին, որ այն Աստծուց է և ոչ թե մարդուց:[17]

Երբ մենք ապրում ենք համաձայն այն ամենի, ինչ հայտնվել է, Տերը կավելացնի մեր լույսն ու բանականությունը:

Դեռևս կան շատ բաներ, որ պետք է հայտնվեն: Կան բաներ, որոնք Տերը կհայտնի Իր ուրույն ժամանակին, որոնք մենք այժմ չենք հասկանում: Ինչ վերաբերում է ինձ, ինձ համար արդեն շատ բաներ են հայտնվել, որոնք դեռ պետք է հասկանալ: Եթե կարողանայի ըմբռնել այն ամենը, ինչ Աստված հայտնել է, և հասկանայի այդ ամենը, ինչպես որ պետք է հասկանալ, և կիրառեի այդ ամենը արդարակյաց ձևով իմ կյանքում, կարծում եմ այդ ժամանակ ես պատրաստ կլինեի ինչ-որ ավելի մեծ բանի, եթե դեռևս արժանի լինեի դրան: Ինչո՞ւ այդ դեպքում մեր մեջ կան մարդիկ, որոնք անհանգստանում և վրդովվում են այն բաների համար, որոնք երբեք չեն հայտնվել մարդկանց զավակներին . . . Եթե մարդիկ վճարեին իրենց տասանորդը, եթե պահեին իմաստության խոսքը, եթե աղոթեին, եթե իրենց կյանքը նվիրեին արդարության գործերին երկրի վրա, ինքնուրույն ուսումնասիրեին ավետարանը և հնազանդվեին դրան, նրանք ավելի քիչ հարցեր կտային և չէին մոռանա այն փաստը, որ անհրաժեշտ է ավելի խորը իմանալ, քան գիտեն:[18]

Մենք չգիտենք և չենք քարոզում մարդկանց ավելին, քան Տեր Աստվածը հայտնել է, և մենք խորհուրդ ենք տալիս նրանց, ովքեր իշխանություն ունեն և որոնց պարտականությունն ու գործն է՝ ուսուցանել և քարոզել ավետարանի սկզբունքները աշխարհին և Վերջին Օրերի Սրբերին, սահմանափակել իրենց ուսուցումները և իրենց հրահանգները Աստծո խոսքի այն չափով, որը հայտնվել է: Ես ձեզ հավաստիացնում եմ, որ կան շատ հայտնված բաներ, որոնք դեռևս չեն կիրառվում կյանքում: Կան շատ բաներ, որոնք դեռևս պետք է ուսումնասիրել: Կան շատ բաներ, որոնք դեռևս պետք է ուսուցանել հրահանգման ոգով, և կան շատ բաներ, որոնք հայտնվել են Սարգարե Զոզեֆի և նրա ընկերների միջոցով, որոնք մարդիկ դեռևս չեն ընդունել իրենց սրտում, և դեռևս ինչպես հարկն է դարձի չեն եկել:

Երբ հնազանդվում ենք ավետարանի ցուցումներին և ապրում ենք ըստ Աստծո օրենքների և երկնքի պահանջների, որոնք արդեն հայտնվել են, մենք հայտնվում ենք ավելի լավ իրավիճակում և ավելի մոտ իմաստության, գիտելիքի և զորության մեջ կատարելության հասնելու նպատակին, քան այսօր գտնվում ենք: Իր ժամանակին դեռևս ավելի մեծ բաներ կհայտնվեն Աստծո ժողովրդին: Ինչևէ, մինչև որ մենք չկատարենք մեր պարտականությունը այն ամենում, ինչ արդեն ստացել ենք, մինչև որ մենք հավատարիմ չլինենք այն բաներում, որոնք տրվել են մեզ, մինչև որ մենք չապրենք մեր կրոնով այնպես, ինչպես այն ունենք այժմ, ինչպես Տերն է տվել մեզ այն, ավելացնել պատվիրաններ, ավելացնել լույս ու բանականություն այն ամենին, ինչ արդեն ստացել ենք, որին մենք դեռևս լիովին չենք հնազանդվում, նշանակում է ավելացնել դատապարտում մեր գլխին: Մեզ համար լիովին բավական է ապրել ներկա ոգեշնչման և հայտնության լույսի մեջ և Եկեղեցու յուրաքանչյուր անդամի համար բավական է անհատապես պահել Տիրոջ պատվիրանները և աշխատել Եկեղեցում, ինչպես կթելադրի Հոգին և կառաջնորդի իր պարտականությունները կատարելիս: Մեզանից յուրաքանչյուրն իրավունք ունի Աստծուց ոգեշնչում ստանալ, իմանալու համար, թե որն է մեր պարտականությունը և ինչպես պետք է դա կատարենք:[19]

Մենք պետք է ապրենք այն լույսի և բանականության համաձայն, որն Աստված հայտնել է մեզ այս ժամանակաշրջանում, որպեսզի ներդաշնակության մեջ գտնվենք երկնային ուժերի և երկնային էակների, և հատկապես Տեր Հիսուս Քրիստոսի հետ, որը կանգնած է մեր գլխին, որը մեր օրենսգետն է, մեր օրինակը և ամբողջ աշխարհի համար կյանքի ու փրկության ճանապարհը, Որի միջոցով մենք կարող ենք մտնել Աստծո Սելեստիալ Արքայություն, և առանց Որի մենք չենք կարող մտնել անվերջ աշխարհների փառքի վիճակի մեջ: Նա է ճանապարհը, լույսն ու կյանքն աշխարհի, և ով որ հնազանդվի Նրա տված պատվիրաններին և կատարի աշխատանքը, որ Նա է կատարել և պատվիրել մեզ կատարել, չի քայլի խավարի մեջ, այլ իր մեջ կյանքի լույսը կունենա:[20]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞ւմ համար է մատչելի «հայտնության ոգին»:
- Մեր կյանքի ո՞ր բնագավառներում մենք կարող ենք վայելել Հոգու անձնական առաջնորդությունը:

- Ինչ ենք կարծում, ինչո՞ւ է Աստված մեզ հաճախ առաջնորդում Հոգու մեղմ ու բարակ ձայնով, քան «հրաշալի հայտնություններով» (Տես նաև Գ Թագավորաց ԺԹ.11–12)։ Ինչպե՞ս է Աստված առաջնորդում մեղմ ու բարակ ձայնով։
- Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ գտնվում ենք Տիրոջ Հոգու ազդեցության ներքո (Տես նաև ՎԵՈՒ 6.15, 22–23; 9.8–9; 11.12–14)։
- Ինչո՞ւ մենք չենք պարտադրվում հետևելու Հոգու հուշումներին։ Ի՞նչ ենք կարծում, ինչո՞ւ է Աստված «զմայլվում կամեցող սրտերով»։
- Ինչպե՞ս պետք է մենք ապրենք, որպեսզի կարողանանք ստանալ Հոգու առաջնորդությունը։ Ի՞նչն է խանգարում մեզ ստանալ Հոգու հուշումները։
- Ե՞րբ է Հոգին օգնել ձեզ խորացնել Աստծո ճշմարտությունների մասին գիտելիքը։
- Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր վստահում են Սուրբ Հոգու հուշումներին, ոչ թե կախված են լինում «ուրիշի գիտելիքից կամ վկայությունից»։
- Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել լույս ու բանականություն ստանալուն (Տես նաև Ալմա 12.10)։

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 523–24.
2. *Gospel Doctrine,* 34.
3. *Gospel Doctrine,* 34–35.
4. *Gospel Doctrine,* 41–42.
5. *Gospel Doctrine,* 58–59.
6. *Gospel Doctrine,* 60.
7. *Gospel Doctrine,* 7.
8. "President Joseph F. Smith on Revelation," *Millennial Star,* 6 Apr. 1905, 222.
9. In Conference Report, Oct. 1912, 2.
10. *Gospel Doctrine,* 59.
11. "Testimony," *Improvement Era,* Aug. 1906, 808.
12. *Gospel Doctrine,* 65.
13. *Gospel Doctrine,* 6.
14. *Gospel Doctrine,* 87.
15. *Gospel Doctrine,* 45.
16. *Deseret News: Semi-Weekly,* 3 Jan. 1893, 2.
17. *Gospel Doctrine,* 6.
18. In Conference Report, Oct. 1916, 6–7.
19. *Gospel Doctrine,* 35–36; paragraphing added.
20. *Deseret News: Semi-Weekly,* 31 Jan. 1882, 2.

Հնազանդվել տասանորդի օրենքին

Նրանք, ովքեր հնազանդվում են տասանորդի օրենքին, օգնում են իրագործել Տիրոջ նպատակները և իրավունք ունեն ստանալու Նրա օրհնությունները:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1800-ականների վերջին Եկեղեցին գտնվում էր մեծ ֆինանսական պարտքի մեջ, որը գերազանցում էր մեկ միլիոն դոլարը: Այդ ֆինանսական պարտավորությունը խիստ մտահոգում էր Ջոզեֆ Ֆ. Սմիթին: 1899թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ նա ասաց. «Մենք որպես Վերջին Օրերի Սրբեր մեր պարտականությունների առնչությամբ շատ արժեքավոր հրահանգներ ենք ստացել, ոչ միայն տասանորդի օրենքի, այլև այլ հարցերի վերաբերյալ, որոնք նույնքան կարևոր են իրենց տեղում, որքան տասանորդի օրենքը: Ինչևէ, ներկայումս Եկեղեցու բարօրության համար չկա ավելի կարևոր բան, քան այդ օրենքը պահելը, ըստ որի միջոցներ կկուտակվեն Տիրոջ պահեստում՝ մարդկանց կարիքները հոգալու համար»:[1]

Յոթ տարի անց մի երեկո Նախագահ Սմիթը դուրս եկավ իր գրասենյակից և գտավ իր դստերը, Ռաքելին, Բիհայվ Հաուսի նախասենյակում:

«Որտե՞ղ է մայրդ»,- հարցրեց նա:

«Չգիտեմ»:

«Որտե՞ղ կարող է նա լինել»:

«Չգիտեմ»:

«Ե՞րբ կվերադառնա»:

«Ես չգիտեմ հայրիկ, ես ոչինչ չգիտեմ: Ես նոր եմ վերադարձել դպրոցից»:



Բևեռ փոքրանցք սորանով, Գլեն Ս. Հոփկինսոն, նկարում ներկայացված են իրենց տասանորդը բերող հավատարիմ Սուրբ պիոներները, որոնք այն հաճախ վճարում էին ոչ թե փողի, այլ ապրանքների տեսքով, տանելով դրանք Սոլթ Լեյք Սիթիի Տաճարի մոտ գտնող տասանորդի գրասենյակ։

«Լավ, դստրիկս, - ասաց նա -ես ուզում էի, որ մայրդ առաջինը իմանա, բայց քանի որ դու ոչինչ չգիտես, ես քեզ կասեմ»: Նա իր ձեռքում մի թուղթ ուներ բռնած:

«Տեսնո՞ւմ ես այս թուղթը»:

«Այո, պարոն»:

«Սա նշանակում է, որ վերջապես Եկեղեցին պարտք չունի»: Նա ժպտաց: «Այնպես որ այժմ դու իսկապես ինչ-որ բան գիտես»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Տասանորդի օրենքին հնազանդվելը հաստատում է, որ մենք հավատարիմ ենք Աստծո արքայությանը:

Աստված պահանջում է մեր եկամտի մեկ տասներորդը, որը պետք է դրվի Նրա պահեստը, և սա տրված է որպես մնայուն օրենք Սիոնի բոլոր Ցցերի համար:[3]

(Տասանորդի) այս սկզբունքով այս Եկեղեցու մարդկանց հավատարմությունն է փորձվում: Այս սկզբունքով պարզվում է, թե ով է Աստծո արքայության կողմնակիցը և ով է դեմ: Այս սկզբունքով է երևում, թե ում սիրտն է դրված Աստծո կամքը կատարելու և Նրա պատվիրանները պահելու վրա, և ով է այդ ձևով սրբագործում Սիոնի հողը Աստծո համար, և ով է դեմ այդ սկզբունքին և կտրում իրեն Սիոնի օրհնություններից: Այս սկզբունքը մեծ նշանակություն ունի, քանզի դրանով է իմացվում, թե արդյոք մենք հավատարի՞մ ենք, թե ոչ: Այդ առումով դա այնքան կարևոր է, որքան հավատն առ Աստված, որքան մեղքից ապաշխարելը, մկրտությունը՝ մեղքերի թողության համար, կամ ձեռնադրումը Սուրբ Հոգու պարգևը շնորհելու համար:[4]

Տասանորդի օրենքը ստուգում է, որով մարդիկ որպես անհատներ պետք է փորձվեն: Ցանկացած մարդ, որը թերանում է պահել այս սկզբունքը, հայտնի կդառնա որպես մարդ, որն անտարբեր է Սիոնի բարօրության հանդեպ, որն անտեսում է Եկեղեցու անդամի իր պարտականությունը, և որը ոչինչ չի անում Աստծո արքայության նյութական վիճակի բարելավման ուղղությամբ: Նա ոչ մի ավանդ չի ներդնում երկրի ազգերի մեջ ավետարանը տարածելու համար, և նա հրաժարվում է անել այն, ինչը հնարավորություն կտար նրան ստանալ ավետարանի օրհնություններն ու արարողությունները:[5]

Տասանորդի օրենքը պահելը կամավոր է: Ըստ իմ ընտրության ես կարող եմ վճարել կամ չվճարել իմ տասանորդը: Դա

ընտրության հարց է, արդյոք ես կանե՞մ դա, թե ոչ. սակայն Եկեղեցու հանդեպ հավատարմություն, նրա շահերի հանդեպ հավատարմություն դրսևորելով, հավատալով, որ ճիշտ է և արդար է տասանորդի օրենքը պահելը, ես իրոք պահում եմ դա, նույն ձևով, ինչպես ես համարում եմ ճիշտ պահել ապաշխարության օրենքը, և մկրտության օրենքը՝ մեղքերի թողության համար:[6]

Մեզանից նրանք, ովքեր չեն վճարել տասանորդ անցյալում և որը չեն կարող վճարել, պարտք են Տիրոջը, բայց Տերը փոխհատուցում չի պահանջում, սակայն կների մեզ մեր անցյալի համար, եթե ապագայում ազնվորեն պահենք այս օրենքը: Սրանում է դրսևորվում նրա առատաձեռնությունը և բարությունը, և ես երախտապարտ եմ դրա համար:[7]

Ես ասել եմ և կկրկնեմ դա այստեղ, որ այն տղամարդը կամ կինը, որը միշտ վճարում է իր տասանորդը, երբեք ուրացության մեջ չի ընկնի: Կարևոր չէ, թե այն որքան մեծ կամ փոքր գումար կլինի, դա Տիրոջ օրենքն է, դա Եկեղեցու համար եկամտի աղբյուր է, դա Աստծո պահանջն է, և Նա ասել է, որ նրանք, ովքեր չպահեն այն, արժանի չեն լինի Սիոնի ժառանգությանը: Ոչ ոք երբեք ուրացության մեջ չի ընկնի այնքան ժամանակ, քանի դեռ կվճարի իր տասանորդը: Դա խելամիտ է: Ինչո՞ւ: Որովհետև քանի դեռ նա հավատք ունի իր տասանորդը վճարելու, նա հավատ ունի Եկեղեցու և Ավետարանի սկզբունքների հանդեպ, և կա ինչ-որ լավ բան և ինչ-որ լույս նրանում: Քանի դեռ նա կկատարի դա, փորձիչը չի հաղթի և չի մոլորեցնի նրան:[8]

Տասանորդը Տիրոջ օրենքն է Իր Եկեղեցու եկամուտն ապահովելու համար և Սրբերի օրհնության համար:

Տասանորդի օրենքը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համար եկամտի օրենք է: Առանց դրա հնարավոր չէր լինի Տիրոջ նպատակներն իրականացնել:[9]

Տերը . . . տվել է տասանորդի օրենքը, որպեսզի միջոցներ լինեն Տիրոջ պահեստում, որպեսզի իրականացվեն Նրա նախատեսած նպատակները, աղքատներին օգնություն տրամադրելու համար, երկրի ազգերի մեջ ավետարանը տարածելու համար, աջակցելու համար նրանց, որոնցից պահանջվում է ամեն օր իրենց մշտական ուշադրությունը կենտրոնացնել Տիրոջ աշխատանքի վրա և որոնց համար անհրաժեշտ է որոշ մթերքներ պաշարել: Առանց այս օրենքի այս ամենը հնարավոր չէր անել, ոչ տաճարներ կկառուցվեին և կպահվեին, ոչ էլ հնարավոր կլիներ աղքատներին

սնունդ և հագուստ տրամադրել։ Այդ իսկ պատճառով տասանորդի օրենքը անհրաժեշտ է Եկեղեցու համար այնքանով, որքանով Տերը դրան մեծ ուշադրություն է հատկացնում։[10]

[Տասանորդը] օգտագործվում է տաճարներում . . . Աստծո տան արարողությունները կատարելու համար։ Տասանորդից եկող հարյուր հազարավոր դոլարներ են օգտագործվում Սիոնի երիտասարդների կրթությունը և Եկեղեցու դպրոցները ֆինանսավորելու համար։ Նրանք նայում են իրենց «մորը»՝ օգնություն և աջակցություն ստանալու ակնկալիքով, և դա ճիշտ է ու տեղին, որպեսզի Եկեղեցին ապահովի իր աղքատներին ու թշվառներին, տկարներին ու անօգնականներին։[11]

Տերը հայտնել է, թե ինչպես պետք է [տասանորդի] միջոցները տնօրինեն, կառավարեն, այսինքն՝ Եկեղեցու Նախագահությունը և Բարձրագույն Խորհուրդը (որն է Տասներկու Առաքյալների Քվորումը) և Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոսությունը։ Կարծում եմ իմաստություն կա սրանում։ Դա չի թողնվել մեկ մարդու վրա, որպեսզի նա միայնակ տնօրինի այն, կամ վարի ֆինանսական գործերը, ոչ մի դեպքում։ Այդ պարտականությունը հանձնված է առնվազն տասնութ տղամարդկանց, որոնք իմաստուն, հավատքով լի, կարող տղամարդիկ են։ Ես ասում եմ, որ նրանց է տրված իրավունքը՝ տնօրինել մարդկանց տասանորդները և օգտագործել դրանք ցանկացած նպատակով, որն իրենց դատողությամբ և իմաստությամբ ամենամեծ օգուտը կբերի Եկեղեցուն. . . . Տասանորդի այս ֆոնդերը տնօրինում են Տիրոջ կողմից նշանակված իշխանություն ունեցող մարդիկ՝ կատարելու դա ի օգուտ Եկեղեցու։[12]

Տերը . . . հատկապես պահանջում է այս Եկեղեցու գլուխ կանգնած մարդկանցից, որոնք պատասխանատվություն են կրում Աստծո ժողովրդին առաջնորդելու և ուղղություն ցույց տալու համար, որ նրանք հետևեն, թե արդյոք պահվո՞ւմ է Աստծո [տասանորդի] օրենքը։ Դա մեր պարտականությունն է։ . . . Եկեղեցու ղեկավարների համար պարտադիր է դարձել ինչ-որ բան ասել այս սկզբունքի վերաբերյալ, որ ոչ միայն մարդիկ կատարեն իրենց պարտականությունը այս օրենքի հետ կապված, այլ որպեսզի ինչ-որ բան լինի Տիրոջ պահեստում, որով կբավարարվի մարդկանց կարիքները, քանզի Եկեղեցու կարիքները դա մարդկանց կարիքներն է։ Եկեղեցու անդամները կազմում են Եկեղեցին, հետևաբար, ինչպիսի պարտավորությունների տակ էլ որ գտվում է Եկեղեցին, դրանք տարածվում են նրա յուրաքանչյուր անդամի վրա առանձին առանձին՝ իր միջոցների չափով։ Տերը պահանջում է մեզանից,

որպեսզի մենք հետևենք, թե ինչպես է պահվում Իր օրենքը այս մարդկանց մեջ:[13]

Այս առավոտ ես ցանկանում եմ ասել այստեղ իմ եղբայրներին և քույրերին, որ իմ կարծիքով երբեք չի եղել մի ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ավելի լավ կյանքով են ապրել, ավելի հավատարիմ են եղել և ավելի ջանասեր են եղել, քան այսօր: Մենք տարբեր եղանակներով կարող ենք դատել այդ մասին: Դրա մի շատ ճշգրիտ փաստն այն է, որ պահվում է տասանորդի օրենքը . . . Լավ ցուցանիշ է, որ Վերջին Օրերի Սրբերը կատարում են իրենց պարտականությունը, որ նրանք հավատում են Ավետարանին, որ նրանք կամենում են պահել Աստծո պատվիրանները և որ նրանք ավելի հավատարմորեն են հնազանդվում դրանց, քան երբևէ նախկինում:

Ես ցանկանում եմ ասել ևս մեկ բան, այսինքն ուզում եմ շնորհավորել ձեզ, որ մենք Տիրոջ օրհնությամբ և Սրբերի հավատարիմ տասանորդ վճարելու շնորհիվ կարողացանք ազատվել մեր պարտքերից: Այսօր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին պարք չունի անգամ մեկ դոլար, կամ այնպիսի պարտք, որը չկարողանա անմիջապես վճարել: Վերջապես մենք գտնվում ենք այնպիսի դիրքում, որ կարող ենք խուսափել պարտքից: Մենք այլևս պարտք վերցնելու կարիք չունենք, և կարիք չենք ունենա, եթե Վերջին Օրերի Սրբերը շարունակեն ապրել իրենց դավանանքի համաձայն և պահեն տասանորդի օրենքը: Սա Եկեղեցու համար եկամտի օրենք է:

Ավելին, ես ցանկանում եմ ասել ձեզ, որ չնայած չենք կարող հասնել դրան անմիջապես, մենք սպասում ենք այն օրվան, երբ ստիպված չենք լինի խնդրել ձեզ թեկուզ մեկ դոլար նվիրատվություն կատարել ինչ-որ նպատակի համար, բացառությամբ այն բանի, որ դուք կամովին կտաք, քանի որ մենք բավականին տասանորդներ կունենանք Տիրոջ պահեստում, որպեսզի վճարենք այն ամենի համար, ինչն անհրաժեշտ է Աստծո արքայությունը առաջ տանելու նպատակով: . . . Սա է ճշմարիտ քաղաքականությունը, Տիրոջ ճշմարիտ նպատակը՝ Իր Եկեղեցու գործերը կառավարելիս:[14]

Տասանորդի վճարման մեջ գլխավորը օրենքին հնազանդվելն է:

Անկասկած, շատ ավելին կարելի է կարդալ սուրբ գրքերից տասանորդի սկզբունքի մասին, որն Աստված հայտնել է մեզ այս

ժամանակաշրջանում, և որին Նա պահանջում է հնազանդվել, որպեսզի իր օրենքին հնազանդվելով մենք կարողանանք սրբացնել այս հողը, որպեսզի այն իրոք մեզ համար դառնա Սիոնի հող, իսկ խոստումը հետևյալն է՝ եթե հնազանդվենք Աստծո օրենքներին, եթե վստահենք Նրան, եթե մոտենանք Նրան, Նա էլ կմոտենա մեզ, և մեզ կպարգևի Իր շնորհը և իր օրհնությունը: Նա «կկշտամբի ուտողին» և այնպես կանի, որ հողը արգասաբեր լինի, որ իր ողջ ուժով բերք տա հողագործին, մշակին և անասնապահին: Նա կշատացնի նրա կովերը, կբարգավաճեցնի նրան աջ ձեռքի վրա և ձախ ձեռքի վրա, և նա առատություն կունենա, քանի որ հույսը դնում է Աստծո վրա. նա մոտենում է Նրան և ցանկանում է համոզվել, տեսնելու համար արդյոք կբացի՞ Նա երկնքի պատուհանները և կթափի՞ օրհնություններ իր վրա, մինչև որ այլևս տեղ չլինի [տես Մաղաքիա Գ.10]: Թող որ ամեն ոք, ով ստացել է Հիսուս Քրիստոսի ավետարանը, ընդունի այս խոսքը և ականջ դնի այդ խոսքերին, իր ողջ կարողությամբ: Ոմանք կարող են թեթևամտորեն վերաբերվել դրանց, և նրանք, ովքեր այդպես կվարվեն, անկասկած չեն կարողանա մոտենալ, նրանք կարևորություն չեն տա Տիրոջը փորձելուն, նրանք չեն կատարի Նրա տված պատվիրանները, և երբեք չեն իմանա, որ Աստված ճիշտ է ասում, և որ Նա կարող է կատարել Իր խոսքը և Իր ժողովրդին տված խոստումը, երբ նրանք ցանկանում են հնազանդվել և պահել Նրա օրենքը . . .

. . . Ես հանդիպել եմ մի եղբոր, կարիք չկա նրա անունը հայտնելու, քանի որ նա մեկն է հազարավորներից, ովքեր կարող են նույն վկայությունը բերել, ոչ միայն իրենց բերանից դուրս եկած խոսքով, այլ առատության, բարգավաճման, առաջընթացի և զարգացման ակնհայտությամբ, որոնցով նա շրջապատված է ամայի վայրերում: Այս տարի նա հավաքեց առատ բերք, նրա դաշտերում լիություն էր, մինչդեռ նրա հարևաններից շատերի դաշտերը պատված էին մոլախոտերով և նրանց բերքը նրա բերքի միայն կեսը կամ մեկ երրորդն էր կազմում: Ինչպե՞ս եք բացատրում սա: Ես դա բացատրում եմ այսպես. Աստված օրհնել է նրան, և շարունակում է օրհնել նրան, քանի որ նա խելացի մարդ է, մարդ, որն աշխատում է ոչ միայն իմաստուն ու խելամիտ ձևով, այլ Աստծուց վախենալով և իր սրտում ցանկանալով հնազանդվել Նրա օրենքներին . . . . Նա վճարում է իր տասանորդը, նա հիշում է նվիրատվությունների մասին, նա հնազանդ է Աստծո օրենքներին, և նա չի վախենում վկայել իր ընկերներին ու հարևաններին, որ հնազանդության շնորհիվ է Աստված օրհնել ու բարգավաճեցրել նրան, և դարձրել

այնպիսին, ինչպիսին որ այսօր է: Նա միակ մարդը չէ. կան նաև ուրիշները, որոնք նույն ձևով բարգավաճել են: Եվ ես վկայում եմ, որ այս ամենը այն բանի շնորհիվ է, որ Աստված օրհնել է նրան, նրա հողը և նրա կատարած աշխատանքը, որ նրա մոտ աճ կա և օրհնություններ, որին նա ձգտել է և որի համար աշխատել է: Նա աշխատել է հավատալով Տիրոջը, իսկ Տերը տեսել է նրա սիրտը և համապատասխանաբար օրհնել նրան:[15]

Այնպես որ, ես եկել եմ այն եզրակացության, որ տասանորդ վճարելու հարցում գլխավորը հնազանդությունն է օրենքին, և որ ավելի շատ բարիք կգա մեզ այդ հնազանդությամբ, քան մեկ ուրիշին: Մենք, հնարավոր է ունենանք հարյուր հազարավոր դոլարներ և ազնիվ տասանորդ վճարենք մեր եկամտից, մեր տասանորդը դարձնելով մեծ գումար. սակայն բարիքը, որը կգա մեզ Աստծո օրենքին հնազանդվելով, արդյունքում կգերազանցի այն բարուն, որ մեր ունեցվածքը կարող է պարգևել աղքատներին: Ողորմություն տվողն ավելի շատ է օրհնվում, քան ստացողը:

Խնդիրը նրանում է, որ երբ մարդը հարստանում է, նա անմիջապես սկսում է զգալ իրեն շատ աղքատ, որպեսզի հնազանդվի Աստծո օրենքներին: Հարստությունը մարդկանց աղքատ է դարձնում, երբ անհրաժեշտ է գործ ունենալ Ամենազորի հետ: Աղքատ մարդը կարող է հեշտությամբ վճարել իր տասանորդը և իր փոքր ունեցվածքից նվիրաբերել ի օգուտ կարիքավորների: Իսկ երբ նա դառնում է միլիոնատեր կամ ինչ-որ նման բան, այդ ժամանակ նա սկսում է սրտնեղել: Արդյունքում նա զրկում է իրեն Աստծո բարության ու ողորմածության ավելի մեծ դրսևորումներին արժանանալուց, որոնք նա կարող էր ստանալ մեծ չափով բարիք գործելու շնորհիվ, որ նա կարող էր անել իր ավելի մեծ միջոցներով:

Ամենազորը հնազանդություն է պահանջում: Նա հենց հնազանդություն էր պահանջում Աբրահամից: Ես այժմ խոսում եմ Աստծուն հնազանդվելու մասին, ոչ թե մարդուն, և ով որ ուզում է, թող մարտակոչ նետի ինձ փորձելով ապացուցել, որ Աստծուն հնազանդվելը, տասանորդ վճարելու առումով, ավելի լավ չէ, քան անհնազանդությունը, այն ավելի լավ է ոչ միայն հենց այդ մարդու համար, այլև բոլոր մարդկանց համար: Եթե մարդը հնազանդ է տասանորդի օրենքին, նա իրավունք ունի ստանալու Աստծո օրհնությունը, իսկ Տիրոջ շտեմարանում կլինեն միջոցներ աղքատներին կերակրելու, Ավետարանը արտերկրում տարածելու, տաճարներ կառուցելու և Նրա նպատակները իրականացնելու համար, սակայն եթե նա հնազանդ չէ այս օրենքին, ապա ոչինչ չկա, իսկ նա զրկվում է այն օրհնությունից, որը Տերը կտար նրան:[16]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞րն է Տիրոջ տասանորդի օրենքը: (Տես նաև ՎԵՈ 119.3–4:) Ավետարանի ո՞ր սկզբունքի հիման վրա ենք մենք տասանորդ վճարում: Ինչո՞ւ է տասանորդի վճարման մեջ «գլխավորը» օրենքին հնազանդվելը:
- Ի՞նչ կարող են Եկեղեցու անդամները անել, եթե չեն վճարել տասանորդ անցյալում, իսկ այժմ ցանկանում են պահել այս պատվիրանը: Որո՞նք են այն պատճառները, որ մարդիկ ետ են ընկնում տասանորդ վճարելուց: Ինչպե՞ս կարող է հարստությունը «սրտնեղության» պատճառ դառնալ:
- Ի՞նչ նպատակներով են օգտագործվում տասանորդի ֆոնդերը: Ինչպե՞ս է տասանորդը օգնում բավարարել Եկեղեցու անդամների և ուրիշների հոգևոր և աշխարհիկ կարիքները:
- Ո՞վ է որոշում, թե ինչպես տնօրինել Եկեղեցու տասանորդի ֆոնդերը: (Տես նաև ՎԵՈ 120:)
- Ինչպե՞ս կարելի է ընտանիքին ուսուցանել տասանորդ վճարել:
- Ինչպիսի՞ օրհնություններ է Տերը խոստանում նրանց, ովքեր վճարում են իրենց տասանորդը: (Տես նաև Մաղաքիա Գ.10–12): Ե՞րբ և ինչպե՞ս ենք օրհնվել տասանորդի օրենքին հնազանդվելով:

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1899, 39.
2. Quoted in Amelia Smith McConkie, “Grandpapa Joseph F. Smith,” *Ensign,* Sept. 1993, 15.
3. *Deseret News: Semi-Weekly,* 3 May 1881, 1.
4. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 225.
5. *Gospel Doctrine,* 226.
6. *Gospel Doctrine,* 232–33.
7. *Gospel Doctrine,* 99.
8. “Discourse by President Joseph F. Smith,” *Millennial Star,* 25 Oct. 1906, 674.
9. *Gospel Doctrine,* 226.
10. *Gospel Doctrine,* 225.
11. *Gospel Doctrine,* 232.
12. *Gospel Doctrine,* 233.
13. In Conference Report, Oct. 1899, 41.
14. In Conference Report, Apr. 1907, 7; paragraphing added.
15. *Gospel Doctrine,* 226–28.
16. In Conference Report, Apr. 1899, 69; paragraphing added.

Ազատություն՝ հնազանդության միջոցով

Աստված մեզ ազատ է ստեղծել ընտրելու բարին կամ չարը, և մեզ պատասխանատվության կենթարկի այն բանականության և հնարավորությունների համար, որոնք Նա տվել է մեզ:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հավատում էր, որ անհատական կամքի ազատությունը և պատասխանատվությունը հիմնական մասերն են այն գործընթացի, որի ժամանակ Աստծո զավակները դառնում են Նրա նման: «Մենք ձեզ հետ միասին պետք է հասնենք հավերժական կյանքերի օրհնություններին, հնազանդության և Աստծո ողորմածության շնորհիվ»,- բացատրել է նա: «Մենք ունենք ընտրություն կատարելու զորություն և կարող ենք ընտրել չարի ու բարու միջև . . . Մենք պետք է ինքներս սովորենք կանգնել կամ ընկնել, թե տղամարդիկ և թե կանայք»:[1]

Նախագահ Սմիթն անձամբ ելույթ է ունեցել Միացյալ Նահանգների Կոնգրեսի անդամների առաջ 1904թ. և համոզիչ կերպով խոսել է Եկեղեցու անդամների իրավունքի՝ անձնական, կրոնական և քաղաքական հարցերում իրենց ազատ կամքը դրսևորելու մասին: 1907թ. մարտի 26-ին Առաջին Նախագահությունը հրատարակել է «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հղումն աշխարհին», որը միաձայն ընդունվեց 1907թ. ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ: Մեկ անգամ ևս սահմանելով Վերջին Օրերի Սրբերի շատ հիմնական համոզմունքներ, այդ հռչակագիրը հաստատում էր. «Մենք հավատում ենք մարդու ընտրության ազատությանը, և հետևաբար նրա անհատական պատասխանատվությանը»:[2]

Նախագահ Սմիթը հավատում և ուսուցանում էր, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի օրենքներին հնազանդվելը՝ Հիսուս Քրիստոսի կողմից խոստացված ազատությանը հասնելու միակ միջոցն է. «Ճշմարտությունը կազատե ձեզ» (Հովհաննես Ը.32):

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

**Աստված մեզ տվել է ազատ կամքի պարգևը
և մեզ պատասխանատվության կենթարկի
մեր ընտրությունների համար։**

Աստված բոլոր մարդկանց տվել է ազատ կամք և մեզ արտոնություն է շնորհել Իրեն ծառայել կամ չծառայել, անել այն, ինչը ճիշտ է կամ սխալ, և այս արտոնությունը տրվել է բոլոր մարդկանց՝ անկախ նրանց համոզմունքներից, մաշկի գույնից կամ կյանքի պայմաններից։ Հարուստները ունեն կամքի ազատություն, աղքատներն ունեն կամքի ազատություն, և Աստծո ոչ մի զորություն չի զրկում մարդուն օգտագործել դա ամբողջությամբ և ազատորեն։ Կամքի այս ազատությունը տրվել է բոլորին։ Սա օրհնություն է, որն Աստված շնորհել է աշխարհի մարդկանց, Իր բոլոր զավակներին հավասարապես։ Բայց նա մեզ խստորեն պատասխանատվության կենթարկի այդ ազատությունը օգտագործելու համար, և ինչպես հարցրել է Կայենին, նույն կերպ էլ կհարցնի մեզ. «Ինչո՞ւ ես երեսդ կախել։ Չէ՞ որ եթե բարի լինիս, կբարձրանայ. բայց եթե բարի չլինիս, մեղքը դռան մոտ պառկած է» (Ծն. Դ.7)։[3]

Մենք կարող ենք գործել և կարող ենք ընտրել կամ մերժել ավետարանը, հետևել Փրկչի կամ Լյուցիֆերի օրինակին։ Մեզ ընտրելու հնարավորություն է տրված։ Մենք Աստծո ժառանգներ ենք և ժառանգակիցներ Հիսուս Քրիստոսի հետ, և արտոնություն ունենք փառք և վեհացում ձեռք բերել Արքայությունում, որտեղ Հիսուսն ու սրբագործվածներն են ապրում, սակայն դա թողնված է մեզ՝ ընտրել կամ մերժել։ Աստված հայտարարել է, որ նա ոչինչ չի պահանջի մեզանից՝ չդարձնելով մեզ ունակ կատարելու դա։ Եթե Նա խնդրում է և պահանջում կատարել պարտականություններ, որոնք ըստ մարդկային տեսակետի դժվար են, Նա մեզ զորություն կտա կատարելու դրանք։ Սակայն եթե մենք արժանի չենք և օգտագործում ենք ողջ եռանդն ու խելքը, որ բնությունից ունենք, Նրա կողմից խոստումը չի կատարվի, քանի որ այն տրված է պայմանով, որ մենք կկատարենք մեր մասը։[4]

Տերը տվել է մարդկանց զավակներին իրենց կամքի ազատությունը։ Մարդիկ կարող են բարիք կամ չարիք գործել ըստ իրենց հայեցողության . . . Նա պարզապես մեզ վրա պասխանատվություն է դնում և մենք նրա առաջ պատասխանում ենք, թե ինչպես ենք օգտագործում մեր խելքն ու հնարավորությունները, որ Նա տվել է մեզ այստեղ այս մարմնում։[5]

Հրամանատար Մորոնին բարձրացնում է Ազատության դրոշը,
Առնոլդ Ֆրայբերգի։ Մորմոնի Գրքի ժամանակների Եկեղեցու անդամները հավաքվեցին ազատության դրոշի տակ, որպեսզի երդվեն, որ «կպաշտպանեն իրենց իրավունքները, և իրենց կրոնը, որպեսզի Տեր Աստվածը կարողանա օրհնել նրանց» (Ալմա 46.20)։

Աստված չի միջամտում մեր ընտրությունը կատարելիս, սակայն մեզ հնարավորություն է տալիս փորձով զգալ մեր ընտրությունների արդյունքները:

Մարդու կամքի ազատությանը Աստվածային Նախախնամությունը չի միջամտում: Եթե մարդիկ ազատ չմնային ընտրելու բարին և մերժելու չարը, կամ էլ հակառակը, արդարություն չէր լինի կամ անգամ պատճառ չէր լինի նրանց դատելու: Ընտրության զորության շնորհիվ նրանք դառնում են պատասխանատու էակներ, և հետևաբար կքաղեն իրենց գործերի արդյունքները: Նրանք կվարձատրվեն կամ կպատժվեն՝ համաձայն իրենց գործերի, երբ գրքերը բացվեն և նրանք դատվեն ըստ դրանցում գրվածների:

Աստված, անկասկած, կարող էր կասեցնել պատերազմը, կանխել հանցագործությունները, վերացնել աղքատությունը, ցրել խավարը, հաղթել սխալներին և ամեն ինչ դարձնել պայծառ, գեղեցիկ և ուրախ: Սակայն սա իր հետ կբերեր մարդու համար կենսական և հիմնական հատկանիշի՝ ազատ ընտրության իրավունքի կործանման: Նրա որդիների և դուստրերի օգտի համար է, որ նրանք ծանոթանում են չարի և բարու, խավարի և լույսի, սխալի և ճշմարտության, ինչպես նաև հավերժական օրենքները խախտելու արդյունքների հետ: Այդ իսկ պատճառով նա հանդուրժել է այն չարը, որը գործում են Իր ստեղծած էակները, սակայն պետք է հսկի նրանց վերջնական արդյունքը Իր փառքի և Իր որդիների ու դուստրերի առաջընթացի ու վեհացման համար, մինչև որ նրանք իրենց չարչարանքներից հնազանդություն կսովորեն: Հակադրությունները, որոնք լինում են այս աշխարհում, որտեղ վիշտն ու ուրախությունը խառնված, իրենց բնույթով ուսուցողական դեր են կատարում, կօգնեն մարդկային ցեղին՝ բարձրանալ՝ լիովին հասկանալու այն ամենը, ինչը ճիշտ է, ճշմարիտ և բարի: Աստծո կանխագիտությունը չի ենթադրում Նրա մասնակցությունը իրականացնելու այն, ինչը նա կանխատեսում է, ոչ էլ Նրան պարտավորեցնում է նվազագույն չափով իսկ այն բանի համար, որն անում կամ հրաժարվում է անել մարդը:[6]

Աշխարհում շատ բաներ են տեղի ունենում, որոնց մեջ մեզանից շատերի համար թվում է անչափ դժվար է գտնել ծանրակշիռ պատճառ, որպեսզի ընդունենք Տիրոջ ձեռքը դրանցում . . . Միակ պատճառը, որ կարողացել եմ հայտնաբերել, որպեսզի ընդունենք Տիրոջ ձեռքը որոշ իրավիճակներում, դա այն փաստն է, որ Տերը թույլ է տվել դա կատարվի: Երբ երկու մարդ ազատություն են տալիս իրենց բուռն զգացմունքներին, եսասիրությանը և

զայրույթին, որպեսզի վիճեն և կռվեն միմյանց հետ, և այդ կռվի ու վիճաբանության արդյունքում նրանց մեջ ծագում է ծեծկռտուք ու բռնություն, ինձ համար դժվար է Տիրոջ ձեռքը տեսնել այդ իրավիճակում, բացառությամբ միայն այն բանի, որ այդ մարդիկ, որոնք այդ ձևով համաձայնության չեն գալիս, կռվում են և վիճում միմյանց հետ, Աստծուց ստացել են ազատ կամք՝ օգտագործելու իրենց խելքը, որպեսզի ինքնուրույն դատեն ինչն է ճիշտ և ինչը սխալ, և գործեն իրենց իսկ ցանկությամբ: Տերը չի նախատեսել կամ ծրագրել, որ այդ երկու մարդիկ կռվեն, կամ ազատություն տան իրենց զայրույթին այն չափով, որը կտանի բռնության և մի գուցե արյունահեղության: Աստված երբեք չի նախատեսել նման բան, և մենք չենք կարող նման բաներում մեղադրել Ամենազորին . . . .

Ազատ կամքը, որը [Աստված] տվել է մեզ, հնարավորություն է տալիս ինքնուրույն գործել՝ ցանկության դեպքում կատարել բաներ, որոնք ճիշտ չեն, որոնք հակասում են կյանքի և առողջության օրենքներին, որոնք իմաստուն կամ խելամիտ չեն, իսկ հետևանքները կարող են լինել լուրջ, մեր տգիտության կամ մեր ցանկություններում համառելու պատճառով, մեզ համար ստեղծած Աստծո պահանջներին ենթարկվելու փոխարեն:[7]

Դուք կկրեք ձեր սխալների, ձեր մեղքերի հետևանքները, նույնիսկ եթե դրանք բերում են վիշտ, հիվանդություն կամ մահ: Այնպես որ ես ընդունում եմ Տիրոջ ձեռքը այդ կամքի ազատության մեջ, որ նա տվել է մարդկանց զավակներին, սակայն ես տեսնում եմ մարդու ձեռքը իր իսկ կատարած գործերի հետևանքներում, որոնց նախորդում են Աստծո օրենքներին անհնազանդությունը: Աշխարհում գոյություն ունեցող չարը, մարդկանց ամբարշտությունը, հանցանքներն ու թուլությունները, սխալներն ու մեղքերը, ես չեմ վերագրում Հայր Աստծուն:[8]

Ընտրության ազատության և մարդուն տրված իր դատողությամբ գործելու ժամանակ է, որ ամենաշատ չարագործություններ են տեղի ունենում աշխարհում – Սրբերի նահատակությունները, Աստծո Որդու խաչումը, ուրացության և արդար գործից ու Աստծո օրենքներից հեռանալու շատ դեպքերը, այս ամենը կատարվում է ընտրության ազատության և մարդկային դատողության գործադրման ժամանակ: Աստված իր անսահման իմաստությամբ ու գթառատ ողորմածությամբ միջոցներ է տրամադրել և մարդկանց զավակներին ուղի է ցույց տվել, որով նույնիսկ ընտրության ազատության և իրենց իսկ դատողությամբ գործելու ժամանակ նրանք կարող են հավատով ու աղոթքով ինքնուրույն գնալ Աստծո մոտ և

պարզել, թե ինչն է առաջնորդում ու ուղղություն տալիս իրենց մարդկային դատողությանն ու իմաստությանը: Եվ ես ցանկանում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը չմոռանան, որ դա իրենց արտոնությունն է:[9]

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին չի ազդում անհատի ազատության վրա:

Աստծո Արքայությունը ազատության Արքայություն է. Աստծո Որդու ավետարանը ազատության ավետարան է:[10]

Կարո՞ղ եք գտնել կրոնական կամ մեկ այլ կազմակերպություն, այնպիսի կատարյալ ղեկավարությամբ և կառուցվածքով, ինչպիսին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է, հաստատված ոգեշնչմամբ՝ Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով: Իսկ ո՞րն է այդ կազմակերպության նպատակը: Ճնշե՞լ մարդկանց: Վիրավորե՞լ ձեզ: Սինչև գետին խոնարհեցնե՞լ ձեզ: Զրկել ձեզ ձեր ազատությունների՞ց, իրավունքներից, կամ արտոնություններից: Ձեզ դարձնել ստրուկնե՞ր, մարդկանց ծառաներ և մինչև հողը ստորացնե՞լ ձեզ: Թե՞ բարձրացնել ձեր բանականության, արիության մակարդակը և շատացնել ձեր ազատությունները, քանզի ոչ մի ուրիշ ազատություն չի կարող համեմատվել Հիսուս Քրիստոսի ավետարանի ազատության հետ: Քանզի կարող եմ ասել ձեզ, որ ոչ ոք ազատ չէ, երբ մեղքի և օրինազանցության գերության մեջ է, ոչ էլ ինչ-որ մեկն է ազատ, որը կյանքի ու փրկության ծրագրի առումով տգիտության կապանքների մեջ է:[11]

Ես հավատում եմ, որ աշխարհում չես գտնի ավելի ազատ, ավելի անկախ ու ավելի խելամիտ մարդիկ, որոնք ավելի անկախ են իրենց ուղին ընտրելու մեջ, աշխատանքում, որը կատարում են և այն ամենում, ինչի հետ նրանք առնչվում են, քան Վերջին Օրերի Սրբերն են: Աշխարհում չկա Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, որն ապրում է պատվիրաններով, որն այդպիսին չի իր բնավորության անկախության, իր խելքի, իմաստության և ճշմարտության ու սխալի, բարու ու չարի մեջ դատելու կարողության շնորհիվ:[12]

Վերջին Օրերի Սրբերի կրոնը վերաբերում է ինչպես ընթացիկ կյանքին, այնպես էլ ապագա երջանկությանը: Այն ներգործություն է ունենում իր կողմնակիցների [հավատացյալների] վրա այն ամենում, ինչն ազդում է մարդկային բնավորության վրա: Այն ինչպես մարմնի, այնպես էլ հոգու համար է: Այն սովորեցնում է մարդկանց ինչպես ապրել և գործել այս աշխարհում, որպեսզի նրանք

պատրաստ լինեն գալիք աշխարհի իրականությանը: Հետևաբար, Եկեղեցին ուսուցանում է ինչպես աշխարհիկ բաները, այնպես էլ հոգևոր բաները, որքան որ նրանք կապված են Եկեղեցու հետ, նրա սեփականությանը, հաստատություններին և նրա անդամների ընկերակցությանը: Բայց դա չի ազդում անհատների ազատության վրա կամ ներխուժում կառավարության շրջանակներ: Մարդու ազատ կամքը հիմնական սկզբունքն է, որի վրա, Եկեղեցու վարդապետությունների համաձայն, նույնիսկ Աստված Ինքը ճնշում չի գործադրում:[13]

Հնազանդությունը և ազատ ընտրության ճիշտ գործադրումը, անգնահատելի օրհնություններ են բերում:

Կան . . . որոշակի օրհնություններ, որոնք Աստված շնորհել է մարդկանց զավակներին միայն ազատ կամքը ճիշտ ձևով օգտագործելու պայմանով: Օրինակ, ոչ ոք չի կարող իր մեղքերի թողությունը ստանալ առանց ապաշխարելու և իշխանություն ունեցողի կողմից մկրտվելու: Եթե մենք ազատ լինենք մեղքից, դրա ազդեցությունից, դրա ուժից, մենք պետք է հնազանդվենք այդ օրենքին, որն Աստված հայտնել է, այլապես չենք կարող ձեռք բերել մեղքերի թողություն: Հետևաբար, չնայած Աստված անկախ պայմաններից բոլոր մարդկանց շնորհել է բարին կամ չարը ընտրելու այս կամքի ազատությունը, նա չի շնորհել և չի շնորհում մարդկանց զավակներին մեղքերի թողություն ոչ մի այլ ձևով, միայն օրենքին հնազանդվելու պայմանով . . .

Բոլոր մարդիկ օրհնվել են իրենց մարմնի ուժով, իրենց խելքն օգտագործելու հնարավորությամբ և իրենց ունակությունները գործադրելու իրավունքով, որոնք շնորհվել են նրանց ինչպես իրենց բարի է թվում, անկախ կրոնից: Սակայն Աստված չի թույլատրել և չի թույլատրի, որպեսզի Սուրբ Հոգին շնորհվի ցանկացած տղամարդու և կնոջ այլ կերպ, քան Աստծո օրենքներին հնազանդվելու միջոցով: Հետևաբար, ոչ ոք չի կարող մեղքերի թողություն ստանալ, ոչ ոք չի կարող Սուրբ Հոգու պարգևը ստանալ, ոչ ոք չի կարող Աստծո հայտնությունները ստանալ, ոչ մի տղամարդ չի կարող ստանալ Քահանայություն, դրա իրավունքները, զորությունն ու արտոնությունը, ոչ ոք չի կարող դառնալ Աստծո ժառանգ և Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակից, եթե չենթարկվի երկնքի պահանջներին: Դրանք համընդհանուր օրհնություններ են, դրանք մեծ և անգնահատելի արտոնություններ են,

որոնք պատկանում են ավետարանին և կյանքի ու փրկության ծրագրին, որոնք բաց են և հասանելի բոլորի համար, որոշակի պայմաններով, սակայն երկնքի տակ գտնվող ոչ ոք չի կարող վայելել դրանք, եթե չքայլի այն ճանապարհով, որը Աստված է նախանշել, որով նրանք կարող են ձեռք բերել դրանք: Եվ այդ արտոնություններն ու օրհնությունները ստանալով կարելի է կորցնել, և հավանաբար կորցնել ընդմիշտ, եթե չշարունակենք հաստատուն գնալ մեզ համար նախանշված ճանապարհով . . .

Արևը շողում է չարի ու բարու վրա. սակայն Սուրբ Հոգին իջնում է միայն արդարների և նրանց վրա, որոնց մեղքերը ներված են: Անձրևը տեղում է չարի ու բարու վրա, սակայն Քահանայության իրավունքները շնորհվում են և Քահանայության վարդապետությունը երկնքի ցողի պես իջնում է այն հոգիների վրա միայն, որոնք ստանում են այն Աստծո նշանակած եղանակով: Երկնքի բարեհաճությունը, Ամենազորի ընդունումը երկրի վրա ապրող իր զավակներին որպես իր որդիներ և դուստրեր, կարելի է ունենալ միայն Նրա հայտնած օրենքներին հնազանդվելու շնորհիվ:[14]

Ամենամեծ ազատությունը գալիս է Հիսուս Քրիստոսի ավետարանին հնազանդվելու միջոցով:

Հիսուս Քրիստոսի ավետարանը ազատության կատարյալ օրենք է: Այն նախատեսված է առաջնորդելու մարդուն դեպի փառքի բարձրագույն վիճակ, և վեհացնելու նրան մեր Երկնային Հոր ներկայության մեջ, «որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» [Հակոբոս Ա.17]:[15]

Մենք հավատում ենք, որ Աստված ցանկանում է վեհացնել մարդկանց, որ Հիսուս Քրիստոսի ավետարանին հնազանդվելու միջոցով եկող ազատությունը ամենամեծ ազատությունն է, որը կարող է ստանալ մարդը: Աշխարհում չկա ոչ մի ազատություն, որը մարդիկ կարող են վայելել կամ ձևացնել, որ վայելում են, որը հիմնված չլինի Աստծո կամքի ու օրենքի վրա, և որը չունենա ճշմարտություն՝ որպես իր հիմնական սկզբունք և հիմք: Սխալն է, որ մարդկանց դարձնում է գերի: Անճշտությունն է, որ ստորացնում է մարդկանց: Սխալը և Աստծո օրենքների ու Աստծո կամքի մասին գիտելիքի պակասն է, որ աշխարհի մարդկանց թողնում է վայրի կենդանիների մակարդակի վրա, քանի որ նրանք վայրի կենդանիներից ավելի բարձր բնազդ, ավելի բարձր սկզբունքներ, ավելի բարձր դրդիչներ, ավելի բարձր ձգտումներ չունեն, եթե չունեն ոգեշնչում, որը գալիս է ավելի բարձր աղբյուրից, քան մարդն է:[16]

Միայն Աստծո օրենքներին հնազանդվելու միջոցով է, որ մարդիկ կարող են վեր բարձրանալ մահկանացու կյանքի չնչին թուլություններից և զգալ այն մեծ կապվածությունը, այն գթությունն ու սերը, որոնք աշխուժացնում են մարդկանց զավակների սիրտն ու ձգտումները։[17]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, եկեք ազատ լինենք։ Ես հաստատում եմ, և կարծում եմ ունեմ դրա իրավունքը, որ ես ազատ մարդ եմ, եթե պահում եմ Աստծո պատվիրանները։ Եթե ես սխալ եմ գործում, դառնում եմ այդ սխալի գերին։ Եթե ես մեղք եմ գործում, ես դառնում եմ այդ մեղքի գերին։ Եթե ես զանց եմ առնում Աստծո օրենքները, ապա պատասխանատու եմ Տիրոջ առաջ։ Սակայն ես հաստատում եմ, որ ինչ վերաբերում է ազատությանը, խոսքի ազատությանը, կամքի ազատությանը, գործելու ազատությանը, այն ամենը, ինչը մարդուն ազատ է դարձնում մարդկանց մեջ, չեմ հավատում, որ երկրի վրա ինձանից ավելի ազատ մարդ կա։ Իհարկե, ես կարող եմ մեղք գործել, եթե ցանկանամ։ Ես մեղք գործելու այնքան ազատություն ունեմ, որքան ցանկացած մարդ։ Ոչ ոք իրավունք չունի մեղք գործելու, սակայն բոլորն ազատ են մեղանչելու, եթե կամենում են։ Աստված տվել է նրանց ազատ կամք։ Արդյո՞ք տղամարդկություն եմ դրսևորում մեղք գործելով, որովհետև ազատ եմ այդպես վարվելու։ Ես ազատ եմ, որպեսզի գնամ սրճարան և, եթե ցանկանում եմ, ոգելից խմիչք խմեմ, կամ գնամ խաղատուն և մոլեխաղով զբաղվեմ։ Ես այնքան ազատություն ունեմ այդ առումով, որքան երկրի վրա ապրող ուրիշ որևէ մեկը։ Սակայն այն պահին, երբ ես կանեմ նման բաներ, ես կդառնամ անօրինության ստրուկն ու գերին։ Այս կողմից, եթե ես մեղավոր չեմ սրճարաններ հաճախելու, խաղաթուղթ խաղալու, մոլեխաղով զբաղվելու մեջ կամ էլ այլ օրինազանցություններում, ես անմեղ եմ դրանցից և դեռևս ազատ մարդ եմ։ Այդ առումով ճշմարտությունն ինձ ազատ մարդ է դարձրել։[18]

Մենք չենք քարոզում վախի ավետարանը։ Մենք չենք ձգտում ահաբեկել մարդկանց հոգիները։ Մենք չենք խնդրում մարդուն արդարակյաց լինել անիծյալներին հասնող ահի պատճառով։ Մենք չենք ուզում, որ դուք բարի լինեք, ամբարիշտներին հասնող պատժից վախենալով։ Մենք չենք ցանկանում, որ դուք կատարեք այն, ինչը ճիշտ է, այն պատժի պատճառով, որը ուղեկցում է սխալ գործերին։ Մենք ցանկանում ենք, որ դուք ճիշտը ընտրեք, որովհետև դա ճիշտ է, որովհետև ձեր սիրտը սիրում է ճիշտը, և որովհետև դա ամեն ինչից վեր ընտրություն է։ Մենք ցանկանում ենք

լինել ազնիվ, ոչ թե լոկ որովհետև դա ամենալավ քաղաքականությունն է, այլ որովհետև այդպես վարվելով դուք պատվում եք Աստծուն և իրականացնում եք Նրա նպատակները ձեր կյանքում, քանզի հին և միգուցե ծեծված խոսք է, որ «ազնիվ մարդը Աստծո ամենավեհափառ աշխատանքն է»: Մենք ցանկանում ենք լինել ազնիվ, որովհետև սիրում ենք Աստծուն, և մենք չենք կարող Աստծո Սրբերը լինել, [եթե] այդպիսին չլինենք: Մենք պետք է բարի լինենք, որովհետև սիրում ենք բարին, և որովհետև վախենում ենք չարի հետևանքներից:[19]

Տերն ընդունում է մարդկանցից միայն կամովին և ուրախ սրտերով կատարված հնազանդությունը, և սա է այն ամենը, ինչ ցանկանում են Նրա ծառաները: Այսպիսի հնազանդություն մենք պետք է դրսևորենք, իսկ եթե այդպիսն չլինենք, ուրեմն դատապարտության տակ ենք:[20]

[Հիսուս Քրիստոսը] ոչ միայն բանականություն ուներ, այլ Նա կիրառում էր այդ բանականությունը՝ բարիք գործելով և մարդկանց ազատելով աշխարհի սխալներից և հայրերի չար սովորույթներից: Նա հայտարարել է ճշմարիտ և սթափեցնող խոսքերով. «Եթե դուք իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք. և ճշմարտությունը կազատե ձեզ» [Հովհաննես Ը.31–32]: Ոչ ոք Աստծո նման չէ, եթե ազատ չէ: Աստված ազատ է: Ինչո՞ւ: Որովհետև Նա ունի ողջ արդարությունը, զորությունը և իմաստությունը: Նա նաև ունի Իր ազատ կամքը, և այն դրսևորվում է ոչ թե չարիք, այլ բարիք գործելիս: Այնպես որ, ոչ ոք չի կարող Նրա նման լինել, մինչև որ չենթարկվի այն ամենին, ինչը արդար է, մաքուր, բարի, և մինչև որ չթողնի սխալը, մեղքը և հաղթի ինքն իրեն . . .

Նա, ով ամենահեզն ու ենթարկվողն է Աստծո կամքին, դրսևորում է ամենամեծ իմաստությունը բոլոր մարդկանց մեջ: Նա, ով իր կարծիքը դնում է Տիրոջ ցանկություններին և նպատակներին հակառակ, բոլոր մարդկանցից ամենահեռուն է գտնվում Աստծուց, այդ առումով: Թեև նա կարող է լինել հոր պատկերի նմանությամբ, սակայն նա ամենևին էլ նման չէ Որդուն, եթե չի կարողանում իր սրտում ասել. «Հայր, ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» [Ղուկաս ԻԲ.42]: Տիրոջ կամքն է, որ մենք ունենանք այդ ոգին և հասկանանք այս ճշմարտությունը: Ճիշտ է, որ մենք ունենք մեկ Աստված,Հայր, և որ բոլորը պետք է ենթարկվեն Նրան և նրանցից պահանջվում է հնազանդվել Նրա պատվիրաններին, որպեսզի նրանք դառնան ազատ մարդիկ և լինեն Քրիստոսի ճշմարիտ աշակերտները:[21]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է կամքի ազատությունը: Ո՞վ ունի ազատ կամք: Ինչո՞ւ է ազատ կամքը օրհնություն:
- Ազատ կամքի ինչպիսի՞ դրսևորում է ակնկալում Աստված մեզանից: Ի՞նչ է Նա խոստանում մեզ, եթե ընտրենք Նրան հնազանդվելը: (Տես նաև ՎԿՈ 58.28:)
- Ինչո՞ւ ենք մենք հնարավորություն ունենում վարձահատույց լինել մեր արարքների հետևանքների համար: Ինչպե՞ս մեր երկրային փորձառությունը կպակասեր, եթե Աստված կասեցներ պատերազմը, կանխեր հանցագործությունները և վերացներ աղքատությունը: Ինչպե՞ս կպատասխանեիք նրան, ով սխալմամբ Աստծուն է մեղադրում այն «չարի համար, որ գոյություն ունի աշխարհում»:
- Թեև Աստված «հանդուրժել է այն չարը, որը գործում են Իր ստեղծած էակները», ինչն է մեզ հավաստիացնում, որ Նա «կհսկի նրանց վերջնական արդյունքը»: (Տես նաև Հռովմայեցիս Ը.28; ՎԿՈ 98.3:)
- Ի՞նչ է նշանակում «ազդել անհատի ազատության վրա»: Ինչպե՞ս կարող են ծնողներն ու Եկեղեցու ղեկավարները օգնել ուրիշներին լինել հնազանդ առանց անհատի ազատության վրա ազդելու: (Տես նաև ՎԿՈ 121.34–46:)
- Ինչպե՞ս է Եկեղեցին օգնում մեզ իսկապես ազատ դառնալ: Ինչպե՞ս են մեղքերն ու սխալները սահմանափակում մեզ:
- Ի՞նչ «մեծ ու անգնահատելի» օրհնություններ ենք ունեցել դուք, երբ ընտրել ենք հնազանդվել Աստծո օրենքներին: (Տես նաև ՎԿՈ 130.20–21:)
- Ինչպե՞ս է տարբերվում հնազանդությունը Աստծո օրենքներին, որի համար պատճառ է հանդիսացել սերը, ոչ թե պատժից վախենալը:
- Ինչպե՞ս կարող ենք հետևել Փրկչի օրինակին՝ Հոր կամքին ավելի հնազանդ դառնալու համար:

Հղումներ

1. *Deseret News: Semi-Weekly,* 11 Nov. 1873, 1.
2. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:144; the entire address is on pages 143–55.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 49.
4. *Deseret News: Semi-Weekly,* 3 Jan. 1871, 2.
5. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:297.
6. In *Messages of the First Presidency,* 4:325–26.
7. *Gospel Doctrine,* 56–57; paragraphing added.
8. In *Messages of the First Presidency,* 5:70–71.
9. *Gospel Doctrine,* 48.
10. *Deseret News: Semi-Weekly,* 2 Mar. 1867, 3.
11. In *Collected Discourses,* 5:143.
12. *Gospel Doctrine,* 492; paragraphing altered.
13. In *Messages of the First Presidency,* 4:79.
14. *Gospel Doctrine,* 49–50; paragraphing added.
15. *Gospel Doctrine,* 82.
16. *Gospel Doctrine,* 53–54.
17. In Conference Report, Oct. 1903, 2.
18. In *Collected Discourses,* 4:410–11.
19. In *Collected Discourses,* 3:217–18.
20. *Deseret News: Semi-Weekly,* 11 Nov. 1873, 1.
21. In *Collected Discourses,* 4:407.

1850թ. Սերի Ֆիլդինգ Սմիթը և նրա երեխաները ապրել են այս հասարակ աղյուսաշեն տանը: Այս տանը Ջոզեֆ Ֆ. Սմիթը սովորել է ավետարանի ճշմարտությունները, որոնք օրհնել են նրան իր կյանքի ընթացքում: Տունն այժմ կանգնած է Օլդ Դեզերեթ Վիլիջում «Սա է այն վայրը» հիշատակի այգում:

Երեխաները երկրային ամենամեծ ուրախությունն են

Մենք պետք է սիրենք մեր երեխաներին, դաստիարակենք նրանց Հիսուս Քրիստոսի ավետարանով և սովորեցնենք նրանց առաքինություն, սեր և ազնվություն:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի սերը դեպի ավետարանը միահյուսվում էր իր և բոլոր երեխաների հանդեպ ունեցած իր Քրիստոսանման սիրո հետ: «Երկրային ամենամեծ ուրախությունը գտնում եմ իմ թանկագին երեխաների մեջ»,- ասել է նա: «Փառք Աստծուն»:[1]

Չարլզ Վ. Նիբլին, Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոսը, նշել է, որ Նախագահ Սմիթի «սերը երեխաների հանդեպ անսահման էր: Սենտ Զորջի հարավային բնակավայրերով [ճամփորդելիս], . . . երբ նրա առաջից հանդիսավոր երթով երեխաների խմբեր էին անցնում, հաճելի էր տեսնել, թե ինչպես էր նա հիանում այդ փոքրիկներով: Իմ պարտականությունների մեջ էր մտնում կազմակերպել ճիշտ ժամին ճամփորդող խմբի ճանապարհվելը դեպի հաջորդ բնակավայր, որտեղ մարդկանց մեծ բազմություններ էին սպասում մեզ, սակայն դժվար խնդիր էր նրան երեխաներից պոկելը: Նա ցանկանում էր սեղմել յուրաքանչյուրի ձեռքը և զրուցել նրանց հետ . . .

Ես նրա տուն եկա, երբ նրա երեխաներից մեկը հիվանդ էր: Ես տեսել էի, թե ինչպես էր նա գիշերը աշխատանքից հոգնած տուն վերադառնում, ինչպեսև պետք էր սպասել, և այնուամենայնիվ փոքրիկ երեխային գրկած նա ժամերով քայլում էր տան մեջ, . . . սիրելով ու քաջալերելով նրան, ինչպես որ կարող էր՝ մեծ քնքշությամբ, կարեկցանքով ու սիրով»:[2]

«Նա մեծ քնքշություն ու սեր էր տածում իր մեծ ու պատվավոր ընտանիքի հանդեպ: 1918թ. նոյեմբերի 10-ին վերջին անգամ դիմե-

լով իր երեխաներին նա իր սրտի ամենանուրբ զգացողություններն արտահայտեց այս խոսքերով. «Երբ ես նայում եմ շուրջս և տեսնում եմ իմ տղաներին ու աղջիկներին, որոնց Տերը տվել է ինձ, և Նրա օգնությամբ ինձ հաջողվել է նրանց համար հնարավորություն ստեղծել զգալու բավականին հարմարավետ և, ի վերջո, հարգանքի արժանանալ աշխարհում, ես հասկանում եմ, որ գտել եմ իմ կյանքի գանձը՝ այն ամենը, ինչը կյանքը ապրելու համար արժանի է դարձնում»:[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սովորեցրեք երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանը՝ ցուցումով և օրինակով:

Տղամարդն ու կինը, որոնք ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը և սկսել են իրենց համատեղ կյանքը, պետք է կարողանան իրենց ուժով, օրինակով և ազդեցությամբ իրենց երեխաների մեջ ցանկություն արթնացնել իրենց հետ մրցակցել կյանքի առաքինությամբ, պատվով ու ազնվությամբ, ինչ վերաբերում է Աստծո արքայությանը, որը կծառայի նաև իրենց շահերին և կնպաստի իրենց փրկությանը: Ոչ ոք չի կարող իմ երեխաներին այնքան հավաստի և հոգատար ձևով խորհուրդ տալ իրենց երջանկության ու փրկության համար, որքան ես: Ոչ ոք ավելի հետաքրքրված չի իմ երեխաների բարօրությամբ, որքան ես: Ես չեմ կարող բավարարված զգալ ինձ առանց նրանց: Նրանք իմ մասն են: Նրանք իմն են: Աստված նրանց տվել է ինձ, և ես ցանկանում եմ, որպեսզի նրանք լինեն խոնարհ ու ենթարկվեն ավետարանի պահանջներին: Ես ցանկանում եմ, որ նրանք անեն այն, ինչ ճիշտ է, ամեն մանրուքում, այնպես որ նրանք արժանի լինեն այն պատվին, որը Տերն արժանացրել է նրանց՝ լինել իր ուխտյալ ժողովրդի թվում, որոնք ընտրյալ ժողովուրդ են մյուս բոլոր ժողովուրդներից, որովհետև նրանք զոհաբերություններ են կատարել՝ ճշմարտության մեջ իրենց փրկության համար:[4]

Մեզ ասել են. «Ահա որդիքը Տիրոջ ժառանգությունն են», Սաղմոսողն ասել է նաև, որ նրանք «նորա վարձքն» են [Սաղմոս ՃԻԷ.3]: Եթե երեխաներին զրկենք իրենց ծնունդի իրավունքից, ապա ինչպե՞ս պետք է Տերը վարձք ունենա: Նրանք թուլության ու աղքատության պատճառ չեն կարող լինել ընտանիքում, քանի որ նրանք իրենց հետ աստվածային որոշակի օրհնություններ են բերում, որոնք նպաստում են տան ու ազգի բարգավաճմանը: «Ինչպես որ նետերը զորեղ մարդի ձեռքումը, այնպես

են երիտասարդ որդիքը։ Երանի այն մարդին որ իր կապարճը նորանցով լցրնց» [Սաղմոս ՃԻԷ.4–5]։[5]

Մենք Քրիստոնյա ժողովուրդ ենք, մենք հավատում ենք Տեր Հիսուս Քրիստոսին, և մենք զգում ենք, որ մեր պարտականությունն է՝ ընդունել Նրան որպես մեր Փրկիչ ու Քավիչ։ Սովորեցրեք դա ձեր երեխաներին։ Սովորեցրեք, որ Մարգարե Զոզեֆ Սմիթը վերականգնել է Քահանայությունը, որը կրում էին Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, իսկ նրանց ձեռնադրել էր Ինքը՝ Փրկիչը։ Սովորեցրեք նրանց, որ Զոզեֆ Սմիթը, մարգարեն, երբ դեռ պատանի էր, ընտրվեց և կանչվեց Աստծո կողմից դնելու Քրիստոսի Եկեղեցու հիմքերն աշխարհում, վերականգնելու սուրբ Քահանայությունը և ավետարանի արարողությունները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մարդիկ մտնեն երկնքի արքայություն։ Սովորեցրեք ձեր երեխաներին հարգել իրենց մերձավորներին։ Սովորեցրեք ձեր երեխաներին հարգել իրենց եպիսկոպոսներին և ուսուցիչներին, որոնք գալիս են իրենց տուն ուսուցանելու իրենց։ Սովորեցրեք ձեր երեխաներին հարգել տարեց մարդկանց։ Սովորեցրեք նրանց խորին ակնածանք ցուցաբերել իրենց ծնողների հանդեպ և հարգանքով հիշել իրենց ծնողներին, օգնել բոլոր անօգնականներին ու կարիքավորներին։ Սովորեցրեք ձեր երեխաներին, ինչպեսև ձեզ են սովորեցրել, պատվել Քահանայությունը, որը դուք կրում եք, Քահանայություն, որը մենք կրում ենք որպես Իսրայելի երեցներ։

Սովորեցրեք ձեր երեխաներին հարգել իրենց, պատվել նախագահության սկզբունքը, որի հիմքի վրա կազմակերպությունները պահպանում են իրենց ամբողջականությունը և, որի շնորհիվ պահպանվում է մարդկանց բարօրության, երջանկության և զարգացման ուժն ու զորությունը։ Սովորեցրեք ձեր երեխաներին, որ երբ գնան դպրոց, նրանք պետք է հարգեն իրենց ուսուցիչներին այն բանում, ինչը ճիշտ է և ազնիվ, այն բանում, ինչը տղամարդկային է, կանացի և արժանավայել . . . Սովորեցրեք ձեր երեխաներին պատվել Աստծո օրենքը և պետության օրենքը։[6]

Մենք կարդում ենք Մորմոնի Գրքում և Վարդապետություն և Ուխտերում, որ ծնողներից պահանջվում է ուսուցանել իրենց զավակներին «մինչև ութ տարեկանը հասկանալ վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի»։ «Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին ուսուցանեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ»։ Իսկ եթե ծնողները չեն անում դա, և երեխաները մոլորության մեջ են ընկնում ու երես են

դարձնում ճշմարտությունից, այդ ժամանակ Տերն ասել է, որ մեղքը կլինի ծնողների գլխին [ՎԱՌ 68.25, 28]: Որքա՞ն սոսկալի միտք է այն, որ իր երեխաներին իր ողջ սրտով սիրող հայրը պետք է Աստծո առաջ հաշվետու լինի, թե ինչու է անտեսել նրանց, ում այնքան քնքշորեն սիրել է, մինչև որ նրանք հեռացել են ճշմարտությունից և դարձել տարագիրներ . . . . Այս երեխաների կորստի մեջ մեղավոր կլինեն ծնողները, և նրանք պատասխանատվություն կկրեն նրանց ուրացության և խավարի համար . . . .

Եթե ես կարողանամ արժանի դառնալ Աստծո արքայություն մտնելու համար, ես ցանկանում եմ, որ իմ երեխաները լինեն այնտեղ. և ես մտադիր եմ մտնել իմ Աստծո արքայություն: Ես դրել եմ այդպիսի նպատակ, և պատրաստվում եմ Տիրոջ օգնությամբ և խոնարհաբար ու հնազանդությամբ կատարել իմ առաքելությունը այս երկրի վրա և հավատարիմ լինել Աստծուն իմ բոլոր օրերում: Ես որոշել եմ, և Աստծո օգնությամբ ես չեմ ձախողվի: Այդ պատճառով ես ցանկանում եմ, որ իմ երեխաներն ինձ հետ լինեն: Ես ուզում եմ, որ իմ ընտանիքն ընկերակցի ինձ, որպեսզի այնտեղ ուր ես եմ գնում, նրանք էլ կարողանան գնալ, և որ նրանք կարողանան ինձ հետ միասին նույն վեհացումը ստանալ:[7]

Ծնողները ազդեցություն են ունենում իրենց երեխաների վրա . . . և թեպետ մենք, հնարավոր է, չգիտակցենք, որ մեր օրինակը որևէ ազդեցություն կամ կշիռ ունի, ես հավաստիացնում եմ ձեզ, որ շատ անգամներ ենք մեր հարևաններին կամ երեխաներին վնաս հասցրել մեր արարքների ազդեցությամբ, որոնք այնքան չնչին են թվացել . . . Այնուամենայնիվ մենք տեսնում ենք, ինչպես հայրերն ու մայրերն այնպիսի օրինակ են ծառայում իրենց երեխաներին, որոնք իրենք են դատապարտում կամ որոնց համար իրենք են նախազգուշացնում իրենց երեխաներին: Ծնողների այդպիսի անհամապատասխան վարքը բթացնում է երեխաների զգացողությունը և նրանց հեռացնում է կյանքի ու փրկության ճանապարհից, քանզի, եթե ծնողները սովորեցնում են իրենց երեխաներին այնպիսի սկզբունքներ, որոնք իրենք չեն կիրառում, այդ ուսուցումը հազիվ թե կշիռ կամ ազդեցություն ունենա, բացի միայն չարից:

Մենք ինչպես հարկն է չենք նայում այս ամենին և չենք խորհում այդ մասին: Ի՞նչ կմտածի երեխան, երբ սկսի խորհել, մտածել իր ծնողի մասին, որն ասում է, թե հավատում է, որ Իմաստության Խոսքը Հիսուս Քրիստոսի ավետարանի մի մասն է և տրվել է հայտնությամբ, սակայն իր կյանքում ամեն օր խախտում է այն: Նա կմտածանա հավատալով, որ իր ծնողը կեղծավոր է և չի հավատում ավետարանին: Նրանք, ովքեր նման ուղու վրա են, իրենց վրա

ահավոր պատասխանատվություն են կրում: Այդ դեպքում մենք չենք կարող բավականին հետևողական լինել մեր վարքում, ոչ էլ կարող ենք բավականին հավատարիմ լինել խոստումները կատարելիս:[8]

Մենք պետք է դաստիարակենք երեխաներին սիրով ու բարությամբ:

Մեր երեխաները կլինեն ճիշտ այնպիսին, ինչպիսին մենք կդարձնենք նրանց: Նրանք ծնվում են առանց գիտելիքի ու հասկացողության, նրանք ամենաանօգնական էակներն են երկրի վրա ծնված բոլոր կենդանի էակների մեջ: Փոքր երեխան սկսում է սովորել ծնվելուց հետո, և այն ամենը, ինչ նա գիտի մեծապես կախված է նրա շրջապատող միջավայրից, մեծանալու ընթացքում նրա մանկական մտքի վրա գործած ազդեցություններից՝ բարությունից, որը ցուցաբերում են իր հանդեպ, ազնվազարմ օրինակներից, հոր և մոր սրբազան ազդեցությունից: Եվ նա նշանակալի չափով կդառնա այնպիսին, ինչպիսին կդարձնեն նրան շրջապատը, ծնողներն ու ուսուցիչները:

. . . Շատ բան է կախված այն բանից, թե ինչն է հատկապես ազդում [երեխայի] վրա նրա մեծանալու ընթացքում: Դուք կնկատեք, որ երեխայի մտքի վրա ամենահզոր ազդեցությունը, որպեսզի նրան համոզեն, որ անհրաժեշտ է սովորել, առաջադիմել և ինչ-որ նվաճումներ ունենալ, թողնում է սերը: Անկեղծ սերը կարող է ավելի շատ օգուտ բերել երեխային դաստիարակելիս, քան որևէ այլ բան: Երեխային, որին անհնար է ենթարկել մտրակով կամ բռնություն գործադրելով, կարելի է անմիջապես կարգի հրավիրել անկեղծ սիրով ու ըմբռնումով: Ես գիտեմ, որ դա ճիշտ է, և այս սկզբունքը աշխատում է կյանքի բոլոր պարագաներում . . . Ղեկավարեք երեխաներին՝ ոչ թե զայրույթով, խիստ խոսքերով կամ հանդիմանությամբ, այլ սիրով ու նրանց վստահությունը շահելով:[9]

Եթե միայն դուք հավաստիացնեք ձեր երեխաներին, որ սիրում եք նրանց, որ ձեր ամբողջ հոգով նրանց լավն եք ցանկանում, որ դուք նրանց ընկերն եք, նրանք իրենց հերթին կվստահեն ձեզ, կսիրեն ձեզ ու կձգտեն կատարել ձեր պահանջները նույնպիսի սիրով, ինչպիսին դուք ցուցաբերել եք նրանց հանդեպ: Իսկ եթե դուք եսասեր եք, անբարյացակամ նրանց հանդեպ և, եթե նրանք վստահ չեն, որ դուք սիրում եք իրենց, նրանք կլինեն եսասեր և նրանց համար միևնույն կլինի, թե արդյոք գոհ եք իրենցից,

կատարում են արդյոք նրանք ձեր ցանկությունները, թե ոչ, իսկ այդ ամենի արդյունքը կլինի այն, որ նրանք կդառնան կամակոր, անխոհեմ և անհոգ։[10]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր . . . ես աղաչում եմ ձեզ, ուսուցանեք և հսկեք ձեր երեխաներին սիրո ու համբերության ոգով, քանի դեռ չեք հասել հաջողության։ Եթե երեխաները հանդուգն ու անկառավարելի են, եղեք համբերատար նրանց հետ, մինչև որ նրանց կգրավեք սիրով, կբացեք նրանց հոգին, և այնուհետև դուք կարող եք նրանց բնավորությունը ձևավորել ձեր ցանկությամբ։[11]

Պաշտպանենք երեխաներին կամակոր դառնալուց։

Աստված, այնպես արա, որ մեզանից ոչ ոք այնքան անխոհեմ հանդուրժողականությամբ, այնքան անմիտ ու անխելք սիրով կապված չլինի իր երեխաներին, որպեսզի երեխաներին վիրավորելուց վախենալով չհանդգնի կանգնեցնել նրանց իրենց քմահաճ ճանապարհին, ետ չպահի սխալ գործելուց և արդարակյաց բաներից առավել աշխարհիկ բաների հանդեպ նրանց հիմար սիրուց։ Ես ցանկանում եմ ասել հետևյալը. Ոմանք հասել են այնպիսի անսահման վստահության իրենց երեխաների հանդեպ, որ չեն հավատում, որ հնարավոր է նրանք ճանապարհից շեղվեն կամ սխալ գործեն։ Նրանք չեն հավատում, որ իրենց երեխաները կարող են սխալ գործել, որովհետև կուրորեն վստահում են նրանց։ Արդյունքում նրանք թույլ են տալիս, որ երեխաները առավոտյան, կեսօրին և երեկոյան հաճախեն տարբեր տեսակի զվարճանքի վայրեր, շատ հաճախ նրանց ընկերակցությամբ, որոնց իրենք չգիտեն և չեն հասկանում։ Մեր երեխաներից ոմանք այնքան անմեղ են, որ նույնիսկ չեն կասկածում չարին, և այդպիսով, կորցնում են իրենց զգուշավորությունը և չարի թակարդն են ընկնում։[12]

Ի՞նչ ենք անում մեր տներում, որպեսզի սովորեցնենք մեր երեխաներին, լուսավորենք նրանց։ Ի՞նչ ենք անում, որպեսզի քաջալերենք նրանց տունը իրենց զվարճանքի վայրը դարձնելու համար, այն վայրը, որտեղ կարող են հրավիրել իրենց ընկերներին սովորելու կամ զվարճանալու համար։ . . . Արդյոք հետաքրքրվո՞ւմ ենք նրանցով և իրենց գործերով։ Արդյոք տալի՞ս ենք նրանց ֆիզիկական գիտելիք, մտավոր սնունդ, առողջարար վարժություն և հոգևոր մաքրություն, որը նրանց հնարավորություն կտա դառնալ մաքուր ու ամուր մարմնով, խելամիտ ու պատվավոր քաղաքացիներ, հավատարիմ ու նվիրված Վերջին Օրերի Սրբեր։

. . . Մենք լիովին կարող ենք մեր որդիներին ու դուստրերին որոշ ժամանակ տրամադրել հանգստի ու զվարճանքի համար, և որոշակի պայմաններ ստեղծել տանը, բավարարելու համար խելամիտ ֆիզիկական ու մտավոր հանգստի հանդեպ նրանց բուռն ձգտումը, որի կարիքն ամեն երեխա ունի, և որը կփնտրի փողոցում կամ անցանկալի վայրերում, եթե դրանով չապահովենք նրան տանը:[13]

Մեր զվարճանքների բնույթն ու բազմազանությունը այնքան ուժեղ են ազդում մեր երիտասարդների բարօրության և բնավորության վրա, որ անհրաժեշտ է ծայրահեղ նախանձախնդրությամբ պաշտպանել Սիոնի երիտասարդների անխաթար բարոյականությունն ու տոկունությունը:

Առաջինը, ամեն ինչում պետք է չափավորություն լինի. և երիտասարդներին պետք է համոզել, որ չտրվեն անչափ շատ ուրախության ոգուն ու թեթևամտությանը . . . Նրանց պետք է սովորեցնել ավելի ու ավելի շատ գնահատել հասարակական ու ինտելեկտուալ բնույթ կրող զվարճանքները: Նախընտրելի են ընտանեկան երեկույթները, համերգները, որոնք զարգացնում են երիտասարդների տաղանդները և հասարակական զվարճանքները, որոնք միավորում են թե՛ երիտասարդներին և թե՛ մեծերին . . .

Երկրորդը, մեր զվարճանքները պետք է համապատասխանեն եղբայրության և կրոնական նվիրվածության մեր դավանանքի ոգուն . . . Զվարճությունների հարցը այն հարցերից է, որը մեծապես ազդում է Սրբերի բարօրության վրա, որի վրա յուրաքանչյուր ծխի նախագահող իշխանությունները պետք է կենտրոնացնեն իրենց համակ ուշադրությունը:

Երրորդը, մեր զվարճանքները, որքան հնարավոր, է քիչ պետք է խանգարեն դպրոցական դասերին: Շատ ցանկալի է, որ մեր երիտասարդների սկզբնական տարիների կրթությունը որքան հնարավոր է քիչ ընդհատվի . . .

Վերջապես, պետք է խուսափել այն բանից, ինչը յուրահատուկ է շատ ընտանիքներին, որտեղ ծնողները հրաժարվում են կանոնակարգել իրենց երեխաների զվարճանքները, և թողնում են նրանց լողալ հոսանքին համընթաց և գտնել իրենց զվարճությունն ամենուր, որտեղ հնարավոր է: Ծնողները երբեք չպետք է կորցնեն հսկողությունը իրենց երեխաների զվարճանքների վրա, սկսած անցումային տարիքից, և պետք է բծախնդրորեն ուշադրություն դարձնեն, թե ում հետ են նրանք գնում զվարճանալու:[14]

Սովորեցրեք երեխաներին գնահատել համբերությունն ու աշխատանքը։

Ծնողների պարտականությունն է՝ դեռևս վաղ տարիքից սովորեցնել իրենց երեխաներին ավետարանի սկզբունքները և լինել լրջախոհ ու աշխատասեր։ Նրանց գիտակցության մեջ, սկսած օրորոցից մինչև այն պահը, որ կթողնեն հայրական տունը, պետք է դրոշմվի, որ պետք է ստեղծեն իրենց տունը և ստանձնեն ինքնուրույն ապրելու պարտականությունները, իմանալով, որ կա ցանելու ժամանակ և հավաքելու ժամանակ, և ինչ մարդը ցանի, այն էլ կհնձի։ Երիտասարդության տարիներին վատ սովորություններ ցանելը առաջ կբերի ոչ այլ ինչ, քան չարիք, և ծուլության սերմեր ցանելը անխուսափելիորեն կբերի աղքատություն և ծեր տարիքում անապահովություն։ Չարը չարիք է ծնում, իսկ բարին բարիք է բերում . . .

Թող Սիոնի ծնողները իրենց երեխաներին զբաղեցնեն ինչ-որ բանով, որպեսզի նրանք սովորեն աշխատանքի հմտություններին և պատրաստ լինեն կատարելու իրենց վրա դրված պատասխանատվությունները։ Սովորեցրեք նրանց մի որևէ օգտակար մասնագիտություն, որպեսզի կյանքում կարողանան ապահովել իրենց, երբ սկսեն ինքնուրույն ապրել։ Հիշեք, Տերն ասել է. «Ծույլ մի՛ եղիր. քանզի նա, ով ծույլ է, չպետք է ուտի աշխատողի հացը, ոչ էլ հագնի նրա հանդերձները» [տես ՎԵՈՒ 42.42]։ Նրանք չպետք է հակում ունենան բարձր ծիծաղելու, թեթև և հիմար բաներ խոսելու, չպետք է տրվեն աշխարհիկ հպարտությանը և հեշտասեր ցանկություններին, քանզի դրանք ոչ միայն անվայելուչ են, այլև ծանր մեղքեր են Տիրոջ աչքում։[15]

Աշխատանքը ֆիզիկական և հոգևոր էակների ճշմարիտ երջանկության բանալին է։ Եթե մարդը միլիոններ ունի, նրա զավակները ամեն դեպքում պետք է սովորեն աշխատել իրենց ձեռքերով, տղաներն ու աղջիկները պետք է տանը դասեր առնեն, որոնք կօգնեն նրանց կատարել ամենօրյա ընտանեկան գործերը։[16]

Ծնողներին մեծ բավականություն է պատճառում, երբ կարողանում են իրենց երեխաների ցանկությունները բավարարել, սակայն դա անկասկած դաժանություն է երեխայի հանդեպ, երբ նրան տալիս ես այն ամենը, ինչ նա ցանկանում է։ Երեխաներին կարելի է խելամտորեն մերժել այնպիսի բաներ, որոնք ինքնին անվնաս են։ Հաճույքը, որը ստանում ենք ցանկության իրականանալուց, հաճախ կախված է մեր ցանկության որակից, քան ստացած ցանկության փաստից։ Երեխային կարելի է շատ նվեր-

ներ գնել, որոնք նրան շատ քիչ կամ ընդհանրապես հաճույք չեն պատճառի, պարզապես որովհետև նա չի երազել դրանց մասին: Այնպես որ մեր ցանկությունների ճիշտ զարգացումը մեծ նշանակություն ունի մեր կյանքում երջանկություն ունենալու համար . . .

Մեր ցանկությունները զարգացնելու Աստծո ճանապարհները, իհարկե, միշտ եղել են ամենակատարյալը, և եթե նրանք, որոնք երեխաների ցանկությունները զարգացնելու և ուղղորդելու իշխանություն ունեն, ընդօրինակեին Նրա խելամտությանը, երեխաները շատ ավելի հաջողակ կլինեին դժվարությունները հաղթահարելիս, որոնք ամենուր պաշարում են մարդկանց՝ գոյատևման պայքարում: Եվ ո՞րն է Աստծո ճանապարհը: Ամենուր բնության մեջ մենք համբերության և սպասման դասեր ենք քաղում: Երկար ժամանակ է անցնում, մինչև որ ստանում ենք մեր ցանկացածը, և այն փաստը, որ մենք ցանկանում ենք դա երկար ժամանակ, ստացածը դարձնում է ավելի թանկ: Բնությամբ մենք ունենք մեր ցանելու ժամանակը և հավաքելու ժամանակը, և եթե երեխաները ուսուցանվեն, որ ցանկությունները, որոնք նրանք ցանում են, կարող են հասունանալ հետագայում համբերության և աշխատանքի շնորհիվ, նրանք կսովորեն գնահատել այն, ինչին երկար ձգտում էին և որին վերջապես հասել են:[17]

Ամեն ինչից վեր, եկեք մեր երեխաներին սովորեցնենք մեր Փրկչի ավետարանի սկզբունքները, որպեսզի նրանք քաջատեղյակ լինեն ճշմարտությանը և քայլեն լույսի մեջ, որը կսփռվի բոլոր նրանց վրա, ովքեր կընդունեն այն: Տերն ասել է. «Նա, ով կանուխ փնտրում է ինձ, կգտնի ինձ, և չի թողնվի» [տես ՎԿՈ 88.83]: Հետևաբար, մեզ պետք է դեռևս վաղ հասակից գնալ ճիշտ ու նեղ ճանապարհով, որը տանում է դեպի հավերժական կյանք:[18]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ երեխաները, ովքեր հանձնված են մեր խնամքին «Տիրոջ ժառանգությունն» են և «նրա վարձքը» (Սաղմոս ՃԻԷ.3): Ինչպիսի՞ աստվածային օրհնություններ են բերում երեխաները, «որոնք նպաստում են տան և ազգի բարգավաճմանը»:
- Ինչո՞ւ պետք է ծնողները սովորեցնեն իրենց զավակներին հավատալ Տեր Հիսուս Քրիստոսին: Ինչպիսի՞ այլ կարևոր վարդապետություններ և սկզբունքներ պետք է երեխաներին սովորեցնել (Տես նաև Մոսիա 4.14–15; ՎԿՈ 68.25–28): Ինչպե՞ս կարելի է սա սովորեցնել:

- Ի՞նչ կլինի երեխաներին ավետարանի այս սկզբունքները չսովորեցնելու արդյունքը:
- Ինչո՞ւ է կարևոր, որ ծնողները միասնական ու հետևողական լինեն իրենց երեխաներին ուսուցանելիս: Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի իրենց վարքը համապատասխանի իրենց ուսուցմանը:
- Ինչո՞ւ է սերը «ամենահզոր ազդեցությունը թողնում երեխայի մտքի վրա»: Ինչպե՞ս կարող են ծնողները շահել իրենց երեխաների վստահությունը: Ի՞նչը կարող է դառնալ «նսասիրության, անբարյացակամության» հետևանքը՝ երեխաների հարցում:
- Ի՞նչ է նշանակում «անխոհեմ հանդուրժողականությամբ» մեծացնել երեխային: Որո՞նք են երեխայի հանդեպ անխոհեմ հանդուրժողականություն ցուցաբերելու վտանգները:
- Որո՞նք են Նրա զավակներին դաստիարակելու և «զարգացնելու Աստծո ճանապարհները»: Ինչպե՞ս կարող ենք հետևել մեր ընտանիքներում Նրա օրինակին:
- Ինչպե՞ս կարող ենք հետևել Նախագահ Սմիթի խորհրդին՝ ընտանեկան զվարճանքները ղեկավարող ուղեցույցներ սահմանելով: Ինչպե՞ս կարելի է սովորեցնել երեխաներին ձգտել արժանավայել նպատակների «համբերության և աշխատանքի» միջոցով:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 449.
2. Charles W. Nibley, "Reminiscences," in *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 523.
3. Quoted in Edward H. Anderson, "Last of the Old School of Veteran Leaders," in *Gospel Doctrine,* 539–40.
4. *Gospel Doctrine,* 278.
5. *Gospel Doctrine,* 289.
6. *Gospel Doctrine,* 293; paragraphing added.
7. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1; paragraphing added.
8. *Deseret News: Semi-Weekly,* 3 Jan. 1871, 2; paragraphing added.
9. *Gospel Doctrine,* 294–95; paragraphing altered.
10. *Gospel Doctrine,* 389.
11. *Gospel Doctrine,* 295.
12. *Gospel Doctrine,* 286.
13. *Gospel Doctrine,* 318–19.
14. *Gospel Doctrine,* 321.
15. *Gospel Doctrine,* 295–96.
16. *Gospel Doctrine,* 527.
17. *Gospel Doctrine,* 297–98.
18. *Gospel Doctrine,* 296.

Տիրոջ սուրբ տաճարները

Սուրբ տաճարներում մենք կատարում ենք փրկության արարողություններ ապրողների և մահացածների համար, և ուխտեր ենք կապում, որոնց մենք պետք է հավատարիմ մնանք մեր ողջ կյանքում:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1907թ. օգոստոսին Յուտայի Յուինտա Ցցի թաբերնակլի նվիրագործման ծառայության ժամանակ Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հավաքված Սրբերին ասել է, որ ինքը չի զարմանա, եթե մի օր իրենց մոտ էլ տաճար կառուցվի:[1] 1997թ. նոյեմբերին վերակառուցված թաբերնակլը նվիրագործվեց որպես Վերնալ Յուտա Տաճար, որը դարձավ Եկեղեցու 51-րդ տաճարը:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքը և ծառայությունը շատ սերտորեն կապված էր տաճարային աշխատանքի հետ: Նրա անձնական փորձը սկսվել է Նավույում 1845–46թթ. ձմռանը, երբ նրա մայրը և քույրը, Մերսի Ռ. Թոմսոնը, «շատ էին զբաղվում տաճարում ընթացող աշխատանքով»: Հետագայում Նախագահ Սմիթն ասել է. «Այնտեղ են իմ հոր երեխաները կնքվել իրենց ծնողներին»:[2] Նա ներկա է եղել Սոլթ Լեյքի Տաճարի անկյունաքարի տեղադրմանը 1853 թվականին և տաճարի նվիրագործմանը 1893 թվականին: Անհամբերությամբ սպասելով նվիրագործմանը, նա ասել է. «Քառասուն տարի ամբողջ Եկեղեցու հույսը, ցանկություններն ու սպասումները կենտրոնացած էին այս կառուցի ավարտման վրա: . . . Այժմ, երբ այս հրաշալի կառույցը ի վերջո ավարտված է և պատրաստ է աստվածային նպատակներով օգտագործվելու համար, պե՞տք է արդյոք ասենք, որ մենք մոտենում ենք այն իրադարձությանը, որի կատարումը մեզ համար, որպես ժողովրդի, մեծապես կարևոր է»:[3] Նա ծառայել է որպես Սոլթ Լեյք Սիթի Տաճարի նախագահ 1898–1911թթ., ինը տարի այն ժամանակահատվածից, որ նա եղել է Եկեղեցու Նախագահ:

Վերնալ Յուտայի Տաճար։ 1997թ. Յուիլնտա Ցցի
թաբերնակլը վերակառուցվեց և դարձավ Վերնալ Յուտա Տաճարը։

Նախագահ Սմիթը մասնակցել է Սենտ Զորջ, Լոգան և Սատի Տաճարների նվիրագործումներին: 1913թ. Ալբերտսոնում նա նվիրագործել է Կանադայի Ալբերտա, Եկեղեցու վեցերորդ տաճարի հողակտորը, իսկ 1915թ. նա իր սիրելի երկրորդ հայրենիքում, Հավայան կղզիներում, նվիրագործել է հողը՝ Հյուսիսային Ամերիկայից դուրս առաջին տաճարի կառուցման համար: Այնուամենայնիվ, նա ընդունում էր, որ Եկեղեցին գտնվում է լոկ տաճարային կառուցման շեմին. «Ես կանխատեսում եմ այլ տաճարների կառուցման անհրաժեշտությունը . . . նվիրված Տիրոջը Աստծո տան արարողությունները կատարելու համար, այնպես որ մարդիկ կարողանան Տիրոջ տնից օգտվել առանց այդ նպատակի համար հարյուրավոր մղոններ ճամփորդելու»:[4]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Տաճարները նախատեսված են փրկող սրբազան արարողություններ կատարելու համար:

Մենք զբաղված ենք տաճարային աշխատանքով: Մենք կառուցել ենք չորս տաճար այս հողի վրա, և երկու տաճար արևելյան շրջանում, նախքան այստեղ տեղափոխվելը: Նախագահ Զոզեֆ Սմիթի կյանքի ընթացքում այդ երկու տաճարներից մեկը կառուցվեց և նվիրագործվեց, մյուսի հիմքն էր դրվել, պատերն արագ վեր էին բարձրանում, երբ նա նահատակվեց: Այն ավարտվեց մարդկանց ջանքերով շատ դժվարին պայմաններում, աղքատության մեջ և նվիրվեց Տիրոջը: Այստեղ Աստծո տան արարողությունները սպասավորվեցին այնպես, ինչպես Եկեղեցու Մարգարե Զոզեֆ Սմիթը ուսուցանել էր ղեկավարող իշխանություններին . . . . Նույն ավետարանն է իշխում այսօր, և նույն արարողություններն են սպասավորվում այսօր, թե ապրողների և թե մահացածների համար, որոնք սպասավորվում էին Մարգարեի կողմից, նրա կողմից տրվում էին Եկեղեցուն:[5]

Մենք հույս ունենք, որ կտեսնենք այն օրը, երբ տաճարներ կունենանք կառուցված երկրի տարբեր մասերում, որտեղ նրանք անհրաժեշտ են մարդկանց հարմարավետության համար. քանզի գիտակցում ենք, որ ամենամեծ պատասխանատվություններից մեկը, որը ընկած է Աստծո ժողովրդի վրա այսօր դա այն է, որ նրանց սրտերը պետք է դառնան դեպի իրենց հայրերը, և որ նրանք պետք է կատարեն այն աշխատանքը, որն անհրաժեշտ է, որպեսզի նրանք ներդաշնակորեն միանան միասին սերնդից սերունդ՝ Նոր ու Հավիտենական Ուխտով:[6]

Տաճարները բաց չեն հանրության առաջ: Դրանք ծառայում են սրբազան արարողություններ կատարելու համար, որի նպատակն է ապրողների և մահացածների փրկությունը: Հիմնական ծեսերը մկրտություններն են, օժտումները, ամուսնությունները, կնքումները . . . . Այս աշխատանքի մեծ մասը, որը կատարվում է մահացածների համար, ունի փոխարինող բնույթ: Վերջին Օրերի Սրբերի միջոցով փրկության հույս կա նրանց համար, ովքեր հեռացել են այս կյանքից, առանց ավետարանի մասին լսելու, եթե նրանք հնազանդություն ցուցաբերեն դրա պահանջներին մյուս աշխարհում, հեռացած հոգիների ապրելու վայրում: Ավետարանը կքարոզվի նրանց Տիրոջ ծառաների կողմից, որոնք գնացել են դրախտ, և նրանք, ովքեր հավատք կցուցաբերեն և կապաշխարեն այնտեղ, նրանց համար կարող են մկրտվել այստեղ, և այդպիսով նրանք կարող են ստանալ այլ տեսակի ծառայություն, որպեսզի վեհացում և փառք ձեռք բերեն:[7]

Ոչ ոք չի կարող Աստծո Արքայություն մտնել այլ կերպ, քան այն դռնով և միջոցներով, որ Հիսուս Քրիստոսն է առաջարկել մարդկանց որդիներին . . . Ամեն հոգի, որը երբևէ ապրել և մահացել է այս երկրի վրա, հնարավորություն կունենա լսելու Հիսուս Քրիստոսի ավետարանը: Եթե նրանք ստանում են այն և հնազանդվում են դրան, ավետարանի արարողություններ կկատարվեն նրանց համար և նրանց փոխարեն, իրենց ազգականների կամ նրանցից հետո իրենց սերունդներից որևէ մեկի կողմից, որպեսզի Հիսուս Քրիստոսի ավետարանի ամեն օրենք և ամեն պահանջ կատարվի, և խոստումներն ու պահանջները իրականանան ապրողների, ինչպես նաև մահացածների փրկության համար:[8]

Հետևաբար, Վերջին Օրերի Սրբերից որևէ մի տղամարդ կամ կին, որը չի տեսնում Տիրոջ Տան արարողությունների անհրաժեշտությունը, որը չի արձագանքում ավետարանի պահանջներին իր բոլոր ծիսակատարություններով և արարողություններով, չի կարող պատշաճ կերպով ըմբռնել այն մեծ աշխատանքը, որին կանչված են Վերջին Օրերի Սրբերը, կատարելու այս ժամանակաշրջանում, ոչ էլ կվայելի այն օրհնությունները, որոնք գալիս են օրենքին հնազանդվելուց, որն ավելի բարձր է, քան մարդկանց օրենքները:[9]

Թող ոչ ոք թեթևամտորեն չվերաբերվի Աստծո Տան արարողություններին:[10]

Մենք ապրում ենք ոչ միայն այս խղճուկ մի քանի տարիների համար, որ անցկացնում ենք այս երկրի վրա, այլ այն կյանքի

համար, որը վերջ չունի։ Եվ մենք ցանկանում ենք վայելել ամեն օրհնություն հավերժության այդ անհաշիվ դարերի ընթացքում, սակայն եթե դրանք չեն ապահովագրում մեզ այդ կնքող զորությամբ, որը տրվել է Պետրոս Առաքյալին Աստծո Որդու կողմից, մենք չենք կարող ունենալ դրանք։ Եթե մենք չենք ապահովում նրանց այդ սկզբունքով, գալիք կյանքում չենք ունենա հայր, մայր, եղբայր, քույր, կին, երեխաներ, ընկերներ, հարստություն, պատիվ, քանի որ բոլոր երկրային «ուխտերը, դաշինքները, մուրհակները, պարտավորությունները, երդումները, խոստումները, կատարումները, կապերը և ընկերությունները» [տես ՎԵՈ 132.7] չեղյալ են համարվում գերեզմանում, բացի նրանցից, որոնք կնքվել և հաստատվել են Աստծո զորությամբ։[11]

Եկեք տաճար գնանք հաստատուն վճռականությամբ Աստծո կամքը կատարելու համար։

Մի մարդ . . .եկավ Եպիսկոպոսից ստացած իր երաշխավորագրով . . . և ցանկություն հայտնեց օգտվել արտոնությունից մկրտվելու իր մահացածներից մի քանիսի համար, և քանի որ նա եկել էր պատշաճ երաշխավորագրով, նա արժանացավ այդ պատվին։ Նա մկրտվեց իր մահացածների համար։ Այնուհետև նրան թույլատրվեց շարունակել և նրանց համար այլ արարողություններ կատարել։ Երբ աշխատանքը կատարվել էր, նա հայտնեց Եկեղեցուց հեռանալու իր որոշման մասին։ Այժմ ես ավելի շուտ հիանում եմ այդ խեղճ մարդով, որովհետև նա որոշել էր անել այն ամենը, ինչ կարող էր իր մահացած ընկերների համար, նախքան կզրկեր իրեն այդ անելու արտոնությունից։ Ինչ-որ մեկը կարող է ասել. «Արդյո՞ք այդ աշխատանքը կընդունվի Տիրոջ կողմից»։ Երևի թե կընդունվի, որքանով որ այն վերաբերում է մահացածներին, գրառում է արվել, ծես է կատարվել Աստծո կողմից հաստատված օրենքի համաձայն։ Ամեն ինչ կատարվել է պատշաճ ձևով և պատշաճ իշխանության ղեկավարությամբ, հետևաբար ինչո՞ւ չպետք է այդ ամենը կարգին չլինի, որքանով հարցը մահացածներին է վերաբերում։ Սակայն որքա՞ն գովասանքի է արժանի այդ մարդը իր կատարածի համար։ Ոչ շատ։ «Որովհետև ի՞նչ օգուտ է մարդի, եթե բոլոր աշխարհս ստանայ՝ և իր անձը կորցնե» [Մարկոս Ը.36]։

Խնդրանքը այն մարդուն, որը փնտրում է կեղծիքով ձեռք բերել արտոնություններ Տիրոջ տանը, հետևյալն է. Մարդիկ, որոնք փորձում են խաբել Աստծուն, ձևացնելով այն, ինչ իրենք չեն, որպեսզի գողանան արտոնություններ և օրհնություններ Աստծո տնից,

երկարաժամկետ օգուտ չեն ստանա։ Եթե մենք ցանկանում ենք օրհնություններ և արարողություններ ստանալ Աստծո տանը, եկեք ստանանք դրանք ազնիվ սրտերով, և եկեք մտնենք այդ տունը ամեն բանում Աստծո կամքը կատարելու հավատարիմ ու ազնիվ վճռականությամբ՝ ոչ թե որոշակի ժամանակահատվածում, այլ մեր կյանքի բոլոր օրերում անելու այն, ինչ Նա է պատվիրում։ Քանի դեռ մենք շարունակում ենք վայելել ճիշտ հոգին, այդ օրհնությունները կման մեզ հետ, իսկ Աստված կընդունի մեզ որպես Իր զավակներ, և միայն այն ժամանակ, երբ մենք հեռանանք ճիշտ ճանապարհից և չկատարենք մեր պարտականությունը, Աստված ետ կքաշի իր հոգին մեզանից և մեզ միայնակ կթողնի . . .

Եթե իմ սրտում զգում եմ, որ վնաս եմ հասցրել իմ եղբայրներից որևէ մեկին, չեմ հնազանդվել Աստծո օրենքներից որևէ մեկին, վիրավորել եմ Եկեղեցու անդամներից որևէ մեկին կամ Աստծո Եկեղեցում ծառայող իմ նախագահներից որևէ մեկին, ես պետք է զգամ, որ իմ պարտականությունն է՝ գնալ և ամեն բան շտկել, նախքան այդ տունը մտնելը . . . . Եթե ես ինչ-որ վնաս եմ հասցրել ձեզ, եթե ձեզ զրկել եմ ինչ-որ իրավունքից, եթե չեմ պահել ձեզ տված իմ խոստումը, կամ եթե արել եմ ինչ-որ բան, որն ինչ-որ չափով ցածրացրել է ինձ Աստծո կամ իմ եղբայրների աչքում, ես պետք է գնամ և փորձեմ փոխհատուցել հասցրած վնասը, նախքան կփորձեմ Աստծո տուն գնալ։ Այնուամենայնիվ, ես չէի ցանկանա դա անել, պարզապես այդ տուն գնալու նպատակով։ Ես պետք է ցանկանամ դա անել, որովհետև դա իմ պարտականությունն է, և որպեսզի ես արժանի լինեմ մտնել այնտեղ և ապա ամեն անգամ կանգնել Տիրոջ առաջ սրբազան վայրերում, ես պետք է շտկեմ իմ եղբայրների հանդեպ գործած բոլոր սխալները։

Ես պետք է պատվեմ նրանց, ովքեր արժանի են հարգանքի։ Ես պետք է պատվեմ Աստծուն՝ իմ Երկնային Հորը, *այժմ* և միշտ հավիտյանս հավիտենից։ Սա է այն սկզբունքը, ըստ որի ես պետք է անեմ այն, ինչը ճիշտ է, փոխհատուցեմ հասցրած վնասը և հարթեմ դժվարությունները։ Ես լսել եմ եղբայրների մասին, որոնք կապված են ընտանեկան կապերով, ինչպես նաև նոր ու հավիտենական ուխտով, որոնք տարաձայնությունների մեջ են գտնվում միմյանց հետ, իրենց սրտում պահելով դառը զգացողություններ միմյանց հանդեպ, և նրանցից ոչ ոք չի խոնարհեցնում իրեն գնալու մյուսի մոտ և ընդունելու իր սխալը, կամ չի փորձում համաձայնության գալ, այլ նրանցից ամեն մեկը մեծացնում է իր մերձավորի թուլությունները, միևնույն ժամանակ մոռանալով իր

մեղքերի ու թուլությունների մասին: Սակայն . . . եթե նրանց մերժվեր Աստծո տուն գնալու արտոնությունը, նրանք կհամարեին, որ իրենց մեծ վնաս է հասցվում:

Սակայն թույլ տվեք հարցնել ձեզ. Արդյո՞ք այդ մարդիկ արժանի են գնալ այնտեղ: Արժանի՞ է արդյոք Աստծո տուն գնալ այն մարդը, որը վիրավորանք է թաքցնում իր սրտում իր մերձավորի հանդեպ, որը չի կամենում ներել նրան կամ չի ձգտում համաձայնության գալ: Այնուամենայնիվ, դուք չեք կարող մերժել նրան: Եվ ինչ էլ որ մենք անենք կամ ասենք, կլինեն հարյուրավոր մարդիկ, ովքեր կգնան այնտեղ նման իրավիճակում: Կարո՞ղ են արդյոք նրանք ակնկալել, որ Աստված կլինի իրենց հետ, և որ Նրա փառքը կշողա նրանց վրա: Սի՛ խաբեք ինքներդ ձեզ: Երբ մենք արժանի ենք, Աստված կհայտնի Իրեն մեզ: Երբ պատրաստված ենք, մենք կտեսնենք Նրան, ինչպես Նա կա, և մենք կճանաչենք Նրան: Ինչպես նաև մեզ կճանաչեն այնպիսին, ինչպիսին որ կանք: Սակայն դա կլինի այն ժամանակ, երբ մենք արժանի ենք, և ոչ մինչև այդ:[12]

Եկեք հավատարիմ լինենք Տիրոջ տանը կապած ուխտերին:

Ինչ վերաբերում է մեր կրոնին, կամ մեր հավերժական ուխտերին, մենք ոչ մի փոխզիջման չենք կարող գնալ, ոչ էլ կարող ենք փոխել սկզբունքները. դրանք գալիս են Աստծուց և հիմնված են հավերժական դարերի վեմի վրա. դրանք կապրեն և գոյություն կունենան, երբ կայսրություններն ու իշխանությունները կտապալվեն և ազգերը կկործանվեն, և Ամենազորի օգնությամբ մենք սրբորեն կպահենք մեր ուխտերը և հետաքրքրությունները, և հավատարիմ կլինենք մեր Աստծուն, քանի դեռ ժամանակը գոյություն ունի կամ հավերժությունը կա:[13]

Այժմ թող Տերը օրհնի ձեզ և Տիրոջ անունով ես օրհնում եմ ձեզ, այստեղ հավաքվածներին, Տիրոջ ուխտյալ ժողովրդին, ճիշտ ինչպես հին Իսրայելն էր Աստծո ուխտյալ ժողովուրդը, քանզի դուք Հիսուս Քրիստոսի Ավետարանի հանդիսավոր ուխտի մեջ եք մտել, որ կպահեք Աստծո պատվիրանները, որ մշտապես խույս կտաք չարից և ամբարշտությունից: Դուք գիտեք, թե ինչ եք արել. դուք գիտեք, թե Աստծո, ականատեսների և երկնքի հրեշտակների առաջ ինչպիսի ուխտեր եք կապել, և հետևաբար դուք մտել եք նոր ու հավիտենական ուխտի կապի մեջ և իրոք Աստծո ուխտյալ ժողովուրդն եք վերջին օրերում:[14]

Ինչպես Տերն է օգնել ինձ անցյալում՝ հավատարիմ մնալ իմ ուխտերին, որոնք կապել եմ Նրա հետ և ձեզ հետ, . . . այնպես էլ Նրա օգնությամբ և Նրա օրհնությամբ ես նպատակ ունեմ պահպանել իմ հավատարմությունը իմ հետագա ողջ կյանքի ընթացքում, անկախ նրանից, ինձ թույլ կտրվի երկար ապրել, թե՝ կարճ, դա ինձ համար նշանակություն չունի: Քանի դեռ ես ապրում եմ, հուսով եմ լինել հավատարիմ, ազնիվ մարդ, մարդ, որը կարող է պարզ աչքերով նայել բոլոր մարդկանց աչքերին և վերջապես մարդ, որը կարող է կանգնել Աստծո առաջ, կենդանիների և մահացածների Դատավորի առաջ, և չցնցվել այն ամենի համար, ինչ արել է աշխարհում:

. . . Ես աղաչում եմ ձեզ, եղեք հավատարիմ ձեր ուխտերին, եղեք հավատարիմ այն ուխտերին, որոնք կապել եք մկրտության ջրերում, Տիրոջ տանը, և եղեք հավատարիմ ձեր վրա դրված յուրաքանչյուր արդար պարտականությանը: Վերջին Օրերի Սրբեր լինելու համար տղամարդիկ և կանայք պետք է լինեն մտածողներ և աշխատողներ. նրանք պետք է լինեն տղամարդիկ և կանայք, ովքեր հարցերը կշռադատում են իրենց մտքում, տղամարդիկ և կանայք, ովքեր մանրակրկիտ քննում են իրենց կյանքի ուղին և այն սկզբունքները, որոնք նրանք ընդունել են: Մարդիկ չեն կարող հավատարիմ Վերջին Օրերի Սրբեր լինել, եթե չուսումնասիրեն և չհասկանան, առնվազն որոշ չափով, ավետարանի սկզբունքները, որոնք նրանք ընդունել են: . . . Երբ մարդիկ հասկանում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, դուք կտեսնեք, որ նրանք քայլում են ուղիղ առաջ, համաձայն Տիրոջ խոսքի և Աստծո օրենքի, խստորեն այն ամենի համաձայն, ինչը հետևողական է, արդար, ճիշտ և ամեն իմաստով Տիրոջ համար ընդունելի, նրանք միայն ընդունում են այն, ինչը ճիշտ է և Նրա աչքին հաճելի, քանզի Նրան հաճելի է միայն այն, ինչը ճիշտ է:[15]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ ենք մենք տաճարներ կառուցում: Ինչպիսի՞ օրհնություններ ենք մենք ստանում, երբ այցելում ենք տաճար և պահում ենք այնտեղ կապած ուխտերը: (Տես նաև ՎԵՈՒ 109.10–23:) Ինչպե՞ս ենք ձեզ զգում, երբ տաճար եք այցելում:
- Ինչպե՞ս կարող են մարդիկ երբեմն «թեթևամտորեն վերաբերվել Աստծո տան արարողություններին»:

- Ի՞նչ է ձեզ համար նշանակում «վայելել ամեն օրհնություն հավերժության այդ անհաշիվ դարերի ընթացքում»: Ինչպե՞ս են տաճարային արարողությունները օգնում մեզ անել դա: Ինչպե՞ս է տաճար այցելելը օգնում մեզ մեր մտքում պահել «հավերժության հանդիսավոր բաները» (ՎԵՐ 43.34):
- Ի՞նչ է նշանակում արժանի լինել Աստծո տուն գնալուն: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ավելի լավ պատրաստվենք տաճար այցելելուն: Ինչո՞ւ չենք կարող «գողանալ արտոնություններ և օրհնություններ Աստծո տնից»:
- Ձեր կարծիքով, ի՞նչ է պահանջվում ձեզանից, որպեսզի հավատարիմ լինեք այն ուխտերին, որոնք դուք կապել եք տաճարում:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի կատարենք Նախագահ Սմիթի կոչը՝ լինել «մտածողներ և աշխատողներ»:
- Ինչպե՞ս կարող ենք հարգանք ցուցաբերել Աստծո տան նկատմամբ: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին՝ սովորել պատվել տաճարները:

Հղումներ

1. Uintah Stake Historical Record: 1905–1909, Quarterly Conference, 25 Aug. 1907, Historical Department Archives, The Church of Jesus Christ of Latter-day Saints, 246.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 197.
3. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 3:241–42.
4. In Conference Report, Apr. 1901, 69.
5. *Gospel Doctrine,* 470.
6. *Gospel Doctrine,* 471.
7. In *Messages of the First Presidency,* 4:249–50.
8. "Latter-day Saints Follow Teachings of the Savior," *Scrap Book of Mormon Literature,* 2 vols. (n.d.), 2:561–62.
9. *Gospel Doctrine,* 213.
10. *Gospel Doctrine,* 5.
11. *Deseret News: Semi-Weekly,* 11 Nov. 1873, 1.
12. *Deseret News: Semi-Weekly,* 21 Mar. 1893, 2; paragraphing added.
13. In *Messages of the First Presidency,* 2:346–47.
14. In *Messages of the First Presidency,* 4:186.
15. In Conference Report, Oct. 1910, 3–4.

Չգտնք կրթվել ճշմարտությամբ

Մենք պետք է ջանասիրաբար փնտրենք ճշմարտությունը և ձգտենք ամեն օր սովորել ու զարգանալ։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Թեև Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը շատ հնարավորություններ չուներ միջնակարգ կրթություն ստանալու համար, նրա վրա մեծապես ներգործել էր այն վարդապետությունը, որ «Աստծո փառքը բանականություն է» (տես ՎԿՈ 93.36), և նա խրախուսում էր Սրբերին՝ հոգևոր և աշխարհիկ ճշմարտությունների մասին այնքան կրթություն ստանալ, որքան հնարավոր է։ Նախագահ Սմիթը շարունակում էր աջակցել Եկեղեցու ակադեմիական ծրագրին, որը շատ Սրբերի հնարավորություն էր տալիս միջնակարգ դպրոցական և կրոնական կրթություն ստանալ։ Նա նաև այսօրվա մեծածավալ Եկեղեցու Կրթական Համակարգի հիմքն է դրել՝ հիմնելով սեմինարիայի ծրագիրը։ Առաջին սեմինարիան բացվեց 1912թ., Գրենիտ բարձրագույն դպրոցի հարևանությամբ Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա։

Որպես Եկեղեցու Նախագահ, ես խրախուսել եմ Եկեղեցու օժանդակ կազմակերպություններին՝ Սփոփող Միությանը, Կիրակնօրյա Դպրոցին, Երեխաների Միությանը և Համատեղ Զարգացման Ընկերությանը (այսօր Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց ծրագրերը), կատարել իրենց առաքելությունը՝ սովորեցնել ավետարանը։ Նրա ծառայության ժամանակ, Եկեղեցու օժանդակ կազմակերպություններում հիմնվեցին ուսումնական միատեսակ դասընթացներ երեխաների և մեծահասակների համար, և ամսագրեր հրատարակվեցին Եկեղեցու կողմից, որոնք պարունակում էին շաբաթական դասերի ծրագրերը։ Նա երկար տարիներ եղել է խմբագիրը *Improvement Era*–ի, որին հաջորդեց *Ensign* ամսագիրը, և *Juvenile Instructor* ամսագրի, որը տպագրվում էր Կիրակնօրյա Դպրոցի համար։ Նա շատ

հոդվածներ և խմբագրականներ է գրել, որոնք պարզաբանել են Եկեղեցու վարդապետությունը: «Նա սիրում էր գրել»,- հիշում էր նրա ընկերներից մեկը,- «և նրա ժամանակը չէր բավականացնում, որպեսզի նա կարողանար ավելի շատ ժամանակ տրամադրել *Era*-ին»:[1]

Նախագահ Սմիթը այսպես է նշել. «Վերջին Օրերի Սրբերի համար փրկությունն ինքնին Քրիստոսի Քավության միջոցով կրթական գործընթաց է . . . Գիտելիքը հավերժական առաջադիմության միջոց է»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Ողջ ճշմարտությունը ընդգրկված է ավետարանում:

Չկա ճշմարտություն մեկ այլ կրոնական ընկերությունում կամ կազմակերպությունում, որը ընդգրկված չլինի Հիսուս Քրիստոսի ավետարանում, ինչպես սովորեցրել է Զոզեֆ Սմիթը, Մարգարեն, և նրանից հետո շարունակում են սովորեցնել այս Եկեղեցու ղեկավարներն ու երեցները, սակայն այն մեր կողմից պահանջում է որոշ ջանքեր, որոշ ճիգեր, որոշ նվիրվածություն, սովորելու համար այդ ամենը և վայելելու դրանք: Եթե անտեսում ենք դրանք, մենք, իհարկե, չենք ստանա օրհնությունները, որոնք հաջորդում են այդ ջանքերին և գալիս են այդ սկզբունքները խորը հասկանալու շնորհիվ: Ուստի, մեզ մոտ կարող են գալ մարդիկ և խոսել ի օգուտ այլ գաղափարների, որոնք չեն կարող համեմատվել մեր գաղափարների հետ իրենց պարզությամբ, հրահանգումով և ճշմարտությամբ, սակայն գտնվում են այնպիսիք, որոնք լսում և հավատում են, որ այս բոլոր բաները նոր են և չեն պարունակվում Հիսուս Քրիստոսի ավետարանում, ինչպես սովորեցնում են Վերջին Օրերի Սրբերը: Սա սոսկալի մոլորություն է, որից պետք է պաշտպանվեն նրանք, ովքեր սիրում են ավետարանը:[3]

Եթե դուք սիրում եք ճշմարտությունը, եթե ընդունել եք ավետարանը ձեր սրտում և սիրում եք այն, ձեր բանականությունը կաճի, ճշմարտության ձեր հասկացողությունը ավելի կընդլանվի, քան որևէ այլ միջոցով: Ճշմարտությունն է, որ առավել քան որևէ այլ բան աշխարհում մարդկանց ազատ է դարձնում, ազատ ծուլությունից և անտարբերությունից, ազատ անհոգության սոսկալի հետևանքներից, քանզի այն կլինի սոսկալի հետևանք, եթե անտեսում ենք մեր պարտականությունը կենդանի Աստծո առաջ: Եթե դուք սովորեք ճշմարտությունը և քայլեք ճշմարտության լույսի մեջ, դուք ազատ կլինեք մարդկանց սխալներից . . . դուք վեր

Այս տանն էր տեղակայվել Եկեղեցու առաջին սեմինարիան, որը բացվել էր 1912թ. Գրենիտ բարձրագույն դպրոցի հարևանությամբ Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա։

կկանգնեք կասկածանքից և ամեն տեսակի սխալ արարքներից։ Աստված կընդունի ձեզ, կօրհնի ձեզ և ձեր ժառանգությունները, կբարգավաճեցնի և դափնու ծառի պես կփարթամացնի ձեզ։[4]

Նա, ով Աստծո գիտելիքը սովորելու և ընդունելու արտոնություն ունի, ավելի հաջողակ է, քան հարստություն կամ երկրի թաքնված գանձեր փնտրողը . . . . Նրա միտքը ազատ է ընդունելու պարզ ու թանկարժեք ճշմարտությունները, որոնք հայտնվել են ճշմարտության աղբյուրից՝ մարդու փրկագնման և կյանքի համար, և նրա սիրտը ամբողջովին նվիրված է կամ պետք է նվիրվի մարդու փրկագնման մեծ ու փառահեղ գործին։[5]

Որտե՞ղ արժե, որ մարդիկ դիմեն, որոնք հաստատված չեն ճշմարտության մեջ։ Պատասխանը պարզ է։ Նրանք չեն բավարարվի Սարդկանց ուսմունքներով։ Թող նրանք փնտրեն այն Աստծո գրված խոսքում։ Թող աղոթեն Նրան իրենց ծածուկ սենյակներում ու մառաններում, որտեղ մարդկային ոչ մի ականջ չի կարող լսել, և խնդրեն լույսի համար։ Թող հնազանդվեն Հիսուսի վարդապետություններին, և նրանք անմիջապես կսկսեն աճել ճշմարտության գիտելիքի մեջ։ Այս ընթացքը խաղաղություն կբերի նրանց

հոգիներին, ուրախություն՝ նրանց սրտերին և հաստատուն համոզվածություն, որը չի կարող սասանել ոչ մի փոփոխություն: Նրանք կարող են հաստատապես հավաստիացած լինել, որ «նա, որ ծածուկ տեղը լսում է, հայտնապես կհատուցանի նրանց» [Տես Մատթեոս Զ.6]:[6]

Ի տարբերություն մարդկանց թեորիաների, Աստծո խոսքը միշտ ճշմարիտ է:

Մեր երիտասարդները ջանասեր ուսանողներ են: Նրանք ողջունելի եռանդով են ձգտում ճշմարտությանն ու գիտելիքին, և այդպիսով նրանք անպայմանորեն ստիպված են լինում ժամանակավոր օգտագործման համար մարդկանց շատ տեսություններ որդեգրել: Ինչևէ, քանի դեռ նրանք համարում են դրանք հետազոտական նպատակների համար ժամանակավորապես օգտակար, դրանցում հատուկ ինչ-որ վտանգ չի կարող լինել: Սակայն երբ այդ տեսությունների վրա հիմնվում են որպես հիմնական ճշմարտություն, այդ դեպքում խնդիր է ծագում, և փնտրողը հայտնվում է մահացու վտանգի տակ, և նա կարող է անվերադարձ շեղվել ճիշտ ճանապարհից . . . .

Եկեղեցին հաստատապես կառչում է աստվածային հայտնության իշխանությունից, որը համարվում է տիպական, և մինչ այսպես կոչված «Գիտությունը» տարիների ընթացքում փոփոխության է ենթարկվում իր հետևություններում, ապա աստվածային հայտնությունը ճշմարիտ է և կմնա հավերժ, այնպես որ գիտության տեսակետները պետք է ենթարկվեն աստվածային հայտնության սահմանումներին, և հետևապես աստվածաբանություն ուսուցանելու համար Եկեղեցու կողմից հիմնված հաստատություններում, ինչպես նաև կրթության այլ ճյուղերում, տվյալ հաստատության ուսուցիչները ուսուցանելիս պետք է ներդաշնակության մեջ գտվեն դրա սկզբունքների և վարդապետությունների հետ . . . .

Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կրոնը թշնամի չէ որևէ ճշմարտության, ինչպես նաև ճշմարտությունը փնտրելու գիտական հետազոտությանը: «Այն, ինչ ապացուցված է, մենք ուրախությամբ ենք ընդունում»,- ասել է Առաջին Նախագահությունը Սրբերին ուղղված իր Սուրբ Ծննդյան ողջույնի ժամանակ, - «սակայն մենք չենք ընդունում սին փիլիսոփայությունը, մարդկային տեսությունը և սոսկ մարդկային մտորումները, ինչպես նաև չենք որդեգրում աստվածային հայտնությանը կամ առողջ բանականությանը հակասող որևէ բան, այլ բարեհաճությամբ ենք

ընդունում այն ամենը, ինչը մղում է դեպի ճիշտ վարքը, որը ներդաշնակ է ողջամիտ բարոյականությանը և ավելացնում է Աստվածության հանդեպ հավատքը, անկախ նրանից, թե որտեղ է այդ գիտելիքը գտնվում» [“Words in Season from the First Presidency,” *Deseret Evening News,* 17 Dec. 1910, 3.]:

Երիտասարդների համար, ովքեր մտադիր են խորանալ փիլիսոփայական տեսությունների մեջ, լավ նշանաբան է՝ հետազոտել ամեն ինչ, սակայն զգույշ լինել, որպեսզի կառչեն միայն նրանից, ինչը ճիշտ է: Ճշմարտությունը շարունակ մնում է, իսկ փիլիսոփաների տեսությունները փոխվում են և տապալվում: Այն, ինչ մարդիկ այսօր գիտական նպատակներով օգտագործում են որպես հիմք, որպեսզի գնան դեպի անհայտություն՝ ճշմարտության ետևից, վաղը կարող են դրանից հրաժարվել, երբ այն իր նպատակին ծառայի, իսկ հավատքը հավերժական սկզբունք է, որի շնորհիվ խոնարհ հավատացյալը կարող է իրեն ապահովել հավիտենական մխիթարություն: Դա Աստծուն գտնելու միակ միջոցն է:[7]

Գիտությունն ու փիլիսոփայությունը ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրել: Հազիվ էր անցնում մի դար, որ գիտության ու փիլիսոփայության նոր տեսություններ էին ներկայացվում, որոնք փոխարինում էին հին ավանդույթներին, հավատին ու հին ուսմունքներին, որոնցից կառչում էին փիլիսոփաներն ու գիտնականները: Այս ամենը կարող է մշտապես փոփոխության ենթարկվել, սակայն Աստծո խոսքը միշտ ճշմարիտ է:[8]

Կրթությունը, որն ունի իր բարձրագույն իդեալները՝ աշխարհիկ փառասիրությունը բավարարելու համար, չունի այն ազատությունը և հոգու անսահմանափակ զեղումը, որը հնարավոր է դարձնում ավելի բարձր ազատությունը և ավելի մաքուր կյանքը: Տարիքի և փորձի աճի հետ մեկտեղ անհրաժեշտ է մեր հոգևոր կյանքը ավելի նվիրել իսկական երջանկությանը: Մեր մտքերն ավելի հաճախ են ուղղվում դեպի ներս, երբ խորհում ենք մոտեցող այս կյանքի վերջի և հաջորդ ավելի մեծ կյանքի սկզբի շուրջ:[9]

Մենք պետք է զարգանանք և առաջադիմենք ինտելեկտուալ առումով:

Մենք նրանցից չենք, որ «միշտ սովորում են և երբեք չեն հասնում ճշմարտության գիտելիքին» [Տես Բ Տիմոթեոս Գ.7]: Ընդհակառակը, մենք միշտ սովորում ենք և միշտ մոտենում ենք ճշմարտության ճիշտ ընկալմանը, Եկեղեցու անդամների վրա դրված պարտականությանն ու պատասխանատվությանը,

Ուսանողները Վերջին Օրերի Սրբերի Համալսարանում, Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, 1903թ.: Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հորդորում էր Սրբերին. «Հարստացրեք ձեր միտքը լավագույն գիտելիքով և փաստերով . . . . ոչ ոք չի կարող փրկվել տգիտության մեջ» (*Gospel Doctrine,* 206):

որոնք կանչված են պատասխանատու պաշտոնների: Դա չի վերաբերում միայն այն անդամներին, ովքեր կանչված են ծառայելու պատասխանատու պաշտոններում, այլ դա վերաբերում է . . . Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու [բոլոր] անդամներին:

Կա՞ արդյոք մեր շուրջը գոյություն ունեցող պայմաններում այնպիսի մեկը, որը չի աճում: Կա՞ արդյոք մեզանում մեկը, որն ամեն օր ինչ-որ բան չի սովորում: Կա՞ արդյոք մեզանում մեկը, որը փորձ ձեռք չի բերում կյանքում առաջ գնալով և Եկեղեցու անդամության և քաղաքացիական պարտականությունները կատարելով . . . . Ինձ թվում է, շատ տխուր կարծիք կլիներ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի և նրա մարդկանց մասին, եթե մի պահ ենթադրենք, թե լճացել ենք, դադարել ենք աճել, զարգանալ, և առաջ գնալ ինտելեկտուալ առումով, և պարտականությունները հավատարմորեն չենք կատարում ցանկացած պայմաններում, որտեղ մենք կարող ենք հայտնվել որպես ժողովուրդ և որպես Քրիստոսի Եկեղեցու անդամներ:[10]

Գոյություն ունեցող չարիքներից մեկը . . . տգիտությունն է անտարբերության հետ միասին: Ես ենթադրում եմ, որ եթե տգետներն այդքան անտարբեր չլինեին այդ փաստերի և իրենց վիճակի հանդեպ, ապա նրանց մեջ կարելի էր ավելին սովորելու ցանկություն արթնացնել: Տղամարդկանց և կանանց խնդիրը կայանում է նրանում, որ նրանք շատ հաճախ են փակում աչքերը իրենց շուրջը գոյություն ունեցող փաստերի առաջ, և թվում է շատ մարդկանց համար անչափ դժվար է սովորել և իրենց կյանք բերել այն պարզ ճշմարտությունները, որոնք իրականում պետք է ծանոթ խոսքեր և ցուցումներ լինեն յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի և Վերջին Օրերի Սրբերի յուրաքանչյուր ընտանիքի համար: Ինչպե՞ս կարող ենք կանգնեցնել այս չարիքի՝ այս անտարբերության, տգիտության այս հետևանքի հոսքը: Կարծում եմ, որ միակ միջոցը՝ արթնանալ և հետաքրքրվել այն բաներով, ինչը կարևոր է և անհրաժեշտ մարդկանց զավակների երջանկության և բարօրության համար, հատկապես այն բաներով, ինչը շատ կարևոր է անհատապես մեր երջանկության և բարօրության համար:

Դա դեռևս այն ամենը չէ, ինչ անհրաժեշտ է մեզ՝ սովորել ճշմարտությունը և վերջ դնել տգիտությանը: Դրանից հետո գալիս է ձեռք բերած հասկացողության և գիտելիքի կիրառումը այն գործերում և այն ամենում, ինչը անհրաժեշտ է մեր պաշտպանվածության և մեր զավակների, մեր մերձավորների, մեր տների և մեր երջանկության պաշտպանության համար:[11]

Փնտրեք գրված խոսքերի ճշմարտությունը, լսեք և ընդունեք ճշմարտությունը, որը հայտարարում են կենդանի մարգարեներն ու ուսուցիչները, հարստացրեք ձեր միտքը լավագույն գիտելիքով և փաստերով: Բոլոր նրանցից, ովքեր խոսում են նրա անունով, Տերը պահանջում է համեստություն, ոչ թե տգիտություն: Բանականությունը Աստծո փառքն է. և ոչ ոք չի կարող փրկվել տգիտության մեջ [տես ՎԵՈՒ 93.36; 131.6]:[12]

Տիրոջ գործում ծառայելու միջոցով ճշմարիտ կրթություն է ձեռք բերվում, իսկ իր անունը արդարացնող կրթությունը ընդլայնում է բնագավառները, որտեղ այդ կրթությունը ստացողը կարող է օգտակար լինել, և եռանդ ու աշխուժություն հաղորդել իր բոլոր ձեռնարկումներին:[13]

Ձեր մտքում ամրապնդեք ազնիվ մտքեր, մշակեք բարձր գաղափարներ, թող ձեր նպատակներն ու ձգտումները լինեն բարձր: Ինչ-որ չափով անկախ եղեք, օգտակարության ու ձեր ուժերի վրա վստահության չափով, թեպետ իրականում ոչ ոք չի

կարող լինել անկախ իր մերձավորներից, և ոչ մի շրջահայաց մարդ չի կարող մերժել իր լիովին կախվածությունը մեր Երկնային Հորից։ Ձգտեք կրթվել բառի ամենաբարձր իմաստով, լավագույնս օգտագործեք ձեր ժամանակը, մարմինը և մտավոր ունակությունները, և թող ձեր բոլոր ջանքերը ազնվաբարո հունով ընթանան, որպեսզի ոչ մի ջանք անտեղի չկորչի և ոչ մի աշխատանք անարդյունք չմնա կամ ի չարիք չլինի։

Փնտրեք լավագույն հասարակությունը. եղեք բարի, քաղաքավարի, դուրեկան, փնտրեք սովորել այն, ինչը լավ է, և հասկանալ կյանքի պարտականությունները, որ կարողանաք օրհնություն լինել բոլոր նրանց համար, որոնց հետ դուք շփվում եք, հասնելով ամենաշատին ու ամենալավին այն ամենում, ինչը ձեր կյանքն է կազմում։[14]

Մեր բոլոր կրթական և աշխարհիկ ձգտումներում մենք պետք է բռնենք երկաթե ձողից։

Շատ կարևոր է, որ Վերջին Օրերի Սրբերը միշտ իրենց աչքի առաջ ունենան այն կրոնական ու բարոյական կյանքի ճանաչված չափանիշը, որը ժամանակակից հայտնությունն է սահմանել որպես ուղեցույց։ Նրանք պետք է, այլ խոսքով, ամուր բռնեն այն, ինչը գեղեցիկ ձևով նկարագրվել է որպես «երկաթե ձող»։

Մեր ժամանակներում, երբ առևտրային, հասարակական և ձեռնարկատիրական կազմակերպությունները մարդկանց ամուր իրենց ձեռքում են պահում, . . . Վերջին Օրերի Սրբերի պարտականություններն ու պատասխանատվությունները չի կարելի բարեհաջող կերպով մի կողմ դնել կյանքի այլ չափանիշների հաշվին։

Անհրաժեշտ է զգուշանալ, որ մարդիկ որպես իրենց ուղեցույց ոչ շատ հաճախ ընդունեն ընդհանուր վարքը նրանց, ովքեր շրջապատում են իրենց։ Եթե այդ գործնական, հասարակական և քաղաքական կազմակերպություններից որևէ մեկում տարվում են կասկածելի զբաղմունքներով, եթե այնտեղ զգացվում է պատշաճ զսպվածության պակաս, ոչ մի պատճառ չկա նրանց համար, ովքեր իրենց համարում են Վերջին Օրերի Սրբեր, «կտրել կառանները և լողալ» դեպի անտարբերության, քմահաճության կամ անբարոյականության ուղղությամբ . . . .

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ մենք կանք կամ պետք է լինենք իսկական Վերջին Օրերի Սրբեր, ուր էլ որ ճակատագիրը

մեզ տանի, և մենք երբեք չպետք է մեր տեսադաշտից կորցնենք այն բարոյական ու հոգևոր ուղղվածությունը, որը մեզ ավետարանն է պարգևում: Մեր երիտասարդներից ոմանք, ովքեր արդեն «նավաբեկության են ենթարկվել» իրենց կյանքում, կարող են հետևել իրենց ձախորդությանը և անկմանը, և կտեսնեն, որ իրենց ձեռնարկած առաջին քայլը եղել է պատրաստակամությունը՝ նմանվելու նրանց, որոնց հետ շփվել են իրենց աշխարհիկ գործերում:

Լինում են ոգևորության ժամանակներ, որոնք հաճախ հասնում են այն աստիճանի, որ տղամարդիկ և կանայք, ակնհայտորեն, ամբողջովին մոռանում են ամեն ինչի մասին, բացի այն բանից, որը նրանց տալիս է ժամանակավոր հաճույք կամ աշխարհիկ շահ: Ոմանք, իրոք, չունեն բարոյականության բարձր մակարդակ, և հետևում են աշխարհում ժողովրդականություն վայելող չափանիշներին: Երբ ոգևորության այդ ալիքներն անցնում են, նրանք հայտնվում են ոչ միայն աննպատակ նավարկելու վիճակում, այլ երբեմն գտնվում են անհույս «մոլորված մարդկության սուզված նավաբեկորների կամ ափ նետված փայտերի մեջ» . . .

Անհրաժեշտ է բոլոր ժամանակներում և հատկապես այն դեպքերում, երբ մեր շրջապատը մեզ համար չի հանդիսանում բարոյական ու հոգևոր աջակցություն, որը այնքան անհրաժեշտ է մեր առաջադիմության համար, գնալ Տիրոջ տուն, երկրպագել և շփվել Սրբերի հետ, որպեսզի նրանց բարոյական ու հոգևոր ազդեցությունը օգնի ուղղելու մեր կեղծ պատկերացումները և վերականգնելու մեզ այն կյանքին, որին մեր պարտականությունները, խղճի ձայնը և ճշմարիտ կրոնն է մեզ կոչ անում:

. . . Ուրեմն եկեք մեր աշխարհիկ կոչումների ու կապերի հետ մենկտեղ չմոռանանք այն հիմնական պարտականությունը, որը մենք ունենք մեր և մեր Աստծո հանդեպ:[15]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ փորձառություններ են սովորեցրել ձեզ, որ ամբողջ ճշմարտությունը «ընդգրկված է Հիսուս Քրիստոսի ավետարանում»:
- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի սովորենք ճշմարտության սկզբունքները: Որո՞նք են այս պարտականությունը անտեսելու վտանգները: Ինչպիսի՞ վարձք է խոստացված նրանց, ովքեր սովորում են ճշմարտությունը և քայլում են դրա լույսի մեջ:

- Ո՞րն է Եկեղեցու դիրքորոշումը ճշմարտության համար տարվող գիտական հետազոտության վերաբերյալ: Ինչպե՞ս են մարդկանց տեսություններն ու փիլիսոփայությունները հակադրվում Աստծո խոսքին:
- Ինչո՞ւ է կրթություն ստանալու ձգտումը վտանգավոր՝ բավարարելու համար միայն «աշխարհիկ փառասիրությունը»:
- Ի՞նչպե՞ս են մարդիկ դադարում «զարգանալ և առաջադիմել ինտելեկտուալ առումով»: Ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ շարունակում ենք ամեն օր ինչ-որ բան սովորել: (Տես նաև ՎԵՈՒ 130.18–19:)
- Ինչո՞ւ է տգիտությունը, ճշմարտության առումով, «ամենամեծ չարիքներից մեկը»: Ինչպե՞ս կարող ենք «կանգնեցնել այս չարիքի հոսքը»:
- Ինչպե՞ս կարող ենք «լավագույնս օգտագործել ձեր ժամանակը, մարմինը և մտավոր ունակությունները»: Ինչպիսի՞ մտածելակերպը և սովորույթները կարող են օգնել մեզ «հասնել ամենաշատին ու ամենալավին այն ամենում, ինչը ձեր կյանքն է կազմում»:
- Ինչո՞ւ է վտանգավոր մեր կրթության մեջ և աշխարհիկ գործերում որպես ուղեցույց ընդունել «ընդհանուր վարքը նրանց, ովքեր շրջապատում են մեզ»:
- «Մեր աշխարհիկ կոչումների ու կապերի հետ մենկտեղ» ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի «չմոռանանք այն հիմնական պարտականությունը, որը մենք ունենք մեր և մեր Աստծո հանդեպ»:

Հղումներ

1. "Editor's Table," *Improvement Era,* Dec. 1918, 174.
2. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:146–47.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 122–23.
4. "A Journey to the South," *Improvement Era,* Dec. 1917, 102.
5. "Foreign Correspondence," *Millennial Star,* 25 Mar. 1878, 187.
6. *Gospel Doctrine,* 126.
7. *Gospel Doctrine,* 38–39.
8. *Gospel Doctrine,* 39.
9. *Gospel Doctrine,* 353.
10. *Gospel Doctrine,* 342.
11. *Gospel Doctrine,* 342–43.
12. *Gospel Doctrine,* 206.
13. "Counsel to Returning Missionaries," *Millennial Star,* 2 Oct. 1913, 646.
14. *Gospel Doctrine,* 351–52.
15. "Editorial Thoughts: Our Religious Identity," *Juvenile Instructor,* Mar. 1912, 144–45.

Դանիելը հրաժարվում է թագավորի առաջարկած մսից ու գինուց, Դել Փարսոնի։
Դանիելը և նրա ընկերները հրաժարվեցին ուտել Բաբելոնի թագավորի առաջարկած ուտելիքը և խմել նրա գինուց, որովհետև նրանք գիտեին, որ դա նրանց օգուտ չի բերի։ Նրանք առողջ ու ամուր մնացան և օրհնվեցին իմաստությամբ, որովհետև ընտրեցին այնպիսի ուտելիք, որը նրանց համար օգտակար էր։

Իմաստության Խոսք՝ օրենք Սրբերի ֆիզիկական և հոգևոր առողջության համար

Իմաստության Խոսքը պահելը կամրապնդի մեր մարմինը, կազդվացնի մեր հոգիները և մեզ կմոտեցնի Աստծուն:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը ուսուցանել է, որ Իմաստության Խոսքը ավելին է, քան թեյի, սուրճի, ծխախոտի և ալկոհոլի արգելումը: Այն պարունակում էր գործնական խորհուրդ, ինչպես ամրապնդել առողջությունը և հոգևոր աճ ապրել, և այն Սրբերը, ովքեր կհնազանդվեին դրան, ավելի կմոտեցնային Տիրոջը և ավելի կնմանվեին Նրան: Իմաստության Խոսքի կարևորության մասին Սրբերին հիշեցնելու նպատակով նա երբեմն հավաքների ժամանակ կարդում էր Վարդապետություն և Ուխտեր 89 բաժինն ամբողջությամբ. «Այժմ շատերին հնարավոր է, անկարևոր ու անտեղին թվա, եթե այսքան հավաքվածների ժամանակը տրամադրեմ այս հայտնությունը կարդալուն»,- մի անգամ ասել է նա, սակայն կարդացել էր ամեն խոսքը, որպեսզի ընդգծի այդ ուղերձի կարևորությունը:[1]

Նա ասել է. «Ես հիշում եմ մի դեպք, որը տեղի է ունեցել երեք տարի առաջ մարդկանց խմբի հետ, որոնց հետ ես ճամփորդում էի: Նրանց մեջ կային մեկը կամ երկուսը, որոնք համառորեն պնդում էին, որպեսզի ամեն կանգառում թեյ կամ սուրճ խմեին: Ես ամբողջ ժամանակ Իմաստության Խոսքն էի քարոզում, սակայն նրանք ասում էին. «Ի՞նչ տարբերություն: Այսինչ մարդիկ խմում են թեյ կամ սուրճ» . . . Մի անգամ ես ասացի. «Դե, այո, դուք ասում եք, մի փոքր թեյ կամ սուրճ խմելը լավ է, իսկ Տերն ասում է, որ լավ չէ: Ինչի՞ն պետք է հետևեմ ես»: Տերն ասում է, որ եթե պահենք

Իմաստության Խոսքը, մենք կգտնենք գիտության մեծ գանձեր, և թաքնված գանձեր: Մենք կվազենք և չենք հոգնի, մենք կքայլենք և չենք նվաղի, և կործանիչ հրեշտակը կանցնի մեր կողքով, ինչպես անցավ Իսրայելի զավակների կողքով, և մեզ չի սպանի . . . . Ես աղոթում եմ ձեզ համար և լրջորեն աղերսում եմ ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, . . . դադարեք գործածել արգելված բաները, և պահեք Աստծո օրենքները»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք պետք է պահենք Իմաստության Խոսքը մեր օգտի և բարգավաճման համար:

Մենք հասկանում ենք կարևոր պատճառները, որպեսզի աշխարհին և, հատկապես, Վերջին Օրերի Սրբերին ուսուցանվեն այն սկզբունքները, որոնք ընդգրկված են Վարդապետություն և Ուխտեր գրքի այդ բաժնում [բաժին 89]: Դա ոչ այլ ինչ է, քան պարզ Իմաստության Խոսքը, որը տրվել է 1833թ.՝ Վերջին Օրերի Սրբերի օգտի, օգնության և բարգավաճման համար, որպեսզի նրանք կարողանան մաքրվել և պատրաստվել ավելի մոտենալու Տիրոջ ներկայությանը, որպեսզի այդ օրենքը պահելու շնորհիվ նրանք կարողանան պատրաստվել վայելելու օրհնությունները, որոնք Նա այնքան շատ է ցանկանում շնորհել նրանց, եթե նրանք արժանի լինեն . . .

Ես պարզապես ցանկանում եմ ասել ձեզ իմ եղբայրներ և քույրեր, որ չկա մեկ այլ ավելի լավ ուղի, որին կարող ենք հետևել այս աշխարհում, ինչ վերաբերում է մեր աշխարհիկ բարօրությանն ու առողջությանը, քան այն, որը Տեր Աստված է հատկանշել մեզ համար: Ինչո՞ւ չենք կարողանում հասկանալ դա: Ինչո՞ւ չենք գալիս դրա կատարյալ հասկացողությանը: Ինչո՞ւ չենք կարողանում մեզ ետ պահել նրանից, ինչը մեր փոքրոգի ախորժակն է ցանկանում: Ինչո՞ւ չենք կարողանում ավելի ճշգրտորեն պահել Տիրոջ կամքը, որը տրված է այս հայտնությունում: . . . Եթե այդ պատվիրանը պահեր ամբողջ ժողովուրդը, մեծ քանակությամբ գումարներ, որոնք այժմ վատնվում են աշխարհում ոգելից խմիչքների և այլ բաների վրա, որոնք արգելվում են իմաստության խոսքով, կխնայվեին ընտանիքներում, և մարդկանց առողջությունը, բարգավաճումը և աշխարհիկ բարօրությունը համապատասխանաբար կաճեր: Ոչ ոք չի կարող խախտել Աստծո օրենքները, ինչ վերաբերում է առողջությանն ու աշխարհիկ բարօրությանը, և վայելել օրհնությունները նույն չափով, ինչպես նա կկարողանար

վայելել կամ կվայելեր, եթե հնազանդվեր Աստծո պատվիրաններին . . . .

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ոչ մի անդամ չի կարող իրեն թույլ տալ ենթարկվել անպատվության կամ իր վրա նախատինք բերել, ոտք դնելով սրճարանի կամ խաղատան շեմից ներս . . . .Վերջին Օրերի ոչ մի Սուրբ, Եկեղեցու ոչ մի անդամ չի կարող իրեն թույլ տալ դա, քանզի այդպես վարվելով նա կնվաստացնի, կխայտառակի իրեն, և Աստված կդատի իրեն իր կատարած գործերի համաձայն: Տղամարդը կամ կինը, որն իրոք հավատում է Եկեղեցու վարդապետություններին և իրեն համարում է Եկեղեցու անդամ, հավատում է և ապրում է «Իմաստության Խոսքում» տրված սկզբունքներով, երբեք չի հայտնվի նրանց թվում, որոնք նման անպատվություն են բերում իրենց վրա, իրենց մերձավորների կամ Եկեղեցու վրա, որին նրանք պատկանում են. նրանք երբեք այդպես չեն վարվի:

. . . Տերը չի ուրախանում անչափավորությամբ, հարբեցողությամբ, կամ էլ Նրա համար հաճելի չի աղքատությունը, դեգրադացիան և կործանումը, որոնք գալիս են հարբեցողությամբ զբաղվողների և նրանց վրա, որոնց մոտ զարգանում է հակվածությունը նման բաների հանդեպ, որի արդյունքում կործանվում է տղամարդը, կործանվում է ընտանիքը և դեգրադացիա են ապրում նրանք, ովքեր զբաղվում են նման բաներով և աղքատություն, կործանում ու մահ են բերում իրենց և իրենց ընտանիքների վրա: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ, լինի տղամարդ թե կին, պետք է ամուր քարի պես դիմակայի անզսպությանն ու այն ամենի դեմ, ինչը Աստծո օրենքների խախտում է, որպեսզի նրանց երբեք չհաղթի չարը կամ երբեք չենթարկվեն չարի գայթակղությանը: Մենք պարտավոր ենք ունենալ ավելի մաքուր համայնքներ, համայնքներ, որոնք չեն արատավորվել կործանարար սովորություններով և գործունեությամբ. . . .

Հավանաբար նրանք, ովքեր սովորություն են դարձրել զբաղվել նման բաներով, կարծում են, թե դա շատ սովորական կամ անկարևոր բաներ են, որպեսզի այդ մասին խոսվի այսպիսի մեծաքանակ հավաքներում, սակայն ես չեմ կարող նայել տղայի կամ տղամարդու վրա, լինի նա երիտասարդ, թե տարեց, որը տարվել է նման սովորությամբ և բացահայտորեն զբաղվում է դրանով, որպեսզի մտովի չենթադրեմ, որ նա կամ մարդու վերաբերյալ Աստծո կամքը չգիտի կամ էլ արհամարհում է Աստծո կամքը և հաշվի չի առնում Տիրոջ խոսքը, իսկ միայն դա բավական է, որ վշտանա այն մարդու սիրտը, որը հաշվի է առնում և

հարգում է Տիրոջ խոսքը և կամքը և կուզենար, որ դրան հնազանդվեին . . .

. . . Մենք աղոթում ենք Աստծուն, որ բժշկի մեզ, երբ հիվանդ ենք, իսկ հետո չհասցնելով ավարտել մեր աղոթքները ընդունում ենք այն, ինչը Նրա խոսքերով վնասակար է մեզ համար: Որքան անհետևողական են մարդիկ, որոնք խնդրում են Աստծուն օրհնել իրենց այն ժամանակ, երբ իրենք այնպիսի ուղի են բռնում, որպեսզի վնասեն և չարիք պատճառեն իրենց: Չարժե զարմանալ, որ մեր աղոթքները մնում են անպատասխան, որ մեր առողջությունը չի բարելավում, երբ մենք տրվում ենք այն ամենին, ինչը Աստված ասել է, որ վնասակար է մեզ համար, և այդպիսով չարիք է բերում մեր կյանք և աղճատում ֆիզիկականը: Իսկ հետո դառնում ենք դեպի Տերը և խնդրում Նրան ապաքինել մեզ մեր հիմար հետևանքներից և կործանարար հակվածությունից, այն չարի ազդեցություններից, որ մենք բերել ենք մեզ վրա և, որը մենք լավ գիտենք, որ չարժե անել: Ի՜նչ հիմարություն:[3]

Երբ տեսնում եմ մեկին, որն իրեն Վերջին Օրերի Սուրբ է համարում, կամ անգամ Եկեղեցու անդամ է համարում, . . . և պղծում է իր շունչը թունավոր խմիչքով, ծխախոտի ծխով, կամ առանց որևէ անհրաժեշտության տարվում է գրգռիչ միջոցներով, դա վշտացնում է հոգին: Իմ հոգին լցվում է կարեկցանքով և ցավալի ափսոսանքով նրա հանդեպ, և ես զարմանում եմ, թե ինչու մենք ինքներս չենք կարողանում ընդունել մեր իսկ հիմարությունը, մեր դեգրադացիան և տրվում ենք կործանարար սովորույթներին, որոնք ոչ մի օգուտ չեն բերում, չեն զարդարում մեզ և ոչ մի շահ չունենք դրանցից, որոնք իսկապես վնասակար են: Ինչո՞ւ չենք կարողանում բարձրանալ բանականության այնպիսի մակարդակի, որը հնարավորություն կտա մեզ ասել գայթակղիչին. «Անցիր ետևս», և երես դարձնենք չարին: Որքա՞ն նվաստացնող պետք է լինի խոհեմ մարդու համար, զգալ, որ ինքը իր ախորժակի կամ ունայն ու կործանարար սովորության, ցանկության և կրքի գերին է:[4]

Մենք կկարողանանք հասկանալ Իմաստության Խոսքը, եթե ապրենք դրանով:

Մենք պետք է պահենք մեզ տրված Իմաստության Խոսքը . . . Արբեցողը դառնում է իր խմիչքի գերին, մյուսները դառնում են թեյի, սուրճի և ծխախոտի գերին, և ուստի համարում են դրանք

անհրաժեշտություն իրենց երջանկության համար, սակայն դրանք ամենևին էլ անհրաժեշտ չեն նրանց երջանկության, ոչ էլ առողջության համար: Իրականում դրանք վնասակար են առողջության համար . . . . Մենք կարող ենք գնահատել Տիրոջ խոսքը, եթե ապրենք դրանով, և ոչ թե պարզապես նայենք դրան չկատարելով այն: Եթե մենք կատարում ենք Տիրոջ կամքը, ապա կիմանանք այն վարդապետության մասին, Աստծո՞ւց է արդյոք այն, և կկառուցենք մեր տունը ժայռի վրա, և երբ անձրևները գան, քամիները խփեն այդ տանը, այն չի կործանվի:[5]

Աշխարհիկ մեծարանքների և այս երկրի փուչ բաների ետից ընկած կյանքի խելահեղ մրցակցությունում մարդիկ կանգ չեն առնում, քանի դեռ ուժասպառ չեն լինում և չեն հանգստանում, մինչև ուշագնաց չեն լինում: Նրանց թվում է, թե երբ հոգնեն և թուլանան, անհրաժեշտ է գրգռիչ միջոցներ ընդունել, որպեսզի թարմանան և կարողանան մի քանի վայրկյանում մի փոքր հեռու էլ վազել: Այսպես է գործատեր մարդը ուժերը վերականգնում ոգելից խմիչքներ խմելով: Տան կինը և մայրը, որի խնամքին է հանձնված իր ընտանիքը որպես իր պատասխանատվություն, տքնելով մինչև թուլանալը, զգում է, որ ուժերը պահպանելու համար պետք է մեկ գավաթ թեյ խմել և այդպիսով գոնե որոշ ժամանակով հանգստացնի նյարդերը և ամրապնդի ուժերը, որպեսզի կարողանա ավարտել օրվա գործերը: Այսպիսով, եթե Աստծո Հոգու մաքուր բանականությունը հնարավոր լիներ փոխարինել թեյի կամ լիկյորի գրգռիչ ազդեցությամբ, եթե կարողանայինք որոշ միջոցներով ձեռք բերել Տիրոջ Հոգու բավականաչափ բաժնեմաս, որի միջոցով կկարողանայինք իմանալ, թե ինչ պետք է անել, երբ հոգնած ես կամ ուժասպառ, առանց գրգռիչ միջոցների և թմրանյութերի օգնությանը դիմելու, որոնք մեծ վնաս են հասցնում մեր առողջական համակարգին և մեզ դարձնում են ձեռք բերված սովորության գերիները, դա շատ ավելի լավ կլիներ . . . .

Ես կնախընտրեի աշխատանքից հոգնած և ուժասպառ զգալ և թողնել օրգանիզմը ինքն իրեն վերականգնվեր, քան փորձեի բուժվել թմրանյութերի և հաբերի օգնությամբ, որոնք չորացնում են իմ ֆիզիկական և հոգևոր առողջության աղբյուրը: Բայց եթե մենք չենք պահում Իմաստության Խոսքը, ինչպե՞ս կարող ենք իմաստություն, գիտելիք և հասկացողություն ունենալ, որոնք կղեկավարեին մեր վարքը: Խոստումը հետևյալն է՝ եթե պահենք դա, մենք կունենանք գիտելիք, և կործանիչը կանցնի մեր կողքով, և մենք խույս կտանք այն չարից, որը գալիս է ամբարիշտների վրա:[6]

Իմաստության Խոսքը պահելը մեզ մոտեցնում է Տիրոջը նմանվելուն:

Ես հավատում եմ, որ մենք մոտենում ենք այն կետին, որտեղ կկարողանանք պահել չափավորության այդ մեծ ու փառահեղ օրենքը, որը Ամենազոր Տերը տվել է մեզ, որտեղ Նա ասել է, որ ոգելից խմիչքը լավ չէ, որ ծխախոտը չի նախատեսված որպես սովորույթ մարդու օգտագործման համար, ոչ էլ ստամոքսի համար է . . . . Մենք գալիս ենք այն եզրակացության, որ Տերը լավ գիտեր, երբ Նա Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով Եկեղեցուն հայտնեց «Իմաստության Խոսքը», որը ընդգրկված է Տիրոջ հայտնությունների գրքում . . . . Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարդկանց մեծ մասը ավելի ու ավելի է մոտենում պատշաճ ձևով այն օրենքի պահպանմանը, որը Տերը տվել է մեզ մեր առողջության, մեր կյանքը պահպանելու համար, որպեսզի մենք կարողանանք ներդաշնակության մեջ լինել Նրա Հոգու ու Նրա կամքի հետ, որպեսզի կարողանանք մաքուր ու անբիծ լինել, որպեսզի մոտ լինենք Նրան նմանվելուն, Որը անմեղ էր, Որը իսկապես մաքուր ու Սուրբ էր, ինչպես Աստված է մաքուր ու սուրբ:[7]

Երիտասարդ մարդը, որը ցանկանում է իշխել աշխարհում, որը ուժով լեցուն է, և պատրաստ կյանքի պայքարին, իր ուժը կգտնի Տիրոջ խոսքին համաձայն ապրելու մեջ, քանզի խոստում է տրված, որ բոլորը, «ովքեր հիշում են, որ պահեն և կատարեն այս խոսքերը, քայլելով պատվիրաններին հնազանդ, կունենան առողջություն իրենց պորտում և ծուծ՝ իրենց ոսկորներում. և կգտնեն իմաստություն և գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր. և կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի. և ես՝ Տերս, տալիս եմ նրանց խոստում, որ կործանիչ հրեշտակը կանցնի նրանց կողքով, ինչպես Իսրայելի զավակների, և չի սպանի նրանց»: [Տես ՎԿՈ 89.18–21:][8]

Արդյո՞ք սրանք փառահեղ խոստումներ չեն, որպեսզի մեզ դրդի պահել Իմաստության Խոսքը: Չկա՞ արդյոք այստեղ մեր ուշադրությանն արժանի ինչ-որ բան: Արդյո՞ք գիտության «մեծ գանձերը», անգամ «թաքնված գանձերը» ցանկալի բան չեն: Սակայն, երբ ես տեսնում եմ տղամարդկանց և կանանց հակված օգտագործելու թեյ, սուրճ, ոգելից խմիչքներ կամ ցանկացած տեսակի ծխախոտ, ես ինքս ինձ ասում եմ՝ ահա տղամարդիկ ու կանայք, որոնք չեն գնահատում իրենց տրված Աստծո խոստումը: Նրանք ոտնակոխ են անում այն, և դրան որպես ոչինչ են վերաբերվում: Նրանք արհամարհում են Աստծո խոսքը և հակառակվում են դրան

իրենց վարքով: Այնուհետև, երբ դժբախտության մեջ են ընկնում, նրանք գրեթե պատրաստ են անիծել Աստծուն, որովհետև Նա չի լսում իրենց աղոթքները և նրանք թողնված են կրելու հիվանդություն ու ցավ:[9]

Արդ, իմ ողջ սրտով ես ցանկանում եմ, ոչ թե որովհետև ես եմ ասում, այլ որովհետև այն գրված է Տիրոջ խոսքում, որ դուք ուշադրություն դարձնեք Իմաստության Խոսքին: Այն տրված է մեզ . . . որպես ուղեցույց, մեր երջանկության համար և, որպեսզի առաջադիմենք բոլոր սկզբունքներում, որոնք պատկանում են Աստծո արքայությանը, ժամանակի և ողջ հավերժության մեջ, և ես աղոթում եմ, որ դուք պահեք այն: Այն ձեզ օգուտ կբերի, այն կազնվացնի ձեր հոգիները, այն կազատի ձեր մտքերը և ձեր սրտերը կործանիչ ոգուց. այն թույլ կտա, որ դուք ունենաք Աստծո զգացումը, որը օգնում է նույնիսկ ճնճղուկին, և նա չի ընկնի գետնի վրա առանց Նրա կամքի. այն ձեզ ավելի կնմանեցնի Աստծո Որդուն, աշխարհի Փրկչին, որը բուժում էր հիվանդներին, որը այնպես էր անում, որ կաղը ուրախությունից թռչկոտի, որը խուլին լսողություն էր պարգևում և կույրին՝ տեսողություն, որը խաղաղություն, ուրախություն ու մխիթարություն էր բերում բոլոր նրանց, ում հետ շփվում էր:[10]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ նպատակներով է Իմաստության Խոսքը տրվել մեզ: (Տես նաև ՎԿՈ 89.1–4:)
- Ինչպե՞ս են սովորույթ ձևավորող նյութերը կամ զբաղմունքը շղթայում մեր մարմինը և բթացնում հոգու մեր զգացողությունը:
- Ինչպիսի՞ «դեգրադացիա և կործանում է» հաճախ գալիս Իմաստության Խոսքին չհնազանդվելու դեպքում: Երբ մարդիկ անտեսում են Իմաստության Խոսքում տրված խորհուրդը, ինչպե՞ս են նրանց սիրելիները հաճախ տառապում:
- Ինչպե՞ս է Իմաստության Խոսքը պահելը օգնում մեզ դառնալ «ավելի մաքուր համայնքներ, համայնքներ, որոնք չեն արատավորվել կործանարար սովորություններով և գործունեությամբ»:
- Ինչպե՞ս եք սովորել գնահատել Իմաստության Խոսքը «ապրելով Տիրոջ խոսքով» (Տես նաև Հովհաննես Է.17):
- Ինչպե՞ս եք տեսել, որ ձեր կամ ուրիշների կյանքում կատարվում են Վարդապետություն և Ուխտեր 89-ում տրված խոստումները: (Տես նաև ՎԿՈ 89.18–21:)

- Ինչպե՞ս է Իմաստության Խոսքը պահելը օգնում մեզ «իմաստություն, գիտելիք և հասկացողություն» ունենալ, որոնցով մենք կարող են ղեկավարել մեր վարքը:
- Ինչպե՞ս է Իմաստության Խոսքը պահելը ազնվացնում մեր հոգիները: Ինչպե՞ս է այն ազատում մեր միտքը և սիրտը կործանիչ ոգուց: Ինչպե՞ս է այս օրենքը պահելը մեզ «ավելի նմանեցնում Աստծո Որդուն»:

Հղումներ

1. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:180–81.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 366–67.
3. In *Messages of the First Presidency,* 4:179–80, 182–85; paragraphing added.
4. In Conference Report, Apr. 1908, 4.
5. *Deseret News: Semi-Weekly,* 20 Nov. 1894, 1.
6. *Deseret News: Semi-Weekly,* 7 Apr. 1895, 1; paragraphing altered.
7. In Conference Report, Apr. 1908, 4.
8. *Gospel Doctrine,* 241.
9. *Gospel Doctrine,* 366.
10. *Gospel Doctrine,* 365–66.

Հավերժական Հոր որդիներն ու դուստրները

Մենք Աստծո զավակներն ենք, ստեղծված Նրա աստվածային կերպարով և ունակ՝ դառնալու Նրա նման:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1909թ. նոյեմբերին Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը և Առաջին Նախագահության նրա Խորհրդականները՝ Զոն Ռ. Վինդերը և Էնթոն Հ. Լանդը, լույս ընծայեցին «Մարդու Ծագումը» վերնագիրը կրող մի հայտարարություն, պատասխանելու համար այն հարցերին, որոնք առաջ էին քաշվում «ժամանակ առ ժամանակ, նպատակ հետապնդելով պարզել մարդու ծագման վերաբերյալ . . . Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տեսակետը: Մենք հավատում ենք, որ այս կարևոր հարցի վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշումը կլինի ժամանակին և օգտակար»: Հայտարարության մեջ ասվում է.

«Աստված ստեղծեց մարդը իր պատկերովը. Աստծո պատկերովը ստեղծեց նորան. արու և էգ ստեղծեց նորանց» [Ծննդոց Ա.27]: Այս պարզ ու ակնհայտ խոսքերում Ծննդոցի ոգեշնչված հեղինակը աշխարհին հայտնում է մարդկային ընտանիքի ծագման վերաբերյալ ճշմարտությունը»:[1] Այս գլուխը պարունակում է քաղվածքներ «Մարդու ծագումը» հայտարարությունից:

Նախագահ Սմիթը հաճախակի էր հաստատում Աստծո հայրության բառացի իրականությունը. «Ինչպես գիտեմ և հիմք ունեմ գիտենալու, որ ես այստեղ եմ և ապրում եմ, այնպես էլ ես հավատում եմ և հիմք ունեմ գիտենալու, որ Աստված, իմ Հայրը, ապրում է»:[2]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք մեր Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք։

Մենք ցանկանում ենք իմանալ, թե որտեղից ենք գալիս և ուր ենք գնում։ Որտեղի՞ց ենք գալիս։ Աստծո մոտից։ Մեր հոգիները նախքան այս աշխարհ գալը գոյություն են ունեցել։ Նրանք ներկա են եղել երկնքի խորհուրդների ժամանակ, նախքան երկրի հիմքերը կդրվեին։ Մենք այնտեղ էինք։ Մենք ուրախությունից երգում էինք երկնային բազմությունների հետ, երբ երկրի հիմքերը դրվեցին, և երբ այս երկրի վրա մեր գոյության և փրկագնման ծրագիրն էր մշակվում։ Մենք այնտեղ էինք, մեզ հետաքրքիր էր, և մենք մասնակցեցինք այդ մեծ նախապատրաստությանը։ Մենք անկասկած ներկա էինք այդ խորհուրդներին . . . երբ Սատանան իրեն առաջարկեց որպես աշխարհի փրկիչ այն պայմանով, որ ինքը ստանա Հոր պատիվն ու փառքը։ Սակայն Հիսուսն ասաց. «Հայր, թող քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»։ Այդ պատճառով սատանան ապստամբեց Աստծո դեմ, և ձգտեց կործանել մարդու ազատ կամքը, Հայրը մերժեց նրան և նա դուրս գցվեց, իսկ Հիսուսն ընդունվեց։

Անկասկած, մենք եղել ենք այնտեղ և մասնակցել ենք այդ բոլոր իրադարձություններին, մենք էականորեն հետաքրքրված էինք այդ մեծ ծրագրերի և նպատակների իրագործմամբ, մենք հասկանում էինք դրանք, և մեր օգտի համար էին դրանք հռչակվել և պետք է իրականացվեին։ Այդ հոգիները աշխարհ են գալիս որպեսզի խորաններ հագնեն, որպեսզի նմանվեն Հիսուս Քրիստոսին, լինելով «ստեղծված նրա նմանությամբ և պատկերով», ստեղծման սկզբից մինչ այժմ, և մինչև վերջին օրերը, մինչև որ այն հոգիները, որոնք կոչված էին գալու այս աշխարհ, գան և կատարեն իրենց առաքելությունը մարմնում։[3]

Մենք տեսնում ենք . . . մարդը՝ Աստծո աշխատանքի պսակը այս երկրում, եթե ցանկանում ենք, գլուխգործոցը, ինչպես սովորեցնում է ոգեշնչումը, հանդիսանում է ժառանգը այն հավերժական էակի, որը Արարիչն է բոլոր բաների, Նա, լինելով ամենակատարյալը Իր կազմակերպությունում, որն ունի ավելի մեծ հատկանիշներ, դատողության ուժ և բանականություն, քան բոլոր այլ էակները, դարձնելով նրան «արարման տեր», և որն ամենշատ նմանությունն ունի Արարչի հետ։ Մենք նայում ենք այս փաստերին և չենք կարող չգալ այն եզրակացության, որ այս ամենը պատահական բան չէ, այլ մանրամասն մտածված

Ադամն ու Եվան Դախտեզում, Լոուել Բեննեթ։ Նախագահ Սմիթը սովորեցնում էր, որ Ադամը «առաջին մարդն էր բոլոր մարդկանցից» (տես Մովսես 1.34)։

ամենագետ ծրագրերի և նպատակների արդյունք, որ մարդը հանդիսանում է Աստծո որդին, որն ունի հատկանիշներն ու պատկերը իր Հոր, և ի սկզբանե ունի այնքան շատ այդ բանականությունից, որ եղել է ընկերակիցն ու ուղեկիցը Աստծո և ապրել է Նրա հետ, չգիտենալով ոչ մի մեղք: Տերը տվել է նրան երկիրը որպես տիրապետություն և ժառանգություն, և օրենքներ իր կառավարման համար, որպեսզի կարողանա կատարել իր արարման նպատակը և ուրախություն ունենա դրանում:[4]

Սուրբ գրությունների գրառված օրինակները ցույց են տալիս, որ բոլոր մարդիկ, ովքեր գալիս են այս երկիր և ծնվում մահկանացու վիճակում, ունեցել են նախագոյություն, եղել են հոգևոր անհատականություններ, լինելով Հավերժական Հոր որդիներն ու դուստրերը . . . Հիսուս Քրիստոսը եղել է անդրանիկը: Աստծուց ծնված հոգին անմահ էակ է: Երբ մարմինը մահանում է, հոգին չի մահանում: Հարություն առած վիճակում մարմինը կլինի անմահ, ինչպես հոգին:[5]

Մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով:

Ինչպիսի՞ կազմվածք ուներ մարդու մարմինը և հոգին ստեղծման պահին: Ընդհանուր առմամբ պատասխանը տրվում է հետևյալ խոսքերի մեջ . . . «Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով»: Դա ավելի պարզորոշ տրված է Մորմոնի Գրքում. «Ի սկզբանե բոլոր մարդիկ ստեղծվել էին ըստ իմ սեփական պատկերի» (Եթեր 3.15): Դա Հայրն է, որ խոսում է: Հետևաբար, եթե կարողանանք պարզել «հոգիների Հոր» կառուցվածքը, «բոլոր մարմինների հոգիների Աստվածը», մենք կկարողանանք իմանալ ինչպիսի կազմվածք ուներ սկզբնական մարդը:

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, Իր Հոր «էության նկարագիրն է» (Եբրայեցիս Ա.3): Նա քայլեց երկրի վրա որպես մարդկային էակ, որպես կատարյալ մարդ, և ի պատասխան Իրեն տրված հարցին, ասաց. «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհաննես ԺԴ.9): Սա միայն պետք է լուծի խնդիրը, բավարարելով ամեն խորհրդածող և ակնածալից միտքը: Եզրակացությունն անվիճարկելի է՝ եթե Աստծո Որդին Իր Հոր էության նկարագիրն է (այսինքն նմանությունը), ապա Նրա Հայրը մարդու տեսքով է, քանզի այդպիսին էր Աստծո Որդին, ոչ միայն Իր մահկանացու կյանքում, այլ նախքան Իր մահկանացու ծնունդը և Իր հարությունից հետո: Այդ տեսքով էին Հայրն ու Որդին, որպես երկու անձնավորություններ, հայտնվել Զոզեֆ

Սմիթին, երբ լինելով տասնչորսամյա պատանի նա ստացավ իր առաջին տեսիլքը:

Հետևաբար, եթե Աստված ստեղծեց մարդուն, առաջին մարդուն, Իր իսկ պատկերով և նմանությամբ, նա պետք է որ նրան Քրիստոսի նման արարեր, հետևաբար իսկ Քրիստոսի ժամանակի և մեր օրերի մարդկանց նման: Այն, որ մարդը արարվել էր Քրիստոսի պատկերով, հստակ հաստատվում է Սովսեսի Գրքում. «Եվ ես՝ Աստվածս, ասացի իմ Միածնին, որն ինձ հետ էր ի սկզբանե. Եկեք մարդ արարենք մեր պատկերով՝ մեր նմանության պես. և այդպես եղավ . . . Եվ ես՝ Աստվածս, արարեցի մարդուն իմ պատկերով, իմ Միածնի պատկերով արարեցի նրան. արու և էգ արարեցի նրանց» [տես Սովսես 2.26–27]:

Հիսուսի Հայրը նաև մեր Հայրն է: Հիսուսն ինքն է ուսուցանել այս ճշմարտությունը, երբ Նա սովորեցրեց Իր աշակերտներին ինչպես աղոթել. «Հայր մեր, որ երկնքում ես» և այլն: Ինչևէ, Հիսուսը առաջնեկն է Աստծո բոլոր որդիների մեջ՝ միածինը հոգում, և միածինը մարմնում: Նա մեր ավագ եղբայրն է, իսկ մենք, Նրա նման, Աստծո պատկերով ենք . . .

«Աստված արարեց մարդուն Իր իսկ պատկերով»: Դա ճիշտ է ինչպես ոգու, այնպես էլ մարմնի համար, որը միայն ոգու հագուստն է, նրա հավելումը, երկուսը միասին կազմելով հոգին [տես ՎԿՈ 88.15]: Մարդու հոգին մարդու տեսքն ունի, և բոլոր էակների հոգիները իրենց մարմինների նմանությամբ են: Սա պարզորոշ ուսուցանել է Սարգարե Զոզեֆ Սմիթը (Վարդապետություն և Ուխտեր 77.2) . . . .

Երբ աստվածային էակը, որի հոգևոր մարմինը տեսավ Հարեղի եղբայրը [տես Եթեր 3.6–16], հագավ միս ու արյուն, Նա հայտնվեց որպես մարդ, որը մյուս մարդկանց նման ուներ «մարմին, օրգաններ և զգացմունքներ», որովհետև նա Աստված էր, այսինքն՝ Աստծո Որդին, մարմին դարձած Խոսքը. Նրանում «բնակվում էր Աստվածության ամեն լիությունը մարմնապես» [Կողոսացիս Բ.9]: Եվ ինչո՞ւ Նա չպետք է հայտնվեր որպես մարդ: Այդպիսին էր Նրա հոգու կառուցվածքը, և անհրաժեշտ էր ունենալ համապատասխան պատյան, հարմար խորան: Նա եկավ աշխարհ ինչպես խոստացվել էր, որ Նա կգա (3Նեփի 1.13), հագնելով մանկան խորան, և աստիճանաբար զարգացնելով այն Իր հոգու հասակի լիության չափով: Նա եկավ ինչպես մարդն եկել է բոլոր ժամանակներում և ինչպես շարունակել են գալ հետագայում: Ինչևէ, Հիսուսը, ինչպես ասվել է, Աստծո միածինն էր մարմնում:

Ադամը, մեր մեծ նախահայրը, «առաջին մարդը», Քրիստոսի պես, նախաերկրային հոգի էր, և Քրիստոսի պես համապատասխան մարմին հագավ, մարդու մարմին, և այդպիսով դարձավ «կենդանի հոգի»: Նախաերկրային կյանքի մասին վարդապետությունը, որը հայտնվեց այնքան հստակորեն, հատկապես վերջին օրերին, հրաշալի լույս է սփռում մարդու ծագման խորհրդավոր խնդրին: Այն ցույց է տալիս, որ մարդը, որպես հոգի, ծնվել է երկրային ծնողներից և դաստիարակվել է մինչև հասուն տարիքը Հոր հավերժական ապարանքներում, նախքան կգար երկիր ժամանակավոր մարմնով մահկանացու փորձառություն ձեռք բերելու նպատակով: Դա սովորեցնում է, որ բոլոր մարդիկ գոյություն են ունեցել հոգով, նախքան մարմնի մեջ գոյություն ունենալը և բոլորը, ովքեր բնակվել են երկրի վրա Ադամից հետո, մարմին են ստացել և դարձել են նույն տեսքով հոգիներ:

Ոմանք կարծում են, թե Ադամը առաջին մարդը չէր այս երկրի վրա, և որ առաջին մարդը առաջ է եկել կենդանի էակների ցածր կարգից զարգանալու արդյունքում: Ինչևէ, դրանք մարդկանց տեսություններն են: Տիրոջ խոսքը հայտարարում է, որ Ադամը «առաջին մարդն էր բոլոր մարդկանցից» (տես Մովսես 1.34), և հետևաբար մենք պարտավոր ենք նրան համարել մեր ցեղի առաջին ծնողը: Հարեղի եղբորը ցույց է տրվել, որ բոլոր մարդիկ ստեղծվել են ի սկզբանե Աստծո պատկերով, և վերագրում ենք մենք դա հոգուն, մարմնին, թե երկուսին, դա բերում է մեզ նույն եզրակացությանը. մարդը սկսել է կյանքը որպես մարդկային էակ մեր երկնային Հոր պատկերով:

Ճիշտ է, որ մարդու մարմինը սկսում է իր ճանապարհը որպես փոքր բջիջ կամ սաղմ, որը դառնում է նորածին, որոշակի էտապում կենդանանում է հոգով, որի խորանն է հանդիսանում այն, և երեխան, ծնվելուց հետո, զարգանում է դառնալով մարդ: Այնուամենայնիվ, դրանում ոչինչ ցույց չի տալիս, որ սկզբնական մարդը, մեր ցեղի առաջին մարդը, սկսել է կյանքը որպես ավելի ցածր կարգի էակ կամ ավելի ցածր կարգի բջիջ, քան մարդկային բջիջն է կամ սաղմը, որը մարդ է դառնում:[6]

Մենք դառնում ենք Աստծո՝ մեր Հոր նման, ավետարանի սկզբունքներին հնազանդվելու միջոցով:

Աստված մտածել և ստեղծել է բոլոր բաները, և բոլորը նրա զավակներն են: Մենք ծնվել ենք այս աշխարհում որպես նրա սերունդ, օժտված միևնույն հատկանիշներով: Մարդկանց

զավակները առաջ են եկել Ամենազորից, ցանկանում է աշխարհն ընդունել դա, թե ոչ: Նա է Հայրը մեր հոգիների: Նա է մեր երկրային խորանների ստեղծողը: Մենք ապրում ենք, շարժվում ենք և գոյություն ունենք մեր Երկնային Հոր՝ Աստծո մեջ: Եվ լույս աշխարհ գալով նրանից մեր տաղանդներով, մեր ունակություններով, իմաստությամբ, մենք պետք է առնվազն ցանկանանք ընդունել նրա ձեռքը այն ամեն բարգավաճման մեջ, ինչին կարող ենք հասնել մեր կյանքում, և նրան պատվել ու փառավորել այն ամենի համար, ինչին կհասնենք մեր մարմնում . . .

. . . [Մարդը] ստեղծվել է Աստծո պատկերով, այնպես որ կարողանա կշռադատել, խորհել, աղոթել, հավատք գործադրել: Նա կարող է իր էներգիան օգտագործել իր սրտի ցանկություններն իրականացնելու համար, և որքան որ նա ճիշտ ուղղությամբ է գործադրում իր ջանքերը, այնքան նա իրավունք է ստանում Ամենազորի Հոգու ավելի շատ չափի համար, որը կոգեշնչի նրան ավելի շատ բանականության, բարգավաճման ու երջանկության հասնելու աշխարհում: Սակայն եթե նա իր ուժերը տալիս է չարին, Ամենազորի ոգեշնչումը ետ է քաշվում նրանից, մինչև որ նա դառնում է այնքան խավար ու հետամնաց, որ ինչ վերաբերում է Աստծո մասին գիտելիքին, նա կենդանու պես տգետ է:

. . . Մենք պետք է դառնանք [Աստծո] պես, հավանաբար, գահերի վրա նստելու, տիրապետություններ, իշխանություն և հավերժական զարգացում ունենալու համար: Աստված նախատեսել է այս ամենը ի սկզբանե . . . Սա աշխարհում մեր գոյության նպատակն է, և մենք կարող ենք միայն հասնել այս ամենին որոշակի սկզբունքներին հնազանդվելու, որոշակի ուղիներով քայլելու, որոշակի տեղեկություն, որոշակի բանականություն Աստծուց ձեռք բերելու միջոցով, առանց որի ոչ ոք չի կարող կատարել իր աշխատանքը կամ կատարել այն առաքելությունը, որը նա եկել է երկիր իրականացնելու: Այս սկզբունքները հավերժական ճշմարիտ ավետարանի սկզբունքներն են՝ հավատքի, ապաշխարության և մեղքերի թողության համար մկրտության սկզբունքները, Աստծուն՝ հավերժական Հորը հնազանդվելու սկզբունքը. քանզի հնազանդությունը երկնքի առաջին սկզբունքներից կամ օրենքներից մեկն է:[7]

Մարդը Աստծո զավակն է, ստեղծված աստվածային պատկերով և օժտված աստվածային հատկանիշներով, և ինչպես երկրային հոր կամ մոր մանուկ որդին է ունակ իր ժամանակին դառնալու տղամարդ, այնպես էլ սելեստիալ ծնողների չզարգացած ժառանգներն են ունակ դարերի և անսահման մեծ ժամանակահատվածների փորձության ընթացքում զարգանալ, դառնալով Աստված:[8]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ զգացումներ են առաջանում, երբ իմանում եք, որ դուք բառացիորեն Աստծո ժառանգներն եք: Ինչպե՞ս է այս հասկացողությունը ազդում ձեր ամենօրյա ընտրությունների և գործերի վրա:
- Որտե՞ղ ենք առաջին անգամ լսել մեր հավերժական առաջընթացի վերաբերյալ մեր Երկնային Հոր ծրագրի մասին: Ի՞նչ նպատակով ենք մենք գալիս աշխարհ:
- Ինչպիսի՞ հատկանիշներ ունենք մենք որպես Աստծո զավակներ: Որո՞նք են մեր Աստվածատուր հատկանիշներն ու ունակությունները չօգտագործելու հետևանքները:
- Ինչպիսի՞ աստվածաշնչյան վկայություններ ունենք մենք, որոնք ասում են, որ Հայր Աստվածը և Նրա Որդին Հիսուս Քրիստոսը մարդկանց տեսքով մարմիններ ունեն: Ինչպիսի՞ արժեք են ներկայացնում ձեզ համար այդ վկայությունները:
- Ինչպե՞ս է նախաերկրային գոյության վարդապետությունը «հրաշալի լույս» սփռում մեր ծագման մասին հարցերի վրա:
- Ինչպե՞ս է մարդկության ծագման վերաբերյալ հայտնված ճշմարտությունը տարբերվում այս թեմայի շուրջ մարդկանց տեսություններից:
- Ինչո՞ւ է կարևոր «պատվել և փառավորել մեր Երկնային Հորը այն ամենի համար, ինչին կհասնենք մեր մարմնում»:
- Ո՞ր սկզբունքներին մենք պետք է հնազանդվենք, որպեսզի դառնանք մեր Երկնային Հոր պես:

Հղումներ

1. "The Origin of Man, by the First Presidency of the Church," *Improvement Era,* Nov. 1909, 75.
2. In Conference Report, Oct. 1909, 3.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 93–94; paragraphing added.
4. *Deseret News: Semi-Weekly,* 18 Feb. 1873, 2.
5. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:264.
6. "The Origin of Man, by the First Presidency of the Church," 77–80; paragraphing added.
7. *Gospel Doctrine,* 62–64.
8. "The Origin of Man, by the First Presidency of the Church," 81.

Եկեղեցում ծառայելը

Եկեք հավատարմորեն ծառայենք մեր կոչումներում՝ քահանայության իշխանության ղեկավարության ներքո։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Երբ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն արդեն ծառայել էր որպես Առաքյալ 44 տարի և որպես Եկեղեցու Նախագահ 9 տարի, 1910թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ նա կանգնեց և ասաց. «Այս առավոտ ես ինձ երջանիկ եմ զգում, արտոնություն ունենալով ասել ձեզ, որ իմ մանկության և վաղ պատանեկան տարիներին ես խոստացել եմ Աստծուն և Նրա ժողովրդին, որ ես հավատարիմ կլինեմ նրանց»։ Նա բացատրեց, որ այդ ժամանակից ի վեր նա հավատարմորեն է ծառայել իրեն տրված բոլոր կոչումներում.

«Նայելով իմ կյանքի փորձին, ես չեմ կարող հիշել մի դեպք, աշխարհ գալու ժամանակից ի վեր, երբ ես մի պահ զգացել եմ, որ դանդաղել եմ կամ ծուլացել եմ իմ ուխտն ու խոստումը կատարելիս, որոնք դեռևս երիտասարդության տարիներին տվել եմ Աստծուն և Վերջին Օրերի Սրբերին. . . . Որպես Իսրայելի երեց ես փորձել եմ հավատարիմ լինել այդ կոչմանը։ Ես իմ ողջ ուժը ներդրել եմ պատվելու ու մեծարելու այդ կոչումը։ Երբ ես դարձա Յոթանասունական, սրտումս զգացի, որ պետք է հավատարիմ լինեմ այդ կոչմանը և իմ ողջ բանականությամբ ու հոգուս ավյունով ձգտում էի հավատարիմ լինել դրան։ Ես չգիտեմ կամ չեմ կարող հիշել իմ կողմից կատարված որևէ արարք կամ դեպք իմ կյանքում, երբ ես անհավատարմություն կամ անհավատություն եմ ցուցաբերել Աստծո Որդու Քահանայության այդ կոչումներում։ Ավելի ուշ իմ կյանքում, երբ ես կանչվեցի և կարգվեցի որպես Առաքյալ, և ձեռնադրվեցի լինելու Տասներկուսից մեկը, ես ձգտել եմ պատվել այդ կոչումը, հավատարիմ լինել դրան և իմ եղբայրներին, ողջ հավատքի ընտանիքին, ուխտերին և պարտավորություններին, որոնք կապված են այս սուրբ Քահանայությունը ստանալու հետ, Քահանայություն, որն ըստ Աստծո Որդու կարգի է։ Ես չգիտեմ մի

դեպք, երբ երբևէ խախտել եմ իմ ուխտերից ու պարտականություններից որևէ մեկը, որին կանչվել եմ: Ես ձգտել եմ լինել ճշմարիտ ու հավատարիմ ամեն ինչում:[1]

Նախագահ Սմիթը հորդորում էր Սրբերին տրվել Տիրոջ աշխատանքին և նվիրվածությամբ ծառայել՝ քահանայության կոչումներում, Եկեղեցու օժանդակ կազմակերպություններում և այլ անշահախնդիր ծառայություններում, միշտ պատվելով քահանայության իշխանությունը, որի կողմից նրանք կանչվել են և հրահանգավորվել:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Քահանայությունը տրվում է ծառայության համար:

Քահանայությունը չի տրվում մենծարանքի կամ մարդուն մենծարելու համար, այլ ծառայություն մատուցելու նրանց, որոնց մեջ այդ սուրբ լիազորության կրողները կանչված են աշխատելու: Եկեք հիշենք, որ նույնիսկ մեր Տերը և Վարդապետը, երկար ծոմապահությունից հետո, երբ մարմնով տկարացել և ֆիզիկապես թուլացել էր, ուժասպառ լինելով առանց քնի և շարունակ անօթի մնալով, մերժեց գլխավոր փորձչի առաջարկությունը՝ օգտվել իր Սեսիայի իշխանությունից ու զորությունից բավարարելու տվյալ պահի իր կարիքները:

Աստվածատուր պատվավոր կոչումները և տիտղոսները, որոնք ավելին են, քան մարդկային պարգևները, և կապված են Սուրբ Քահանայության մի քանի պաշտոնների և կարգերի հետ, չպետք է օգտագործվեն կամ համարվեն որպես մարդու կողմից ստեղծված կոչումներ: Դրանք զարդարանքի համար չեն կամ չեն արտահայտում գերիշխանություն, այլ ավելի շուտ նշանակում է խոնարհ ծառայություն մեկ Տիրոջ աշխատանքում, որին մենք ընտրել ենք ծառայել:[2]

Ես ճանաչել եմ Երեցների, որոնք իրենց ողջ կյանքում եղել են «ծառայելու պատրաստ մարդիկ», նրանք երբեք կանգ չեն առել, որպեսզի կասկածի ենթարկեն այն կոչը, որով դիմում են իրենց, ոչ էլ կանգ են առել տեսնելու իրենց նյութական շահը, նրանք գնացել են և եկել են՝ Տիրոջ և ժողովրդի ծառայությանը տրված իրենց եղբայրների խնդրանքով . . . . Նրանք ձեռքի տակ էին, ինչպես մշտարթուն պահակը, հազվադեպ դադար տալով՝ մտածելու իրենց մասին . . . Դա նրանք արել են իրենց ողջ սրտի նվիրվածությամբ, և իրենց աշխատանքը երբեք չեն համարել բեռ,

ընդհակառակը դա նրանց ուրախություն, հաճույք ու մշտական բավարարվածություն է պարգևել . . . Նրանք դեռևս պատրաստ են և ցանկանում են գնալ կամ գալ, կամ էլ անել այն, ինչ պահանջվում է իրենցից, քահանայության իրենց պարտականությունները միշտ համարելով ավելի կարևոր, քան որևէ անձնական նկատառում։[3]

Քահանայության քվորումների ամենշաբաթյա ժողովները . . . ոչ միայն կմեծացնեն քահանայության փորձառությունը իր կրթող առանձնահատկության շնորհիվ, այլ շաբաթը մեկ անգամ բոլոր եղբայրները մեկտեղ հավաքվելով, որպես Տիրոջ ծառաներ, կանոնավոր գործելու սովորություն ձեռք կբերեն։[4]

Ո՜վ Աստված, օրհնի՜ր Սուրբ Քահանայությունը, այստեղ հավաքված այն ազնվազարմ, մաքուր, արդար, պատվախնդիր, ազնիվ տղամարդկանց, որոնցից շատերը հավաքվել են երկրի տարբեր ազգերից ավետարանի հանդեպ սիրո համար, իսկ նրանցից շատերը ծնվել են Սուրբ Քահանայության ուխտի մեջ, և ես աղոթում եմ Աստծուն, որպեսզի օրհնի ձեզ, իմ եղբայրներ, Իր մեծահոգության, Իր ողորմածության և սիրող բարության առատությամբ, որպեսզի դուք բարգավաճեք երկրում, որպեսզի դուք կարողանաք իսկապես լինել Նրա ծառաները։[5]

Օժանդակ կազմակերպությունները բոլորին հնարավորություն են տալիս ծառայել քահանայության նախագահող իշխանության ներքո։

Քահանայությունը կանգնած է գլխավերևում։ Նրանք նախագահում են բոլոր բաների վրա։ Քահանայություն կրողների պարտականությունն է՝ հետևել Եկեղեցու բոլոր կազմակերպություններին, ոչ միայն Քահանայության կազմակերպությանը, այլ նաև այն բոլոր կազմակերպություններին, որոնք հիմնադրվել են մարդկանց օգտի համար, հիմնականում մեր Սփոփող Միությունը, Համատեղ Զարգացման Ընկերությունը [Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց կազմակերպությունները], Երեխաների Միությունը, . . . և մեր բոլոր կազմակերպությունները, որոնք նախատեսված են Աստծո ժողովրդին ոտքի կանգնեցնելու և երկրում ճշմարտությունն ու արդարությունը բարգավաճեցնելու համար։ Դրանք բոլորը պահանջում են ղեկավարում, հայրական հոգածություն և ուշադրություն, ինչպես նաև Եկեղեցու իշխանությունների կողմից խորը և մշտական հետաքրքրություն, լինի դա ծխում, թե Եկեղեցու գերագույն իշխանություններում,

քանի որ Քահանայությունը հետաքրքրված է Աստծո ժողովրդի բարօրությամբ, և երկրի վրա Սիոնի կառուցմամբ ու հաստատմամբ: Եվ այդ բոլոր կազմակերպությունները, որոնք կազմավորվել, հաստատվել և կարգվել են Աստծո կողմից, պետք է նայեն այդ նախագահող իշխանություններին և ներդաշնակ գործեն նրանց հետ՝ պատվելով նրանց իրենց պաշտոններում:[6]

Հիսուս Քրիստոսի Եկեղեցում չկա մեկ այլ կառավարում, առանձին ու անկախ, սուրբ Քահանայությունից վեր կանգնած կամ դրա իշխանությունից դուրս գտնվող: Մենք ունենք մեր Սփոփող Միությունները, Համատեղ Զարգացման Ընկերությունները, Երեխաների Միությունները և Կիրակնօրյա Դպրոցները, . . . սակայն այդ կազմակերպությունները Քահանայության քվորումներ կամ խորհուրդներ չեն, այլ դրա ներքո կամ դրան օժանդակ են, կազմավորված սուրբ Քահանայության շնորհիվ: Դրանք գտնվում են ոչ քահանայությունից դուրս, ոչ էլ դրա հասանելիության սահմաններից դուրս: Դրանք ընդունում են Քահանայության սկզբունքը: Որտեղ էլ որ դրանք գտնվեն, միշտ նրանց նպատակն է՝ ինչ-որ բարիք գործել, ինչ-որ հոգի փրկել, աշխարհիկ կամ հոգևոր առումով:[7]

Ես կուզենայի ասել, որ Սփոփող Միությունից, հատկապես այդ հրաշալի կազմակերպության գերագույն [ծառայողներից] ակնկալվում է, որ նրանք հոգ կտանեն այդ բոլոր կազմակերպությունների Սիոնի կանանց մասին: Նրանք կանգնած են նրանց բոլորի գլխավերևում, նրանք պետք է կանգնեն վերևում և նրանք պետք է մեծարեն իրենց կոչումը:[8]

Օժանդակ կազմակերպությունների միջոցով մենք կարողացել ենք առաջնորդող ձեռք մեկնել և լավ ազդեցություն թողնել մեր շատ երիտասարդ տղաների և աղջիկների վրա, որոնց դժվար կլիներ հասնել Քահանայության կազմակերպությունների միջոցով: Մինչ այժմ այդ կազմակերպությունները գերազանց ձևով են կատարել իրենց հիմնական աշխատանքը:[9]

Ես խնդրում եմ Աստծուն, որ Նա օրհնի մեր օժանդակ կազմակերպությունները, առաջինից մինչև վերջինը, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց պարտականությունը, որպեսզի ծուլորեն չնստեն և չանտեսեն աշխատանքը . . . Մենք ապահով ենք միայն այն ժամանակ, երբ գործում ենք, աշխատում ենք, երբ լուրջ ենք, զբաղված ենք մեր պարտականությունները կատարելով և, երբ նման վիճակում ենք, մենք ապահով ենք, քանզի այդ ժամանակ մենք Աստծո ձեռքերում ենք և ոչ թե հակառակորդի ձեռքերում:[10]

Մենք պետք է բոլորս աշխատենք ուրիշների բարօրության և փրկության համար։

Եթե կատարում ենք մեր պարտականությունը, ապա մենք ներգրավված ենք մեծ ու փառավոր գործում։ Շատ կարևոր է մեր անհատական բարօրության համար, որ յուրաքանչյուր տղամարդ և կին, որը ավետարանի ուխտի մեջ է մտել ապաշխարության և մկրտության միջոցով, անհատապես զգա, որ իր պարտականությունն է օգտագործել իր բանականությունը և ազատ կամքը, որը Տերը տվել է իրեն, Սիոնի շահերը առաջ տանելու և Նրա գործը երկրի վրա հաստատելու համար։[11]

Մենք բոլորս պետք է ցանկանանք աշխատել ժողովրդի բարօրության և փրկության համար, զոհաբերենք մեր ցանկություններն ու զգացմունքները ընդհանուրի բարիքի համար, ցանկանալով կատարել Ամենազորի պահանջները, ցանկանալով միայն ծառայել Տիրոջ նպատակներին . . . Մենք տքնում ենք հոգիների փրկության համար, և մենք պետք է զգանք, որ դա մեր վրա դրված ամենամեծ պարտականությունն է։ Հետևաբար, մենք պետք է ցանկություն ունենանք զոհաբերելու ամեն ինչ, եթե անհրաժեշտ է, Աստծո սիրո, մարդկանց փրկելու և երկրի վրա Աստծո թագավորության հաղթանակի համար։[12]

Մենք սպասում ենք այն օրվան . . . երբ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Քահանայության յուրաքանչյուր խորհուրդ կհասկանա իր պարտականությունը, կստանձնի իր պարտականությունը, կմնծարի իր կոչումը և լավագույնս կզբաղեցնի իր տեղը Եկեղեցում՝ համաձայն այն բանականության և ունակության, որ ինքն ունի . . . Տերը նախատեսել և հասկացել է դա ի սկզբանե, և նա Եկեղեցում միջոցներ է ստեղծել, որոնց օգնությամբ ամեն մի կարիք կարող է բավարարվել Քահանայության կանոնավոր կազմակերպությունների ուժերով։ Արդարացի է ասվել, որ Եկեղեցին կազմակերպված է կատարյալ ձևով։ Միակ խնդիրն այն է, որ այդ կազմակերպությունները լիովին չեն գիտակցում իրենց վրա ընկած պարտականությունները։ Երբ նրանք լիովին գիտակցեն իրենց առաջ դրված պահանջները, նրանք ավելի հավատարմորեն կկատարեն իրենց պարտականությունները, և Տիրոջ աշխատանքը կլինի շատ ավելի ամուր, զորավոր և ազդեցիկ աշխարհում։[13]

Ամեն ոք պետք է իր սրտում զգա վերջին օրերի մեծ աշխատանքի իր մասն անելու անհրաժեշտությունը։ Բոլորը պետք է փնտրեն լինել գործիք այն առաջ տանելիս։ Հատկապես

յուրաքանչյուրի պարտականությունն է, որն ունի սուրբ Քահանայության իշխանության որևէ մաս, մեծարել և պատվել այդ կոչումը, և ոչ մի տեղ մենք չենք կարող սկսել դա անել ավելի լավ, քան հենց այստեղ, մեր մեջ և երբ մենք մաքրենք անոթների ներսը, մաքրենք մեր սրտերը, ուղղենք մեր կյանքը, նպատակուղղենք մեր մտքերը կատարելու Աստծո և մարդու հանդեպ մեր ամբողջ պարտականությունը, ապա մենք պատրաստ կլինենք լավ ազդեցություն թողնել մեր ընտանիքի շրջանակներում, հասարակության մեջ և կյանքի բոլոր բնագավառներում:[14]

Տղամարդիկ և կանայք, որոնք ազնիվ են Աստծո հանդեպ, որոնք խոնարհ ու հաստատուն առաջ են գնում, կատարելով իրենց պարտականությունը, վճարելով իրենց տասանորդը, գործադրելով մաքուր և անբիծ դավանանք Աստծո և Հոր առաջ, այցելելով հայրազուրկներին և այրիներին իրենց նեղության մեջ, և մնում են անբիծ աշխարհից [տես Հակոբ 1.27] և որոնք օգնում են հոգ տանել աղքատների համար, պատվում են սուրբ Քահանայությունը, չեն գնում ծայրահեղությունների, աղոթում են իրենց ընտանիքներում, և ընդունում են Տիրոջը իրենց սրտերում, նրանք կկառուցեն մի հիմք, որին դժոխքի դարբասները չեն կարող հաղթել, և եթե անձրևները տեղան և քամիները փչեն, նրանց տունը չի տապալվի, քանի որ այն կառուցվել է հավերժական ճշմարտության վեմի վրա [տես Մատթեոս Է.24–27]:[15]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է Հիսուս Քրիստոսի օրինակն ուսուցանում մեզ քահանայության իշխանության օգտագործման մասին:
- Ինչպե՞ս է քահանայությանը կարգվելը «նշանակում խոնարհ ծառայություն»:
- Ի՞նչ նպատակներ են հետապնդում Եկեղեցու օժանդակ կազմակերպությունները: Ինչպե՞ս են դրանք օրհնում Եկեղեցու անդամներին: Ինչո՞ւ է կարևոր իմանալը, որ օժանդակները գործում են քահանայության ղեկավարության ներքո:
- Ի՞նչ օգուտ ունենք, երբ հաստատում ու պատվում ենք միմյանց Եկեղեցու մեր պարտականություններում և կոչումներում:
- Ի՞նչ պետք է զգանք, «երբ տքնում ենք հոգիների փրկության համար»: Նշեք մի քանի զոհաբերություններ, որ ուրիշները կատարել են տքնելով ձեր փրկության համար: Ի՞նչ եք ցանկանում զոհաբերել ի օգուտ ուրիշների:

- Ի՞նչ է նշանակում «լիովին գիտակցել» մեր պարտականությունները: Որո՞նք կլինեն արդյունքները, եթե մենք դա գիտակցենք:
- Ի՞նչ է նշանակում «խոնարհ ու հաստատուն առաջ գնալ»: Ինչպիսի՞ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր այդպես առաջ են գնում:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 504.
2. Joseph F. Smith, Anthon H. Lund, Charles W. Penrose, "On Titles," *Improvement Era,* Mar. 1914, 479.
3. *Deseret News* (weekly), 10 Dec. 1879, 2.
4. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:195.
5. In Conference Report, Oct. 1911, 132.
6. *Deseret Weekly,* 9 Jan. 1892, 70.
7. *Gospel Doctrine,* 144.
8. *Gospel Doctrine,* 386.
9. *Gospel Doctrine,* 393.
10. In Conference Report, Oct. 1911, 131–32.
11. *Deseret News: Semi-Weekly,* 28 Nov. 1876, 1.
12. *Deseret News* (weekly), 10 Dec. 1879, 2.
13. *Gospel Doctrine,* 159–60.
14. *Gospel Doctrine,* 168.
15. *Gospel Doctrine,* 7–8.

Ամրացնել ընտանիքները ընտանեկան երեկոների ժամանակ

Ընտանեկան երեկոները ամրացնում են սերն ընտանիքում և հավատքը ընտանիքի յուրաքանչյուր անդամի սրտում:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի համար իր ընտանիքը թանկ էր, իսկապես անգին: Նա հաճախ էր պերճախոս լեզվով արտահայտվում «Աստծո կողմից հաստատված տան» մասին և ասել է, որ «Աստծո արքայության, արդարակեցության, առաջընթացի, զարգացման հիմքը» դրվում է ընտանիքում:[1]

1915թ. Նախագահ Սմիթը և նրա Խորհրդականները Եկեղեցուն ներկայացրեցին ամենշաբաթյա ընտանեկան երեկոյի ծրագիրը, խնդրելով ծնողներին այդ ժամանակն օգտագործել իրենց երեխաներին սովորեցնելով Աստծո խոսքը: Հետագայում ընտանեկան երեկոյի ծրագիրը նկարագրելիս Նախագահ Սմիթը կոչ է արել ընտանիքներին «մեկ ժամ կամ ավելի անցկացնել միասին բարեպաշտության մթնոլորտում, երգելով օրհներգեր ու երգեր, աղոթելով, կարդալով սուրբ գրություններն ու այլ լավ գրքեր, գործիքային երաժշտություն կատարել, քննարկել ընտանեկան խնդիրները և ավետարանային սկզբունքների հատուկ ուսուցումներ անցկացնել և զրուցել կյանքի բարոյականության խնդիրների, ինչպես նաև ծնողների, ընտանիքի, Եկեղեցու, հասարակության և պետության հանդեպ երեխաների պարտականությունների ու պարտավորությունների մասին»:[2]

Ընտանեկան երեկոյի ծրագիրը արտացոլում էր Նախագահ Սմիթի ջերմեռանդ հավատքն առ այն, որ «այս ժողովրդի մեծ ու կարևոր պարտականությունն է ուսուցանել իրենց երեխաներին՝ օրորոցից մինչև հասուն տարիքը, ավետարանի յուրաքանչյուր

սկզբունքը և ձգտել, որքանով հնարավոր է ծնողների համար, նրանց սրտում ներարկել սերը Աստծո հանդեպ, ճշմարտության, առաքինության, ազնվության, պատվի և այն ամենի հանդեպ, ինչը լավ է»:[3]

1917թ. Նախագահ Սմիթը հաղորդել է Սրբերին, որ ընտանեկան երեկոներ «անցկացնում են շատ ընտանիքներ, և շատ հետաքրքիր ու օգտակար երեկոներ են անցկացվում»:[4] Այսօր Եկեղեցին շարունակում է շեշտել Նախագահ Սմիթի կողմից հաստատված սկզբնական ծրագրի հիմնական արժանիքներից շատերը:

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սովորեցրեք ձեր երեխաներին սիրել Աստծուն և ավետարանի սկզբունքները:

Աստծո արքայության, արդարակեցության, առաջընթացի, զարգացման, հավերժական կյանքի և հավերժական աճի հիմքը դրվում է Աստծո կողմից հաստատված տանը:[5]

Տիպիկ «Մորմոնական» տունը ընտանիքի տաճարն է, որտեղ տան անդամները հավաքվում են աղոթելու և գովաբանելու Աստծուն, ասելով դա Հիսուս Քրիստոսի անունով . . . Այստեղ ուսուցանվում և քնքշորեն ներարկվում են բարոյական կանոններ և կրոնական ճշմարտություններ, որոնք միասին վերցված ստեղծում են այն արդարակեցությունը, որը վեհացնում է ազգին, կասեցնում է այն մեղքը, որը նախատինք է ցանկացած ժողովրդի համար:[6]

Ուսուցանեք ձեր երեխաներին սիրել Աստծուն: Ուսուցանեք նրանց սիրել Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկզբունքները: Ուսուցանեք նրանց սիրել իրենց մերձավորներին, և հատկապես իրենց ընկերներին, Եկեղեցու անդամներին, որպեսզի հավատարիմ լինեն Աստծո ժողովրդի հետ իրենց ընկերությանը: Ուսուցանեք նրանց պատվել քահանայությունը, պատվել այն իշխանությունը, որն Աստված շնորհել է Իր Եկեղեցուն՝ Իր Եկեղեցին պատշաճ կառավարելու համար: Աստծո տունը կարգուկանոնի տուն է, և ոչ թե խառնաշփոթի: . . . Ոչ մի տուն չի կարող կարգուկանոնի տուն լինել, եթե այն պատշաճորեն կազմակերպված չի, ինչպես կազմակերպված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:[7]

Շատ քիչ կրոնական նվիրվածություն, սեր ու Աստվածավախություն կա տներում, փոխարենը անչափ շատ աշխարհիկություն, եսասիրություն, անտարբերություն և ակնածանքի պակաս կա ընտանիքում, այլապես այս ամենը երբեք այսքան շատ չէր դրսևորվի դրսում: Այդ պատճառով է, որ տունը վերափոխման կարիք ունի . . . Թող սերը, խաղաղությունը, Տիրոջ Հոգին, բարությունը, գթասրտությունը, ուրիշների համար զոհաբերությունը առատորեն լցված լինի ձեր ընտանիքներում: Հեռու վանեք կոպիտ խոսքերը, նախանձը, ատելությունը, չարախոսությունը, գռեհիկ լեզուն և զրպարտությունը, բամբասանքը, և թող Աստծո Հոգին տիրի ձեր սրտերում: Սովորեցրեք դա ձեր երեխաներին, հոգով և զորությամբ, ամրապնդելով և հաստատելով դա անձնական օրինակով: Թող նրանք տեսնեն, որ դուք անկեղծ եք, և ապրում եք ձեր քարոզած սկզբունքներով: Թույլ մի տվեք, որ ձեր երեխաներին ուսուցանեն այս բնագավառի մասնագետները, այլ ուսուցանեք նրանց ձեր իսկ կանոններով և օրինակով, ձեր օջախում: Դուք ինքներդ եղեք ճշմարտության մասնագետ: Թող որ մեր ժողովները, դպրոցները և կազմակերպությունները, չլինեն միակ կամ գլխավոր ուսուցիչները, այլ լինեն տանը մեր ուսուցումների և դասերի լրացումները:[8]

Ընտանեկան երեկոների ժամանակ սովորեցրեք ձեր ընտանիքին ուղիղ քայլել Տիրոջ առաջ:

Մենք խորհուրդ ենք տալիս Վերջին Օրերի Սրբերին ավելի ուշադիր պահել Տիրոջ պատվիրանը, որը տրված է Վարդապետություն և Ուխտերի 68-րդ բաժնում (25–28):

«Եվ բացի այդ, որքան որ ծնողները երեխաներ ունեն Սիոնում կամ նրա կազմակերպված ցցերում, որոնց չեն ուսուցանում, որպեսզի մինչև ութ տարեկանը նրանք հասկանան վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի, մեղքը լինի ծնողների գլխին:

Քանզի դա օրենք կլինի Սիոնի բնակիչների և նրա կազմակերպված ցցերի համար:

Եվ նրանց երեխաները պիտի մկրտվեն իրենց մեղքերի թողության համար, երբ ութ տարեկան են, և ձեռնադրվեն:

Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին սովորեցնեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ»:

Սիոնի երեխաները պետք է նաև ավելի լիովին պահեն Տիրոջ պատվիրանը, որը տրվել էր հին Իսրայելին, և կրկնվել Վերջին Օրերի Սրբերին. «Պատուիր քո հորը և քո մորը, որ քո օրերը երկարանան այն երկրի վրա՝ որ քո Եհովայ Աստուածը կտա քեզ» [Ելից Ի.12]:

Այս հայտնությունները մեծ ուժով ուղղված են Վերջին Օրերի Սրբերին, և այս Եկեղեցու հայրերից ու մայրերից պահանջվում է, որ այս պատվիրանները ուսուցանեն և կիրառեն իրենց տներում:

Այս առումով մենք տեղեկացնում և ներկայացնում ենք ամբողջ Եկեղեցում «Ընտանեկան Երեկո» ծրագրի հանդիսավոր բացման մասին, որի ժամանակ հայրերն ու մայրերը կարող են իրենց տղաներին և աղջիկներին հավաքել տանը իրենց շուրջը և ուսուցանել Տիրոջ խոսքը: Այդպես նրանք կարող են ավելի լավ իմանալ իրենց ընտանիքի կարիքները, միևնույն ժամանակ ճանաչելով իրենց երեխաներին և ծանոթացնելով նրանց Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկզբունքներին: Այդ «Ընտանեկան երեկոները» պետք է ընդգրկեն աղոթք, օրհներգեր, երգեր, գործիքային երաժշտության կատարում, սուրբ գրությունների ընթերցանություն, ընտանեկան խնդիրների քննարկում, ավետարանային սկզբունքների հատուկ ուսուցումներ, կյանքի բարոյական խնդիրների, ինչպես նաև ծնողների, ընտանիքի, Եկեղեցու, հասարակության և պետության հանդեպ երեխաների պարտականությունների ու պարտավորությունների մասին զրույցներ: Փոքր տարիքի երեխաների համար ծրագրի մեջ կարելի է ընդգրկել արտասանություններ, երգեր, պատմություններ և խաղեր: Լավ կլինի թեթև հյուրասիրություն մատուցել, որը կարելի է տանը պատրաստել:

Անհրաժեշտ է խուսափել ձևապաշտությունից և կաշկանդվածությունից, և ողջ ընտանիքը պետք է մասնակցի երեկոյին:

Այս հավաքները հնարավորություն կտան փոխադարձ վստահություն ամրապնդել ծնողների և երեխաների, եղբայրների և քույրերի միջև, ինչպես նաև առիթ կհանդիսանան ծնողների համար զգուշացման ու խորհրդի խոսքեր ասել իրենց տղաներին և աղջիկներին: Նրանք հնարավորություն կտան տղաներին և աղջիկներին պատվել իրենց ծնողներին, և իրենց երեխատագիտությունը հայտնել ընտանիքի օրհնությունների համար, որպեսզի նրանց տրված Տիրոջ խոստումը բառացիորեն կատարվի և նրանց կյանքը երկարի ու երջանիկ դառնա . . .

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի ընտանիքի անդամները տան մոտ Սոլթ Լեյք Սիթիում 1891թ.: Նա ասել է. «Ես կցանկանայի, որպեսզի իմ երեխաները և Սիոնի բոլոր երեխաները իմանային, որ այս աշխարհում չկա ավելի արժեքավոր բան իրենց համար, որքան Ավետարանի գիտելիքը» (*Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1):

Մենք . . . խնդրում ենք Եկեղեցու բոլոր օժանդակ կազմակերպությունների ծառայողներին աջակցել այս ծրագրին և քաջալերել երիտասարդներին մնալ տանը այդ երեկո, և իրենց եռանդը ներդնել այն ուսուցողական, օգտակար և հետաքրքիր դարձնելու համար:

Եթե Սրբերը հնազանդվեն այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կունենան: Կավելանա սերը տան մեջ և հնազանդությունը ծնողների հանդեպ: Իսրայելի երիտասարդների սրտերում կզարգանա հավատքը, և նրանք ուժ կգտնեն մարտնչելու չարի ազդեցության և գայթակղությունների դեմ, որոնք շրջապատում են իրենց:[9]

Ամբողջ Եկեղեցում միասնության, նվիրվածության և հավատքի ոգին կտիրի . . . Ընտանեկան երեկոյի ներմուծումը մեծ օգնություն է եղել այս առումով: Շաբաթը մեկ երեկոն . . . ընտանեկան զվարճանքի, կատարելագործման և վայելքի համար, որն անցկացվում է նախատեսված կարգով և կրոնական ոգով, կպարգևի ցանկալի հաջողություն, և սրտանց առաջարկվում է այն անցկացնել ամենուր:[10]

Մենք որպես Սիոնի ծնողներ պետք է հավատարմորեն կատարենք մեր պարտականությունները:

Վարդապետություն և Ուխտերում մենք կարդում ենք, որ ծնողներից պահանջվում է սովորեցնել իրենց երեխաներին «մինչև ութ տարեկանը հասկանալ վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի»: «Եվ նրանք նաև պետք է իրենց երեխաներին սովորեցնեն աղոթել և ուղիղ քայլել Տիրոջ առաջ»: Իսկ եթե ծնողները չեն անում այդպես, և երեխաները մոլորության մեջ են ընկնում ու շրջվում են ճշմարտությունից, ապա Տերն ասել է, որ մեղքը կլինի ծնողների գլխին [տես ՎԿՈ 68.25, 28]. . . .

Մենք պետք է հավաստիանանք, որ անում ենք անհրաժեշտ ամեն բան, որպեսզի որպես Սիոնի ծնողներ հավատարմորեն կատարենք մեր պարտականությունները: Կանայք պետք է միասնական լինեն իրենց ամուսինների հետ, ամուսիններն էլ՝ իրենց կանանց հետ, որպեսզի աշխատեն այդ ուղղությամբ ազդեցություն թողնել իրենց երեխաների վրա . . . Իմ երեխաները չպետք է և չեն շեղվի ճանապարհից առանց իմ համաձայնության: Եթե նրանք շեղվեն, ապա դա կլինի իմ բողոքից հետո և իմ օրինակի հակառակ: Ես կաղերսեմ իմ երեխաներին, ես գործի կդնեմ իմ ողջ ուժը, որպեսզի այնպես անեմ, որ նրանք այնքան ճշմարիտ ու հավատարիմ լինեն այս Ավետարանին, որքան հնարավոր է, որ ես լինեմ, որովհետև առանց նրանց, Աստծո արքայությունում ես կզգամ, որ իմ ընտանիքը կատարյալ չէ . . . .

Ես կցանկանայի, որպեսզի իմ երեխաները և Սիոնի բոլոր երեխաները իմանային, որ այս աշխարհում չկա ավելի արժեքավոր բան իրենց համար, որքան Ավետարանի գիտելիքը, որը վերականգնվել է Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով երկրի վրա այս վերջին օրերին: Չկա ոչինչ, որ կարողանա համակշռել դրա կորուստը: Չկա ոչինչ երկրի վրա, որը կարողանա համեմատվել Հիսուս Քրիստոսի գիտելիքի գերազանցության հետ: Ուրեմն թող որ Սիոնի բոլոր ծնողները հետևեն իրենց զավակներին և ուսուցանեն նրանց Ավետարանի սկզբունքները, և որքան հնարավոր է այնպես անեն, որպեսզի նրանք կատարեն իրենց պարտականությունները, ոչ թե մեխանիկորեն, որովհետև նրանց դրդում են դա անել, այլ փորձեն երեխաների սրտում ներարկել ճշմարտության և Ավետարանի հանդեպ մնայուն սիրո ոգին, որպեսզի նրանք իրենց

պարտականությունները կատարեն ոչ թե, որովհետև դա հաճելի է իրենց ծնողներին, այլ որովհետև դա հաճելի է նաև իրենց:[11]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, հոգ տարեք ձեր երեխաների համար: Նրանց մանկուց սովորեցրեք ճշմարտության սկզբունքները, սովորեցրեք նրանց ապրել մաքուր կյանքով, հավատան Աստծուն և հավատքով կանչեն առ Տերը, որպեսզի կարողանան լիովին ընկերակցել Տիրոջ հետ և դառնան փրկության ժառանգներ Նրա արքայությունում:[12]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչպիսի՞ եղանակներով է «Աստծո արքայության հիմքը» դրվում տանը: Ինչպիսի՞ կարևոր սկզբունքներ պետք է ուսուցանվեն տանը, որոնք կնպաստեն ամրապնդել մեր հասարակությունը:
- Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել մեր երեխաներին սիրել Աստծուն և սիրել մյուս մարդկանց: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել նրանց պատվել քահանայությունը:
- Ի՞նչ խորհուրդ է տվել Նախագահ Սմիթը մեր տներում կրոնական նվիրվածությունը ավելացնելու և աշխարհիկը պակասեցնելու համար: Ինչպե՞ս եք փորձել աշխարհիկը երկրորդական տեղում դնել:
- Ինչպե՞ս կարող են ընտանեկան երեկոները օգնել ծնողներին կատարել Վարդապետություն և Ուխտեր 68.25–28-ում տրված Տիրոջ պատվիրանները: Ինչպե՞ս կարող են ընտանեկան երեկոներն օգնել երեխաներին կատարել Ելից Ի.12-ում տրված պատվիրանը:
- Ի՞նչն է օգնել ձեզ ավելի արդյունավետ ընտանեկան երեկոներ անցկացնել: Ինչպիսի՞ ուղեցույցներ է Նախագահ Սմիթը տվել ընտանեկան երեկոների համար:
- Ի՞նչ օրհնություններ են գալիս նրանց, ովքեր ընտանեկան երեկոներ են անցկացնում: Ինչպիսի՞ հետևանքներ կլինեն դրանք չանցկացնելու դեպքում:
- Ինչո՞ւ մենք երբեք չպետք է հրաժարվենք մեր ընտանիքներին դեպի ճշմարտություն բերելու մեր ծնողական պատասխանատվություններից: (Տես նաև Գ Հովհաննես Ա.4; Մոսիա 27.14:)
- Ինչո՞ւ պետք է ամուսիններն ու կանայք «միասնական լինեն . . . որպեսզի աշխատեն ազդեցություն թողնել իրենց երեխաների

վրա»: Ինչպե՞ս կարող են ամուսիններն ու կանայք ամրացնել այդ միասնությունը:

Հղումներ

1. "Editorial Thoughts," *Juvenile Instructor,* Nov. 1916, 739.
2. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:89.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 292.
4. In *Messages of the First Presidency,* 5:89.
5. *Gospel Doctrine,* 304.
6. "An Address: The Church of Jesus Christ of Latter-day Saints to the World," in Conference Report, Apr. 1907, 7.
7. In Conference Report, Apr. 1915, 5.
8. *Gospel Doctrine,* 301–2.
9. In *Messages of the First Presidency,* 4:337–39.
10. In *Messages of the First Presidency,* 4:347.
11. *Deseret News: Semi-Weekly,* 28 June 1898, 1; paragraphing added.
12. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 30 Aug. 1906, 545–46.



Ապակուց խաճանկար, ստեղծված 1913թ., Լոս Անջելեսի Ադամս ծխի հավաքատան համար, Կալիֆորնիա, ներկայացնում է Հայր Աստծո և Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի, հայտնվելը Զոզեֆ Սմիթին։

Հայրը և Որդին

Ժամանակակից հայտնությունը ուսուցանում է մեզ մեծ, հավերժական ճշմարտություններ մեր Երկնային Հոր և Նրա Որդու Հիսուս Քրիստոսի մասին:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը հաճախ էր զորավոր վկայություն բերում մեր հավատքի գերագույն էակների՝ Երկնային Հոր և Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի մասին: Նա ասել է. «Ես իմ ողջ հոգով հավատում եմ Հայր Աստծուն և մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին»:[1] Լինելով Եկեղեցու Նախագահ, նա ձգտում էր պարզաբանել Հոր և Որդու ինքնությունը և նրանց դերը, հատկապես հաշվի առնելով, որ որոշ սուրբ գրությունների հատվածներում Հիսուս Քրիստոսին անվանում են Հայր: Չգտնելով օգնել Սրբերին ավելի լավ հասկանալ Հոր և Որդու վերաբերյալ որոշ սուրբ գրություններ, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը 1916թ. հունիսի 30-ին հրատարակեցին «Հայրը և Որդին» վերնագիրը կրող վարդապետական մեկնաբանությունը: Այդ հայտարարությունը հաստատում էր Հայր Աստծո և Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի միջև գոյություն ունեցող միասնությունը, և պարզաբանում էր, նրանցից յուրաքանչյուրի առանձնահատուկ դերը փրկության ծրագրում: Այն նաև մեկնաբանում էր, թե ինչու է *Հայր* տերմինը սուրբ գրություններում վերագրվում և մեր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Այս գլխում բերված են մի քանի քաղվածքներ այդ մեկնաբանությունից Նախագահ Սմիթի այլ ուսմունքների հետ միասին, որը հաստատում էր, որ «Աստծո և Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի, մասին գիտելիք ձեռք բերելը . . . կյանքի առաջին և վերջին դասն է»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Սա է հավիտենական կյանքը՝ ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին։

Աստվածաշնչյան ճշմարտություն է. սա է հավիտենական կյանքը՝ ճանաչել միակ ճշմարիտ և կենդանի Աստծուն և Հիսուս Քրիստոսին, որին դու ես ուղարկել [տես Հովհաննես ԺԷ.3]։ Ես հավատում եմ, որ Վերջին Օրերի Սրբերը, սուրբ գրությունների ուսուցումների միջոցով և հայտնությունների շնորհիվ, որոնք ստացել են Մարգարե Զոզեֆ Սմիթի ձայնով, կարող են իմանալ ճշմարիտ և կենդանի Աստծո մասին և ճանաչել Նրան, ինչպես նաև Նրա Որդուն, որին Նա ուղարկեց աշխարհ, որին ճանաչելը հավիտենական կյանք է։[3]

Ոչ միայն անհրաժեշտ է հավատք ունենալ առ Աստված, այլ նաև առ Հիսուս Քրիստոս, Նրա Որդին, մարդկության Փրկիչը և Նոր Ուխտի Միջնորդը, ինչպես նաև առ Սուրբ Հոգին, որը վկայում է Հոր և Որդու մասին, «որոնք նույնն են բոլոր ժամանակներում և հավիտյան»։[4]

Մեր հոգիների Հայրը հավերժական էակ է մսից ու ոսկորներից կազմված մարմնով։

Աստված ունի մսից ու ոսկորից կազմված խորան։ Նա այնպիսի կազմվածք ունի, ինչպես մենք, որ այժմ գտնվում ենք մարմնում . . . Մենք Աստծո զավակներն ենք։ Նա հավերժական էակ է, առանց օրերի սկզբի կամ տարիների վերջի։ Նա միշտ եղել է, կա և միշտ կլինի։[5]

Ես չեմ հավատում ոմանց կողմից ընդունված այն վարդապետությանը, թե Աստված միայն Հոգի է, և Իր բնությամբ Նա լցնում է անծայրածիր տարածությունը, և ամենուր ներկա է, անհատապես, թե ոչ, քանզի ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է Աստված անձնավորություն լինել, եթե Նա լցնում է անծայրածիր տարածությունը և միևնույն ժամանակ ներկա է գտնվում ամենուր։ Խելամիտ չէ ֆիզիկական և աստվածաբանական համատեղելիության առումով պատկերացնել, որ անգամ Աստված, հավերժական Հայրը, որպես անհատ, կարող է լինել երկու վայրերում միևնույն ժամանակ։ Դա հնարավոր չէ։ Սակայն Նրա զորությունը տարածվում է անծայրածիր տարածքում։ Նրա զորությունը հասնում է իր բոլոր ստեղծագործություններին, և

նրա գիտելիքը ընդգրկում է նրանց բոլորին, և Նա կառավարում է նրանց բոլորին, և Նա գիտե ամեն բան։[6]

Աստված՝ հավերժական Հայրը, որին մենք կոչում ենք երկնային «Էլոհիմ» տիտղոս-անունով, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի և մարդկային ցեղի հոգիների Ծնողն է։ Էլոհիմը Հայրն է, բոլոր իմաստներով, որոնց մեջ այդպես անվանում են նաև Հիսուս Քրիստոսին, և Նա որոշակիորեն հոգիների Հայրն է։[7]

[Մենք] աղոթում ենք Հորը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով, որի պատկերով և նմանությամբ մենք ստեղծվել ենք կամ ծնվել ենք աշխարհում, և որի պատկերով ու նմանությամբ մենք կանք, քանի որ մենք Աստծո զավակներն ենք և հետևաբար պետք է նմանվենք Նրա Որդուն արտաքինով, ինչպես նաև հոգևոր առումով, եթե հնազանդվենք հավերժական ճշմարտության ավետարանի սկզբունքներին։[8]

Աստված՝ Հավերժական Հայրը մշտապես հոգում է ձեզ համար։ Նա հոգ է տանում ամբողջ աշխարհում իր ժողովրդի համար, և Նա կվարձատրի ձեզ արդարակեցության ու ճշմարտության օրենքներին հնազանդվելիս ձեր հավատարմության համար։[9]

Աստված՝ մեր Երկնային Հայրը, Արարիչն է։

Ամենազոր Տերը աշխարհի Արարիչն է, Նա է մեր բոլոր հոգիների Հայրը։ Նրա իրավունքն է թելադրել մեզ, թե ինչ պետք է մենք անենք, իսկ մեր պարտականությունն է՝ հնազանդվել և քայլել ըստ նրա պահանջների։ Սա բնական է, և ամենևին էլ դժվար չէ ընկալել։[10]

Սուրբ գրությունները պարզորոշ և մի քանի անգամ հաստատում են, որ Աստված է երկրի, երկնքի և դրանցում գտնվող բոլոր բաների Արարիչը։ Այդ իմաստով Արարիչը Կազմակերպիչ է։ Աստված ստեղծեց երկիրը որպես կազմակերպված մթնոլորտ, սակայն Նա, իհարկե, երկիրը կազմող նյութերի տարրական մասնիկները նախնական գոյության իմաստով չստեղծեց, քանզի «տարրերը հավերժ են» (տես ՎԿՈ 93.33)։[11]

[Մարդը] պարտական է Ամենազոր Տիրոջը իր բանականության և այն ամենի համար, ինչ նա ունի, քանզի Տիրոջն է երկիրը և նրա լիությունը [տես Սաղմոս ԻԴ.1]։ Աստված կազմակերպեց և ծրագրեց բոլոր բաները։[12]

Զգուշացնեմ մարդկանցից, որոնք . . . ստիպում են ձեզ մտածել կամ զգալ, որ Ամենազոր Տերը, որը ստեղծել է երկիրը և երկինքը,

և ստեղծել է բոլոր բաները, երկրի բաների վրա իր տիրապետության մեջ սահմանափակ է մահկանացու մարդու կարողության չափով:[13]

Հիսուս Քրիստոսը Անդրանիկն է հոգու մեջ և Աստծո Միածին Որդին է մարմնի մեջ:

Էլոհիմի հոգևոր զավակների մեջ, անդրանիկը եղել է և կա Եհովան կամ Հիսուս Քրիստոսը, որի հետ համեմատած մյուսները կրտսեր (զավակներն են):[14]

Հիսուս Քրիստոսը հոգիների Հայրը չէ, որոնք ստացել են կամ դեռ պետք է ստանան մարմին այս երկրի վրա, քանզի նա նրանցից մեկն է: Նա Որդին է, ինչպես նրանք որդիներն ու դուստրերն են Էլոհիմի:[15]

[Հիսուս Քրիստոսը] շատ ավելի մեծ է, քան մյուսներից որևէ մեկը, որովհետև (1) Նա է ավագը, որպես ամենամեծը կամ անդրանիկը; (2) Նա յուրահատուկ կարգավիճակ ուներ մարմնի մեջ, լինելով մահկանացու մոր և անմահ, կամ հարություն առած և փառավորված Հոր ժառանգը, (3) Նա ընտրվեց և կանխորոշվեց լինել մարդկության միակ Քավիչն ու Փրկիչը, և (4) Նա կատարելապես անմեղ էր:[16]

Վերջին Օրերի Սրբերի մոտ անգամ կասկած չի առաջացնում այն, որ Ամենազոր Տեր Աստվածը գոյություն ունի և անձնավորություն է, որը մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հայրն է: Վերջին Օրերի Սրբերը չեն կասկածում, որ Հիսուսը Աստծո Որդին է, ծնված Հորից մարմնի մեջ:[17]

Հիսուս Քրիստոսը Էլոհիմի Որդին է, հոգևոր ու մարմնավոր ժառանգը, այսինքն՝ Էլոհիմը Հիսուս Քրիստոսի հոգու Հայրն է, ինչպես նաև մարմնի, որի մեջ Հիսուս Քրիստոսը կատարեց Իր առաքելությունը մարմնում, և այդ մարմինը մահացավ խաչի վրա, որից հետո այն վերցվեց հարությամբ, և որն այժմ մեր Տիրոջ և Փրկչի հավերժական հոգու անմահացած խորանն է:[18]

Հիսուս Քրիստոսը ծնվել է իր մորից՝ Մարիամից: Նա մարմնից խորան ուներ: Նա խաչվեց խաչի վրա և նրա մարմինը բարձրացավ մեռելներից: Նա քանդեց գերեզմանի կապերը և առաջ եկավ կյանքի նորոգության մեջ, որպես կենդանի հոգի, կենդանի էակ, մարդ՝ մարմնով, մարմնի մասերով և ոգով, ոգին ու մարմինը դառնալով կենդանի և անմահ հոգի:[19]

Հայր Աստվածը . . . մեր հոգիների Հայրն է, և . . . Հայրը մարմնի մեջ Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի, որը միացրեց աստվածային անմահությունը մահկանացության հետ, ստեղծելով կապ Աստծո և մարդու միջև, հնարավոր դարձնելով մահկանացու հոգիների համար, որոնց վրա մահվան դատավճիռն էր դրված, ձեռք բերել հավերժական կյանք՝ հնազանդվելով Նրա օրենքներին: Ուրեմն եկեք փնտրենք ճշմարտությունը և քայլենք լույսի մեջ, ինչպես Քրիստոսն է լույսի մեջ, որպեսզի կարողանանք հաղորդակցվել Նրա հետ և միմյանց հետ, որպեսզի Նրա արյունը մաքրի մեզ բոլոր մեղքերից:[20]

Հայրը և Որդին մեկ են:

«. . . Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ, և Հայրը և ես մեկ ենք» [3 Նեփի 11.27]: Ես չեմ վախենում, որ որևէ գիտակից մարդ այս խոսքերը կմեկնաբանի հետևյալ կերպ, որ Հիսուսը և նրա Հայրը մեկ անձնավորություն են: Սակայն նրանք լոկ մեկ են գիտելիքով, ճշմարտությամբ, իմաստությամբ, հասկացողությամբ և նպատակով, ճիշտ ինչպես Տեր Հիսուսն էր հորդորում իր աշակերտներին լինել մեկ իր հետ, և լինել իրենում, որպեսզի նա լինի նրանց մեջ: Այս իմաստով եմ ես հասկանում այս ձևակերպումը, և ոչ թե ինչպես ոմանք են մեկնաբանում, որ Քրիստոսը և նրա Հայրը մեկ անձնավորություն են: Ես հայտարարում եմ ձեզ, որ նրանք մեկ անձնավորություն չեն, այլ որ նրանք երկու անձնավորություններ են, երկու մարմիններ, առանձին, անջատ և այնքան տարբեր, որքան ցանկացած հայր և որդի:[21]

[Հայրը և Որդին] մեկ են Իրենց հատկություններով: Նրանք մեկ են սիրով, գիտելիքով, ողորմածությամբ, զորությամբ և բոլոր այն բաներով, որոնք նրանց դարձնում են միասնական և հզոր, փառավոր և մեծ, որովհետև նրանցում կատարյալ է ողջ ճշմարտությունը, ողջ առաքինությունը և ողջ արդարությունը:[22]

Հիսուս Քրիստոսը կոչվում է Հայր:

«Հայր» տերմինը կիրառվում է Աստվածության համար և հայտնվում է սուրբ գրվածքներում լիովին տարբեր իմաստներով:[23]

Հիսուս Քրիստոսը Հայրն է երկնքի և երկրի:

Եհովան, որը Հիսուս Քրիստոսն է, Էլոհիմի Որդին, կոչվում է «Հայր» և անգամ «երկնքի և երկրի հավերժական Հայր» [տես

Մոսիա 15.4; 16.15; Ալմա 11.38–39; Եթեր 4.7]։ Նմանատիպ իմաստով Հիսուս Քրիստոսը կոչվում է «Հավիտենականության Հայր» (Եսայիա Թ.6; համեմատեք 2 Նեփի 19.6). . . .

. . . Հիսուս Քրիստոսը, որին մենք նաև գիտենք որպես Եհովա, Հոր, Էլոհիմի գործընկերն էր արարման աշխատանքում . . . Հիսուս Քրիստոսը, լինելով Արարիչ, նրան հետևաբար կոչում են երկնքի և երկրի Հայր . . . և քանի որ Նրա արարումները հավերժական բնույթ ունեն, Նրան լիիրավ կոչում են երկնքի և երկրի Հավերժական Հայր։[24]

Հիսուս Քրիստոսը նրանց Հայրն է, ովքեր ընդունում են Իր ավետարանը։

[Մեկ այլ] ենթատեքստում, որտեղ Հիսուս Քրիստոսը համարվում է Հայր, վերաբերում է Նրա և նրանց միջև հարաբերությանը, ովքեր ընդունում են Իր Ավետարանը, և հետևաբար դառնում են հավերժական կյանքի ժառանգները . . .

Այն, որ հնազանդվելով Ավետարանին մարդիկ կարող են դառնալ Աստծո որդիները, ինչպես որդիները Հիսուս Քրիստոսի, այնպես էլ, Նրա միջոցով, Նրա Հոր որդիները, տրված է մեր ժամանակների շատ հայտնություններում [տես ՎևՈւ 11.28–30; 34.1–3; 35.1–2; 39.1–4; 45.7–8]. . . .

Հավաստի բացատրությունը այս կապի, որը գոյություն ունի Հիսուս Քրիստոսի, որպես Հայր, և նրանց միջև, ովքեր կատարում են Ավետարանի պահանջները որպես Նրա զավակներ, տրվել է Աբինադիի կողմից, մեր Տիրոջ մարմնում ծնվելուց դարեր առաջ. « . . . Եվ ո՞վ պիտի լինի նրա սերունդը։ Ահա, ես ասում եմ ձեզ, ովքեր որ լսել են մարգարեների խոսքերը . . . և հավատացել, որ Տերը փրկագնելու էր իր ժողովրդին, և իրենց մեղքերի թողության համար սպասել են այդ օրվան, ես ասում եմ ձեզ, որ սրա՛նք են նրա սերունդը, կամ նրանք են Աստծո արքայության ժառանգները . . . » (Մոսիա 15.10–13) . . .

Մարդիկ կարող են դառնալ Հիսուս Քրիստոսի զավակները նորովի ծնվելով՝ ծնվելով Աստծուց, ինչպես ոգեշնչված խոսքերն են հավաստում [տես Ա Հովհաննես Գ.8–10]։

Նրանք, ովքեր ծնվել են Աստծուց՝ Ավետարանին հնազանդվելու միջոցով, կարող են քաջաբար նվիրվելով արդարակեցությանը, ձեռք բերել վեհացում և անգամ հասնել Աստվածագլխի կարգավիճակին [տես ՎևՈւ 76.58; 132.17, 20, 37]. . . .

Նոր ծնունդով, այսինքն՝ ջրից և Հոգուց ծնվելով, մարդկությունը կարող է դառնալ Հիսուս Քրիստոսի զավակները, Նրա

շնորհիվ լինելով «ծնված որդիներն ու դուստրերն Աստծո» [տես ՎևՈ 76.24; տես նաև Ա Կորնթացիս Դ.15; ՎևՈ 84.33–34; 93.21–22]. . . .

Եթե ճիշտ է Քրիստոսի որդիներ և դուստրեր անվանել նրանց, ովքեր ընդունում են Ավետարանը և ապրում են դրանով, իսկ այդ հարցում սուրբ գրությունները ճշգրիտ են և չի կարելի դրանք հակաճառել կամ չընդունել, ապա ճիշտ կլինի Հիսուս Քրիստոսին անվանել արդարների Հայր, քանի որ նրանք դարձել են Նրա զավակները, իսկ Նա դարձել է նրանց Հայրը երկրորդ ծնունդի՝ մկրտությամբ վերածնունդի միջոցով:[25]

[Հիսուս Քրիստոսը] մեր կրոնի հիմքն է և գլխավոր անկյունաքարը: Մենք նրանն ենք որդեգրման միջոցով, թաղվելով Քրիստոսի հետ մկրտությամբ, կրկին ծնվելով աշխարհում ջրից և հոգուց Քրիստոսի ավետարանի արարողությունների միջոցով, և այդպիսով, մենք Աստծո զավակներն ենք, Աստծո ժառանգներ և Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցներ մեր որդեգրման և հավատքի միջոցով:[26]

Առանց ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգին ստանալու, որը իրենից ներկայացնում է վերածնունդը, մենք Քրիստոսի ընտանիքից չենք, այլ օտարականներ, օտարված Աստծուց և նրա օրենքներից, և այդ ընկած վիճակում մենք պետք է մնանք, լինի դա մարմնում, թե հոգում, ժամանակի և հավերժության ընթացքում, եթե հնազանդություն չցուցաբերենք ծրագրի հանդեպ, որը մշակվել է երկնքում մարդկային ընտանիքի փրկագնման և փրկության համար:[27]

Ես գիտեմ, որ կարող եմ [փրկություն] գտնել միայն հնազանդվելով Աստծո օրենքներին, պահելով պատվիրանները, արդար գործեր կատարելով, գնալով մեր ուղեցույց ղեկավարի՝ Հիսուսի, Օրինակի և ամենքի Գլխավորի հետքերով: Նա է կյանքի ճանապարհը, նա է աշխարհի լույսը, նա է Դուռը, որով մենք կարող ենք մտնել, որպեսզի կարողանանք տեղ ունենալ Նրա հետ Աստծո սելեստիալ արքայությունում:[28]

Չկա ոչ մի ուրիշ անուն երկնքի տակ տրված, բացի այդ Հիսուս Քրիստոսից, որի միջոցով մարդ կարող է փրկվել կամ վեհացում ստանալ Աստծո Արքայությունում:[29]

Հիսուս Քրիստոսը Հայր է Աստծո կողմից տրված իշխանությամբ:

Մարդկային ընտանիքի հետ Իր բոլոր գործերում Հիսուսը, Որդին, զորությամբ և իշխանությամբ ներկայացրել է և դեռևս

ներկայացնում է Էլոհիմին, Իր Հորը: Սա ճշմարիտ է Քրիստոսի մասին, երբ Նա Իր նախաերկրային, նախամահկանացու և մարմին չստացած վիճակում էր, երբ Նա հայտնի էր որպես Եհովա, ինչպես նաև Նա մարմնավորման ժամանակ, և մահացածների թագավորությունում որպես անմարմին հոգի Իր գործերը կատարելիս, և այդ ժամանակից հետո Իր հարություն առած վիճակում [տես Հովհաննես Ե.43; Ժ.25, 30; ԺԴ.28; ԺԷ.11, 22; 3 Նեփի 20.35; 28.10; ՎԵՈՒ 50.43]: Այնպես որ Հայրն Իր անունը դրել է Որդու վրա, և Հիսուս Քրիստոսը խոսում և ծառայում էր հանուն Հոր և Հոր անունով, և եթե խոսենք զորության, իշխանության և Աստվածության մասին, Նրա խոսքերն ու գործերը եղել են և կան Հոր խոսքերն ու գործերը . . .

Այնուամենայնիվ այդ հասկացողություններից ոչ մեկը չի կարող փոքրագույն չափով անգամ փոխել Հայր-Որդի և Էլոհիմ-Հիսուս Քրիստոս հարաբերությունների օրինական փաստը:[30]

Իմ եղբայրներ և քույրեր, ես գիտեմ ապրում է Քավիչն իմ: Ես գիտեմ, ինչպես գիտեմ, որ ապրում եմ, որ նա անձնապես այցելել է մեր ժամանակի և օրերի մարդուն, որ մենք այժմ ամբողջովին կախված չենք անցյալի պատմությունից այն գիտելիքի համար, որը ունենք, որի մասին վկայություն է բերում Աստծո Հոգին, որը հորդում է բոլոր նրանց սրտերի մեջ, ովքեր Քրիստոսի ավետարանի ուխտի մեջ են մտնում: Սակայն մենք ունենք վերջերս նորացված վկայությունը և հայտնությունը երկնային տեսիլքների և, Հայր Աստծո և Որդի Քրիստոսի այցելությունը այս իրենց ոտքերի պատվանդան, և նրանք անձնապես հայտարարել են Իրենց էության, իրենց գոյության մասին, և նրանք ցույց են տվել իրենց փառքը: Նրանք մեկնել են իրենց ձեռքը, որպեսզի կատարեն իրենց աշխատանքը, Աստծո աշխատանքը, ոչ թե մարդու . . . . Սա իմ վկայությունն է ձեզ, իմ եղբայրներ և քույրեր, և ես բերում եմ իմ վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի անունով:[31]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ մեր Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին ճանաչելը հավիտենական կյանք է: Ինչպե՞ս է նրանց հասկանալը ազդում նրանց հետ մեր հարաբերության վրա:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ մեր Երկնային Հայրը հավերժական էակ է փառավորված, հարություն առած մսից ու ոսկորից կազմված մարմնով:

- Ինչպե՞ս ենք մենք օրհնվում, իմանալով որ Երկնային Հայրը մեր հոգիների Հայրն է:
- Ի՞նչ է նշանակում «Արարիչը Կազմակերպիչ է»:
- Ինչո՞վ է Հիսուս Քրիստոսը առանձնահատուկ Երկնային Հոր հոգևոր զավակների մեջ: Ի՞նչ կարողացավ անել Փրկիչը, քանի որ Նա ծնվել էր երկրի վրա, որպես Հոր Միածին Որդի մարմնում:
- Ինչպե՞ս են Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը մեկ: Ինչպե՞ս կարող ենք մեկ լինել Հոր և Որդու հետ: (Տես նաև Հովհաննես ԺԷ.22–24:)
- Ինչո՞ւ են Հայրն ու Որդին կոչվում Արարիչ: (Տես նաև Մովսես 1.32–33:)
- Ինչպե՞ս ենք մենք դառնում Քրիստոսի որդիներն ու դուստրները: (Տես նաև Մոսիա 5.5–8:) Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի «ապրենք Ավետարանով որպես Քրիստոսի որդիներ և դուստրեր» (Տես նաև Ա Հովհաննես Բ.3; Դ.7–8:)
- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսը խոսում Հոր խոսքերը, ասես Նա է Հայրը: Ի՞նչ է սա ասում Հոր և Որդու հարաբերության մասին:

Հղումներ

1. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 5.
2. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:354.
3. In Conference Report, Apr. 1916, 4.
4. *Gospel Doctrine,* 100.
5. *Gospel Doctrine,* 64.
6. *Gospel Doctrine,* 55–56.
7. "The Father and the Son: A Doctrinal Exposition by the First Presidency and the Twelve," *Improvement Era,* Aug. 1916, 934.
8. *Gospel Doctrine,* 57–58.
9. *Gospel Doctrine,* 53.
10. *Gospel Doctrine,* 80.
11. "The Father and the Son," 934.
12. *Gospel Doctrine,* 62.
13. *Gospel Doctrine,* 56.
14. *Gospel Doctrine,* 70.
15. *Gospel Doctrine,* 69.
16. "The Father and the Son," 941–42.
17. *Gospel Doctrine,* 4–5.
18. "The Father and the Son," 935.
19. *Gospel Doctrine,* 64.
20. *Gospel Doctrine,* 28.
21. *Gospel Doctrine,* 68.
22. In *Collected Discourses,* 4:66.
23. "The Father and the Son," 934.
24. "The Father and the Son," 935.
25. "The Father and the Son," 936–39.
26. *Gospel Doctrine,* 138.
27. *Gospel Doctrine,* 90–91.
28. *Gospel Doctrine,* 262.
29. *Gospel Doctrine,* 3.
30. "The Father and the Son," 939–40.
31. *Gospel Doctrine,* 505–6.

Շարունակական հայտնություն՝ հօգուտ Եկեղեցու

Մենք պետք է միասնական լինենք, ապրելով ըստ շարունակվող հայտնության, որը գալիս է Աստծուց Իր Եկեղեցուն՝ Նրա կողմից հաստատված ուղիներով։

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Ինչպես և նրանից առաջ Եկեղեցու հինգ Նախագահները, Զոզեֆ Ֆ. Սմիթը ստացել է շատ աստվածային ուղեցույցներ՝ Եկեղեցին և նրա անդամներին ղեկավարելու համար։ Ինչևէ, նրա կյանքի վերջին ամիսներին նրան Աստծուց բաժանող վարագույրը դարձել էր ավելի բարակ, քան առաջ էր։ 1918թ. հոկտեմբերի 4-ին, նրա մահից մի քանի ամիս առաջ, նա ասաց գերագույն համաժողովի ժամանակ. «Այսօր առավոտյան ես չեմ փորձի խոսել շատ բաների մասին, որոնց շուրջ ես խորհում եմ, և ես կհետաձգեմ մինչև այն ժամանակը, ապագայում, երբ կցանկանա Տերը, որ ես փորձեմ ասել որոշ բաներ, որ ունեմ իմ մտքում և սրտում։ Այս վերջին հինգ ամիսներին ես միայնակ չեմ եղել։ Ես ապրել եմ աղոթքի, խնդրանքի, հավատքի և վճռականության ոգով, և ես մշտապես հաղորդակցվել եմ Տիրոջ Հոգու հետ»։[1] Այդ ժամանակ էր, որ նա ստացավ մահացածների փրկագնման մասին տեսիլքը, որը դարձավ Վարդապետություն և Ուխտերի 138-րդ բաժինը։

Նախագահ Սմիթը խոնարհաբար ընդունում էր Աստծո մեծահոգությունը, որը հայտնում էր այն ամենը, ինչի կարիքը նա ուներ Եկեղեցին ղեկավարելիս. «Ես հաստատապես հավատում եմ, որ Աստված հայտնել է ինձ, իմ ներկայիս պաշտոնում, շատ փառահեղ բաներ, շատ սկզբունքներ և հաճախ ավելի շատ իմաստություն, քան իմ ունեցած իմաստությունն է։ Եվ ես հավատում եմ, որ Նա կշարունակի հայտնել, քանի դեռ ես կարող եմ լսել, երբ

Նա խոսում է, լսել, երբ Նա կանչում է, և ստանալ, երբ Նա տալիս է ինձ այն, ինչ Նա ցանկանում է տալ»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք հավատում ենք Աստծուց մարդուն տրվող ուղղակի հայտնությանը:

Մենք հավատում ենք . . . Աստծուց ուղղակիորեն մարդուն տրվող հայտնության սկզբունքին:

Ուղղակի եկող հայտնությունը ավետարանի մի մասն է, սակայն դա յուրահատուկ չէ միայն այս ժամանակաշրջանին: Դա վերաբերում է Ավետարանի բոլոր ժամանակներին ու ժամանակաշրջաններին: Ավետարանը չի կարող սպասավորվել, ոչ էլ Աստծո Եկեղեցին կարող է շարունակել գոյություն ունենալ առանց դրա: Քրիստոսն է Իր Եկեղեցու գլուխը, և ոչ թե մարդը, և այդ կապը կարող է պահպանվել ուղղակի և շարունակական հայտնության սկզբունքով միայն: Դա չի փոխանցվում ժառանգաբար, այն չի կարելի հանձնել հորից որդուն, ոչ էլ սերնդից սերունդ, այլ դա կենդանի, կենսական սկզբունք է, հայտնություն, որը կարելի է վայելել որոշակի պայմաններով միայն, այսինքն՝ բացարձակ հավատքով առ Աստված և հնազանդվելով Նրա օրենքներին ու պատվիրաններին: Այն պահին, երբ այդ սկզբունքը դադարում է գործել, Եկեղեցին մնում է առանց առաջնորդության, լինելով բաժանված իր հարատև ապրող գլխից: Նման իրավիճակում նա չի կարող շարունակել մնալ որպես Աստծո Եկեղեցի և կդադարի գոյություն ունենալ, ինչպես նավն առանց նավապետի, կողմնացույցի կամ ղեկի, որը ջրի վրա լողում է հանձնված մշտապես բախվող մարդկային տենչերի և աշխարհիկ շահերի, հպարտության և անմտության փոթորիկներին և ալիքներին, որն ի վերջո խորտակվում և կեղծ քահանայության և սնոտիապաշտության ափ է նետվում:[3]

Պետք է հասկանալ, որ Աստծո ծառաները իրենց պաշտոններում անմիջական աստվածային ուղեցույց ստանալու իրավունք ունեն, և այդպիսով, իրենց հավատքով նրանք միացնում են աստվածային իմաստությունը, որպես ուղղորդող ուժ, և իրենց ջանքերը, և երբ այդպես են վարվում, ժողովուրդը անհաղթահարելի է դառնում Աստծո ծառայության մեջ իրենց ձեռնարկած գործերում:

Ես իսկապես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանի յուրաքանչյուր սկզբունք, որը հայտնվել է մարգարե Զոզեֆ Սմիթի

միջոցով այս վերջին օրերին, Աստծուց է և ճշմարիտ է, և կմնա հավերժ, և հատկապես իր արժանիության, ինչպես նաև իր ճշմարտացիության շնորհիվ այն չի կարող կործանվել: Ես գիտեմ դա իմ ողջ էությամբ: Աստված ինձ կրկնակի անգամ հավաստիացրել է Իր Հոգու ներկայությամբ ու ազդեցությամբ, և իմ հոգում արթնացրած ոգեշնչմամբ, որ պետք է սիրել այն, ինչը բարի է, և հրաժարվել նրանից, ինչը չար է:[5]

Աստված հայտնում է Իր կամքը մարդկանց այսօր այնքան, որքան պատմության ցանկացած այլ ժամանակաշրջանում:

Վերջին Օրերի Սրբերը . . . ամբողջ աշխարհին վկայում են, որ Աստված ապրում է և Նա հայտնում է իր կամքը մարդկանց, ովքեր հավատում են Իրեն և ովքեր հնազանդվում են Իր պատվիրաններին այսօր այնքան, որքան ազգերի պատմության մեջ ցանկացած այլ ժամանակահատվածում: Սուրբ գրությունների ցուցակը չի լրացել: Աստված որևէ ժամանակաշրջանում երբեք չի հայտնել, որ այլևս դադարելու է խոսել մարդկանց հետ: Եթե մեզ թույլ է տրվել հավատալ, որ նախկինում նա խոսել է, ապա մենք պետք է հավատանք և հավատում ենք, որ Նա շարունակելու է խոսել, որովհետև Նա անփոփոխ է . . .

Ի՞նչ է հայտնությունը, եթե ոչ նոր ճշմարտությունների բացահայտում նրա կողմից, ով ամեն ճշմարտության աղբյուրն է: Ասել, որ չունենք նոր հայտնության կարիքը, հավասարազոր է ասելուն, որ մենք նոր ճշմարտությունների կարիքը չունենք, իսկ դա ծիծաղելի հայտարարություն է: Ճիշտ նույն կերպ մենք կարող ենք ասել, որ հայտնությունները, որոնք Աբրահամը ստացավ, բավական էր մարգարեների համար, որ Ենովքին տրված հայտնությունները բավական էին Նոյի համար, որի առաքելությունն էր կառուցել տապանը և ապաշխարություն քարոզել, կամ Մովսեսին ասված խոսքերը բավական էին բոլոր ժամանակների համար, կամ այն, ինչ Աբրահամը ստացավ, միանգամայն բավական էր իր զավակների համար բոլոր ժամանակներում: Սակայն դա այդպես չէ: Չնայած որ Աբրահամն օրհնվեց մեծ խոստումներով, Աստծո խոսքը ետ չպահվեց ոչ նրա որդի Իսահակից, ոչ էլ նրա թոռ Հակոբից: Ինչո՞ւ: Որովհետև նրանք չէին կարող իրականացնել իրենց առաքելությունը՝ հենվելով միայն իրենց հորը և ուրիշներին տրված Տիրոջ խոսքի վրա: Արդ, ինչպե՞ս կարող էր Հավատարիմների Հայրը կատարել իր գործը

Նոյի ստացած հրահանգներով։ Ի՞նչ օգուտ կլիներ Բաղաամին կամ Պողոսին իրենցից առաջ ապրած հայրապետների և մարգարեների միջոցով եկած հայտնություններից։ Ճիշտ է դրանք օգտակար էին եղել որպես պատմական ճշմարտություններ կամ դասեր, սակայն դա բավական չէր հատկապես նրանց համար։

Այնպես որ մենք, ժամանակակից մարդիկ, մեծապես կարիքն ունենք մշտական հայտնությունների, որպեսզի մենք ինքներս կարողանանք կատարել մեր առաքելությունը այնպես, որը ընդունելի կլինի մեր Հոր համար, և որպեսզի ավելի լավ կարողանանք իրագործել մեր փրկությունը, ինչպես նաև կարողանանք իմանալ Աստծո կամքը՝ Իր Եկեղեցու, Իր ժողովրդի և Իր նպատակների վերաբերյալ, ժողովուրդների համար։ Սրանք են հայտնության համար գոյություն ունեցող հազարավոր պատճառներից մի քանիսը։[6]

Աստված հայտնում է Իրեն աշխարհին՝ քահանայության օրինական ձևով հաստատված ուղիներով։

[Զոզեֆ Սմիթի] միջոցով . . . Տերը հայտնել է իրեն աշխարհին, և նրա միջոցով Նա ընտրել է Եկեղեցու առաջին երեցներին, այն տղամարդկանց, ովքեր սրտով ազնիվ էին, տղամարդիկ, ովքեր, Նա գիտեր, որ կընդունեն խոսքը և կաշխատեն Զոզեֆի հետ այս մեծ ու կարևոր գործում. և բոլոր նրանք, ովքեր կարգվել էին Քահանայությանը, և բոլոր նրանք, ովքեր նշանակվել էին այս Եկեղեցու որևէ պաշտոնում, ստացան իրենց իշխանությունը և իրավասությունը Աստծո կողմից հաստատված այդ ուղով, որտեղ գլխավոր դիրքում Զոզեֆն էր։ Սա է կարգը, և չի կարող այլ կերպ լինել։ Աստված չի բարձրացնի մեկ այլ մարգարե և մեկ այլ ժողովուրդ, այդ աշխատանքը կատարելու համար, որին մենք նշանակված ենք եղել։ Նա երբեք չի շրջվի նրանցից, ովքեր կանգնած են եղել ամուր ու հավատարիմ այս գործի հենց սկզբից, և ովքեր դեռևս ամուր և հավատարիմ կմնան, որքան որ արժանի են մնում այդ վստահությանը։ Իմ մտքում երբեք չեմ կասկածել նրանց հավատարմության վրա, որպես մեկ մարմին, քանզի եթե նրանցից ինչ-որ մեկը անարժան լիներ նրա աչքում, Նա կհեռացներ նրան իր տեղից և կկանչեր անդամներից մեկ ուրիշին գրավելու այդ պաշտոնը։[7]

Այն պահին, երբ մարդն ասում է, որ չի ենթարկվի օրինական հաստատված Եկեղեցու իշխանությանը, լինեն նրանք ուսուցիչներ, եպիսկոպոսներ, բարձրագույն խորհուրդ, Նրա քվորումը կամ

Առաջին Նախագահությունը, և իր սրտում պնդում է դա և արտահայտում է դա, այդ պահին նա կտրում է իրեն Քահանայության և Եկեղեցու արտոնություններից և օրհնություններից, և առանձնանում է Աստծո ժողովրդից, քանի որ անտեսում է այն իշխանությունը, որը Տերը հաստատել է Իր Եկեղեցում: Սովորաբար դրանք այն մարդիկ են, որոնց գլխում երևակայական [տարօրինակ] մտքեր են պտտվում, որոնք ոգեշնչում են ստանում (ներքևից), և ուղղակի հաճախ փափագում են ղեկավարել Եկեղեցին և դատել քահանայությունը: Մեզ համար, որպես անհատներ, միակ ապահով ուղին, Աստծո առաջ խոնարհ, արդարակյաց և հավատարիմ ապրելն է, որպեսզի ունենանք Նրա Հոգին այնքան, որ կարողանանք արդար ձևով դատել և տարբերել ճշմարտությունը անճշտությունից, ճիշտը սխալից:[8]

Երբեմն շատ ցավալի է տեսնել, թե ինչպես են Եկեղեցու հարգարժան անդամները, մարդիկ, որոնք պետք է դա ավելի լավ իմանային, թույլ տալիս իրենց դառնալ գայթակղիչ հոգիների գործիքը . . . Թվում է, մարդիկ դժվարությամբ են ըմբռնում Քահանայության գործերը, դրա օրինական իշխանությունը, դրա գործունեության շրջանակները և զորությունը, սակայն Հոգու լույսի ներքո դա հեշտ է հասկանալ: Սակայն մարդիկ, որոնք չեն հասկանում դա, հեշտորեն խաբվում են գայթակղիչ հոգիների կողմից, որոնք ամենուր են աշխարհում: Նրանց հանգեցնում են այն մտքին, որ հավատում են, թե ինչ-որ բան սխալ է, և հաջորդը, հայտնաբերում են, որ հատկապես իրենք են ընտրված ամեն ինչ շտկելու: Մարդու համար շատ ցավալի է հայտնվել նման ծուղակում, քանզի Վերջին Օրերի Սրբերի համար պետք է հասկանալի լինի, որ քանի դեռ Աստծո ծառաները ապրում են մաքուր կյանքով, պատվում են իրենց շնորհված Քահանայությունը, իրենց գիտելիքով լավագույնս մնծարում են իրենց պաշտոնն ու կոչումը, որն իրականացնելու համար նրանք պատշաճ կերպով ընտրվել են մարդկանց և քահանայության ձայնով, և սրբագործվել են Աստծո հավանությամբ, և քանի դեռ Տերը տեղեկություն ունի հաղորդելու մարդկանց զավակներին, կամ որևէ հրահանգներ տալու Իր Եկեղեցուն, նա կհաղորդի այդ ամենը քահանայության օրինական ձևով հաստատված ուղիներով. նա երբեք չի շրջանցի դա, քանի դեռ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին գոյություն ունի երկրի վրա իր ներկայիս կառուցվածքով:

Չարժէ, որպեսզի ինչ-որ մեկը վեր կենա և հայտարարի, որ ինքը հայտնող է, մարգարե, տեսանող, ոգեշնչված մարդ, և հայտնություն տա Եկեղեցին ղեկավարելու համար, կամ փորձի

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը Շվեյցարական Գերմանական Միսիայի միսիոներների և անդամների հետ, 1910թ. օգոստոսին: Նախագահ Սմիթը խորհուրդ տվեց Սրբերին լինեն միասնական և «ականջ դնեն Աստծո ծառաների ձայնին, որը հնչում է իրենց ականջում» (*Gospel Doctrine*, 261):

հրահանգներ տալ Եկեղեցու նախագահող իշխանություններին աշխարհի որևէ մասում, առավել ևս Սիոնի մեջ, որտեղ քահանայության կազմակերպությունները գրեթե կատարյալ են, ուր ամեն ինչ ամբողջական է, մինչև իսկ ճյուղի կազմակերպությունը:[9]

Աշխարհիկ, ինչպես նաև հոգևոր գործերում Սրբերը կարող են Աստվածային առաջնորդություն և հայտնություն ստանալ, որն անմիջականորեն վերաբերում է իրենց, և իրավունք չի տալիս նրանց ղեկավարել ուրիշներին, և որն ընդունելի չէ, եթե հակասում է Եկեղեցու ուխտերին, վարդապետությանը, կարգուկանոնին կամ հայտնի փաստերին, ապացուցված ճշմարտություններին կամ առողջ դատողությանը: Ոչ ոք իրավունք չունի դրդել Եկեղեցու անդամ իր ընկերներին՝ ներգրավելով նրանց ֆինանսական գործարքների կամ արժեթղթերի առքուվաճառքի մեջ, որտեղ որևէ տեսակի ռիսկ կա, խաբելու նպատակով հայտարարելով, որ աստվածային հայտնություն կամ տեսիլք է ստացել կամ էլ երազ է տեսել, հատկապես, երբ դա հակասում է հաստատված իշխանության ձայնին, լինի դա տեղական թե բարձրագույն: Տիրոջ Եկեղեցին «կարգուկանոնի տուն է» [տես ՎԵՈՒ

132.8]: Այն ղեկավարվում է ոչ թե անհատական պարգևով կամ հայտնություններով, այլ Սուրբ Քահանայության կարգով և զորությամբ, հաստատվելով Եկեղեցու ձայնով և քվեարկությամբ՝ նշանակված համաժողովների ժամանակ:[10]

Հայտնության ոգին կարող է միավորել ողջ մարդկային ընտանիքը Աստծո արքայությունում:

Տերն ասել է մեզ հայտնության մեջ Սարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով, որ եթե մենք մեկ չենք, մենք Նրանը չենք [տես ՎԵՈՒ 38.27]: Նա ասել է, որ մենք պետք է միասնական լինենք: Մենք պետք է մեկ լիննենք:[11]

Եթե իսկապես գործենինք [Հոգու] ազդեցությամբ և հետևեինք նրա մշտական թելադրանքին, մենք կլինեինք մեկ, մի կողմ կդնեինք վիճաբանությունները, պայքարները և եսասիրությունը, և մեր մերձավորի համար կհոգայինք այնքան եռանդով, որքան մեր իսկ բարիքի համար: Սակայն դեռևս մեր մեջ տեսնում ենք վեճեր, տարբեր մտքերի և կարծիքների բախումներ, մեկը մտածում է մի ձևով, մյուսը հակառակ ձևով, տարբեր մարդիկ տարբեր լույսի տակ են տեսնում նույն բանը, և այլն: Ինչո՞ւ է այդպես: Որովհետև ավետարանի ցանցը հավաքել է տարբեր տեսակի ձկներ, և որովհետև մենք միայն դպրոցականներ ենք, որովհետև մենք սովորել ենք առաջին տառերը Ավետարանի մեծ ծրագրի, այն էլ անկատար ձևով: Եվ մեր մտքերի ու դատողությունների տարբերության պատճառներից մեկն այն է, որ իբր ոմանք ունեն ավելի մեծ փորձ ու հասկանում են ճշմարտությունը ավելի լավ, քան մյուսները: Սակայն արդյո՞ք սա ասում է այն մասին, որ ավետարանը, որն ընդունել ենք մենք, չի պարունակում այն սկզբունքները, որոնք անհրաժեշտ են ողջ մարդկությանը ճշմարտության մեջ միավորելու համար: Ոչ, չի ասում: Որո՞նք են այն մեծ սկզբունքները, որոնք նախատեսված են ողջ մարդկային ընտանիքը միավորելու համար, և ստիպելու նրանց երկրպագել նույն Աստծուն, ամուր կառչել նույն խորհրդից ու կառավարվել նույն ձայնով: Դրանք են՝ հայտնության սկզբունքը, Իր ժողովրդին հայտնված Աստծո զորությունը, մարդկանց սրտերում հավատն առ այն, որ Աստծո իրավունքն է՝ կառավարել և թելադրել, և ոչ թե որևէ մարդու իրավունքն է ասել, թե ինչն ինչպես պետք է լինի, և մարդկանցից ամենևին չի պահանջվում կուրորեն հնազանդվել այդ սկզբունքներին, առանց գիտելիքի:[12]

Թող որ Սրբերը միավորվեն, թող նրանք ականջ դնեն Աստծո ծառաների ձայնին, որը հնչում է իրենց ականջում, թող որ ականջ դնեն նրանք խորհուրդներին և ուշք դարձնեն ճշմարտությանը:[13]

Ձգտեք ընկերություն անել և միասնական լինել Սուրբ Հոգու հետ: Թող որ այդ հոգին ջանասիրաբար փնտրեն և փայփայեն ինչպես ամենափոքր և ամենախոնարհ ընտանեկան շրջանակներում, այնպես էլ ամենաբարձր կազմակերպության և քվորումի անդամները: Թող որ այն ներթափանցի ընտանիքի եղբայրների և քույրերի, ծնողների և երեխաների, ինչպես նաև Առաջին Նախագահության և Տասներկուսի սրտերը: Թող որ այն մեղմացնի և հարթի Ցցերի Նախագահությունների և Բարձրագույն Խորհուրդների անդամների, ինչպես նաև միևնույն ծխում ապրող հարևանների միջև եղած բոլոր տարբերությունները: Թող որ այն միավորի երիտասարդներին և ծերերին, տղամարդկանց և կանանց, հոտը և հովիվը, ժողովրդին և Քահանայությանը երախտագիտության, ներողամտության և սիրո կապերով, այնպես որ Իսրայելը կարողանա զգալ Տիրոջ հավանությունը, և որպեսզի մենք բոլորս կարողանանք գալ Նրա առաջ բոլոր մարդկանց հանդեպ մաքուր խիղճ ունենալով: Այն ժամանակ չի լինի ոչ մի հիասթափություն օրհնությունների առումով, որոնք խոստացված են նրանց, ովքեր անկեղծորեն երկրպագում են Նրան: Նրանց կտրվեն Սուրբ Հոգու քաղցր հուշումները և Երկնքի գանձերը, հրեշտակների հաղորդակցությունը, կավելացվի ժամանակ առ ժամանակ, քանզի Նա խոստացել է դա և այն չի կարող չկատարվել:[14]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է հայտնությունը: Ի՞նչ է նշանակում ասել, որ հայտնությունը «կենդանի, կենսական սկզբունք է»:
- Ի՞նչ կպատահի Եկեղեցու հետ առանց ուղղակի և շարունակական հայտնության:
- Ինչպիսի՞ նշանակություն ունի մեզ համար, որ սուրբ գրությունների ցուցակը դեռևս չի լրացել: Ինչպե՞ս կարող ենք պատրաստել մեր սրտերը քահանայության հաստատված ուղիներով հետագա հայտնությունն ընդունելուն:
- Ինչո՞ւ էր շարունակական հայտնությունը կարևոր այն մարգարեների ժամանակներում, ինչպիսիք էին Նոյը և Մովսեսը:

Որո՞նք են այսօր կենդանի մարգարե ունենալու օրհնությունները: Ինչպե՞ս է ապրող մարգարեն օգնում մեզ հաղթահարել մեր օրերի դժվարությունները:

- Ինչո՞ւ պետք է Եկեղեցու համար հայտնությունը գա քահանայության հաստատված ուղիներով: Թեպետ անհատները «կարող են Աստվածային առաջնորդություն և հայտնություն ստանալ, որն անմիջականորեն վերաբերում է իրենց», ինչո՞ւ դա նրանց իրավունք չի տալիս ղեկավարել ուրիշներին: (Տես նաև ՎԿՈՒ 42.11:)
- Ինչպե՞ս են Եկեղեցու անդամները երբեմն մոլորության մեջ ընկնում քահանայության իշխանության իրենց հասկացողությամբ: Ինչպե՞ս կարող են անդամները խուսափել այդ ձևով խաբվելուց:
- Ինչպե՞ս կարող են ամբողջ աշխարհում Եկեղեցու անդամները միավորվել և դառնալ մեկ նպատակով և ճշմարտությամբ: Ինչպե՞ս է Սուրբ Հոգու ազդեցությունը հնարավորություն տալիս մեզ ավելի միավորված լինել: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք մեկ լիննենք: (Տես նաև ՎԿՈՒ 38.27:)

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1918, 2.
2. "President Joseph F. Smith on Revelation," *Millennial Star,* 6 Apr. 1905, 222.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 104–5.
4. "President Joseph F. Smith on 'Mormonism,' " *Millennial Star,* 19 June 1902, 387–88.
5. In Conference Report, Apr. 1909, 6.
6. "Editor's Table: Modern Revelation," *Improvement Era,* Aug. 1902, 805–7; paragraphing added.
7. *Gospel Doctrine,* 42.
8. *Gospel Doctrine,* 45.
9. *Gospel Doctrine,* 40–41.
10. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:285–86.
11. *Deseret News* (weekly), 13 Aug. 1884, 466.
12. *Deseret News* (weekly), 6 Mar. 1867, 74.
13. *Gospel Doctrine,* 261.
14. In *Messages of the First Presidency,* 3:244.

Եկեք հաղթենք ինքներս մեզ

Հարատև երջանկությունը բխում է ոչ մեր ֆիզիկական ցանկությունների բավարարումից, ոչ էլ աշխարհիկ հաճույքներից, այլ առաքինությունից, կյանքի մաքրությունից և Աստծո օրենքներին հնազանդվելուց:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1901–1918թթ. իր վարչական ծառայության ընթացքում, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին ավելի ու ավելի շատ էր անհանգստացնում աշխարհիկ ազդեցությունների ներխուժումը Վերջին Օրերի Սրբերի կյանք: Նա կույր չէր իր շրջապատի աշխարհիկ կենսակերպի հանդեպ: Նա տեսնում էր անհամեստությունը, նա լսում էր գռեհիկ լեզուն և ցավում էր հասարակության մեջ տարածում գտած շատ սովորությունների համար: Նա հորդորում էր Սրբերին՝ ինքնատիրապետում դրսևորել նման ազդեցությունների հանդիպելիս և ապրել բարոյական, առաքինի և մաքուր կյանքով:

Նա խոսում էր այն մասին, թե որքան կարևոր է Սրբերի համար լինել զուսպ իրենց զվարճանքների և ժամանցների մեջ, հեռու մնալ գռեհիկ լեզվից, մոլեխաղից, չարախոսությունից և անհամեստությունից: 1916թ. սեպտեմբերն Առաջին Նախագահությունը նամակ հղեց Եկեղեցու օժանդակ կազմակերպություններին, որտեղ ասվում էր, որ «բարելավման և վերափոխման անհետաձգելի կարիք կա մեր երիտասարդների մեջ, հատկապես հագուստի, հասարակական սովորությունների և վարքի առումով» և այդ կազմակերպություններին հրահանգներ տրվեցին միջոցներ ձեռք առնել այդ վերափոխումներին նպաստելու համար:[1]

Հրահանգներ տալով այդ կազմակերպություններին նա նաև ընդունում էր, որ «ընտանիքը . . . առավել քան մյուսները, պետք է ուղղություն տա բարոյական, սոցիալական վերափոխման և հագուստի հարցերում: Ընտանիքը պետք է առաջատար դեր խաղա կազմակերպությունների կողմից տարվող աշխատանքում,

Ռութն ու Նաոմին, Զուդիթ Սեհրի։
Ռութը խաղաղություն և երջանկություն գտավ մաքուր
կյանքով ապրելով և Աստծո օրենքներին հնազանդվելով։

որտեղ այդ կազմակերպությունները լոկ օժանդակում են ընտանիքին»:[2]

Նա զգուշացնում էր. «Մեր առաջին թշնամին գտնվում է մեր մեջ: Լավ կլինի, որ նախ այդ թշնամուն հաղթենք, ենթարկենք մեզ Հոր կամքին, և խստորեն հնազանդվենք կյանքի և փրկության սկզբունքներին, որոնք նա տվել է աշխարհին՝ մարդկանց փրկության համար»:[3]

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Եկեք հետևենք Փրկչին մեզ տիրապետելիս:

Ինձ թվում է, որ այն օրինակը, որը տվել է մեզ մեր Փրկիչը, այն օրինակն է, որին մենք պետք է ձգտենք հետևել: Արդյո՞ք Նա [չարաշահում էր] Իր բանականությունը մարմնի տենչանքները բավարարելու համար: Թե՞ ման էր գալիս բարիք գործելով՝ բուժելով հիվանդներին, բացելով կույրերի աչքերը, լեզու տալով համրին, մաքրելով բորոտներին, ներելով մեղքը, սփոփելով տառապյալներին: Արդյո՞ք դա չէր աշխարհին ցույց տված Նրա օրինակը: Արդյո՞ք այդ ուղին չէ, որ Նա պատվիրեց Իր աշակերտներին հետևել: Կարծում եմ, դա է: Նման ուղու մեջ կա ինչ-որ բան, որը գովասանքի արժանի է և ազնվազարմ: Այն կպարգևի ճշմարիտ ու տևական հաճույք, մինչ աշխարհի հաճույքները միայն ժամանակավոր և անցողիկ են:[4]

Ոչ ոք ապահով չէ, եթե ինքը չի տիրապետում իրեն, և չկա ավելի անողոք կամ ավելի սոսկալի բռնակալ, քան անկառավարելի ցանկությունը կամ կիրքը: Մենք կնկատենք, որ եթե տեղիք ենք տալիս մարմնի նվաստ ցանկություններին և հետևում ենք դրանց, ապա արդյունքը հաստատապես կլինի դառը, կործանող և ցավալի, թե՛ անհատի և թե՛ հասարակության համար: Դա վնասակար է որպես օրինակ, թե՛ ուրիշների և թե՛ անհատի համար, վտանգավոր և վնասակար է անզգույշների համար, մինչդեռ հրաժարվելով այդ ցանկություններից . . . ձգտեք ինչ-որ ազնվազարմ բանի, հնարավորության դեպքում բարիք գործելով մեր մերձավորների համար, հույս ունենալով ապագայի համար, գանձեր կուտակելով երկնքում, որտեղ ցեցն ու ժանգը չեն կարող ապականել, և որտեղ գողերը չեն կարող ներս սողոսկել և կողոպտել [տես Մատթեոս Զ.19–20], այս ամենը կպարգևի հարատև երջանկություն, երջանկություն այս աշխարհում և գալիք աշխարհում:[5]

Ինչ վերաբերում է ինձ, ես չեմ վախենում դրսի թշնամիների ազդեցությունից անքան, որքան ներսի թշնամու ազդեցությունից: Բացահայտ թշնամին, որին մենք կարող ենք տեսնել և հանդիպել կռվի դաշտում, շատ ավելի քիչ վտանգավոր է, քան դարանակալած, խաբեբա, դավաճան ու ենեգ թշնամին, որը թաքնված է մեր ներսում, որոնցից են մեր ընկած մարդկային բնույթի թուլությունները, որոնց շատ հաճախ է թույլատրվում առանց խոչընդոտների ի հայտ գալ, մթագնելով մեր միտքը, Աստծուց ու Նրա ճշմարտությունից հեռացնելով մեր սերը, մինչև որ կքանդի մեր հավատքի հիմքը և կցածրացնի մեզ՝ կտրելով մեր փրկագնման հույսը, թե այս և թե գալիք աշխարհում: Այդպիսին են այն թշնամիները, որոնց դեմ մենք բոլորս պետք է մարտնչենք, դրանք ամենագլխավորն են, որոնց դեմ պետք է պայքարենք աշխարհում, և որոնց հաղթելը ամենադժվարն է: Դրանք տգիտության պտուղներն են, որոնք հիմնականում առաջ են գալիս չհանդիմանված մեղքից ու մեր սրտի չարությունից: Մեզ վրա դրված աշխատանքն է՝ խեղդել մեր կրքերը, հաղթել մեր ներսի թշնամիներին, և հավաստիանալ, որ մեր սրտերը ուղիղ են Տիրոջ առաջ, որ մեր մեջ չկա ոչինչ, որը կվշտացնի Նրա Հոգին և կհեռացնի մեզ մեր պարտականությունը կատարելու ճանապարհից:[6]

Շատերն են սիրում հաճույքն ու կիրքն ավելի, քան Աստծուն: Նրանք ուրախանում են մարմնական տարփանքներով, իրենց ցանկությունների բավարարումով, ունենալով վտանգավոր ցանկություններ, ապրելով անբարոյական, անժուժկալ, խրախճանքներով և ամեն տեսակի ամբարշտությամբ լի կյանքով: Շատերը չեն իմանում ինչպես լինեն երջանիկ, չիմանալով ինչպես օգտագործել օրհնությունները, որոնք Աստված տվել է իրենց: Եթե նրանք ամբողջ աշխարհն ունենային, այն կօգտագործեին իրենց կրքերն ու ցանկությունները բավարարելու համար, ի կործանումն իրենց: Սակայն, եթե նրանք ունենային շիտակ հոգի, ապա կձգտեին օժանդակել մարդկության խաղաղությանն ու երջանկությանը և տարածել Ավետարանի լույսի ու ճշմարտության ազդեցությունը ամբողջ աշխարհում: Նրանք կսիրեին մաքրությունը, առաքինությունը, ազնվությունը, չափավորությունը և արդարակենցությունը:[7]

Զվարճանքը կյանքի նպատակ չէ, այլ միայն զանազանություն է բերում կյանք։

Ասացեք ինձ, թե ինչպիսի՞ զվարճանքներ եք սիրում ամենաշատը և արդյո՞ք ձեր զվարճանքները դարձել են ձեր կյանքի կառավարող տենչանքները, և ես կասեմ, թե ով եք դուք։[8]

Մեր զվարճանքների համար պետք է բնորոշ լինեն բարենպաստ և առողջ հասարակական մթնոլորտը։ Մենք պետք է պատշաճ ուշադրություն դարձնենք այն բանին, թե ում հետ ենք ընկերակցում զվարճանքի վայրերում, և մենք պետք է առաջնորդվենք մեր ծնողների, ընկերների և Եկեղեցու հանդեպ պատասխանատվության բարձր զգացումով։ Մենք պետք է վստահ լինենք, որ հաճույքները, որոնց մենք տրվում ենք, կրում են աստվածային հավանության կնիքը . . . Պետք է խույս տալ այն զվարճանքներին մասնակցելուց, որոնք թեպետ ինքնին, իրենց հասարարական միջավայրով պատշաճ են և օգտակար, սակայն դրանք անցկացնելու վայրերը բարի համբավ չունեն, իսկ մասնակիցները կասկածելի մարդիկ են և չեն առաջնորդվում պատշաճ զսպվածությամբ։

Գոյություն ունեն զվարճանքների սահմաններ, որոնք անցնելու դեպքում մենք չենք կարող ապահով լինել։ Անհրաժեշտ է վերահսկել զվարճանքների բնույթը և կրճատել դրանց հաճախականությունը, որպեսզի խուսափենք ավելորդությունից։ Դրանք չպետք է զբաղեցնեն մեր ամբողջ ժամանակը, կամ թեկուզ ժամանակի մեծ մասը։ Իրականում դրանք պետք է ոչ էական լինեն կյանքի պարտականությունների և պարտավորությունների հետ համեմատած, և երբեք չպետք է դառնան որոշիչ շարժառիթ կամ գործոն մեր հույսերի և ձգտումների համար։[9]

Ցանկացած ավելորդություն վնասակար է։ Չափավորություն պետք է լինի ամեն ինչում։ Զվարճանքը կյանքի նպատակ չէ, դրան պետք է տրվել միայն կյանք զանազանություն բերելու համար։ Երբ մարդիկ սովորում են մշտական կամ հաճախակի կրկնվող հաճույքներին, մարդկային գոյության իսկական նպատակները մոռացվում են և պարտականությունը դառնում է հոգնեցուցիչ և ոչ հաճելի։[10]

Եկեք ապրենք մաքուր կյանքով, խուսափենք ծայրահեղություններից և ազատվենք մեղքից:

Անպարկեշտ լեզուն և գռեհկությունը մեծ մեղքեր են Աստծո աչքում:

Մենք պետք է վերացնենք անպարկեշտ լեզուն, գռեհկությունը և նման ամեն բան, ինչ գոյություն ունի մեր մեջ, քանզի բոլոր նման բաները անհամատեղելի են ավետարանի հետ և անհարիր Աստծո ժողովրդին:[11]

Լեզուն, մտքի նման, իր հետքն է թողնում և հաճախ վերակենդանանում հիշողության մեջ և այն կարող է լինել տհաճ, եթե ոչ վնասակար, նրանց համար, ովքեր ստիպված են լսել անպարկեշտ խոսքերը: Մտքերը, որոնք ինքնին անպարկեշտ են, կարելի է բարձրացնել կամ նվաստացնել այն լեզվով, որը օգտագործվում է դրանք արտահայտելու համար: Եթե անհրաժեշտ է խուսափել անվայել արտահայտություններից, ապա գռեհկության մասին խոսելն ավելնորդ է:[12]

Գռեհիկ և անպարկեշտ լեզու օգտագործելու սովորությունը, . . . որ ձեռք են բերում որոշ երիտասարդներ, . . . ոչ միայն վիրավորում է բոլոր լավ դաստիարակված մարդկանց, այլ մեծ մեղք է Աստծո աչքում, և չպետք է գոյություն ունենա Վերջին Օրերի Սրբերի երեխաների մեջ:[13]

Ես ասում եմ Իսրայելի հայրերին և մայրերին, և տղաներին, որոնք ծնվել են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում. Ես ասում եմ դա տղամարդկանց և տղաներին ամբողջ աշխարհում, որքան հեռու որ կհասնեն իմ խոսքերը. Ես աղաչում եմ ձեզ, ես աղերսում եմ ձեզ, գռեհիկ ձևով մի վիրավորեք Տիրոջը, ոչ էլ վիրավորեք պատվավոր տղամարդկանց և կանանց:[14]

Ոչ մի ջանք չգործադրելով ինչ-որ բան ստանալու ցանկությունը վնասակար է:

Ոչ մի ջանք չգործադրելով կամ շատ քիչ բանի դիմաց ինչ-որ թանկարժեք բան ձեռք բերելու ցանկությունը վնասակար է: Եվ այնպիսի վարք, որը ուժեղացնում է այդ ցանկությունը, մեծապես նպաստում է մոլեխաղի ոգուն, որը և դառնում է իսկական կործանիչ դև հազարավորների համար: Կոպեկի դիմաց դոլար շահելու հույսը ցանկացած բախտախաղում մոլեխաղի տեսակ է հանդիսանում:[15]

Չարախոսությունը հակառակ է ավետարանի ոգուն։

Վերջերս ստացած մի նամակում հետևյալ խնդրանքն ու հարցն էր ուղղված ինձ. «Ես կցանկանայի, որ բնորոշեիք չարախոսությունը։ Թվում է, տարբեր կարծիքներ կան այդ տերմինի իմաստի վերաբերյալ։ Ոմանք հայտարարում են, թե քանի դեռ խոսում ես ճշմարտությունը տվյալ անձի մասին, դա չարախոսություն չէ, անկախ նրանից, թե ինչ ես ասում կամ ինչպես ես ասում։ Ավելի լավ չէ՞ր լինի, երբ իմանում ենք, որ տվյալ մարդը սխալ է գործել, գնալ նրա մոտ և աշխատել նրա հետ, քան գնալ ուրիշների մոտ և խոսել նրա սխալների մասին»։

Ոչինչ չի կարող այնքան հեռու լինել հոգուց և ավետարանի էությունից, որքան ենթադրելը, որ մենք միշտ արդարացի ենք, երբ ճշմարտությունն ենք խոսում մարդու մասին, որքան էլ վնասակար լինի ճշմարտությունը նրա համար։ Ավետարանը ուսուցանում է մեզ ապաշխարության հիմնական սկզբունքները, և մենք իրավունք չունենք վարկաբեկել մարդուն նրա մերձավորների աչքում, երբ նա իսկապես ապաշխարել է և Աստված ներել է նրան . . .

Որպես կանոն, անհրաժեշտություն չկա մշտապես խորհուրդներ տալու նրանց, ովքեր մեր կարծիքով ինչ-որ սխալներ են թույլ տալիս։ Նախ, մեր դատողությունները կարող են սխալ լինել, երկրորդը, հնարավոր է գործ ունենք մեկի հետ, որը լի է ապաշխարության ոգով և, գիտակցելով իր թուլությունը, մշտապես պայքարում է հաղթահարել այն։ Հետևաբար, անհրաժեշտ է ծայրաստիճան զգույշ լինել խոսքերում, որոնք հանդիմանում են ուրիշներին։ Իսկ ընդհանուր առմամբ, ավելի լավ է ասել, որ չարախոսությունը բնորոշվում է ոչ թե խոսքերով, այլ ոգով և նպատակով, որոնք դրդում են մեզ խոսել ուրիշների սխալների մասին։

Տղամարդը կամ կինը, որն ունի Աստծո Հոգին, շուտով իր անձնական զգացմունքներում կհայտնաբերի չարախոսության ոգին, որը ներկա է ուրիշների հասցեին կատարված ակնարկների մեջ։ Հետևաբար, չարախոսության հարցը, հավանաբար, լավագույնս բնորոշվում է հնագույն կանոնով, որն ասում է. «Որովհետև գիրն սպանում է, իսկ հոգին կենդանացնում է» [Բ Կորնթացիս Գ.6։][16]

Անհամեստությունը պետք է դատապարտեն բոլոր մարդիկ։

Անհամեստությունը հագուստի մեջ պետք է դատապարտեն բոլոր ծնողներն ու պարկեշտ մարդիկ։ Մարդու մարմնի անամոթ ցուցադրումը, որին միտումնավոր հետևում է ժամանակակից

հագնվելու ոճը, կամ ավելի շուտ հանվելու ոճը, ցուցանիշն է այդ զգայական և ստորացնող հակվածության, որը բարոյական անկման և հասարակական բարոյալքման պատճառ է դառնում, իսկ վերջիններս էլ ազգերին տանում են դեպի անվերադարձ կործանում: Թող որ փառահեղ Հազարամյակի փայլուն հեռանկարները չծածկվեն այնպիսի ստվերներով, ինչպիսիք են ահաբեկող բարքերը, զգեստները և այս սանձարձակ օրերի զվարճանքները:[17]

Իմ տեսակետից, այսօրվա նորաձևությունը նողկալի է, չար մտքեր առաջացնող, հաշվարկված է ստոր կրքեր և տարփանք արթնացնելու համար, և հեշտասեր մտքեր հարուցելու նրանց սրտում, ովքեր հետևում են նորաձևությանը և ովքեր հանդուրժում են այն . . . Դա ամոթալի է, և ես հույս ունեմ, որ Սիոնի դուստրները չեն ցածրանա մինչև այդ կործանարար մակարդակը՝ նման հագուստները և նորաձևությունը, քանի որ դրանք իրենց ազդեցությամբ բարոյալքող և նողկալի են:[18]

Մենք ժամանակ առ ժամանակ լսում ենք, որ ոմանք . . . աղճատում են իրենց տաճարային ներքնազգեստը, այն սուրբ ու անեղծ պահելու փոխարեն . . . Երբեմն մենք տեսնում ենք մեր լավ քույրերից ոմանք գալիս են այստեղ տաճար ամենավերջին և անհեթեթ նորաձևությամբ զարդարված, որը միշտ անարգել է մարդու աստվածային կազմվածքը: Կարծես թե նրանք չեն հասկանում, որ գալիս են Աստծո տուն:[19]

Մաքուր պարերը թույլատրվում են Սրբերի շրջանում:

Մենք կարծում ենք, ճիշտ ժամանակն է ուշադրությունը հրավիրել պարային երեկոների թեմային, որը զվարճանք է, թույլատրված Վերջին Օրերի Սրբերի շրջանում, սակայն պետք է որոշակի կանոններ խիստ պահպանվեն . . . . Ոչ մի դեպքում չպետք է ոգելից խմիչքներ թույլատրվեն: Այն պարերը, որոնք պահանջում են կամ թույլ են տալիս կիպ գրկախառնություն և անվայել մտքեր առաջացնող շարժումներ . . . պետք է խստորեն արգելվեն:[20]

Գրքերը ողնկիցներ են դեպի լավը և դեպի վատը:

Գրքերն իրենց տեսակով ընկերակիցներն են դառնում նրանց, ովքեր կարդում են դրանք, և կարդացողների սրտում առաջացնում են բարի կամ չար զգացումներ: Երբեմն այնպես է պատահում, որ ծնողները շատ ուշադիր են իրենց երեխաների շրջապատի հարցում և շատ անտարբեր են գրքերի հարցում, որ նրանք կարդում են: Ի վերջո, վատ գրքի ընթերցանության արդյունքում վատ ընկերներ կհայտնվեն:

Եթե տղան կարդում է տարօրինակ, անսովոր և անբնական գրավիչ գրականություն և ընկնում է դրա ազդեցության տակ, ժամանակի ընթացքում նա սկսում է ազդել ուրիշների վրա ևս: Այդ գրականությունը դառնում է ամեն տեսակի անպարկեշտ մտքեր առաջացնող չարի աղբյուր, որն առաջ է բերում չար արարքներ և առաջացնում է անբնական և նվաստացնող զգացումներ, որոնք միշտ դուրս են մղում լավը մարդկային սրտից և տեղ են տալիս վատին . . . Երբ մեր երեխաները կարդում են գրքեր, որոնք տարօրինակ, անբնական ու անցանկալի մտքեր են առաջացնում, մենք չպետք է զարմանանք, եթե իմանանաք, որ նրանք ինչ-որ տարօրինակ, անբնական կամ անսովոր արարք են կատարել: Հատկապես մտքերն ու զգացումներն են այն դաշտը, որտեղ մենք պետք է մարտնչենք աշխարհի չարի և գայթակղությունների դեմ, և մեր մտքերի ու զգացումների մաքրագործման համար պետք է հատուկ ջանքեր գործադրի յուրաքանչյուր հայր և մայր . . .

Պատմություն են պատմում Հնդկաստանում մի անգլիացի սպայի մասին, որը մի անգամ մոտեցել էր գրապահարանին, որպեսզի գիրք վերցնի այնտեղից: Երբ ձեռքը դիպչել էր գրքին, թունավոր օձը կծել էր նրա մատը: Մի քանի ժամից մատը սկսել էր այտուցվել: Այնուհետև այտուցվել էր ձեռքը, իսկ հետո թույնը տարածվել էր ամբողջ մարմնով, և մի քանի օր անց այդ սպան մահացել էր: Շատ էժանագին ու ցածրորակ գրքերում թունավոր օձեր կան քողարկված . . . Մեր հոգիների վրա թողած իրենց ազդեցությամբ նրանք թունավոր են, և ժամանակի հետ դրանք կհանգեցնեն բարոյական ու հոգևոր մահվան . . . Թող որ Սրբերը զգուշանան այն գրքերից, որոնք մտնում են իրենց տուն, քանի որ իրենց ազդեցությամբ այդ գրքերը կարող են լինել նույնքան թունավոր, որքան Հնդկաստանում անգլիացի սպայի մահվան պատճառ դարձած օձը:[21]

Ինչպիսի՞ մարդիկ ենք մենք պարտավոր լինել:

Միայն Աստծո օրենքներին հնազանդվելու միջոցով է, որ մարդիկ կարող են վեր բարձրանալ մահկանացու կյանքի չնչին թուլություններից և զգալ այն մեծ կապվածությունը, այն գթությունն ու սերը, որոնք աշխուժացնում են մարդկանց զավակների սիրտն ու ձգտումները: Ավետարանը, ինչպես որ այն վերականգնվել է, նպատակ ունի ազատ դարձնելու [մարդկանց], ազատ՝ ընտրելու բարին և թողնելու չարը, ազատ՝ դրսևորելու համարձակու-

թյուն ընտրելով այն, ինչը բարի է, որի շնորհիվ նրանք համոզված են իրենց ճիշտ լինելու մեջ, չնայած մարդկանց մեծ մասը աշխարհում կարող են նրանց մատով ցույց տալ և արհամարանքով ու ծաղրանքով վերաբերվել: Չէ՞ որ աշխարհի մարդկանց, հոսանքով լողալու համար հատուկ քաջություն չի պահանջվում:[22]

Թող Տերն օրհնի՛ ձեզ իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր: Մենք հավանություն ենք տալիս ցանկացած ծրագրին, որը նպաստում է կյանքի մաքրությանը, առ Աստված հավատքին և Նրա օրենքներին հնազանդվելուն . . .

. . . Ինչպիսի՞ մարդ ենք մենք պարտավոր լինել, ինչպիսի՞ անհատներ պետք է մենք լինենք: Արդյո՞ք չպետք է մեր դավանանքին արժանի օրինակ հանդիսանանք: Արդյո՞ք չպետք է ապրենք մաքուր կյանքով: Արդյո՞ք չպետք է մեր հոգում լինենք շիտակ, առաքինի, ազնիվ, Աստվածավախ և Աստվածասեր մեր կյանքի յուրաքանչյուր օրը և յուրաքանչյուր պաշտոնում, ուր կկանչվենք գործելու, պարտավոր չե՞նք արդյոք լավ օրինակ ծառայել: Պարտավոր չե՞նք արդյոք լինել Քրիստոսանման, քաջարի, հավատարիմ Ավետարանի յուրաքանչյուր սկզբունքին և հարգանք վայելենք աշխարհում և տանը . . . ճշմարիտ, այդպիսի մարդիկ պետք է մենք լինենք: Թող Աստված օգնի՛ մեզ այդպիսին լինել, սա է իմ աղոթքը:[23]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւմ Փրկիչը մեզ համար ինքնատիրապետման օրինակ հանդիսացավ: Ո՞րն է այն «թշնամին, որը գտնվում է մեր մեջ»: (Տես նաև Մոսիա 3.19:) Ինչպե՞ս կարող ենք հետևել Փրկչի օրինակին, այդ թշնամուն հաղթելու համար:
- Երբ ինքներս մեզ չենք տիրապետում, ինչպե՞ս կարող ենք վնասել մեզ և ուրիշներին: Երբ տիրապետում ենք ինքներս մեզ, ինչպե՞ս կարող ենք օրհնել ուրիշներին:
- Ինչպե՞ս կարող են զվարճանքները դառնալ «կառավարող տենչանքներ» մեր կյանքում: Ինչպե՞ս կարող են դրանք արտահայտել մեր բուն էությունը: Ի՞նչ դեր պետք է ունենան զվարճանքները մեր կյանքում:
- Ինչո՞ւ են «անպարկեշտ լեզուն և գռեհկությունը . . . մեծ մեղք Աստծո աչքում»: Եթե ձեր շրջապատում օգտագործում են անպարկեշտ լեզու, ինչպե՞ս կարող եք ցույց տալ նրանց, որ դա վիրավորում է ձեզ:

- Ինչո՞ւ է չարախոսությունը հակասում ավետարանի ոգուն: Ի՞նչ պետք է անենք ուրիշների սխալների մասին խոսելու փոխարեն:
- Ինչպե՞ս է համեստ հագուստի ոճը քաջալերում արդարակյաց ապրելաոճ: Ինչպե՞ս կարող են այսօրվա նորաձևության որոշ ոճեր իրենց ազդեցությամբ լինել «չար մտքեր առաջացնող» և «բարոյալքող»:
- Ինչպե՞ս կարող է գրքերի վերաբերյալ Նախագահ Սմիթի խորհուրդը վերաբերվել այսօրվա զվարճանքներին, ինչպիսին են՝ տեսաերիզները, երաժշտությունը, հեռուստատեսությունը, կինոնկարները, ամսագրերը և ինտերնետը: (Տես նաև ՎԿՈ 88.118): Ինչո՞ւմ է մեզանից համարձակություն պահանջվում, եթե մենք պետք է լողանք «աշխարհի մարդկանց հոսանքին» հակառակ:
- Ինչպե՞ս կպատասխանեիք հարցին. «Ինչպիսի՞ մարդիկ ենք մենք պարտավոր լինել» (Տես նաև 3 Նեփի 27.27):

Հղումներ

1. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:37.
2. In *Messages of the First Presidency,* 5:40.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 253.
4. *Deseret Evening News,* 8 Mar. 1884, 1.
5. *Gospel Doctrine,* 247.
6. *Gospel Doctrine,* 341.
7. *Deseret News: Semi-Weekly,* 24 Apr. 1883, 1.
8. *Gospel Doctrine,* 330.
9. *Gospel Doctrine,* 320.
10. In *Messages of the First Presidency,* 3:123.
11. *Gospel Doctrine,* 241.
12. *Gospel Doctrine,* 265.
13. In *Messages of the First Presidency,* 3:112–13.
14. "A Sermon on Purity," *Improvement Era,* May 1903, 504.
15. *Gospel Doctrine,* 326–27.
16. *Gospel Doctrine,* 263–64; paragraphing added.
17. In *Messages of the First Presidency,* 4:281.
18. *Gospel Doctrine,* 332–33.
19. *Gospel Doctrine,* 333.
20. In *Messages of the First Presidency,* 4:280–81.
21. *Gospel Doctrine,* 324–25.
22. *Gospel Doctrine,* 211.
23. In *Messages of the First Presidency,* 4:185–86.

Հայրում Սմիթը, Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի հայրը,
անջնջելի տպավորություն էր թողել իր որդու վրա, թեև տղան
ընդամենը հինգ տարեկան էր, երբ հայրումը նահատակվեց։

Հայրերն ընտանիքում

Յուրաքանչյուր հայր պետք է ջանքեր գործադրի որպես ընտանիքի գլուխ, իր սուրբ կոչմանն արժանի լինելու համար:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Իր ողջ կյանքի ընթացքում, Զոզեֆ Ֆ. Սմիթը իր հետ կրել է իր նահատակված հոր, Հայրում Սմիթի, հիշատակը: 1918թ. հունիսի 27-ին Նախագահ Սմիթը նախագահում էր Սոլթ Լեյք Սիթիի գերեզմանատանն անցկացվող հավաքում, որի ժամանակ իր հոր պատվին հուշարձան կանգնեցվեց: Այդ հավաքին նա ասաց. «Այսօր ես օրհնված եմ երեսունհինգ զավակներով, որոնք բոլորն էլ ապրում են և որքանով տեղյակ եմ, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու արժանի անդամներ են, և ես հավատացած եմ, որ նրանց սրտերը նվիրված են Տիրոջ գործին: Ես հպարտ եմ իմ զավակներով: Ես այսօր ունեմ ավելի քան ութսունվեց թոռներ . . . Ես հարուստ մարդ եմ. Տերն ինձ մեծ հարստություն է տվել՝ դա իմ երեխաներն են և երեխաներիս երեխաները . . . Ես ուզում եմ, որ դուք պարզապես նայեք իմ թոռների այս փոքր հոտին, ահա նրանք բոլորն այստեղ են: Ես սիրում են նրանց: Ես գիտեմ նրանց բոլորին: Ես միշտ նրանց տեսնելիս համբուրում եմ, ինչպես և իմ զավակներին»:[1]

Հետագայում նրա որդին, Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, որը 1970–1972թթ. ծառայել է որպես Եկեղեցու Նախագահ, նշել է, որ իր հոր սերն իր ընտանիքի հանդեպ «անսահման մեծ էր և անչափ մաքուր: Աշխարհը չգիտեր և չէր կարող հավանաբար իմանալ, իրենց հանդեպ նրա սիրո մեծությունը: Ամբարիշտ ու անառակ մարդիկ ծաղրում ու զրպարտում էին նրան, սակայն նրա ընտանեկան կյանքի իրական պայմանները և իր ընտանիքի հանդեպ նրա զարմանահրաշ սերը նրանց հասկացողությունից վեր էր: Օ՜, ինչպես էր նա աղոթում, որպեսզի իր զավակները միշտ *հավատարիմ* լինեին՝ հավատարիմ Աստծուն, իրենց ընկերներին, հավատարիմ միմյանց հանդեպ և իրեն . . . Թող որ նրանք, բոլորը

և առանձին-առանձին, հավատարիմ լինեն իրեն և այն գործին, որ նա այնքան հավատարմորեն է կատարել իր մահկանացու կյանքում, և որը եղել է ամենաթանկագին բանը իր ողջ կյանքի ընթացքում»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Ոչինչ չի փոխարինի տանը:

Ոչինչ չի փոխարինի տանը: Դրա հիմքը այնքան հին է, որքան աշխարհը, և դրա առաքելությունը նշանակվել է Աստծո կողմից դեռևս ամենավաղ ժամանակներում . . . Տունը ավելին է, քան բնակարանը, դա հաստատություն է, որը պաշտպանում է կայունությունը և սերը ինչպես անհատների, այնպես էլ ազգերի մեջ:

Չի կարող լինել իսկական երջանկություն, տնից դուրս և հեռու, և ամեն ջանք, որ գործադրվում է տան ազդեցությունը սրբացնելու և պահպանելու համար, վնեհացնում ու վսեմացնում է նրանց, ովքեր այդ ուղղությամբ տքնում են և զոհաբերություններ են կատարում: Տղամարդիկ և կանայք հաճախ ձգտում են փոխարինել ընտանեկան կյանքը ուրիշ ինչ-որ կյանքով: Նրանք հավատացած են, որ տունը սահմանափակում է իրենց ազատությունը, որ բարձրագույն ազատությունը դա ամբողջովին կամքի թելադրանքով շարժվելու հնարավորությունն է: Առանց ծառայության չկա երջանկություն, և չկա ավելի բարձր ծառայություն, քան այն, որը տունը դարձնում է աստվածային հաստատություն, և որը զարգացնում ու պահպանում է ընտանեկան կյանքը:

Իրենց տնային պարտականություններից խուսափող մարդկանց մոտ պակասում է սոցիալական բարօրության կարևոր տարր: Նրանք կարող են տրվել մասայական զվարճանքներին, սակայն իրենց հաճույքը մակերեսային է և ի վերջո կբերի հիասթափության: Գործերը երբեմն մարդկանց կտրում են տնից, սակայն տուն գնալու միտքը միշտ եղել է ոգեշնչման աղբյուր բարյացակամության և նվիրվածության համար:[3]

Իդեալական տանը հոգին չի սովում, ոչ էլ հրաշալի զգացմունքների աճն ու զարգացումն է կաթվածահար լինում, հօգուտ գռեհիկ և մարմնական հաճույքների: Հիմնական նպատակը ոչ թե մեծ նյութական հարստություն կուտակելն է, որն ընդհանրապես ավելի ու ավելի է հեռացնում ճշմարիտ, իդեալական, հոգևոր կյանքից, այլ հոգևոր հարստություն ստեղծելը, ազնվաբարո նվաճումների, սիրո և օգտակարության կարևորության գիտակցություն զարգացնելը:

Թանկարժեք նկարները, գոբելենները, անգին հնությունները, տարբեր զարդերը, արժեքավոր կահույքը, դաշտերը, նախիրները, ձիերը և հողերը չեն կազմում իդեալական տունը, ոչ էլ սոցիալական հաճույքները և հարմարավետությունը, որին այդքան համառորեն ձգտում են շատերը, այլ հոգու գեղեցկությունը, զարգացած, սիրող, հավատարիմ, ճշմարիտ հոգիները, օգնող ձեռքերը և կարեկցող սրտերը, սերը, որը իրենը չի որոնում, մտքերը և գործերը, որոնք դիպչում են մեր կյանքին իրենց հրաշալի դրսևորումներում, ահա դրանք են ընկած իդեալական տան հիմքում:[4]

Հորն է վստահված տանը նախագահելու իշխանությունը:

Չկա ավելի բարձր իշխանություն ընտանիքի կազմակերպության գործում, և հատկապես, երբ այդ կազմակերպության մեջ նախագահում է բարձր Քահանայության կրողը, քան հոր քահանայությունն է: Այդ իշխանությունը դարերով սրբագործված է, և բոլոր ժամանակաշրջաններում այն մեծ հարգանք է վայելում Աստծո ժողովրդի մեջ, և դրա կարևորությունը հաճախ շեշտվում է Աստծո կողմից ոգեշնչված Մարգարեների ուսմունքներում: Հայրապետական կարգը աստվածային ծագում ունի և կշարունակի ժամանակի և հավերժության մեջ: Այդ պատճառով առանձնահատուկ պատճառ գոյություն ունի, թե ինչու Աստծո ժողովրդի տներում տղամարդիկ, կանայք և երեխաները պետք է հասկանան այս կարգը և այս իշխանությունը, և ձգտեն այնպիսին դարձնել այն, ինչպես նախատեսել էր Աստված՝ փորձությամբ և նախապատրաստությամբ՝ իր զավակների բարձրագույն վեհացման համար . . .

Այս իշխանությունն իր հետ կրում է պատասխանատվություն և լուրջ պատասխանատվություն, ինչպես նաև իրավունքներ և արտոնություններ, և տղամարդիկ չեն կարող չափազանց օրինակելի լինել իրենց կյանքում կամ շատ մանրակրկիտ պատրաստվել ընտանեկան կազմակերպությունում այս կարևոր և Աստծո կողմից կարգված վարքի կանոնի հետ ներդաշնակ ապրելու համար: Այս իշխանության վրա որոշակի խոստումներ և օրհնություններ են հաստատվել, և նրանք, ովքեր աջակցում և հարգում են այդ իշխանությունը, ունենում են որոշակի իրավունքներ Աստվածային ողորմածության վրա, որը նրանք չեն կարող ունենալ, եթե չհարգեն և չպահեն օրենքները, որոնք Աստված է հաստատել տան կառավարման և իշխանության համար:[5]

Ես ցանկանում եմ . . . Եկեղեցու ծառայողներին ներշնչել, որ անհրաժեշտ է խորհրդակցել հայրերի հետ այն ամենում, ինչը վերաբերում է Քահանայությունում իրենց որդիների կոչմանը և Եկեղեցու գործերին, որպեսզի հարգանքը և ակնածանքը, որը երեխաները պետք է ցուցաբերեն իրենց ծնողների հանդեպ, չխախտվի Եկեղեցու կողմից և ոչ էլ նրա ծառայողների կողմից: Այդպիսով, ներդաշնակությունն ու բարի կամքը կգերիշխեն, և ընտանիքների և ընտանեկան կյանքի աջակցությունը, որի վրա Եկեղեցու կառավարումն է հիմնված և հավերժացած, կմիանա սուրբ Քահանայության կոչումներին, ապահովելով միասնություն, ամրություն և զորություն՝ իր բոլոր գործերում:

Հայրեր, կատարեք ձեր բոլոր պարտականությունները ձեր ընտանիքի հանդեպ:

Եթե [հայրերի] հետ է Տիրոջ Հոգին, իրենց աշխարհիկ պարտականությունները կատարելիս, ապա նրանք երբեք չեն անտեսի ոչ իրենց երեխաների մայրերին, ոչ էլ երեխաներին: Նրանք չեն թերանա նրանց սովորեցնելու կյանքի սկզբունքները, և նրանց համար միշտ լավ օրինակ կծառայեն: Ինքներդ մի արեք այն, ինչի համար ձեր տղային պիտի ասեք. «Սի՛ արա այդպես»: Ապրեք այնպես, որ կարողանաք ասել. «Որդիս, արա, ինչպես ես եմ անում, հետևիր ինձ, ընդօրինակիր ինձ»: Այդպե՛ս պետք է հայրերն ապրեն, մեզանից յուրաքանչյուրը: Եվ Եկեղեցու ցանկացած անդամի համար անպատվություն է, թուլություն և ամոթ, եթե հետևում է այն ուղուն, որը գիտե, որ ճիշտ չէ, և կցանկանար, որ իր երեխաները չհետևեն: Որքան ամոթ է այն տղամարդու համար, որը իր համար արգելք է ստեղծում չկատարելու իր բոլոր պարտականությունները նրանց հանդեպ, ովքեր սիրում են իրեն և որոնց նա պետք է սիրի իր կյանքից առավել, տրվելով անիրավ ցանկություններին, ստոր կրքերին, և կատարելով այնպիսի բաներ, որոնք չպետք է կատարի, և ինչից կփորձեր ետ պահել իր երեխաներին: Իմ եղբայրներ, կատարեք ձեր պարտականությունը, և Տերը կկատարի Իր պարտականությունը ձեր հանդեպ:[7]

Եղբայրներ, շատ քիչ կրոնական նվիրվածություն, սեր ու Աստվածավախություն կա տներում, փոխարենը անչափ շատ աշխարհիկություն, եսասիրություն, անտարբերություն և ակնածանքի պակաս կա ընտանիքում, այլապես այս ամենը երբեք այսքան շատ չէր դրսևորվի դրսում: Այդ պատճառով է, որ տունը վերափոխման կարիք ունի: Փորձեք այսօր և վաղը փոփոխություն

կատարել ձեր տանը՝ երկու անգամ աղոթելով ձեր ընտանիքի հետ, կանչեք ձեր երեխաներին և ձեր կանանց աղոթել ձեզ հետ: Օրհնություն խնդրեք ուտելիքի համար ամեն անգամ, երբ ուտում եք: Նախքան քնելը կամ առօրյա աշխատանքին գնալը տասը րոպե տրամադրեք Աստվածաշնչից, Մորմոնի Գրքից, Վարդապետություն և Ուխտերից մեկ գլուխ կարդալուն: Սնուցեք ձեզ հոգևորով ինչպես տանը, այնպես էլ հասարակական վայրերում: Թող սերը, խաղաղությունը, Տիրոջ Հոգին, բարությունը, գթասրտությունը, ուրիշների համար զոհաբերությունը առատորեն լցված լինեն ձեր ընտանիքներում: Հեռու վանեք կոպիտ խոսքերը, նախանձը, ատելությունը, չարախոսությունը, գռեհիկ լեզուն և զրպարտությունը, բամբասանքը, և թող Աստծո Հոգին տիրի ձեր սրտերում: Սովորեցրեք դա ձեր երեխաներին, հոգով և զորությամբ, ամրապնդելով և հաստատելով դա անձնական օրինակով: Թող նրանք տեսնեն, որ դուք անկեղծ եք, և ապրում եք ձեր քարոզած սկզբունքներով:[8]

Ես խնդրում եմ ձեզ և աղոթում եմ Աստծուն, որպեսզի օգնի ձեզ, հայրե՛ր և մայրե՛ր, ուսուցանելու ձեր երեխաներին Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներն ու ցուցումները, որպեսզի նրանք մնծանան առանց մեղքի՝ ի փրկություն: Ես աղոթում եմ, որպեսզի Աստված օգնի ձեզ դաստիարակել ձեր երեխաներին ճշմարտության սիրով, առաքինության սիրով, աշխարհի վարակիչ չարից ազատ, ախտից, հարբեցողությունից, ծխախոտ օգտագործելուց, ոգելից խմիչքներից, թմրանյութերից և ամեն տեսակի չարիքից ազատ, որպեսզի դուք սովորեցնեք նրանց լինել մաքուր իրենց կյանքում, իրենց սովորույթներում, որ նրանք կարողանան լինել սուրբ տաճարներում, որտեղ կենդանի Աստծո հոգին է բնակվում, և գտնել հաճելի ապաստան: Դա ձեր պարտականությունն է և իմ պարտականությունն է, դա յուրաքանչյուր տղամարդու պարտականությունն է՝ սովորեցնել իր ընտանիքին այդ ամենը, և դնել նրանց այն ուղու վրա, որով նրանք պետք է գնան:[9]

Թող որ Իսրայելի հայրերն ապրեն այնպես, ինչպես պետք է ապրեն, իրենց կանանց վերաբերվեն այնպես, ինչպես պետք է նրանց վերաբերվեն, իրենց տները հնարավորինս հարմարավետ դարձնեն, հնարավորինս թեթևացնեն իրենց կողակիցների բեռը, լավ օրինակ ծառայեն իրենց երեխաների համար, սովորեցնեն նրանց հավաքվել աղոթքով առավոտյան և երեկոյան, և երբ նստում են ճաշելու, թող ընդունեն Աստծո ողորմածությունը, որը տվել է իրենց այդ ուտելիքը, որ ուտում են, հագուստը, որ հագնում են, և ընդունեն Աստծո ձեռքը ամեն ինչում:[10]

Ընտանեկան կապերը նախատեսված են լինել հավերժ։

Աստված կանգնած է մարդկային ցեղի գլխին։ Մենք համարում ենք նրան բոլորի Հայր։ Մենք չենք կարող նրան ավելի մեծ հաճույք պատճառել, քան, եթե հարգենք և պատվենք մեր հայրերին ու մայրերին, որոնց շնորհիվ մենք գոյություն ունենք այստեղ երկրի վրա։[11]

Ընտանեկան կազմակերպությունը հիմնվում է ճիշտ կառավարման վրա, և հնարավոր չէ ավելի շատ շեշտել այն փաստը, որ ընտանիքում կառավարումը պետք է լինի որքան հնարավոր է կատարյալ, ինչպեսև՝ միշտ պետք է հարգանք ցուցաբերվի այդ կառավարման հանդեպ։[12]

Մեր [ընտանեկան] կապերը միայն այս կյանքի համար չեն նախատեսված, ժամանակի համար չեն, ինչպես մենք զատում ենք դա հավերժությունից։ Մենք ապրում ենք ժամանակի և հավերժության համար։ Մենք կազմում ենք ընկերակցություններ և հարաբերություններ ժամանակի և ողջ հավերժության համար։ Մեր կապերն ու ցանկությունները հարմարեցվում են և պատրաստվում են այնպես, որպեսզի տևեն ոչ միայն երկրային կամ մահկանացու կյանքի ընթացքում, այլ ողջ հավերժության ընթացքում։ Վերջին Օրերի Սրբերից բացի ովքե՞ր են խորհում այն մտքի շուրջ, որ մահից հետո մեր ընտանեկան կազմակերպությունը կշարունակի իր գոյությունը, որ հայրը, մայրը, երեխաները, կընդունեն միմյանց այն զգացմունքներով, որ տածում են միմյանց հանդեպ և այն հարաբերություններում, որում նրանք գտնվում են, որ այդ ընտանեկան կազմակերպությանը, Աստծո գործի մեծ ու կատարյալ կազմակերպության միավորին, վիճակված է շարունակվել ժամանակի և հավերժության ընթացքում։[13]

Ես ունեմ փառահեղ խոստում՝ ընկերակցել իմ սիրելիների հետ ողջ հավերժության ընթացքում։ Այս գործում հնազանդություն դրսևորելով, Հիսուս Քրիստոսի ավետարանով, ես իմ շուրջը կհավաքեմ իմ ընտանիքը, իմ երեխաներին, իմ երեխաների երեխաներին, մինչև որ նրանք կդառնան այնքան բազմաթիվ, որքան Աբրահամի սերունդը, կամ այնքան անթիվ, որքան ծովեզերքի ավազը։ Քանզի դա իմ իրավունքն է և արտոնությունը, և դա իրավունքն ու արտոնությունն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու յուրաքանչյուր անդամի, որը կրում է Քահանայություն և որը կմնծարի այն Աստծո աչքում։[14]

Ամեն դեպքում, լավ կատարել այն ամենը, ինչն Աստծո նախասահմանումով, պետք է լինի ամբողջ մարդկության ընդհանուր

վիճակը, դա է ամենաճշմարիտ մեծությունը: Լինել հաջողակ հայր կամ հաջողակ մայր ավելի բարձր կոչում է, քան լինել հաջողակ գեներալ կամ հաջողակ պետական գործիչ:[15]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչը պետք է լինի տանը հայրերի «հիմնական նպատակը»: Ինչպե՞ս է ընտանիքին ապահովելը անցնում աշխարհիկի սահմաններից դեպի հոգևորը: Ինչպե՞ս կարող է հայրն իր ընտանիքում «հոգևոր հարստություն» ստեղծել:
- Ինչպիսի՞ տարրեր են «ընկած իդեալական տան հիմքում»: Ինչո՞ւ է հոր պատասխանատվությունը՝ հետևել, որպեսզի այդ տարրերը զարգանան:
- Ինչպե՞ս կարող են կանայք և երեխաները աջակցել իրենց ընտանիքի գլխավորին: Ի՞նչ պետք է ամուսիններն ու հայրերն անեն, որպեսզի արժանի լինեն իրենց ընտանիքի անդամների աջակցությանը:
- Ինչպե՞ս է Տերը քահանայության օրհնություններ տալիս միայնակ կանանց:
- Ինչպե՞ս են հայրերն ամրանում և ընտանիքները օրհնվում, երբ քահանայության ղեկավարները խորհրդակցում են հայրերի հետ և նրանց հանդեպ հարգանք են ցուցաբերում:
- Ի՞նչ է այսօր անհրաժեշտ փոխել մեր տներում: Ի՞նչ կարող են հայրերն անել, որպեսզի հակազդեն աշխարհիկին և զարգացնել կրոնական նվիրվածությունը տանը:
- Ինչպիսի՞ օրհնություններ ենք մենք ստանում, իմանալով, որ մեր ընտանեկան կապերը կարող են շարունակվել հավերժ: Ի՞նչ կարող են հայրերն անել, որպեսզի ապահովեն իրենց ընտանիքի հավերժ լինելը:

Հղումներ

1. In “The Hyrum Smith Monument,” *Improvement Era,* Aug. 1918, 860–61; paragraphing altered.
2. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 4.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 300.
4. *Gospel Doctrine,* 303–4.
5. *Gospel Doctrine,* 286–88.
6. *Gospel Doctrine,* 162–63.
7. In Conference Report, Apr. 1915, 7.
8. *Gospel Doctrine,* 301–2.
9. In Conference Report, Oct. 1911, 132.
10. *Gospel Doctrine,* 288.
11. *Gospel Doctrine,* 162.
12. *Gospel Doctrine,* 162.
13. *Gospel Doctrine,* 277.
14. *Gospel Doctrine,* 108–9.
15. *Gospel Doctrine,* 285.

Երկրորդ Գալուստը, Հենրի Անդերսոնի։ Վերջին Օրերի Սրբերը հավատում են, որ Փրկիչը, Հիսուս Քրիստոսը, կրկին կգա աշխարհ զորությամբ և մեծ փառքով։

Պատրաստվել Քրիստոսի Երկրորդ Գալուստին

Մենք հավատում ենք Փրկչի, Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին, որը բարձրացավ երկինք և կրկին կգա՝ կառավարելու որպես Թագավորների Թագավոր և Տերերի Տեր:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը զորավոր վկայություն էր բերում Փրկչի Երկրորդ Գալուստի իրականության մասին: Նա խորհուրդ էր տալիս Սրբերին՝ ուսումնասիրել Աստծո մարգարեների խոսքերը Երկրորդ Գալուստի վերաբերյալ և պատրաստվել այդ իրադարձությանը մեծարելով իրենց ուխտերը: Նա ուսուցանում էր, որ «Եկեղեցին Փրկչի երկրորդ գալուստի հատուկ նախակարապետն է»[1] և պատրաստում է երկիրը Նրա հազարամյա կառավարման համար: Փրկչի գալուստը «հեռու չէ,- հայտարարել է Նախագահ Սմիթը,- քանի որ նրա գալուստի նշաններն այժմ շատ ակներև են»: Նա և Առաջին Նախագահության մյուս անդամները հորդորում էին Սրբերին «տքնել Աստվածավախությամբ, որպեսզի երբ Նա գա, կարողանանք լինել Նրա սուրբ շրջապատում: Քանզի Նա կգա ամպերի մեջ և կփրկի Իր սրբերին, մինչ Նրա հրեշտակները կհնձեն երկիրը և կմաքրեն այն մեղքից»:[2]

Հույսի և ուրախության ոգով Նախագահ Սմիթն ասել է. «Սխալների ամպերը, որ ծածկել էին քրիստոնեական աշխարհը թյուր կարծիքների և վիճաբանությունների այս դարերի ընթացքում, ցրվում են և լայն տեսադաշտ է բացվում տեսնելու Մեծ Հազարամյակի արագ գալուստը, որը կանխատեսել էին անցյալի բոլոր ոգեշնչված մարգարեները: Մենք շնորհավորում ենք ամբողջ աշխարհին այդ հազարամյակի օրվա լուսաբացի պայծառության և փառքի համար, և իր ճառագայթները ամբողջ երկրի վրա տարածելու համար»:[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Աստծո մարգարեները կանխատեսել են Քրիստոսի Երկրորդ Գալուստի նշանները:

Ինչ վերաբերում է . . . Աստծո դատաստանին, որը պատրաստ է թափվելու ազգերի վրա, եթե մարդիկ . . . կարդան մարգարեների կանխատեսումները այդ մասին, հատկապես նրանք, որ հիշատակվել են Մորոնի հրեշտակի կողմից Զոզեֆ Սմիթ Մարգարեի հետ խոսելիս, երբ այս ժամանակաշրջանը բացվեց, կարծում եմ լիովին կբավարարվեն և կհավաստիանան, եթե ինչ-որ չափով հավատք ունեն, որ այդ գալիք դատաստանները լոկ խորհրդածության կամ ենթադրության, կամ էլ հեռավոր դարերից եկած ավանդության արդյունք չեն, այլ դա փաստ է կամ շուտով կլինի, երբ Աստված ի կատար ածի Իր ծրագրերը աշխարհի ամբարիշտների և անաստվածների դեմ: Քանզի ոչ միայն մարգարեներն ու ոգեշնչված մարդիկ են հայտարարել այդ բաները, այլ այդ մասին հայտարարվել է Տիրոջ ձայնով և Աստծո ներկայությունից ուղարկված սուրբ սուրհանդակների կողմից, ինչպես ներկա, այնպես էլ հին ժամանակներում:

Մորոնի Հրեշտակը, որը այցելեց Զոզեֆ Սմիթին 1823թ. սեպտեմբերի 21-ին, այդ դատաստանների մասին սուրբ գրություններ վկայակոչեց, և հայտարարեց, որ մարգարեների կանխատեսումները դեռևս չեն կատարվել, այլ կկատարվեն այս ժամանակաշրջանում, և դրանց կատարման սկիզբն արդեն առձեռն է, այսինքն՝ դռան մոտ: Այդ մեջբերումների մեջ ես կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել Մաղաքիայի երրորդ գլխի վրա. «Ահա, ես ուղարկում եմ իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստէ իմ առաջին», և այլն: «Եվ ով է նորա գալու օրը տանողը, և ով է նորա երևալու ժամանակին կանգնողը, որովհետև նա հալեցնողի կրակին պես է, և թափիչների օճառին պես, Եվ նա նստելու է ինչպես արծաթ հալեցնող և մաքրող» և այլն: «Եվ ես կմոտենամ ձեզ դատաստանի համար, և ես ժիր վկա կլինեմ կախարդների ու շնացողների և սուտ երդում անողների դեմ. նաև վարձկանի վարձը, որբևայրիին և որբին զրկողներին, և օտարականին ճնշողներին, որոնք ինձանից չեն վախենում, ասում է Զորաց Տերը»: [Մաղաքիա Գ.1–3, 5:]

Եվ դարձյալ, Մաղաքիա, 4-րդ գլուխ, որն ամբողջությամբ կրկնեց Մորոնին. «Որովհետև ահա գալիս է այն օրը, որ վառուած է թոնրի պես, և բոլոր գոռոզներն ու չարագործները յարդի պես են

լինելու. և նորանց պետք է այրէ այն եկող օրը, ասում է Զորաց Տերը, որ նորանց համար արմատ և ոստ պիտի չթողէ»: [Մաղաքիա Դ.1:] Բացի այդ, Սորոնին վկայակոչեց Եսայիայի 11-րդ գլուխը, որտեղ այդ մասին մենք գտնում ենք հետևյալ խոսքերը. «Այլ արդարությամբ կդատե աղքատներին, և ուղղությամբ կհանդիմանէ երկրի խոնարհների մասին. և երկրին կզարկե իր բերանի գավազանովը, և իր շրթունքների հոգովը կմեռցնէ ամբարշտին»: [Եսայիա ԺԱ.4:]

Դարձյալ, Գործք Առաքելոց 3-րդ գլուխ, 22 և 23 հատվածները մեջբերվեցին Սորոնիի կողմից ճիշտ այնպես, ինչպես դրանք գրված են Նոր Կտակարանում. «Ձեր Տեր Աստվածը մարգարե վեր կկացնե ձեզ համար . . . նորան լսեցեք ամեն բանի համար՝ ինչ որ խոսի ձեզ: Եվ կլինի, որ ամեն անձ, որ այն մարգարեին չլսե, նա ժողովրդի միջիցը թող սատակուի»: Ինչպիսի ուժեղ և տեղին ասված խոսքեր են: Սորոնին հայտարարել է, որ այս մարգարեն Քրիստոսն է իր երկրորդ գալուստի ժամանակ, որ այդ սուրբ գրությունը դեռևս չի կատարվել, սակայն կկատարվի, երբ Մարդու Որդին գա, որպեսզի թագավորի երկրի վրա և դատի աշխարհը: Սորոնին նաև մեջբերել է Հովելից, 2-րդ գլխի 28 և 32 հատվածները, հայտարարելով, որ այս սուրբ գրությունը ևս պետք է շուտով կատարվի. «Եվ նշաններ պիտի տամ երկնքումը ու երկրիս վրա, արյուն և կրակ և ծուխի սյուներ, և այլն: Եվ պիտի լինի, որ ամեն ով որ կանչէ Տիրոջ անունը, կփրկուի. որովհետև Սիոն սարի վերա և Երուսաղեմումը փրկություն կլինի՝ Տիրոջ ասածին պես. և այն մնացորդների վրա, որոնց Տերը կկանչէ»: [Տես Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.36–41:]

Արդ, ինձ թվում է՝ այն, որ մենք չենք թողնվել հենվելու հայրերի ավանդությունների, լոկ գրված խոսքի, կամ էլ այդ կանխատեսումները ստուգելու անհուսալի միջոցների վրա, ոչ մի դեպքում չի նվազեցնում մեր հետաքրքրությունը այդ կենսական կարևոր հարցի կամ նրա կարևորության հանդեպ, այլ ավելի շուտ մեր հետաքրքրությունն է արթնացնում այն փաստը, որ երկնային հրեշտակը, Աստծո ներկայությունից ուղարկված իրական սուրհանդակը, կրկնեց հենց այս կանխատեսումները երկրի վրա գտնվող այս սերնդի մարդուն:

Մարդիկ ենթադրում են, թե հրեշտակի կողմից վկայակոչված այս սուրբ գրության հատվածներից մի քանիսը կատարվել են հին առաքյալների օրերին: Այսինքն, աշխարհը տգիտության մեջ էր այդ առումով: Ինչևէ, այս հարցի շուրջ բոլոր անորոշությունները պարզվել են, և ճշմարտությունը դարձել է հստակ բոլորի

համար։ Քանզի Մորոնին հայտնեց Ջոզեֆ Սմիթին, որ այդ սուրբ գրությունները չեն կատարվել, սակայն արդեն եկել է ժամանակը, որ դրանք կատարվեն՝ ամեն գիրը, և Քրիստոսի գալուստը, դատաստանների կատարումը, վերջին խաղաղ թագավորության հաստատումը, որի մասին այնտեղ խոսվում է, պետք է իրականանան այս ժամանակաշրջանում։ Երկրի ամբարիշտ ազգերի իշխանությունը կկործանվի։ Գահեր կսասանվեն, թագավորություններ կընկնեն, մինչդեռ Սիոնը կբարձրանա և կփայլի, կհագնի իր գեղեցիկ հանդերձները, կհագնի զորություն, իմաստություն, մեծություն և իշխանություն երկրի վրա։ Բաբելոնը կընկնի, որպեսզի այլևս չբարձրանա։[4]

Արդարակյացները ուշք կդարձնեն նշաններին և կպատրաստվեն Փրկչի գալուստին։

Շատ հրաբուխների ժայթքումները, երկրաշարժերը և մակընթացության ալիքները . . . այն նշաններն են, որ ինչպես Փրկիչն էր ասել, կնախորդեն իր երկրորդ գալուստին, թեև նա ասել էր, որ գալու է ինչպես գողը գիշերով, թեպետ նա տվել է որոշակի նշաններ, որոնք այնպես հաստատապես ցույց կտան նրա գալուստը, ինչպես ծառերի ծաղկելը՝ ամռան գալուստը։ Իմաստուններն ու խելամիտները ուշադրություն կդարձնեն այդ զգուշացմանը և կպատրաստվեն, որպեսզի հանկարծակիի չգան։ Ժամանակների նշանների մեջ իր նշանակությամբ վերջինը չէ այն նշանը, որ ավետարանը կքարոզվի աղքատներին, ի վկայություն բոլոր ազգերին։[5]

Վերջին Օրերի Սրբերը . . . հավատում են Սուրբ Գրքերի այն հաստատմանը, որ աղետներ կգան ազգերի վրա՝ որպես Քրիստոսի դատաստանի մոտենալու նշաններ։ Նրանք հավատում են, որ Աստված ղեկավարում է կրակով, երկրաշարժով, մակընթացություններով, հրաբխային ժայթքումներով և փոթորիկներով։ Նրանք ընդունում են Նրան, որպես բնության Տեր ու Կառավարիչ, և նրա օրենքները, և բացահայտորեն ընդունում են Նրա ձեռքը ամեն բանում։ Մենք հավատում ենք, որ Նրա դատաստանները կթափվեն, որպեսզի մարդիկ գիտակցեն Նրա զորությունն ու Նրա նպատակները, որպեսզի նրանք կարողանան ապաշխարել իրենց մեղքերից և պատրաստվեն Քրիստոսի երկրորդ գալստին, որը կգա արդարությամբ կառավարելու երկիրը։

Մենք հաստատապես հավատում ենք, որ Սիոնը, որը սրտով մաքուրներն են, խույս կտա, եթե պահի այն ամենը, ինչը Աստված կպատվիրի, այլապես անգամ Սիոնի վրա կգան «դառը

չարչարանքներ, ժանտախտ, պատուհաս, սուր, վրեժխնդրություն, լափող կրակ» (Վարդապետություն և Ուխտեր 97.26)։ Այս ամենը կլինի, որպեսզի նրա մարդիկ սովորեն քայլել ճշմարտության լույսի մեջ և իրենց փրկության Աստծո ճանապարհով։

Մենք հավատում ենք, որ այդ սոսկալի, բնական աղետները կգան մարդկանց վրա Տիրոջ կողմից, հօգուտ իր զավակների, որպեսզի արթնացնի նրանց լինել նվիրված ուրիշներին, զարգացնել իրենց մեջ եղած լավը, որպեսզի նրանք սիրեն ու ծառայեն Նրան։ Մենք հավատում ենք, որ դրանք Նրա վերջին դատաստանի ազդարարներն ու նշաններն են, և ուսուցիչները, որպեսզի սովորեցնեն մարդկանց արդարակյաց կյանքով պատրաստվել Փրկչի գալուստին, որ կգա կառավարելու երկիրը, երբ ամեն ծունկ կծալվի և ամեն լեզու կխոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է։

Եթե այդ դասերը ազդեցություն թողնեն մեզ վրա և մեր երկրի մարդկանց վրա, չարչարանքները, կյանքի ու չարքաշ աշխատանքի պտուղների կորուստը, տխուր, մեծ ու սարսափելի, ապարդյուն չեն լինի։[6]

Ես . . . վկայում եմ, որ եթե Վերջին Օրերի Սրբերը չապրեն իրենց կրոնով, չպահեն Աստծո և իրենց եղբայրների հետ կապած իրենց ուխտերը, չմեծարեն քահանայությունը, որն իրենք կրում են, և չփորձեն հավատարմորեն ենթարկվել Աստծո օրենքներին, ապա նրանք կլինեն առաջինը, որ կընկնեն դատաստանի տակ, քանի որ Նրա դատաստանը կսկսվի իր տնից։

Հետևաբար, նրանք, ովքեր ուխտ են կապել Տիրոջ հետ մկրտությամբ, և խախտել են այդ ուխտը, ովքեր հայտարարում են, որ սուրբ են և սուրբ չեն, այլ մեղավորներ և ուխտադրուժներ, և Բաբելոնի մեղքերի մասնակիցներ, անկասկած «կընդունեն դրա պատուհասիցը», քանզի գրված է, որ արդարները դժվարությամբ խույս կտան [տես Հայտնություն ԺԸ.4; ՎԵՈՒ 63:34]։ Սա է իմ վկայությունը այդ ամենի վերաբերյալ։ Մենք ապավինում ենք Տիրոջ խոսքին այս բաներում, և ոչ թե մարդու խոսքին, քանի որ ոչ միայն հրեշտակները, այլ Ամենազոր Աստված է խոսել երկնքից այս մեր դարաշրջանում, և մենք գիտենք, որ Նրա խոսքը ճշմարիտ է։

Այն, որ մենք որպես ժողովուրդ կարողանանք պատրաստվել ոչ միայն դատաստանին, այլ մեր Տիրոջ փառքին ու գալուստին, որպեսզի կարողանանք խույս տալ աղետներից, որոնք կթափվեն ամբարիշտների վրա, և հավատարիմ ծառայի գովասանքին արժանանանք, և արժանի համարվենք կանգնելու Տիրոջ ներկայության մեջ իր փառահեղ արքայությունում, սա է իմ աղոթքը։[7]

Մենք լսում ենք վտանգավոր ժամանակներում ապրելու մասին: Մենք ապրում ենք վտանգավոր ժամանակներում, սակայն ես չեմ զգում այդ ահաբեկության սարսափը: Սարսափն ինձ համար չէ: Ես մտադիր եմ ապրել այնպես, որ այն չտիրի ինձ: Ես մտադիր եմ ապրել այնպես, որ պաշտպանված լինեմ աշխարհի չարից, եթե ինձ համար հնարավոր լինի այդպես ապրել, հնազանդվելով Աստծո պատվիրաններին և նրա օրենքներին, որոնք հայտվել են դրանցով ղեկավարվելու համար: Կարևոր չէ, թե ինչ կպատահի ինձ հետ, եթե ես մնում եմ իմ պարտականությունները կատարելու գծի վրա, եթե գտնվում եմ Աստծո հետ շփման մեջ, եթե արժանի եմ իմ եղբայրների հետ շփվելուն, եթե կարողանում եմ անբիծ կանգնել աշխարհի առաջ, անարատ, զանց չառնելով Աստծո օրենքները, ի՞նչ նշանակություն ունի ինձ համար, թե ինչ կպատահի ինձ հետ: Ես միշտ պատրաստ եմ, եթե հասկացողության և վարքի այս շրջանակներում եմ: Դա ամենևին էլ կարևոր չէ: Հետևաբար, ես չեմ անհանգստանում, ոչ էլ զգում եմ վախի սոսկումը:

Տիրոջ ձեռքը բոլորի վրա է, և ամեն ինչում ես ընդունում եմ նրա ձեռքը: Ոչ թե նրանում, որ մարդիկ պատերազմում են, ոչ թե նրանում, որ ազգերը փորձում են կործանել ազգերին, ոչ թե նրանում, որ մարդիկ դավեր են նյութում իրենց ընկերների ազատությունների դեմ, ոչ մի նման բանում, սակայն Աստծո ձեռքը չի կարճացել: Նա կհսկի դրանցից բխող արդյունքները: Նա կիշխի նրանց վրա այնպես, որ դուք և ես այսօր չենք հասկանում, կամ չենք տեսնում, այն, ի վերջո, վերածելով բարիքի:[8]

Ավետարանին հնազանդվելը կպատրաստի աշխարհին Փրկչի գալուստին:

Ավետարանին հնազանդվելը կփրկի աշխարհը մեղքից, կվերացնի պատերազմը, կռիվն ու վեճը, և կնպաստի հազարամյակի թագավորության մուտք գործելուն: Այն կվերադարձնի երկիրն իր օրինական տիրոջը և կպատրաստի այն արդարների ժառանգության համար: Սրանք բոլորը Քրիստոսի Ավետարանի սկզբունքներն են, և այն հետևանքները, որոնց կհանգեցնի մարդկանց կողմից դրանք ճանաչելն ու ընդունելը:[9]

Ավետարանը փրկություն է, և առանց դրա ոչինչ գին չունի: Մենք մերկ ենք գալիս աշխարհ և նույն ձևով կգնանք այստեղից: Եթե շահեինք աշխարհի կեսն անգամ, դա չէր օգնի ոչ կյանքն ավելացնել այստեղ, ոչ էլ գալիք հավերժական կյանքը երաշխավորել:

Սակայն ավետարանը սովորեցնում է մարդկանց լինել խոնարհ, հավատարիմ, ազնիվ և արդարակյաց Տիրոջ առաջ և միմյանց հանդեպ, և որքանով որ կկատարվեն ավետարանի սկզբունքները, այնքանով էլ խաղաղությունն ու արդարությունը կտարածվեն և կհաստատվեն երկրի վրա, և մեղքը, հակառակությունը, արյունահեղությունն ու ամեն տեսակի ապականությունը կդադարեն, երկիրը կմաքրվի և պիտանի կդառնա երկնային էակների բնակության և մեր Տեր Աստծո գալու և այնտեղ բնակվելու համար, ինչպես և կլինի Հազարամյակի ժամանակ։[10]

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին . . . իր առաքելության մասն է համարում ճանապարհ պատրաստել Աստծո Որդու փառավոր գալստի համար, որպեսզի թագավորի երկրի վրա և բնակվի Իր ժողովրդի հետ։ Որպես նախապատրաստական այդ աշխատանքի մի մաս, Սրբերը հավատում են, որ Իսրայելը, որն այնքան երկար ցրվել է երկրի ազգերի մեջ, կհավաքվի միասին և կվերականգնվի այն հողերում, որոնք խոստացվել են իրենց հայրերին որպես հավիտենական ժառանգություն . . . .

. . . Նրանք, ովքեր ընդունել են Ավետարանը երկրի վրա . . . կմասնակցեն Աստծո նպատակների իրականացմանը։ Նրանք կտքնեն Նրա հետ միասին իրագործելու ոչ միայն իրենց փրկությունը ժամանակի և հավերժության մեջ, այլ ողջ Իսրայելի և հեթանոսների փրկությունը, որոնք կընդունեն Ավետարանը։ Նրանք կլինեն հին մարգարեությունների կատարողները։ Եսայիան Աստծո ոգեշնչման լույսի մեջ տեսավ նրանց և նրանց գործերը, երբ բարձրաձայն աղաղակեց. «Եվ կլինի օրերի վերջին, որ հաստատ կլինի Տիրոջ տան սարը՝ սարերի գլխին և կբարձրանա բլուրներիցը. և հոդեղով նրա մոտ կգնան բոլոր ազգերը» (Եսայիա Բ.2–3)։ Նրանց մասին էր ասում Երեմիան, երբ կրկնում էր Աստծո խոստումը Իսրայելին, որը կկատարվի վերջին օրերին. «Ես ձեզ կառնեմ՝ քաղաքից մեկին, և ազգատոհմից՝ երկուսին, և ես ձեզ կտանեմ Սիոնը։ Եվ ձեզ հովիվներ կտամ՝ իմ սրտի համեմատ, և նորանք կհովուեն ձեզ գիտությունով և իմաստությունով» (Երեմիա Գ.14–15)։[11]

Տերը . . . հրաման է արձակել, որը, ըստ Նրա խոսքերի, Իր ժողովուրդը պետք է իրագործի. որ հենց այդ ժամից նրանք կսկսեն հաղթել իրենց բոլոր թշնամիներին, և որքան նրանք կշարունակեն հավատարմորեն պահել Նրա օրենքները, որ Նա տվել էր Իրենց, հրամանագրվել է, որ նրանք կհաղթեն, մինչև իրենց բոլոր թշնամիները կհպատակեցվեն, կհպատակեցվեն ոչ թե բռնու-

թյամբ, կամ կռվի ոգով, կամ էլ պատերազմով, այլ կհպատակեցվեն հավերժական ճշմարտության զորությամբ, Ամենազոր Աստծո մեծությամբ ու զորությամբ . . . Արդարակյացների և Աստծո արդար ուխտյալ ժողովրդի աճող զորությունը կմեծացվի և կավելացվի, մինչև որ աշխարհը կխոնարհվի և կընդունի, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ կա ժողովուրդ, որը պատրաստվում է մեկ անգամ ևս Նրա աշխարհ գալուն, որը կլինի զորությամբ ու փառքով [տես ՎԵՈՒ 103.5–8]:[12]

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին պարտիզանական եկեղեցի չէ: Դա աղանդ չէ: Դա *Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին* է: Դա այսօր աշխարհում գոյություն ունեցող միակ եկեղեցին է, որը կարող է օրինական ձևով կրել և կրում է Հիսուս Քրիստոսի անունը և նրա աստվածային իշխանությունը: Ես կատարում եմ այս հայտարարությունը ամենայն պարզությամբ և ազնվությամբ ձեր և ամբողջ աշխարհի առաջ, որքան էլ որ դառը լինի այդ ճշմարտությունը նրանց համար, ովքեր հակառակվում են մեզ և ովքեր պատճառ չունեն նման հակառակության համար: Այնուամենայնիվ դա ճիշտ է և մնում է ճիշտ, մինչև որ նա, որի իրավունքն է կառավարել երկրի ազգերի և Աստծո զավակների մեջ ողջ աշխարհում, կգա և կվերցնի կառավարման ղեկը և կընդունի հարսնացուին, որը պատրաստ կլինի Փեսացուի գալուն:[13]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր, որ Աստծո մարգարեները «ինչպես ներկա, այնպես էլ հին ժամանակներում» կանխատեսել են Փրկչի Երկրորդ Գալուստը:
- Ի՞նչ նպատակով են մեզ տրվել Երկրորդ Գալուստի նշանները: Ո՞վ կհասկանա դրանք որպես Փրկչի գալու նշաններ: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ նշանների մասին տեղեկությունը մեր կյանքում:
- Ինչպե՞ս կարող են բնական աղետները լինել «հօգուտ [Աստծո] զավակների»: Ինչպե՞ս պետք է արձագանքենք, երբ դրանք մեզ վրա գան:
- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի կարողանանք «խույս տալ աղետներից, որոնք կթափվեն ամբարիշտների վրա»:
- Ի՞նչ օրհնություններ կգային աշխարհ, եթե մարդիկ հնազանդվեին ավետարանի սկզբունքներին:

- Ինչպե՞ս է Աստված «հսկում» չարից բխող արդյունքները, դրանք «ի վերջո վերածելով բարիքի»:
- Ինչպե՞ս Սրբերը ի վերջո կհպատակեցնեն իրենց բոլոր թշնամիներին:
- Ինչո՞ւ է Երկրորդ Գալուստը և «մեծ» և «ահեղ» օր (ՎԵՈՒ 110.16):
- Ի՞նչ կարող է մեզանից յուրաքանչյուրը անել, որպեսզի օգնի պատրաստել աշխարհը Փրկչի Երկրորդ Գալստին:

Հղումներ

1. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:154.
2. In *Messages of the First Presidency,* 3:287.
3. In *Messages of the First Presidency,* 4:294.
4. In Conference Report, Apr. 1880, 95–96; paragraphing added.
5. In *Messages of the First Presidency,* 4:132.
6. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 55.
7. In Conference Report, Apr. 1880, 96.
8. *Gospel Doctrine,* 89.
9. *Deseret News: Semi-Weekly,* 19 Feb. 1878, 1.
10. *Gospel Doctrine,* 84–85.
11. "President Joseph F. Smith on 'Mormonism,' " *Millennial Star,* 19 June 1902, 385–86.
12. In Conference Report, Apr. 1902, 2.
13. *Gospel Doctrine,* 137.

Երկու հազար պատանի զինվորները, Արնոլդ Ֆրայբերգ։ Հելամանը գրել է այն պատանիների մասին, որոնց նա առաջնորդել է ճակատամարտ. «Նրանք ավելի շատ մտածում էին իրենց հայրերի ազատության մասին, քան իրենց կյանքի մասին. այո, նրանք սովորեցվել էին իրենց մայրերի կողմից, որ եթե նրանք չկասկածեին, Աստված կազատեր նրանց» (Ալմա 56.47)։

Անհանգիստ ժամանակներում Ավետարանը խաղաղություն է բերում աշխարհ

Անհանգիստ ժամանակներում Հիսուս Քրիստոսի ավետարանը խաղաղություն է բերում աշխարհ:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Իր մահից առաջ, վերջին տարիներին, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հաճախ էր ցավով անդրադառնում Առաջին Համաշխարհային պատերազմի պատճառած տառապանքիներին: Եկեղեցու շատ անդամներ էին ներքաշվել պատերազմի մեջ հակառակ կողմերից, և հարյուրավոր մարդիկ կորցրեցին իրենց կյանքը: Նախագահ Սմիթի որդիներից մի քանիսը ծառայել են զինված ուժերում, և նրանցից մեկը երկու անգամ վիրավորվել է մարտում:

Այդ ժամանակ Սրբերին ուղղված իր Սուրբ Ծննդյան ուղերձում Առաջին Նախագահությունն ասաց. «Անհամեմատելիի ծնունդը տոնելու այս ժամանակահատվածում պատերազմի ամպերը ստվերել են մեր ուրախության լույսը, մթագնել Եվրոպայի երկինքը, և մեր երգերը, ուրախության ու բարի կամքի ողջույնները հնչում են հրանոթների որոտների, վիրավորների և մահացողների ծանր հոգոցների տխուր աննրդաշնակության մեջ, որոնք թեև արձագանքում են հեռվից, սակայն կեղեքում են մեր հոգիները, երբ սարսափելի նորություններ են գալիս օվկիանոսի այն կողմից: Ազգերը բարձրանում են ազգերի դեմ, եղբայրները՝ եղբայրների դեմ, Քրիստոնյաները՝ Քրիստոնյաների դեմ, յուրաքանչյուրն իր արյունալի կռվում օգնություն աղերսելով սիրո Աստծուց և ձգտելով ունենալ Խաղաղության Իշխանի ընկերակցությունը: Ինչպիսի՜ սոսկալի տեսարան է բացվել հրեշտակների բազմության առաջ, որոնց երգչախումբը Բեթլեհեմի մանկան

ծնունդի ժամանակ երգում էր «մարդկանց մեջ հաճություն» անմահ երգը»:[1]

Նախագահ Սմիթը ապրեց մինչև այն օրը, երբ լսեց զինադադարի կնքման մասին լուրը, որը վերջ դրեց զինված գործողություններին և կյանքերի ու սեփականության կործանմանը: Զինադադարը ստորագրվեց 1918թ. նոյեմբերի 11-ին, նրա մահից ութ օր առաջ:

Այդ ժամանակահատվածում նա սովորեցնում էր Սրբերին, որ իսկական խաղաղությունը գալիս է միայն Հիսուս Քրիստոսի ավետարանը ընդունելու և ըստ դրա ապրելու արդյունքում: Զոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, որը հետագայում դարձավ Եկեղեցու Նախագահ, ասել է իր հոր մասին. «Նրա հոգին հեզ էր ու բարի: Հնարավոր չէր Իսրայելի ողջ տարածքում գտնել ավելի կարեկցող հոգի, քան նա էր, որը տառապում էր տառապյալի հետ, որն ավելի պատրաստակամ էր օգնելու անօգնականներին իրենց բեռը կրել, ճնշվածներին ու հարստահարվածներին ոտքի կանգնել: Նա խաղաղարար էր և խաղաղասեր»:[2]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Միայն Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է խաղաղություն բերել աշխարհին:

Կա երկիր խաղաղություն բերելու միայն մեկ միջոց: Դա Հիսուս Քրիստոսի ավետարանն ընդունելն է, այն ճիշտ հասկանալը, որին պետք է հավասարապես հնազանդվեն և կանոնները պահեն պետության կառավարողներն ու մարդիկ: Այն զորությամբ է քարոզվում Վերջին Օրերի Սրբերի կողմից աշխարհի բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և մարդկանց, և հեռու չէ այն օրը, երբ դրա փրկության ուղերձը խորը կներթափանցի սովորական մարդկանց սրտեր, ովքեր, երբ ժամը գա, անկեղծությամբ և լրջությամբ իրենց կարծիքը կհայտնեն ոչ միայն կեղծ քրիստոնեության դեմ, այլև պատերազմի և պատերազմ հրահրողների դեմ՝ որպես հանցանք մարդկային ցեղի դեմ: Տարիներ շարունակ քարոզվել է, որ խաղաղություն է գալիս միայն պատերազմին պատրաստվելու միջոցով, ներկայիս հակամարտությունը [առաջին Համաշխարհային պատերազմը] պետք է ապացուցի, որ խաղաղություն գալիս է միայն խաղաղությանը նախապատրաստվելու շնորհիվ, մարդկանց սովորեցնելով արդարակեցություն և արդարություն, և ընտրելով այնպիսի կառավարողներ, որոնք հարգում են մարդկանց արդար կամքը:[3]

Մենք ցանկանում ենք խաղաղություն ամբողջ աշխարհին: Մենք ցանկանում ենք, որ սերն ու բարի կամքը տիրեն ամբողջ աշխարհում և աշխարհի բոլոր մարդկանց մեջ, սակայն խաղաղության ու սիրո այդ հոգին չի կարող աշխարհ գալ, քանի դեռ մարդկությունը չի ընդունել Աստծո ճշմարտությունը և իրենց ուղղված Աստծո ուղերձը, և չեն ընդունել նրա զորությունն ու իշխանությունը, որը աստվածային է, և չի կարելի ձեռք բերել միայն մարդկային իմաստությամբ:[4]

Տերը սիրում է խաղաղությունը: Մարդկանց Փրկչի վարդապետությունն էր՝ «երկրի վրա խաղաղություն, և մարդկանց մեջ հաճություն», սեր, անկեղծ սեր: Երբևէ մարդկանց զավակներին տրված բոլոր պատվիրաններից մեծագունը հետևյալն է. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը: Սա է առաջին և մեծ պատվիրանը: Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պես: Այս երկու պատվիրանքից կախուած են բոլոր օրենքը և մարգարեները» [Մատթեոս ԻԲ.37–40:] Եթե երկրի առաջադեմ ազգերի մեջ գոյություն ունենար սիրո այդ հոգին, Հիսուս Քրիստոսի ավետարանի այդ սկզբունքը, եթե այս փառավոր հորդորը խորապես զգային և ընդունեին այդ ազգերի կառավարողները, երբեք ոչ մի պատերազմ, արյունահեղություն, ավերածություններ, փլատակներ և անբարենպաստ պայմաններ չէին լինի: Որովհետև աշխարհի ժողովուրդները չունեն ավետարանը: Որովհետև նրանք չեն հնազանդվում ճշմարտությանը: Որովհետև նրանք չունեն Քրիստոսին, այդ պատճառով նրանք չունեն առաջնորդող և թողնված են իրենք իրենց, և հետևանքները, որ մենք տեսնում ենք, նրանց վատ վարքի ու չար գործերի արդյունքներն են:[5]

Կա մեկ և միայն մեկ ուժ, որը կարող է կանխել երկրի ազգերի մեջ պատերազմը, իսկ դա ճշմարիտ կրոնն է և Հայր Աստծո առաջ անարատ մնալը: Ուրիշ ոչինչ չի կարող դրան հանգեցնել . . . Կա միայն մեկ միջոց, որը կարող է կանգնեցնել մարդկանց, որպեսզի չպատերազմեն, երբ տրամադրվում են դրան, դա Աստծո Հոգին է, որը ոգեշնչում է սիրել, և ոչ թե ատել, որն առաջնորդում է դեպի ամեն ճշմարտություն, և ոչ թե սխալ, որը դրդում է Աստծո զավակներին ակնածանքով վերաբերվել Իրեն և Իր օրենքներին, և դրանք համարել աշխարհում ամեն բանից վեր:

Տերն ասել է մեզ, որ . . . պատերազմներ կգան: Մենք անտեղյակ չէինք, որ դրանք ուր որ է կպայթեն երկրի ազգերի վրա ցանկացած պահին: Մենք սպասում ենք, որ Տիրոջ խոսքերը կկատարվեն, որ դրանք կգան: Ինչո՞ւ: Որովհետև Տե՞րն էր ուզում այդպես:

Ո՛չ, իկարկե ոչ։ Որովհետև Տե՞րն էր նախասահմանել դրանք, կամ որոշ չափով ծրագրել դրանք։ Ո՛չ, ամենևին։ Ուրեմն, ինչո՞ւ։ Որովհետև մարդիկ ականջ չեն դրել Տեր Աստծուն, իսկ Նա կանխավ գիտեր, թե ինչպիսի հետևանքներ են սպասվում աշխարհի մարդկանց և ազգերի պատճառով։ Հետևաբար, նա կարող էր կանխատեսել, թե ինչ կպատահի նրանց հետ, և դա պատահեց իրենց գործերի պատճառով, և ոչ թե որովհետև Նա էր ցանկանում դա նրանց համար, քանզի նրանք տառապում են և քաղում են իրենց գործերի արդյունքները։

. . . «Երկրի վրա խաղաղություն, և մարդկանց մեջ հաճություն», սա է մեր նշանաբանը։ Դա մեր սկզբունքն է։ Դա Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքն է։ Եվ թեպետ ես գտնում եմ, որ սխալ է, չարաչար սխալ է, պատերազմ սկսել որևէ պետության կամ ժողովրդի դեմ, սակայն ես հավատում եմ, որ արդար է յուրաքանչյուր ժողովրդի համար մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել իրենց կյանքը, իրենց ազատությունները և իրենց տունը։ Ես հավատում եմ, որ դա ճիշտ է, և ես հավատում եմ, որ Տերը կաջակցի ցանկացած ժողովրդի պաշտպանելու, իրենց իսկ խղճի թելադրանքով, Աստծուն երկրպագելու իրենց ազատությունը, ցանկացած ժողովրդի, որոնք փորձում են պաշտպանել իրենց կանանց ու երեխաներին պատերազմի ավերածություններից։ Սակայն մենք չենք ցանկանում, որ ստիպված լինենք պաշտպանելու ինքներս մեզ։[6]

Կանչվելով զինվորական ծառայության, մնացեք մաքուր և անբիծ աշխարհից։

Ես հորդորում եմ իմ ընկերներին . . . ամեն ինչից առավել պահպանեն մարդկային, սիրո, և խաղաղության ոգին, որ թեև նրանց կանչեն մարտի, նրանք զանց չառնեն, ոտքի տակ չգցեն և չխախտեն այն սկզբունքները, որոնց մենք հավատում ենք, որոնք մենք ձգտել ենք արմատավորել, և որոնք մեզ խնդրում են պահել. խաղաղություն ու բարի կամք ողջ մարդկությանը, թեև հնարավոր է մեզ ստիպեն կռվել թշնամու դեմ։ Ես ցանկանում եմ ասել Վերջին Օրերի Սրբերին, որոնց հնարավոր է զինվորական ծառայության հավաքագրեն, և որոնց ծառայության կարիքը երկիրը կունենա, որ երբ նրանք դառնան Նահանգի և Պետության զինվորները, չմոռանան, որ նրանք նաև Խաչի զինվորներն են, որ նրանք կյանքի, և ոչ թե մահվան, ծառայողներն են, և երբ նրանք առաջ գնան, գնան տոգորված մարդկության

ազատությունները պաշտպանելու ոգով, ոչ թե թշնամուն կործանելու նպատակով։[7]

Երբ մեր տղաները . . . կանչվում են բանակ . . . ես հույս ունեմ և աղոթում եմ, որ նրանք իրենց հետ կտանեն Աստծո Հոգին, ոչ թե արյունահեղության, շնության, չարության ոգին, այլ արդարակեցության հոգին, հոգի, որը կմղի դեպի բարիք գործելը, կառուցելը, որը կլինի հօգուտ աշխարհի, ոչ թե կտանի կործանման ու արյունահեղության։

Հիշեք սուրբ գրության հատվածը . . . Մորմոնի Գրքում, որը վերաբերում է այն անարատ երիտասարդներին, որոնք չէին ընդունում պատերազմը և արյունահեղությունը, ապրում էին մաքուր ու անմեղ կյանքով, չունենալով իրենց սրտում կռվի, բարկության և չարության ապականող մտքեր, սակայն, երբ անհրաժեշտություն առաջացավ և նրանք կանչվեցին գնալ ու պաշտպանել իրենց կյանքը և իրենց հայրերի ու մայրերի կյանքը, իրենց տները, նրանք գնացին, ոչ թե կործանելու, այլ պաշտպանելու, ոչ թե արյուն հեղելու, այլ պաշտպանելու արյունը անմեղ և խաղաղասեր մարդկանց [տես Ալմա 56.45–48]։

Արդյո՞ք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի այն տղամարդիկ . . . ովքեր առաջ կգնան, կմոռանան իրենց աղոթքները։ Կմոռանա՞ն արդյոք Աստծուն։ Կմոռանա՞ն արդյոք այն ուսմունքները, որոնք ստացել են տանը իրենց ծնողների կողմից։ Կմոռանա՞ն արդյոք Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքները և այն ուխտերը, որոնք կապել են մկրտության ջրերում և սուրբ վայրերում։ Թե՞ առաջ կգնան որպես ամեն առումով իսկական տղամարդիկ՝ անարատ, մեծահոգի, ազնիվ, առաքինի մարդիկ, Աստծո մարդիկ։ Ահա թե ինչ եմ ես փափագում։

Ես ուզում եմ տեսնել, ինչպես է դրսևորվում Աստծո ձեռքը մարդկանց գործերում, որոնք պատկանում են Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն . . . որպեսզի օգնի պաշտպանել ազատության սկզբունքները և խելամիտ կառավարումը՝ մարդկային ընտանիքի համար։ Ես ուզում եմ տեսնել, որ նրանք ապրում են այնպես, որ կարողանան հաղորդակցվել Տիրոջ հետ իրենց ճամբարներում և իրենց գաղտնի վայրերում, և որպեսզի մարտի թեժ պահին նրանք կարողանան ասել. «Հայր, իմ կյանքը և իմ հոգին քո ձեռքում են»։

Ես ցանկանում եմ տեսնել, որ տղաները, որոնք հեռանում են այստեղից այդ պատճառով, գնում են այնպիսի զգացումով, որը ունենում են մեր միսիոներները, որոնք գնում են աշխարհ

տանելով իրենց հետ այն ոգին, որը ունենում է լավ մայրը, երբ նա առավոտյան բաժանվում է միսիայի մեկնող իր տղայից: Նա գրկախառնվում է նրան՝ իր մայրական ողջ սիրով:

. . . Եթե մեր տղաները գնան աշխարհ միայն այդպես, իրենց հետ տանելով ավետարանի հոգին և Վերջին Օրերի ճշմարիտ Սրբերի վարքը, ինչ էլ որ պատահի նրանց կյանքում, նրանք արժանավայել կտոկան: Նրանք կկարողանան տանել այնքան հոգնածություն և տառապանք, որքան անհրաժեշտության դեպքում կկարողանա տանել որևէ մեկը, իսկ երբ փորձության ենթարկվեն, նրանք կդիմանան, որովհետև նրանք չեն վախենում մահից: Նրանք չեն վախենա իրենց կյանքի հետևանքներից: Նրանք կարիք չեն ունենա վախենալու մահից, քանի որ նրանք կատարել են իրենց աշխատանքը, պահել են իրենց հավատը, սրտով մաքուր են և արժանի են տեսնել Աստծուն:[8]

Կան տարբեր տեսակի չարեր, որոնք սովորաբար հետևում են զորաբանակներին, որոնք սպառազինված են պատերազմի համար և զբաղված են դրանով, շատ ավելի վատ չար, քան պատվավոր մահը, որը կարող է վրա հասնել մարտի դաշտում: Կարևոր չէ, թե երբ են մեր երիտասարդները կանչվում, կամ ուր կարող են գնալ, այլ իրենց ծնողների, ճշմարիտ ընկերների համար և առավել ևս իրենց համար կարևոր է, թե ինչպես են նրանք գնում: Նրանք իրենց ողջ կյանքում որպես Եկեղեցու անդամներ ուսուցանվել են իրենց պահել մաքուր ու անբիծ, աշխարհի մեղքերից, հարգել ուրիշների իրավունքները, լինել հնազանդ՝ արդար սկզբունքներին, հիշել, որ առաքինությունը Աստծո տված մեծագույն պարգևներից մեկն է: Ավելին, նրանք պետք է հարգեն ուրիշների առաքինությունը և ավելի լավ է հազար անգամ մեռնել, քան պղծել իրենց մահացու մեղք գործելով: Մենք ցանկանում ենք, որ նրանք առաջ գնան մաքուր, թե մտքով և թե գործով, հավատալով ավետարանի սկզբունքներին մեր Տիրոջ և Փրկչի փրկագնող շնորհին: Մենք կցանկանայինք, որ նրանք հիշեին, որ միայն մաքուր ու հավատարիմ կյանքով ապրելով կարող են հույս փայփայել, որ ձեռք կբերեն մեր Քավիչի արյամբ գնված փրկությունը:[9]

Մենք ձգտում ենք խաղաղ գոյակցել բոլոր մարդկանց հետ:

Մենք հորդորում ենք Վերջին Օրերի Սրբերին՝ ապրել իրենց կրոնով, հիշել մկրտության ջրերում կապած իրենց ուխտերը,

պատվել Տիրոջը և պահել Նրա պատվիրանները, չհաղթվել աշխարհի հիմարություններից, այլ փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, [և] խաղաղ գոյակցել բոլոր մարդկանց հետ։[10]

Գալիք տարին և հետագա տարիները հնարավորություն են տալիս երկրի բոլոր բնակիչներին միավորվել, հաստատելով խաղաղություն և համընդհանուր եղբայրություն։ Կռիվը, թշնամությունը, նսասիրությունը, անբարոյականությունը չարիքներ են, որոնք պետք է արմատախիլ անել անհատական կյանքից։ Ոչ ոք այնքան ցածր կամ անկարևոր չի, որ օգնություն ստանալու արժանի չլինի։ Թող յուրաքանչյուրը սիրի իր մերձավորին, ինչպես ինքն իրեն, և ներկա ողբերգությունները կանցնեն, ապագա ահաբեկումները կկանխվեն, և «ամեն ոք ցանկացած վայրում կհանդիպի եղբոր կամ ընկերոջ»։

Արդարակյաց կյանքի և ազնվազարմ շփման ակնառու օրինակ է տրվել աշխարհին քսան դար առաջ Հիսուս Քրիստոսով։ Նրա ուղերձն էր՝ խաղաղություն ու բարի կամք։ Նրա օրենքը հիմնված էր իմաստուն ձևով իրականացվող արդարադատության և խելամտորեն կիրառվող արդարակեցության վրա։ Լույսն էր Նրա չափանիշը, իսկ ճշմարտությունը՝ Նրա համոզմունքը։[11]

Չնայած «մարդը մարդու հանդեպ դաժան է», որն այնքան սոսկալի ձևով է դրսևորվում ազգերի միջև ընթացող ներկայիս ահավոր կռվում, որ մենք իրական պատճառներ ենք տեսնում ուրախանալու և երախտապարտ լինելու, և հույս ունենք այս սոսկալի պատերազմի ամպերից այն կողմ տեսնել մշտական խաղաղության խոստումների ճշգրիտ և որոշակի իրականացումը մեր Տիրոջ և Թագավորի մոտալուտ գալուստով։[12]

Ես . . . հաստատապես պաշտպանում եմ այս սկզբունքը, որ՝ ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի ավետարանի մեջ է, որ փրկագնման զորությունը, խաղաղության զորությունը, բարի կամքի, սիրո, գթասրտության և ներողամտության զորությունը և Աստծո հետ հաղորդակցվելու զորությունը գտնվում է Հիսուս Քրիստոսի ավետարանում և նրա սկզբունքներին մարդկանց հնազանդվելու մեջ։ Հետևաբար, ես ընդունում եմ, և ոչ միայն ընդունում եմ, այլ հայտնում եմ, որ երկրի վրա կամ էլ երկնքում չկա ավելի մեծ բան, քան Աստծո ավետարանի ճշմարտությունը, որը նա ստեղծել է և վերականգնել աշխարհի փրկության և փրկագնման համար։ Եվ հատկապես դրա միջոցով է, որ խաղաղություն կգա մարդկանց զավակներին, և այն չի գա աշխարհ ուրիշ ոչ մի այլ ճանապարհով։[13]

Ուսումնական առաջարկություններ

- Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի ավետարանը միակ բանը, որը կարող է խաղաղություն պարգևել աշխարհին: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի նպաստենք դրան:
- Որտեղի՞ց է սկսվում խաղաղությունը: Ինչպե՞ս է երկու մեծ պատվիրաններին հետևելը խաղաղություն բերում տուն և մեր շրջապատ:
- Ինչպե՞ս կարող են նրանք, ովքեր կանչվել են զինվորական ծառայության, լինել «կյանքի և ոչ թե մահվան ծառայողներ»:
- Ինչպե՞ս կարող են անդամները իրենց հետ զինվորական ծառայության տանել «ավետարանի հոգին և Վերջին Օրերի ճշմարիտ Սրբերի վարքը»:
- Երբ անդամները կանչվում են զինվորական ծառայության, ինչպիսի՞ համոզմունքներ և հատկանիշներ կօգնեն նրանց մահից չվախենալ:
- Ի՞նչ կարող ենք անել մենք յուրաքանչյուրս, որպեսզի ավելի լիովին «խաղաղ գոյակցենք բոլոր մարդկանց հետ»:
- Ինչպե՞ս է Փրկչի օրինակը ուսուցանում մեզ այն մասին, թե ինչպես ապրել խաղաղությամբ և բարի կամք դրսևորելով:

Հղումներ

1. In James R. Clark, *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 4:319.
2. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 440.
3. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 421.
4. *Gospel Doctrine,* 417–18.
5. In Conference Report, Apr. 1918, 170.
6. *Gospel Doctrine,* 418–19; paragraphing altered.
7. In *Messages of the First Presidency,* 5:52.
8. *Gospel Doctrine,* 423–25.
9. *Gospel Doctrine,* 426.
10. In *Messages of the First Presidency,* 4:211.
11. In *Messages of the First Presidency,* 5:1–2.
12. In *Messages of the First Presidency,* 4:348.
13. *Gospel Doctrine,* 420.

Փրկագնել մեր մահացածներին տաճարային ծառայության միջոցով

Տաճարային ծառայության միջոցով մենք դառնում ենք փրկիչներ Սիոն Սարի վրա նրանց համար, ովքեր մահացել են:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

«Հոգիս կեղեքվում է: Սիրտս կոտրված է, և այդպես կլինի ողջ կյանքում: Օ՜, իմ քաղցր որդի, իմ ուրախություն, իմ հույս . . . Ո՞վ, Աստված, օգնիր ինձ»,[1] ողբում էր Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը իր ավագ որդու, Հայրում Ս. Սմիթի անսպասելի մահը: Նա Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր: Հայրումը 45 տարեկան էր: Վեց ամիս անց Նախագահ Սմիթը Սոլթ Լեյք Սիթիի գերեզմանատանը նախագահում էր իր հոր, Հայրումի պատվին բարձրացված հուշարձանի արարողությանը: Դա 1918թ. հունիսի 27 էր, իր հոր և հորեղբոր Մարգարե Ջոզեֆ Սմիթի նահատակության տարեդարձի օրը:

Տիրոջ Հոգին պետք է որ տակնուվրա աներ նրա հոգին, երբ նա խորհում էր իր սիրելիների մահվան մասին: Մի քանի ամիս անց, իր մահից մի քանի շաբաթ առաջ, Նախագահ Սմիթը գրել է. «Ես նստած իմ սենյակում խորհում էի սուրբ գրությունների շուրջ, և մտածում էի աշխարհի փրկագնման համար Աստծո Որդու կողմից կատարված մեծ քավող զոհաբերության մասին . . . Մինչ ես տարված էի այդ խոհերով, միտքս եկան Պետրոս առաքյալի գրվածքները [տես Ա Պետրոս Գ.18–20; Դ.6] . . . . Երբ խորհեցի այդ գրվածքների մասին, իմ հասկացողության աչքերը բացվեցին, Տիրոջ Հոգին իջավ ինձ վրա, և ես տեսա մահացածների բազմություններ մեծ ու փոքր» (ՎևՈ 138.1–2, 5, 11):

Այնուհետև նա տեսիլք ստացավ մահացածների փրկագնման մասին, որը գրված է Վարդապետություն և Ուխտեր բաժին 138-ում: Դա նրան նոր ճշմարտություններ սովորեցրեց և կրկին անգամ հաստատեց այն վարդապետությունները, որոնց նա հավատում էր և որոնք տասնամյակներ շարունակ սովորեցնում էր:

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Հիսուս Քրիստոսը նախապես կարգված էր և օծված՝ փրկելու կենդանի մարդկանց և մահացածներին:

[Փրկիչը] ուղարկվել էր ոչ միայն քարոզելու ավետարանը նրանց, ովքեր ապրում էին մահկանացու կյանքով, այլ նա Աստծո կողմից նախապես կարգված էր և օծված բացելու բանտի դռները նրանց համար, ովքեր գերության մեջ են, և հռչակել նրանց ավետարանը:[2]

Հազար ինը հարյուր տասնութ թվականի հոկտեմբերի երեքին, ես նստած էի իմ սենյակում խորհելով սուրբ գրությունների շուրջ.

Եվ խորհում էի մեծ քավող զոհաբերության մասին, որը կատարվել էր Աստծո Որդու կողմից, աշխարհի փրկագնման համար.

Եվ մեծ ու հրաշալի սիրո մասին, որը դրսևորվել էր Հոր և Որդու կողմից՝ Քավիչի աշխարհ գալով.

Որ նրա քավության միջոցով, և ավետարանի սկզբունքներին հնազանդվելու միջոցով, մարդկությունը կկարողանա փրկվել . . . .

Մինչ ես խորհում էի այս գրված բաների մասին [տես Ա Պետրոս Գ.18–20; Դ.6], իմ հասկացողության աչքերը բացվեցին, և Տիրոջ Հոգին իջավ ինձ վրա, և ես տեսա մահացածների բազմություն՝ և փոքր, և մեծ:

Եվ միասին հավաքվել էին մենկտեղ արդար ոգիների մի անթիվ բազմություն, որոնք հավատարիմ էին եղել Հիսուսի վկայության մեջ, մինչ նրանք ապրել էին մահկանացու կյանքով . . . .

Մինչ այս հսկայական բազմությունը սպասում և խոսում էր, ցնծալով մահվան կապանքներից իրենց ազատման ժամով, Աստծո Որդին հայտնվեց, ազատություն հայտարարելով գերիներին, ովքեր հավատարիմ էին եղել.

Եվ այնտեղ նա նրանց քարոզեց հավիտենական ավետարանը, վարդապետությունը հարության և անկումից մարդկության փրկագնման, և անձնական մեղքերից՝ ապաշխարության պայմանով . . . .

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի որդին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Հայրում Մ. Սմիթը, մահացել է 1918թ., որից կարճ ժամանակ անց Նախագահ Սմիթը ստացավ մահացածների փրկագնման մասին տեսիլքը, որը դարձավ Վարդապետություն և Ուխտերի 138-րդ բաժինը։

Եվ մինչ ես մտածում էի, իմ աչքերը բացվեցին, և իմ հասկացողությունը կենդանացավ, և ես հասկացա, որ Տերն անձամբ չգնաց ամբարիշտների ու անհնազանդների մեջ, որոնք մերժել էին ճշմարտությունը, որ ուսուցանի նրանց.

Այլ ահա, արդարակյացների թվից, նա կազմավորեց իր զորքերը և նշանակեց սուրհանդակներ, զորությամբ ու իշխանությամբ հանդերձավորված, և լիազորեց նրանց առաջ գնալ և տանել ավետարանի լույսը նրանց, ովքեր խավարի մեջ էին, այսինքն՝ բոլոր մարդկային ոգիներին. և այդպես ավետարանը քարոզվեց մահացածներին:

Եվ ընտրված սուրհանդակներն առաջ գնացին՝ հայտարարելու Տիրոջ ընդունելի օրը և ազատություն հռչակելու գերյալներին, որոնք կապված էին, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր կապաշխարեին իրենց մեղքերից և կընդունեին ավետարանը:

Այսպես ավետարանը քարոզվեց նրանց, ովքեր մահացել էին իրենց մեղքերի մեջ, գիտելիք չունենալով ճշմարտության մասին, կամ օրինազանցության մեջ՝ մերժած լինելով մարգարեներին:[3]

Հիսուսը չավարտեց իր աշխատանքը, երբ նրա մարմինը սպանեցին, ոչ էլ նա ավարտեց այն մահացածների միջից հարություն առնելուց հետո: Թեպետ նա իրագործել էր այն նպատակը, որի համար երկիր էր եկել, սակայն նա չէր ավարտել իր աշխատանքը: Իսկ ե՞րբ կավարտի: Այն ժամանակ, երբ նա կփրկագնի և կփրկի մեր Հայր Ադամի յուրաքանչյուր որդու և դստեր, որը ծնվել է և երբևէ կծնվի այս երկրի վրա մինչև ժամանակի վերջը, բացի կորստի որդիներից: Դրանում է կայանում Նրա առաքելությունը:[4]

Ապրողներն ու մահացածները աշխատում են միասին, որպեսզի Ավետարանը ստանան Աստծո բոլոր զավակները:

Մենք չենք ավարտի մեր աշխատանքը, եթե չփրկվենք և ապա չփրկենք բոլոր նրանց, ովքեր կախված են մեզանից, քանզի մենք պետք է դառնանք փրկիչներ Սիոն Սարի վրա, ինչպես Քրիստոսը: Մենք կանչված ենք այս առաքելությանը: Մահացածները չեն կարող կատարելության հասնել առանց մեզ, ոչ էլ մենք՝ առանց նրանց [տես ՎԵՈ 128.18]: Մենք առաքելություն ունենք կատարելու նրանց անունից և նրանց համար: Մենք որոշակի աշխատանք ունենք կատարելու, որպեսզի ազատենք նրանց, ովքեր իրենց անգիտության և անբարենպաստ պայմանների պատճառով, որոնց մեջ գտնվել են այստեղ լինելու ժամանակ, պատրաստ չեն

հավերժական կյանքին։ Մենք պետք է դուռ բացենք նրանց համար՝ կատարելով արարողություններ, որոնք նրանք չեն կարող կատարել իրենց համար, և որոնք կարևոր դեր ունեն «բանտից» իրենց ազատման համար, որպեսզի առաջ գան և ապրեն հոգու մեջ՝ ըստ Աստծո և դատվեն մարմնի մեջ՝ ինչպես մարդիկ [տես ՎևՈւ 138.33–34]։

Մարգարե Զոզեֆ Սմիթն ասել է, որ սա ամենակարևոր պարտականություններից մեկն է, որ հանձնվել է Վերջին Օրերի Սրբերին։ Իսկ ինչո՞ւ։ Որովհետև սա ժամանակների լրության ժամանակաշրջանն է, որը կտանի դեպի հազարամյա թագավորություն, և որի ժամանակ աշխարհի սկզբից ի վեր սուրբ մարգարեների բերանով ասված ամեն բան կկատարվի, և կմիավորվի ամեն բան, որ գնվում է երկնքում և երկրի վրա։ Մենք պետք է կատարենք այդ աշխատանքը, կամ առնվազն այնքան, որքան կկարողանանք, թողնելով մնացածը մեր զավակներին, որոնց մեջ պետք է ներարկենք այս աշխատանքի կարևորությունը, դաստիարակելով նրանց ճշմարտության սիրով և այդ սկզբունքների գիտելիքով, որպեսզի երբ մենք մահանանք կատարելով այն ամենը, ինչ կարողացել ենք, նրանք ստանձնեն գործը և շարունակեն, մինչև որ այն ավարտին կհասնի։[5]

Նույն սկզբունքները, որոնք վերաբերում են ապրողներին, վերաբերում են նաև մահացածներին . . . . Այդ պատճառով մենք մկրտվում ենք մահացածների համար։ Կենդանի մարդիկ չեն կարող կատարյալ դառնալ առանց մահացածների, ոչ էլ մահացածները կարող են կատարյալ դառնալ առանց կենդանիների։ Պետք է որ միացնող կապ ստեղծվի ծնողների ու երեխաների, և երեխաների ու ծնողների միջև, մինչև որ Աստծո ամբողջ ընտանիքը կմիավորվի մեկ շղթայի մեջ, և նրանք բոլորը կդառնան Աստծո և Նրա Քրիստոսի ընտանիքը։[6]

Մարգարե Զոզեֆին հայտնված այս ավետարանն արդեն քարոզվում է բանտում գտնվող հոգիներին, նրանց, ովքեր հեռացել են այս կյանքից դեպի հոգիների աշխարհ առանց ավետարանի մասին գիտելիքի։ Զոզեֆ Սմիթը քարոզում է այդ ավետարանը նրանց, ինչպես նաև Հայրում Սմիթը, Բրիգամ Յանգը, բոլոր այն հավատարիմ առաքյալները, որոնք ապրել են այս ժամանակաշրջանում Զոզեֆ Սմիթի ղեկավարության ներքո [տես ՎևՈւ 138.36–37, 51–54]։ Նրանք այնտեղ են, այստեղից իրենց հետ տանելով սուրբ Քահանայությունը, որը ստացել էին իշխանությամբ, և որը շնորհվել էր նրանց մարմնում։ Նրանք քարոզում են ավետարանը հոգիների բանտում, քանզի Քրիստոսը, երբ

նրա մարմինը դրված էր գերեզմանում, գնաց ազատություն հռչակելու գերիներին և բացեց բանտի դռները նրանց համար, ովքեր կապված էին [տես ՎԵՌ 138.27–30]: Միայն նրանք չեն ներգրավված այս աշխատանքում, այլ հարյուր հազարավոր ուրիշներ, երեցներ, որոնք մահացել են միսիայի ժամանակ չավարտելով իրենց միսիան, սակայն նրանք շարունակում են այդ գործը հոգիների աշխարհում [տես ՎԵՌ 138.57]: Հնարավոր է, Տերն անհրաժեշտ կամ ճիշտ է համարել նրանց կանչել այնտեղ, ինչը և Նա արել է: Ես չեմ պատրաստվում քննարկել կամ բանավիճել այդ հարցի շուրջ: Ես թողնում եմ դա Աստծո ձեռքում, քանի որ հավատում եմ, որ այդ ամենը կհանգեցնի բարուն, քանի որ Տերը թույլ չի տա, որպեսզի Իր ժողովրդի հետ աշխարհում ինչ-որ բան պատահի, որը նա, ի վերջո, նրանց համար չհանգեցնի ավելի մեծ բարիքի:[7]

Ես միշտ հավատացել եմ և դեռևս հավատում եմ իմ ողջ հոգով, որ այնպիսի մարդիկ, ինչպիսին էին Պետրոսը, Հակոբոսը և տասներկու Առաքյալները, որոնք ընտրվել էին Փրկչի կողմից իր ժամանակ, Հիսուս Քրիստոսի վկայության համար իրենց նահատակության ժամանակից ի վեր, այս բոլոր դարերի ընթացքում, զբաղված են եղել ազատություն հռչակելով գերյալներին հոգիների աշխարհում և բացելով նրանց բանտի դռները [տես ՎԵՌ 138.38–50]: Ես չեմ հավատում, որ նրանք կարող են ներգրավվել մեկ այլ աշխատանքի մեջ: Նրանց հատուկ կոչումը և Տիրոջ կողմից օծությունը՝ աշխարհը փրկելն է, գերյալներին ազատություն հռչակելը և բանտի դռները բացելը նրանց համար, ովքեր կապված են խավարի, սնահավատության և տգիտության շղթաներով . . . .

. . . Այն, ինչ մենք ապրում ու զգում ենք այստեղ, բնորոշ է այն ամենին, ինչը պատկանում է Աստծուն և ոչ երկրային կյանքին: Գոյություն ունի մեծ նմանություն Աստծո նպատակների մեջ, որոնք դրսևորվում են այստեղ և որոնք տեղի են ունենում նրա ներկայությամբ և արքայությունում: Նրանք, ովքեր իշխանություն ունեն ավետարանը քարոզելու այստեղ և նշանակված են այդ աշխատանքը կատարելու այստեղ, այս կյանքից հեռանալուց հետո անգործ չեն մնա, այլ կշարունակեն օգտագործել իրավունքները, որ ձեռք են բերել այստեղ՝ Աստծո Որդու Քահանայության միջոցով, որպեսզի ծառայեն նրանց փրկության համար, ովքեր մահացել են առանց ճշմարտության մասին իմանալու:[8]

Նախագահ Սմիթը նվիրագործեց Կանադայի Ալբերտա Քարդսոն տաճարի հողատարածքը, 1913թ.:

Մենք կարող ենք դառնալ փրկիչներ Սիոն Սարի վրա՝ տաճարներում փրկող արարողություններ կատարելով մահացածների համար:

Ուսուցանեք ձեր երեխաներին և թող ձեզ ուսուցանեն այն, որ անհրաժեշտ է ձեզ համար դառնալ փրկիչներ Սիոն Սարի վրա նրանց համար, ովքեր մահացել են առանց ավետարանի մասին գիտելիքի, որ այս սարերի վրա գտնվող և այլ երկրներում վեր խոյացող Աստծո տաճարները, կառուցվել են և նախատեսված են բացառապես այդ սրբազան արարողությունները կատարելու համար, որոնք անհրաժեշտ են նրանց համար, ովքեր հեռացել են այս կյանքից առանց դրանք ստանալու: Մի մոռացեք այդ մասին: Պահեք դա ձեր մտքում, քանզի դա անհրաժեշտ է մեզ համար:[9]

Մեր մահացածների փրկագնման համար կատարվող այս մեծ աշխատանքը, ապրողներին և մահացածներին միավորելը, կնքման զորությունը . . . և բոլոր արարողությունները, որոնք տրվել են հայտնությամբ, որպեսզի կատարվեն տաճարներ կոչվող սուրբ կառույցներում, որոնք մեզ պատվիրվել է Աստծո կողմից

կառուցել Նրա սուրբ անվան համար, . . . այս ամենը հայտնվել է մեզ այս ժամանակաշրջանում ավելի մեծ ծավալներով և ավելի մեծ պարզությամբ, քան երբևէ հայտնվել է աշխարհի պատմության մեջ, որքանով որ մենք գիտենք:[10]

Մենք հույս ունենք, որ կտեսնենք այն օրը, երբ կունենանք տաճարներ երկրի տարբեր վայրերում, որտեղ դրանք անհրաժեշտ են մարդկանց հարմարավետության համար, քանզի մենք գիտակցում ենք, որ ամենամեծ պատասխանատվություններից մեկը, որն ընկած է Աստծո ժողովրդի վրա այսօր, այն է, որ նրանց սրտերը պետք է դառնան դեպի իրենց հայրերը [տես Մաղաքիա Դ.5–6; ՎԿՈ 2], և որ նրանք պետք է կատարեն այն աշխատանքը, որն անհրաժեշտ է նրանց համար, որպեսզի իրենք կարողանան միանալ միասին Նոր և Հավիտենական Ուխտի կապով՝ սերնդից սերունդ: Քանզի Տերն ասել է, Մարգարեի միջոցով, որ սա ամենամեծ պատասխանատվություններից մեկն է, որը հանձնված է մեզ այս վերջին օրը:[11]

Ինչ վերաբերում է հոգիներին բանտից ազատելուն, իհարկե, մենք հավատում ենք, որ դա կարող է լինել միայն ավետարանը նրանց, հոգում լինելու ժամանակ, քարոզելուց հետո, այն բանից հետո, երբ նրանք կընդունեն այն և նրանց փրկագնման համար անհրաժեշտ աշխատանքը ապրողների կողմից կկատարվի նրանց համար: Մենք հավատում ենք, որ այդ աշխատանքը կարագացվի, որպեսզի բոլոր նրանք, ովքեր հավատում են, կարողանան հոգիների աշխարհում օգուտ ստանալ այդ ազատությունից: Հայտնությամբ տրվել է, որ Հազարամյակի մեծ աշխատանքը պիտի լինի տաճարներում մահացածների փրկագնման համար կատարվող աշխատանքը, և այն ժամանակ մենք հույս ունենք, որ կվայելենք հայտնությունից եկող օգուտները . . . այն միջոցներով, որ Տերը կհայտնի նրանց մասին, որոնց համար այդ աշխատանքը պետք է կատարվի . . . . Հասկանալի է, որ մինչ ավետարանը կքարոզվի բոլորին, թե լավերին և թե վատերին, կամ ավելի ճիշտ նրանց, ովքեր կապաշխարեն և նրանց, ովքեր չեն ապաշխարի հոգիների աշխարհում, ճիշտ այնպես, ինչպես այստեղ, փրկագնումը կգա միայն նրանց, ովքեր կապաշխարեն և կհնազանդվեն:[12]

Մեծ եռանդ էր դրսևորվել . . . սրբերի կողմից կատարվող իրենց տաճարային աշխատանքում: Մահացածների փրկագնման աշխատանքի ոգին հանգչում է նրանց վրա և մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում այս աստվածային աշխատանքի հանդեպ: Մարգարե Զոզեֆն ասել է մեզ, որ այս աշխատանքը «էական է մեր փրկության համար, ինչպես Պողոսն է ասում հայ-

ների մասին – որ առանց մեզ, նրանք չեն կարող կատարյալ դառնալ– ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացածների» [տես ՎԵՈ 128.15]: Աստծո պատվիրանն է սրբերին, որ նրանք աշխատեն իրենց ողջ ուժով մահացածների փրկագնման համար . . .

. . . Հոգին, որ դրդում է սրբերին աշխատել մահացածների փրկագնման համար, զավակների սրտերում սերմանում է հայրերին տրված խոստումները: Այս նույն հոգին, թվում է, շարժում է երկրի պատվավոր մարդկանց սրտերը, ովքեր ծախսում են իրենց ժամանակը և միջոցները տոհմաբանական գրառումները հավաքելով և միացնելով . . . . Սրբերը պետք է ամեն առիթ օգտագործեն և ձեռք բերեն որքան հնարավոր է շատ գրառումներ իրենց նախնիների մասին, որպեսզի Աստծո Տան արարողությունների միջոցով նրանք փրկագնում ստանան: Մենք գովաբանում ենք սրբերին այս ամենակարևոր և էական աշխատանքում դրսևորած ջանասիրության համար:[13]

Մենք խաղաղության ձիթենու ճյուղ ենք տանում աշխարհ: Մենք աշխարհին ներկայացնում ենք Աստծո օրենքը, Տիրոջ խոսքը, ճշմարտությունը, ինչպես որ այն հայտնվել է վերջին օրը՝ մահացածների փրկագնման և ապրողների փրկության համար:[14]

Ուսումնական առաջարկություններ

- Ո՞րն է Փրկչի «աշխատանքը» և «առաքելությունը»: Ի՞նչ էր անում Փրկիչը հոգիների աշխարհում, որպեսզի օգնի կատարելու այս մեծ աշխատանքը: (Տես ՎԵՈ 138.11–12, 18–19, 29–30:)
- Ինչպե՞ս է միսիոներական աշխատանքը կատարվում հոգիների աշխարհում: Ովքե՞ր են միսիոներները: (Տես ՎԵՈ 138.29–34, 57–59:)
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի բացենք «բանտի դռները նրանց համար, ովքեր կապված են խավարի, սնահավատության և տգիտության շղթաներով»: Ի՞նչն է օգնել ձեզ ձեր նախնիների մասին տեղեկություն գտնելու և նրանց համար տաճարային արարողությունները կատարելու գործում:
- Ինչպե՞ս կարող ենք մենք «դառնալ փրկիչներ Սիոն Սարի վրա»: Ինչո՞ւ է այս աշխատանքը համարվում «ամենամեծ պատասխանատվություններից մեկը, որն ընկած է Աստծո ժողովրդի վրա այսօր»:

- Որո՞նք են տաճարների նպատակներից մի քանիսը: Ի՞նչ օրհնություններ են եկել ձեզ, որովհետև դուք կատարել եք տաճարային աշխատանք ուրիշների համար կամ անուններ եք ներկայացրել այդ աշխատանքը կատարելու համար:
- Ո՞րն է լինելու «Հազարամյակի մեծ աշխատանքը»: Ինչպե՞ս կարող ենք մասնակցել այս աշխատանքին այժմ:
- Ինչպե՞ս է մահացածների փրկագնման համար Աստծո ծրագրի մասին գիտելիքը օրհնել ձեր կյանքը: Ի՞նչ է այդ ծրագիրն ասում մեզ Իր բոլոր զավակների հանդեպ Աստծո սիրո մասին:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 474.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 460.
3. Doctrine and Covenants 138:1–4, 11–12, 18–19, 29–32.
4. *Gospel Doctrine,* 442.
5. *Gospel Doctrine,* 442.
6. "Discourse by President Joseph F. Smith," *Millennial Star,* 4 Oct. 1906, 628–29.
7. *Gospel Doctrine,* 471–72.
8. *Gospel Doctrine,* 460–61.
9. In Conference Report, Apr. 1917, 6.
10. In Conference Report, Oct. 1913, 9–10.
11. *Gospel Doctrine,* 471.
12. *Gospel Doctrine,* 438.
13. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. [1965–75], 4:193–94.
14. *Gospel Doctrine,* 74.

Անարատություն՝ ամբողջ սրտով հետևել մեր կրոնին

Նրանք, ովքեր պահում են իրենց անարատությունն ամեն օր Աստծո գործերը առաջին տեղում դնելով և դիմանալով փորձություններին, կատանան հավերժական կյանք:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

1918թ. նոյեմբերի 10-ին որպես Եկեղեցու Նախագահ հաստատվելու 17-րդ տարեդարձի օրը Զոզեֆ Ֆ. Սմիթը միասին հավաքեց իր ընտանիքը և խոսեց իր կյանքի մասին և այն մասին, թե ինչ է սովորել: Բոլորը եկել էին ծոմ պահած և աղոթքի ոգով: Նախագահ Սմիթը ասաց. «Աշխարհում չկա մեկ այլ բան, որ ես փորձեի անել այնքան ջանասիրաբար, որքան ձգտել եմ պահել իմ խոսքը, իմ խոստումները, իմ անարատությունը, կատարել այն ամենը, ինչն իմ պարտականությունների մեջ էր մտնում»:[1]

Սա նրա վերջին պաշտոնապես հայտնած խորհուրդն էր: Ինը օր անց, 1918թ. նոյեմբերի 19-ին Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը մահացավ: Գրիպի համաճարակի պատճառով արգելվեց պաշտոնական հասարակական հուղարկավորության ծառայություն անցկացնել: Որպես հարգանքի տուրք այս մեծ ղեկավարի հիշատակին հետաձգվեցին բոլոր հասարակական հավաքները, զվարճանքները և պաշտոնական հանդիպումները: Թատրոնները և շատ տեղական ձեռնարկություններ փակվեցին: Սոլթ Լեյք Սիթիի հազարավոր քաղաքացիներ, Եկեղեցու անդամներ և ոչ անդամներ, դուրս էին եկել փողոցները պատվելու Զոզեֆ Ֆ. Սմիթին, երբ հուղարկավորության թափորն անցնում էր Հարավային Տաճարի փողոցով դեպի Սոլթ Լեյք Սիթիի գերեզմանատուն: Երբ թափորն անցնում էր Մաղլեյն կաթոլիկ տաճարի կողքով, տաճարի աշտարակի զանգերը ղողանջեցին այս պատվարժան ղեկավարի պատվին, որը մեծ ազդեցություն է ունեցել շատ–շատերի վրա:

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը սիրում էր այն, ինչը ճիշտ է, նա պաշտպանում էր ճշմարտության գործը, նա լիովին ապրում էր այն սկզբունքներով, որոնք քարոզում էր, և նրան հարգում էին ու պատվում էին այդ անարատության համար։

Ջոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք դրսևորում ենք մեր անարատությունը ամեն օր Աստծո գործերը առաջին տեղում դնելով։

Կրոնը, որը մենք ընդունել ենք, Կիրակնօրյա կրոն չէ, դա լոկ դավանանք չէ . . . . Դա մեզ համար աշխարհում ամենակարևոր բանն է, իսկ արդյունքները, որ կտեսնենք այս աշխարհում և գալիք աշխարհում, կախված կլինեն մեր ճշմարտության մեջ անաղարտությունից և դրա կանոնները պահելու մեր հետևողականությունից, ապրելով դրա սկզբունքներով և պահանջներով։[2]

Ինձ միշտ ուրախություն է պատճառում պատիվ ունենալ հանդիպելու տղամարդկանց և կանանց, ովքեր ընդունել են ճշմարտությունը և հավատարիմ են դրան իրենց առօրյա կյանքում, քանզի, ի վերջո, մենք հաստատում ենք ճշմարտության մեջ մեր անարատության ու հավատարմության չափանիշը մեր ամենօրյա գործերով։ Ծառը ճանաչվում է իր պտուղներով, և մի՞թե փշերից խաղող ենք քաղում, կամ տատասկից՝ թուզ։ Երբ դուք տեսնում եք մի քանի անհատներ, համայնք կամ մի ողջ ժողովուրդ, ովքեր ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը, հաստատուն են իրենց դավանանքում, հավատարիմ են իրենց ուխտերին, ամեն տեսակետից նվիրված են իրենց հավատքին, դուք կտեսնեք տղամարդկանց և կանանց, ովքեր լավ և ամեն տեսակետից արժանավայել պտուղներ են բերում։[3]

Մենք պետք է կատարենք մեր պարտականությունները և ամեն օր ապրենք մեր կրոնով։ Եկեք միշտ արդարակեցությամբ ծառայենք Տիրոջը, և Նա կլինի մեր Հայրը և Ընկերը, և մեր թշնամիները զորություն չեն ունենա մեր վրա։[4]

Մենք բոլորս սիրո կարիք ունենք մեր հոգում, միշտ՝ նախ Աստծո, մեր երկնային Հոր հանդեպ, որը ամեն բարիք տվողն է, սեր, որը լցնում է մեր հոգին, մեր միտքը, մեր սիրտը, մեր ուժը, այնքան շատ, որ եթե Նա պահանջեր, ապա մենք պատրաստակամորեն կտայինք մեր կյանքը, ինչպես նաև մեր ժամանակը, տաղանդները և մեր ունեցվածքը այս աշխարհում՝ կենդանի Աստծուն ծառայելուն, որը տալիս է մեզ այն ամենը, ինչ ունենք . . . .

Մենք պետք է ունենանք այդ սերը մեր սրտում այնքան, որ սիրենք Աստծուն ավելի, քան գործը, ավելի քան փողը, աշխարհիկ հաճույքները, այսինքն՝ ավելի շատ հաճույք գտնենք Աստծուն երկրպագելու և սիրելու մեջ, քան որևէ այլ բանում, որ ունենք այս աշխարհում:[5]

Ամենուր մարդիկ լսում են «հաջողություն» բառը և հենվում են դրա վրա, ասես հաջողությունը որոշվում է խոսքով և կարծես տղամարդկանց և կանանց ամենաբարձր ձգտումը աշխարհիկ փառասիրություն ձեռք բերելն է . . . . Ի վերջո, մարդու հաջողությունը պետք է որոշվի ավելի շատ մարդու հավերժական (ինչպես նաև ներկայիս) կարիքներով, քան աշխարհիկ չափանիշներով, որոնք մարդիկ ստեղծում են այն ժամանակի ոգուն համընթաց, որի մեջ նրանք ապրում են: Իհարկե, ոչինչ այնքան կործանիչ չի մեր բարօրության համար, քան այն միտքը, որ մեր ներկայիս և հավերժական բարօրությունը հիմնված է այս աշխարհի հարստության և փառքի վրա:

Թվում է այս սերնդի մեջ ամենուր մոռացվել է Փրկչի կողմից ազդարարված մի մեծ ճշմարտություն՝ ի՞նչ օգուտ ունի մարդ, որ բոլոր աշխարհը ստանա և իր անձը կորցնե [տես Մատթեոս ԺԶ.26]: Հաջողության չափանիշը, ինչպես հայտարարվել է Աստծո խոսքով, հոգու փրկությունն է:[6]

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու իսկական անդամության էությունը կայանում է նրանում, որ դուք և ես, անկախ որևէ մեկից աշխարհում, ապրենք մեր կրոնով և կատարենք մեր պարտականությունը, անկախ նրանից, թե ինչ են անում ուրիշները: Ինչպես Հեսուն է հայտնել հին ժամանակներում. «Իսկ ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու» [Հեսու ԻԴ.15:] . . . Այս Եկեղեցում մեր դիրքի հաստատուն լինելու չափը որոշվում է, թե ինչպես ենք մենք անում այն, ինչը ճիշտ է, անկախ նրանից, թե ով է ճիշտ վարվում և ով՝ սխալ: Ուստի, եկեք ձգտենք տոգորված լինել այդ ոգով և ապրենք այդ կանոնով:[7]

Ապրելակերպի առաջին և ամենաբարձր չափանիշը պետք է լինի այն անձնական պատասխանատվությունը, որը մարդկանց դարձնում է ճշմարտության համար օգտակար: Մարդկանց համար, որոնք անկեղծ են իրենք իրենց հանդեպ, դժվար չէ անկեղծ լինել ուրիշների հանդեպ: Մարդիկ, ովքեր պատվում են Աստծուն իրենց անձնական կյանքում, կախված չեն իրենց շրջապատի մարդկանց կարծիքից, որոնք կարող են ոչ միայն անտարբեր գտնվել, այլ խիստ բացասական տրամադրվածություն

ունենալ: Անձնական պատասխանատվությունների շնորհիվ է, որ մարդիկ զգում են, որ իրենք ճիշտ կեցվածք կարող են ընդունել բոլոր հասարակական հարցերում: Նրանք, ովքեր անտեսում են ներքին հոգևոր աշխարհը, կախված են լինում հասարակական առաջնորդությունից, որը տանում է դեպի տարբեր տեսակի հակասություններ:[8]

Աստծո Հոգու պտուղները, ճշմարիտ կրոնի հոգու պտուղները, խաղաղությունը և սերն են, առաքինությունն ու ազնվությունը, անաղարտությունը, և հավատարմությունը Աստծո օրենքով հայտնի ամեն արժանիքին:[9]

Մեր պարտականությունն է մշտապես առաջ գնալ և վերև, այն ուղղությամբ, որ Ամենազոր Տերն է ցույց տվել մեզ: Պահեք հավատքը, պատվեք Աստծո անունը ձեր սրտերում, հարգեք և սիրեք Նրա անունը, որի արյունը հեղվեց աշխարհի մեղքերի թողության համար, պատվեք և բարձր գնահատեք նրան, ում Աստված բարձրացրել է իր պատանեկության տարիներին, որպեսզի դնի վերջին օրերի այս մեծ աշխատանքի հիմքը:[10]

Մեր անաղարտությունը կփորձվի և կստուգվի:

Իմ մանկությունն ու պատանեկությունը անցել է Աստծո ժողովրդի հետ թափառումների մեջ՝ տառապելով նրանց հետ և ուրախանալով նրանց հետ: Իմ ողջ կյանքը կապված է եղել այդ մարդկանց հետ, և Աստծո անունով և Նրա օգնությամբ այդպես կլինի մինչև վերջ: Ես չունեմ մեկ այլ հասարակություն և մեկ այլ բնակավայր: Այդ առումով ես նման եմ Պետրոսին, երբ Փրկիչը տեսնելով, որ մարդիկ հեռանում են Իրենից, հարցրեց նրան. Սի՞թե դուք էլ ուզում եք գնալ: Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց Նրան. Տեր, ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանքի խոսքեր ունիս դու: [Տես Հովհաննես Զ.67–68:] Մենք ոչինչ չունենք անելու, միայն պետք է նեղ ճանապարհով առաջ գնանք, որը տանում է ետ՝ մեր Հայր Աստծո մոտ: Սա է այն ուղին, որը նա նշել է մեզ համար, և մեր պարտականություն է եռանդով առաջ գնալ: Մենք չենք կարող շեղվել դրանից, մենք չենք կարող անցնել մեկ այլ ճանապարհ, չկան պահեստային գծեր, սա «ուղիղ գնացք է» և նրա երթուղին արդեն որոշված է, գծված:

Մենք ստիպված ենք բախվել ընդդիմության հետ, մարտնչելով ճշմարտության զենքով, որը Աստված դրել է մեր ձեռքը: Մենք պետք է գիտակցենք, որ այս աշխարհը իր բոլոր հաճույքներով նման է մոխրի, եթե համեմատենք Աստծո գիտելիքի

գերազանցության հետ: Նա կփորձի և կստուգի մեզ, և Նա իրավունք ունի դա անելու, եթե անհրաժեշտ է անգամ ի մահ, և միայն նա, ով կդիմանա մինչև վերջ, ով չի նահանջի, այլ կպահպանի իր անաղարտությունը, անգամ վտանգի ենթարկվելով ու զոհաբերելով, անհրաժեշտության դեպքում ամեն ինչը, կստանա հավերժական կյանք, կամ կարժանանա հավատարիմների պարգևին:[11]

Ես միշտ աղոթել եմ, որ ոչ թե ազատվեմ փորձություններից, այլ որ իմաստություն ու խելամտություն, համբերություն ու տոկունություն տրվի ինձ, որպեսզի դիմանամ այն փորձություններին, որոնց միջոցով ես կանչված եմ անցնելու: Թեպետ ես չեմ կարող ճշմարտապես ասել, որ փորձության եմ ենթարկվել Քրիստոսի Ավետարանի հանդեպ իմ հավատքի մեջ, այնուամենայնիվ կարող եմ ասել, որ փորձվել եմ տարբեր միջոցներով: Փորձվել է իմ համբերությունը, իմ սերը, իմ ազնվությունը:[12]

Ես հավատում եմ, որ [մեր պիոներ նախնիները] կառուցել են ավելի լավ, քան գիտեին: Ես հավատում եմ, որ նրանք առաջնորդվում էին Աստծո զորությամբ, քայլ առ քայլ, և ուսուցանվում էին կանոն առ կանոն, տող առ տող: Այդպես էր Նա ստուգում նրանց ազնվությունը և նվիրվածությունը: Նա ստուգում էր նրանց մինչև մահ, այո, նույնիսկ մահից այն կողմ, քանզի մահը նրանցից շատերի համար կարող էր հաճելի լինել, այն կարող էր խաղաղ, երջանիկ հանգիստ լինել համեմատած այն տաժանակիր աշխատանքի և նեղության հետ, որոնք նրանք ստիպված էին կրել:[13]

Շատ մարդիկ են մահապատժի ենթարկվել հնազանդության համար, ինչպես որ հավատացել են, Աստծո պատվիրաններին: Հիսուս Քրիստոսի կողմից ընտրված հին առաքյալներից ոչ ոք խույս չտվեց նահատակությունից, բացի Հուդան և Հովհաննեսը: Հուդան մատնեց Տիրոջը, և ինքնասպան եղավ, իսկ Հովհաննեսը ստացավ Տիրոջ խոստումը, որ պետք է ապրի, մինչև որ Նա կրկին կգա աշխարհ: Մնացածը մահվան դատապարտվեցին, մի քանիսին խաչեցին, մի քանիսին քարշ տվեցին Հռոմի փողոցներով, մի քանիսին գցեցին աշտարակներից, ոմանց քարկոծեցին: Ինչի՞ համար: Աստծո օրենքին հնազանդվելու և վկայություն բերելու համար, որը նրանք գիտեին, որ ճշմարիտ է: Նույնը կարող է լինել այսօր: Սակայն թող որ այս ավետարանի ոգին այնքան խորը մնա իմ հոգում, որ թեկուզ ես աղքատության, ձախորդության, հալածանքի, կամ մահվան մատնվեմ, ես և իմ տունը ծառայենք Աստծուն և պահենք նրա օրենքները:[14]

Բիհիվ հաուսը Սոլթ Լեյք Սիթիում, որտեղ Նախագահ Սմիթը ապրել է երկար տարիներ: Նա մահացավ այստեղ 1918թ. նոյեմբերի 19-ին:

Մենք ազնվություն ենք ցուցաբերում ծառայելով Տիրոջը, անկախ նրանից ինչ կարող է պատահել մեզ հետ:

Տերն ասաց երիտասարդին, որը սիրում էր աշխարհը, որ եթե ցանկանում է կատարյալ լինել, նա պետք է վաճառի իր ողջ ունեցվածքը և տա աղքատներին, այնուհետև Տերն ավելացրեց. «Եկ հետևիր ինձ» [Մատթեոս ԺԹ.21]: Սա կարող է շատ հասարակ առաջարկություն թվալ, սակայն նրանում շատ ճշմարտություններ կան, նրանում կյանքի համար էական սկզբունք կա: Այդ սկզբունքն է՝ վեր դասել այն, ինչը սրբազան է և աստվածային, ինչը Աստծուց է, ինչը խաղաղություն ու երջանկություն է պարգևում մարդկանց հոգիներին, մեր հարստություններից, բոլոր աշխարհիկ պատիվներից և ունեցվածքից: Ամենազոր Տերը պահանջում է սա Վերջին Օրերի Սրբերից, և յուրաքանչյուր տղամարդ կամ կին, ով ընդունել է Ավետարանը, պետք է զգա իր սրտում այսօր, և իր հոգում միշտ, որ ինչ էլ որ Տերը պահանջում է ինձանից, դա կանեմ, կամ կտամ, ինչ էլ որ լինի:[15]

Եթե Նա ինձանից պահանջի Իրեն տալ այն ամենը, ինչ ես ունեմ, ես կուզենայի անել դա ուրախ սրտով և պատրաստակամորեն, ինչպես Հոբը, և Աբրահամը, երբ Աստված կանչեց նրանց

իրենց հավատքը գործադրել։ Երբ Աբրահամին առաջարկվեց զոհաբերել իր որդուն, խոստացված որդուն, արդյո՞ք նա կանգ առավ պատճառաբանելու կամ վիճաբանելու Ամենազորի հետ։ Ոչ, առանց դժգոհելու կամ տրտնջալու նա գնաց անելու այն, ինչ իրեն պատվիրվել էր։ Հնարավոր է, նա ունեցավ շատ առանձնահատուկ զգացումներ, և անկասկած նա փորձվեց մինչև ուղն ու ծուծը, փորձվեցին նրա ամենաքնքուշ զգացմունքները, սակայն ամեն դեպքում նա ընտրել էր հնազանդվել Ամենազորի կամքին։ Ինչևէ, Աբրահամը չկատարեց պատվիրանը, քանի որ Տերը տեսնելով նրա անարատությունն ու պատրաստակամությունը, կանխեց դա։ [Տես Ծննդոց ԻԲ.1–18։] . . .

Արդ, մեզանից քանիսն են վստահում Տիրոջը, ինչպես Աբրահամը։ Ենթադրենք, Նա ձեզանից խնդրում է ձեր առաջնեկին, կամ ձեր սիրելիներից որևէ մեկին, կամ ձեր հարստությունը, կարո՞ղ եք անել դա առանց տրտնջալու։ . . .Կարո՞ղ եք արդյոք ակնկալել, որ կհասնենք սելեստիալ վեհացման, եթե ունենք ինչ-որ անկյուն, ինչ-որ թաքցրած մի բան, որի վրա է դրված մեր սիրտը կամ ամենանվիրական կապվածությունը։ Հարցրեք ինքներդ ձեզ, արդյո՞ք արժանի եք Աստծո սելեստիալ արքայությունում վեհացում ստանալուն։[16]

Հոբը արդարակյաց մարդ էր, իր բոլոր գործերում կատարյալ մարդ։ Նրա նման մարդ չկար ամբողջ աշխարհի վրա . . . Նա չանիծեց սաբայեցիներին, որոնք քշեցին տարան իր անասունները, չանիծեց երկնքի կրակը, որն այրեց իր հոտերը, ոչ էլ երկնքի հողմերը, որ կործանեցին իր տունն ու երեխաներին։ Նա չհայհոյեց, անարգանքի խոսքեր չասաց, և չհեռացավ Տիրոջից դրա համար։ Սակայն նա ասաց. «Տերը տվեց և Տերն առավ. Տիրոջ անունը օրհնյալ լինի»։ [Հոբ Ա.21։] . . .

. . . Այստեղ լուսաբանվում է մի սկզբունք, որը պետք է ընկած լինի ամբողջ մարդկության հավատքի, առաքինության, սիրո, աշխատանքի, ցանկության հիմքում՝ որ նրանք կծառայեն Աստծուն, անկախ նրանից, թե ինչ կպատահի իրենց հետ։ Թեև նրանք բանտ նետվեն, հալածվեն, աղքատության մատնվեն, թեև Աստված մինչև ուղն ու ծուծը փորձի իրենց և ենթարկի նրանց ամենածանր փորձության, որպեսզի ստուգի նրանց անապականությունը, նրանք պետք է Հոբի պես ասեն. «Մերկ դուրս եկա իմ մոր արգանդիցը, և մերկ պիտի դառնամ այնտեղ։ Տերը տուավ և Տերն առավ. Տիրոջ անունը օրհնյալ լինի» [Հոբ Ա.21]։ Ուրեմն մնծարեք Աստծուն, սիրեք Նրան ձեր ողջ սրտովը, ձեր ողջ անձովը և ձեր ողջ մտքովը, ապա սիրեք ձեր մերձավորին ձեր անձի պես,

որպեսզի երբ փորձությունները գան, մենք կարողանանք դիմանալ դրանց և չդժգոհել, այլ սպասենք, մինչև Աստված կիրականացնի Իր նպատակները: Այդ ժամանակ մենք կտեսնենք, որ չկա Աստծո սիրո պես սեր Իր տառապյալ զավակների հանդեպ, չկա այնքան մեծ ողորմածություն, այնպիսի մեծ ու ազնվազարմ նպատակ, ինչպիսին Աստծո նպատակն է Իր զավակների համար: Եթե այդպես վարվենք, ի վերջո, կիմանանք դա և կօրհնենք Աստծուն մեր ողջ սրտով:[17]

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է անաղարտությունը: Ինչպե՞ս ենք մենք «հաստատում մեր անաղարտության չափանիշը . . . մեր ամենօրյա գործերով»: Ձեր ամենօրյա կյանքի ինչպիսի՞ իրավիճակներներում դուք կընտրեք դնել արդյոք Աստծո գործերը առաջին տեղում:
- Ինչպե՞ս կարող ենք զարգացնել ունակություն՝ «ավելի շատ հաճույք գտնել Աստծուն երկրպագելու և սիրելու մեջ», քան գործի, փողի կամ այլ երկրային հաճույքների մեջ: Ինչպե՞ս եք վարվել, երբ դուք ընտրության առջև եք կանգնել, վե՞ր եք դասել արդյոք «այն, ինչ սրբազան է և աստվածային . . . աշխարհիկ պատիվներից և ունեցվածքից»:
- Ո՞րն է հաջողության իսկական չափանիշը մեր կյանքում: Հաջողության ո՞ր այլ բնորոշումներն են երբեմն ետ պահում ճշմարիտ չափանիշին հետևելուց: Ինչպե՞ս են հայտնված ճշմարտության համաձայն կատարվող արարքները հակասում «հասարակական առաջնորդության» հետ համաձայնեցված արարքներից:
- Ինչո՞ւ երբ մենք փորձում ենք ապրել Ավետարանով, հաճախ հանդիպում ենք փորձությունների և ընդդիմության: Ինչպե՞ս եք փորձվել և ստուգվել՝ ձգտելով կատարել Աստծո կամքը: Ինչպիսի՞ վերաբերմունք եք ցուցաբերել:
- Ինչպե՞ս են Աբրահամի և Հոբի պես հավատարիմ աշակերտները օգնում մեզ ավելի լավ հասկանալ՝ ինչպես «ծառայել Աստծուն, անկախ նրանից, թե ինչ կպատահի իրենց հետ»: Ինչպե՞ս է ձեր վկայությունը ամրապնդվում նրանց օրինակներով: Ի՞նչը կարող է պատրաստել մեզ այդպես ծառայել Աստծուն մեր փորձության օրերին:
- Ինչպե՞ս կարող եք անձնական անաղարտություն զարգացնելով և պահելով, օրհնել և ամրապնդել ձեր ընտանիքը, ձեր համայնքները:

Հղումներ

1. *Life of Joseph F. Smith,* comp. Joseph Fielding Smith (1938), 477.
2. *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 107.
3. In Conference Report, Oct. 1916, 2.
4. *Deseret News: Semi-Weekly,* 8 Aug. 1884, 1.
5. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* 6 vols. (1965–75), 5:91.
6. *Gospel Doctrine,* 123–25; paragraphing altered.
7. *Deseret News: Semi-Weekly,* 21 Mar. 1893, 2.
8. *Gospel Doctrine,* 253.
9. *Gospel Doctrine,* 75.
10. In Conference Report, Apr. 1904, 3.
11. *Deseret News: Semi-Weekly,* 25 Apr. 1882, 1; paragraphing added.
12. *Deseret News: Semi-Weekly,* 27 Apr. 1897, 1.
13. *Deseret News: Semi-Weekly,* 9 Aug. 1898, 1.
14. *Gospel Doctrine,* 251.
15. In Conference Report, Apr. 1909, 4–5.
16. In Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 2:279.
17. *Deseret News: Semi-Weekly,* 19 Dec. 1893, 1; paragraphing altered.



Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթ, 1838–1918: Նա ուսուցանում էր. «Նվիրվածության, հավատարմության, Աստծո գիտելիքի մեջ ձեր առաջադիմության համեմատ դուք կկարողանաք վայելել երջանկություն՝ մաքուր ու անապական, քանզի Ավետարանն է, որ պարգևում է ճշմարիտ ուրախություն» (*Millennial Star*, 30 May 1907, 349):

Հանգիստ գտնել Քրիստոսում

Նրանք, ովքեր ձեռք են բերում Հիսուս Քրիստոսի մասին վկայություն, խաղաղություն և հանգիստ են գտնում իրենց հոգիներում:

Զոզեֆ Ֆ. Սմիթի կյանքից

Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթը մահացավ 1918թ. նոյեմբերի 19-ին, նա 1901թ.-ից ծառայել էր որպես Եկեղեցու Նախագահ: Լինելով եռանդուն, հաստատուն և անկեղծ Տիրոջ գործն անելիս, նա իր կյանքը նվիրեց Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտություններն ուսուցանելուն: Նա արդարակեցության քարոզիչ էր, Աստծո մարգարե, որը հորդորում էր Սրբերին. «Հետևեք ինձ, որովհետև ես հետևում եմ մեր գլխավորին, աշխարհի Քավիչին»:[1]

Նախագահ Հեբեր Զ. Գրանտը, որը հաջորդեց Զոզեֆ Ֆ. Սմիթին որպես Եկեղեցու Նախագահ, նրա գերեզմանի մոտ անցկացվող արարողության ժամանակ ասաց. «36 տարի ես եղել եմ նրա հետ, երբ նա խորհրդական էր, իսկ հետագայում՝ երբ Եկեղեցու Նախագահ էր: Այդ բոլոր տարիների ընթացքում ես երբեք չեմ տեսել նրա կյանքում ինչ-որ բան, ոչ խոսքի, ոչ վարքի մեջ կամ գործում, որը արժանի չլիներ իսկական մարդուն: Ես ամենայն անկեղծությամբ կարող եմ ասել՝ նա այնպիսի մարդ էր, ինչպիսին ես կցանկանայի դառնալ: Այստեղ, նրա գերեզմանի մոտ կանգնած, ես ցանկանում եմ ավելի, քան խոսքերով կարելի է արտահայտել, ստանալ զորություն և կարողություն լինել այնքան բարի, ուշադիր, ներող, քաջարի, ազնվազարմ և հավատարիմ, որքան նա, և ամեն ինչում գնալ նրա հետքերով: Ես չեմ կարող խնդրել ավելին:

. . . Քանզի ոչ ոք, որ երբևէ ապրել է, չի ունեցել կենդանի Աստծո և մեր Քավիչի մասին ավելի զորավոր վկայություն, քան Զոզեֆ Ֆ. Սմիթը: Դեռևս մանկությանս վաղ տարիներին նա հուզել է հոգիս այն վկայությամբ, որ նա բերել է բոլոր նրանց առաջ, ում հետ

շփվում էր, վկայելով, որ գիտե՝ Աստված ապրում է և որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, աշխարհի Քավիչը: Ոգեշնչման ոգին, որ այդ մարդու հետ էր, խորը արմատներ է գցել իմ սրտում և շատ շատերի սրտում: Ես սիրել եմ Զոզեֆ Ֆ. Սմիթին այնպես, ինչպես չեմ սիրել որևէ այլ մարդու, որին երբևէ ճանաչել եմ: Թող Աստված օրհնի նրա հիշատակը»:[2]

Ստորև տրված վկայությունը վերցված է Նախագահ Սմիթի այն ուղերձից, որը նա հղել էր Պրովոյում, Յուտա, 1907թ. հունվարի 13-ին:[3]

Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսմունքները

Մենք մտնում ենք Տիրոջ հանգստի մեջ, երբ մեր հոգիները ենթարկում ենք Նրան և Նրա ավետարանին:

Ես ցանկանում եմ կարդալ Մորոնիի գրվածներից, որտեղ նա մեջբերում է իր հոր Մորմոնի ուսմունքներից.

«Եվ այժմ ես՝ Մորոնիս, գրում եմ իմ հոր՝ Մորմոնի խոսքերից մի քանիսը, որոնք նա ասել էր հավատքի, հույսի և գթության մասին . . .

. . . Ես կկամենայի խոսել ձեզ հետ, որ եկեղեցուց եք, որ Քրիստոսի խաղաղ հետևորդներն եք, և որ ձեռք եք բերել բավականաչափ հույս, որի միջոցով, դուք, այս ժամանակից հետո, կարող եք մտնել Տիրոջ հանգիստը, մինչև որ դուք նրա հետ հանգիստ առնեք երկնքում» [Մորոնի 7.1, 3]:

. . . Ի՞նչ է նշանակում մտնել Տիրոջ հանգիստը: Ինձ համար, դա նշանակում է, որ Աստծո սիրո միջոցով ես նվաճվել եմ Նրա կողմից, այնպես որ ես կարող եմ հանգիստ զգալ Քրիստոսում, երբեք այլևս չտատնվեմ վարդապետության ամեն քամուց մարդկանց խաբեբայությունով, որ մոլորեցնում են խաբեբայության խորամանկությունով, և որ ես հաստատվել եմ Հիսուս Քրիստոսի մասին գիտելիքի և վկայության մեջ, այնպես որ ոչ մի զորություն չի կարող շեղել ինձ նեղ ու անձուկ ճանապարհից, որը տանում է ետ՝ դեպի Աստծո ներկայություն, վայելելու վեհացումը Նրա փառավոր արքայությունում, և այս ժամանակից սկսած ես կվայելեմ այդ հանգիստը, մինչև *հանգիստ* կառնեմ Նրա հետ երկնքում:

Ես ցանկանում եմ ձեր գիտակցությանը հասցնել այս միտքը, քանի որ ուզում եմ, որ դուք հասկանաք, որ խոսքով արտահայտված իմաստը այսպիսին է՝ «մտնել Աստծո *հանգիստը*»: Թույլ տվեք հավաստիացնել ձեզ, որ այն մարդը, որը լիովին հաստատված չէ

Քրիստոսի վարդապետության վրա, որն իր ողջ հոգին չի ենթարկում Տիրոջը և Ավետարանին, որը Նա է ուսուցանել աշխարհին, դեռևս չի մտել այդ հանգիստը: Նա դեռևս ծովի վրա, այսպես ասած, թափառում է, անկայուն, չունենալով հաստատունություն, անսասան հավատք, կարող է ենթարկվել խորամանկությանն ու խաբեությանը նրա, որը դարան է մտել խաբելու և մոլորեցնելու, տանելով դեպի սխալներ և խավար: Սինչդեռ նա, ով ընդունել է Հիսուս Քրիստոսի վկայությունն իր սրտում, նա, ով իրեն ամբողջովին նվիրել է Աստծո արքայությանը և Հոր կամքին, կանգնած է ամուր: Նրա սիրտը անհողդողդ է, նրա միտքը՝ վճռական, կասկածները՝ ցրված, ամեն տեսակի վախը չքացած, նա գիտե, թե ում պետք է վստահել, նա լիովին որոշված է իր նպատակների և իր մտադրությունների մեջ, այսինքն՝ ինչ վերաբերում է իրեն և իր տանը, նա կծառայի Աստծուն, կպահի Նրա պատվիրանները և Տիրոջ առաջ քայլի, որքան հնարավոր է մարդու համար, մաքուր կյանքով, պատվով, հավատարմորեն և շիտակ:

Ես շնորհակալ եմ իմ Աստծուն, որ աշխատանքի հետ կապված անհանգստության ոգին և զգացումը հեռացել են իմ մտքից, աշխատանք, որի մեջ մենք ներգրավված ենք, և որ Տերը տվել է ինձ հավաստիացում, որը վեր է ամեն ինչից: Ես ցնծում եմ Ավետարանով, ես ցնծում եմ իմ սրտում ունեցած Աստծո Հոգու վկայությամբ, ես ցնծում եմ Մարգարե Զոզեֆ Սմիթի վկայությամբ, ես ցնծում եմ Հիսուս Քրիստոսի Ավետարանի յուրաքանչյուր սկզբունքով, որի հետ մենք ծանոթ ենք և որքանով որ ես գիտեմ: Ես չեմ կարող և չեմ ուզում խնդրել ինչ-որ ավելի լավ բան, քան կյանքի և փրկության սկզբունքներն են, որոնք հայտնվել են փրկագնման այս մեծ ծրագրում, որոնք վերականգնվել են երկրի վրա վերջին օրերին . . .

Մենք ձգտում ենք հետևել մեր Փրկչի կողմից հաստատված բարձր բարոյական չափանիշներին:

. . . Եթե մեր սրտերն ուղղված են պատշաճ նպատակին՝ ծառայել Աստծուն, պահել Նրա պատվիրանները, ապա ի՞նչ պտուղներ կքաղենք դրանից: Ինչպիսի՞ արդյունք կունենանք: . . . Մարդիկ կլինեն ներողամտության, գթության, ողորմածության անկեղծ սիրո ոգով լի: Նրանք իրար վնաս տալու առիթ չեն փնտրի, չեն խաբի թույլերին, անզգույշներին կամ անգրագետներին, այլ կհարգեն իրավունքները անգրագետների, թույլերի, նրանց, ովքեր կախված են իրենց ողորմածությունից, ինչպես

իրենց անձնական իրավունքները։ Նրանք իրենց ընկերների ազատությունները կհամարեն նույնքան սրբազան, ինչպես իրենցը։ Նրանք կգնահատեն իրենց մերձավորների և եղբայրների առաքինությունը, պատիվը և ազնվությունը, ճիշտ ինչպես բարձր կդասեին, կգնահատեին և սրբազան կհամարեին իրենցը։

Մենք միանգամից չենք կարող հասնել կատարելության այդքան բարձր չափանիշներին, որը հրապարակվել է Նրա կողմից։ Ու թեպետ մենք գիտակցում ենք այն փաստը, որ չենք կարող ներկայումս հասնել նման կատարելության և չենք կարող ըմռնել այդ ամբողջը, ինչպես հարկն է, սակայն մենք ունենք վերջնանպատակ, չափանիշ, որը մեր աչքերի առաջ է։ Մենք անհամբեր սպասում ենք այն ժամանակին, երբ կհասնենք այդ փառահեղ և վեհ չափանիշին, որը դրված է մեր առաջ Տեր Հիսուս Քրիստոսի օրինակով, կյանքով և առաքելությամբ։ Թեև մեզ չի հաջողվում բարձրանալ մինչև կատարյալ չափանիշը, որ Աստված հայտնել է Հիսուս Քրիստոսի միջոցով, այնուամենայնիվ մենք կապաշխարենք մեր թերացումների համար, կնորացնենք մեր վճռականությունը և կկրկնապատկենք մեր ջանասիրությունը վաղը։ Այո, այս պահին մենք կկրկնապատկենք մեր ջանասիրությունը, կփորձենք հաղթահարել մեր թուլությունները և կմոտենանք այն օրինակին, որը մեզ համար հանդիսացել է Աստծո Որդին։

Սա Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, և սա ճշմարիտ վարդապետություն է։ Այն մարդը, որը կհնազանդվի դրան, կընդունի դրա ոգին և կփայփայի այն իր սրտում, ով ունի այս ցանկությունը իր հոգում և ձգտում է, որ այն լինի առաջնային մյուս բոլոր ցանկությունների մեջ, առաջ կգնա հավատից հավատ, հույսից գիտելիք, հասկացողությունից իմաստություն և զորություն, և ի վերջո ձեռք կբերի վեհացում և փառք մեր Աստծո արքայությունում, և չկա ուժ սելեստիալ արքայությունից ներքև, որ կարողանա կանգնեցնել նրա զարգացումը, եթե նա ձգտի պահել Աստծո օրենքներն ու պատվիրանները . . . .

. . . Երբ մենք որոշում ենք, ինչպես Հեսուն հնում, որ կծառայենք Աստծուն այսօր, և այս օրվանից սկսած կծառայենք Նրան ու կպահենք Նրա պատվիրանները, այդ ժամանակ մենք սկսում ենք ի վիճակի լինել տարբերելու խավարը լույսից, բարին չարից, ճիշտը սխալից, այն, ինչը մաքուր է նրանից, ինչը անմաքուր է, և այդ պահից բարիք գործելու ձեր ցանկությունը ավելի ու ավելի կամրանա, և դուք կդառնաք ավելի հմուտ բարիք գործելու և Աստծո նպատակները իրագործելու մեջ, հաղթահարելու ձեր թուլությունները, այնքանով, որքանով ջանասեր կլինեք, որպեսզի թողնեք

չարը և ընտրեք բարին, ցանկանալով բարին և խույս տալով չարից, շրջվելով աշխարհից և ընկած մարդկային էության տենչանքներից, և աջակցելով իրականացնել այն, ինչը նախատեսված է վեհացնել մարդկությանը, վեհացնել մարդու ձգտումները, վեհացնել նրա նպատակները և մեծացնել նրա գթասրտությունը, նրա սերն ու ներելու ունակությունը: Այդ ժամանակ դուք կկարողանաք զանազանել լույսը, ինչպես մարգարեն է ասել, դուք կկարողանաք անել դա այնքան պարզորոշ, այնքան անսխալ, որքան դուք կկարողանաք զանազանել կեսօրի լույսը գիշերվա խավարից: [Տես Սորոնի 7.14–15:] . . .

Մենք աճում ենք շնորհից շնորհ, մինչև ստանում ենք լիությունը և դառնում ժառանգակիցներ Հիսուս Քրիստոսի հետ:

Թույլ տվեք կարդալ սա ձեզ համար.

«Ճշմարիտ, այսպես է ասում Տերը. կլինի այնպես, որ ամեն մի հոգի, որ թողնում է իր մեղքերը և գալիս է ինձ մոտ, և կանչում է իմ անունը, և հնազանդվում է իմ ձայնին, և պահում է իմ պատվիրանները, պիտի տեսնի իմ երեսը և իմանա, որ ես եմ» [տես ՎԵՈՒ 93.1:]

Սա Տիրոջ խոսքն է: Հեշտ չէ տեսնել Աստծո երեսը և իմանալ, որ Նա է, այն մարդու համար, ով չի թողնում մեղքը, չի գալիս Աստծո մոտ, չի կանչում Նրա անունը, չի հնազանդվում Աստծո ձայնին, չի պահում Նրա պատվիրանները: Կտեսնի՞ արդյոք Նա Աստծո երեսը և կիմանա՞ արդյոք, որ Նա է: Ո՛չ, չկա այդպիսի խոստում, ընդհակառակը: Այդ նա է, որը «գալիս է ինձ մոտ», նա, որը «թողնում է իր մեղքերը», նա, որը «կանչում է իմ անունը», նա, որը «հնազանդվում է իմ ձայնին», նա, որը «պահում է իմ պատվիրանները»: Դա նա է, որը «կտեսնի իմ երեսը», ասում է Աստված, և դա նա է, որը «կիմանա, որ ես եմ», սակայն նա կիմանա նաև, որ «ես եմ ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, ով գալիս է աշխարհ»: [տես ՎԵՈՒ 93.2:]

Ինչպիսի՜ փառահեղ խոստում է առաջարկված Աստծո զավակներին . . . Եթե Հիսուս Քրիստոսը, Հոր միածինը մարմնում, լիությունը չստացավ սկզբում և այդպիսով կոչվեց Որդի, այլ ստացավ շնոր շնորհի տեղ, շարունակեց շնորհից շնորհ, մինչև ստացավ լիությունը, ապա պարզ է, որ նա, ով կքայլի Նրա հետքերով, ով կհնազանդվի Նրա ցուցումներին, և կընդունի կյանքի ու փրկության Նրա ծրագիրը, կստանա շնորհ շնորհի տեղ, կշարունակի

շնորհից շնորհ, անկատարությունից կաճի դեպի կատարելություն, կստանա մի փոքր այստեղից և մի փոքր այնտեղից, մինչև որ կստանա լիությունը, ինչպես Աստծո Որդին ստացավ լիությունը, և այդպիսով կդառնա Աստծո Որդի Քրիստոսի նման, Աստծո ժառանգ և Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակից: [Տես ՎԵՈՒ 93.11–14:] Ես զգում եմ, որ չեմ կարող խոսքերով արտահայտել այն միտքն ու զգացումը, որ այրում է հոգիս, որն արթնացել է Քրիստոսի այս խոսքով, ինձ տրված այս փառահեղ հնարավորությամբ, որ կարող եմ Աստծո պատվիրաններին հնազանդվելու, Տիրոջ խոսքը պահելու միջոցով, քայլ առ քայլ ստանալ Աստծո փառքի լիությունը, ճշմարտության գիտելիքի լրիվությունը, զորության, իմաստության լրիվությունը, ունենալով զորություն, տիրապետություն և փառք՝ Հոր պես:

Արդյոք դա չի՞ տալիս մի բան, որի համար արժե ապրել, մի բան, որի համար կարելի է հույս փայփայել: Արդյոք սա անգին պարգև չէ՞, որն առաջարկվել է ձեզ՝ ձեր հնազանդության, հավատարմության, լույսն ընդունելու, լույսի մեջ քայլելու համար, ինչպես Քրիստոսն է լույսի մեջ, որպեսզի կարողանաք ընկերակցել Նրա հետ, և որպեսզի Հիսուս Քրիստոսի արյունը մաքրի ձեզ բոլոր մեղքերից: Ես երախտապարտ եմ իմ Աստծուն այս սուրբ Ավետարանի համար, ես երախտապարտ եմ Նրան այս ձգտումի և հույսի համար, որը ոգեշնչում է ինձ դառնալ արժանի իմ Հորն ու իմ Աստծուն, արժանի բնակվելու Նրա հետ, վեհացում ստանալու Նրա արքայությունում, և վայելելու Նրա ներկայությունը և Նրա բարեհաճությունը հավերժության անթիվ դարերի ընթացքում:

Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, որ թույլ կտա ինձ ձեռք բերել այդ վեհացումը, և չկա մեկ այլ ճանապարհ տրված, որով մարդը կարող է փրկվել, չկա մեկ այլ ծրագիր աշխարհում հայտնված, որով մարդը կարող է վեհացում ստանալ և կրկին վերադառնալ Աստծո ներկայություն: Չկա մեկ այլ ճանապարհ . . . .

Արդյո՞ք բոլոր բաներն են հայտնված: Ոչ: Արդյո՞ք Աստված դեռևս բաներ ունի հայտնելու Իր զավակներին: Այո, շատ: Սակայն մենք դեռևս պատրաստ չենք ավելի մեծ լույսի համար, քան այն, որն արդեն եկել է, քանզի ում շատ տրվել է, շատ էլ պահանջվում է, և արդեն շատ է տրվել մեզ, և Աստված մեզանից պահանջում է այսօր ավելի շատ, քան մենք տալիս ենք Նրան: Մենք չենք քայլում լույսի մեջ, ինչպես Նա է լույսի մեջ, մենք չենք հնազանդվում ճշմարտությանը, ինչպես Նա է պահանջում մեզանից: Մենք անձնատուր ենք լինում մեր թուլություններին, թույլ ենք

տալիս, որպեսզի գայթակղությունները պաշարեն մեզ, անձնատուր ենք լինում մեր տենչանքներին, մեր եսասիրությանը և մեր մարդկային ցանկություններին, փոխանակ վեր բարձրանանք մահկանացու մարմնի թուլություններից և ասենք մեր հոգում. «Ինչ վերաբերում է ինձ, ես կծառայեմ իմ Աստծուն, կպահեմ Նրա պատվիրանները և անբիծ կքայլեմ Նրա առաջ»: Մենք դա չենք անում, չնայած որ Վերջին Օրերի Սրբերն ամենալավ մարդիկ են աշխարհում: Այսօր մենք, մեր բոլոր թուլությունների ու անկատարությունների հետ միասին, ավելի մոտ ենք ապրում այդ չափանիշին, քան աշխարհի որևէ այլ ժողովուրդ:

Խաղաղությունն ու երջանկությունը հնարավոր են Հիսուս Քրիստոսի ավետարանի շնորհիվ:

Արդ, Տերն օրհնի ձեզ: Թող խաղաղությունը բնակվի ձեզ հետ, իմ եղբայրներ և քույրեր: Ձեռք բերեք հավատք առ Ավետարանը ձեր սրտում: Իմացեք, որ այս կրոնը, որը տրվել է ձեզ մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով՝ Աստծո կրոնն է, Աստծո օրենքն է և Աստծո պահանջները հայտնված Իր զավակներին երկրի վրա, և սա վեր է ամեն ինչից: Այն վեր է «ես»-ից, այն վեր է աշխարհից, վեր է ոսկուց ու արծաթից, տներից ու հողերից, այն վեր է մահկանացու կյանքից, որովհետև դրանում մենք ոչ միայն անձնապես ապահով ենք մեր իրավունքներով և արտոնություններով, այլ այն տալիս է մեզ հավերժական կյանքի պարգևը, որը Աստծո ամենամեծ պարգևն է:

Ոչինչ չի համեմատվի դրա հետ: Այն աշխարհի ամենավիթխարի բանն է, ամենամեծը երկրի վրա, մեզ համար ամենակարևոր բանն ամբողջ աշխարհում, դա Աստծո ճշմարտությունն է, Հիսուս Քրիստոսի կրոնը, մեղքից, մեր թուլություններից փրկագնման ու փրկության վարդապետությունը, դա լիակատար միացությունն է՝ հոգու, աշխատանքի, գիտելիքի, զորության և Աստծո իմաստության, որը ամենայն բարիք պարգևողն է: Խաղաղություն ձեզ, և թող առողջության ու սիրո օրհնությունները առատորեն թափվեն ձեզ վրա, կյանքի ամեն քայլափոխում, ամեն պաշտոնում, որի մեջ կգործեք, որպեսզի Աստծո վախը միշտ լինի ձեր աչքի առաջ:

Սակայն ես չեմ ցանկանում, որ դուք մեկ վայրկյան անգամ մտածեք, թե Հիսուս Քրիստոսի կրոնը բեռ է կամ ծանրություն ձեր վրա: Այդպես չէ: Աստված ասել է. «Իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» [Մատթեոս ԺԱ.30]: Դա մեղքից փրկագնում է: Ստրուկը նա չէ, որը փրկագնվել և ազատվել է մեղքի գերությունից, այլ նա,

ով մնում է պարտք և գերի մեղքին: Նա է ստրուկը, նա է գերին, նրա նմանը մեր խղճահարության, մեր կարեկցանքի և ցավակցության կարիքն ունի: Դա նա է, որին մենք պետք է փորձենք բարձրացնել ստրկության և մեղքի կապանքից վեր, որպեսզի վայելի մեղքից ու զանցանքից ազատությունը:

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, կարող է և կարող էր, երբ Նա գտնվում էր մարմնի մեջ, և կարող է այսօր, վայելել այն ամենը, ինչ հնարավոր է արդարակյաց մարդկանց համար, և չկա ուշադրության արժանի որևէ բան, որից Նա զրկված լիներ: Նույնը հնարավոր է Վերջին Օրերի Սրբերի համար: «Օ՜», կասի մեկը, «եթե ես ապրեմ ձեր կրոնով, ինչպես որ ցույց եք տալիս ինձ, ես այլևս վայելքներ չեմ ունենա, կզրկվեմ իմ հաճույքներից»: Օ՜, հիմար: Ես կարող եմ վայելել ցանկացած օրինական, ցանկացած արդար հաճույք, որ կարող է վայելել ցանկացած մարդ Աստծո երկրի վրա: Եվ եթե Աստծո պատվիրանները պահելում ես ավելի հավատարիմ եմ, քան իմ եղբայրը, ես կարող եմ ավելին վայելել, քան նրա համար է հնարավոր: Նվիրվածության, հավատարմության, Աստծո գիտելիքի մեջ ձեր առաջադիմության համեմատ դուք կկարողանաք վայելել երջանկություն՝ մաքուր ու անապական, քանզի Ավետարանն է, որ պարգևում է ճշմարիտ ուրախություն, ճշմարիտ ազատություն և անօրինության կապանքներից և դառը մաղձից ազատում:

Աստված, օգնիր մեզ տեսնել ճշմարտությունը, և լույսը, ինչպես կեսօրին, և տարբերել դրանք այնքան պարզորոշ, որքան կարող ենք տարբերել կեսօրի լույսը գիշերվա խավարից, սա է իմ աղոթքը, Հիսուսի անունով, ամեն:

Ուսումնական առաջարկություններ

- Ի՞նչ է նշանակում «մտնել Տիրոջ հանգիստը»: Ինչպե՞ս կարող ենք ձեռք բերել այդ հանգիստը:
- Ինչպե՞ս կարող ենք մեր ողջ հոգին ենթարկել Տիրոջը և Նրա Ավետարանին:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ավելի լավ համապատասխանենք «վեհ չափանիշին», որի օրինակը մեզ համար հանդիսանում է Փրկիչը:
- Ի՞նչ է նշանակում աճել «շնորհից շնորհ»: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի վստահ շարունակենք աճել այս ձևով, մինչև «կստանանք ամբողջ լիությունը»:

- Ինչպիսի՞ փառավոր խոստումներ են տրվել նրանց, ովքեր ձգտում են դառնալ Փրկչի նման:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը թեթևացրել ձեր բեռը և հանգիստ տվել ձեզ, առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքի աճելու հետ մենակտեղ: (Տես նաև Մատթեոս ԺԱ.28–30:)
- Ինչպիսի՞ փորձառություններ են օգնել ձեզ հասկանալ, որ խաղաղություն և երջանկություն կարելի է գտնել Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով:
- Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսումնասիրությունը, ըստ Նախագահ Զոզեֆ Ֆ. Սմիթի ուսուցման, օգնել ձեզ ավելին սովորել Աստծո մասին, զգալ իսկական ուրախություն ու խաղաղություն, ավելի նմանվել Փրկչին:

Հղումներ

1. In Conference Report, Apr. 1915, 5.
2. Quoted in Preston Nibley, *The Presidents of the Church* (1947), 260–61.
3. "At Rest in Christ," *Millennial Star,* 30 May 1907, 337–49; paragraphing altered.

Ցուցիչ

Ա

Աշխատանք, սովորեցնել գնահատել, 318

Առողջություն: *Տես* Իմաստության Խոսք

Ամուսին, երբեք բռնություն մի գործադրեք կնոջ վրա, 267–269: *Տես նաև* Ամուսնություն

Անհամեստություն, 397–398

Անաղարտություն, 439–446

Աբրահամի օրինակը, 445
դժբախտությունը կփորձի, 442–443
դրսևորվում է Աստծուն առաջին տեղում դնելով, 440–442

Արդարադատություն, հավատք առ Աստծո, 56–57

Ազատություն
հնազանդությամբ, 298–307
միայն ավետարանն է տալիս, 424

Ամուսնություն, 183–92
կառուցել սիրո ու նվիրվածության վրա, 190–92
հավերժական փառքի և վնհացման համար, 185–86, 188–89
հավատարմություն, 167–68

Աստված պատվիրում է, 185–88
տաճարային ամուսնության կարևորությունը, 188–89
ոչինչ չպետք է կանգնի ամուսնու և կնոջ միջև, 191–92
ուխտերի սրբությունը, 167–69

Առաքելություն, երկրի վրա յուրաքանչյուր մարդու, 260

Արարողություններ, տաճար անհրաժեշտ է փրկության համար, 323–25
կատարել արժանիորեն, 325–27

Աղքատներ և կարիքավորներ գթասրտություն հանդեպ, 205–7
ծոմ՝ աղքատներին օգնելու հնարավորություն, 209–10

Սփոփող Միությունը հոգ է տանում, 196–98

Աղոթք, 22–29
ընտանիքով, 26–28
ի բարօրություն ուրիշների, 28–29
ինչպես մոտենալ Աստծուն, 23–24
խոնարհությամբ և հավատքով, 24–26

Մերի Ֆիլդինգ Սմիթի, կորած եզների համար, xiv, 22–23
անհրաժեշտ է միսիոներներին, 79–80
պարզ ու հաճախ, 23–24

Անպարկեշտություն, 396

Ապաշխարություն, 61–67

ճշմարիտ ապաշխարության սահմանումը, 63–64
անհրաժեշտ է փրկության համար, 62–63, 66—67
սեռական մեղքից, 169–70

Ավետարանի վերականգնումը, 12–14

Ավետարանը ուսուցանելը, ինչպես պետք է միսիոներները, 82–85

Աստծո հոգևոր զավակները։ *Տես* Աստծո զավակներ

Աջակցող ձայն, 224–25

Աններելի մեղք, 74–76

Ազատ կամք, 298–307
Եկեղեցին չի միջամտում մեր ազատությանը, 303–304
պարգև Աստծուց, Նա չի միջամտում, 301–303

Աստված հսկում է վերջնական արդյունքները, 301

Աստված հանդուրժում է չարին, որպես արդյունք, 301–302
հնազանդությունը մեծ օրհնություններ է բերում, 304–305
պատասխանատու ընտրությունների համար, 299
օգտագործվում է Սիոնում ծառայելիս, 361–362

Ադամի Անկումը
բերեց հոգևոր մահ, 100
բերեց ֆիզիկական մահ, 91–92
հաղթահարվեց Քավությամբ, 93–96

Անդրանիկ։ *Տես* Հիսուս Քրիստոս

Առաջին Նախագահություն, 236–237

Առաջին Տեսիլքը, Հարությունից հետո ամենանշանակալից իրադարձությունը, 15–16

Ազատ ընտրություն. *Տես* Ազատ կամք

Ազատություն
Եկեղեցին չի միջամտում, 301–302
հնազանդության միջոցով գալիս է ամենամեծ, 305–307
Տես նաև Ազատ կամք

Աստված, զավակները։ *Տես* Աստծո զավակները

Ավետարան
երջանկությունը հնարավոր է, 455–456
խաղաղություն է բերում աշխարհ, 422–424
անշահախնդիր է դարձնում մեզ, 211–212
վերականգնումը, 12–14

Ագահություն, 177–179

Արարիչ, Հայր Աստված, 375

Աբրահամ
հավատքի օրինակ, 56
զոհաբերության և ազնվության օրինակ, 445

Ադամ

Անկումը հոգևոր մահ բերեց, 100

Անկումը ժամանակավոր մահ բերեց, 91–92
առաջին մարդը, 354

Առաքյալ, Զոզեֆ Ֆ.-ի կարգումը որպես, xvi, 143

Առաքյալներ, Քրիստոսի նակատակությունը, 443
ստացան Սուրբ Հոգին, 75

Աղետներ, նպատակը, 414–416

Աստծո զավակներ, 349–355
  կարող են դառնալ, ինչպես մեր Հայրը, 354–355
  ստեղծված են Աստծո պատկերով, 350–352
  մենք, 352–354

Բ

Բանականություն: *Տես* Կրթված, կրթություն

Գ

Գերագույն Իշխանություններ, աջակցումը, 225–228

Գիտելիք, հնազանդությունը տանում է դեպի ավելի մեծ, 285–286

Գիտություն, աստվածային հայտնությունը չափանիշն է, 337–338

Գթասրտություն, 204–212
  խույս տալ քննադատությունից, 208
  թշնամիների հանդեպ, 275–276
  ծոմ՝ աղքատներին օգնելու հնարավորություն, 209–210
  առատաձեռնություն աղքատների հանդեպ, 205–206
  ամենամեծ սկզբունքը, 206
  սիրել մերձավորին, ինչպես ինքդ քեզ, 206–209
  զոհաբերել մեր ցանկությունները ուրիշների համար, 211–212
  հոգու մեծությունը որոշող չափանիշ, 275
  Տես նաև Սեր; Ծառայություն

Գնացք, Զոզեֆ Ֆ.-ը լսեց Հոգու ձայնը, 280

Գռեհկություն, 396

Գրքեր
  ամենակարևոր սուրբ գրությունները, 46–48
  պետք է լինեն օգտակար, 398–399

Գրավ, զգուշանալ դրանից, 173–177

Գրականություն, օգտակար, 398–399

Դ

Դատաստան
  Սուրբ Հոգին տանում է դեպի արդարակեցություն, 284
  Տես նաև Քննադատություն

Դաժանություն, 264–269
  ամուսինները չպետք է դրսևորեն, 267–268
  Զոզեֆ Ֆ.-ի զգացումները երեխայի համար եկեղեցում, 264
  ծնողները չպետք է դրսևորեն, 268–269
  հարգանքով վերաբերվեք միմյանց, 265–267

Դժվար պահեր
  հավատքը կաջակցի մեզ, 55–58
  փորձում է մեր անաղարտությունը, 442–443
  Տես նաև Ընդդիմություն

Դև. *Տես* Սատանա

Ե

Եզները, Սերի Ֆիլդինգ Սմիթի աղոթքը գտնելու համար, xiv, 22–23

Եկեղեցու Նախագահությունը, 236–237

Եկեղեցու Նախագահ, 234–242
Աստված առաջնորդում է Եկեղեցին, 235
Աստված կմնծարի, 241–242
կրում է քահանայության բանալիները, 148, 237–239
Զոզեֆ Ֆ.-ը դարձավ, xix, 234
Առաջին Նախագահության մաս, 236–237
հայտնություններ է ստանում Եկեղեցու համար, 239–240
աջակցելը, 224–228

Եկեղեցու և պետության բաժանում, 130–131

Եպիսկոպոսներ, հաստատումը, 229–231

Եսասիրություն
ավետարանը հաղթահարում է, 211–212
սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ, 206–209
չձգտել ամուսնանալ և ընտանիք կազմել, 188–189
Տես նաև Գթասրտություն

Երեխաներ
մի զայրացեք կամ բռնություն մի կիրառեք, 268–269
Տիրոջ ժառանգությունը, 312
Զոզեֆ Ֆ.-ի սերը հանդեպ, 403
փոքր երեխաների հարությունը, 136–138
կրկին միանալ նրանց, ովքեր մահացել են, 139–141
փոքր երեխաների փրկությունը, 134–135
ովքեր մահանում են նախքան պատասխանատվության տարիքը, փրկագնված են, 135–136
Տես նաև Երեխաներ, ուսուցանել; Աստծո զավակներ

Երեխաներ, ուսուցանել, 311–319
հավատք առ Հիսուս Քրիստոս, 33–34
հայրերի պատասխանատվությունները հանդեպ, 406–407
հսկեք, որպեսզի կամակոր չմնծանան, 316–317
օրինակի կարևորությունը, 312–314
սերն ամենահզոր ազդեցությունն է ունենում, 315–316
մայրերի պատասխանատվությունները հանդեպ, 34–36
ծնողների պատասխանատվությունները, 268–269, 406–407
ծնողները պետք է լինեն մասնագետներ ճշմարտության մեջ, 366
կանոնակարգեք հանգիստը, 317
ուսուցանեք Սուրբ Հոգու պարգևի մասին, 70–73
ուսուցանեք ավետարանը, 312–315, 365–366
սովորեցրեք սիրել Աստծուն և ավետարանը, 365–366
սովորեցրեք համբերություն և աշխատասիրություն, 318–319
սովորեցրեք հայրենասիրություն, 128–130
հարգանքով վերաբերվեք, երբեք բռնություն մի կիրառեք, 268–269

ինչ սովորեցնել, 312–314

Երազել մաքուր լինելու մասին, 99–100

Երեցներ: *Տես* Սիսիոներներ

Երկաթե ձող, բռնել, կրթության բնագավառում, 337–338

Երեխաների Միություն, ծառայությունը, 359–360

Երկրորդ Գալուստ, 411–418
աղետներ, նպատակը, 414–416
հավատարիմ մնալ կառավարություններին մինչև, 131–132
հնազանդությունը պատրաստում է, 416–418
խաղաղություն վտանգավոր ժամանակներում, 422–424
մարգարեները կանխատեսել են, 412–414
արդարակյացները կպատրաստվեն, 414–416

Զ

Զինվորները պետք է արդարակյաց մնան, 424–426

Զոհաբերություն
բոլորը, որպեսզի անաղարտ նման, 444–446
անհրաժեշտ է հավերժական կյանքի համար, 58
մեր ցանկությունները՝ հօգուտ ուրիշների, 211–212
ուրիշների բարօրության համար, 361–362

Զվարճություն
ոչ Կիրակի օրը, 247–248
կյանքի նպատակ չէ, 395
ծնողները պետք է կանոնակարգեն երեխաների, 317
պետք է լինեն օգտակար, 395

Է

Էլոհիմ: *Տես* Հայր Աստված

Ը

Ընտանիք
հավերժության համար կապեր, 408
սկսվում է հավերժական ամուսնությամբ, 186–188
Սուրբ Հոգին միավորում է, 389
Զոզեֆ Ֆ. Սմիթի սերը հանդեպ իր, xviii
պետք է աշխատել, որպեսզի պահենք մեր, 265–267
ընտանեկան աղոթք, 26–28
նսասիրությունը անընդունելի է, 188–189
Տես նաև Ընտանեկան պատմության աշխատանք, Ընտանեկան երեկոներ, Տուն

Ընտանեկան պատմության աշխատանք, 429–437
ավետարանը քարոզվում է մահացածներին, 430–432
Զոզեֆ Սմիթի հայտարարությունը այդ աշխատանքի կարևորության մասին, 433
ապրողներն ու մահացածները աշխատում են միասին, 432–434
Հազարամյակում, 436
մեր պարտականությունները, 435–437

Փրկիչը սկսել է աշխատել մահացածների համար, 430–432

Փրկիչներ Սիոն Սարի վրա, 260–262, 435–437

Տես նաև Տեսիլք մահացածների փրկագնման մասին

Ընտանեկան երեկոներ, 364–370
ներկայացվել է ծրագիրը, xxi, 364–365

ծնողները պետք է հավատարմորեն կատարեն իրենց պարտականությունները, 369- -370

խոստումները, եթե հնազանդվենք, 366–368

ուսուցանել ավետարանը, 365–366

ինչ անել այդ երեկոյի ժամանակ, 367

Ընդդիմություն
քաջարի կանգնել ընդդեմ, 110–113

Տես նաև Դժվար պահեր

Թ

Թանկագին Սարգարիտ, ընդգրկվեց կանոնիկ գրքերի շարքը, 40

Թշնամիներ
Եկեղեցու թշնամիները չեն հաղթի, 276–278

Զոզեֆ Ֆ.-ը ներում է իր, xvii–xviii

թողեք Աստծո ձեռքում, 278

ողորմածություն հանդեպ, 275–276

մերը չեն, այլ Տիրոջինն են, 278

Թոմսոն, Մերսի Ֆիլդինգ, xii, xv

Ի

Իմաստության Խոսք, 341–347
հնազանդվելու օրհնությունները, 342–347

չհնազանդվելը տանում է դեպի դեգրադացիա և կործանում, 343–344

Զոզեֆ Ֆ.-ը քարոզում է, 341–342

հնազանդվելը դարձնում է մեզ Տիրոջ նման, 346–347

մեր օգտի և բարգավաճման համար, 342–344

Ինքնատիրապետում, 391–399
խուսափել չարախոսելուց, 397

խուսափել մոլեխաղից, 396

խուսափել անհամեստ պարերից, 398

խուսափել անհամեստությունից, 397-398

խուսափել անպարկեշտությունից, 396

խուսափել անօգուտ գրականությունից, 398–399

օրինակ հանդիսացավ Փրկիչը, 393–394, 400

Լ

Լամանացիներ, օրհնվեցին Մորմոնի Գրքի շնորհիվ, 45

Խ

Խաբեություն
խուսափեք կեղծ ուսմունքներից, 119–122

ճշմարտությունն ազատում է մեզ, 124–125

Խաղաղություն, 421–427
Հիսուսի օրինակը, 427
Միայն ավետարանն է պարգևում, 422–424
վտանգավոր ժամանակներում, 416
ձգտել խաղաղ գոյակցել բոլոր մարդկանց հետ, 426–427
Խնայողություն, 172–174. *Տես նաև* Ֆինանսներ, իմաստուն տնօրինում
Խորհուրդ երկնքում, 350–352

Ծ

Ծառայություն, 357–362
օժանդակների, 359–360
Զոզեֆ Ֆ.-ը հավատարմորեն ծառայեց, 357–358
քահանայությունը մատուցելու համար է, 358–359, 361–362
Տես նաև Գթասրտություն
Ծխախոտ *Տես* Իմաստության Խոսքը
Ծնողներ: *Տես* Երեխաներ, ուսուցանել, Հայրեր, Մայրեր
Ծնվել կրկին
մկրտության միջոցով, 65
Սուրբ Հոգու միջոցով, 73–74
Հիսուս Քրիստոսի միջոցով, 378–379
Ծոմապահություն, օգնում է աղքատներին, 209–210
Ծուլությունը, տանում է դեպի կենդ վարդապետություն, 120

Կ

Կախարդություն, չարիքը, 121–122
Կանայք
վայելում են քահանայության օրհնությունները, 146–148
չի կարելի վիրավորել, 265
վաղ տարիների քաջարի քույրերը, 200
Տես նաև Սփոփող Միություն
Կառավարություն
Վերջին Օրերի Սրբերը աջակցում են, 128–129
Եկեղեցու և պետության բաժանումը, 130–131
Կարիքավորներ: *Տես* Աղքատներ և կարիքավորներ
Կրթված, կրթություն, 330–338
կիրառել սովորածը, 336–337
աստվածային հայտնությունը չափանիշն է, 333–334
բռնվեք երկաթե ձողից, երբ, 337–338
գիտության և փիլիսոփայության դերը, 333–334
ձգտեք ստանալ, ճշմարտության մեջ, 331–332
պետք է շարունակ սովորել, 334–336
Կենդ վարդապետություն, խույս տալ, 119–122
Կին, պետք է վերաբերվի ամուսնուն քաղաքավարությամբ, 265: *Տես նաև* Ամուսնություն
Կիրակի, 244–252
այն պահելու օրհնությունները, 251–252
պղծումը տանում է դեպի Հոգու կորուստ, 250–251
Աստված սրբագործել է, 245

Շաբաթ երեկոն որպես նախաբան, 249
ինչ անել այդ օրը, 245–249

Կնքող զորություն, կրում է Եկեղեցու Նախագահը, 148

Կրոնական հոբիներ, խույս տալ, 122–123

Կորստի որդիներ, 74–76

Հ

Հագուստ, անհամնստ, 397–398

Հավերժական կյանք: *Տես* Վեհացում

Հավատք, 50–59
Աբրահամի օրինակը, 56
քաջությունը, 58, 108—109
սահմանումը, 53–55
մտնել Աստծո հանգիստը, 58–59
Աստծո պարգևը մարդուն, 54–55
Աստված ուսուցանում է մեզ, 54
առ Հայր Աստվածը և Հիսուս Քրիստոսը, 54–55
հնազանդությամբ ձեռք բերված, 53–54
օգնում է մեզ դժվարին պահերին, 55–58

«Հայրը և Որդին», վարդապետական մեկնաբանություն, 373

Հայրեր, 403–409
կատարել ընտանեկան պարտականությունները, 406–407
Զոզեֆ Ֆ.-ի սերը իր ընտանիքի հանդեպ, 403
չպետք է խույս տան ընտանեկան կյանքից, 404–405
ապահովում են ընտանիքը, 405–406
օրինակ են ծառայում, 406
ամենաճշմարիտ մենությունը, 408–409
Տես նաև Երեխաներ, ուսուցանել; Հայր Աստված, Հիսուս Քրիստոս

Հավաքումը Յուտայում, այլևս չի քաջալերվում, xx

Հայր Աստված
մսից ու ոսկորներից մարմին, 374–375
Արարիչ, 375
հավատք առ, անհրաժեշտ է, 51–54

Հիսուս Քրիստոսի, 374
մեկ Հիսուս Քրիստոսի հետ, 377–380
մեր հոգիների, 374–375
ճանաչել, հավերժական կյանք է, 374
Տես նաև Զավակներ Աստծո

Հավայան կղզիներ
սեր Հավայան մայրիկի հանդեպ, 204–205
միսիա, xv–xvi
վերջ դնել խաբեբայի խարդախություններին, 117–118

Հազարամյակ, մահացածներին փրկագնելու ժամանակահատված, 436

Համատեղ Զարգացման Ընկերություն, ծառայությունը, 359–360

Հանգիստ, 449–456

երջանկությունը հնարավոր է ավետարանի միջոցով, 455–456
Քրիստոսում, 449–456
մտնել հանգիստը, հավատքի միջոցով, 58–59
հետևել Փրկչի օրինակին, 451–453
աճել շնորհից շնորհ, 453–455
Կիրակի օրը, 251–252
սուրբ գրությունները տանում են, 43–45
հոգիները ենթարկել Հիսուս Քրիստոսին, 450–451

Հարություն
Քավությունը հնարավոր է դարձնում, 93–96
մարմնի կառուցվածքը, 94–95

Հիսուս Քրիստոսի, 4–6
փոքր երեխաների, 136–138

Համբերություն, ուսուցանել երեխաներին, 318–319

Հայրապետական կարգ, 147, 405

Հայրենասիրություն, Վերջին Օրերի Սրբերն ունեն, 128–129

Հալածանք
Եկեղեցու, xxi
Զոզեֆ Ֆ.-ի ներողամտությունը, 271–273
Տես նաև Ներել, ներողամտություն

Հայտնություն, 280–287, 382–389
Եկեղեցու բոլոր անդամներին գալիս է, 281–283
շարունակվող, 384–385
ուղղակիորեն Աստծուց մարդուն, 383–384
վկայություն ձեռք բերել, 215–216
ժամանակակից հայտնության կարիք, 384–385
հնազանդությունը տանում է ավելի մեծ, 286–287
անձնական, 387
Նախագահը ստանում է, Եկեղեցու համար, 239–240
քահանայության ուղիներով, 121, 385–387
Սուրբ Հոգու մեղմ ձայնով, 283
միավորում է բոլոր մարդկանց, 388–389

Հաղորդություն, հիշել Քավությունը, 105–106

Հավատարմություն երկրի հանդեպ, 127–132

Հաջողություն
սահմանումը, 441–442
լինել լավ ծնող, 407

Հնազանդություն
բերում է անգնահատելի օրհնություններ, 304–305
գալիս է Հիսուս Քրիստոսի վկայությամբ, 218–220
տանում է դեպի ավելի մեծ գիտելիք, 286–287
անհրաժեշտ է վեհացման համար, 66–67, 161–162
անհրաժեշտ է հավատի համար, 54–55
անհրաժեշտ է մեր փրկությունն իրագործելու համար, 258–259
պատրաստում է Երկրորդ Գալստին, 416–418

Հոգու ձայնը, 285

Հպարտություն, տանում է դեպի կեղծ վարդապետություն, 119–121

Հրդեհ, ոչնչացրեց Զոզեֆ Ֆ.-ի ունեցվածքը, 78–79

Հոբիներ, կրոնական, խուսափեք, 122–123

Հողակտոր, Զոզեֆ Ֆ.-ը կորցրեց, միսիայում ծառայելու համար, 223

Հիսուս Քրիստոս
- ընդունվեց որպես Քավիչ նախաերկրային աշխարհում, 350–351
- Քավությունը փրկագնում է հոգևոր մահից, 99–106
- Քավությունը փրկագնում է ֆիզիկական մահից, 93–96
- մկրտությունը, 65
- Նրան նմանվելը մեր նպատակն է, 158–159
- խաղաղ ապրելու օրինակ, 426–427
- կատարելության օրինակ, 158–159, 451–453
- ինքնատիրապետման օրինակ, 393–394, 399–400
- Իր Հոր էության նկարագիրն է, 352–353
- հավատք առ, անհրաժեշտ է, 51–54

Հայր է՝ Աստծո կողմից տրված իշխանությամբ, 377–380
- երկնքի և երկրի հայրը, 375
- հավատարիմների հայրը, 378–380
- Անդրանիկ, 353, 376–377
- նախապես կարգված էր մահացածներին փրկելու համար, 430–432
- ներել, 3–4, 274
- ամենամեծ ուսուցիչը, 43
- աճեց շնորհից շնորհ, 160, 453–455
- Սուրբ Հոգին վկայում է, 6–8, 71
- ժառանգակիցներ, 104–105
- Զոզեֆ Ֆ.-ի վկայությունը, 1–8, 216, 219–220, 377–379, 455–456
- կյանքն ու ուսմունքները ապացուցում են Նրա աստվածայնությունը, 2–4
- ժամանակակից սուրբ գրությունները վկայում են, 43–46
- մեկ՝ Հոր հետ, 377
- Միածին, 376–377
- ստանալ վկայություն, 214–221
- փրկագնում է փոքր երեխաներին, ովքեր մահացել են, 135–136
- հանգիստ գտնել, 449–456

Հարությունը, 4–6
- հաղորդությունը օգնում է մեզ հիշել Քավությունը, 105–106
- Լեռան քարոզը հաստատում է Նրա աստվածայնությունը, 2–3
- հոգին հայտնվեց Հարեղի նեղբորը, 353
- հոգին կատարյալ հասակի մեջ էր մինչև ծնվելը, 138
- ազատ կամք դրսևորեց բարիք գործելիս, 307
- հոգիները ենթարկել Նրան, 450–451

Տես նաև Երկրորդ Գալուստ, Վկայություն

Հոբ, ազնվություն դրսևորեց, 445

Հեշտասիրություն: *Տես* Գթասրտություն, Ինքնատիրապետում

Հոգի, ոգի և մարմին, 91–92

Հոգի
մահից հետո փոքր երեխաների, 136–138

վերամիավորումը մարմնի հետ, 94–95

Տես նաև Սուրբ Հոգի

Հոգևոր մահ: *Տես* Մահ, հոգևոր

Ղ

Ղայն, հաստատող, 224–225

Ճ

Ճշմարտություն
ամբողջը ընդգրկված է ավետարանում, 331–333

մեզ ազատում է մեղքից, 124–125

ձգտեք կրթվել ճշմարտությամբ, 330–339

կառչեք, խուսափեք խաբեությունից, 118–125

Մ

Մարմին
կառուցվածքը, հարության ժամանակ, 94–96

անհրաժեշտությունը, 157–158

և ոգին կազմում են հոգին, 91–92

Մաքրաբարոյություն, 163–170
կարելի է ապաշխարել սեռական մեղքից, 169–170

սեռական մեղքի նողկալիությունը, 164–165

ամուսնական հավատարմություն, 166–168

կարևորությունը տղամարդկանց և կանանց համար, 164–167

պահպանել պատերազմի ժամանակ, 424–426

ազատել միսիոներին, որը խախտել է այս օրենքը, 163

Տես նաև Սեռական մեղք

Մահացածներ: *Տես* Ընտանեկան պատմության աշխատան, Տեսիլք մահացածների փրկագնման մասին

Մահ, հոգևոր

Անկումը բերեց, 100
Հիսուս Քրիստոսը փրկագնում է ապաշխարողներին, 99–115

Մահ, ֆիզիկական

Անկումը բերում է, 91–92
անհրաժեշտություն և օրհնություն, 91–92

Հարությունը հաղթում է, 93–96

Մարիամ, Հիսուսի մայրը, 376

Մայրեր, 31–38
օգնություն Սուրբ Հոգուց, 34, 38

ազդեցությունը սերունդների վրա, 33–34

սերը, նման է Աստծո սիրուն, 36–37

երեխաների ուսուցանելու պատասխանատվություն, 34–35
չի կարելի վիրավորել, 267–268
ամենաճշմարիտ մենությունը, 35–37
կմենծացնեն փոքր երեխաներին, որոնք մահացել են, 138
Տես նաև Երեխաներ, ուսուցանել

«Մարդու ծագումը», Առաջին Նախագահության հրապարակումը, 349

Սահացածների փրկագնում: *Տես* Ընտանեկան պատմության աշխատանք, Տեսիլք մահացածների փրկագնման մասին

Սերձավոր, սիրեք ինչպես ձեզ, 206–209

Սեղք, ոչ ոք չի փրկվում, 101–104

Սիսիոներներ, 78–87
խուսափել վիճաբանությունից, 85
լինել արդարակյաց և հնազանդ, 79–80
լինել մարդամոտ և հաղորդակցվող, 82
լինել խոնարհ, 80–82
Զոզեֆ Ֆ.-ի ունեցվածքը այրվեց, երբ, 78–79
Զոզեֆ Ֆ.-ի աղոթքը, 28–29
պետք է աղոթի, 79–80
վերադարձած միսիոներների պարտականությունները, 85–87
ուսուցանել պարզորեն, 82–85
ուսուցանել Հոգով, 79–80, 82–85

Միսիոներական աշխատանք, 78–87
ինչպես ուսուցանել ավետարանը, 82–85
անհրաժեշտ է տանը, 85–87
միսիոներների բնորոշ գծերը, 80–82
վերադարձած միսիոներների պարտականությունները, 85–84

Միասնություն, հայտնությունը տանում է դեպի, 388–389

Մկրտություն, 61–68
կրկին ծնվել Հիսուս Քրիստոսի միջոցով, 378–379
ճշմարտության սահմանումը, 63–65
ընկղմամբ, 62–63
Հիսուսի, 65–66
անհրաժեշտ է փրկության համար, 62–63, 63–66
արարողության պարզությունը, 65–66

Մորմոնի Գիրքը
օրհնում է Լամանացիներին, 45
կարդացեք հաճախ ճշմարտությունը գտնելու համար, 46–48
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 43–45
թարգմանվել է Զոզեֆ Սմիթի կողմից, 16–17
թարգմանվել է շատ լեզուներով, 44
վկայություն, 44
Տես նաև Սուրբ Գրքեր

Մոլեխաղ, 396

Ն

Նահատակություն
հին առաքյալների, 443
Զոզեֆ և Հայրում Սմիթների, xii–xiv

Նախաերկրային կյանք, մենք եղել ենք մի մասը, 350–352

Ներել, ներում
թշնամիներին, 271–280
Զոզեֆ Ֆ.-ը, թշնամիներին, xvii–xviii
միմյանց, 64
Փրկիչը խաչի վրա, 3–4

Նիբլի, Չարլզ Վ., 172, 204, 280

Շ

Շաբաթ երեկո, Կիրակի օրվա նախաբան, 249

Շնորհ, աճել շնորհից շնորհ, 160, 453–455

Ո

Ոգելից խմիչք: *Տես* Իմաստության Խոսք

Ոխ

ոչ մեկի հանդեպ մի պահեք, 271–278
Տես նաև Ներել, ներում

Ողորմածություն թշնամիների հանդեպ, 274–276

Չ

Չարախոսություն, 397: *Տես նաև* Քննադատություն

Չար, Աստված հանդուրժում է, 301–302

Պ

Պարեր, 398

Պարտք
Եկեղեցին ազատվեց, 289–291
խուսափելու կարևորությունը, 173–177
Տես նաև Ֆինանսներ, իմաստուն տնօրինում

Պատիժ
բարի եղեք երեխաների հանդեպ, 268–269
Տես նաև Ինքնատիրապետում

Պատերազմ
Զոզեֆ Ֆ.-ի ուղերձը ընթացքում, 421–422
միայն ավետարանն է կանխում, 422–424
մնացեք արդարակյաց ընթացքում, 424–426

Պետրոս
մահացածներին քարոզելը, 434
ստացավ Սուրբ Հոգին, 75

Պիոներներ, քաջարի օրինակ, 113–115

Պողոս, ուներ հավատքի քաջություն, 111

Ջ

Զոզեֆ Ֆ.-ի երեխաների մահը, 89, 134–135, 140

Ս

Սարի Քարոզը, հաստատում է Փրկչի աստվածությունը, 2–3

Սատանա
Աստծո գործի թշնամի, 276–278

կեղծ հայտնություններ, 120–121

պայքարում է ճշմարտության դեմ, 118–120

կեղծ հրաշքներ և կախարդություններ, 121–122

ձգտում էր լինել աշխարհի փրկիչ, 350

Սողոս, աններելի մեղք չի գործել, 75–76

Սեր, սիրել
ամուսնության հիմքը, 190–192

Աստծուն, ավելի քան մեկ ուրիշ բան, 440–442

Աստծո, Իր զավակների հանդեպ, 445–446

մայրերի սերը նման է Աստծո սիրուն, 36–37

մերձավորին, ինչպես ինքդ քեզ, 206–209

կանխում է բռնությունը, 267–268

սիրով ուսուցանել երեխաներին, 315–316

Տես նաև Գթասրտություն, Ծառայություն

Սեռերի միություն, օրինական ամուսնություն, 167–168

Սեռական մեղք
կարելի է ապաշխարել, 169–170

նողկալիությունը, 164–165

խորանում է ուխտերը խախտելու հետևանքով, 168–169

Տես նաև Մաքրաբարոյություն

Սմիթ, Էլիս, 89

Սմիթ, Էդիթ Էլենորը, 271

Սմիթ, Զորջ Ա., նամակ ուղղված, 78

Սմիթ, Հայրում
Եկեղեցու Հայրապետ, xii

բանտարկումը, 153

նահատակությունը, xii–xiv, 429

մահացածներին քարոզելը, 432–434

Սմիթ, Զոզեֆ, Մարգարե
մահը, xii–xiv

արել է ավելին մարդու փրկության համար, 18–20

Առաջին Տեսիլքը, 15–16

բանտարկությունը, 153

Զոզեֆ Ֆ.-ի երազը, 99–100

Զոզեֆ Ֆ.-ի վկայությունը, xii, 11–19

վերականգնել է ավետարանը, 12–14

վերականգնել է քահանայությունը, 12–14

վերականգնել է տաճարային արարողությունները, 12

մահացածներին փրկելը՝ ամենակարևոր պատասխանատվություններից է, 433–434

թարգմանել է Մորմոնի Գիրքը, 16–17

Սմիթ, Զոզեֆ Ֆ.
հակամորմոնական տրամադրությամբ ավազակներին տված պատասխանը, 108

Կոնգրեսի առաջ ելույթը, 298

մկրտությունը, 61

դարձավ Եկեղեցու Նախագահ, xix, 234

կնոջը՝ Զուլինային հրաժեշտ տալը, 183
ծնունդը, xi–xii
Սուրբ Ծննդյան նվերներ, գնելը, 172
Եկեղեցին պարքից ազատվեց, 289–291
համայնքում մատուցած ծառայությունը, 127
մահը, 439
երեխաների մահը, 89, 134–135, 140
մաքուր լինելու մասին երազը, 99–100
ընտանեկան երեկոյի ծրագիրը, ներկայացվեց, 364–365
եկեղեցու երեխայի հանդեպ տածած զգացումները, 264
որդու՝ Հայրումի, մահվան հետ կապված զգացումները, 429
հրդեհը միսիայի ժամանակ, 78–79
հալածողներին ներելը, xvii–xviii, 275–276
գերեզմանի մոտ անցկացված ծառայությունը, 1, 449
լույս ընծայեց «Մարդու ծագումը», 349
լույս ընծայեց «Հայրը և Որդին», 373
ճամփորդությունը Սոլթ Լեյքի հարթավայր, xiv–xv, 31
իր մայրն է սեր արմատավորել սուրբ գրությունների հանդեպ, 40
կորցրեց իրեն հատկացված հողակտորը, որպեսզի միսիայում ծառայի, 223
սերը երեխաների հանդեպ, 311–312
սերը ընտանիքի հանդեպ, viii, 403
սերը հավայան մոր հանդեպ, 204–205
սերը մոր հանդեպ, 31–32, 36–37
սերը տաճարների հանդեպ, xviii–xix
ուղերձը Առաջին Համաշխարհայինի ժամանակ, 421–422
միսիան Հավայիում, xv–xvi, 69
մոր աղոթքը կորած եզների համար, xiv, 22–23
մայրը հավատք է սովորեցրել տասանորդ վճարելով, 50–51
Նավոյում, xii
կարգումը որպես Առաքյալ, xvi, 143–145
աղոթքը Սփոփող Միության 50-րդ տարեդարձին, 194
աղոթքը միսիոներ որդու համար, 29
տեսիլք ստացավ մահացածների փրկագնման մասին, 382
վկայություն ստանալը, 214
սրբազան վայրերը, աշխատանքը այդ ուղղությամբ, xxii
հավատարմորեն է ծառայել ցանկացած կոչման մեջ, 357–358
հռետորական ունակությունները, xvii, xxiii
վերջ է դրել խաբեբայի խարդախություններին Հավայան կղզիներում, 117

Զոզեֆ Սմիթի մասին վկայությունը, xii, 11–19
Փրկչի մասին վկայությունը, 1, 373–374, 449–456
Իմաստության Խոսքը, քարոզելը, 341–342
Սմիթ, Զուլինա, 183
Սմիթ, Սերի Ֆիլդինգ
մահը, xv
ճամփորդությունը Սոլթ Լեյքի Հովիտ, xiv–xv, 31
ամուսնությունը, xi–xii
Զոզեֆ Ֆ.-ի վրա զորավոր ազդեցությունը, 31–38
աղոթքը հիվանդ եզների համար, xiv, 22–23
Զոզեֆ Ֆ.-ի մահացած երեխաներին ընդունում է երկնքում, 135
ուսուցանել է Զոզեֆ Ֆ.-ին սուրբ գրքերից, 40
տասանորդ կարտոֆիլները, 50–51
Սմիթ, Սերսի Զոզեֆին, 134
Սմիթ, Ռաքել, 289–291
Սմիթ, Ռոնդա, 134
Սմիթ, Ռութ, 135
Սովորել։ *Տես* Կրթված, կրթություն
Սոլթ Լեյքի Տաճար, անկյունաքարերի տեղադրումը, xix
Սրտի փոփոխություն, Սուրբ Հոգու միջոցով, 73–74
Սուրբ Գրքեր, 40–48
վերագրել մեզ, 46
Զոզեֆ Ֆ.-ը իմացավ իր մորից, 40
տանում են դեպի Քրիստոսի հանգիստ, 41
ավելի կարևոր են, քան հանրաճանաչ գրքերը, 47
Թանկագին Մարգարիտը ընդգրկվեց կանոնիկ գրքերի շարքը, 40
հաճախ կարդացեք, 46–48
փնտրեք հոգևոր հարստություն, 41–43
վկայում են Քրիստոսի մասին, 43–45, 217–218
Սուրբ Ծնունդ, Զոզեֆ Ֆ.-ի նվերներ գնելու ցանկությունը, 172
Սուրբ Հոգու պարգևը։ *Տես* Սուրբ Հոգի
Սուրբ Հոգի, 69–76, 280–287
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 216–218
կրկին ծնվել, 73–74
անել այն, ինչ Հոգին է թելադրում, 284
պարգևը, 70–71
ուղղորդում է մայրերին, 35, 38
ինչպես պահել, 71–73
Զոզեֆ. Ֆ.-ը լսեց, գնացքում, 280
իմանալ Աստծո կամքը, 58
միսիոներները սովորում են այդ, 79–80, 82–85
հնազանդությունը, տանում է դեպի ավելի մեծ գիտելիքի ձեռք բերում, 285–287
նախատեսված է լինել, 71–73
անհատական ուղեցույց բոլոր անդամների համար, 281–283

պաշտպանում է չարից, 124–125
հայտնություն մեղմ ձայնի միջոցով, 283
Կիրակին պղծելը տանում է դեպի կորուստ, 250–251
վկայում է Հիսուս Քրիստոսի մասին, 6–8
միավորում է բոլոր մարդկանց, 388
աններելի մեղք ընդդեմ, 74–76

Սիրտ, փոփոխություն, Սուրբ Հոգու միջոցով, 73–74

Սփոփող Միություն, 194–202
հոգալ կարիքավորների մասին, 196–198
ղեկավարվում է քահանայության կողմից, 201
առաջին ղեկավարների օրինակը, 200–201
հաստատվել է Աստծո կողմից, 195
ուսուցանում ու հավատք է զարգացնում քույրերի մեջ, 196–201
Զոզեֆ Ֆ.-ի աղոթքը 50-րդ տարեդարձին, 194
ծառայությունը, 359–360

Վ

Վարդապետություն, կեղծ: *Տես* Կեղծ վարդապետություն

Վարդապետություն և Ուխտեր
հաճախ կարդացեք, որպեսզի ճշմարտություն գտնեք, 46–48
հայտնում է փառահեղ սկզբունքներ, 45
վկայում է Քրիստոսի մասին, 43–45, 217
Տես նաև Սուրբ Գրքեր

Վելս, Էմիլի Բ., 200

Վեհացում
Քավության ու հավատարմության միջոցով, 104–105
Աստծո զավակները կարող են դառնալ Նրա պես, 354–355
ընտանիքները, որպես անհրաժեշտ մաս, 408
աճել շնորհից շնորհ, 453–455
ամուսնությունն անհրաժեշտ է մեր, 185–188, 191–192
պետք է ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին, 373–374
անհրաժեշտ է դառնալ հոգևոր սերնդի ծնողներ, 95

փրկության ծրագիրը տանում է դեպի, 155–158
ապաշխարությունն ու մկրտությունը անհրաժեշտ են, 66–67
զոհաբերությունը անհրաժեշտ է, 58

Վիճաբանություն, Միսիոներները պետք է խուսափեն, 85

Վկայություն, 214–221
պարգև Աստուց, 215–216
Սուրբ Հոգու միջոցով, 6–8, 216–218
մեզ ոգեշնչում է հնազանդություն դրսևորել, Հիսուս Քրիստոսի մասին, 219–220
Զոզեֆ Ֆ.-ը ստացավ, 214
Զոզեֆ Ֆ.-ի, Քրիստոսի մասին, 1–9, 218, 220–221, 376–377, 455–456

Տ

Տաճար, 321–328
մտնք արժանիորեն, 325–327
ընտանեկան պատմության աշխատանք, 435–437
կնքված ամուսնության կարևորությունը, 186–188
Զոզեֆ Ֆ.-ի կյանքից դեպքեր կապված, 321–323
Զոզեֆ Սմիթի կողմից վերականգնված արարողություններ, 12
փրկող արարողությունների կատարման համար, 323–325
լինել հավատարիմ ուխտերին, որոնք կապվել են, 327–328

Տաճարային ամուսնություն: *Տես* Ամուսնություն

Տասանորդ, 289–296
օրհնություններ նրանց, ովքեր վճարում են, 294–296
Եկեղեցին ազատվեց պարտքից, 289–291
դժվար է հարուստների համար վճարել, 296

Տիրոջ օրենքը նկամուտ ապահովելու համար, 292–294
Սերի Ֆիլդինգ Սմիթի կարտոֆիլները, 50
օրենքի հանդեպ հնազանդություն, 291–292, 294–296
անձ, որը վճարում է, չի ուրանա, 292
ով է տնօրինում, 293

Տգիտություն, մեծ մեղք, 336–337

Տեսիլքը, մահացածների փրկագնման, xxiv, 382, 429–430

Տնային ուսուցում, Զոզեֆ Ֆ.-ն շեշտադրում է կատարում, xxi

Տնտեսություն: *Տես* Ֆինանսներ, իմաստուն տնօրինում

Տոհմաբանություն: *Տես* Ընտանեկան պատմության աշխատանք

Տուն
հիմնել կատարյալ տուն, 190–192, 404–405
անհրաժեշտ է երջանկության համար, 35
վերափոխման կարիք ունի, 366
տանը ոչինչ չի փոխարինի, 404
ընտանիքի տաճարն է, 365–366

Ց

Ցցի նախագահներ, աջակցումը, 229–231

Ու

Ուխտեր
լինել հավատարիմ, 109–110
լինել հավատարիմ տաճարային, 327–329
արժանիորեն կապեք, 325–327

Ուրացություն, Ուրանալ
ղեկավարներին չաջակցելը տանում է դեպի, 230, 240, 385–387
այն անձը, որը վճարում է տասանորդը, չի, 294–296

Ուրախություն, մեր երկրային գոյության նպատակը, 157

Փ

«Փառք քեզ Տե՛ր, Սարգարեի համար», ստեղծագործումը, 255

Փող։ *Տես* Ֆինանսներ, իմաստուն տնօրինում

Փորձություն։ *Տես* Դժվար պահեր

Փրկության ծրագիր, 153–161
նախատեսված է մեր վնհացման համար, 155–156
օգնում է մեզ դառնալ Հիսուս Քրիստոսի նման, 158–159
հնազանդվել, 160–161
հնարավոր է Հիսուս Քրիստոսի շնորհիվ, 160–161

Փրկություն, ծրագիրը։ *Տես* Փրկության ծրագիր

Փրկիչ։ *Տես* Հիսուս Քրիստոս

Փրկիչներ Սիոն Սարի վրա, 260–262, 435–437։ *Տես նաև* Ընտանեկան պատմության աշխատանք

Ք

Քաղաքացիներ
լինել օրինապահ, 127–132
Վերջին Օրերի Սրբերը լավ, xix–xx, 128–130

Քաջություն
հավատքի, 58, 108–109
Զոզեֆ Ֆ.-ի, հակամորմոն ավազակների հանդեպ դրսևորած, 108

Քաջարի
հավատքի քաջություն, 108–109
Եկեղեցու վաղ շրջանի ղեկավարների օրինակները, 113–114
վաղ շրջանի քույրերի օրինակները, 200–201

Քրիստոսի գործում, 108–115

Քահանայության բանալիները, 148, 237–239

Քահանայություն, 143–151
օժանդակները ծառայում են քահանայության ներքո, 359–360
խորհուրդները պետք է մեծացնեն իրենց կոչումները, 361
սահմանումը, 145–146
Աստծո կառավարությունը, 145–146
ղեկավարում է սիրով, 149–150
պատվել, 150–151
Զոզեֆ Ֆ.-ի աշխատանքը, xx
բանալիները, 148, 237–239
ծառայություն մատուցելու համար, 358–359, 361–362
Սփոփող Սիությունը անկախ չէ, 201
վերականգնվել է Զոզեֆ Սմիթի կողմից, 12
կանայք ևս վայելում են օրհնություններ, 146–148

Քահանայության ղեկավարներ, աջակցել, 223–232
եպիսկոպոսներ և ցցերի նախագահներ, 229–231
թերանում են, տանում է դեպի ուրացություն, 231
Բարձրագույն Իշխանություններ, 225–228
աջակցող ձայնի կարևորությունը, 224–225
չպետք է քննադատել, 228

Քավիչ: *Տես* Հիսուս Քրիստոս

Քահանայության ղեկավարներին աջակցելը: *Տես* Քահանայության ղեկավարներ, աջակցելը

Քավություն
միջոցով դառնալ Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցներ, 104–105
պայմանական, 99–106
հաղթում է Ադամի Անկմանը, 93–96
փրկագնում է հոգևոր մահից, 99–106
փրկագնում է ֆիզիկական մահից, 89–96
փրկագնում է փոքր երեխաներին, ովքեր մահանում են, 135–136
հիշում ենք հաղորդությունն ընդունելիս, 105–106
ըչ պայմանական, 89–96

Քիմբալ, Հեբեր Չ.
մկրտել է Զոզեֆ Ֆ.-ին, 61
Աստծո ազնվազարմ մարդկանցից մեկը, 115

Քիմբալ, Վիլայթ, 200

Քննադատություն, քննադատել
խուսափել, 208–209
չարախոսել, 397
Եկեղեցու ղեկավարներին, 228
փոխարենը փնտրեք բարին, 274

Քույրեր: *Տես* Կանայք

Օ

Օժանդակ կազմակերպություններ
հրահանգներ երիտասարդների վերափոխման համար, 391
Զոզեֆ Ֆ.-ի աշխատանքը այդ ուղղությամբ, xxi
ծառայել քահանայության ղեկավարությամբ, 359–360
ծառայություն, 359–360

Օրինակ
հայրերը պետք է օրինակ ծառայեն, 406–407
Հիսուս Քրիստոսը մեր մեծ, 158–159, 453–455
անհրաժեշտ է միսիոներական աշխատանքում, 86
երեխաներին ուսուցանելիս, 312–315
անվեհեր, Եկեղեցու առաջին ղեկավարների, 113–115

Ֆ

Ֆաուլեր, Վիլիամ, 255

Ֆինանսներ, իմաստուն տնօրինում
խուսափել ագահությունից, 179–180
խուսափել պարտքից, որպեսզի ազատ լինեք, 173–177
Զոզեֆ Ֆ.-ի Սուրբ Ծննդյան նվերներ գնելու ցանկությունը, 172
սիրեք Աստծուն ավելի, քան փողը, 177–179
փողը իսկական երջանկություն չի բերում, 177–179
գրավը, զգուշացեք գրավ դնել, 173–177
օգտագործեք փողը Աստծո արքայությունը կառուցելու համար, 179–181

Նշումներ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02357 44201 2
35744 201